ԼԱՒՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՍՈՍԱԲՍՐԱՍ ԱՀՈՒ ՏԻԱՏԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ-ՏԱՌԱԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2015

Մեծարել ազգային պատմության լուսավոր դրվագները՝ չի նշանակում քողարկել նրա անցյալի կամ ներկայի մռայլ էջերը:

*ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ

НОРАЙР САРУХАНЯН

# ИСТОРИКОВЕДЧЕСКОЕ НАСЛЕДИЕ АКАДЕМИКА АШОТА ИОАННИСЯНА

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТ ИСТОРИИ
2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
127

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
127

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2015

ՀՏԴ 929:94
ԳՄԴ 63.3
Ս 286

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյան

**Սարուխանյան Ն. Բ.**

Ս 286 Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, 385 էջ:

Հասարակական-քաղաքական և գիտական ստեղծագործական կյանքի երկար ճանապարհ է անցել մեծ պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը:

Գերմանիայի համալսարաններում ստացած բարձրագույն կրթությունը, լեզուների խորհմացությունը, պրպտող միտքը և լայն մտահորիզոնը, ստեղծագործական անդադրում աշխատանքը նրան հնարավորություն ընձեռեցին կերտելու «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նալբանդյանը և նրա ժամանակը» և այլ հիմնարար աշխատություններ, որոնք հեղինակի անունն ընդմիշտ ամրագրեցին հայագիտության երախտավորների համաստեղությունում:

«Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը» գիրքը մեծ գիտնականի ստեղծագործության քննական վերլուծության անդրանիկ փորձն է:

Այն նախատեսված է պատմաբանների և պատմագիտությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 929:94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-15-2
© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դարի հայ նշանավոր հասարակական-քաղաքական, պետական գործիչ և մեծ պատմաբան Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին, Շուշի քաղաքում: Մահացել է 1972 թ. հունիսի 30-ին, Երևանում, 85 տարեկանում: Նրա կյանքը հետաքրքրական է շատ կողմերով՝ և՛ որպես մարդ, և՛ որպես ազգային գործիչ, և՛ որպես գիտնական: Ապրելով և գործելով հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող ժամանակաշրջանում՝ նա գործուն մասնակցություն է ունենում գրեթե բոլոր իրադարձություններին, ստեղծագործ գրչով արտահայտելով դարաշրջանի ոգին: Աշ. Հովհաննիսյանը սկզբնական կրթությունը ստանում է Շուշի քաղաքի ռեալական վարժարանում: Նրա պատանեկության և վաղ երիտասարդական տարիներին Շուշին հակամարտ հասարակական հոսանքների, գաղափարական-քաղաքական իրարամերժ խմբավորումների մի ուրույն կենտրոն էր: Աչքի էր ընկնում Գաբրիել Կաֆյանի և նրա հետևորդների՝ Բարսեղ Զաքարյանի և Մարտիկ Սարուխանյանի հնչակյան քարոզչական խմբակը, այնուհետև Հայ հեղափոխական դաշնակցության անվանի մարտիկների մի ղեկավար կորիզ՝ Եգոր Առուստամյանի, Թուման Թումյանի, Նիկոլ Միքայելյանի, Սարգիս Հովհաննիսյանի (Արամ Մանուկյան) և ուրիշների մասնակցությամբ: Շուշիում որոշակի դերակատարություն ուներ սոցիալ-դեմոկրատական հոսանքը, որի հետևորդներից էին Բոգդան Կնունյանցը, Սաքո Համբարձումյանը, Ալեքսանդր Բեկզադյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Վլադիսլավ Կասպարովը և ուրիշներ: Աշոտ Հովհաննիսյանն անվերապահորեն կանգնում է սոցիալ-դեմոկրատական հոսանքի ուղղության վրա: Վլադիսլավ Կասպարովի և իր դասընկերոջ՝ Հայկ Գյուլիքևխյանի հետ նա 1905 թ. ղեկավարում է ռեալական վարժարանի աշակերտական դասադուլը և գրում հակացարական բովանդակություն ունեցող թռուցիկներ, որոնցում հայոց

լեզվի դասավանդումն ուսումնարանում պարտադիր դարձնելու պահանջ է ներկայացնում:

Աշ. Հովհաննիսյանը 1906 թ. մեկնում է Գերմանիա՝ ընդունվում Ենայի համալսարանի փիլիսոփայության բաժինը: Ենայի համալսարանը հիմնադրվել է 1558 թվականին՝ Ենայի ակադեմիական գիմնազիայի հիման վրա: Այն Եվրոպայի նշանավոր ուսումնական հաստատություններից էր: Այդ համալսարանի հետ են կապված Յոհան Գյոթեի, Յոհան Ֆիխտեի, Յոհան Ֆրիդրիխ Շիլլերի, Ֆրիդրիխ Լեսինգի, Գեորգ Հեգելի և այլ նշանավոր անհատականությունների անուններ:

Ենայի համալսարանում են սովորել հայ մշակույթի բազում հայտնի գործիչներ՝ Մանուկ Աբեղյանը, Հայկ Գյուլիքևխյանը, Հակոբ Մանանդյանը, Գուրգեն Էդիլյանը և ուրիշներ:

Գերմանիայի համալսարաններում ընդունված կարգի համաձայն Աշ. Հովհաննիսյանը սովորում է ոչ թե մեկ, այլ մի քանի համալսարաններում: Ենայից հետո նա ուսումնառությունը շարունակում է Հալլեի համալսարանի տնտեսագիտության և Մյունխենի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետներում:

Հայ պատմագիտության մեջ լուրջ խոսք ասելու իր անդրանիկ հայտը Աշ. Հովհաննիսյանը ներկայացնում է 1913 թվականին՝ Մյունխենում հրատարակելով «Իսրայել Օրին և ազատագրական գաղափարը» խորագրով աշխատությունը, որը պաշտպանվում է որպես դոկտորական ատենախոսություն և ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Գերմանիայում ուսումնառությունն ավարտելուց հետո Աշ. Հովհաննիսյանը վերադառնում է հայրենիք և 1913-1914 թթ. աշխատում Շուշիի սեմինարիայում որպես գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների ուսուցիչ: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի առաջարկությամբ նա 1914 թ. սեպտեմբերին տեղափոխվում է Վաղարշապատ և նշանակվում Գևորգյան ճեմարանի քաղաքատնտեսության, լատիներենի, գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների դասախոս:

Գ.Նորգյան ճեմարանում այդ ժամանակ դասախոսում էին Գաբրեգին Հովսեփյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Հր. Աճառյանը, Գ. Էդիլյանը և ուրիշներ, որոնք դասախոսական աշխատանքին զուգընթաց իրենց գործուն մասնակցությունն էին բերում կրթական հաստատության գիտամանկավարժական կյանքին, հատկապես ուսումնական ծրագրերի հաստատմանը: Արժանի է հիշատակության նաև այն, որ ճեմարանի լսարանական բաժնի սաների շրջանում Աշ. Հովհաննիսյանը զբաղվում է սոցիալ-դեմոկրատական գաղափարների քարոզչությամբ, ստեղծում է ընդհատակյա խմբակ, որի անդամներից էին Արամ Շահգելդյանը, Անաստաս Միկոյանը, Աղասի Խանջյանը և ուրիշներ: Ճեմարանի ուսումնասեր միջավայրը նպաստում է նաև Աշ. Հովհաննիսյան պատմաբանի գիտական հետաքրքրությունների արդյունավետությանը խթանելու համար: Դասախոսություններից ազատ ժամերին նա աշխատում է Մայր Աթոռի հարուստ գրադարանում և ձեռագրապահոցում, ուսումնասիրում վավերագրերի և փաստաթղթերի եզակի հավաքածուները: Իր ուսումնասիրությունների արդյունքները նա տպագրում է «Արարատ» ամսագրի էջերում և առանձին գրքույկներում, որոնցում ներառվում էր գլխավորապես միջնադարի հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը: Երիտասարդ գիտնականի այդ հրապարակումները աչքի էին ընկնում ոչ միայն ասելիքի թարմությամբ, այլև ուղենշում քաղաքական հայագիտության առաջընթացի նոր ուղեգծեր:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Գ.Նորգյան ճեմարանը դադարեցնում է իր գործունեությունը, ուսուցիչներն ու սանները ցրվում են: Աշ. Հովհաննիսյանը նույն թվականի հունիսին վերադառնում է Շուշի, ուր խմբագրում է «Նեցուկ» թերթը, որի համարներում տպագրված հրապարակախոսական հոդվածներում և խմբագրականներում պաշտպանում է սոցիալիստական հեղափոխություն իրագործելու ծրագիրը:

Ստեփան Շահումյանի հրավերով 1917 թ. վերջերին նա տեղափոխվում է Բաքու, որտեղ գործուն մասնակցություն է ունենում Բաք-

վի խորհրդի, այնուհետև Բաքվի խորհրդային իշխանության (Կոմունա) աշխատանքներին: Նշանավոր հեղափոխական Նաղեժդա Կոլեսնիկովայի հետ գլխավորում է Բաքվի խորհրդի ժողովրդական կրթության բաժինը: Նույն խորհրդում աշխատում է որպես կուլտուր-լուսավորական բաժնի վարիչ, խմբագրում է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի օրգան «Բանվորի խոսք» շաբաթաթերթը, որին աշխատակցել են Ստ. Շահումյանը, Վ. Տերյանը, Ա. Ամիրյանը, Ա. Մռավյանը, Ս. Կասյանը և ուրիշներ: 1918 թ. հուլիսի 31-ին Բաքվի կոմունայի անկումից հետո, Աշ. Հովհաննիսյանը որոշ ժամանակ հանգրվանում է Աստրախանում, որտեղ խմբագրում է «Կարմիր բանվոր» թերթը, քաղաքական աշխատանք կատարում «Իվան Կոլեսնիկով» շոգենավի կոլեկտիվում: Այնուհետև տեղափոխվում է Մոսկվա, 1918 թ. վերջերին աշխատանքի է անցնում Խորհրդային Ռուսաստանի Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի հայկական գործերի բաժնում՝ գլխավորում գրական-հրատարակչական բաժինը: Մեկ տարի անց փոխադրվում է Լուսավորության կոմիսարիատ՝ Հայկական բաժնի վարիչի պաշտոնով: Լուսժողկոմատի կողմից 1920 թ. գարնանը գործուղվում է Դոնի Ռոստով, այստեղ խմբագրում «Բանվորի կռիվ» թերթը և քաղաքական աշխատանք կատարում հայ բնակչության շրջանում:

Բորիս Լեգրանի գլխավորած Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական միսիայի կազմում (որպես միսիայի անդամ) 1920 թ. օգոստոսին Աշ. Հովհաննիսյանը ժամանում է Երևան, մասնակցում Հայաստանի Հանրապետության կառավարության հետ տարվող բանակցություններին, իր որոշակի նպաստը բերում լարվածության թուլացման գործին:

Հայաստանի խորհրդային կառավարության կազմում Աշ. Հովհաննիսյանն զբաղեցնում է Լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը: Նա է ստորագրել հայոց լեզուն պետական ճանաչելու, անգրագիտությունը վերացնելու, պետական հրատարակչություն կազմակերպելու, կուլտուր-լուսավորական ինստիտուտի ստեղծման,

Երևանի համալսարանի կազմակերպման, Երևանի հեղափոխական թանգարանի հիմնադրման և այլ դեկրետներ: Ալ. Մյասնիկյանի և նրա անմիջական ջանքերի շնորհիվ էր, որ Խորհրդային Հայաստան վերադարձան գիտության, մշակույթի, գրականության բազմաթիվ գործիչներ: Նրանք հոգատար են եղել հայ մտավորականության առաջատար դեմքերին աշխատանքի տեղավորելու և ընծեռած հնարավորությունների սահմաններում անհրաժեշտ կենցաղային պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

1922 թ. հունվարի վերջին տեղի ունեցած Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարում Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար է ընտրվում Աշ. Հովհաննիսյանը և այդ պաշտոնում մնում վեց տարի՝ մինչև 1927 թ.: Նա վիթխարի գործ է կատարում հանրապետության կենսագործունեության բոլոր՝ ժողովրդական տնտեսության վերակառուցման, կրթության ու լուսավորության, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու մշակույթի կազմակերպման ու զարգացման բնագավառներում:

Հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում Աշ. Հովհաննիսյանն աշխատում էր բոլորանվեր, սակայն 1925 թ. մայիսից Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան) Թիֆլիսում նոր աշխատանքի տեղափոխվելուց հետո նա հայտնի չափով զգում էր, որ սրընթաց աճում է կառավարման ղեկավար համակարգում վարչահրամայական մեթոդի համակիրների թիվը, մեթոդ, որի բացահայտ թշնամին էր ինքը: 1927 թ. հուլիսին ազատվում է զբաղեցրած պաշտոնից և տեղափոխվում Լենինգրադ, որտեղ Մ. Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում մեկ տարի աշխատելուց հետո հրավիրվում է Մոսկվա, ուր վարում է մի շարք պաշտոններ՝ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կաբինետի վարիչ, ԽՍՀՄ Ազգությունների ինստիտուտի փոխտնօրեն, Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի մոսկովյան բաժանմունքի տնօրեն: Աշոտ Հովհաննիսյանը 1937 թ. հուլիսի 8-ին հեռացվում է զբաղեցրած պաշտոնից և անհիմն մեղադրանքով ձերբակալվում: Նրա վերաբերյալ ԽՍՀՄ

Գերագույն դատարանի դատական կոլեգիայի 1941 թ. հուլիսի 9-ի նիստում ընդունվում է հետևյալ դատավճիռը. նախնական ստուգումներով և դատաքննական ապացույցներով հաստատված է, որ Աշոտ Հովհաննիսյանը Հայաստանում գործող հակախորհրդային խմբի մասնակիցներից է և կատարել է հակախորհրդային գործունեություն: Ելնելով դրանից ԽՍՀՄ Գերագույն դատարանի պետական քաղաքական կոմիտեի նիստը որոշում է նրան ութ տարով զրկել ազատությունից և ուղարկել ուղղիչ աշխատանքային ճամբար՝ պատժի ժամկետը հաշվելով ձերբակալման օրից՝ 1937 թ. հուլիսի 8-ից:

Նրան աքսորում են Կոմի Ինքնավար Հանրապետությունում գտնվող աքսորականների ճամբարներից մեկը, որտեղ զբաղվում էր անտառահատությամբ, այնուհետև տեղափոխում են Միջին Ասիա՝ Տաշքենդի մարզի Յանգիյուլ քաղաքը:

1943 թ. թույլատվություն է ստանում վերադառնալ Խորհրդային Հայաստան՝ սակայն միայն Երևանում չապրելու պարտադրանքով: Թույլատրելով բնակվել Կիրովականում (Վանաձոր), իշխանությունները նրան իրավունք են տալիս պայմանագրային հիմունքներով աշխատելու ԳԱ պատմության և գրականության ինստիտուտներում (1943-1954 թթ.): Վանաձորյան «պատվավոր» աքսորի տարիներին էլ նա գրեց իր հիմնարար գիտական գործերը:

Աշ. Հովհաննիսյանը հնսւրավորություն ստացավ իրեն լիովին նվիրել գիտությանը 1954 թվականից հետո, երբ աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ նախ որպես ավագ գիտական աշխատող, իսկ 1961 թվականից ղեկավարեց նույն ինստիտուտի Նոր պատմության բաժինը: Նա 1955 թ. (երկրորդ անգամ) պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, իսկ 1960 թ. ընտրվում ՀԳԱ ակադեմիկոս: Նրան Գիտության վաստակավոր գործչի կոչում է շնորհվում 1961 թվականին:

Բանտից ու աքսորից հետո րնկած ժամանակաշրջանը, անհատի պաշտամունքի դատապարտումը, արարման բախտորոշ նչանա-

կություն ունեցավ Աշ. Հովհաննիսյանի կյանքում. առաջացած տարիքում նա ստեղծագործական նոր լիցք ստացավ:

Ստալինյան բռնատիրության մղձավանջին հաջորդած գերխիտ իրադարձությունների ընձեռած լավատեսության լույսի տակ Աշ. Հովհաննիսյանը ջանաց կատարել Հայաստանի պատմության շրջադարձային հիմնահարցերի խոհահիմաստասիրական նոր ընդհանրացումներ: Հայացքը հառած միջին և նոր դարերի հայ ազատագրական մտքի բեկումներին, ամուր գամված ազատասիրության գաղափարին, արմատները ձգած հայ մտավոր-մշակութային շերտերի ընդերքը, նա քաղաքական հայագիտության պահեստապաշարը հարստացրեց «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» (Երևան, 1955), «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան, 1959), «Նալբանդյանը և նրա ժամանակը» (գիրք առաջին, Երևան, 1955, գիրք երկրորդ, Երևան, 1956) մենագրություններով, տասնյակ հիմնահարցային՝ գիտության առաջընթացին միտված ուղեցույցային հոդվածներով: Աշ. Հովհաննիսյանի պատմագիտական հիմնարար երկերի գլխավոր հերոսները (Ֆրիկ, Իսրայել Օրի, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան և ուրիշներ) ազատության համար պայքարի՝ ժամանակի հայկական իրականության ռահվիրաներ էին, որոնց խանդավառությունն ու հիասթափությունը, լավատեսությունն ու նույնիսկ ողբը, որքան հայ իրականության ծնունդ էին, բայց և ունեին համամարդկային բնույթի դրսևորում, հասկանալի էին ամենուրեք, ուր առկա էին վերանորոգվելու ձգտման պայմաններ, տենչ ու բարեշրջման անհրաժեշտության ձգտող կյանք, որոնք իրենց ակտիվ գործունեությամբ դրանք դարձնում են կենսունակության աստիճան անհրաժեշտություն:

Շատ դիպուկ է նկատել ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը, թե առաջադրված խնդիրը առանձնահատուկ գիտական իմաստ է ստանում այն իրողությամբ, երբ ներկայանում է պատմական գործընթացի հսկայական տարածության, երևույթների պատմական

զարգացման տրամաբանական կապակցության վրա: Փաստն ինքնին ուշագրավ է, որ հայ ազատագրական մտքի պատմաբան Աշ. Հովհաննիսյանը քննական հետազոտության ոլորտի մեջ է առել հայոց պատմության դարերն իր ամբողջական ընթացքով՝ սկսած հնագույն շրջանից մինչև իր ապրած օրերը: Ըստ Ս. Սարինյանի, Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունների երկար շղթայում գրեթե բաց օղակ չկա: Եթե «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» հիմնարար աշխատությունը ներառում է հարցի պատմությունը խոր միջնադարից մինչև XVIII դարասկիզբը, եթե առանձին ուսումնասիրություններում պատմաբանն արծարծել է XVIII դարի ազատագրական մտքի գլխավոր ուղղությունները և եթե ընդունենք, որ նա գերազանցապես զբաղեցրել է իրեն XIX դարի հասարակական կյանքի բարդ հանգույցների քննաբանությամբ, ապա ակներև է դառնում այն հսկայական ուղեգիծը, որ ակոսել է մեծ գիտնականի քննախույզ միտքը: Ավելին, հայ գրականության պատմության մեթոդաբանության հարցերն իրենց հերթին հանճառում են ուրույն պատմական շղթայակցում՝ ներառնելով ինչպես հին ու միջնադարյան, այնպես էլ նոր շրջանը:

«Վաղ և ուշ միջնադարի գրականության պատմության մեթոդաբանության տեսակետից,- գրում է Ս. Սարինյանը,- բացառիկ նշանակություն ունի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատությունը՝ հայ գրքի և մատենագրության պատմության բացառիկ երևույթներից մեկը: Հենց միայն աշխատության կոնցեպցիայի՝ ազատագրության տեսիլների լեգենդի կռահումը և սրա դարավոր ուղիների քննական վերլուծությունը, հենց միայն փաստա-աղբյուրագիտական հսկայական նյութի համակարգումը բավական են հավաստելու գիտնականի երևակայական քոչչքն ու տեսահորիզոնի լայնությունը, ինքնակարողության չափն ու ենթարկող ուժը: Հովհաննիսյանը, հիրավի, գիտական նոր բարձունքի վրա

դրեց հայ տեսական-պատմագիտական միտքը և իր տեղը վավերացրեց հայագիտության պատմության դասականների շարքում»[1]:

Աշ. Հովհաննիսյան հետազոտողի խորագնաց միտքը Հայաստանի պատմության բարդ միջավայրի սոցիալական ու մտավոր գաղափարական մթնոլորտը իմաստավորում է նոր լուսաբանությամբ, ընդլայնում ազգային պատմության ներքին բովանդակությունը՝ կապելով այն համաշխարհային իրադարձությունների և մտավոր որոնումների լայն հորիզոններին: «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» ուսումնասիրությունը տալիս է միջնադարյան Հայաստանի ներքաղաքական, սոցիալ-տնտեսական և սոցիալ-դասակարգային հարաբերությունների այնպիսի մեկնաբանություններ, որոնք մինչ այդ իսպառ ուսումնասիրված չէին հայ պատմաբանների կողմից: Չենք կարող չարձանագրել, որ այստեղ պատմաբանը հետամուտ է ոչ այնքան պատմական դեպքերի ժամանակագրական վավերագրությանը, որքան դրանց պատմա-իմաստասիրական իմաստի բացահայտմանը: Սկզբնաղբյուրների գիտական մշակումը և գաղափարական իմաստավորումը ինքնուրույն որակներ են անշուշտ: Յուրաքանչյուր գիտություն այնտեղ է հասնում բարձր կատարելության, երբ ստանում է իմաստասիրական կերպարանք, իսկ այնտեղ, որտեղ այն վերաճում է իմաստասիրության, ինքնին վավերացնում է օրինաչափություններ, որոնք ստանձնում են մեթոդաբանական ելակետի նշանակություն: Եվ հենց ամենից առաջ պատմության իմաստասիրության իմաստի մեջ պետք է տեսնել «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» նշանակությունը պատմության մեթոդաբանության տեսակետից: Իր այս ուսումնասիրության մեջ Աշ. Հովհաննիսյանը ջանաց և կարողացավ ցրել միջնադարյան Հայաստանի գաղափարաբանության միասնականության պատրանքը և հասարակական կառուց-

[1] Սարինյան Ս. Ն., Հայ գրականության պատմության մեթոդաբանության հարցերից, «Երջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 30-31:

վածքի բարդ շերտավորումների ոլորտում ի հայտ բերեց գաղափարական տարընթաց ուղղությունների դասակարգային ներհակ միտումները: Աշ. Հովհաննիսյանի վերլուծող միտքը «Դրվագներում» փայլուն արդյունքներ է բացահայտում, երբ քննում է ազատագրության լեգենդի դասային կողմնորոշումները, այն դիտարկում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների, գյուղացիության ու քաղաքային բնակչության սոցիալական շահերի կիզակետում:

Հասկանալի է ինքնին, Հայաստանի պատմության, հայկական մտքի ազդեցիկ գաղափարաբանությունը չէր կարող չարտացոլվել դարաշրջանի գեղարվեստական մտածողության մեջ, յուրովի անդրադարձնելով ժամանակի գաղափարաբանության սոցիալ-դասակարգային կողմնորոշումները:

Աշ. Հովհաննիսյանը «Դրվագների» էջերում ընթերցողին է ներկայացնում միջնադարյան Հայաստանի գրողներին ու մատենագիրներին, որոնց երկերում արտացոլվում են դարաշրջանի մտայնության նստվածքները: Նրանց մտավոր ժառանգության ընդհանուր համալիրում պատմաբանը սկսում է այն երակից, որը տանում է դեպի միջնադարի մտածող մարդկանց աշխարհայացքային հենքի բացահայտումը: Հեղինակը ոչ միայն հետաքրքրական, նոր հիմնավոր բնորոշումներ է տալիս դարաշրջանի մտածող մարդկանց սոցիալ-իմաստասիրական հայեցությանը, գտնում նոր երանգներ միջնադարյան հեղինակների աշխարհայեցության համակարգում (Գ.ր. Նարեկացի, Ն. Շնորհալի, Մ. Գոշ, Ֆրիկ, Առ. Դավրիժեցի, Ստ. Ասողիկ, Ա. Լաստիվերցի, Ն. Լամբրոնացի և ուրիշներ), այլև առաջադրում է տեսական դրույթներ, որոնք սկզբունքային նշանակություն ունեն հայ միջնադարյան գրականության պատմության մեկնաբանման տեսակետից:

Մեթոդաբանական առաջադրված սկզբունքները թե հետազոտական ինչ արդյունքներ են խոստանում կարելի է դատել Աշ. Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» ուսումնասիրությունից: Հայտնի է, որ միջնադարյան բանաստեղծներից Ֆրիկը

շատ ավելի է արժանացել գիտական քննության ինչպես բանասիրական, այնպես էլ պատմաքննական վերլուծության իմաստով: Ֆրիկի անհատականությանը և ստեղծագործության պատմական ու գեղարվեստական արժեքին խորիմաստ մեկնաբանություններ է տվել Մանուկ Աբեղյանը: Բայց միևնույն է, Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունը ոչ միայն բացում է շատ առեղծվածներ, այլև իր մեկնաբանություններով նոր մեկնարկի վրա է դնում Ֆրիկի աշխարհայացքի և իմաստասիրական սևեռումների գիտահետազոտական մեկնակետը:

Բանասիրական իր նորագյուտ մեկնաբանությամբ Աշ. Հովհաննիսյանը պատմական վավերաթղթերից որսում է Ֆրիկի ստեղծագործության մեջ այնքան առեղծվածային դիտված «մասաս» և «մասասչի» արտահայտությունները և տալիս դրանց սպառիչ պատասխանը, որն արժանանում է խոհեմ միջնադարագետների ամենաբարձր գնահատականին:

«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության մեջ Աշ. Հովհաննիսյանը չի սահմանափակվում միայն հայ ազատագրական տեսիլների ու լեգենդների տեսության վերլուծությամբ, այլ ցույց է տալիս պատմական տարբեր ժամանակաշրջանների առանձնահատկությունները, տվյալ ժամանակահատվածի բնորոշ սոցիալական միջավայրը և դրանցում տեսիլների կրած ձևական ու որակական փոփոխությունները:

Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում շուրջ հազարամյա ժամանակահատվածում հայ ժողովրդի որդեգրած սոցիալական և քաղաքական ընթացքի վրա, և այդ հանգամանքը հնարավորություն է տվել, նրա խոսքերով ասած, ազատագրական «շարժման իդեական տարբերակումներն ու բախումները լուսաբանելու կամ նրան մասնակցած դասակարգերի ու խմբավորումների, հոսանքների ու

գործիչների նպատակադրումներն ու հայացքներն ըմբռնելու համար»[2]:

Պատմության մատակարարած փաստերի խորազնին քննության հենքի վրա, պատմաբանը երևան է հանում այն խոտոր ուղիները, որոնցով ընթացել է հայ ժողովրդի ազատագրական միտքը, քննարկում հայ ազատագրական շարժման գործիչների ունեցած երբեմնի անհրատեսական պատրանքները: Աշ. Հովհաննիսյանի ուշադրության հանգուցակետում է գտնվել հատկապես այն նյութերի ուսումնասիրությունը, որոնք նախապատրաստեցին և սկզբնավորեցին ազատագրության համար պայքարող հայ ժողովրդի քաղաքական, պատմության կողմից արդարացված շրջադարձը դեպի Ռուսաստան, որոնք Իսրայել Օրուն, Եվրոպայում կատարած երկարատև դեգերումներից հետո, տարան Մոսկվա: Տրամաբանորեն ըմբռնելի դարձնելու և իմաստավորելու համար հայ ազատագրական մտքի շրջադարձը, պատմաբանն ըստ ամենայնի մեկնաբանում է արևմտաեվրոպական պետությունների հետ բանակցությունները, ցույց տալիս քաղաքական նախորդ ուղեգծի անհեռանկարայնությունը: Աշ. Հովհաննիսյանը պատմական զարգացման մինչև XVIII դարասկիզբը բնորոշող փաստերի հետազոտության հենքի վրա ակնբախ է դարձնում, որ եթե մինչև XVII դարի վերջը ռուսական կողմնորոշումը կրում էր էպիզոդիկ (դիպվածային) բնույթ, մասնակիորեն արտահայտվելով մշակութային և առևտրական կարգի առնչություններում, հաճախակի ցուցաղրելով գեթ հայ ղեկավար դասակարգերի առանձին ներկայացուցիչների միտումները, ապա հետագայում, արդեն XVIII դարի սկզբներից սկսած, երբ Արևելյան Հայաստանում հատկապես պայքար էր մղվում պարսկա-թուրքական բռնակալությունների լուծը թոթափելու համար, երբ ստեղծված ծանր կացության մեջ անհավասար գոտեմարտ մղող հայությունը օգնության և փրկության ամբողջ հույսը կապում էր դեպի հարավ առաջա-

---

[2] Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 7:

ցող Ռուսաստանի հետ, ռուսական կողմնորոշումը աստիճանաբար ստանում է համաժողովրդական երանգավորում, որով և ի վերջո պայմանավորվեց նրա հաղթանակը:

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրու գործունեության և XVIII դարի առաջին երեսնամյակի ազատագրական շարժումներին է նվիրված ռուսերեն լեզվով 1964 և 1967 թթ. երկու մասով լույս տեսած «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի առաջին երեսնամյակում» աշխատությունը Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ և ընդարձակ ներածականով: Պատմաբանի ներածությունը սերտորեն առնչվում է «Դրվագների» հետ և կազմում է նրա օրգանական շարունակությունը, ուր հեղինակը քննաբար վերլուծում է հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը բնորոշող կարևորագույն իրադարձությունները, երկու ժողովուրդների միջև եղած առևտրական, ռազմական և քաղաքական առնչությունները: Ընդարձակ իր ներածություն-ուսումնասիրությունում Աշ. Հովհաննիսյանը ցույց է տալիս, որ XVII դարավերջին և XVIII դարասկզբին Պարսկաստանում ծայր առած ժողովրդական շարժումները մեծ չափով նպաստում են նաև Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի և վրացիների ազատագրման ոգորումներին: Հանդես գալով որպես հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ռահվիրա, Իսրայել Օրին կատարում է քաղաքականորեն դարակազմիկ նշանակություն ունեցող շրջադարձ: Աշ. Հովհաննիսյանի վերլուծությունը ցույց է տալիս, թե որպիսի հեռատես քաղաքական գործիչ էր Իսրայել Օրին: Նա հասկանում էր, որ Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու փորձն իսկ անպայման հակադարձ վերաբերմունք կառաջացնի ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ դեպի Թուրքիան հակված լեզգի ֆեոդալների կողմից և սկզբից նեթ ջանում էր չեզոքացնել այդ վտանգը, վտանգ, որին չեզոքացնելուն ծառայելու էր ոչ միայն Սրբազան Հռոմեական կայսրության և Ռուսաստանի հակաթուրքական կոալիցիան, այլև Օրիի ձգտումը՝ դուրս բերել հայերի ազատագրական պայքարը ազգային պարփակ-

վածության փակոտից: Այդ էր շարժառիթը, ինչպես իրավացիորեն նկատում է Աշ. Հովհաննիսյանը, որ Օրին տակավին 1700-ական թվականների սկզբին սերտ հարաբերությունների մեջ է մտնում Մոսկվայում ապաստանած Իմերեթիայի Արշիլ թագավորի հետ, իսկ պարսկական դեսպանության տարիներին ջանում էր Ատրպատականի թուրք գործիչներին հակել դեպի Ռուսաստան: Աշ. Հովհաննիսյանի ներածականում ընդգծվում է հետագայում Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետի խաղացած կարևոր դերը հայ-վրացական և հայ-աղրբեջանական միացյալ հակաթուրքական ճակատի ստեղծման հարցում, Գանձակի 1724 թ. պայմանագրի կնքման, հայ ֆեոդալական վերին շերտում տիրող ներքին երկպառակություններին վերջ տալու գործում: Վերոհիշյալ ժողովածուի Աշ. Հովհաննիսյանի ներածականը կարևոր ուսումնասիրություն է, որն ամբողջացնում է տվյալ ժամանակաշրջանին նվիրված պատմաբանի աշխատությունները և այդ հարցում նոր մղումներ հաղորդում հայ նոր պատմագիտության զարգացմանը:

XIX դարի տարբեր ժամանակափուլերն ընդգրկող պատմաբանասիրական ուսումնասիրություններում Աշ. Հովհաննիսյանը հետամուտ եղավ մի գլխավոր նպատակի՝ վեր հանել հասարակական մտքի սոցիալական բազիսն ու գաղափարական հիմնաշերտերը, գտնել այն հիմնական օրինաչափությունները, որոնք գեղարվեստական գրականությունը մերձեցնում էին հասարակական մտքի պատմությանը և յուրովի արտացոլում հայկական նորադարյան կյանքի իրադարձությունները: Այստեղ էլ Աշ. Հովհաննիսյանի քննական հայացքը նախապես միտված էր հայ մտավոր մշակույթի պատմության ըմբռնումը ավանդական ազգային մեկնաբանությունների նեղ ոլորտից դուրս բերելու և ժամանակակից պատմագիտության առաջադիմական մեթոդաբանության ուղեգծի վրա դնելու մտահղացմամբ:

1933 թ. լույս տեսավ Աշ. Հովհաննիսյանի «Աբովյան» մենագրությունը: Դա հախուռն ներշնչանքի մի տրակտատ էր՝ բանավեճ

Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (1932 թ.) հետազոտական էտյուդի հետ:

Աշ. Հովհաննիսյանի գիտական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի ռահվիրա Միքայել Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրությունները: Տակավին 1930-ական թվականներին, Մոսկվայի և Լենինգրադի (Ս. Պետերբուրգ) կենտրոնական արխիվներում նյութեր հավաքելիս, Աշ. Հովհաննիսյանը հայտնաբերեց հայ հեղափոխական-դեմոկրատի մի շարք անտիպ երկերը, որոնք գալիս էին նոր լույս սփռելու նշանավոր գործչի ամբողջ գործունեության վրա: 1935 թ. բովանդակալից առաջաբանով և ընդարձակ մեկնաբանություններով հրատարակելով Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերը», Աշ. Հովհաննիսյանը ցույց տվեց, թե ինչպես մշակվեց հայ հեղափոխական-դեմոկրատի աշխարհայացքն ու ծավալվեց նրա գործունեությունը՝ շաղկապվելով սեփական ժողովրդի ազատագրական ձգտումների հետ: Դրանով իսկ հոդս էր ցնդում Մ. Նալբանդյանի անձի շուրջը հորինված այն առասպելը, թե նա և իր շուրջը համախմբված կողմնակիցները կտրված էին հայ իրականությունից և հանդիսանում էին սոսկ ռուս «նիհիլիստների» հայացքների ձայնատարներ: Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերում» Աշ. Հովհաննիսյանն առաջին անգամ բացահայտ դարձրեց հայ հեղափոխական շարժման կապը ռուս 60-ականների՝ Ալ. Գերցենի, Մ. Բակունինի, Ն. Օգարյովի, Ն. Չեռնիշևսկու հետ, քննարկեց Նալբանդյանի հեղափոխական ռազմավարությունն ու մարտավարությունը՝ սերտորեն առնչված նրանց հեղափոխական գաղափարներին: Բայց «Անտիպ երկերը» գեթ նախաքայլ հանդիսացան Մ. Նալբանդյանի կյանքի ու գործունեության, նրան ծնունդ տված և սնած միջավայրի ու ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության և քննական վերլուծության ուղղությամբ: Շարունակելով իր հետազոտությունները՝ Աշ. Հովհաննիսյանը դրանք ամփոփեց երկու

մեծածավալ հատորներում և 1955-1956 թթ. հրատարակեց «Նալբանդյանը և նրա ժամանակը» վերնագրով աշխատությունը:

Իմաստասիրական ու բանասիրական պատրաստությունը, ռուսական և եվրոպական հասարակական-քաղաքական և հեղափոխական շարժումների խորհմացությունը, ժամանակի հայկական իրականությանը հուզող խնդիրների գիտակցությունը Աշ. Հովհաննիսյանին հնարավորություն ընձեռեցին ստեղծելու մի հետազոտություն, որտեղ իրենց պատասխանն են ստացել 1850-1860-ական թվականների հայ հասարակական մտքի պատմության մի շարք բարդ ու կարևոր հիմնախնդիրներ: Այդ աշխատությունը հնարավորություն է ընձեռում բազմակողմանի պատկերացում կազմելու ինչպես Նալբանդյանի կյանքի ու գործունեության, նրա աշխարհայացքի հեղաբեկման, այնպես էլ նրա միջավայրի և ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական այլևայլ երևույթների ու իրադարձությունների զարգացման վերաբերյալ: Գրքի հեղինակը համոզիչ կերպով ներկայացնում է XIX դարակեսին Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրության ազդեցությամբ Մ. Նալբանդյանի ազգային-լուսավորական ամբողջ գործունեության մեջ առաջացած բեկումը: Հենց այդ պահից է, որ նա սկսում է մարտնչել հանուն հայկական դեմոկրատիայի ազատագրական ձգտումների միավորման ռուսական գյուղացիական հեղափոխության և Արևմուտքի մի շարք երկրներում ծավալված ազգային-ազատագրական շարժումների հետ:

Աշխատության մեջ համակողմանի ներկայացված և շատ հստակ բնորոշված են XIX դարի 50–60-ական թվականներին հայ իրականության մեջ գոյություն ունեցող հասարակական-քաղաքական չորս՝ կղերա-աղայական, ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական և հեղափոխական-դեմոկրատական հոսանքները՝ իրենց գործելակերպով և նպատակադրումներով, տարաձայնություններով և պայքարի ուրույն մեթոդներով: Այս հոսանքների գաղափարական և քաղաքական բնութագիրը միաժամանակ հնարավորություն է տվել բացահայտելու նրանց քաղաքական էվոլյուցիան:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԱՇ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ինչպես նշել ենք ներածությունում, հայ պատմագիտության մեջ խոսք ասելու իր անդրանիկ հայտը Աշ. Հովհաննիսյանը ներկայացնում է 1913 թվականին՝ Մյունխենում (գերմաներեն լեզվով) հրատարակելով «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» ուսումնասիրությունը, որը պաշտպանում է որպես դոկտորական դիսերտացիա և ստանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Վերադառնալով հայրենիք, նա 1914 թ. Շուշիից տեղափոխվում է Վաղարշապատ՝ Գևորգյան ճեմարանում աշխատում որպես լեզուների, քաղաքատնտեսության և ընդհանուր պատմության դասախոս: Պարապմունքներից ազատ ժամերին Մայր Աթոռի հարուստ գրադարանում և գրապահոցում ուսումնասիրում է վավերագրերի և փաստաթղթերի եզակի հավաքածուները և այդ ուսումնասիրությունների պատմաքննական արդյունքները, որպես հոդվածներ, տպագրում «Արարատ» ամսագրում: Սակայն 1919 թ. ամսագրի հրատարակությունը դադարելուց հետո, այդ ուսումնասիրություններից երկուսը («Հայ-ռուսական օրիենտացիայի ծագման խնդիրը» ու «Գեղամայ եւ Ծարայ մելիքների տոհմը») լույս են տեսնում համապատասխանաբար Հայաստանի գիտական ինստիտուտի տպագրությամբ 1921 թ. և նույն ինստիտուտի «Բանբերում» 1921 թվականի գիրք 1-2-ում: «Արարատ» ամսագրի հայագիտական մատենաշարով Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2007 թ. լույս է ընծայում իր հերթական համայրը, որտեղ ամփոփված են Աշ. Հովհաննիսյանի հոդվածները: Ժողովածուն կազմել, ծանոթագրությունները կատարել և «Աշ. Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը» խորագրով առաջաբանը գրել է լայնախոհ պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը: Աշ. Հովհաննիսյանն իր հետազոտություններում («ԺԳ

դարի մի ուղևորի վկայությունը հայոց մասին», «Նոր նյութեր հայ-ունիտորական պատմագրությունից», «Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը և տաճկաց նվիրակության խնդիրը», «Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին», «Գրախոսական-քննադատական նյութեր հայ մելիքության մասին, Բ պրակ, Դոփյանք և Մելիք-Շահնազարանք: Գրեց Կարապետ եպիսկոպոս, Ս. Էջմիածին, 1914, հրատ. Ազգ. ընկ.», «Պետրոս դի Սարգիս Գիլանենց» (պատմական-կենսագրական ակնարկ), «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը. պատմական-քննադատական ուսումնասիրություն», «Գեղամայ եւ Ծարայ մելիքների տոհմը») հետամուտ լինելով հայ ազատագրական մտքի պատմության անհայտ էջերի որոնմանը, երևան է հանում կարևոր նոր փաստեր և տալիս դրանց նոր մեկնաբանություններ: Աշ. Հովհաննիսյանի էջմիածնական շրջանի հայագիտական ուսումնասիրություններն աչքի են ընկնում ասելիքի թարմությամբ և մղում գիտական նոր մտորումների: Դրանցում շրջանառության մեջ դրված հետաքրքիր փաստերն ու գիտական մեկնաբանություններից շատերը որոշակի հենք հանդիսացան հետագայում ստեղծելու «Դիվագներ հայ ազատագրական մտքի պատմության» հայագիտական քացառիկ աշխատությունը: Հատկապես այս առումով ուշագրավ են «Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին» և «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը (պատմական-քննական ուսումնասիրություն)» հրապարակումները:

Վերոհիշյալ հոդվածներից առաջինում Աշ. Հովհաննիսյանը ռուսական արքունիքի հետ ունեցած Հակոբ Ջուղայեցու առնչությունների մասին գրում է, որ մինչ այժմ մեզ հայտնի տեղեկությունները չեն բխում անմիջական աղբյուրներից: Կաթողիկոսի մահից շատ հետո, 1699 թվականին Սյունյաց մելիքների անունից Եվրոպա ուղարկած մի շարք գրություններից պարզվում է, որ 1678 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության միջոցով ընտրված աշխարհական պատվիրակները, պարսկահայերի ազատագրման գործը գլուխ բերելու նպատակով Եվրոպայում կատարելիք շրջագայության ընթացքում, պետք է անցնեին Ռուսաստան՝ ցարից աջակցություն հայցելու:

Ռուսաստան դիմելու նպատակով հայ մելիքները Հակոբ Ջուղայեցու և երեք եկեղեցական պատվիրակների ուղեկցությամբ անցնում են Կ. Պոլիս, սակայն այստեղից, ինչ-ինչ պատճառներից դրդված, ստիպված են լինում կրկին դառնալ իրենց երկիրը[1]: XVIII դարի արշալույսին, երբ մի կողմից՝ Արևմտյան Եվրոպայի հետ հայ մելիքների սկսած բանակցություններն արդեն վերածվել էր հիասթափության, իսկ մյուս կողմից՝ սկսում էր աստիճանաբար արմատանալ այն հայացքը, թե պարսկահայության փրկության խարիսխը պետք է որոնել Ռուսաստանում, Իսրայել Օրին, մելիքների հավատարմատարը, կցում է վերը բերած վկայությանը ինչ-որ նոր մի հայտարարություն. 1678 թ. Էջմիածնում ընտրված աշխարհական պատվիրակները, պնդում է հայ դիվանագետը, հայերի ազատագրության գործը պետք է նախ Ռուսաստանի թագավորին հանձնարարեին, այդ իմաստով ժողովի կողմից կնիքներով վավերացված ինքնագիր թուղթ պետք է ներկայացնեին մոսկովյան կառավարությանը:

Հռոմեական կայսրին հայ պատվիրակները դիմելու էին միայն Մոսկվայից մերժում ստանալու դեպքում: Ծանրանալով ավելի ուշ արված վկայությունների վրա, Աշ. Հովհաննիսյանը դրանց պատմական իսկությունը ենթարկում է կասկածանքի: Սկսելով XVII դարի հայ-ռուսական հարաբերությունների ընդհանուր բնույթից, նա հավանական չի համարել, որ Հակոբ Ջուղայեցու ժամանակ հայերը լուրջ ակնկալություններ ունենային Ռուսաստանից: «Ամենից քիչը,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- հավանական էր թվում մեզ այն, որ հայերը իրենց քաղաքական բախտը կարող էին առանց արտաքին հարկադրանքի այդքան վաղ կապել բացառապես Ռուսաստանի հետ. Օրիի այդ պայմաններում տված ցուցմունքները, ունենալով նրա հետագա վկայությունների հակառակ իմաստը, կարող էին ծառայել որպես մեր կասկածանքն արդարացնող լրացուցիչ հանգամանքներ միայն»[2]: Այդ կասկածը, շարունակում է գիտնականը, կարծես խոս-

---

[1] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին, «Արարատ», 1915, N 9-10, էջ 775, տե՛ս նաև՝ Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, փաստաթուղթ N 5, 44:

[2] «Արարատ», 1915, N 9-10, էջ 776:

տանում է փարատել հետագայում լատիներենով գրված մի թուղթ, որ ինքը հայնաբերել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության Մոսկվայի գլխավոր դիվանում աշխատելիս, բայց և անկախ դրանից՝ այդ գրությունը խոշոր արժեք է ներկայացնում, որպես հայ-ռուսական հարաբերություններից բխող մինչ այժմ հայտնի քաղաքական փաստաթղթերից հնագույնը[3]: Այլևայլ փաստերի համադրման և հակադրման քննության հենքի վրա Աշ. Հովհաննիսյանը ենթադրում է, որ իր ձեռքը հասած թուղթը հայերեն բնագրի հետ ուղարկված թարգմանությունն է, այլապես այն ավելի պատշաճ տեսք կունենար. նաև հավանական է այն, որ այդ թարգմանությունը պատրաստված լինի այն կաթոլիկ քարոզիչների ձեռքով, որոնց հետ սերտ առնչություն ուներ Հակոբ Ջուղայեցին 1670-ական թվականներին: Այդ ժամանակաշրջանում եվրոպական արքունիքների հետ հայերի քաղաքական վիճակի բարելավման խնդրի շուրջը բանակցել կամ թղթակցել է նա մի քանի անգամ, աչքի առաջ ունենալով այդ մասին մեզ մատչելի բոլոր հիշատակությունները[4]: Մենք հնարավորություն չունենք, գրում է հետազոտողը, հենվելով դրանց վրա որոշել պատմական այն պահը, երբ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը կարող էր անհրաժեշտ դիտել կամ հնարավորություն ստանալ դիմելու ռուսական կառավարությանը:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, թերևս կարելի լիներ նույնացնել այդ գրությանն այն կնքված թղթի հետ, որի մասին հիշում է Իսրայել Օրին, եթե իր համեստ քաղաքական ակնկալություններով նա էջմիածնում մշակած ծանրակշիռ քաղաքական ծրագրից տարբեր իմաստ չունենար: Ստուգված պետք է համարել արդեն իսկ, որ Էջմիածնի խորհրդաժողովին մասնակցող մելիքները և նրանց ցուցմունքով գործող կաթողիկոսը քաղաքական ազատագրումն ամենից առաջ կապում էին հայ-վրացական ապստամբության և այդ ապստամբությունը ղեկավարող կաթոլիկ Եվրոպայի աջակցության հետ: Սակայն եթե ըստ էության քննելու լինենք մեզ հասած գրությունը,

---

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Ashot Johannissian,** Israel Ori und Armenische befreiungsidee. Munchen, 1913, էջ 43:

կտեսնենք, որ այստեղ քաղաքական ձգտումները այնքան էլ հեռուն չեն հասնում: Հիշեցնելով բարոյական և նյութական այն զրկանքները, որ ենթարկվում են Պարսկաստանի հայերը, կաթողիկոսը ցարին աղերսում է՝ ի նպաստ պարսկահպատակ հայերի իր դեսպանների միջոցով միջնորդել պարսկական կառավարությանը՝ գնահատելով շահնշահի կառավարության վրա ունեցած ռուսական դիվանագետների ազդեցությունը: Հայոց կաթողիկոսը հույս ուներ, թե նրանց միջնորդությամբ կարող է բարերար հետևանքներով անդրադառնալ հայերի դրության վրա: Միայն այսքանը: Դժվար էլ է ենթադրել ինքնին, թե 1678 թվականին, ծրագրած ապստամբության նախօրեին, հայերը հույս կարող էին դնել դիվանագիտական գործերի վրա: Իսկ դա նշանակում է, որ դիմումն արված պիտի լիներ այդ ժամանակից ավելի վաղ: Ընդսմին, Աշ. Հովհաննիսյանը նաև գտնում է, որ Էջմիածնում կայացած խորհրդակցության թվականը ևս կարոտ է ստուգության, քանզի խորհրդակցության արծարծած քաղաքական ծրագրի հիմնական մտքերին հանդիպում ենք տակավին Հայր Պետրոս Բեդիկի աշխատության մեջ, որը լույս տեսավ Վիեննայում նույն 1678 թվականին: Որոշ աղբյուրների տեղեկությունների վրա հենվելով՝ Աշ. Հովհաննիսյանը համոզմունք է հայտնում, որ Հայր Բեդիկը Պարսկաստանից մեկնած պետք է լինի 1676 թվականին: Մի ուրիշ ժամանակակից Րիկո անունով, 1678 թվականին գտնվելով Հռոմում, լսում է կաթողիկոսի գլխավորությամբ Եվրոպա մեկնող հայ պատվիրակների վերաբերյալ ողջ «Եկեղեցական պետության մեջ» (Պապական Հռոմում- Ն. Ս.) այդ ժամանակ արդեն տարածված լուրի մասին: Աշ. Հովհաննիսյանն անտեսում է նաև Հակոբ Ջուղայեցուն վերաբերող այն մի քանի հակիրճ տողերը, որ տեղ են գտել Ջաքարիա Ագուլեցու օրագրության մեջ («թվին ՌՃ-ԻԶ (1677) յունիսի մէջ Երեւանի...խանիցն փախաւ գնաց վրացտուն...»[5]:

[5] Աշ. Հովհաննիսյանը հոդվածի տողատակում նշում է «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Էր., 64: Միաժամանակ հավելում է, որ «ԺԷ դարի գարդ չհրապարակած ժամանակագրողի այս գործը սիրալիր կերպով մեր տրամադրության տակ դրեց պ. Լեոն».

Դատելով Զաքարիա սարկավագի վկայությունից, Աշ. Հովհաննիսյանը կարծում է, որ Էջմիածնի ժողովը պետք է տեղի ունեցած լինի Վրաստան կաթողիկոսի մեկնելուց անմիջապես առաջ, նշանակում է՝ ոչ ուշ, քան 1677 թ. հունիսի սկիզբը: Վրաց իշխանությունների հետ համերաշխ գործակցության ծրագիր մշակելու, ինչպես նաև Էջմիածնի պարտքերը վճարելու մասին հոգ տանելու նպատակով՝ կաթողիկոսը որոշ ժամանակ պետք է որ մնացած լինի Թիֆլիսում: Շատ տրամաբանական է միաժամանակ, որ հայ պատվիրակները Թուրքիայի ներքին նահանգներում հապաղած լինեն, քանի որ ինչպես Մ. Չամչյանն է վկայում, կաթողիկոսը Կ. Պոլիս հասավ միայն 1679 թ. դեկտեմբերին[6]:

Կ. Եզյանի հրատարակած «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» ժողովածուի մեջ բազմիցս հանդիպող այն վկայությունը, թե Էջմիածնի խորհրդաժողովը տեղի է ունեցել 1678 թվականին, Աշ. Հովհաննիսյանին թվում է, որ չի կարող լինել միանգամայն վստահելի, քանի որ ելնում է շուրջ քառորդ դար հետո փաստն արձանագրող մի ընդհանուր աղբյուրից:

Սակայն, ի վերջո, ըստ Աշ. Հովհաննիսյանի, «ինչպես էլ սահմանելու լինենք ներկա գրության հանդես գալու ժամանակը, նրա «պատմական բովանդակությունը հազիվ թե կարող է տեղիք տալ տարակուսանքի, նա նորից առիթ է տալիս մեզ պնդելու այն կարծիքի վրա, թե ԺԷ դարում «Հայկական հարցի» մասին վճռական խոսքը դեռ չէր պատկանում մոսկովյան ցարին: Հայաստանի քաղաքագետները կարող էին մտածել ռուս դիվանագետների բարյացակամ միջնորդությունների մասին միայն: Հայ մեսիանական գաղափարը դեռ չէր թևակոխել զարգացման այն օրհասական շրջանը, որտեղ հյուսիսից արշավող ծիրանավորը հմայում է անճկության մեջ դեգերող հոգիները որպես մի նոր փրկիչ»[7]:

Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության և հայերի քաղաքական կողմնորոշման հարցերի քննական վերլուծության

---

[6] Տե՛ս Չամչյան Մ., Պատմութիւն հայոց, հ. Գ., Վենետիկ, 1784, էջ 718.
[7] «Արարատ», 1915, N 9-10, էջ 781:

ասպարեզում հատկապես հատկանշական է Աշ. Հովհաննիսյանի «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» ուսումնասիրությունը: Այստեղ փաստական հարուստ նյութերի վերլուծության հիման վրա պատմաբանը հանգել է որոշակի եզրահանգման՝ հերքել է հայերի ռուսական կողմնորոշման ծագման մասին տիրող տեսությունը: Հայերի քաղաքական կողմնորոշման խնդրին Աշ. Հովհաննիսյանն անդրադարձել է նաև «Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից» ուղեցույցային աշխատության մեջ, որտեղ նա արդեն խմբագրում, վերջնականապես հստակեցնում է իր տեսակետը և առավել որոշակիորեն արտահայտվում հայ ազատագրական մտքի վերադիրքավորման ինչպես ժամանակաշրջանի, այնպես էլ պատճառների վերաբերյալ՝ այդ հանգամանորեն աղերսելով Իսրայել Օրու ղեկավարության հետ, որը երես դարձնելով արևմտաեվրոպական կողմնորոշման տրորված շավիղներից և դիմաշրջվելով դեպի Մոսկովյան պետություն, հայ ժողովրդի քաղաքական ազատագրման ծրագիրը կապեց բացառապես միայն Ռուսաստանի միջամտության հետ: Որ Աշ. Հովհաննիսյանի ազատագրական շարժման նախասիրած պատմական գործիչը Իսրայել Օրին էր, ակնհայտ դարձավ տակավին Մյունխենում գերմաներեն լեզվով հրատարակած «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» երախայրիքում: Հետագայում նա այդ թեմայից երբեք չհրաժարվեց: Էջմիածնական տարիներին գրած «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» աշխատությունը շարադրելիս նա Մոսկվայի Հին վավերագրերի պետական կենտրոնական արխիվում հայտնաբերեց բազմաթիվ օգտակար վավերագրեր, որոնցից յոթը վերաբերում էին Օրիի գործունեությանը, որոնք նա հրապարակեց այդ ուսումնասիրության հավելվածում: Արդեն վանաձորյան (կիրովականյան) մեկուսացման տարիներին՝ 1947-1948 թվականներին, նա ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հանձնարարությամբ շարադրում է «Իսրայել Օրին և նրա նախորդները» աշխատությունը, որտեղ ամփոփում է տարիների իր կուտակած նյութը և ստեղծում մի ընդհանրացնող աշխատություն: Տակավին չտպագիր այդ աշխատությունն է, որ հենք դարձավ «Հրվագներ

հայ ազատագրական մտքի պատմության» հիմնարար մենագրության համար, մի մնայուն գործ, որը պատիվ է բերում ոչ միայն հեղինակին, այլև բովանդակ դասական հայագիտությանը:

«Մինչև ԺԷ դարի վերջերը,- գրում է Աշ. Հովհաննիսյանը «Հայոռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» իր ուսումնասիրության մեջ,- հայ քաղաքական մտայնությունը հածում էր «ֆրանկ» խաչակիրների կազմակերպելիք արշավանքների հետ շաղկապող բաղձանքների շուրջը: Օրու և Մինաս վարդապետի քաղաքական-դիվանագիտական բանակցություններն ընթացան նախ և առաջ հայ քաղաքական ակնկալությունների բանուկ ճանապարհով: Փրկության այն ուղին, որ բռնեցին նրանք, առաջնորդեց նրանց Հռոմից կաթոլիկ Եվրոպայի արքունիքները: Այստեղ կրած ծանր հուսախաբությունից հետո հայ դիվանագետները բարյացակամ եվրոպացիների խորհրդով հարկադրված եղան ի վերջո ցարի կառավարությունից աղերսել պարսկահայերի ազատագրումը»[8]:

Արդ՝ ո՞վ էր Իսրայել Օրին և ի՞նչ դերակատարություն ուներ նրա հավատարիմ գործակիցը՝ Մինաս վարդապետ Տիգրանյանը: Այս հարցի հիմնավոր պատասխանն ընթերցողը կարող է գտնել Կ. Եզյանի և Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրություններում: Եվ այսպես: Սյունիքի Սիսիան գյուղում 1659 թ. ծնված հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրին Հայաստանի ազատագրության հարցով 1677 թ. Էջմիածնի գաղտնի ժողովում ընտրված պատվիրակների և հոր՝ Մելիք Իսրայելի հետ 1679 թ. դեկտեմբերին մեկնում է Կ. Պոլիս: Պատվիրակության՝ Եվրոպա մեկնելու ձախողումից հետո պատվիրակ արքեպիսկոպոսներից մեկի հանձնարարությամբ, հայ վաճառականների հետ 1680 թ. վերջին անցնում է Վենետիկ, 1683 թվականին՝ Փարիզ, որտեղ սկզբից զբաղվում է ֆրանսիական բանակի պարենմատակարարմամբ, այնուհետև մտնում զինվորական ծառայության՝ հետևազորի լեյտենանտի, հե-

---

[8] Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, док. N 40. տես նաև՝ Հովհաննիսյան Աշ., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, Էջմիածին, 1921, էջ 38.

տո՝ հեծելազորի կապիտանի աստիճանով և 1688-1695 թթ. մասնակցում անգլո-ֆրանսիական պատերազմին: 1695 թ. գերի է ընկնում անգլիացիներին, այնուհետև ազատվում և մեկնում Հռենոսյան Պֆալց, որտեղ դառնում է Հայդելբերգի, Ֆրակենթալի և Մանհայմի մատակարարման կոմիսար: 1698 թ. կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին ներշնչել է Հայաստանը նվաճելու, նրա թագավորը դառնալու և Օսմանյան կայսրության (որի դեմ մղվող պատերազմին այդ ժամանակ մասնակցում էր նաև Պֆալցը) թիկունքում անկախ Հայաստան և Վրաստան կազմավորելու միտքը: Հովհան Վիլհելմը համաձայնում է և Իսրայել Օրու միջոցով թղթեր հղում Քարթլիի Գիորգի XI թագավորին, հայ մելիքներին, Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսներին ու մանրամասն տեղեկություններ խնդրում Հայաստանի և հարակից երկրների տնտեսական, քաղաքական և ռազմական պայմանների մասին: 1698 թ. օգոստոսին Իսրայել Օրին ժամանում է Վիեննա՝ ավստրիական Լեոպոլդ Առաջին կայսրից ևս հուսադրող գրություն ստանալու, սակայն մերժվում է Թուրքիայի հետ սկսված խաղաղության բանակցությունների պատճառով: Այնուհետև Իսրայել Օրին մեկնում է Ֆլորենցիա, ստանում Տոսկանայի դուքս Կոզմաս Երրորդի համաձայնությունը և 1699 թ. ուղևորվում Հայաստան: Սակայն Հայաստանում և Վրաստանում իրավիճակը լիովին փոխվել էր: Նախկինում ապստամբ Գիորգի XI-ը հնազանդվել և գտնվում էր Սպահանում, իսկ Հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեսացին ու Գանձասարի Սիմոն կաթողիկոսը չեն արձագանքում Իսրայել Օրու ձեռնարկած ծրագրին: Միայն Սելիք Սաֆրազի օժանդակությամբ Իսրայել Օրուն հաջողվում է Սիսիանի գավառի Անգեղակոթ ավանում 1699 թ. ապրիլին հրավիրել Սյունիքի 11 մելիքների խորհրդաժողով, որտեղ կազմվում են գրություններ՝ ուղղված Հովհան Վիլհելմին (Հայաստանի թագը ստանալու), Հռոմի պապին, ավստրիական կայսրին, Տոսկանայի դքսին և Ռուսաստանի ցար Պետրոս Մեծին՝ Հայաստանի ազատագրության գործին սատարելու խնդրանքով: Անգեղակոթի ժողովը Իսրայել Օրուն տրամադրել է նաև մաքուր, կնքված թղթեր՝ ըստ անհրաժեշտության դիմումներ կատարելու: Իսրայել Օրու հետ Եվրոպա

է ուղարկվել Մինաս վարդապետ Տիգրանյանցը՝ որպես մելիքների ներկայացուցիչ և Իսրայել Օրու օգնական: 1699 թ. սեպտեմբերին մեկնելով Դյուսելդորֆ՝ Իսրայել Օրին և Մինաս վարդապետը մշակում և 1700 թ. սկզբին Հովհան Վիլհելմին են ներկայացնում Հայաստանի ազատագրության ծրագիր (Պֆալցյան), ըստ որի կազմվելու էր եռյակ դաշինք (Ավստրիա, Պֆալց և Տոսկանա): Դաշնակիցների բանակը պետք է անցներ Ռուսաստանով՝ վերջինիս համաձայնությամբ, հետևաբար, ծրագրի իրագործմանը պետք է մասնակցեր նաև Ռուսաստանը: Արտաքին օգնությունը դիտվում է որպես ազդակ՝ երկրում ապստամբական շարժում հրահրելու: Հայաստանի ազատագրությունը պետք է իրագործվեր հիմնականում սեփական ուժերով: Ծրագրում առաջնահերթ տեղը տրվում էր պարսկական լծի տակ գտնվող Արևելյան Հայաստանի ազատագրմանը՝ հատուկ ընդգծելով հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարի անհրաժեշտության գաղափարը: Ծրագիրն իրականացնելու համար Հովհան Վիլհելմը Իսրայել Օրուն հանձնարարականներով ուղարկում է Տոսկանայի դքսի և ավստրիական կայսրի մոտ, սակայն վերջինս հրաժարվում է Հայաստանի ազատագրման գործին մասնակցելուց՝ Իսպանական ժառանգության համար սկսված պատերազմի պատճառով: Ավստրիայի հրաժարումը խափանում է եռյակ դաշինքի ստեղծումը և, Արևմուտքից հույսը կտրած, Իսրայել Օրին 1701 թ. մեկնում է Մոսկվա: Ռուս պետական գործիչների հետ վարած բանակցությունները Իսրայել Օրուն հանգեցնում են այն մտքին, որ քրիստոնյա Ռուսաստանը, որպես մերձավոր և Արևելքում լուրջ քաղաքական և տնտեսական շահագրգռություններ ունեցող երկիր, ի վիճակի և տրամադիր է սատարել Հայաստանի ազատագրության գործին:

Ուստի Իսրայել Օրին մշակում է նոր ծրագիր (մոսկովյան), որում Հայաստանի ազատագրման գործում գլխավոր դերը հատկացվում էր Ռուսաստանին: Վերջինս պետք է տրամադրեր 25-հազարանոց բանակ, որը Դարիալի կիրճով ու Կասպից ծովով մտնելու էր Հայաստան, ուր նրան էին միանալու հայ և վրաց ապստամբները և համատեղ ուժերով, օգտվելով Պարսկաստանի ընդհանուր թուլությու-

նից, կարճ ժամանակում ազատագրելու էին Արևելյան Հայաստանը: Ըստ Իսրայել Օրու, ռուսական օգնությունը պետք է զուգակցվեր հայերի ապստամբական շարժման հետ, որպես ազատագրության և ազգային պետականության կայուն երաշխիք: Հասկանալով, որ Արևելյան Հայաստանն ազատագրելու անհաջող փորձը կարող է վտանգավոր դրություն ստեղծել հայ ժողովրդի համար՝ Իսրայել Օրին ձգտում է ապահովել Ռուսաստանի և Հռոմեական Սրբազան կայսրության հակաթուրքական կոալիցիան, փորձում հայ ժողովրդի ազատագրական պայքարը դուրս բերել ազգային պարփակվածությունից: Այդ նպատակով էլ սերտ հարաբերություններ է հաստատում Մոսկվայում ապաստանած Իմերեթի թագավոր Արչիլ II-ի, իսկ հետագայում նաև անդրկովկասյան այլ գործիչների հետ: Ծրագիրը ռուսական կառավարությանն է ներկայացվում 1701 թ. հուլիսի 25-ին: Հոկտեմբերին Պետրոս Մեծն ընդունում և զրուցում է Իսրայել Օրու և Մինաս վարդապետի հետ, իսկ 1701 թ. մարտին հայ պատվիրակներին պաշտոնապես հայտնվում է, որ ռուսական արքունիքը Հայաստանի ազատագրության հարցով կզբաղվի միայն Հյուսիսային (Շվեդական) պատերազմից հետո: Դիվանագիտական գրություններից պարզվում է, որ Օրիին և Մինաս վարդապետին 1702 թ. մարտին պատվիրված է եղել հարմար մարդու միջոցով հուսադրել հայերին: Իսրայել Օրին և Մինաս վարդապետը պետք է իրազեկ դարձնեին մելիքներին ռուսական կառավարության բարեհաճ մտադրության մասին՝ շվեդական պատերազմի շուտափույթ ավարտից հետո ձեռնարկել պարսկահայերի ազատագրության գործին[9]: Հայ պատվիրակները խոստանում են կատարել այդ պահանջը և առաջարկում են այդ նպատակով Հայաստան ուղարկել Միրոն անունով մեկին, որը ծագումով հայ էր, Մոսկվայում ուներ տուն և ընտանիք, ուստի և հանճնարարվում էր Օրիի և Մինաս վարդապետի կողմից որպես վստահելի մարդ[10]: Օրիին և Մինաս վարդապետին հղած 1703 թ. ապրիլի 15-ի թվակիր նամակի

[9] Տե՛ս **Эзов Г.**, նույն տեղում, փաստ. N 59:
[10] Տե՛ս նույն տեղում, փաստ. N 60:

թարգմանության մեջ մելիքները հայտնում են, որ Միրոնի միջոցով ստացել են նրանց 1702 թ. մայիսի 10-ին գրած նամակը, որին և պատասխանում են մի վանականի և Յովակիմ անունով մարդու միջոցով: Իսկ ինչ վերաբերում է Միրոնին, նա Մոսկվա է վերադարձել 1703 թ. ամառը: Դեսպանական պրիկազում նրա տված բացատրություններից երևում է, որ 1702 թ. մայիսին Իսրայել Օրիի նամակներով նա ուղարկվել է Էջմիածնի կաթողիկոս Նահապետի մոտ: Աստրախանի և Շամախու վրայով Միրոնը գալիս է Մոսկվայից Գանձակ, այստեղից անցնում է Չարդախլու և հանձնում Օրիի նամակներից մեկը Աղվանից կաթողիկոսին: Այստեղից նա մեկնում է Էջմիածին՝ Նահապետ կաթողիկոսի մոտ և այդտեղ Ս. Գրիգորի վանքում հանձնում նրան Օրիի երկրորդ նամակը: Այդ նամակներին տրված պատասխանների քաղաքական հույժ կարևորության վրա շատ չծանրանալով, Աշ. Հովհաննիսյանը առավել շատ առաջնային է համարում այն, որ Իսրայել Օրու գործուն նախաձեռնությամբ կազմվում և ռուսական կառավարությանն է ներկայացվում նաև Հայաստանի քարտեզը: Այնուհետև դեպի Անդրկովկաս նախատեսվող արշավանքի հաջողության համար Պարսկաստանի ներքին դրության մասին առավել ճշգրիտ տեղեկություններ հավաքելու և հայ ու վրաց ապստամբական ուժերը համախմբելու նպատակով ռուսական արքունիքը հավանություն է տալիս նաև Իսրայել Օրու առաջ քաշած պարսկական դեսպանագնացության գաղափարին: Դեսպանության նկատմամբ կասկածանք չառաջացնելու նպատակով նա 1704 թվականին մեկնում է Եվրոպա, Հռոմի պապից ձեռք բերում պարսկական տիրապետությունում քրիստոնյաների հալածանքը դադարեցնելու մասին պարսկական շահին ուղղված դիմում, գնում է զենք, և 1706 թ. վերադառնում Ռուսաստան: Համանման դիմում է գրում նաև Պետրոս Մեծը, Իսրայել Օրուն շնորհում է ռուսական բանակի գնդապետի աստիճան, նշանակում դեսպանության ղեկավար և 1707 թ. ուղարկում Պարսկաստան: Իսրայել Օրին 1708 թ. սկզբին շքախմբով և ռազմական ջոկատի ուղեկցությամբ մուտք է գործում Պարսկաստանի տիրապետության տարածք:

Իսրայել Օրին չնայած պաշտոնապես Հռոմի պապի դեսպան էր, սակայն հանդիպում է մեծ արգելքների: Պարսկաստանում գործող արևմտաեվրոպական միսիոներները Հուսեին շահին համոզում էին, թե Իսրայել Օրու նպատակը հայկական պետականության վերականգնումն է: Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ, Իսրայել Օրուն հաջողվում է 1709 թ. տեսակցել շահի հետ, որից հետո վերադառնում է Անդրկովկաս և այնտեղ մնում մինչև 1711 թվականը: Այդ ընթացքում նա հանդիպումներ է ունենում հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցու, Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, հայ մելիքների և անդրկովկասյան այլ գործիչների հետ, որոնց նպատակն էր ազատագրական շարժման բորբոքումը, ընդհանուր հակապարսկական ճակատի և միացյալ զորական ուժերի ստեղծումը: Եսայի Հասան-Ջալալյանի հետ 1711 թ. նա վերադառնում է Աստրախան, որտեղ օգոստոսին, ժամանակակիցներին գրեթե անհայտ հանգամանքներում, հանկարծամահ է լինում: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործչի՝ Իսրայել Օրու սկսած և ավարտին չհասցրած գործը նոր իրողությունների, քաղաքական պայմանների թելադրանքին համապատասխան շարունակեց նրա մերձավոր գործակից Մինաս վարդապետը: Իսրայել Օրու մահից հետո Մինաս վարդապետ Տիգրանյանը (1658-1740) հիմնականում միջնորդի դեր է կատարել ռուսական կառավարության և հայ ազատագրական շարժման երևելի գործիչների միջև: Ռուսական կառավարության հանձնարարությամբ, Պետրոս Առաջինի պարսկական արշավանքից առաջ, 1715-1716 թթ. եղել է Անդրկովկասում, այցելել Գանձասար և Էջմիածին: 1716 թ. Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Մինաս վարդապետին ձեռնադրել է եպիսկոպոս և նշանակել Ռուսաստանի հայերի հոգևոր առաջնորդ: Մասնակցել է 1722 թ. Պետրոս Առաջինի պարսկական արշավանքին: 1720-ական թվականներին ծավալված հայ ազատագրական շարժումների ժամանակ, ռուսական արքունիքում ներկայացրել և պաշտպանել է ազատագրական պայքարի ելած հայ ժողովրդի շահերը: 1740 թ. ընդունել է ուղղափառություն և նույն թվականին էլ կնքել իր մահկանացուն:

Մինաս վարդապետի հանձնարարությամբ և ռուսական կառավարության գիտությամբ ու ցանկությամբ 1722 թ. ապրիլին, այն ժամանակ, երբ Աստրախանում պատրաստություն էր տեսնվում առաջին պարսկական արշավանքի համար, Գիլանենց Պետրոս դի Սարգիսը (հայկական աղբյուրներում՝ Պետրոս դի Սարգիս Գիլանենց, ռուսական աղբյուրներում՝ Պյոտր Գիլանսկի, Պետրոս Կալանիցկի, Պյոտր Սերգեև, ճշված թիվը անհայտ) իր 10 հավատարիմների հետ գալիս է Պարսկաստան: Նրան հանձնարարված էր տեղեկություններ հավաքել այստեղ քաղաքական անցքերի մասին, իր փոքրիկ խմբի միջոցով զինվորական հետախուզություն կատարել Գիլանի շրջանում, այն երկրում, որ իր արդյունաբերությամբ վաղուց էր արժանացել ռուսական ցարի առանձին ուշադրությանը: Իսկ ո՞վ էր Գիլանենցը:

Պետրոս դի Սարգիս Գիլանենցը իր սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում՝ Նոր Ջուղայում, Ամենափրկիչ վանքի դպրանոցում: Լավ տիրապետել է մայրենի լեզվին, իմացել է արևելյան և մի քանի եվրոպական լեզուներ: Վաղ հասակից ներգրավվել է հոր առևտրական գործունեության մեջ, ճանապարհորդել Մերձավոր և Միջին Արևելքում, Ռուսաստանում և Եվրոպայում: Առևտրական գործերից առավել հետաքրքրվել է ազգային խնդիրներով: 1716 թ. արդեն անձնական ծանոթություն է ունեցել Ամստերդամում գործող նշանավոր տպագրիչ Ղուկաս Վանանդեցու հետ, աջակցել նրան՝ հայերեն գրքերի լույս ընծայման գործում: Գիլանենցի ջանքերով ու միջոցներով, Պետրոս Առաջինի՝ պարսկական արշավանքի նախօրյակին, Աստրախանում կազմակերպվել է հայկական առաջին հեծյալ ջոկատը, ձիեր, զենք, ռազմամթերք, հանդերձանք ու սնունդ հայթայթելու համար նա տրամադրել է նյութական միջոցներ: 1722 թ. հունիսին Աստրախանից դեպի Կասպիականի ափերն արշավող ռուսական զորքերի թվում էր նաև հայկական հեծյալ ջոկատը՝ Գիլանենցի հրամանատարությամբ: Օգոստոսի 23-ին ռուսական առաջապահ զորամասերի հետ, այդ ջոկատը մտնում է Դերբենդ: Ռուսական զորքերին անջատ-անջատ համագործակցող հայկական երեք ջոկատների հրամանատարներ Գիլանենցի, Այվազ Աբրահամովի և Աղա-

զար դի Խաչիկ Ախիջանենցի միջև 1723 թվականին Ռեշտ քաղաքի մոտ համաձայնություն է կայացվում ուժերը միավորելու մասին, և այդպիսով ձևավորվում է Հայկական էսկադրոնը: Մինչև իր կյանքի վերջը այն գլխավորում է Գիլանենցը՝ հաջողությամբ կատարելով ռուսական հրամանատարության մարտական առաջադրանքները: Ռուսական արքունիքին ուղարկած իր զեկուցագրերից մեկում գեներալ Վ. Յա. Լևաշովը գրել է, որ հայ Պյոտր Սերգեևը հավատարիմ ու ջանասեր ծառայությամբ, ունեցած հեծյալներով (որոնց պահում է իր միջոցներով) ինձ մեծ օգնություն է ցույց տալիս, և նրան ներկայացրել է պարգևատրման: Ռուս զինվորականների հետ այնքան բարեկամական էին Գիլանենցի հարաբերությունները, որ Մինաս վարդապետին ուղղված գրության մեջ ողջույններ էր ուղարկում նրանց կողմից: Գիլանենցը թողել է Նոր Ջուղայի բարբառով գրված զեկուցագրերի մի ժողովածու՝ կազմված 133 միավորից, որի մի մասը հասցեագրված է ռուսական հրամանատարությանը, իսկ մյուսը՝ Մինաս վարդապետին: Զեկուցագրերի մեջ բացի հակառակորդի զինված ուժերի վերաբերյալ, նրանց տեղաբաշխվածության մասին ուշագրավ տվյալներից, արժեքավոր նյութեր կան Անդրկովկասի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների ռազմաքաղաքական իրավիճակի և այլ բնույթի տեղեկություններ:

1722-1723 թթ. ընթացքում չնայած ռուսները մերձկասպյան երկրներում գրավեցին Դերբենդը, Բաքուն և Ռեշտը, բայց ընդհանուր առմամբ դեպքերի գործընթացը զարգանում էր ոչ ի նպաստ հայ ազատագրական շարժման: Ռուսների տիրապետությունից դուրս մնաց այդ գծի վրա վաճառաշահ Շամախին, որտեղ ամրացել էին լեզգիները: Էլ չենք խոսում այն մասին, որ Վրաստանն ու Հայաստանը սկզբից նեթ ռուսների անմիջական մտահոգության շրջանից դուրս էին գտնվում: Այդ երկրներին տիրելու համար պետք էր ընդհարվել Պարսկաստանի և, որ ամենադժվարինն էր, Թուրքիայի հետ, իսկ նման պատերազմներ մղելու համար այդ պահին ռուսները ոչ ցանկություն ունեին և ոչ էլ, որ ավելի էական էր՝ հնարավորություն: Ավելին, նույնիսկ գրված տարածքները Ռուսաստանը հազիվ էր կարո-

ղանում պահել իր զենքի իշխանության տակ: Ջորքի կանոնավոր պարենավորման հարցը, հաղորդակցության միջոցների չզարգացած լինելու պատճառով, անհաղթահարելի դժվարություններ էր հարուցում ռուսների համար հենց պարսկական արշավանքի սկզբից: Նոր գրաված տարածքները շատ արժեքավոր էին իրենց բերքառատությամբ և բնական հարստությամբ, ամենից առաջ որպես նավթի և մետաքսի արտահանման աղբյուրներ, սակայն այս երկրամասերում ռուսները չգտան այն, ինչի կարիքը նրանք առաջին հերթին զգում էին՝ ուտեստի պաշար և պատերազմական մթերքներ: Երկրի վատառողջ կլիման իր հերթին քիչ մարդկային զոհեր չէր խլում ռուս զինվորների շարքից և ձիերի պահեստից: Ջորքի մեջ շատ խիստ զգացվում էր ոչ միայն ապրուստի միջոցների, այլև կռվող ուժերի պակասը: Պատահական չէ ամենևին, որ ռուսական կառավարությունը հատուկ հոգատարություն էր ցուցաբերում հայերին ու վրացիներին նոր գրաված երկրամասեր գաղթեցնելու հարցում[11]: Նման կարգի տնտեսական և տեխնիկական դժվարություններին ավելանում էր նաև քաղաքական անբարենպաստությունը:

Աֆղանները 1722 թ. հոկտեմբերին գրավում են Պարսկաստանի մայրաքաղաքը: Շահ Հուսեյնը գահընկեց է արվում, իսկ ժառանգ Թահմազը, որի մեջ խտանում էր Պարսկաստանի այդ պահի քաղաքական ապիկարտությունը միայն, մի կերպ քարշ էր տալիս իր գոյությունը երկրի հյուսիսում՝ որպես սեֆեվիների վաղեմի փառքի մի անշուք խրտվիլակ: Ռուսական ծրագրերից և աֆղանների հաջողություններից անհանգստացած թուրքական զորքերի շարժումը դեպի արևելք ստանում էր արագ ընթացք: Նրանք փորձում էին օգնել Թահմազին և սպառնում էին ամբողջ Անդրկովկասին և Ատրպատականին:

Ռուսաստանը նման պայմաններում դիվանագիտական բանակցությունները որոշեց գերադասել պատերազմական գործողություններից: Նա 1722–1723 թթ. ընթացքում շարունակ բանակցում էր գրեթե բոլոր կողմերի հետ՝ գրաված տարածքները խաղաղ ճանա-

[11] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Պետրոս դի Սարգիս Գիլանենց. Էջմիածին, 1916, էջ 10-11:

պարհով յուրացնելու նպատակով: Պետրոս Մեծի անունից Գիլանը գրաված գեներալ Լևաշովը 1723 թ. ամռանը շնորհավորում է աֆղանների առաջնորդ Միր Մահմուդին Պարսկաստանի գահին բարձրանալու առթիվ՝ վստահեցնելով, որ այդ իրողությունը ոչ միայն հակառակ չէ իր կամքին, այլ նույնիսկ հաճելի է իրեն: Ցարը հույս է հայտնում միայն, որ նոր շահը չի մտնի թուրքական հպատակության տակ[12]: Միաժամանակ նա հայ ապստամբների մոտ է ուղարկում իր գործակալներից մեկին, նրանց հուսադրելով, որ ինքը շատ տրամադիր է և պատրաստ է ազատելու նրանց անհավատների լծից, միայն թե հայերը համբերություն ունենան փոքր-ինչ և դիմադրեն թշնամուն մինչև ռուսական զորքերն օգնության կհասնեն: Սակայն առանձին վստահություն չունենալով դեպի աֆղանները և ոչ էլ առանձին սպասելիքներ Կովկասի քրիստոնյա բնակչությունից՝ նույն թվականի սեպտեմբերին Ռուսաստանը դաշինք է կնքում Պարսկաստանի հետ, որով մերձկասպյան երկրները՝ Դերբենդն ու Բաքուն իրենց շրջակայքով, Գիլանի, Մազանդարանի և Աստրաբադի նահանգները անցնում են Ռուսաստանին, իսկ վերջինս խոստանում է պաշտպանության տակ առնել շահ Թահմազին նրա բոլոր թշնամիների և ապստամբ հպատակների դեմ:

Շահ Թահմազը չվավերացրեց իր դեսպանի համաձայնագիրը, առարկելով, թե ինքը կարիք չի զգում դրսի օգնության: Եթե ռուսները, առաջադրում է շահը, այդքան բարյացակամ և հոգատար են դեպի իր ներքին գործերը, թող ազատեն Պարսկաստանն իրենց զորքերից և թույլ տան միայն իրեն լինելու իր երկրի տեր ու տնօրենը: Տակավին այս վճռական մերժումին անտեղյակ, Ռուսաստանն անտես առնելով իր բարյացկամ տրամադրությունը դեպի Պարսկաստանի շահը, բանակցությունների մեջ է մտնում Թուրքիայի հետ, որը 1724 թ. ընթացքում գրավել էր Խոյն ու Համադանը, իսկ Անդրկովկասում՝ Երևանն ու ամբողջ Վրաստանը: Նույն թվականի հունիսին Ռուսաստանը համաձայնություն է ստորագրում Թուրքիայի հետ, որով, ապահովելով

[12] Տե՛ս **Бутков П.**, Материалы для новой истории Кавказа с 1722 до 1723 год, СПб., 1869, էջ 40-45:

իր մերձկասպյան գրավումները, Թուրքիային է թողնում Ատրպատականն ու Անդրկովկասը: Ռուսաստանը Թուրքիային էր վերապահում նաև Վրաստանի ապստամբներին ճնշելու իրավունքը: Հատկանշականն այն է, որ հույս դնելով ռուսների տված հուսադրումների ու խոստումների վրա, Անդրկովկասի քրիստոնյաները, անտեղյակ քաղաքական հարաբերությունների ընթացքին, հերոսական ճիգեր էին թափում իրենց դիրքերը հնարավորինս պահպանելու համար: Գիլանենցը շարունակ խնդրում էր Մինաս վարդապետին, հոգալ ստեղծված դրության մասին, օգնություն խնդրել հայերի համար, մխիթարական խոսք ասել նրանց: Մինաս վարդապետը Գիլանենցի աղերսանքները հատուկ զեկուցագրերով հասցնում էր Պետրոս Մեծին, բայց նրա այդ դիմումները մնում էին անհետևանք: Պարսկաստանում ռուսական կառավարությունը ամենից առաջ տարված էր իր անմիջական գործերը շտկելու մտահոգությամբ: Համաձայնության գալով Թուրքիայի հետ, Ռուսաստանն այլևս պարտավորված պետք է զգար իրեն չեզոքացնելու անդրկովկասյան քրիստոնյաներին սպասվող կացության հանդեպ:

Պետրոս Մեծի կառավարության ու նրա հանձնակատարների անորոշ ու տարտամ պատասխանները հայերի դիմումներին այնուամենայնիվ լիակատար հուսախաբության չբերեցին հայ ազատագրական շարժման հավատացյալ գործիչ Պետրոս Գիլանենցին ու նրա մարտակիցներին: Մոսկվայում 1724 թ. սեպտեմբերի 24-ին ստացված մի գրության մեջ նրանք հայտնում են, որ պատրաստ են Գիլանում կռվող հայերի թիվը հասցնել 1000 հոգու, միայն թե այդ իմաստով հրաման լինի ի վերուստ[13]: Նա նույնիսկ մտադրվել էր անձամբ գնալ Ռուսաստան զեկուցելու Պետրոս Մեծին, թե Պարսկաստանի ընդհանուր վիճակի և թե հայերի դրության մասին և միաժամանակ այնտեղից գործին պիտանի մարդիկ ներգրավել իր էսկադրոնում: Ռուսաստան այցելելու համար նա հույս ուներ թույլտվություն ստանալ մերձկասպյան շրջանի զորքերի և նավատորմի հրամանատար գեներալ-մայոր Մատյուշկինից, որը շուտով պետք է ժամաներ

[13] Տես Հովհաննիսյան Աշ., Պետրոս դի Սարգիս Գիլանենց, էջ 25:

Ռեշտ: Բայց նա չհասցրեց: 1724 թ. դեկտեմբերի 24-ին, երբ Մատյուշկինը հասավ այդ քաղաքը, Գիլանենցն արդեն կենդանի չէր: 1725 թ. հունվարի 17-ի թվակիր մի գրության մեջ նամակագիրը հայտնում է Սինաս վարդապետին, որ Պետրոս Գիլանենցը, հայ գումարտակի պաշտպանն ու ուսուցիչը, սպանվել է ծառայության ժամանակ, որ իրենք մնացել են առանց ղեկավարի: Նրա ընկերները խնդրում են վարդապետին գլխավոր նշանակել զինվորական ընկերներից մեկին, կամ ուղարկել իր կողմից որևէ մեկին, որին նրանք խոստանում են հնազանդվել[14]:

Գեներալ Մատյուշկինի գալուց հետո՝ հայերը նրա հրամանով մասնակցում են 1724 թ. դեկտեմբերին Գիլանում վերսկսված պատերազմական գործողություններին: Թշնամու դեմ մղված մարտերի մեջ առանձին ուշադրության է արժանանում Գիլանենցի հավատարիմներց Աղազար անունով մեկը, որն ստանում է ռոտմիստրի և հայկական էսկադրոնի հրամանատարի աստիճան: Աղազարը՝ հետագայի Լազար Խրիստաֆորովը՝ ռուս գեներալի աստիճան ստացող առաջին հայ զինվորականն էր: Նա էլ Մատյուշկինի հրամանով դարձել էր Գիլանենցի սկսած գործի շարունակողն ու ղեկավարը:

Իր «Պետրոս դի Գիլանենց» պատմա-կենսագրական ակնարկի վերջում, իբրև ամփոփում, Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Պետրոս դի Գիլանենցն անշուշտ մեկն էր ժամանակի եռանդուն և արգասավոր հայ քաղաքական գործիչներից: Ճիշտ է, նա ապրեց գաղութային հայության մեջ, սակայն նրա գիտակցության մեջ անդրադառնում էր պարսկահայ ընթացիկ կյանքն իր ամբողջ ծավալով. հայկական էսկադրոնի հիմնադիրն ու ղեկավարն ապրում էր «Հայոց ասկի» փրկության համար մտահոգված «հայոց ասկարի» կյանքով: Ունե՞ր նա արդյոք ազգային-քաղաքական խնդիրների մասին իր մշակած ծրագիրը՝ չգիտենք. գիտենք միայն, որ գործնականի մեջ ԺԸ դարի քաղաքականորեն մտածող ու գործող խոշոր հայ առևտրականների նախահայրն է նա: Եվ եթե հիշենք, որ սրանցից միայն նա ընկավ հայ ազատագրական պայքարի մեջ՝ այն ժամանակ կլինի նա և միակ իս-

[14] Տես նույն տեղում:

կական զինվորը հայ կապիտալի քաղաքական պատմության ամայի դաշտում»[15]:

Առաջին հայացքից կարող է թվալ (և իրոք թվում է), թե երկար այս մեջբերումը իր պարզությամբ և շիտակ իստակությամբ տարամետ մեկնաբանություն չպետք է հարուցի: Սակայն նման խաբուսիկ կամ էլ ասոցիատիվ տպավորություն միշտ էլ կարող է ստեղծվել երևույթի ոչ ամբողջական դիտարկումից: Օգտագործելով պատմության մատակարարած խոսուն փաստերի ամբողջական հենքը, Աշ. Հովհաննիսյանն անում է այնպիսի խորքային ընդհանրացումներ, որոնք ի վերջո իրեն և ընթերցողին (ոչ միայն իրօրյա) տանում են պատմագիտական նոր մտորումների:

Նկատի ունենալով բոլոր այն փաստերը, որոնք վավերական տվյալներ են ժամանակի հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների մասին, Աշ. Հովհաննիսյանը գալիս է այն եզրակացության, թե հայերի ռուսասիրական տրամադրությունները հայերի ղեկավար շրջաններում սկզբից ևեթ չէին վայելում այն համակրանքը, որպիսին ենթադրել են տալիս փաստաթղթերը: Ռուսական կողմնորոշումը առավել հստակ խմորվեց 1720-ական թվականների շրջանում, երբ նեղված Պարսկաստանի դեմ ապստամբած ցեղերից, հայ կղերի և մելիքության մի խոշոր հատված հարկադրված եղավ առավել սերտ փարվել ռուսների օգնությանը և նրանցից հուսալ փրկություն: Նախքան այդ Իսրայել Օրու և Սինաս վարդապետի ջանքերը՝ այդ հուսացումը ներկայացնել ռուսներին որպես ժողովրդականություն վայելող քաղաքական երևույթ բանակցային մի խաղ էր, որ իրական հենակետ չուներ ընթացիկ հայ գիտակցության մեջ: Իսրայել Օրին և Սինաս վարդապետը խորապես գիտակցում էին իրենց արած պնդումների իրական արժեքը: Այդ էր պատճառը, որ Հայաստանի ազատագրման ծրագրի մեջ նրանք շատ համեստ տեղ էին հատկացնում հայերի գործուն մասնակցության հեռանկարին[16]: Այստեղ հատկապես ուշագրավն այն է, որ, Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, որքան

[15] Նույն տեղում, էջ 26:
[16] Տե՛ս Johannissian Ashot, Israel Ori..., էջ 114:

ավելի էին մոտենում նրանք խոսքից գործին, նույնքան ավելի էին «հարկադրվում հեռանալ հայերի քաղաքական ինքնագործունեության մտքից և հաշտվել ռուսների նվաճողական քաղաքականության հեռանկարի հետ»[17]: Հեղինակը հատկապես նկատելի է դիտում Ռուսաստան ուղարկած այն թղթերի մեջ, որ հայ գործիչները գրել են տարիներ հետո Պարսկաստանից: Հայաստանի նվաճումը պարսկական լուծը թոթափելու միակ միջոցն էր նկատվում այն պահին, երբ հայ գործիչները հնարավորություն էին ստանում ավելի մոտիկից շոշափել հայկական իրականությունը, քան իրենց քաղաքական գործունեության ընթացքում դրանից երբևիցե առաջ կամ հետո:

Ինքյան դառնում է հասկանալի, թե ինչու հայ ազատագրական շարժման գործիչները այնքան ջանք ու եռանդ էին գործադրում, որպեսզի մթության քողով ծածկեն իրենց բանակցությունները հայրենակիցների մեջ: Մյուս կողմից նրանք աշխատանք էին գործադրում հուսախաբություն չառաջացնել ռուսների մեջ իրական վերաբերմունքի դրսևորումից: Ինչպես Իսրայել Օրին, այնպես էլ Մինաս վարդապետը պետք է թաքցնեին իրերի իսկական վիճակը և նոր հովանավորներից, այսինքն՝ ռուս դիվանագետներից, և հին համախոհներից, այսինքն՝ հայ մելիքներից: Հայ ազատագրական շարժման երկու այս նվիրյալները սպառեցին իրենց կյանքի կարևոր շրջանը քաղաքական բանակցությունների մեջ՝ երբեմն-երբեմն գաղտնիության շղարշով պատելով դրանք: Նրանք հարկադրված էին շարունակ դիմել խուսափող բացատրությունների, քողարկված առաջարկների, ի վերջո նաև կեղծ թղթերի օգնություն-աջակցությանը: Ծայրահեղ զգուշավորությունը Իսրայել Օրու և Մինաս վարդապետի գործունեության հատկանշական կողմը, ոչ միայն թշնամիների դեմ ձեռնարկած ինքնապաշտպանության բնական միջոց էր, այլև բարեկամների կասկածը փարատող իմաստուն եղանակ: Իսրայել Օրու, Մինաս վարդապետի գործունեության առաջնահերթ նպատակներից էր՝ բարձրացնել հայերի աչքում ռուսների հմայքը, հայերի նոր զանգվածներ ներգրավել հօգուտ նոր քաղաքական կողմնորոշման՝ ռուսական կողմնորոշման:

[17] Տես Հովհաննիսյան Աշ., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջ 65:

Դժվար չէ նկատել, որ «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» արժեքավոր ուսումնասիրության ամփոփման մեջ, այսպես կոչված «Վերջաբանում», տարաբախտաբար, հեղինակը չկարողացավ խուսափել՝ թերևս իրօրյա գաղափարաբանության շահի հրամայականով թելադրված քաղաքականացումից: Եվ դա զարմանալի չէր ինքնին:

Ուսումնասիրությունը գիտական պատմականության դիրքերից գրվել էր 1915-1917 թթ., իսկ վերջաբանը՝ 1921 թվականին, երբ Հայաստանի Հանրապետությունում հաստատված էին խորհրդային կարգեր, իսկ ուսումնասիրության հեղինակ Աշ. Հովհաննիսյանը Խորհրդային Հայաստանի լուսավորության նախարարն էր:

Ահա բարձր գրագիտությամբ, սակայն բոլշևիկյան գաղափարաբանությամբ գրված այդ վերջաբանն առանց մեկնաբանությունների:

«Կար ժամանակ, երբ հայ-ռուս օրիենտացիայի ծագման ներկա լուսաբանությունը կարող էր անբարեհուսության նշան համարվել ազգային տիրող դասակարգերի կողմից: Ժամանակները փոխվել են, և այսօր խնդրի նույն լուսաբանությունը մխիթարության աղբյուր կարող է դառնալ ազգի տապալված դասակարգերի համար:

Ջու՛ր սփոփանք: Ջբաղեցողն այստեղ ժողովուրդների հնազանդ բարեկամության կամ թշնամանքի հարցը չէ: Օրիենտացիայի խնդիրը *սոցիալական* խնդիր է, ենթակա ժողովուրդների դասակարգային ներհակության վրա հիմնված փոխհարաբերության ներքին դիալեկտիկային: Այն, ինչ խորթություն կամ հակամարտություն էր ստեղծում հասարակական-պետական մարմինների մեջ երեկ՝ սոցիալ-պատմական ուժերի մի դասավորությամբ, կարող է փոխանցվել համերաշխության և հնազանդության այսօր՝ նույն ուժերի նո՛ր դասավորությամբ: Ռուս օրիենտացիան, օտար և անհարազատ աշխատավոր ժողովրդին և արհեստական մի պատվաստ նրա քաղաքական մտայնությանը, հայ ավատականության մեռնող շառավիղների փրկության ուղին էր թվում մի ժամանակ, երբ ռուս ռեժիմը դասային իրավունքի և արտոնությանց միակ ապավենն էր համարվում

Անդրկովկասում՝ ներխվող դեսպոտիայի և պոռթկվող տոհմատիրության հանդեպ:

Սակայն քաղաքական դարավոր փորձով հոգևոր և աշխարհիկ հայ ավատականությունը սնեց և սպառեց ուրույն գոյության վերջին հույսերը նահանջող իսլամի և հաղթական ցարիզմի քուրայում: Հաջողդելով դասալքված կղերին և ազնվականությանը՝ հայ բուրժուազիան ժառանգեց դրանց օրիենտացիայի հեզ վարքագիծը: Եվ դա իր հիմքն ուներ: Ռուս ռեժիմը մասնատիրական կարգերի ապահով հենարանն էր սոցիալական գերիշխանություն վաստակած առևտրաարդյունաբերական դասակարգի համար: Օրինակը վարակիչ էր: Հավատարիմ իր սոցիալական նկարագրին՝ ազգային քաղքենիությունն ընթացավ երերուն քաղաքականության հունով: Սակայն՝ ենթակա կապիտալի այլասերող ազդեցության և ստրուկ նրա քաղաքական իմաստության՝ նա հնազանդվում էր ռուս կնուտին, պաշտպանություն փնտրելով մերթ «անօրեն» թուրքի գրոհից, մերթ «հարազատ» պրոլետարիատի ահից:

Հոկտեմբերը շրջակետ կազմեց քաղաքական նոր ուխտի: Հուսախաբությունը քաղքենի մտայնության հավատարիմ ուղեկիցն էր: Թոռները լքեցին պապերի հարթած քաղաքական շավիղները: Հայրենի բնագավառ քաշվելով նրանք վտիտ մարմնով ծվարեցին ազգային-պետական կենցաղի անծուկ պատյանում: Փխրուն ատամների բութ ծայրը միակ զենքն էր կարմիր ուրվականի սուր եղջյուրներից փրկվելու համար:

Հեղափոխության վտանգը, ահա ռուս օրիենտացիայի առաջացրած սարսափի աղբյուրը գահավեժ դասակարգերի համար: Իրավունքի և սեփականության հին պաշտամունքը չէ այսօր այդ օրիենտացիան: Դիվանագիտական մեքենայությունների փոխարեն նա դարձել է կազմակերպվող աշխատանքի ուղեցույց: Մեր օրերի ռուս օրիենտացիան ընթանում է մասսաների ազատագրման տիեզերական խոյանքի հունով: Այդ օրիենտացիայի մեջ է դարբնվում այսօր նաև շղթայաթափ հայ բազմության հեղափոխական տարերքի օդակը»[18]:

---

[18] Նույն տեղում, էջ 66-68:

Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրության մասին շատ արժեքավոր գրախոսությամբ հանդես եկավ Դավիթ Անանունը «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» Ա-Բ գրքում[19]:

Կարևորելով ուսումնասիրությունը Դավիթ Անանունը գրում է, որ Աշ. Հովհաննիսյանի «երկը բանասիրության կառուցման կողմից մի անթերի գործ է...Անթերի աղբյուրների ու վավերագրերի փաստարկող շինաշարանով, պատճառաբանությունների ճոխությամբ և լուսաբանության հմտությամբ»[20]:

Դ. Անանունը գտնում է, որ Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունն իր բանասիրական կառուցման տեսակետից նախ պատիվ է բերում հայ պատմագրությանն ընդհանրապես, ապա հեղինակին: Մտածել, հարում է Անանունը, թե Ալ. Երիցյանի միամիտ շարադրություններից հետո հայ պատմագրությունը կարող է հասնել Հովհաննիսյանի մանրակրկիտ պրպտող, կործանող ու կառուցող մեթոդին և կատարելու ունակությանը, դա, կրկնում ենք, նախ և առաջ հպարտություն է մեր պատմագրական գիտության համար: Որքան այդ գիտությունը կմերկանա իր միամիտ շպարից և կհրաժարվի ավանդական փորձերից՝ այնքան լավ իր համար, այնքան ուրախալի հետնորդների սրտին: Կուզքերը պիտի տապալվեն, որ ճշմարտության աստվածը թագավորի[21]:

Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրության մեջ պատմական մի ամբողջ շրջան է ներկայանում իր լայն ու անծուկ խոհերով, իր առանձնահատկություններով, իր մեծ ու երկրորդական գործիչներով հարություն է առնում ընթերցողի առաջ, հարություն է պատմության ստույգ տապանն ուսած և ոչ թե առասպելական զենք ու զրահով: Արևելահայության հասարակական կյանքի ընդհանուր կացության հենքի վրա փորձելով բափանցել մինչև հայերի ռուսական օրիենտացիայի ծագման շերտերը, գրախոսը հարցնում է՝ ո՞վ է Իսրայել Օրին... այդ եռանդուն դեմքը, միջնադարյան մի արկածախնդիր, թե՞ սիրտը կտցահար հայրենասեր: Ո՞վ է Մինաս վարդապետը... խաչա-

---

[19] Տե՛ս Դավիթ Անանունի գրախոսությունը «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա-Բ, 1921, 1922, էջ 254-257:

[20] Նույն տեղում, էջ 254:

[21] Տե՛ս նույն տեղում, էջ 255.

գո՞ղ, գլխապահի կրոնավո՞ր, թե հայ եկեղեցու այն սպասավորներից մեկը, որ գիտակցում է, թե իր ներկայացրած կազմակերպությունը, Մ. Օրմանյանի խոսքերով ասած՝ «դադարեալ հայրենիքին հոգին ներկայացնող երևելի նշանն է»: Ովքե՞ր են և ի՞նչ են ներկայացնում նվաճողական քաղաքականության հետամուտ Ռուսաստանի հանդեպ Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսները, արդյոք քաղաքական հեռանկարներ սնուցանող հովվապետնե՞ր են, թե՞ եկեղեցական եկամուտների սիրահար ավատականներ, որ Ռուսաստան գաղթած ազգայինների մեջ ծուխ ու նյութական բարիք են որոնում իրենց օջախի պայծառության և պարսկական ընչաքաղցությունն ամոքելու նպատակով: Ահա այսպիսի հարցեր է հարուցում Աշ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունը, հարցեր, որոնք բխում են նյութի ներքովի քննության էությունից: Նա կարողացավ, նյութի էությունից ելնելով, սրբագրող ձեռք դնել անգամ Կ. Եզյանի «Сношения Петра Великого с армянским народом» նշանավոր աշխատության վրա, իսկ դա ինքնին նշանակում է վերաքննել ավանդական հասկացությունը՝ հայերի ռուսական օրիենտացիայի հարցը: Աշ. Հովհաննիսյանը հիմնավորում է, գրախոսականում գրում է Անանունը, որ մինչև 1720-ական թվականների սկիզբը ռուսական օրիենտացիան բանուկ ուղիներ չուներ հայության մեջ, այսինքն հարազատ չէր լայն զանգվածներին: Հայկական մեսսիանիզմը տակավին «ֆրանկի» հետ էր կապում հայերի ազատագրությունը պարսկա-թուրքական տիրապետությունից: «Ֆրանկն» Արևմտյան Եվրոպան էր՝ լինի դա Հռոմի պապը, Պֆալցի կուրֆյուստը, թե Ավստրիայի կայսրը: Ռուսը բացակայում էր հայերի տեսադաշտից: Ռուսը դեռևս կամ չկար կամ էլ չէր շփոթվում «ֆրանկի» հետ: Իսկ երբ Ռուսաստանը պատմական պատանեկությունից ելնելով իր երիտասարդական հասակով ծառացավ Արևմտյան Եվրոպայի առաջ և սկսեց ստվեր նետել Արևելքի վրա, ուր ծվարած էր բոլոր դռներից փրկություն աղերսող հայությունը՝ այնժամ Եվրոպայում ղեգերող հայ քաղաքական նվիրակները չէին կարող աննտես առնել նոր ուժը և չաշխատել օգտագործելու այն ազգային ակնկալությունների իրացման համար: Այդ նվիրակները՝ հայկական միջավայրից ծնված այդ շրջահայաց մարդիկ, կարող էին անցավ ոստյունով փոխել իրենց օրիենտացիոն գործելակերպը. բայց կարո՞ղ էին այդ

նույնն անել երկրի աշխարհական և եկեղեցական երևելիները: Ո՞վ էր «ռուսը», ունե՞ր նա «ֆրանկի» ուժը, իր հունադավանությամբ հին ոսո՞խը չէր նոր կաշվի մեջ-սրանք հարցեր էին, որ դժվարությամբ էին լուծվում Արարատյան դաշտում և Ղարաբաղում: Քաղաքական նվիրակությունը Մոսկվայում աղերսում էր, խոստումներ անում, խոստումներ ստանում և փութացնում երկրի մարդկանց, ջանում նրանցից հավանություն ստանալ, քաջալերանք լսել, բայց դանդաղ և կասկածամտությամբ էին շարժվում մելիքներն ու բարձրադիր եկեղեցականները՝ ընդհուպ մինչև կաթողիկոսը:

Եվ ռուսական կառավարության սիրտը չսառեցնելու համար հայ քաղաքագետները չեն խորշում նույնիսկ կեղծիքից, եթե չի որոճում մելիքական միտքը տեղում, եթե ծանրաշարժ է նման կարգի մարդկանց ուղեղը և եվրոպական սպասումների բանուկ ուղուց չի կարողանում անցնել ռուսական անծանոթ արահետը, ապա մնում է, որ շեղ ու թեքնաշարժ լինի հայ նվիրակ գործիչների գրիչը: Նպատակն արդարացնում է միջոցները՝ չքացել է «ֆրանկը», նրան փոխարինելու է գալիս «ռուսը»: Հայ մելիքն ու եկեղեցականը այդ չեն ըմբռնում այսօր, կըմբռնեն վաղը: Մի օր գաղափարի ու գործի ներդաշնակություն կստեղծվի: Իսրայել Օրին և Մինաս վարդապետը իրենց գաղափարի կատարմանը հետամուտ շեղվելով Եվրոպայից Ռուսաստան՝ արդար են քաղաքագիտական ուսմունքի դատաստանի առաջ, եթե ընդունենք արդեն շատ վաղուց հանրահայտ դարձած այն ճշմարտությունը, որ հայկական ազատագրությունն անպայման հնարավոր պիտի դառնա արտաքին ուժի աջակցությամբ:

Իսրայել Օրին և Մինաս վարդապետը եղան սկզբնավորողները: Այնուհետև եղան նրանց գործը շարունակողներ: Արդյունքը՝ կատարյալ ներդաշնակություն ռուսական արքունիքի և հայ քաղաքական գործիչների միջև: Հայության քաղաքական ճակատագիրը օղակվեց Ռուսաստանի նվաճողական ռազմակառքին[22]:

Պատմության մեջ լինում են ժամանակներ, որ հասարակական մի դաս իր մեջ ամփոփում է ազգային ամբողջության շահերը: Հայ կյանքի համար այդպիսին էր մելիքական դասն ամբողջ XVIII դարի

---

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 256:

ընթացքում: Ինչ խոսք, անառարկելի է, որ նա ուներ դասային իր եսասիրական ձգտումները, բայց այդ ձգտումները նսեմանում էին խաղաղ և ապահով գոյության այն հեռանկարների առաջ, որ խոստանում էր Ռուսաստանը: Անհերքելի իրողություն էր և այն, որ մելիքական քաղաքականությունը նախ և առաջ կորստաբեր եղավ հենց մելիքական դասի համար: XIX դարասկզբին, երբ իրականացավ Անդրկովկասում Ռուսաստանի ամուր ոտք դնելու ծրագիրը, հայ մելիքությունն ուժաթափ էր արդեն՝ աստանդական և մուրացիկ նույն ռուսական արքունիքի առաջ, որի գալստյանն էին սպասում մի ամբողջ հարյուրամյակ: Աշ. Հովհաննիսյանը ճիշտ է նկատում նաև, գրում է Անանունը, թե հետագայում փարթամացած կովկասահայ բուրժուազիան գնաց մելիքների տրորված ճանապարհով, այսինքն եղավ խոնարհ սպասավորը ինքնակալական Ռուսաստանի թելադրանքներին: Դրան մենք կավելացնենք, շարունակում է Անանունը, որ մելիքների վարած պայքարի պտուղներին տիրացավ հենց փարթամացած բուրժուազիան, նվաճելով իր համար այնպիսի տնտեսական դիրք, որից դողահար էր լինում մանր արհեստավոր և գյուղացի զանգվածը: Եվ երբ այդ զանգվածը, Աշ. Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ «ազգային քաղքենիությունը», սեփական պետականության է փարում, դա չի նշանակում, թե նա փարթամացած բուրժուազիայի պոչն է կազմում, այլ շվարած՝ հարազատ իշխանության մեջ է որոնում ապահովություն թե ազգային և թե միջազգային գիշատիչներից[23]:

Աշ. Հովհաննիսյանի համար, գրախոսության վերջում կարևորում է Անանունը, Հոկտեմբերը (այսինքն Ռուսաստանի պարզած սոցիալիստական դրոշակը) շրջակետ կազմեց ավանդական օրիենտացիայի մեջ: Որքան առաջ հայության համար մերձավոր ուժ էր Ռուսաստանը, նոր սոցիալական բովանդակությունից հետո քարտզվեց նրա խորքությունը: Գրախոսը դա անվանում է «բռնազբոսիկ պնդում»: Ճգնել սեփական ոտքերի վրա կանգնելու՝ չի նշանակում երես շուռ տալ հարևանից (այո՛, հարևանից և ոչ տիրոջից): Ռուսաստանն իր բոլոր այլակերպություններով չի մերժվել հայկական տեսողության դաշտից: Նոր շրջանի հայ ազգային քաղաքագետին սար-

[23] Տե՛ս նույն տեղում, էջ 256.

սափեցրել է իր իսկ հարազատ պատմությունը. մելիքը պայքարեց, ժողովուրդը ոտնակոխ եղավ, շագանակը թռցրեց բուրժուազիան: Ո՞վ կարող է երաշխավորել, թե անվերապահորեն նետվելով ռուսական քաղաքականության հունը, նոր հուսախաբություն չպիտի սպասվի մեր օրերի մելիքներին: Եթե միայն վերջիններս պատիժ կրեն իրենց քաղաքականության հետևանքով՝ դա դժբախտության կեսը կլինի: Իսկ եթե տուժի ժողովո՞ւրդը, որը տնաբույս քաղաքագետների շնորհիվ մատների վրա համրելու մի մեծություն է դարձել: Կարող է Աշ. Հովհաննիսյանը երաշխիքներ տալ դրան հակառակ: Չէ՛, լավագույնն այն է, որ ամեն ոք իր գդակի տակ ապրի: Սա չի նշանակում հրաժարում ոչ Ռուսաստանից և ոչ Եվրոպայից: Սա նշանակում է *չափահասություն հայ ժողովրդի համար,* որպեսզի հին ու նոր Սինաս վարդապետները ընկույզ չջարդեն նրա փխրուն գլխին: Կամ գուցե մեր ուրույն գոյության, ուրեմն և քաղաքական կաղապարման երգը սպառված է: Եթե այո՝ այս մասին արժե բարձրաբարբառ խոսել: Դա մտածելու նյութ է, թեր ու դեմ առարկությունների կարոտ:

«Պատմությունը կարող է փրկել Աշոտ Հովհաննիսյանին: Բայց մենք իրավունք ունենք բոլորից պահանջելու, որ նրանք ունկնդրեն պատմության կանչին, խորամուխ լինել նրա ելևիջներին...»[24], այսպես է եզրափակում պատմա-քննական անշեղ գնահատականներով և նրբանկատ դիտողություններով հարուստ իր գրախոսականը Դավիթ Անանունը: Ընդհանուր առմամբ՝ նա Աշոտ Հովհաննիսյանի «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» ուսումնասիրությունը համարել է պատմագիտական և հրապարակախոսական անուրանալի արժանիքներով օժտված մի գործ, որը երբևէ չի կորցնի իր գիտական նշանակությունը: Մեր կողմից ուզում ենք հավելել՝ լիովին համաձայն ենք Դավիթ Անանունի հետ:

---

[24] Նույն տեղում, էջ 257:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԱՇ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 1920–1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

*Ա) Հրապարակախոսությունը:*

Նախորդ էջերում արդեն նշել ենք, որ Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխությունից հետո Աշ. Հովհաննիսյանի գործունեության մեջ տեղի է ունենում կտրուկ շրջադարձ: Գիտության բնագավառում լուրջ քայլեր կատարած Հովհաննիսյանն անցնում է հեղափոխական գործունեության: 1917 թ. նա տեղափոխվում է Շուշի, որտեղ սկսում է խմբագրել «Նեցուկ» թերթը: «Ներհակ» ստորագրությամբ թերթում տպագրած իր խմբագրականներում և հրապարախոսական հոդվածներում նա պաշտպանում է սոցիալիստական հեղափոխություն իրագործելու ծրագիրը: Իր հրապարակումներում «Նեցուկի» խմբագիրը կրքոտությամբ առաջադրելով պայքարի ավանդույթների յուրացման պահանջը, միաժամանակ գործող հայ ազգային կուսակցությունների անցյալի ու ներկայի գաղափարաբանության և գործելակերպի մեջ չէր տեսնում փոխկապակցված՝ ազգային ընդհանուր շահից բխող իրողությունների ոչ մի հաջորդայնություն և օրինաչափություն: Ի հակակշիռ ազգայնական տարատեսակ հոսանքներին ու խմբավորումներին հատկանշող օտարապաշտ դիրքորոշման, «Նեցուկ» պարբերականը ազգային համախմբման հեռանկարը տեսնում էր ոչ թե տերությունների դիվանագիտական կամ զինված միջամտության ուղիներում, այլ սեփական ժողովրդի ազատության համար պայքարի՝ ամբողջ ազգի ներուժի համախմբման մեջ: Շեփորելով հայության քաղաքական համախմբման պահանջը, «Նեցուկի» խմբագիրը մեծ պետությունների քաղաքականության իր կոնստրուկտիվ քննադատությամբ մերժում էր օտարամտության բոլոր դրսևորումները: «Նեցուկ» թերթը լույս տեսավ ընդամենը յոթ համար. 1917 թ.

օգոստոսի 8-ին, 24-ին, 31-ին, սեպտեմբերի 14-ին, 21-ին և 28-ին: Թերթում խմբագրի հեղինակությամբ տպագրված ուշագրավ հոդվածներից էր «Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատի տակտիկան», որը լույս տեսավ օգոստոսի 24-ի, 31-ի և սեպտեմբերի համարներում: Հոդվածում քննության է ենթարկվում Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական կացության մեջ բանվոր դասակարգին առաջնորդող կուսակցության քաղաքական ռազմավարությունն ու մարտավարությունը:

Ստեղծված քաղաքական կացության վերլուծությամբ հեղինակը ռուսական բուրժուական դեմոկրատիայի իրօրյա պատկերը բնութագրելու համար անհրաժեշտ է համարում խորությամբ ուսումնասիրել Ռուսաստանի նախորդ պատմաշրջանների տնտեսական և քաղաքական զարգացմանը խոչընդոտող այն գործոնները, որոնք առանձնահատուկ կերպարանափոխությամբ համառում են անգամ Փետրվարյան «մեծ» կոչված հեղափոխությունից հետո: Ըստ Աշ. Հովհաննիսյանի «Ռուս աբսոլյուտիզմը, որպես վարչական և ֆինանսական կազմակերպություն XIX դարի ընթացքում կենտրոնացնում էր իր մեջ մի այնպիսի հսկայական ուժ, որի դեմ անզոր պիտի լիներ տնաբույս բուրժուազիայի քաղաքական լիբերալիզմը: Ռուսական կապիտալիզմը առաջացավ բուրժուական տնտեսության այն հարազատ աղբյուրներից, որոնցից սկիզբ առավ կապիտալիզմն Արևմուտքում: Արհեստավոր դասակարգը, բուրժուական հեղափոխությունների այդ կարևոր սոցիալական տարրը, չկենտրոնացավ քաղաքներում, այլ, մնալով հողագործ համայնքի ծոցում, կազմեց գյուղական տնայնագործության հասարակական հիմքը: Քաղաքներում կենտրոնանում է օտար կապիտալը և դրան զուգրնթաց՝ պրոլետարական զանգվածները, որ ապրում են բանվորական աշխատավարձով: Կապիտալիզմը ուղղություն է տալիս երկրի հասարակական-տնտեսական զարգացմանը, բայց իր գերազանցորեն *արտասահմանյան* ծագման հետևանքով չունեցավ անմիջական ազդեցություն երկրի քաղաքական կյանքի վրա. առաջանում է անհամաչափ հարաբե-

րություն կապիտալի տնտեսական նշանակության և քաղաքական կշռի միջև: Պրոլետարական զանգվածների ուժի և ազդեցության աճումը չի համապատասխանում մանր բուրժուական դեմոկրատիայից կտրված, պատմական և ազգային խոր արմատներից զուրկ կապիտալիստական փոքրաքանակ դասակարգերի շահերին սպասարկող լիբերիալիզմի ճնշմանը: Հասկանալի է, թե ինչու՞ նման պայմաններում *ռուս* բուրժուազիան չի կարող, անգամ եթե նա կամենա, կռվան լինել այն պայքարին, որ պիտի հաստատի Ռուսաստանում կապիտալիստական ազատ հասարակարգ»[1]:

Անդրադառնալով օտարերկրյա կապիտալին, Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ նրա ներկայացուցիչները ոչ միայն դրական դեր չեն կատարել և չեն կատարելու ռուսական հեղափոխության մեջ, այլև, ընդհակառակը, ֆինանսական և քաղաքական պատվար հանդիսանալով ռուսական աբսոլյուտիզմին՝ շահագրգռված են եղել վերջինիս հաղթանակով[2]: Եթե ժամանակակից կառավարությունները Եվրոպայում կապիտալի գործակալներն են ընդհանրապես, սակայն ռուսական աբսոլյուտիզմը եղել է արտասահմանյան կապիտալի գործակալը:

Փետրվարյան հեղափոխությունը պատմաբան հրապարակախոսի բնութագրմամբ՝ ոչ միայն չկարողացավ, այլև չէր էլ կարող ազատել ռուս և Ռուսաստանի մյուս ժողովուրդներին վաշխառուական կապիտալի ոսկե շղթաներից: Ավելին, այն էլ ավելի ամրացրեց նրա ֆինանսական և քաղաքական կախվածության կապանքները: Ճիշտ է, համաշխարհային պատերազմի հարվածներց փլվեց ռուսական աբսոլյուտիզմի խարխուլ շենքը, սակայն «ազատ» Ռուսաստանը, եթե գոյատևի, դեռ երկար պետք է տնքա արտասահմանյան կապիտալի ծանր բեռան տակ: Ազատության իրական գրավականը եղած կարգերի և նրան հովանավորող արտասահմանյան ֆինանսական կապիտալի պարտության հեռանկարի մեջ պետք է տեսնել: Աշ. Հովհաննիսյանն այն համոզմունքին է հանգում, որ ի տարբերություն

---

[1] «Նեցուկ», N 2, 1917, 31 օգոստոսի:
[2] Տե՛ս նույն տեղում:

Արևմուտքի բուրժուական հեղափոխությունների, «ռուսական շարժումը» կատարվում է «կապիտալիզմի զարգացման այնպիսի բարձր աստիճանի վրա, որին չէր հասել Արևմտյան Եվրոպան բուրժուական անդրանիկ հեղափոխությունների ժամանակ»[3]:

Նման պայմաններում հասարակական ուժերի կերպարանափոխված փոխհարաբերությունը՝ բուրժուական աշխարհի դասակարգային շերտավորումը իր հերթին պետք է ընդարմացներ լիբերալիզմի հեղափոխական կարողությունը և հաղորդելու բանվոր դասակարգի հեղափոխական շարժմանը գիտակցական և կազմակերպված բնույթ: Ռուսական կայսրությունում կապիտալի և աշխատանքի ներքին հակասությունը անհրաժեշտաբար պիտի գար հրելու բուրժուազիային դեպի հետադիմություն (հետընթաց) և առաջ մղելու պրոլետարիատին դեպի ժողովրդավարություն և սոցիալական հեղաշրջում: Ռուս պրոլետարիատը պետք է իրագործեր ճակատագրով իրեն առաջադրված նպատակներից մոտավորը՝ զինակցելով հեղափոխական գյուղացիությանը, և պիտի դիմեր նպատակներից հեռավորի իրականացմանը՝ ապավինելով այսպես կոչված միջազգային սոցիալիզմի հաղթանակին: Սինևույն է՝ երկու դեպքում էլ ռուսական հեղափոխության առաջացման հանգամանքները հիմնովին տարբերվում են Արևմուտքի երկրներում տեղի ունեցած բուրժուական հեղափոխությունների ստանդարտից կամ շաբլոնից: Գյուղացիության ազատագրումը՝ հողային խնդրի լուծումը Անգլիայում և Ֆրանսիայում տեղի ունեցավ նախքան իշխանությունը կանցներ հեղափոխությամբ ծնավորված նոր իշխանությանը: Երբ վերջինս անցավ իշխանության գլուխ, գյուղական բնակչությունը՝ արդեն իսկ ամրացած ազատ հողաբաժիններին, հեղափոխությանը մատնեց հետադիմության գիրկը: Ռուսական բուրժուազիան անկարող էր լուծել հողային հարցը իր իսկ իշխանությամբ: Ուստի ռուս սակավահող գյուղացիության բախտը կապված էր նոր հեղափոխության հետ, սոցիալական այն շարժման հետ, որի ղեկավար և ուղղություն տվող ուժը

[3] «Նեցուկ», նույն տեղում:

պետք է լինի արդյունաբերական բանվորությունը, այսինքն՝ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ:

Հոկտեմբերյան հեղափոխությունից ընդամենը երկու ամիս առաջ Աշ. Հովհաննիսյանը, Ստ. Շահումյանի նման, կանխատեսեց Ռուսաստանի բուրժուական հանրապետության զարգացման մոտավոր ընթացքը: Իր հոդվածի վերջում նա գրեց. «Ռուսական հեղափոխությունը իր զարգացման ներկա շրջանի մեջ կարող էր փրկվել այնչափ, որչափ կամբրանային երկրում որպես իշխանության միակ աղբյուր Բ.Զ.Գ. այն Խորհուրդները, որոնց դեմ սպառազինվում էր բուրժուազիայի քաղաքական ազդեցության հերթական կենտրոնը՝ Մոսկվայի Պետական Խորհրդակցություն կոչված համագումարը և դրա թևի տակ ռուսական ողջ ռեակցիան: Մանր-բուրժուական հոգեբանությամբ վարակված Խորհուրդների անվճռականությունը, պայմանավորված մասամբ ժողովրդական լայն մասսաների անկազմակերպ և անգիտակից դրությամբ և պատմական այն հանգամանքներով, որ ստեղծվել են երկրում իմպերիալիստական պատերազմի մեջ ռուս բուրժուազիայի մասնակցության հետևանքով, առաջացրել են մի այնպիսի տարտամ դրություն, որ գալիս է վտանգելու հեղափոխական նվաճումների կացությունը և մթագնելու այն հեռանկարները, որ սնուցում է հեղափոխական պրոլետարիատը: Ահաբեկված դաշնակից իմպերիալիստների և ռուս բուրժուազիայի ֆինանսական դասալքությունից, ընկճված նրանց հակահեղափոխական սպառնալիքներից՝ Կերենսկու կառավարությունը, կատարելով ցարական Ռուսաստանի ստանձնած պարտավորությունները օտարների հանդեպ, յուրացրեց ռեպրեսիաների քաղաքականության հին պատգամները ներքին կրամոլայի դիմաց: Սակայն, վտանգելով հեղափոխության ընթացքը, այս հանգամանքը չի կարող փոխել ոչ նրա սոցիալական բնավորությունը և ոչ այն պայմանների դասավորությունը, որ հնարավոր կարող է դարձնել նորանոր նվաճումներ հեղափոխության այն ուղիով, որ տանում էր պրոլետարիատին դեպի սոցիալիզմ»[4]:

---

[4] «Նեգուկ», N 2, 1917, 7 սեպտեմբերի:

Աշ. Հովհաննիսյանը 1917 թ. վերջերին, ինչպես նշվել է գրքի ներածությունում, Ստ. Շահումյանի առաջարկով տեղափոխվում է Բաքու, որտեղ ոչ միայն գործուն մասնակցություն է ունենում Բաքվի խորհրդային իշխանության աշխատանքներին, այլև խմբագրում է «Բանվորի խոսք» շաբաթաթերթը: Աշ. Հովհաննիսյանը խմբագրական աշխատանքից չի կտրվել նաև Բաքվի կոմունայի անկումից հետո: Նա է Աստրախանում խմբագրել «Կարմիր բանվոր», իսկ Դոնի-Ռոստովում «Բանվորի կռիվ» թերթերը:

Հայաստանի խորհրդային կառավարության կազմում լուսավորության ժողովրդական կոմիսարի, այնուհետև Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարի պաշտոնները զբաղեցրած տարիներին Աշ. Հովհաննիսյանը հսկայական ջանք ու եռանդ է նվիրաբերում գաղափարաքաղաքական քարոզչությանը: Տարբեր պարբերականներում լույս են տեսնում հասարակական-քաղաքական կյանքի զանազան ոլորտներին նվիրված նրա «Վիճելի երկրամասերը» («Կոմունիստ», 1920, 7 դեկտեմբեր), «Ծատուրը» («Խորհրդային Հայաստան», 1922, 9 ապրիլի), «Բաց նամակ ընկ. Ս. Մաուցյանին» («Խորհրդային Հայաստան», 1922, 26 սեպտեմբերի), «Հոկտեմբերը՝ ընդարձակվող հեռանկարի առաջ» («Խորհրդային Հայաստան», 1924, 7 նոյեմբերի), «Համազգային կրիզիսը» («Խորհրդային Հայաստան», 1926, 24 օգոստոսի), «Ձախ» պանիկյորության հայկական մի վարիանտի մասին» («Մարտակոչ», 1927, 26, 27, 29, 30, 31 մարտի), «Մեր թշնամիները և նրանց գործակալները» («Մաճկալ», 1927, 24 հուլիսի) հոդվածները:

Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնում աշխատած ժամանակ իր խմբագրած գրական, գիտական և քաղաքական «Նորք» հանդեսում («Նորքը» հրատարակվում էր Աշ. Հովհաննիսյանի և Աս. Մռավյանի խմբագրությամբ: 1926 թ. առաջին գրքում (խմբագրական կոլեգիայի մեջ հիշատակված են նաև Ա. Կարինյանն ու Ե. Չարենցը) են տպագրվել պահի ոգուն հարազատ և պատմաքաղաքական նպատակամղվածությամբ տոգորված ժամանակի հանրաճանաչ դեմքե-

րի՝ հասարակական-քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների գործերը: «Նորք» հանդեսը բազում պատմաքննական հոդվածներ է տպագրել հայոց պատմության ամենատարբեր հիմնահարցերի վերաբերյալ: Գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում Թադևոս Ավդալբեկյանի «Քահրան և մուլքը XVII-XVIII դարերում», «Երկրագործության հավելյալ արդյունքի նորման XVII-XVIII դարերում», Երվանդ Շահազիզի «Մ. Նալբանդյանի բանտից գրած նամակները», Աշխարհիբեգի «Քարե դարը Հայաստանում», Սարգիս Կասյանի «Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում» և այլ խորագրերով հրապարակումները: Ճիշտ է, դրանցում արտահայտված ոչ բոլոր տեսակետներն ու ելակետերն էին ընդունելի և հիմնավորված, որոշ դեպքերում հեղինակները տուրք էին տալիս ժամանակի «ճախ» ըմբռնումներին և քաղաքական կոնյունկտուրային, երբեմն էլ շեղվում գիտական պատմականությունից, բայց, այնուամենայնիվ, «Նորք» հանդեսի նույնիսկ անճշտություններ ու սխալներ պարունակող հոդվածները օգնում են պատկերացնելու գիտական մտքի և հասարակական ըմբռնումների այն ժամանակվա մակարդակը: Շնորհիվ խմբագիր պատմաբան Աշ. Հովհաննիսյանի, հանդեսի խմբագրությունը նյութերի այնպիսի ընտրություն էր կատարում, որ մի կողմից՝ փաստական հիմք էր տալիս պատմությունն ուսումնասիրողին և մյուս կողմից՝ լրացնում, ամբողջացնում իր իսկ հանդեսի էջերում լույս տեսնող հասարակական-քաղաքական բովանդակություն ունեցող նյութերը: Երևի թե չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ հանդեսը չնայած իր գաղափարական ուղվածությամբ կուսակցական էր, շնորհիվ խմբագրի գիտական լայնախոհության, դարձել էր մտավոր մշակույթի մի յուրօրինակ հանրագիտարան: Նրա էջերում տպագրվում էին Եղիշե Չարենցն ու Դավիթ անհաունը, Լևոն Քալանթարն ու Թադևոս Ավդալբեկյանը, Կոստան Զարյանն ու Դերենիկ Դեմիրճյանը, Երվանդ Շահազիզն ու Ստեփան Զորյանը, Ստեփան Լիսիցյանն ու Լեոն, Գուրգեն Մահարին ու Հարություն Սուրխաթյանը, Ակսել Բակունցն ու Մկրտիչ Արմենը և ուրիշներ: «Նորք» հանդեսում են տպագրվել Աշ. Հովհաննիսյա-

նի «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» («Նորք», 1923, գիրք 3), «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» («Նորք», 1923, գիրք 2), «Նժդեհի բացատրությունը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին» («Նորք», 1923, գիրք 3), «Երկու խոսք: (Դ. Անանունի «Վարդան Գոլոշյան և իր շրջանը»-ի մասին), «Նորք», 1924, գիրք 4), «Ֆ. Էնգելսի նամակը «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանության առաջաբանի փոխարեն» («Նորք», 1924, գիրք 4), «Դաշնակցական Հայաստանի գործերից» («Նորք», 1925, գիրք 5-6), «Դաշնակցության սոցիալական ծագումը» («Նորք», 1927, գիրք 1) և այլ հոդվածներ:

Հատկանշական է, որ հանդեսի վերջին գրքում տպագրված Աշ. Հովհաննիսյանի «Դաշնակցության սոցիալական ծագումը» հոդվածից հետո, որը հրատարակվել էր բանավեճի կարգով, նրա եզրահանգումներին անհամաձայն քննադատներն իրենց ընդդիմախոսությունների մեջ հասան այնպիսի մոլեգնության, որ անտեսում, նույնիսկ ժխտում էին ոչ միայն խմբագրի քաղաքական ու գիտական վաստակը, այլև հանդեսի դերն ընդհանրապես: Եվ Աշ. Հովհաննիսյանի՝ կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնը թողնելուց հետո փակվեց նաև «Նորք» հանդեսը: Հախուռն ժխտման կիրքն այնտեղ հասավ, որ հանդեսը նույնացվեց ոչ ավել, ոչ պակաս Էջմիածնի միաբանության բերան «Արարատ» ամսագրի հետ: Հայաստանի կոմկուսի կենտկոմի նոր ղեկավարության (Հայկազ Կոստանյան, Աղասի Խանջյան) ցուցմամբ այդ մասին հոդված տպագրվեց «Խորհրդային Հայաստան» թերթի 1928 թ. հուլիսի 3-ի համարում: Հոդվածի հեղինակ Ա. Եսայանը «Հայ եկեղեցին, հայ սպեցիֆիկները և Էջմիածնի միաբանը մեր կուսակցության մեջ» ծավալուն իր ամբաստանագիրը վերջափակում էր այսպես. «Ընկ. Աշ. Հովհաննիսյանի տեսակետները, նրա գիծը, նրա մասնակցությունը Էջմիածնի «գիտական աշխատանքներին (նկատի ունի առաջին հերթին Աշ. Հովհաննիսյանի 1910-ական թվականների վերջին տարիներին «Արարատ» ամսագրում տպագրված հոդվածները և Էջմիածնի նկատմամբ նրա վարած լոյալ քաղաքականությունը կենտ-

կուսի քարտուղարության ժամանակ – Ն. Ս.) կարող են միայն շփոթություն առաջացնել մեր երիտասարդ կոմունիստների, կոմսոմոլների և ժողովրդական լայն խավերի մեջ: Մեր հասկացած մարքսիզմը և խորհրդային գիտությունը ժխտում են Էջմիածինը և նրա «գիտությունը»: Նրանք իրար հակասող հասկացություններ են, բոլոր փորձերը, որ կատարվել և կատարվում են նրանց մեջ որևէ կապ ստեղծելու, իրար հարմարեցնելու, պետք է ամենայն ուշադրությամբ ետ մղվեն մեր կողմից, իբրև ոչ բոլշևիկյանի, այլ օպորտունիստականի, նացիոնալիստականի»[5]:

Առավել պարզ՝ Աշ. Հովհաննիսյանը միևչխորհրդային ժամանակաշրջանում համագործակցել է էջմիածնական գիտության հետ, իսկ իր ղեկավարման տարիներին անհրաժեշտ պայքար չի մղել եկեղեցական գաղափարախոսության, օպորտունիզմի և նացիոնալիզմի դեմ: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի 1928 թ. հուլիսյան պլենումում իր զեկուցման մեջ առաջին քարտուղար Հայկազ Կոստանյանը լիովին օգտագործում է անցյալի ղեկավարությանը քննադատելու շատ ավելի արգահատելի ոճ: Նա ասում է. «Իրավացի չեն այն ընկերները, որոնք ասում են, թե հին ղեկավարության հետ ունեցած մեր տարաձայնությունների մեջ միակ վիճելի խնդիրն իդեոլոգիական ճակատն է: Իհարկե վեճերը շատ ու շատ ընդարձակ էին, սակայն ճիշտ է և այն, որ ներկուսակցական կռվի ժամանակ կենտրոնական կետը կազմում էին իդեոլոգիական ճակատի խնդիրները: Ո՞րն է հին ղեկավարության սխալն այս խնդրում: Ըստ իս, այդ սխալն այն է, որ բացակայում էր խիստ հաստատուն հիմնավորված և վերջնական հայացք՝ մեզ թշնամի կուսակցությունների սոցիալական էության վերաբերյալ և, առաջին հերթին, նրանցից ամենագլխավորի՝ «դաշնակցություն» անունը կրող կուսակցության: Երկրորդ սխալն այն է, որ այդ խնդրում քաղաքական դրույթը խարխլված է՝ հիշյալ կուսակցությունների ակադեմիական ուսումնասիրությամբ և այն էլ այնպիսի մարդկանց ձեռքերով, որոնք կամ բոլորովին չէին տիրապետում մարքսիզմի գենքերին, կամ մարքսիստական դիալեկտիկային չա-

[5] «Խորհրդային Հայաստան», 1928, 3 հուլիսի:

փազանց թույլ էին տիրապետում... դժբախտությունն այն չէ, որ մարդիկ պատմությամբ էին զբաղվում և չափազանց փութաջանությամբ մեր հանդեսների էջերը լցնում էին այդ խնդրի առթիվ եղած վեճերով: Այդ դժբախտություն չէ, որովհետև բոլշևիկները պատմությամբ էլ պիտի զբաղվեն: Դժբախտությունն այն է, որ մարդիկ այնքան հրապուրվեցին հարցի այդօրինակ «պատմական» դրվածքով, որ դրանով են լցրել կենտկոմի և թե կուսակցական մարմինների քաղաքական բովանդակ աշխատանքը...»[6]:

Դժվար չէ նկատել, որ ամբողջ մեջբերումն ուղղված է Աշ. Հովհաննիսյանի և նրա խմբագրած «Նորք» հանդեսի դեմ: Նույնը շարունակվեց նաև կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի պաշտոնավարման ժամանակաշրջանում, երբ չարամտորեն խեղաթյուրվում էր իրականությունը՝ ծուռ հայելու մեջ ներկայացնելով Աշ. Հովհաննիսյանի նույնիսկ գիտական կարողությունները: Եվ երբ այսօր անդրադառնում ես այդ ամենին, չես կարող ակամա չզարմանալ, «Նորք» հանդեսի տպագրությունը դադարեցնելուց հետո կենտկոմի նոր ղեկավարները ինչպես էին կարողոնում անգիտանալ, որ այդ հանդեսի էջերում են տպագրվել Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ա. Մռավյանի, Ս. Կասյանի և այլ ականավոր գործիչների գիտահրապարակախոսական գրվածքները, Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի և խորհրդահայ մյուս երևելի գրողների նորաշունչ ստեղծագործությունները: Ինչևէ, չնայած Հ. Կոստանյանն ու Ա. Խանջյանն ընտրեցին ստալինյան ամրակայող բռնավարչակարգին բոլորանվեր ծառայելու ուղին, միևնույն է, ոչինչ չշահեցին, քանզի նրանց քաղաքական կարիերիզմի սլացքի ճանապարհին որպես արգելափակոց, կանգնած էր Ստալինի անդրկովկասյան սատրապ Լավրենտի Բերիան:

Հայ հեղափոխական դաշնակցության մասին գրած Աշ. Հովհաննիսյանի հոդվածները խարսխված էին պատմության մատակարարած նյութերի և արդիականության իրողությունների հենքի վրա: Գիտնական հրապարակախոսի պատմահասարակագիտական

---

[6] «Խորհրդային Հայաստան», 1928, 19 հուլիսի:

հրապարակումները դարձնում են ակնբախ, որ հայկական վերջին պետականության անկումից հետո, շուրջ հինգ հարյուրամյակ, պատմական Հայաստանը գրաված Օսմանյան կայսրությունն անում էր ամեն ինչ՝ բարբարոսական շահագործումից ընդհուպ մինչև ցեղասպանություն՝ վերջ տալու հայ էթնոսի ինքնուրույն գոյությանը: Թուրքական և ռուսական բռնապետությունների տակ ապրող հայությունը, այնուամենայնիվ, պահպանում էր ազգային ազատագրության մեծ հույսը: Այդ հույսի հենքի վրա XIX դարում դեպի վերելք թևակոխեց ազգային ռոմանտիզմի գաղափարախոսությունը, իսկ նույն դարի վերջին ստեղծվեցին ազգային կուսակցությունները: Լինելով ոչ խոհեմ, անհեռատես քաղաքագետներ, այդ կուսակցությունների վարիչները ոչ միայն չկարողացան ճիշտ ուղու մեջ դնել ազգային շարժումը, այլև ժողովրդի քաղաքական բախտը տնօրինելիս հրապարակ հանեցին անիրագործելի, մինչև անգամ անհեթեթ ծրագրեր: Ավելին, նրանց քաղաքականությունը, հատկապես Հայ հեղափոխական դաշնակցության, ժողովրդի պատմական բախտի ճակատագրական պահերին, մերձենում էր դոնքիշոտյան անճարակության և դիվանագիտության խեղճության: Ազգային կուսակցությունների քաղաքական արկածախնդրությունն առանձնապես ցայտուն արտահայտվեց XX դարի առաջին երկու տասնամյակում: Թուրքական կազմակերպված ու ծրագրված ցեղասպանությանը նրանք պատասխանում էին կամ դաշինքներով (հիշենք երիտթուրքերի հետ դաշնակցականների 1908 թ. դաշինքը), կամ հավատով (1912-1914 թթ. հայկական բարեռորոգումների հետ կապված հույսերը), կամ ազգային-ռոմանտիկական սին պատրանքներով:

Առաջին աշխարհամարտի տարիներին, ինչպես հայտնի է, հայ ժողովրդի լայն շերտերում կրկին ճառագեց ազատագրության հույսը: Ոգևորված ցարական կառավարության տված դատարկ խոստումներով և ազատագրության սեփական պատրանքներով, հոգեվարքից փրկվել ձգտող հայության մեջ 1914 թ. լայն արձագանք գտավ կամավորական շարժումը, որի նպատակն էր իբրև թե ռուսական սվինների օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը

թուրքական բռնատիրությունից: Հազարավոր հայրենասերներ՝ ժողովրդի քաջ զավակներ, խմբվելով կամավորական գնդերում, միամտաբար կարծում էին, թե քրիստոնյա Ռուսաստանը վստահելի նեցուկ կլինի ազատագրության ուխտին և առնվազն պաշտպան կկանգնի տառապող արևմտահայության ճակատագրին: Այդ հավատը նրանց ներշնչում էին առաջին հերթին ազգային անհեռատես քաղաքագետները, որոնք պատմության դաժան ժամին չկարողացան ղեկավարել ժողովրդի ազատագրական շարժումը:

Երբ ավերված, արյունաքամ Հայաստանում 500-ամյա խզումից հետո, ստեղծվեց արևմտյան տերությունների «մանդատներից» անկախ Խորհրդային Հայաստանի պետականությունը, Մեծ եղեռնից հրաշքով փրկված հայության համար պարզ դարձավ, որ նրան այլևս ոչինչ չեն կարող տալ ռոմանտիկական պատրանքները և դիվանագիտական ամուլ կողմնորոշումները: Խորհրդային Հայաստանում խմբված հայության հոգեբանությանն (անգամ արևմտահայ գաղթականությանը) այլևս անհարազատ քվացին այն պատրանքները, որոնք ինչ-որ չափով հավաստում էին համազգային աղետների կանխում: Սա էր հասարակական այն նախադրյալը, որ 1920-ական թվականների հենց սկզբից հարուցեց ազգային պատրանքայնության դեմ ուղղված հրապարակախոսության ուժեղ շաչը:

Վաղ հասակից ընդգրկվելով հեղափոխական շարժման ոլորտը, Աշ. Հովհաննիսյանը, ինչպես հեղափոխության վերելքի տարիներին, այնպես էլ Հայաստանի հանրապետությունում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, արձագանքել է ժամանակի առաջադրած կենսական բոլոր խնդիրներին: Վերևում նշել ենք, որ նա բազում մեծ ու փոքր հոդվածներ է գրել՝ ուղղված գաղափարական հակառակորդների դեմ: Դրանցից շատերը պահի հրատապ հարցերի պատմահրապարակախոսական խոր վերլուծություններ են, որոնք իրենց արժանի տեղն ունեն հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

1920-ական թվականներին Աշ. Հովհաննիսյանը մարքսիստ պատմաբաններից առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ Հայաստանի

հանրապետությունում խորհրդային կարգերի հաստատման պատմությունը շարադրելուն: «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» աշխատության մեջ նա քննության ենթարկեց Մայիսյան ապստամբության պատմության ընթացքը, իսկ «Համազգային կրիզիսը» նվիրված էր խորհրդային կարգերի հաստատման նախապայմանների վերլուծությանը: Ինչպես վերոնշյալ աշխատություններում, այնպես էլ 1920-ական թվականներին դաշնակցության մասին գրած հրապարակախոսական հոդվածներում Աշ. Հովհաննիսյանը կատարել է լայնախոհ պատմաբան գիտնականի և քաղաքական գործչին հատուկ կարևոր ընդհանրացումներ:

«Դաշնակցության սոցիալական ծագումը» ուսումնասիրությունում Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ դաշնակցության հասարակական-քաղաքական բնույթի, նրա սոցիալական ծագման խնդիրը հատկապես զբաղեցրել է հայ սոցիալ-դեմոկրատ մարքսիստներին ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության տարիներից: 1906 թ. կովկասահայ սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Ստ. Շահումյանն ընդգծում էր, որ դաշնակցությունն երբեք չի եղել քաղաքական հեղափոխական կուսակցություն, այլ եղել է «մի ֆիլանտրոպիական (մալդասիրական-բարեգործական) ընկերություն տաճկահայերի համար և վարձկան զինվորների և բուրժուազիայի թիկնապահների բանակ ռուսահայերի համար»[7]:

Դաշնակցությանը բնութագրելով որպես կովկասահայ բուրժուազիայի «վարձկան զինվորների և թիկնապահների» կազմակերպություն, Ստ. Շահումյանը միաժամանակ հավելում էր, որ «Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «դաշնակցություն» կուսակցության մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին,- և այդ պատճառով բոլոր ուժերով, նյութապես և բարոյապես օժանդակում էր այդ կուսակցությանը»[8]: Այս հենքի վրա անմիջապես երևան է գալիս հայ-թուրքական ջարդերի ժամանակաշրջանի դաշնակցության

---

[7] «Նոր խոսք», 1906, N 4, 25 օգոստոսի:
[8] Շահումյան Ստ., Երկեր, հ. Առաջին, Երևան, 1955, էջ 285:

իրական պատկերը, երբ դաշնակցությունն իր վրա էր վերցրել կովկասահայ բուրժուազիայի «աճի և գույքի» զինական պաշտպանությունը: Կուսակցությունը հրապարակ է գալիս որպես նրա շահերի լավագույն արտահայտիչն ու պաշտպանը, ստանում է նրանից նյութական և բարոյական օժանդակություն: Շահումյանն ընդգծում էր այն կապը, որ կար այն ժամանակ դաշնակցության և հայ խոշոր, կապիտալիստական բուրժուազիայի միջև:

Նա բնութագրում է դաշնակցությանը որպես «բուրժուազիայի լավագույն դաշնակցի» և դրանով վեր հանում դաշնակցությանն ընդառաջած կովկասահայ մանր ու խոշոր բուրժուազիայի դաչինքը: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, «կովկասահայ խոշոր բուրժուազիայի» և «իր վարձկան զինվորների և թիկնապահների» միջև այնուամենայնիվ կար շահերի տարբերություն և հակամարտություն: Եվ այդ ակնբախ դարձավ այն պայքարից, երբ առաջացավ մանր-բուրժուական տեսակետ դավանող դաշնակցականների և կապիտալիստական բուրժուազիայի տեսակետ պաշտպանող մշակականների մեջ այն պահից, երբ դուրս գալով թիկնապահական պարտավորությունների սահմաններից, դաշնակցությունը փորձ արեց ձեռնամուխ լինել «ազգի» ներքին գործերին: Ո՞վ էր, որ պիտի գերիշխեր ազգային-հասարակական հիմնարկներում, ու՞մ հետևից է, որ պիտի գնար ժողովրդական զանգվածը, ո՞վ է, որ պիտի շահագործեր նրա միտքն ու գրպանը: Ահա այն հիմնական հարցը, որի շուրջը պիտի բոլորեր կովկասահայ մանր ու խոշոր բուրժուազիայի և նրա կուսակցությունների ներքին պայքարը: Դաշնակցային հարաբերությունների պարզեցումը տեղի ունեցավ շատ մեծ արագությամբ: Դաշնակցությունն օգտագործելով «ազգի ինքնապաշտպանության» համար՝ կովկասահայ բուրժուազիան գժտվեց նրա հետ հենց որ նա երես առած ռազմական իր ուժից՝ փորձ կատարեց դնել իր թաթը բուրժուազիայի ղեկավարությանը ենթական հասարակական հիմնարկների վրա, ձեռք բերել հասարակական գերիշխանություն կովկասահայ կյանքում: Հայ կապիտալիստները ոչինչ չունեին դաշնակցության «թիկնապահության» ընդդեմ, բայց նրանք ծառացան այդ կուսակցության դեմ, երբ դաշ-

նակցության «տղերանց» բիրտ ոտքերը կոխեցին «ազգային հաստատությունների»՝ եկեղեցու և դպրոցի, մամուլի և գրականության շեմքերը:

«Ջորքը գործ չունի ներքին թշնամու հետ,- գրում էր արևելահայ բուրժուազիայի քաղաքական բերան «Մշակ» թերթը,- ինքնապաշտպանության համար ստեղծված զինվորական կազմակերպությունը (իմա՝ դաշնակցությունը) չպետք է խառնվի մեր հասարակական գործերի մեջ, չպետք է թելադրի մեզ իր կամքը»[9]:

Ստ. Շահումյանը համեմատում էր հայ կապիտալիստների տեսակետն այն մտայնության հետ, որ հայտաբերում են ռուս միապետության հավատարիմ ծառաները «ամեն անգամ, երբ զորքն այս կամ այն կերպ արտահայտում էր իր համակրանքը Ռուսաստանի ազատագրական շարժմանը, երբ նա դադարում էր կույր գործիք լինելուց բռնակալության ձեռքին»[10]:

Որ իրոք Ստ. Շահումյանը տարբերություն էր դնում դաշնակցության և լիբերալ-բուրժուական մշակականության միջև, երևում է նրանից, որ նա, անգամ իմպերիալիստական պատերազմի տարիներին, մշակականների դիմաց նախապատվություն էր տալիս դաշնակցականներին, ենթադրելով, թե ապագա հայ բուրժուական դեմոկրատիան պետք է ժառանգորդը լինի ոչ թե «Մշակի», այլ՝ դաշնակցականների: Մենք դաշնակցականների բարեկամները չենք, շարունակում է Շահումյանը, բայց չենք կարող ժխտել նաև այն պարզ ճշմարտությունը, որ հայ ժողովրդական մտավորականությունը իր ճնշող մեծամասնությամբ այսօր գտնվում է դաշնակցության ազդեցության ներքո: Ավելին, մենք երբեք էլ չենք ցանկանա, լրացնում է Շահումյանը, որ այդ մտավորականությունը նորից մշակական դառնար, քանզի այդ կլիներ մի խոշոր քայլ դեպի ետ:

«Իսկ ի՞նչ է դաշնակցությունը,- հարցնում է Շահումյանը և պատասխանում,- դա ինքը հայ դեմոկրատիան է, մոլորված, շշմած, քաղաքականապես տգետ և կույր առաջնորդների ձեռքին խաղալիք

---

[9] «Նորք», 1927, գիրք առաջին, էջ 151:
[10] «Լույս», 1906, N 46:

դարձած հայ դեմոկրատիան: Դաշնակցության ազդեցության տակ են այժմ ոչ միայն հայ քաղքենի, մանր-բուրժուական տարրերը՝ ժողովրդական ուսուցիչները, գրողները, հասարակական գործիչներին ընկիրված գյուղական և գավառական երիտասարդությունը, այլև, դժբախտաբար, հայ բանվորության անգիտակից մեծամասնությունը:

Մենք գիտենք, որ այդ բանվորությունը և արմատական երիտասարդությունը երես են դարձնելու վաղը դաշնակցությունից...

Մենք գիտենք, որ հայ դեմոկրատիան բուռն ցասումով դեն է շպրտելու իր այժմյան կույր ու հանցավոր առաջնորդներին, բայց ապագայի նոր, էվոլյուցիայի ենթարկված մանր բուրժուական ազգային դեմոկրատիան լինելու է համենայն դեպս դաշնակցության ժառանգը և ոչ «Մշակի»[11]: Ստ. Շահումյանի «հասկացողությամբ,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- դաշնակցությունը այլ ինչ չէր, քան քաղաքական հստակ գիտակցությունից զուրկ և «կույր առաջնորդներին» գերի կովկասահայ մանր բուրժուազիայի դեմոկրատիան»[12]:

Տակավին 1914 թ. գրած «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատության մեջ Ստ. Շահումյանը թվարկելով կովկասահայ ազգային քերթերը՝ միաժամանակ նշում է նրանց ազգային-քաղաքական պատկանելությունն ու բնույթը՝ տերտերական «Հովիտ», հայ վաճառականների բերան՝ «Մշակ» և հայ մանր-բուրժուական քաղքենիականության օրգան՝ «Հորիզոն»: Ի դեպ, այստեղ շատ ուշագրավ է Աշ. Հովհաննիսյանի մի դիտողությունը: Ըստ նրա, որքան ավելի ենք մոտենում Եվրոպայի արևելքին, քաղաքական տեսակետից ավելի երկչոտ ու ստորաքարշ է դառնում բուրժուազիան: Նրա այս խոսքերն ավելի ճշգրիտ են ռուսական կայսրությունում գործող հայ բուրժուազիայի նկատմամբ: Հեղափոխությունից պաշտպանվելու պահանջը նույնքան կենսական էր ռուսահայ կապիտալիստների համար, որքան արտաքին շուկաներում ռուսական հովանու ներքո իր կապիտալները բազմապատկելու կարիքը: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, Ռուսական կայսրության հայ բուրժուազիայի

---

[11] «Պայքար», 1916, N 33:

[12] «Նորք», 1927, գիրք առաջին, էջ 152:

այդ շերտը իր ներքին անդորրը խանգարող հեղափոխական գործոն էր համարում երբեմն անգամ մանր-բուրժուական սոցիալական ծագում ունեցող դաշնակցությանը:

Հասկանալի է ինքնին, որ նման պայմաններում դաշնակցությունը չէր կարող ռուսահայ բուրժուազիայի այդ շերտի կուսակցություն նկատվել: Չմոռանանք XX դարասկզբին հաճախակի կրկնվող դեպքերը, երբ բուրժուազիայից դրամ կորզելու համար դաշնակցականները հարկադրված էին դիմել բռնի միջոցների՝ ահաբեկչության, էքսպրոպրիացիայի և այլ բռնությունների:

Այս տեսակետից նշանակալից էր Բաքվում կազմակերպված ահաբեկչական «Փոթորիկ» խմբակի գործունեությունը: Ի դեպ, դաշնակցական ահաբեկումներից և տուրքերից տրտնջում էին նաև գյուղի կուլակները, վաշխառուները և քաղաքային վաճառականները, որոնք դաշնակցությունից պաշտպանվելու համար դիմում էին երբեմն անգամ կառավարական մարմինների անհրաժեշտ օգնությանը:

Ազգային «բարեգործները» առանձին հանգամանքներում է միայն, որ բաց էին անում իրենց քսակների բերանները դաշնակցության առաջ: Խոշոր բուրժուական գանձարկղից կամավոր մուծումներ էին արվում ռազմական սուր բախումների տարիներին, երբ բուրժուազիան օգտագործում էր դաշնակցական «զինվորներին» իր կյանքն ու գույքը պաշտպանելու համար: Դրանք այն տարիներն էին, երբ մանր ու խոշոր բուրժուազիայի ուժերն իրար հավասարակշռող գործոններ էին կազմում հայ կյանքում և առաջանում էր երկմտանք՝ ո՞վ է ղեկավարում ում՝ դաշնակցականներն ու մանր բուրժուազիան լիբերալներին ու խոշոր բուրժուազիային, թե հակառակը: Աշ. Հովհաննիսյանի դիտարկմամբ «այդպիսի տարիներ էին մասնավորապես 1905–1907 և 1914–1916 թվականները»[15]: Դա մի ժամանակաշրջան էր, երբ կովկասահայ կապիտալի հզոր տերերը վարձում էին դաշնակցության խմբերին ու խմբապետներին նավթարդյունաբերության շրջանում գործադուլները ճնշելու, ահաբեկչական էքսցեսներից ապահովագրելու համար: Կամ ավելի ուշ, երբ դաշնակցությունը գին-

[15] «Նորք», 1927, գիրք առաջին, էջ 197:

վորագրվում էր «կամավոր» իմպերիալիստական պատերազմին և ազգային այլևայլ «բյուրոների» ու «խորհուրդների» միջոցով ուղղակի կամ անուղղակի ենթարկվում էր ոչ միայն տնաբույս հայ վաճառականական կապիտալի, այլև, ավելի մեծ չափով, համառուսական արդյունաբերական-ֆինանսական կապիտալի ընդհանուր քաղաքական հրամանատարությանը: «Կուսակցության ներսում,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- նման ժամանակներում ծայր էին առնում կապիտալիստական- բուրժուական վերասերման զորեղ պրոցեսներ: Սակայն կուսակցությունը գերազանցորեն շարունակում էր դեռ մնալ կովկասահայ մանր-բուրժուազիայի կազմակերպություն: Արտակարգ այս տարիներին կուսակցությունը անդրադարձնում էր հիմնականում կապիտալիստական, իմպերիալիստական բուրժուազիային գործիք ծառայող մանր բուրժուական պատրիոտիզմի և մանր բուրժուական ռեակցիայի ընդհանուր երևույթը»[14]:

Գր. Արծրունու «Մշակ» թերթն արտահայտում էր հայ առևտրական և նոր ձևավորվող արդյունաբերական բուրժուազիայի շահերը, որը համամիտ էր Արևմտյան Հայաստանի անեքսիային ռուսական զորքերի կողմից: Վերոհիշյալ հարցում նշմարելի տարբերություն կար կովկասահայ առևտրական կապիտալի գաղափարախոսների և կովկասահայ մանր բուրժուազիայի 1880–1890-ական թվականների ներկայացուցիչների միջև: Մանր բուրժուազիան ապրում էր տեղային, նեղ, ինքնամփոփ կապերի միջավայրում: Ռուս արդյունաբերողն ու նրա պետությունը կովկասահայ մանր բուրժուազիայի անմիջական հովանավորը չէր: Ընդհակառակը, ցարական վարչակարգը և արդյունաբերական-ֆինանսական կապիտալի համակարգն է, որ հալածանքի ու շահագործման առարկա էր դարձնում նրան: Ցարական տիրապետության շրջանում Կովկասը, և, մասնավորապես Անդրկովկասը, դառնում էր ռուսական գաղութ և գաղթավայր: Ընդարձակ և հարմար հողամասերը խլվում էին տեղական բնակչությունից և հատկացվում ռուս աղանդավորներին: Մյուս կողմից սկսվում է պայքար անդրկովկասյան տնայնագործության և ար-

[14] Նույն տեղում:

հեստագործության միջև: Պետության աջակցությունը վայելում էին միայն առևտրի, արդյունագործության այն ճյուղերը, որոնք անհրաժեշտ էին ռուս և արտասահմանյան կապիտալիստներին հում նյութ և մթերքներ հայթայթելու համար:

Ա. Հովհաննիսյանի համոզմամբ իրականությունն այնպիսին էր, որ «Գործնական աշխատանք ստանձնելով Թուրքահայաստանում, կովկասահայ մանր բուրժուազիայի իդեոլոգները հաշվի պիտի առնեին մյուս կողմից, տաճկահայ բուրժուազիայի հակացարիստական օրիենտացիան, այդ բուրժուազիայի *եվրոպական* կապերն ու դրանից բխող քաղաքական դիմադարձը Եվրոպայի կապիտալիստական պետությունները: Թուրքահայաստանը պիտի կազմի օսմանյան սահմանադրական պետության անբաժան մասը՝ հիմնված տեղական լայն ինքնավարության վրա՝ հայտարարում էր դաշնակցության ծրագիրը: Մանր-բուրժուական այս մտայնության մի այլ տարբերակը գտնում ենք Հնչակյան կուսակցության ծրագրում: Հնչակյանները կարծում էին «որ հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդմիշտ պետք է զատվի թուրքական կայսրության ճակատագրից, ըստ որում պատմական պահանջ և անհրաժեշտություն է ներկայացնում *հայ ազգային անկախությունը*, որն էլ այդպիսով կազմում է մոտակա նպատակի մի հիմնական մասը և առաջին պայմանը»[15]:

Այնուհետև հեղինակը ցույց է տալիս, որ իր գործունեության սկզբնական շրջանում Հնչակյան կուսակցությունը կողմնակից չէր բնավ ընդդեմ թուրքերի ռուս կառավարության միջամտությունն ապերսելուն: Թե ի՞նչ կլինի դրա հետևանքը՝ հարցադրում էր «Հնչակ» թերթը և պատասխանում՝ այն կլինի, որ Ռուսաստանը հայերի ինքնական առաջարկությունից օգտվելով, նրանց զենք կդարձնեն Փոքր Ասիայում և ամբողջ Թուրքիայում իր ունեցած շահերի համար, որ բոլորովին համապատասխան չեն հայերի շահերին: Դրա հետևանքն այն կլինի, որ հայերի կողմից ստանալով քարթ բլանշ հայկական խնդրի վերաբերյալ, այդ խնդրի լուծումը նա կանի նույն նրանց՝ ա-

[15] Նույն տեղում, էջ 160-161:

յերի դեմ, քանի որ իր շահերն են այդ պահանջում: Թուրքահայը կլինի ռուսի գերին[16]:

Կովկասահայ խոշոր և մանր բուրժուազիայի նպատակների մեջ եղած տարբերությունից զատ, Աշ. Հովհաննիսյանը նաև նկատում էր, որ կար նաև կենսագործման համար գործադրված միջոցների տարբերություն: Լիբերալ բուրժուազիան սպառում էր քաղաքական իր եռանդը դիվանագիտական ակնկալությունների և բանավարությունների մեջ: Նա չէր ժխտում թուրքահայ ապստամբության գաղափարը, բայց և այնպես, ինչպես վայել էր արշինի և կշեռքի մարդկանց, գերադասում էր «խաղաղ» քարոզչության և դիվանագիտական միջամտության միջոցը: Այսպես, մանավանդ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ խորտակվեցին կովկասահայ առևտրական բուրժուազիայի մարտական ակնկալությունները և երբ Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածը դարձավ նրա համար Հայկական հարցի լուծման գլխավոր երաշխիքը՝ առանց քաղաքական զինաբախության: Մանր բուրժուազիայի ղեկավարներն, ընդհակառակը, նույն այդ հոդվածն էր հենց, որ ելակետ դարձրին ապստամբական շարժումների կազմակերպման համար: Այդ շարժումներն է, որ նրանց կարծիքով, պիտի առիթեին եվրոպական պետությունների միջամտությունը թուրքահայերի օգտին: Դրսի միջամտությունը թուրքահայերի փրկության վճռական միջոց նկատելով, կովկասահայ մանր բուրժուազիայի ղեկավարները՝ հնչակյաններն ու դաշնակցականները առատորեն վատնեցին իրենց մարտական եռանդը *պարտիզանական շարժումների* մեջ, որ պատմականորեն հատուկ են դարձել միայն մանր-բուրժուական ռազմավարության համար[17]:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այդ ժամանակաշրջանում կովկասահայ առևտրական կապիտալի գաղափարախոսների աստիճանական ձևափոխումը՝ էվոլյուցիան: Այնչափ, որչափ կովկասահայ կապիտալի ծանրության կենտրոնը փոխադրվում է արդյունաբերական կապիտալի կողմը, այնքան չեզոքանում էր նաև նրա

---

[16] Տես «Հնչակ», 1889, N 2:
[17] Տես «Դոորը», 1927, գիրք առաջին, էջ 161-162:

ներկայացուցիչների եռանդն ու աշխույժը ազգային խնդիրների նեղ շրջանակներում և մասնավորապես թուրքահայ շարժման նկատմամբ: Արդյունաբերական բուրժուազիան ընդունում էր առանձնահատուկ ազգային-քաղաքական նկարագիր, որ ամփոփվում էր լիովին Ռուսական կայսրության համապետական արդյունաբերական-ֆինանսական բուրժուազիայի վարած քաղաքականության մեջ: Կովկասահայ առևտրա-արդյունաբերական կապիտալի գաղափարախոսները, ենթարկվելով համապետական կապիտալի ցուցմունքներին՝ ազգային խնդիրներում քաղաքական «զգաստության» քարոզներ են կարդում կովկասահայ մանր բուրժուազիային, խարազանում նրա ռոմանտիզմը: Ինչքան բնական է, որ կապիտալիստական կովկասահայ բուրժուազիայի ազգայնական մտայնության գաղափարախոսները կորցնում են իրենց վաղեմի նշանակությունը: Բնորոշ է նաև, որ տակավին 1890-ական թվականների սկզբներին դաշնակցության շարքերից հեռանում են կուսակցության երևելիներ Լ. Սարգսյանն ու Կ. Խատիսովը, որոնք ներկայացնում էին այդ կուսակցության մեջ լիբերալ-բուրժուական հայացքները: Սակայն լիբերալ բուրժուազիայի հարազատ կուսակցությունն իսկ հետզհետե կորցնում է իր վաղեմի կշիռն ու ուժը «ազգային» գործերում: 1890-ական թվականների վերջերից «Մշակ» թերթը և նրա շուրջը խմբված հայ բուրժուական մտավորականները հետզհետե լքում են իրենց տիրական դիրքերը: Կովկասահայ կապիտալի զորումը ռուսականի և եվրոպականի հետ խարխլում էր նրանց սահմանափակ ազգային գաղափարախոսության պատվանդանը:

Այդ ժամանակաշրջանն իր բնորոշ արտահայտությունն է գտել Դավիթ Անանունի 1915-1916 թթ. հոդվածների մեջ, որտեղ նա պաշտպանության տակ է առնում խոշոր բուրժուազիայի «շրջանկատ քաղաքականությունը» և նրա «հասարակական առաջադեմ դերը հայ իրականության մեջ»՝ ընդդեմ «աղմկարար և արկածախնդիր քաղքենիության»[18]: Իսկ ո՞վ էր լինելու կովկասահայ մանր բուրժուազիայի առաջնորդը հարցին, Դ. Անանունը դատում է այսպես. «Հայ քաղքե-

[18] Նույն տեղում, էջ 163:

նիությունը այսօր անկարող է ըմբռնել պատմության խորհուրդը. նա կույր ամբոխ է և կարոտում է հեռատես առաջնորդների: Որտեղի՞ց պիտի գան այդ առաջնորդները: Քաղքենի մտավորականների՞ց, որոնք առանց այն էլ պատասխանատու են հայության կրած արհավիրքների համար և ձեռնամուխ լինելով նոր գործի՝ դեպի նոր խորխորատ պիտի տանեն մտամոլոր ժողովրդին: Անուղղակի սխալ կլինի, եթե մեր վիճակի տնօրինումը մնա դարձյալ հին ձեռքում: Իսկ ու՞ր փնտրել նոր առաջնորդներ: Ահա ցավը: Մենք կարծում ենք, որ փակուղիի առաջ կանգնած չէինք լինի, եթե դիմազուրկ չլիներ մեր բուրժուազիան և նրա մտավորականությունը»[19]:

Դավիթ Անանունի խոսքը կովկասահայ արդյունաբերական-ֆինանսական այն բուրժուազիայի մասին էր, որ հաջորդելով առևտրական բուրժուազիային, հաստատելով իր տնտեսական գերիշխանությունը, իրենցից վանում էր իր նախորդի ազգային քաղաքականությունը: «Մեր ազգի դժբախտությունը,- ասում է սպեցիֆիկների գաղափարախոս պարագլուխը,- պլուտոկրատիայի տիրապետությունից չէ բխում, այլ այդ պլուտոկրատիան հրաժարվում է առնչություն ունենալ իր ծնող ազգի հետ»[20]: Նա միաժամանակ պահանջում է, որ կովկասահայ արդյունաբերական բուրժուազիան «չխորշե հայերի հասարակական գործերից և ձեռնամուխ լինի խորտակելու մանր բուրժուազիայի արկածախնդրական գերիշխանությունը, որ կործանման և բնաջնջման դռռն է հասցրել մի ամբողջ ժողովուրդ»[21]: Աշ. Հովհաննիսյանը սխալ էր գնահատում Անանունի այն դրույթը, թե կովկասահայ մանր բուրժուազիան արդեն գերիշխանություն էր նվաճել հայ իրականությունում: Ըստ նրա, խոշոր բուրժուազիայի հանդեպ մանր բուրժուազիան գերակշռող ուժ չէր, այլ շարունակում էր կատարածուի դերում լինել վերջինիս ձեռքին:

Դաշնակցությունն ինքը պատերազմի տարիներին ոչ միայն վճռի առարկա չէր դարձնում կովկասահայ արդյունաբերական-ֆի-

---

[19] «Աշակ», 1916, N 12:
[20] «Աշակ», 1916, N 261:
[21] «Աշակ», 1916, N 12:

նանսական բուրժուազիայի ժառանգական իրավունքները, այլև սպասարկում էր ըստ ամենայնի նոր իշխանավորի քաղաքական շահերին: Դաշնակցական խմբերն ու գնդերը պատերազմի տարիներին կամավոր տուրք էին տալիս կապիտալիստական բուրժուազիայի քաղաքականությանը, կիրառում նրա ծրագրած առաջադրույթները: Միաժամանակ սա նշանակում էր, որ դաշնակցությունը կատարածուի պաշտոն էր ստանձնում համառուսական իմպերիալիստական բուրժուազիայի ձեռքից, որչափ կովկասահայ արդյունաբերական-ֆինանսական կապիտալը չուներ «ուրույն», «ազգային» վարքագիծ, այլ տանում էր բացառապես համառուսական իր դաշնակիցների ընդհանուր քաղաքականությունը: Եվ այս հանգամանքն էլ, ըստ Աշ. Հովհաննիսյանի, մտահոգություն էր պատճառել «հայության համազգային վարկին» նախանձախնդիր Դ. Անանունին: Ավելին, Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, Դ. Անանունի հրապարակախոսությունը ազգային-քաղաքական միջավայր էր ստեղծում կովկասահայ արդյունաբերական բուրժուազիայի շուրջ: Հայ պրոլետարիատի համակրանքը, ասում է Անանունը, պետք է լինի «արդյունաբերական կապիտալը» ներկայացնող հասարակական հոսանքի կողմը: Հեղինակը թվարկում է առևտրական կապիտալի, հայ վաճառականության ազգին մատուցած ծառայությունները և հորդորում արդյունաբերական բուրժուազիային ևվիրագործելու նախորդի «ազգահավաք» և «ազգաշեն» վարքագիծը: Դ. Անանունը կամենում էր դարձի բերել կովկասահայ արդյունաբերական բուրժուազիային, հետ կանգնեցնել նրան ազգային դասալքության ուղիներից և ժառանգորդ դարձնել նրան առևտրական բուրժուազիայի ազգային-քաղաքական ավանդույթներին[22]: Դ. Անանունի իմաստասիրությունը ազգային բարեպաշտ մի բաղձանք էր, որ չպիտի կենսագործվեր երբեք, եթե վրա չհասներ Փետրվարյան 1917 թ. հեղափոխությունը, այն, ինչի մասին չէր մտածում բնավ՝ ազգի համար նոր առաջնորդներ փնտրելու պահին:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, իր ծագման հանգամանքով «...դաշնակցությունն անդրադարձնում էր Անդրկովկասի գավառական հայ

[22] Տես «Նոր օր», 1927, գիրք առաջին, էջ 164:

մանը բուրժուազիայի շահն ու մտայնությունը: Ցարիզմի ծայրամասային գաղութի վիճակում տրորված և առևտրական կապիտալի քայքայիչ ազդեցության ենթակա՝ կովկասահայ մանը բուրժուական այդ մասսան փրկություն էր որոնում ավետյաց աշխարհում-Թուրքաց Հայաստանում: Այդ նշանակում էր, թե կովկասյան մանր բուրժուազիան, քաղաքականապես դիմադարձ էր լինում դեպի նույն այն նվաճող իմպերիալիզմն ու առևտրական բուրժուազիան, որոնց ստեղծած տնտեսական և քաղաքական ռեժիմի ներքո տառապում էր ինքը»[23]:

Ժամանակի զարգացման գործընթացով պայմանավորված մի էական իրողություն ևս. կովկասահայ հասարակական-քաղաքական զարգացումը XIX դարի վերջերին բնորոշ էր նրանով, որ մանր բուրժուազիայի նախապաշարումն այն ժամանակ տակավին գերազանց էր նրա դատողությունից: Պետական ու մասնավոր կալվածատիրության կողքին կովկասահայ գյուղում քարշ էր տալիս իր գոյությունը համայնական հողատիրույթը, որ առատ պատրանքներ էր հարուցում 1880–1890-ական թվականների հայ նարոդնիկների ուղեղներում այն մասին, որ սոցիալիզմը դրական հիմքեր ունի հայ կյանքում: Ցարիզմի տիրապետության ներքո կովկասահայ աշխատավոր գյուղացիությունը տնտեսապես հյուծվում էր կալվածատիրական-կապիտալիստական վարչակարգի հարվածների տակ: Հայկական գավառը ենթակա էր դրսից ներգործող առևտրական կապիտալի ուժգնացող հարվածներին:

Դաշնակցությունը, կապիտալիստական բուրժուազիայի դասակարգային գերիշխանության պայմաններում, երբ չկար շահերի անմիջական բախում գավառական հայ մանր բուրժուազիայի և գաղութահայ խոշոր բուրժուազիայի միջև, մի հաղորդակից խոռովակ էր, որ միավորում էր մանր բուրժուազիայի դասակարգային շահերը խոշոր բուրժուազիայի հետ և տարածում վերջինիս գաղափարական ազդեցությունն առաջինի վրա: Այդ տեսակետից գրավելով հետևողական դիրք՝ մանր բուրժուազիան և նրա կուսակցություն դաշնակցությունը կատաղի պայքար են մղում կովկասահայ բանվորության և

[23] Նույն տեղում, էջ 165-166:

չքավոր գյուղացիության դասակարգային ինքնագիտակցության և դասակարգային պայքարի ամեն մի դրսևորման դեմ: Ամենևին էլ ածանցյալ խնդիր չէ, որ մանր բուրժուազիայի քաղաքական գաղափարախոսությունը ներսում հիմնականում ձևավորվում էր որպես ազգայնական գաղափարախոսություն: Մանր բուրժուական նացիոնալիզմը, որչափ որ անդրադարձնում է մանր բուրժուազիայի, այսինքն միջանկյալ խավերի շահերը, միտում ունի ընդհանուր առմամբ բթացնելու դասակարգային բախումների սուր ծայրերը: Կովկասահայ մանր բուրժուազիայի առանձնահատուկ դրությունը ավելի ևս ընդգծում է ընդհանուր այս միտումը: Որպես դասակարգային կուսակցություն, կովկասահայ մանր բուրժուազիայի շահերի արտահայտիչը լինելով՝ դաշնակցությունը դասակարգային չէր իր գաղափարախոսությամբ: Ըստ Աշ. Հովհաննիսյանի «Դաշնակցության գաղափարախոսությունը ձևակերպվեց որպես ապադասակարգային նացիոնալիզմ: Այդ նացիոնալիզմը բխում էր այնուամենայնիվ կովկասահայ մանր բուրժուազիայի կամ նրա որոշ հատվածի ուրույն դրությունից: Եվ նույն այդ մանր բուրժուազիայի, նրա որոշ հատվածի ուրույն դրությունից չէ՞ր բխում նրա գաղափարախոսության մի ուրիշ, հիմնական առանձնահատկությունը, նրա հետադիմական ռոմանտիզմը»[24]:

Այստեղ մի կարևոր իրողություն չենք կարող անտեսել, այն, որ ճիշտ մեկնաբանելով հայ հասարակական-քաղաքական մտքի դիալեկտիկան, հեղինակը շեղվում է նույն դիալեկտիկայից, երբ (թերևս քարոզչական նպատակով) դաշնակցության գաղափարական դավանանքը որակում է որպես «հետադիմական ռոմանտիզմ»: Ավելի ռեալիստական չէ՞ր լիներ օգտագործել «ուշացած ռոմանտիզմ» տերմինը: Չէ՞ որ ծառանալով ազգային զարգացման բոլոր կաշկանդումների դեմ հայ ազգային կուսակցությունները, այդ թվում և դաշնակցությունը, իր հայացքն ուղղում էր դեպի գալիքը, ոգեշնչվում նոր իդեալի որոնման երազանքով, փայփայում ազգի ազատագրության գաղտնիարը: Ուրիշ հարց է, որ XX դարի առաջին քառորդում հիմնո-

[24] Նույն տեղում. էջ 168:

վին կամ գրեթե հիմնովին փշրվեցին այդ գաղափարի իրացման վերջին հույսերը՝ XIX դարի հայի փրկության «ոսկե երազները»: 1890-ական թվականներին Օսմանյան կայսրությունում 300 հազար հայերի կոտորածները մահացու հարված հասցրին «հայի փրկության» ազգային ռոմանտիզմին: Կործանման երկյուղը դարձավ գործուն հոգեբանություն և սկսեց գուշակել Մեծ եղեռնը: XX դարասկզբի հանճարեղ հայ բանաստեղծները (Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան) նույնիսկ այլևս անկարող էին XIX դարի ռոմանտիկների լեզվով հնչեցնելու ազատությունն ու հայրենիքը: Իր բոլոր դրսևորումներով նեոռոմանտիզմը չկարողացավ գեթ որոշ չափով ժառանգել XIX դարի ռոմանտիզմի գաղափարների մեծությունը, ազատագրական ծրագրերի հավատն ու ուժը. այն դարձավ հայտնի չափով սենտիմենտալ՝ լալագին, ողբասացական, բայց ոչ «հետաղիմական»՝ վերջինիս իսկական իմաստով: Իր ազատագրության համար ծրագրեր մշակող XIX դարի հայ ազատագրական միտքը, պատմության դրվագների մեջ վերակերտված, աշխարհագրական սահմանների մեջ որոշ Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում դարձավ այն աստիճանի կործանման դատապարտված, որ վերածվում էր միրաժի և փշրված անվան: Նման պայմաններում ի՞նչ ծրագրեց, ինչպե՞ս դիմավորեց և իրացրեց իր ծրագիրը դաշնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ահա այս հարցին փորձում է հստակ և համակողմանի պատասխան տալ Աշ. Հովհաննիսյանն իր «Դաշնակցությունը և պատերազմը» գրքույկում: Հեղինակը «Կարո՞ղ էր դաշնակցությունը «չընծեռել» պատերազմը» հարցին պատասխանում է, որ «Մերձավոր առնչություն կա այս հասկացողությունների մեջ: Առնչություն, որ պատահական չէ բնավ և ոչ իսկ իրերի անցողական դասավորության հետևանք: Իհարկե, համաշխարհային պատերազմի տեսակետից և նրա գլխավոր հեղինակների և դերակատարների շրջանում դաշնակցությունը կարող էր լինել պատահական և աննշան մի հանճնակատար: Նա նմանել կարող էր մեծատան կարմրաթուշ մի սպասուհու, որին բարեհաճ տանտերը, ըստ հարկին օգտվելուց հետո, փողոց է նետում որպես

խուճապած ու անպետք մի լաք: Սակայն դրությունը կփոխվի, եթե մոտենանք խնդրին հակառակ ծայրից, վեր հանենք ոչ թե դաշնակցության դերը պատերազմի մեջ, այլ՝ պատերազմի նշանակությունը դաշնակցության համար: Իմպերիալիստական պատերազմը պատահական էպիզոդ չէր դաշնակցության համար և ոչ էլ անակնկալ մի դժբախտություն, որ գալիս էր վերջ տալու նրա քաղաքական անմեղության: Դաշնակցությունն առ հարկի «ընծեռողի» դերում չէր պատերազմի նկատմամբ, այլ խանդավառ սպասարկուի: Երբ Դեղին ինտերնացիոնալի վերաբերմունքը դեպի պատերազմը որակում ենք որպես դավաճանության մի ակտ, դա իր հիմքն ունի: Միջազգային մեծշխիզմը դավաճանում էր հակապատերազմական այն սկզբունքներին, որ դավանում էր մինչև պատերազմ: Այդպես չէր դաշնակցությունը:

Իր «սոցիալիզմը» զավեշտական մի ցուցանակ էր միայն: Վերջին հաշվով դա ծառայում էր ազգային-քաղաքական նպատակին, նպատակ ուներ ապահովել «ազգային դատի» վերաբերյալ ինտերնացիոնալի աջակցությունը: Դատարկահնչյուն, ոչնչի չպարտավորեցնող դաշնակցական «սոցիալիզմի» տեսակետից չէ, որ պիտի լրջորեն դատենք այդ կուսակցության գործերը, այլ ազգային-քաղաքական այն պրոգրամի, որ հետապնդել է փաստորեն դաշնակցությունը: Ազգային-քաղաքական պրոգրամի մեջ է ամփոփված դաշնակցության ողջ մտայնությունը, այդ պրոգրամի կենսագործումն է, որ ընդգրկում է կուսակցության ողջ անցյալը»[25]:

Աշ. Հովհաննիսյանը գրքույկում ըստ ամենայնի քննության է առնում համաշխարհային պատերազմի նկատմամբ դաշնակցության բռնած դիրքորոշման ողջ էությունը: Ըստ հրապարակախոսի, համաշխարհային պատերազմը կազմել է դաշնակցության այդ պահի «գոյության նախապայմանը», ընդգծում նրա գործունեության անմիջական նպատակը նույն չափով, ինչ չափով համաշխարհային հեղափոխությունը շոշափում է սոցիալ-դեմոկրատիայի գոյությունը, նրա գործունեության անմիջական նպատակը: Եթե զանգվածային ապստամբությունն այն միջոցն է, որով յուրաքանչյուր հեղափոխա-

[25] Հովհաննիսյան Աշ., Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1924, էջ 3-4:

կան կուսակցություն ձգտում է նվաճել քաղաքական իշխանություն, ապա դաշնակցության կազմակերպած ազգային-ազատագրական շարժումներն այդ նպատակին չէ, որ ծառայում էին: Դաշնակցության ջանքերը տասնյակ տարիների ընթացքում, նրա կազմակերպած բոլոր ապստամբություններն ու ինքնապաշտպանական մարտերն ունեին մի իմաստ՝ գլուխ բերել եվրոպական տերությունների գործուն միջամտությունը Թուրքահայաստանի գործերին, այդ միջամտությունը դարձնել հատու և վճռական Հայկական հարցի լուծման համար: Այդ տեսակետից դաշնակցությունը քաղաքական կուսակցություն երբեք չի եղել: Նա ձգտել է նվաճել միայն եվրոպական ինտերվենցիայի և ոչ զանգվածային ապստամբության ճանապարհով: Այսպես կոչված դաշնակցության «հեղափոխությունը» միջազգային հակահեղափոխության նվաճողական զենք էր լոկ, որ սպառնում էր եվրոպական իմպերիալիզմի կցորդ դարձնել Թուրքիան, ենթարկել Թուրքիայում ապրող ժողովուրդներին իմպերիալիստական բուրժուազիայի տնտեսական և քաղաքական տիրապետությանը: Եվրոպական տերությունների միջամտությունը չէր կարող, անշուշտ, զուտ դիվանագիտական լինել: Դարերի փորձը բնավ խելքի չբերեց հայ ազգային կուսակցությունների առաջնորդներին, որ Հայկական հարցն արդիական էր դառնում եվրոպական քաղաքականության համար հատկապես ռազմական բախումների ժամանակ, ինչպես նաև նույն բախումների ժամանակ է, որ հասունանում է այդ հարցը հայ հասարակական միջավայրում: Որպես օրինակ Աշ. Հովհաննիսյանը հիշեցնում է հայ ազգային-քաղաքական առաջին ընդվզումը XVIII դարում՝ Սյունիքի ապստամբությունը Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի առաջնորդությամբ, որ սերտ կապ ուներ Ռուսաստանի ձեռնարկած առաջին պարսկական արշավանքի հետ, կամ հայ ազատագրական պայքարի խմորումները, որ տեղի ունեցան մեկ հարյուրամյակ անց՝ ռուս-պարսկական վերջին պատերազմների ժամանակ[26]:

Հայկական հարցը որպես դիվանագիտության քննարկման խնդիր ձևակերպվեց և հրապարակ նետվեց 1877-1878 թթ. ռուս-թուր-

[26] Տե՛ս նույն տեղում, էջ 5-6:

քական պատերազմի վերջերին: Բեռլինի դաշնագրությունը մշակեց նրա «լուծման» բանաձևը, սակայն եվրոպական դիվանագիտության նախապատերազմական միջամտություններն անզոր հանդիսացան փոխելու արևմտահայության վիճակը, ինչպես նաև հայ ազգասերների կրավորական ընթացքը հետբեռլինյան ժամանակաշրջանում չարդսարացրին նրանց քաղաքական ակնկալությունները: Երբեք չամրապնդվեց այն համոզմունքը, որ դիվանագիտական զենքը պետք է տեղի տա զենքի դիվանագիտությանը՝ եվրոպական տերությունների կենդանի շահագրգռվածությանը և նույն տերությունների ռազմական միջամտությանը Թուրքիայի ներքին գործերին: Համաշխարհային առաջին պատերազմը պայքարի թատերաբեմ էր դարձնում Արևմտյան Հայաստանը: Մի պահ թվում էր, թե երբեք այնքան մոտ չէր եղել Հայկական հարցը իմպերիալիստական «արդարադատության» ատյանին, քան այդ ժամանակ: Երբեք ավելի ուշադիր չէր գտնվել եվրոպական բուրժուազիայի դատաստանը հայ «հայրենասերների» շահագրգռող հայցին, քան այդ պահին: Ռ. Պատկանյանի «ապերախտ» Եվրոպան արդեն զբաղվում էր հայոց գործերով, կենդանի հետաքրքրություն ցույց տալիս դեպի հայերի հավաքական զորությունը, նույնիսկ դեպի փոշիների տակ թաղված միջնադարյան հայ վանականների պոեզիան...Հիմք չկա՞ր ենթադրելու, որ ապահոված է արդեն Հայկական հարցի լուծումը՝ «ինքնավար Հայաստանի» կենսագործումը: «Ավելի խանդավառ ոգևորություն չէր առաջացրել երբեք այս հեռանկարը հայ ազգային կուսակցությունների արկածախնդիր ծրագրերում և գործողություններում: Ազգային միասնական ճակատ՝ Ամենայն հայոց կաթողիկոսից մինչև «Մշակ» թերթի գավառական թղթակիցը, դաշնակ-հնչակ «պանծալի» խմբապետներից մինչև մանր բուրժուա խոհեմ քաղքենին: «Կենդանի ուժերի» նման սրտառուչ ողջագուրանք չէր տեսել երբեք Հայաստան աշխարհը»[27]:

Նման կացության մեջ դաշնակցությունն առավել քան չէր կարող չեզոքության առաքյալ դառնալ, քանզի քառոյդ դար շալոնակ ապրել էր «Ավտոնոմ Հայաստանի» երազով, երազ, որ պիտի իրա-

[27] Նույն տեղում, էջ 7:

կանանաց եվրոպական վարչապետների, գեներալների, նախարարների և լրագրողների միջոցով: Դրական պատասխան տալ նման հարցին՝ նշանակում է անգիտանալ դաշնակցության ողջ մտայնությունը, արկածախնդրական իր անցյալի ողջ իմաստն ու արժեքը: «Ընձեռել» պատերազմը, կնշանակեր հրաժարվել քաղաքական գոյության իրավունքից: Դատապարտել պատերազմը կնշանակեր խորտակել «Հայաստանի ավտոնոմիան», բեկանել ազգային այն «դատը», որ պիտի վճռվեր եվրոպական տերությունների միջամտության հատու սրով: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, «Դաշնակցությունը չէր կարող ասել, որ ձեռնարկել էր հայկական շարժման ղեկավարությունը հանգամանքների ավելի նպաստավոր դասավորության հուսով և քաղաքական ավելի լավ հեռանկարներով, քան ինչ որ ստեղծվում էր շնորհիվ իմպերիալիստական պատերազմի»[28]: Եվ չնայած դրան՝ ոչ մի անգամ ավելի խորը չի եղել հայ ազգայնականների հուսախաբությունը և ավելի դաժան՝ ազգային ակնկալությունների դրական արդյունքը: Դյուրին չէ հաշվել մարդկային ու նյութական այն կորուստները, որ ունեցավ հայությունը պատերազմական տարիների ընթացքում: Դժվար՝ ընդգրկել այն տառապանքը, որ լեռնացավ Հայաստանի որբության և գաղթականության ժխորում, կոտորածների ու սովամահության այն դժնդակ տարիներին, երբ հայ մազապուրծ ապրողների բախտը շարունակվում էր դարբնվել կապիտալիստական արևմուտքի սանձարձակ դիվանագիտության և «ազգի նվիրյալների» միախառնման պղտոր ջրերում: «Անեծքի խոսքով է,- շարունակում է Աշ. Հովհաննիսյանը,- որ տոնում է այսօր Հայաստանի աշխատավոր ժողովուրդը պատերազմի արյունոտ հոբելյանը: Անեծք՝ պատերազմ նյութող բորենիներին, որ ավերածությունների, կողոպուտների, ջարդերի և կոտորածների ողջ դարձրին Հայաստան աշխարհը: Անեծք՝ սեփական ղեկավարներին՝ վեղարավոր և անվեղար առաջնորդներին, բուրժուական և քաղքենի կազմակերպություններին ամենից առաջ... Դաշնակցությանը, որ ջատագովեց... զոռբաների կռիվը՝ մղելով Հայաստանի աշխատավոր ժողովուրդը դե-

[28] Նույն տեղում:

պի... խոշտանգումն...»[29]: Իսկ ի՞նչ ժառանգեց դաշնակցությունը հայության մեծ զոհաբերությունների գնով՝ Սևրի և Լոզանի դաշնագրությունները (Աշ. Հովհաննիսյանը 1921 թ. մարտի 16-ի խորհրդաթուրքական հակահայկական պայմանագիրը դիտմամբ չի հիշատակում, որովհետև, տարաբախտաբար, ինքն էլ Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության ակամա պաշտպաններից էր՝ պետական-կուսակցական քաղաքականության մեջ առաջնորդվելով դեմոկրատական ցենտրալիզմի կարգախոսով): Գրքույկի հեղինակը կարևոր մեկնաբանություն է տալիս «հայկական ավտոնոմիայի» գաղափարի շրջանառման փուլերին: Հատկապես կարևորում է ցարական Ռուսաստանի դիվանագիտությունը, որ համաշխարհային պատերազմից առաջ, 1913–1914 թվականներին, առավելագույն նախաձեռնություն էր դրսևորում Հայաստանի «ինքնորոշման» հարցում, բնորոշ զգուշություն դրա նկատմամբ պատերազմի ժամանակ, երբ արդեն ինքնորոշումը կարող էր ոչ թե ընդարձակել, այլ, ընդհակառակը, սահմանափակել Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայում: Նեղ սահմաններում ինքնավար Հայաստանը, որպես պատվար Ռուսաստանի դեմ, կարող էր ավելի շուտ ձեռնտու լինել Անգլիային ու Ֆրանսիային: Այսպիսի կացության մեջ Հայաստանի ինքնավարությունը կարող էր ընդունելի լիներ Ռուսաստանին միայն այնպիսի սահմաններում, որ իր հերթին չեզոքացներ Ֆրանսիայի և Անգլիայի դիրքը Միջերկրականում, այսինքն՝ ինքնավար մի Հայաստան ծովից ծով: Սակայն սրանք դիվանագիտական բանաձևումներ էին, որ հակասական դրույթներ առաջացնելով՝ չեն ունեցել երբեք իրական կշիռ ու նշանակություն: Դրանք ձևակերպվել և իրական ուժ են ստացել միայն հայ ազգային կուսակցությունների առաջնորդների մտամարզանքներում:

Վավերական առաջին ցուցմունքն այդ մասին կարդում ենք այն հեռագրում, որ 1915 թ. մայիսի 4-ի ն ռուսական դեսպան Իզվոլսկին ուղղում է Փարիզից արտաքին գործերի նախարար Սազոնովին,

---

[29] Նույն տեղում, էջ 8.

որտեղ մասնավորապես ասված է, որ «Այստեղ ժամանած դոկտոր Զավրիևը (դաշնակցության միջազգային բանագնացը – Ն. Ս.) մի հուշագիր է ներկայացրել ինձ մեր արտաքին գործերի նախարարությունում իր ունեցած խոսակցությունների մասին: Հուշագրում ասված է, որ Ռուսաստանը մտադիր է առաջարկել պետություններին Թուրքիայի սուվերենիտետի և երեք պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանու ներքո ստեղծել Թուրքիայի սահմաններում ինքնավար Հայաստան: Հայաստանի տարածքը պետք է ընդգրկի ոչ միայն հայկական վիլայեթները, մի քանի ծայրամասերի բացառությամբ, այլև Կիլիկիան, Մերսինի նավահանգստով, բացառությամբ Ալեքսանդրետյան ծոցի և Յումուրթալիկի: Այնուհետև հուշագրում նշված է, որ թեև այդ ծրագիրը արդեն հավանություն է գտել մեր արտաքին գործերի նախարարության կողմից, որ խոստացել է նպաստել դրա իրագործմանն իր դեսպանների միջոցով Լոնդոնում և Փարիզում՝ Ֆրանսիայի և Անգլիայի կասկածանքներից խուսափելու համար, մանավանդ Կիլիկիայի հարցում. հայ պատվիրակները պիտի գործեն առանց ռուս դեսպանների տեսանելի միջամտության. վերջինս կարող է տեղի ունենալ միայն դժվարություններ ծագելու դեպքում, ինչպես նաև այն պարագային, եթե իրենք դեսպանները հնարավոր համարեն այդ»[30]:

Այնուհետև դեսպանը խնդրում է հաղորդել իրեն, իրո՞ք վերոհիշյալ ծրագիրը հավանության է արժանացել արտաքին գործերի նախարարի կողմից, և այնուհետև՝ ի՞նչ չափով ինքը պետք է աջակցություն ցույց տա դրան Փարիզում: Այդ հարցին Սազոնովը պատասխանում է. «Հայերի հետ տեղի ունեցած խոսակցությունները զուտ ակադեմիական բնույթ են կրել: Ոչ մի ծրագիր Զավրիևին որոշակի չի մատնանշվել: Նրա թախանձանքին՝ նկատի ունենալով հայերի բաղձանքները՝ մտցնել Կիլիկիան հայկական ապագա շրջանի մեջ՝ պատասխան է տվել, որ չենք կարող պաշտպանել այդ ցանկութ-

---

[30] "Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел" под. ред. Е. А. Адамова. Москва, 1924, стр. 135.

յունը, նկատի ունենալով ֆրանսիական շահերի գերակշռումը Կիլիկիայում»[31]:

Հայկական ծրագրերի ակադեմիական բնույթի մասին Սազոնովը հեռագրում է նաև Լոնդոնի ռուսական դեսպան Բենկենդորֆին: Ահա այսպես է ձևակերպվում հայկական «ինքնավարությունը» պատերազմի առաջին տարում: Սակայն եթե 1915 թ. Անտանտի դիվանագետները գեթ ակադեմիական ունկնդրության ժամեր էին շնորհում դաշնակցական բանագնացներին ազգային նրանց բաղձանքներին իրազեկ լինելու համար, ապա Թուրքիայում տեղի ունեցած հայերի աննախընթաց բնաջնջումից և զանգվածային արտագաղթից հետո, խուսափում էին նույնիսկ այդ կարգի զրույցներից: Էթնիկական կազմի հաշվեկշիռը արևմտահայ վիլայեթներում փոխվել էր հօգուտ թուրքերի: Նման կացությունից հետո անգլո-ֆրանսիական դիվանագիտությունն առաջարկում էր Թուրքիայի բաժանման մի ծրագիր, որտեղ այլևս ոչ մի ակնարկ չկար դաշնակցության ենթադրած «ինքնավար Հայաստանի» մասին: Առաջին աշխարհամարտի երկրորդ տարում, 1916 թ. մարտի 12-ին անգլիական կառավարության արտակարգ և լիազոր դեսպան Մարկ Սայքսը ներկայացնում է Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ համաձայնեցրած մի ծրագիր, որը լուսաբանում էր Անտանտի տեսակետը Հայկական հարցի մասին: Հայկական պետություն թուրքական սուվերենիտետի ներքո, գրում էր Սայքսը, կնշանակեր երրորդ մի Բուլղարիա, որ ինտրիգներ է սարքում Կովկասում, կամ անկենդան մի ծրագիր, քանի որ հայերն անկարող են մրցել քրդերի հետ: Հայկական մի կառավարություն միջազգային սուվերենիտետի ներքո՝ կլիներ ինտրիգների մի լայնարձակ դաշտ, որից վաղ թե ուշ շահել կարող էր միայն Գերմանիան: Ռուսաստանին հանձնել Հայաստանը՝ կնշանակեր մտցնել ռուսական քաղաքական համակարգի մեջ մի երկիր՝ լի հեղափոխական կազմակերպություններով, որոնք մշտական կապ են պահպանում Կովկասում և Պարսկաստանում գոյություն ունեցող համաներման կազմակեր-

[31] Նույն տեղում. էջ 139:

պությունների հետ: Այս հնարավորությունների հանդեպ Սայքսն առաջադրում է մի նոր ծրագիր՝ Հայաստանի բաժանումը Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև, ըստ որի Ռուսաստանին պիտի անցնեին Էրզրումը, Բիթլիսը և Վանը՝ գերազանցորեն քուրդ, ասորի և լազ բնակչությամբ:

Փոքր Հայքը, որպես Հայաստան, հայերի ազգային կենտրոն դառնալով, գրում էր Սայքսը, անցնելու էր Ֆրանսիային: Ռուսաստանին սա ծայր աստիճան շահեկան է: Ինչու՞ հարցին պատասխանում է՝ Փոքր Հայքի հայերն իրենց տրամադրությամբ կղերական են և պահպանողական, հակառակ կովկասյան և արևելյան հայերի, որոնք հակված են դեպի «անարխո-սոցիալիզմը», այսինքն՝ դաշնակցությունը: Եթե Էրզրումը հայերի ազգային կենտրոնը լինի՝ անարխո-սոցիալիստները իրենց ձեռքը կվերցնեն բովանդակ հայ քաղաքական մեխանիզմը և կամրացնեն այն: Փոքր Հայքը կապված չէ Կովկասի հայ արդյունաբերական շրջանների հետ, Կովկասի և Ատրպատականի անարխո-սոցիալիստների հետ ընդհանուր նա ոչինչ չունի և չպիտի ունենա: Ընդգրկելով Կիլիկյան թագավորության տիրապետությունները, խաչակրաց ժամանակի Եդեսիայի կոմսության շրջանները, գուցե նաև կովկասյան հեղափոխականների ազդեցությանը ենթակա Մուշի դաշտը՝ Փոքր Հայքը կկարողանա ելակետ դառնալ հայ պատմական ազգայնականությանը, որը մոռացել է արդեն Վանի և Էրզրումի երգերն ու ավանդությունները[32]:

Մ. Սայքսի այս բացատրությունը ասիական Թուրքիայի բաժանման ելակետ է դառնում: Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի բանակցությունները նրա այդ ծրագիրը հիմք ընդունելով հանգում են հետևյալ եզրակացության. Ռուսաստանը կգում է Էրզրումի և Վանի վիլայեթները, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթների արևելյան շրջանները և Քրդստանի մի մասը: Հարավային Միջագետքը, ընդգրկելով Բաղդադը, ինչպես նաև Բասրայի սանջակը անցնում է Մեծ Բրիտանիային: Ադանայի և Բեյրութի վիլայեթները, Հալեպի, Խարբերդի,

[32] Նույն տեղում, էջ 158–159:

Դիարբեքիրի վիլայեթների մի մասը, Դամասկոսի և Սվազի վիլայեթների որոշ մասերը և Ջեբել-Լիբանի սանջակը իրեն է կցում Ֆրանսիան: Աշ. Հովհաննիսյանը համաձայնության մյուս կետերին չի անդրադառնում, սակայն կարևորում է այն իրողությունը, որ ռուս դիվանագետներին զբաղեցնում էր առանձնապես Սինոպ նավահանգստի կցումը: Ռուսաստանի ծովային նախարարության մի հուշագիր, նշելով, որ այդ շրջանը ունի թուրք բնակչություն՝ հավելում է. «Թուրք բնակչությունից կարելի է ավելի լոյալ վերաբերմունք սպասել, քան, օրինակ, հայ բնակչությունից, որի երակներում հոսում է չափից դուրս անհանգիստ արյուն»[33]:

Քաղաքական նույն նկատառումները բնականաբար պիտի ազդեին նոր կցվող երկրամասերի վարչական խնդիրների կարգավորման վրա: Այս տեսակետից ևս Աշ. Հովհաննիսյանի ուշադրությունը գրավում է ռուսական դիվանագիտության քաղաքական կեցվածքը: Օրինակ, Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչին հղած մի նամակում, 1916 թ. հունիսի 14-ին, Սազոնովը գրում է. «Ինչ վերաբերում է հայկական լայն ինքնավարությանը, չպետք է մոռանալ, որ ներկայումս Ռուսաստանի կողմից նվաճված Մեծ Հայաստանում հայերը երբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ պատերազմի ժամանակ թուրքերի կողմից նրանց վերաբերմամբ գործադրած պատժական միջոցներից հետո, որ հայերի իսկ վկայությամբ սոսկալի չափեր են կրել, այդ փոխհարաբերությունը շրջվել է ավելի ևս ի վնաս հայերի, որոնք հիմա հազիվ նույնիսկ ազգաբնակչության մեկ չորրորդն են կազմում: Այս պայմաններում հայկական ինքնավարությունը կնշանակեր մեծամասնության անարդար հպատակացումն փոքրամասնության միջոցով»: Հաշվի առնելով, սակայն, և այն իրողությունը, որ Ռուսաստանին ձեռնտու չէ նաև մի Հայաստան, որտեղ հայ բնակչության ուշադրությունը կարող է ուղղված լինել դեպի սահմանի այն կողմը, Ռուսաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը եզրակացնում է. «Այսպիսով, հնարավոր պիտի նկատվի, որոշ շրջա-

[33] Նույն տեղում, էջ 176:

նակների մեջ, տալ հայերին դպրոցական և եկեղեցական ինքնուրույնություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, ինչպես նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն, ընտրությունների ժամանակ նկատի առնելով տոկոսային հարաբերությունները: Ոչ քրիստոնյա տարրերի նկատմամբ պիտի գործադրել նույն սկզբունքները, որչափ այդ կներեն պայմանները և նրանց մշակութային զարգացման աստիճանը»[34]: Պատասխանելով այս խորհրդատվական նամակին, փոխարքան պատասխանում է. «Շոշափելով, իհարկե, Ռուսաստանի իշխանության ներքո Հայաստանի ինքնավարության խնդիրը, այդպիսի խնդիր ամենայն հավանականությամբ դեռ չպիտի կյանքի կոչվի, և իմ կարծիքով, կարող էր միայն վտանգավոր բարդություն ստեղծել ներկա պատերազմի ընթացքում ծագած հարցերի խաղաղ լուծման համար: Ես լիովին համաձայն եմ ձեզ հետ, որ հարկավոր է և լիովին հնարավոր, տալ հայերին դպրոցական և եկեղեցական ինքնուրույնություն, եկեղեցական դրամագլուխների և գույքերի կառավարություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, սակայն բոլոր պաշտոնական դեպքերում ռուսական բարբառի առաջնության պայմանով...»[35]:

Դաշնակցությունը չի կարող առարկել, թե ինքը հնարավորություն չուներ կանխատեսելու ցարական դիվանագիտության այդպիսի վերջավորությունը: Դիվանագիտությունն ավարտում է պատերազմի սկսածը: Դաշնակցության համար պատերազմը աննպաստ ընթացք ստացավ առերևույթ միայն 1915 թ. ամռանը, երբ հայ կամավորական ջոկատների նկատմամբ փոխվեց վերաբերմունքը: Չմոռանանք, որ մինչ այդ էլ ցարական գեներալները ջանք էին գործադրում ռուսական գաղութ դարձնել Արևմտահայաստանի վիլայեթները:

1915 թ. ապրիլի 5-ի զեկուցագրում, Կովկասյան ճակատի հրամանատար Յուդենիչը առաջարկում էր փոխարքա Վորոնցով-Դաշկովին հայաբավված Ալաշկերտի և Դիադինի հովիտները լցնել Դոնի և Կուբանի կազակներով, որպեսզի այդ շրջանները նորից հայերի

---

[34] Նույն տեղում, էջ 209:
[35] Там же. стр. 216.

ձեռքը չանցցնեն: Այդ զեկուցագրին, որի վրա փոխարքայի ձեռքով վավերագրվել էր «հաստատում եմ», ժամանակին իրազեկ էր դարձել Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոն:

1915 թ. գարնանը, արևմտահայության Մեծ եղեռնի և մեծ գաղթի օրերին Յոտենիչը նախապայման էր ստեղծում ավելի լայն ծավալով իրագործելու իր առաջարկը: Դա բացահայտ է դառնում նույնիսկ հայ բուրժուազիայի որոշ շրջանների համար: Սակայն հայ «ազգանվիրյալների» քաղաքականությունը դուրս չեկավ և չէր էլ կարող դուրս գալ եվրոպական դիվանագիտության կախարդական շրջանագծից: Տակավին թվում էր, թե իմպերիալիստական Եվրոպան պիտի վճարեր ավերված Հայաստանի քաղաքական մուրհակները: Նահատակվածների ստվերը պիտի հարկադրեր «դաշնակիցներին» իրագործելու հայկական այն «ինքնավարությունը», որի շուրջ այնքան աղմկել էին նրանց դաշնակցական պարագլուխները[36]: «Հայաստանի ինքնավարության» խնդրին Աշոտ Հովհաննիսյանն անդրադարձել է նաև «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան (վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից)» ժողովածուի համար գրած առաջաբանում:

Այստեղ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարը գրում է, որ հայ գործիչները՝ սկսած կղերական և աշխարհիկ գործիչներից մինչև հնչակ և դաշնակ խմբավարները՝ ակնկալում էին Հայաստանի ազատությունը բացառապես պաշտոնական Եվրոպայից: Ազգի ազատության ուղիները նրանք կապում էին ոչ թե ժողովրդական զանգվածների միջազգային հեղափոխական պայքարի հետ, այլ միջազգային հեղափոխության դեմ պայքարող դասակարգերի «հայանպաստ ձեռնտվության», հայ ժողովրդի օգտին նրանց ձեռնարկելիք միջամտության հույսերի հետ:

Կացությունը չէր փոխվում նույնիսկ, երբ հայ ազգային ղեկավար գործիչները բախում էին եվրոպական սոցիալիստների դռները: Եվրոպական սոցիալիստները և հատկապես Եվրոպայի սոցիալիս-

---

[36] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 17-18:

տական մամուլը միջոց էին միայն բուրժուական Եվրոպայի հասարակական կարծիքի և պետությունների արևելյան քաղաքականության վրա ազդելու համար: Ահա թե ինչու արտահայտելով մասնավոր դրության իր բարյացկամ վերաբերմունքը դեպի Հայաստանի ազատագրության գաղափարը, Ֆր. Էնգելսը խուսափեց հրապարակային ելույթից ի նպաստ հայ ժողովրդի, որի վերաբերմամբ ռուսական ցարիզմը ազատագրողի դեր է ուզում կատարել և որի ազատագրության համար ասված ամեն մի համակրական խոսք ռուսական ստրկական մամուլն աշխատում է չահագործել ի օգուտ նվաճողական ցարիզմի[37]: Ֆր. Էնգելսը բացահայտ գրել է, որ իր անկեղծ կարծիքն այն է, որ Հայաստանի ազատագրություն թուրքերից և ռուսներից կարող է տեղի ունենալ միմիայն ռուսական ցարիզմի տապալման օրը: Համակիր վերաբերմունք արտահայտելով թուրքական բռնատիրության Սցիլլայի և ռուսական բռնակալության Խարիբդայի արանքում դեգերող հայ ժողովրդի ազգային ազատագրության գաղափարին, Ֆր. Էնգելսը, սակայն, միաժամանակ Հայաստանի ազատագրությունը շաղկապում է ցարիզմի տապալման, այսինքն՝ ռուսական հեղափոխության հաղթանակի հեռանկարի հետ: Էնգելսի տեսակետը հիմնարար էր և այն հասկացությունների ոչ մի շփոթ չէր առաջացնում: Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով լույս տեսած «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան» փաստաթղթերի ժողովածուում ամփոփված գաղտնի վավերագրերը, որոնք շոշափում են «Հայաստանի ավտոնոմիայի» խնդիրը, առնված են ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության հրատարակությունից, որ լույս է տեսել Մոսկվայում 1924 թ. «Ասիական Թուրքիայի բաժանումը» խորագրի ներքո[38]: Ժողովածուի վերջում զետեղված մի քանի հավելումներով ամփոփված են վավերագրերն ու ծանոթությունները, որ վերաբերում են Հայկական հարցին: Դրանք կարևոր են որպես պաշտոնական նյութեր, որ

---

[37] Տե՛ս Ֆր. Էնգելսի նամակը «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանության նախաբանի փոխարեն. «Նորք», գիրք 4, 1924, էջ 125-126:

[38] «Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел» под. ред. Е. А. Адамова, Москва, 1924.

լուսաբանում են պատերազմին մասնակցած դաշնակից տերությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի վերաբերմունքը դեպի «Հայաստանի ավտոնոմիայի» ծրագիրը, ինչպես նաև հատկապես այն տեսակետից, որ լուսաբանում են նույն խնդրի շուրջը Անտանտի պաշտոնական ներկայացուցիչների հետ դաշնակցության վարած բանակցությունները: Վավերագրերն ակնհայտ են դարձնում այն իրողությունը, որ «Հայաստանի ավտոնոմիայի» շուրջ տարված այս բանակցությունները լավագույն դեպքում «ակադեմիական» զրույցներից դենը չէին անցել և որ այդ զրույցների նյութն իսկ սպառվել էր արդեն 1915–1916 թթ. օսմանյան ամբողջ կայսրության տարածքում հայերի զանգվածային կոտորածների ընթացքում: Վավերագրերի մեջ կենտրոնական տեղ են գրավում «Արևելյան Թուրքիայի բաժանման» ծրագիրը, որը դաշնակից տերությունների միջև կայացած համաձայնության արդյունքում գալիս էր սառը ջուր լցնելու հայ «ազգանվիրյալների» վառ սպասումների վրա: Արևելյան Թուրքիայի բաժանման այդ ծրագիրը, ինչպես տեսանք նախորդ էջերում, նախապատրաստում էր կայսրության հյուսիս-արևելյան վիլայեթների կցումը Ռուսաստանին և հարավային ու հարավ-արևելյան վիլայեթների կցումն անգլիական ու ֆրանսիական տիրապետություններին: «Ավտոնոմիայի» փոխարեն Հայաստանի այն երկրամասում, որտեղ տարածելու էր իր իշխանությունը Ռուսաստանը՝ հնարավոր էր նկատվում «հայերին վերապահել որոշ շրջանակներում դպրոցական և եկեղեցական ինքնավարություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, այլև քաղաքային և գյուղական ինքնավարություն»[39]: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանին միակցվելիք երկրամասերում ցարական կառավարությունը պատվաստելու էր այն նույն իրավակարգը, ինչ գոյություն ուներ կայսրությունում: Եվ բնորոշ է, որ համաձայնություն հայտնելով արտաքին գործոց նախարար Սազոնովի կողմից մշակված հայկական «ինքնավարությունների» այս ծրագրին, Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչը հարում էր, որ ինքը ևս չի շոշափում

[39] «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան» վավերագրերի ժողովածու Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926, էջ 56:

«Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանին ավտոնոմիա տալու խնդիրը, մի խնդիր, որ ամենայն հավանականությամբ առ այժմ կյանքի չի կոչվելու դեռևս... լոկ կարող էր վտանգավոր կերպով բարձրացնել այն հարցերի խաղաղ լուծումը, որոնք ծագել են ներկա պատերազմի ժամանակ»[40]:

Ֆրանսիային կցվելիք հայկական երկրամասերը դառնալու էին «հայ ազգային զգացումների կենտրոն»՝ հակադրվելով ռուսական Հայաստանին, որտեղ հայ բնակչության երակներում «հատկապես անհանգիստ արյուն է հոսում»[41]: Այդ առթիվ հիշենք Արևելյան Թուրքիայի բաժանման Մարկ Սայքսի հուշագրի տողերը. «...ֆրանսիական զոնան կդառնա հայ ազգային զգացումների կենտրոն: Այս չափազանց ձեռնտու կլինի Ռուսաստանին, որովհետև Փոքր Հայաստանի հայերը կղերական և պահպանողական տրամադրություններով են տոգորված՝ հակառակ կովկասահայերի և արևելահայերի, որոնք անարխո-սոցիալիստներ են: Եթե հայերի ազգային զգացման կիզակենտրոնը Էրզերումը լիներ, ապա անարխո-սոցիալիստներն իրենց ձեռքը կառնեին հայ ամբողջ քաղաքական մեխանիզմը և կամրապնդեին վերջինս: Իսկ այս դրության ժամանակ չափավոր տարրերն իրենց կենքարկեն հայոց ազգային ձգտումները ֆրանսիական հովանու ներքո, որ կբխե Փոքր Հայաստանից»[42]: Այս և հարակից վավերագրերի քննությանը Աշոտ Հովհաննիսյանն անդրադարձել է 1924 թ. հրատարակված «Դաշնակցությունը և պատերազմը» գրքույկում: Այստեղ պարզապես մի անգամ ևս ցանկացել է ընդգծել, որ Հայկական հարցի լուծումը Եվրոպայի միջամտությամբ նշանակում էր Հայաստանի նվաճում իմպերիալիստական բուրժուազիայի ձեռքով և Հայաստանի հեղափոխական իրաղրության հաղթահարում տնաբույս և եկվոր բուրժուազիայի համագործակցությամբ:

Ի՞նչ էր անում դաշնակցությունը Հայաստանի Հանրապետությունում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո: «Դաշնակցութ-

---

[40] Նույն տեղում, էջ 57:
[41] Նույն տեղում, էջ 43:
[42] Նույն տեղում, էջ 28:

յան իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» հոդվածում Աշ. Հովհաննիսյանը նախ ընդգծում է, որ խորհրդային կարգերի հաղթանակի նախօրյակին և ընթացքում դաշնակցության կրած պարտությունն ամենավճռականն էր այն պարտությունների շարքում, որ նա կրել է երբևէ իր գոյության ընթացքում: Հայկական բնաշխարհում ժողովրդական զանգվածները երես են դարձրել նրանից: Գաղթավայրերում ևս դրա դիրքերը խախտվել են: Նրա շարքերում ընթանում է քայքայում և լքում: Դաշնակցության առաջնորդներին հաճախ զբաղեցնում է հին մեղքերի հաշվեհարդարը: Անջատողական շարժումը Ամերիկայի ու Պարսկաստանի մեջ զգալի հարված հասցրեց դաշնակցությանը: Արդ՝ այդ կուսակցության գալիքը պարուրված է ակնհայտ հակամարտ հեռանկարների մեջ: Քաղաքական պառակտման մեջ գալարվող դաշնակցական նոսրացված շարքերում սաղմնավորվում է կազմակերպական քարոզչական որոշ աշխատանք: Երևելի դաշնակցական գործիչներից ոմանք տակավին թևաթափ չեն եղել: Նրանք առաջադիր նպատակ ունեն ուշքի բերել դեպքերի ազդեցությունից շշմած հետևորդներին, վերականգնել կամ կարգավորել կուսակցության կաղրերը: Կուսակցական գիտակցության կանչել բոլոր նրանց, ովքեր հոգեբանական ինքնահոսով շարունակում են մնալ հին դիրքերում, բայց նոր պայմաններում չգիտեն ուր են գնում: Հարկավոր է իմաստավորել կուսակցության գոյությունը՝ ի՞նչ էր նա կամ ի՞նչ է կամենում լինել: Ահա խնդիրներ, գրում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարը, որոնք դրված են դաշնակցության այն ղեկավարների առաջ, որոնց դեռ չի համակել կուսակցության ներքին տարերային ինքնաոչնչացման խուճապը: «Ամենուրեք կտիրե տարակուսանք, նահանջի, ժխտումի տարտամ մտայնություն, քննադատության բուռն պահանջ»,- այսպես է բնորոշում դաշնակցություն կուսակցության մեջ «վերականգնողական շարժումը» ԱՄՆում հրատարակվող «Հայրենիք» դաշնակցական ամսագիրը: Վերջինս շատ պարզորոշ գրում է. «Քաղաքական կյանքի ամենեն աջ տարրերն սկսած մինչև ամենեն ձախերը և ծայրահեղերը հրապարակ կիանեն անելւկբայելի ձգտում մը ավելի վերապահ ու քննական

վերաբերում մը ցույց տալու հանդեպ հասարակական այն գաղափարներուն, որոնք տասնյակ տարիներ գրած են առաջավոր և պայքարող հայության միտքն ու զգացումները»[43]:

Չպետք է առարկել հարկավ, որ անցյալի «վերագնահատումները» 1920-ական թվականների սկզբներին տեսանելի տեղ էին բռնում «առաջավոր և պայքարող հայության», այսինքն՝ դաշնակցության տրամադրություններին թարգման հանդիսացող մտավորականության շրջանում: Դաշնակցության մտքի խոպան դաշտում նույն 1920-ական թվականների առաջին տարիներին բացառիկ փարթամությամբ ծաղկում էր հուշագրական գրականությունը: Տեղի էին ունենում բանավեճեր ծրագրային և մարտավարական խնդիրների շուրջը: Փորձ էր արվում գաղափարական ամուր հեռանկարներ ստեղծել ապագա գործունեության համար: Ընդհանուր նահանջի ճանապարհին ուժերի կուտակման ճիգեր էին սրանք: Նահանջին վերջ տալու համար կար ձգտում, շոշափել հակառակորդի առաջապահ դիրքերը, զինադադարի միջոց խնդրել նրանից: Հակահարձակման ձեռնարկները գծվում են միայն ղեկավար գլուխներում՝ գործնականում շատ հեռու հետևորդ շարքերից: Խորհրդային նորահայտ կարգերի դեմ ձեռնարկվող միջոցառումները գրչի տարտամ վարժություններ էին, որոնց ներքին շարժառիթը պայքարի մղումը չէր տակավին, այլ ինքնապաշտպանության բնազդը: Նման կարգի իրատեսական գնահատական տալով դաշնակցական կուսակցության կացությանը, պաշտոնապես հայտարարելով, որ «Անմիջական վտանգ դաշնակցությունից չի սպառնում մեզ, այդ վեր է կասկածից», սակայն Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարը, այնուամենայնիվ դափնիների վրա քնելու կոչ չի անում իր կուսակցությանը, քանզի, ըստ նրա, «միամտություն կլիներ կարծել, թե երգված է իսպառ իր երգը, թե անելու այլևս ոչինչ չունի նա, թե կրած պարտությունից հետո պայքարն սպառված պիտի համարել առմիշտ: Ինչքան էլ սնամեջ լինի դաշնակցական թեորիան և խայտաբ-

[43] «Հայրենիք», 1922, N 1, էջ 60:

ղետ իր պրակտիկան, ինչքան էլ զգալի չլինի իր անկումը և խոր իր լքումը, դաշնակցությունը կարող է վերագրավել գործողության նոր հենակետեր: Պոկ գալով սոցիալական հարազատ զանգվածից՝ դաշնակցության քաղաքական նավը, հողմահար և հողմավար, հածում է հիմա պատմական ահավոր ալիքների վրա: Բայց կարող է փոխվել քամիների ընթացքը, հին նավը կարող է մտնել բանուկ հունի մեջ: Հարազատ անկախությունն ու օտար ուժերի աննպաստ դասավորությունը հարկադրեցին Հայաստանի քաղքենուն կապել իր բախտը պրոլետարական հեղափոխության հետ: Սակայն պրոլետարական հեղափոխության համաշխարհային կռիվը բուրժուական հակահեղափոխության դեմ դեռ չի ավարտված: Հեղափոխությունը հաղթանակ է միայն վերջին հաշվով: Պայքարի ընթացքում հնարավոր է նահանջ, հնարավոր է ուժերի նոր դասավորություն: Նշանակում է հնարավոր է նաև քաղքենու նոր դիմադրությունը: Նա դավաճանեց բուրժուազիային, կարող է դավաճանել պրոլետարիատին: Հեղաշրջված իր «օրիենտացիան» փարոս կարող է վառել հեղափոխական այն հուսակայանի վրա, որտեղ դաշնակցության հածող նավը քաղաքական խարիսխ ձգելու հնար չի ունենա»[44]:

Իր այս հրապարակախոսական ծրագրային հոդվածում Աշ. Հովհաննիսյանը առավել քան կարևորում է, թե բավական չէ արձանագրել թշնամու խուճապը, անհրաժեշտ է կանխել նրա ուժերի հավաքումը, քանի դեռ չի հեղաշրջված առմիշտ սոցիալական այն շերտի զարգացման ընթացքը, որից նա իր մարտական եռանդն էր քաղում: Պետք է հակառակորդի ոտքի տակից լիովին հանել այն հենահողը, որի վրա նա կանգնած էր և հույս ունի նորից կանգնել: Հարկավոր է, որ հաղթողի քաղաքական մտքի լուսարձակը հետապնդի դաշնակցության գաղափարաբանության մրրկահար թափառումները և կռվի իր բանակն ունենա խաղաղության և ստեղծագործության այն օթևանում, որտեղ պարտված հակառակորդը պատերազմի և ավերածության նորանոր հենակետեր է փնտրում:

---

[44] Հովհաննիսյան Աշ., Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք», 1923, գիրք 3, էջ 162-163:

Իմպերիալիստական պատերազմի ընթացքում փաստորեն ջուրն ընկավ քառորդ դար շարունակ Թուրքահայաստանում դաշնակցության թափած աշխատանքը: Քառորդ դար փայփայած գաղափարական և գործնական իր համակարգի սնանկությունն ակնբախ դարձավ ջարդի ահավոր 1915-1917 թվականներին: Թուրքահայության ոչնչացումը հայտնի չափով քաղաքական պարտություն էր դաշնակցության համար, սակայն դրանից նա մահացու հարված չստացավ: Թուրքահայ վերապրող մանր բուրժուազիան ի վերջո հրաժարվեց ազգային երազանքից ու բռնեց տիրողների հանդեպ հաշտվելու ուղին: Իրագործվեց այս առումով այն, ինչ հրահանգում էր սկզբից ևեթ բուրժուազիան՝ համակերպում և հավատարմություն թուրքական պետականության նկատմամբ: Դաշնակցությունը պատմականորեն ճանապարհ էր հարթել բուրժուական այդ մտայնության հաղթանակի առաջ:

Ինչ մարտավարություն ընտրեց դաշնակցությունը Հայաստանի Հանրապետությունում խորհրդային վարչակարգ հաստատվելուց հետո: Դաշնակցությունն ակամա ստիպված էր ընդունել, որ Անդրկովկասի բանվորա-գյուղացիական իշխանությունը հաստատեց խաղաղություն, վերացրեց ազգայնական կատաղի գժտությունները, լուծեց հողային հարցը, լայն հորիզոններ բացեց երկրի տնտեսական ու մշակութային զարգացման առաջ: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, «Անդրկովկասի խորհրդային իշխանությունը նվաճել է քաղքենի մասսաների և հարևան երկրների համակրանքը, համագործակցության կամուրջ ձգել Խորհրդային Ռուսաստանի և հեղափոխական Արևելքի միջև: Այսօր Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդների կամքը չի բռնաբարում նվաճողի բանակը, նրանց ճակատագրի հետ չի խաղում իմպերիալիստական դիվանագիտությունը: Այսօր աշխատավոր մասսաներն ազատ են օտար և հարազատ ճնշիչներից: Անկախ իրենց ներքին բախտը տնօրինելու գործում՝ նրանք ծավալում են հեղափոխական մի աշխատանք, որ միասնական Խորհրդային Ֆեդերացիայի շրջանակներում ամուր պատվանդան պիտի դառնա

պրոլետարիատի ազատագրման համաշխարհային պայքարի մեջ»[45]:

Չբավարարվելով համաշխարհային հեղափոխության հաղթանակին նպաստելու ջանքերի գործադրման հայ բոլշևիկների շարունակվող մերկ քարոզչության թմկահարմամբ, Աշ. Հովհաննիսյանը շարունակում է. «Փետրվարյան հակահեղափոխության և Լեռնահայաստանի ավանտյուրայի լիկվիդացիայից հետո դաշնակցության համար ավելի քան պարզ էր, որ ռեստավրացիայի ամեն մի ձեռնարկ պիտի ջախջախվի Հայաստանում, եթե չունենա իր հետևը Կովկասում գործող հակահեղափոխական ուժերի օժանդակությունը: Ավելին, հակահեղափոխությունը կարող է հաղթող լինել, եթե քաղաքական ապահով հենակետեր ունենա Կովկասի սահմաններից դուրս, և ամենից առաջ Տաճկաստանում»[46],- գիտական պատմականությունից բոլշևիկյան քարոզչության պարտադրանքով շեղված իր միտքն այսպես է ընդհանրացնում Աշ. Հովհաննիսյանը:

Ի հաստատումն իր տեսակետի, Աշ. Հովհաննիսյանը մեջբերումներ է կատարում Ս. Վրացյանի 1921 թ. մի հրապարակումից: «Մենք աշխատում ենք մեր պայքարը հանել հայկական շրջանակներից և դարձնել համակովկասյան: Մենք ձգտում ենք համերաշխություն առաջ բերել Կովկասյան ժողովուրդների միջև և հաշտվել տաճիկների հետ: Սա մեր քաղաքական անկյունաքարն է... մենք որոնում ենք իրական հնարավորություններ հայ-տաճկական սահմանը փոխադարձ համաձայնությամբ գծելու և Տաճկաստանի և Հայաստանի միջև նորմալ միջպետական հարաբերություններ հաստատելու: Այս խնդրում խոսքը Տաճկաստանին է պատկանում»[47],- 1921 թ. Փետրվարյան խռովությունից հետո հայտարարել է Ս. Վրացյանը: Այս հայտարարությունից գրեթե մեկ շաբաթ անց, հուլիսի 14-ին, Փարիզում, կովկասյան տապալված կառավարությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Դաղստանի վտարանդի ներկայացու-

---

[45] Հովհաննիսյան Աշ., նշվ. հոդվածը, էջ 167:
[46] Նույն տեղում:
[47] «Այգ», Թաւրիզ, 1921, N 33-34:

ցիչները կնքում են հակահեղափոխական ուժերի համագործակցության դաշինք: Դաշնակցականները միաժամանակ շարունակում էին իրենց զիջումները քեմալականներին՝ բոլշևիկների դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու առաջարկներով:

1920-ական թվականների սկզբին իշխող այն համոզմունքը, որ խորհրդային իշխանությունն Անդրկովկասում և ազգային հեղափոխական շարժումը Թուրքիայում շարունակում էին արդիական փաստ մնալ, ստիպում էին դաշնակցության վտարանդի գործիչներին մշակել հերթական գործունեության ծրագիր: «Ինչքան էլ նշանակալի լինի փետրվարի 18-ի արդյունքը,- շարունակում է Վրացյանը,- որքան էլ անխուսափելի ու անհրաժեշտ համարենք այդ շարժումը, չի կարելի ժխտել, որ նա էպիզոդիկ բնույթ ունի և չի կազմում օրգանական մասը քաղաքական դեպքերի շարունակության»[48]: Փետրվարյան շարժման պատճառը Վրացյանը հիմնավորում էր բոլշևիկյան վայրագություններով: «Այդ վայրագությունների վերացումով վերացվեցին և շարժման անմիջական պատճառները, ուրեմն վերացվեց և կռվի շարունակության անհրաժեշտությունը: Մենք շատ լավ տեսնում ենք,- շարունակում է Վրացյանը,- թե ներկայումս մեր ժողովրդին ամենից ավելի ինչ է հարկավոր, նրան հարկավոր է հանգիստ և տնտեսական բարելավում: Եթե այժմվա բոլշևիկները կարողանան գեթ նվազագույն չափով գոհացնել ժողովրդին, մենք ոչ միայն խոչընդոտ չենք լինի, այլև ամենաանկեղծ կերպով կթելադրենք մեր երկրի ընկերներին օգնել նրանց և արտասահմանում էլ արգելքներ չենք հարուցանի»[49]: Դաշնակցությունն, ինչ խոսք, գաղափարապես նահանջել անկարող էր, բայց նրա փաստական նահանջը միջազգային սվինավորված հեղափոխության առաջ դուրս էր կասկածից: Վրացյանն իզուր չէր կրկնում լավ սերտած այն ճշմարտությունը, թե Հայաստանի բոլշևիկներից ազատագրվելը ներքին հայկական խնդիր չէ, այլ համակովկասյան կամ ընդհանուր ռուսական մի խնդիր է, իսկ մինչ այդ՝ Հայաստանը պետք է ազատ պահել ներքին ցնցումներից ու քա-

---

[48] Նույն տեղում, էջ 50-51:
[49] Նույն տեղում:

ղաքացիական կռիվներից: Որովհետև, ըստ նրա, ինչ որ այսօր բոլշևիկների օրոք շինվի Հայաստանում, վաղը պիտանի պիտի լինի մեզ համար:

Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ մարտավարական մի ամբողջ ծրագիր է թաքնված Վրացյանի տողերի մեջ, տողեր, որ դիվանագիտական նահանջ չէ լոկ քաղաքական անդորրության ծարավի հայ մանր բուրժուազիայի առաջ, այլ քաղաքական մի ծրագիր է, որը նպատակ ունի կուտակել մանր բուրժուազիայի մարտական եռանդը՝ սոցիալական գալիք ցնցումների համար[50]: Դաշնակցության կարծիքով՝ Խորհրդային Հայաստանում մանր բուրժուազիայի տնտեսական ուռճացումը ծայր կարող էր տալ իր սոցիալական տրանֆորմացիային ու քաղաքական դիմադարձությանը կոմունիստներից դեպի դաշնակցությունը: Հենց այս մտայնությունն էր թաղված Վրացյանի վերը նշված տողերի մեջ: Եվ այս մտայնությունն է, որ թարգման դառնալով այսպես կոչված խորհրդահայ մանր բուրժուազիայի տակավին չձևավորված տրամադրություններին, կազմում էր դաշնակցության ընթացիկ մտայնության և դրանից բխող մարտավարության հիմքը: Այդ մտայնությունը բնորոշ ձևակերպություն է գտնում Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու 1922 թ. մայիս-հունիսին Կ. Պոլսի «Ճակատամարտ» լրագրում հրատարակած «Ի՞նչ պետք է ըլլա մեր ուղին» հոդվածաշարում: Ո՞րն էր երկար այդ հոդվածաշարի կարճ միտքը: Ըստ հոդվածագրի, Հայաստանը տնտեսապես վերաշինելու, ուրեմն և պետական կյանքը ապահովելու միակ միջոցը և ճանապարհը անհատական տնտեսության վերականգնումն ու բարգավաճումն է: Անհատական տնտեսությունը պահանջում է մասնավոր կապիտալի անձեռնմխելիություն, իսկ մեր ձախողդ պայմաններում ոչ միայն նախաձեռնություն, այլ նաև խրախուսանք ու պետական պաշտպանություն: Երկրում կապիտալ չկա, այն պետք է ներմուծվի դրսից: Իսկ դրսում կապիտալը գտնվում է դրամատերերի ձեռքին, անբաժան է նրանից: Հետևա-

[50] Տես Հովհաննիսյան Աշ., նշվ. հոդվածը, էջ 168-169:

պես կապիտալն այսօր կարելի է ներմուծել միայն կապիտալիստի և կապիտալիզմի հետ միասին, ուրիշ ճանապարհ չկա: Անհատական տնտեսության իշխող տիպը Հայաստանում մանր տնտեսությունն է: Ուրեմն Հովի. Քաջազնունու ծրագիրը հետևյալն է՝ մանր սեփականության վերականգնումն ու զարգացումը, նրա կապիտալիզացիան, արտասահմանյան կապիտալի ներմուծումը և ի վերջո կապիտալիզմի ռեստավրացիան: Հովի. Քաջազնունին գծում էր այդ ծրագիրը՝ նպատակ ունենալով որոշել իր կուսակցության պլատֆորմը Խորհրդային Հայաստանի սահմաններում: Քանի որ նա ոչ միայն հնարավոր էր համարում «աշխատակցել» կոմունիստներին, այլև նկատի ուներ նրանց դեմ «օրինական ընդդիմադիր ուժ» կազմելու հնարավորությունը: Այդ տեսակետից, ըստ նրա, դաշնակցության խոսքը պետք է լինի շատ որոշ և դյուրին ըմբռնելի՝ պարփակված շատ պարզ պահանջների մեջ, այնպիսի պահանջների, որ անմիջապես բխում են այսօրվա կացությունից և պետք է ու կարող է իրագործվել հենց վաղվանից: Ուրեմն տեղին է ենթադրել, որ Հովի. Քաջազնունու այս ծրագիրը ինքնին չէր ենթադրում դուրս գալ նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) շրջանակներից, որ նպատակ ունի՝ ա) Պետական կապիտալիզմի հունի մեջ դնել մանրապրանքային արտադրությունն ու մասնավոր կապիտալիզմը և բ) ենթարկել մասնատիրական և կապիտալիստական բոլոր ձեռնարկությունները խորհրդային իշխանության գերագույն հսկողությանը: Թվում է թե վատ կոմպրոմիս չէ: Սակայն չմոռանանք, որ Հովի. Քաջազնունին ճանաչում է միայն մի վճռական տնտեսական կատեգորիա՝ մասնավոր կապիտալը, որը պետք է մնա անձեռնմխելի, և որի նկատմամբ Հայաստանի բանվորա-գյուղացիական պետությունը ղեկավարողի դերում չպետք է լինի, այլ սպասավորի: Այլ խոսքով՝ խորհրդային իշխանությանն այած «աշխատակցելու» կամ «օրինավոր ընդդիմադիր ուժ» կազմելու պատվի համար Քաջազնունին պահանջում է փոխել այդ իշխանության դասակարգային բովանդակությունը՝ դարձնելով

այն փարթամացած խանութպանների, գյուղական հարուստների և դրսի կապիտալիստների հանճնակատար:

«Քաջազնունու հոդվածաշարը նպատակ ուներ,- շատ դիպուկ նկատում է Աշ. Հովհաննիսյանը,- գաղափարական պարզություն մտցնել դաշնակցության մտքի ընդհանուր շփոթի մեջ: Եվ, իրոք ան-գործության մատնված կուսակցական մտավորականության համար այդ հոդվածաշարը գալիս էր հարդարելու քաղաքական նոր հորի-զոններ: Պոլսում, Ալեքսանդրիայում, Փարիզում և Նյու-Յորքում ռամ-կավար բուրժուազիայի օրգանները գովեստի խոսքեր են ուղղում «նոր ճանապարհներ» հարթող «անդրանիկ վարչապետի» հայտա-րարության առթիվ[51]: «Միացյալ և անկախ Հայաստանի պահանջը այսուհետև ևս կմնա ղեկավար սկզբունք Հ.Հ.Դաշնակցության քաղա-քական գործունեության»,- այսպես է հայտարարում Վիեննայում կայացած խորհրդաժողովի պաշտոնական շրջաբերականը»[52]:

Ինչպես էին սակայն դասավորված իշխող քաղաքական ուժե-րը դաշնակցությունը ղեկավարող գերագույն քաղաքական այդ սկզբունքի կենսագործման համար: «Մեր հարցով,- պատասխանում է «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Դարբինյանի առաջնոր-դողը,- այսօր դժբախտաբար շահագրգռված են միայն մեր ազգային գոյության թշնամիները՝ Թուրքիան և Խորհրդային Ռուսիան, որոնք սակայն ոչ մեկ միջոցի առջև կուզեն կանգ առնել վերջնականապես թաղելու համար հայկական անկախ պետության խնդիրը»[53]:

«Մի բան սակայն պարզ է,- շարունակում է նույն ամսագրի մեկ այլ առաջնորդող,- որ մեր ժողովրդի այս տաժանելի վիճակը պիտի շարունակվի, մինչև որ փոփոխություններ տեղի կունենան մեր հայ-րենիքը նվաճած երկու պետությանց՝ Ռուսիո և Թուրքիո մեջ և կամ դրամատիրական մեծ երկրներու փոխհարաբերությանց մեջ: Այդ փոփոխությանց շարքին անտարակույս առաջին տեղը կբռնե ռուսա-

[51] Նույն տեղում, էջ 172:
[52] «Նոր Արշալույս», Պուրքրեշ, 1923, N 27:
[53] «Հայրենիք» ամսագիր, 1923, N 3, էջ 4:

կան բոլշևիզմի խորտակումը, որ անխուսափելի է դարձած ու միայն ժամանակի հարց է…

Մերձավոր Արևելքի խաղաղությունն ալ կրնա հաստատվիլ միմիայն օրինական ռուս կառավարության գործոն մասնակցությամբ»[54]: Այս դեպքում ի՞նչ պետք է լինի Դաշնակցության «իրատես» քաղաքականությունը՝ «ղեկավար սկզբունքի» վերջնական հաղթանակն ապահովելու համար: Դաշնակցությունը գիտակցում է արդեն «պիվանագիտական կանաչ սեղաններու շուրջ չէ, որ պիտի լուծվի արյունոտ դատը, այլ բովանդակ հայ ժողովուրդի կազմակերպված ու զինված պայքարով»[55]: «Այդ պատճառով ալ, մեր ամբողջ եռանդը, մեր բոլոր նյութական միջոցները, մեր բոլոր ընդունակությունները և ուժերը այսուհետև ի սպաս դնելու ենք հայության ուժի կազմակերպման գործին»[56]: Այդ ուժը պիտի կազմակերպվի ամենուր, երկրում և գաղթավայրերում, և հայկական մասշտաբով չէ, որ պիտի ամրացվեն այդ ուժի հենակետերը, այլ կովկասյան, գուցե և արևելյան: «Թե՛ Ռուսաստանը և թե՛ Տաճկաստանը,- նույն ամսագրի երրորդ համարում գրում է Վրացյանը,- կովկասյան ժողովուրդների համար օտար ուժեր են և իբրև այդպիսին էլ պետք է մնան: Եթե մենք անկեղծորեն ներշնչվենք այս գաղափարով, ավելի հեշտ պիտի լինի մեր հարևանների հետ ընդհանուր լեզու գտնել»[57]:

Կովկասյան ժողովուրդներին փրկարար այս գիտակցությանը բերելու համար չէ՞ արդյոք, որ Վրացյանը ստիպված էր խոստովանել, որ ծովից-ծով Հայաստանի մասին ժամանակին իրենց պահանջն առնվազն տղայամտություն էր, կամ որ Հայաստանի և Ադրբեջանի միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու կարիքն այնքան կարևոր էր Հայաստանի համար, որ ավելի իմաստուն կլիներ, եթե Ղարաբաղի հարցում «որոշ չափով լինեինք վերա-

---

[54] Նույն տեղում, N 6, էջ 1:
[55] Նույն տեղում, էջ 4:
[56] Նույն տեղում, N 5, էջ 3:
[57] Նույն տեղում, N 3, էջ 48:

պահ»[58]: 1923 թ. դաշնակցության ռազմավարությունը բացահայտ էր ու պարզ՝ ընդհանուր հակահեղափոխական ճակատ հեղափոխության ընդհանուր ճակատի դեմ: Վերջինիս պառակտման դեպքում՝ թուրք-կովկասյան միացյալ բանակի գլուխ՝ նահանջող ռուս-կովկասյան բանակի վրա: Հաղթության պարագայում «Միացյալ և անկախ Հայաստանի» իրագործումն՝ «օրինական ռուս կառավարության», ասել է թե՝ սպիտակգվարդիական Ռուսաստանի գործուն մասնակցությամբ:

Ավետիս Ահարոնյանի կողմից Փարիզում հրատարակվող «Հայաստանի ձայն» շաբաթաթերթում 1922 թ. հոկտեմբերին տպագրվում է ռուսական կադետների պարագլուխ Պավել Միլյուկովի հայտարարությունը «Հայկական Հարցի» մասին:

«Մենք կարծում ենք,- հայտարարում է կադետական կուսակցության վտարանդի ղեկավարը,- որ Հայկական հարցը ևս կարիք կլինի լուծել Ռուսաստանի հետ միասին, իսկ մինչ այդ պիտի աշխատել պահպանել ժողովուրդը...Ինչպես կդասավորվեն Ռուսաստանի և հայ ժողովրդի փոխհարաբերությունները: Ես կարծում եմ, որ դա բավական հեռավոր մի հարց է: Առանց իսկական Ռուսաստանի, ինչպես ասացի, այդ հարցը չի կարող լուծվել»[59]: «Հայրենիք» ամսագիրը պնդում էր, որ ռուս-թուրքական հնարավոր բախման պարագայում «ոչ միայն պիտի կարողանանք, այլև պիտի պարտավորվինք Թուրքիո բարեկամ և Ռուսիո թշնամի դառնալ»: Դաշնակցության ռազմավարությունը գծում էր քաղաքական այն ընդհանուր ծրագիրը, որ պիտի գործադրեր վերջնական նպատակը կենսագործելու համար: Իր ընթացիկ մարտավարությունը սակայն հաշվի էր առնում բացառապես Մերձավոր Արևելքում իշխող այն ուժերի հարաբերությունը, որոնց գերազանցող ազդեցության շնորհիվ գործող քաղաքականության շրջանակից վտարվում էր Սևրի դաշնագրով սրբագործված «Միացյալ և անկախ Հայաստանի» բանաձևը: Մարտական ընդհանուր ծրագիրն այդ պատճառով ոչ միայն հանդուրժում էր, այլև թե-

---

[58] Նույն տեղում, N 1, էջ 53:
[59] Նույն տեղում, 1923, N 6, էջ 2:

լաղրում էր դաշնակցությանը «լոյալ ընդդիմադիր դերի» մեջ մնալ առայժմ ոչ միայն քեմալական Թուրքիայի, այլև Խորհրդային Ֆեդերացիայի սահմաններում: Կարծում ենք, որ չափազանց խիստ քարոզչական էր Ռուբեն Դարբինյանին հասցեագրված Աշ. Հովհաննիսյանի ներքոհիշյալ ձևակերպումը. «Դաշնակցության քաղաքական հակումն այսօր «Հայաստան ստեղծող» Անտանտի և ամենից առաջ Անգլիայի կողմն է, այն Անգլիայի, որտեղ ամեն ինչ հրապուրիչ է, անգամ...«ընկերավորները»: Ֆաբիանական շարժման մասին հիացմունքի խոսք է գտնում այսօր անգամ Դարբինյանը»[60]:

Նախորդ էջերում նշել ենք, որ Աշ. Հովհաննիսյանը առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ խորհրդային կարգերի հաստատման պատմությունը գիտական հենքի վրա շարադրելուն: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Հայաստանի խորհրդայնացման պատմությունն անշեղ շարադրելու համար հարկավոր է քննական հայացքի տակ առնել հասարակական-քաղաքական զարգացման նախընթաց իրադարձությունները, քանզի «Նոյեմբերյան հեղափոխությունը»,- 1923 թ. «Նորք» հանդեսի երկրորդ գրքում գրում է հեղինակը,- նոր Հայաստանի կազմավորման վերջին գործողությունը չէր միայն, այլ հնի կազմալուծման վերջին արարը»: Այնուհետև Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ խեղդելով Մայիսյան ապստամբության «...տարերային պոռթկումը՝ դաշնակցական ռեակցիան ճանապարհ հարթեց յուրահատուկ կոռնուլովշչինայի՝ քեմալական արշավանքի համար: Ռազմական պարտությունը ցուցադրեց խմբապետական ռեժիմի սնանկությունը. Ղարսը դարձավ բանվորա-գյուղացիական դիկտատուրայի նախադուռ...»:

Քարդ ու զարտուղի գործողություններով՝ Հայաստանի հեղափոխությունն ունեցել է նահանջներ և հարձակումներ, տվել է դավաճաններ և հայտաբերել հերոսներ, կրել է պարտություններ, տարել հաղթանակներ: Փաստեր և երևույթներ են սրանք, որ պատմագրողի վերագնահատող մտքին են սպասում: Սակայն պատմական արձա-

---

[60] Հովհաննիսյան Աշ., նշվ. հոդվածը, «Հայրենիք», 1923, գիրք 3, էջ 181:

նագրությունների երեսից դեռ չի իջել հեղինակների բեմական շպարը: Չափազանց թարմ են դեռ անցքերի անմիջական տպավորությունները և տակավին հեռու դատաստանի վերջին օրը: Անհրաժեշտ է վերականգնել պատմական ռեպլիկների անխարդախ բնագիրը, հիշել տեսիլների շարահարության ընթացքը, դրսևորել գործողությունների գլխավոր զսպանակները, պարզել հեղափոխական դրամայի հանգույցները: Այս իմաստով ամեն մի լուսաբանություն արժեքավոր է տակավին որպես նախափորձ: Սայթաքումներն անխուսափելի են, բայց և անհրաժեշտ: Քանի որ այդ գնով է միայն հնարավոր մշակել կայուն տեսակետ մոտիկ անցյալի գալիք ուսումնասիրությունների համար»[61]: Ինչպիսին էր իրական պատկերը: Աշ. Հովհաննիսյանը հոդվածում ջանում է բացահայտել կացությունը, որն արտահայտվում էր հետևյալում. Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դաշնակցական կուսակցությունը, հաղթարելով Հայաստանի մանր բուրժուազիայի հակահեղափոխական ճակատը, արհեստական պատվար կազմեց հեղափոխության հուզող ալիքների դեմ: Ազգային ճակատ՝ զանգվածների ազատագրման դասակարգային պայքարի դիմաց: Հայաստանի «անկախ» պետականության-ահա կազմակերպական այն գործիքը, որ իշխանության զենք պիտի դառնար ազգային բուրժուազիայի և իր կուսակցության տիրապետության ընթացքում: Երկսայրի մի սուր, որ պիտի բարձրանար հեղափոխության արտաքին գլոհի և շարժման ներքին հորձանուտների հանդեպ:

Մինչդեռ այդ բոլորը զուր ջանքեր էին, որովհետև հեղափոխական խլուրդը սեփական իշխանության հիմքերն էր փորում: Հայաստանն անկախ էր Խորհրդային Ռուսաստանից, սակայն վասալական կախման մեջ էր իմպերիալիստական Անտանտից: Մերժում էր Բրեստի դաշնագիրը, որպես ստրկության շղթա, բայց հրամցվում էր Բաթումի ավելի խայտառակ համաձայնությունը, որպես փրկության խարտիա: Արդյունքներն ակնբախ էին: Հայաստանը դեռ չմիացված՝

---

[61] Հովհաննիսյան Աշ., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք», 1923, գիրք 2, էջ 97:

կիսվեց: Նրա ազատ մասը՝ «Արարատյան Հանրապետությունը», ասպարեզ դարձավ եվրոպական և ազգային բուրժուազիայի քաղաքական շահատակությունների համար: Իսկ թուրքական գարշապարի ծանրության տակ շրջանը քարուքանդ եղավ, գոյատևող բնակչությունը նորից գաղթի մատնվեց ու սրի քաշվեց: Օտար զորամասերի հեռանալուց հետո իսկ՝ երեսի վրա ընկած էր ասպատակված մի երկիր, որտեղ գահակալում էին սովը, վարակը, մահացությունը: Երկրի աշխատավորության մի մասը բնաջնջումից փրկվեց հազար ու մի դժվարություններով ստացվող և հազար ու մի խարդախություններով բաշխվող ամերիկյան ալյուրի շնորհիվ միայն: Պատերազմն ու ջարդը, արտադրողական ուժերի քայքայումն ու քաղաքական համակարգի կազմալուծումը սաստկանում էին ու ծավալվում:

Հայ-վրացական հակամարտությունը խեղդում էր արտաքին քաղաքականությունը՝ մաքսային թալանի անօրինակ ձևեր ստեղծում: Բավական է հիշել, որ Վրաստանը կլանում էր Հայաստանին հասցեագրված ամերիկյան մթերքների գրեթե 30 տոկոսը: Փակուղի կազմելով Բաթումի ճանապարհին, մենշևիկյան Վրաստանը վրաց մանր բուրժուայի սահմանափակ ուղեղում վառում էր միայն ծովից-ծով փռվելու բարեպարար հույզը և հրահրում նրա մարտական եռանդը: Ադրբեջանի հետ տեղի ունեցող գժտությունների շնորհիվ՝ Հայաստանը կտրվում էր նավթային աշխարհից, երկաթուղային հաղորդակցությունը կանգ էր առնում, ճյուղի բանվորությունը մատնվում էր սովի և անգործության: Շարուրի և Նախիջևանի կռիվները փակում են Պարսկաստանի ճանապարհը, ճգնաժամը սրվում էր ատաքին աշխարհից կտրվող Հայաստանի Հանրապետությունում, մահացությունն՝ աճում: Երկիրն անզոր էր իրագործելու արտադրական ուժերի վերականգնման որևէ ծրագիր: Տնտեսական վերաշինության «մանդատը» որևէ շահ չէր խոստանում եվրոպական և ամերիկյան «բարերարներին»: Ինքնամփոփ տնտեսության մեջ ոչ միայն հնարավոր չէր երկրի նյութական վերաշինությունը, այլև անխուսափելի նրա դեգրադացիան: Սեփական արդյունագործությունից զուրկ և արտաքին շուկաներից կտրված՝ անհնարին էր դառնում բարձրարժեք

բույսերի մշակությունը: Իր հերթին՝ վաճառքի հանված վաշխառուական գներ նշանակելով՝ պետական մենաշնորհը արմատախիլ էր անում գյուղատնտեսության այդ ճյուղը, ցամաքեցնում իր իսկ տարադրամային ֆոնդի աղբյուրները: Իրողություն, որը պիտի սրեր արտաքին առևտրի ճգնաժամը, քայքայեր պետության ֆինանսներն ու պարենավորման համակարգը[62]:

Աշ. Հովհաննիսյանը ջանում է Մայիսյան ապստամբության կազմակերպական ձևավորումը լիովին պայմանավորել կոմունիստական կազմակերպությունների կատարած ընդհատակյա աշխատանքով, հետամտելով, որ բանվորական շարժումը այդ աշխատանքի զանգվածային հայտարարն էր: Շարժումը ծայր տվեց զինվորական ապստամբության Ալեքսանդրապոլում, Կարսում և Սարիղամիշում, որ զինվորական ապստամբությունը Նոր Բայազետում տեղահան արեց գյուղական զանգվածներին և ստացավ քաղաքական կռվի կերպարանք: Իջևանի շրջանում գյուղացիությունն ապստամբության գլխավոր զսպանակն էր, որ հեղափոխական եռանդ հաղորդեց զինվորական շարժմանը: Զինվորա-գյուղացիական այդ ապստամբությանն էր, որ օգնության էր գալիս կարմիր բանակի ռազմական ուժը, հավելում է Աշ. Հովհաննիսյանը:

Ըստ հեղինակի, բանվորական, զինվորական և գյուղացիական լայն մի շարժում էր Մայիսյան ապստամբությունը, որը բռնկեց Հայաստանի տարբեր վայրերում: Սրա մեջ էր ապստամբության ուժը, բայց և սրա մեջ էր նրա թուլությունն ու պարտության հիմնական պատճառը: Ինչու՞ հարցին նա պատասխանում է այսպես. չկար բանակով ու որակով ուժեղ բանվորություն, որ անցնելով շարժման առաջին շարքերը, իր գործողություններով կարողանար ուղղություն տար նրան: Չկար նաև կուսակցական զորեղ կազմակերպություն, որ ղեկավարելով ապստամբական շարժումը՝ ապահովեր նրա հաղթությունը: Չկար նույնիսկ միասնական կամք և վճռականություն, գործողությունների պարզ հեռանկար ու համագործակցության ընդհանուր

[62] Տե՛ս նույն տեղում, էջ 98-99:

ծրագիր շարժումը գլխավորող կուսակցական կազմակերպությունների մեջ: Եթե Արմենկոմը վճռել էր ապստամբական շարժմանը՝ անգիտանալով զանգվածների հեղափոխական տրամադրության փաստը, ապա կուսակցության Ալեքսանդրապոլի կենտրոնը, որը ճշտորեն արձանագրեց այդ փաստը, գերագնահատեց նրա ինքնամփոփ նշանակությունը և ճակատագրական կերպով տարվեց բռնկած ապստամբությանն անարյուն հաղթանակով պսակելու ցնորքով: Կուսակցության Ալեքսանդրապոլի առաջնորդները հրահրել էին բռնկած զանգվածային շարժումը, սակայն անկարող եղան կազմակերպական ընդհանուր հունի մեջ դնել այն, ղեկավարել և առաջնորդել այն պայքարի և հեղաշրջման վճռական օրերին: Այդ օրերին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն դեգերում էր կրավորականության նույն տարտամ վիճակում, որպիսի վիճակում դեգերում էր կուսակցության Հայաստանի կենտրոնը օրհասական պայքարի և հեղաշրջման նախօրեին[63]: Անառագաստ և գրեթե անղեկ ապստամբությունն ստացավ տարերային շարժման բնույթ: Առանց սերտ կապի և համագործակցության, մեկուսացված գավառական շրջանակներում, այն ընթացավ որպես հաջորդաբար բռնկող և հանգչող տեղական շարժումների մի շարան: Ապստամբները հնարավորություն չունեցան ուժեր փոխադրել մի վայրից մյուսը: Պարենային ներքին ճգնաժամը, կազմակերպող ուժերի պակասը, ղեկավարների անվճռականությունը, քարոզչության թուլությունը, հեռանկարների անորոշությունը բախոյալքեցին քաղաքական կոփվածքից թույլ և քաղաքացիական կռիվներին անսովոր զինվորական և գյուղացիական զանգվածներին և ճանապարհ հարթեցին հակառակորդի հաղթություններին և վայրենությունների համար[64]:

Այս ամենը ճիշտ է: Սակայն ճիշտ է և այն, որ Աշ. Հովհաննիսյանն այստեղ շրջանցում է իր իսկ կողմից հարգված գիտական պատմականության սկզբունքը և մտքով շրջագայում երրորդական-չորրորդական հենակետերում: Հայտնի է, որ Աղրբեջանի Հանրապե-

---

[63] Տե՛ս նույն տեղում, էջ 138-139:
[64] Տե՛ս նույն տեղում:

տությունը 1920 թ. ապրիլի 28-ին խորհրդայնացվեց միմիայն Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի ներխուժման շնորհիվ՝ առանց աղրբեջանական ապստամբական որևէ կրակոցի: Այս դեպքում ցանկանում ենք Աշ. Հովհաննիսյան քաղաքական գործչին և խորագիտակ պատմաբանին հարցնել՝ 1920 թ. Հայաստանի Հանրապետությունում Մայիսյան ապստամբության ժամանակ ու՞ր էր Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակը, ինչու՞ օգնության չեկավ «իմպերիալիստական Հայաստանից» փրկելու հայ ժողովրդին: Եկեք ուղիղ նայենք ճշմարտության աչքերին: Խորհրդային Հայաստանի ղեկավարները, այդ թվում հարկավ նաև Աշ. Հովհաննիսյանը, ակամա աչք էին փակում այդ իրողության առաջ, որ 1920 թ. ապրիլին արդեն մեկնարկել էին Քեմալ Աթաթուրք-Լենին բանակցությունները, ըստ որոնց ծրագրվում էր ոչ թե Հայաստանի Հանրապետության արագացված խորհրդայնացում, այլ «իմպերիալիստական Հայաստանի» ոչնչացում, տարածքների կրճատում հօգուտ Թուրքիայի և նոր միայն խորհրդայնացում: Մի ծրագիր, որ կատարվեց շատ անշեղ: 1920 թ. հայ-թուրքական պատերազմից հետո կնքվեց Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի ստորագուցիչ պայմանագիրը: Ի դեպ տեղին է այստեղ անդրադառնալ Հայաստանի խորհրդայնացման հինգերորդ տարեդարձի առթիվ Աշ. Հովհաննիսյանի գրած «Համազգային կրիզիսը» հոդվածին: 1920 թ. հայ-թուրքական պատերազմի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված համազգային ճգնաժամի մասին Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ «Միացյալ և անկախ» Հայաստանի պետականությունն այն վահանն էր, որ խոյանալով հեղափոխության ներքին և արտաքին ուժերի դեմ, պետք է պաշտպաներ ազգային բուրժուազիայի կյանքն ու գույքը, բաց աներ նրա առաջ նյութական բարգավաճման ուղիներ, նեցուկ դառնար նրա տիրապետության: Այդ պետականությունը իմպերիալիստական բուրժուազիայի դուռը բախող մուրացկանի ցուպ դրեց Հայաստանի ցրտահար և սովահար աշխատավորության ձեռքը: Սակայն գործադրած միջոցները ոչ միայն բարեկեցության եղջյուր չդարձան հայ գյուղացու համար, այլև հեղափոխական

ցնցումների, պատերազմական վայրուվերումների և ֆիզիկական սարսափի խորխորատ բացեցին նրա առաջ: Այդ էր պատճառը, որ անգամ թուրքական արշավանքի մղձավանջը չներշնչեց այդ գեղջուկին երկիրն ու իշխանությունը պաշտպանելու մղումը: Դաշնակցության կերտած ազգային-քաղաքական կառույցը փլվում էր: Ռազմական պարտությունը նախապատրաստում էր զանգվածների մեջ տեղի ունեցող սոցիալական բեկումների միջոցով: Հեղափոխությունը հասունանում էր ոչ թե պատերազմի համար, այլ պատերազմի դեմ, ոչ թե բոլշևիկների դեմ, այլ վերջիններիս օգտին, Մայիսյան ապստամբության հաղթած ուղիներով, այսինքն՝ դաշնակների իշխանության դեմ[65]:

Հայաստանի Հանրապետությունը ստացել էր դասալքված բանակի կերպարանք: Պատերազմում էին միայն խմբապետական գնդերն ու դաշնակցական կամավորները: Կարս բերդաքաղաքը հանձնվեց Կարաբեքիրին առանց մի գնդակ արձակելու: Ճգնաժամը համընդհանուր էր: Ռազմական պարտությունը կազմալուծում էր վերջնականորեն հասարակական-տնտեսական թույլ հենարանի վրա ծոծվող և «ազգային ինքնակողմնորոշման» դատապարտված կառավարողների խարխլված պետականությունը: Անտանտի պետությունները լքել էին «կրտսեր դաշնակցին»: Հայաստանի վերածնությունը պետք է սկսվեր խորհրդային կարգերի համար պայքարի երկունքով[66]: Այսպես է եզրափակում իր քաղաքական-հրապարակախոսական հոդվածը Աշ. Հովհաննիսյանը:

Աշ. Հովհաննիսյանի հրապարակախոսական հրապարակումները պատմահիմաստասիրական խորքային խորհրդածություններ էին: Քննական այդ մեթոդը գործադրում էր ինչպես շրջադարձային երևույթների, այնպես էլ քաղաքական երևելի գործիչներին նվիրված ակնարկներում: Այսպիսին է, օրինակ, նրա «Երկու բնութագիր. Ստ. Շահումյան և Ալ. Ռուբենի «Շատուրը» հոդվածը (Ալեքսանդր Ռուբե-

---

[65] Հովհաննիսյան Աշ., Համազգային կրիվիսը, «Խորհրդային Հայաստան», 1925. 29 նոյեմբերի:

[66] Նույն տեղում:

նի), որտեղ միացված են երկու քաղաքական գործիչների մասին տարբեր ժամանակներում գրված նյութերը: Առաջինը տպագրվել է 1919 թ. Մոսկվայի «Կարմիր դրոշակ» թերթի 3-րդ համարում և այնուհետև արտատպվել նույն տարում Աստրախանի «Կարմիր բանվոր» թերթում՝ «Ստ. Շահումյանի տեղը հայ բանվորական շարժման մեջ» վերտառությամբ: Երկրորդը լույս է տեսել 1922 թ. ապրիլին «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 79-րդ համարում «Ծատուրը» վերնագրով:

Աշ. Հովհաննիսյանը Ստ. Շահումյանին չի հակադրում Ալ. Ռուբենուն (Ծատուրին), այլ իրական օբյեկտիվությամբ ջանում է բնութագրել յուրաքանչյուրին ըստ նրանց գաղափարաքաղաքական դավանանքի: Ստ. Շահումյանի մասին Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ նա հետևել է, աշակերտել է եվրոպական սոցիալիզմին, որ կոմունիզմի մասին գիտական ուսմունքը ծանոթ էր նրան գերմանական ակունքներից: Հեղափոխական դաստիարակություն և քաղաքական դիրք Շահումյանը ստացել է համառուսական շարժման մթնոլորտում և նա որպես գործիչ մեծություն էր անդկովկասյան մասշտաբով: Նա Անդրկովկասում հարգանք էր վայելում ոչ միայն համախոհների, այլ հակառակորդների շրջանում: Հարկավ լոկ անձնական բարեմասնություններով չէր պայմանավորվում Շահումյանի այս եզակի դերը երկրամասում, այլ նախ և առաջ այլ օբյեկտիվ նշանակությամբ, որ ստանում էր նա իր թիկունքին կանգնած հեղափոխական զանգվածների շնորհիվ: Ազգային և դասակարգային բախումների և կռիվների անդրկովկասյան ժխորում Շահումյանը նկատվում էր որպես երկրի աշխատավորության համերաշխության հարազատ թարգմանը: Ստ. Շահումյանը գործում էր՝ իր համար ղեկավար ունենալով այն վարքագիծը, որ առաջնորդում էր նրան ընդհանուր ռազմավարության ժամանակի գերագույն շահը:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, մենք պարտավոր ենք գնահատել այն բացառիկ դերը, որ ուներ նա ամբողջ երկրամասում, նախատեսել այն հմայքը, որ դեռ պիտի ստանա նրա դեմքը անցյալի հեռավորության վրա, եթե բնորոշենք նրա նկարագիրը այն «ազգային

շրջագծի մեջ, ուր նա ամենից առաջ հայտնվեց որպես ուսուցիչ և դեկավար ու ամենից շատ պիտի հարգվի որպես հերոս ու նահատակ: Ստ. Շահումյանն իր համարձակ կյանքով սրբագործվեց հայ իրականության մեջ որպես ընդհանրական ճշմարտության հաղթանակի համար պայքարի դրոշակ, ընկավ այդ պայքարի մեջ որպես անձնազոհ հերոս»[67]:

Բոլորովին այլ ճանապարհով ընթացավ Ալ. Ռուբենու կյանքը: Ավարտելով Շուշվա թեմական դպրոցը և մեկնելով Բաքու, Ծատուրը գլուխ կանգնեց դաշնակցական այն փոքրաթիվ մտավորականների կողքին, որոնք «կովկասյան խնդիրներով» զբաղվելու անհրաժեշտություն էին զգում: Սակայն 1903 թ. Ծատուրն արդեն այն մի քանի հայ մարքսիստների թվումն էր, որոնք լույս ընծայեցին սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (սպեցիֆիկների) անդրանիկ մանիֆեստը: Նավթաշխարհը արմատական բեկում է մտցնում նրա գիտակցության մեջ: Քաղաքական կենդանի պայքարի միջավայրում Ալ. Ռուբենին օրըստօրե դաստիարակվում էր որպես հեղափոխական սոցիալ-դեմոկրատ և դիրք ու ազդեցություն վաստակում որպես նոր գաղափարների պատգամախոս: Մտքի սուր դիալեկտիկայով և հռետորական աճող եռանդով՝ նա ձեռք է բերում բանավիճողի հռչակ անդրկովկասյան հայաշատ կենտրոններում, մանավանդ երիտասարդական շրջաններում: Ազգային-քաղաքական հին հասկացողությունների և արժեքների վերագնահատման ժամանակներ էին, և նա, ծանոթ հայ կյանքին և տիրապետելով հռետորական խոսքի, ջախջախիչ հարվածներ էր հասցնում տիրող մտայնությանն ու նրա երևելի հրապարակախոսներին: Վեճի բռնվելով նրա հետ, ջարդուփշուր հեռանում էին քաղաքական մրցարանից խոսքի այնպիսի վարպետներ, ինչպես Հայ հեղափոխական դաշնակցության երևելի անդամ Գարեգին Խաժակն էր և Լևոն Աբաբեկյանը (սկզբում դաշնակցական էր, իսկ 1907 թվականից էսէռ): Ալ. Ռուբենու զեկուցումը «Հայ-թուրքական ջարդերի տնտեսական, քաղաքական պատ-

[67] Հովհաննիսյան Աշ., Երկու բնութագիր. Ստ. Շահումյան և Ալ. Ռուբենի, Երևան, 1927, էջ 5-7:

ճառների մասին», որով նա հանդես եկավ 1905 թ. Թիֆլիսի քաղաքային տան սրահում, քննադատության կատարյալ հաղթանակ նկատվեց: Ավելի խորահայաց և ավելի հետևողական վերլուծությունն այսօր կարող է սկզբունքային թերություններ ու սայթաքումներ մատնանշել Ալ. Ռուբենու այդ և ուրիշ գործերի մեջ: Բայց ժամանակի մամուլն արտահայտում էր խանդավառ հիացում կամ անզոր կատաղություն միայն:

«Հայ-թուրքական ջարդերի տնտեսական, քաղաքական պատճառների մասին» զեկուցումը, որը լույս տեսավ նաև առանձին գրքույկով, Աշ. Հովհաննիսյանը համարում է հայ հասարակական-քաղաքական կյանքի գիտական վերլուծության փայլուն նմուշ: Պանիսլամիզմի մասին դաշնակցականների բարձրացրած վայոցներին ի պատասխան, Ալ. Ռուբենին նշավակում էր պանիսլամիզմի երևույթը՝ կատաղի զայրույթ առաջացնելով ազգայնականների ճամբարում: Հասարակական զարգացման և ազգայնական գաղափարաբանության վերլուծման տեսակետից ավելի կարևոր էր նրա «Դաշնակցությունը և նրա քաղաքական-հասարակական արժեքը» խոշոր աշխատությունը, որը տարաբախտաբար կիսատ մնաց և մեզ հասած վիճակում իսկ ճգճգված և գրական առանցքից զուրկ մի հեղինակություն է: Այստեղ ընթերցողը կգտնի ընդարձակ տեսություններ և՛ պատմական մատերիալիզմի, և՛ նրա «քննադատների, և՛ ռուսահայ լիբերալիզմի, և՛ հայ մանր բուրժուազիայի ու իր կուսակցության՝ ՀՀԴ-ն մասին: Եվ քանի որ հեղինակը գրում է «զայն խավերի համար», ուստի չի զբաղվում նյութին վերաբերող աղբյուրներով, ավելի շատ հրապարակագրում է, քան ուսումնասիրում: Նշելով նման կարգի վրիպումները, Աշ. Հովհաննիսյանն ընդգծում է, որ Ռուբենու այդ աշխատությունը իր ժամանակի հասարակական երևույթների մատերիալիստական լուսաբանության անդրանիկ համակարգված փորձն է: Հեղափոխական խառնվածքով, տրամաբանական կուռ հետևողականությամբ, բանավեճի սուր հակադրություններով, ընթերցողն այդտեղ կգտնի մեծարված կուռքերի, փառաբանված հասկացողությունների անխնա մերկացումներ և վերագնահատում-

ներ, որոնք այսօր իսկ չեն կորցրել իրենց թարմությունն ու արդիականությունը: Հայոց գրականության մեջ մինչև այսօր իսկ այդ գործը դաշնակցության գաղափարախոսության միակ հիմնավոր քննադատությունն է: Ավելի մշակված, ավելի ամբողջացած և պայքարի տեսակետից ավելի անմիջական նպատակ ունեն Ալ. Ռուբենու այն հոդվածները, որ շոշափում են սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական խնդիրները: Այդ հոդվածները կազմեցին «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» գաղափարական զինանոցը, ինչպես և ինքը՝ հեղինակը գլխավոր և գրեթե միակ տեսաբանն էր «սպեցիֆիկներին» մեկուսացնող կազմակերպական հարցերում: Հեղափոխական գործոնների գնահատման մեջ Ալ. Ռուբենին խոսքով ու գրչով կանգնած էր քիչ թե շատ հեղափոխական «մեծամասնական» տեսակետի վրա: Կազմակերպական խնդրում նա «Բունդի» հայկական տարբերակն էր առաջադրում: Ավելի հետևողական «սպեցիֆիկները» հարեցին ազգային-կուլտուրական ինքնորոշման տեսակետին: Ալ. Ռուբենին չդավաճանեց հեղափոխական մարքսիզմի դրոշին: Նա 1912 թ. գրեց մի հոդված «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» դեմ: Հետագայում հրաժարվեց նաև կազմակերպական համակարգի ազգային հերձվածից: Այդ հրաժարումը «պայքարի փոխված պայմաններին» էր վերագրվում: Մինչդեռ քննել կազմակերպական ազգային սկզբունքի «նպատակահարմարությունը» նիշող պայմանները՝ կնշանակեր քննել հենց այն «սպեցեֆիկ» մտավախությունը, որի գերազանց տարերքից պիտի թալկանար Ալ. Ռուբենու հեղափոխական թափը, խունանար իր ստեղծարար կարողությունը: Այսպիսով, ըստ Աշ. Հովհաննիսյանի, Ալ. Ռուբենու դերն ավելի համեստ եղավ, քան պետք էր ենթադրել իր տաղանդի չափից և իր գործի աղմկահույզ սկզբնավորությունից: Նրա խոսքն ու գործը չունեցավ քաղաքական արժանի կշիռ ու նշանակություն: Նրա գործունեության շրջանը սեղմվեց ամփոփվելով հեղափոխական մարքսիզմի գրավոր ու բանավոր քարոզչությունում: Աշ. Հովհաննիսյանի համոզմամբ դա պատահական երևույթ չէր և ոչ էլ նրա զուտ անձնական եսով պայմանավորված: Դերիշխանը ժամանակի թելադրանքի

պարտադրանք էր: Ալ. Ռուբենին իր բախտը կապեց մի կազմակերպության հետ, որ չկարողացավ հարազատանալ նույնիսկ բանվորական այն ազգային զանգվածին, որի պայքարը ղեկավարելու «սպեցիֆիկ» պաշտոն էր ստանձնել: Ո՛չ այդ կազմակերպությունը, ո՛չ նրա գաղափարական ներուժը չէին կարող ղեկավար դիրք գրավել Անդրկովկասի բանվորական շարժման մեջ, քանզի իրենց աշխատանքը դրել էին հեղափոխական պայքարի կազմակերպության շեղհունի մեջ: Հայ բանվորական զանգվածները իսկ գնացին այն ղեկավարների հետևից, որոնք անցնելով միջազգային բանվորական կազմակերպության ծրագրին համընթաց՝ կարողացան միաժամանակ քաղաքական ուժ ու ազդեցություն ձեռք բերել նաև ազգային կյանքի ներ շրջանակներում: Ալ. Ռուբենու մեկուսացումն ու քաղաքական-ստեղծագործական իմաստազուրկ ընթացքն ավելի ակներև դարձավ հետագիմության տարիներին, երբ նոր հեղաշրջիչ պայմանների ճնշման ներքո իր «հոգու ամայությունը» նա կամեցավ արգասավորել բուրժուական գիտության ջերմոցներում: Սակայն այդ որոնումների ասպարեզում իսկ ոչինչ չստացվեց: Ընկնելով մի միջավայր, որտեղ նա ուսուցանող չէր, այլ աշակերտող, և որտեղ աշակերտել իսկ անկարող էր անծուկ նյութականի պատճառով, դառն ու վիրավոր հոգով թողեց քաղաքական ասպարեզը, վերադարձավ ծննդավայր, այնտեղ, ուր անցել էին նրա պատանեկան տարիները, գավառական անդորրության ծոցում, սեմինարիայի պատերի մեջ զոհելով իր ամբողջ եռանդն ու կարողությունը՝ նոր սերունդը նոր օրերի համար դաստիարակելու գործին[68]:

1926 թ. Վենետիկի Մխիթարյան տպարանում լույս է տեսնում Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության երրորդ հատորը: Իր այս հատորով Անանունը խորհրդածությունների հարուստ նյութ է մատակարարում նախ և առաջ սփյուռքի դաշնակցական մամուլին: Ի՞նչ նոր հարցադրումներ են, որոնք այդքան հետաքրքրություն են առաջ բերել այդ հրատարա-

---

[68] Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 26-27:

կության շուրջը: Այդ գրքում Դ. Անանունը, ըստ Աշ. Հովհաննիսյանի, կամենում է ներկայացնել ռուսահայերի հասարակական զարգացման 1901-1918 թթ. ընկած ժամանակաշրջանը: Այլ խոսքով՝ ռուսահայերի, որպես ազգության, տնտեսական-քաղաքական ինքնորոշման, նրանց «ազգաշինության» և ազգային-քաղաքական ազատագրման հիմնահարցը: «Ռուսահայերի հասարակական զարգացման» երրորդ հատորը հավակնում էր տալ հենց հեղինակին զբաղեցնող հիմնահարցի լուծումը: «Հայության հավաքման» հին պատգամն ավարտում է իր աշխատանքը 1918 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի Հանրապետության ստեղծման մեկնարկով: Դ. Անանունը համաձայն չէ հայ «առաջին մարքսիստների» այն տեսակետի հետ, թե ռուս պետականության այս կամ այն կառուցվածքը «համադարման է ազգային կարիքների և տրտունջների դեմ»: Անանունը կշտամբում է հայ մարքսիստներին, որոնք հետևողականորեն տեր չկանգնեցին նախընթաց շրջանի ազգային-հեղափոխական շարժմանը: Ինչի՞ մասին է խոսքը: Խոսքն այն մասին է, որ «մեր առաջին մարքսիստները,- գրում է Դ. Անանունը,- դեմ հանդիման եկան մի լայն շարժման: Նրանք չէին այն հրահրել կամ տեսաբանորեն հիմնավորել: Եվ որովհետև նրանք անցյալի ժխտումն էին՝ ժառանգ չկանգնեցին և անցյալից եկող շարժմանը, համարելով այն կղերա-բուրժուական մտքի արգասիք: Կռվի տաք վայրկյանին սա հասկանալի վերաբերմունք էր, բայց ոչ օրինակելի: Երբ առաջին օրերի հապճեպ որոշումը դառնում է արատ և գործունեության ուղեցույց՝ այն արդեն սայթաքումն էր»[69]: Այնուհետև իբրև թե այդ «սայթաքումը» պատճառ եղավ, որ մարքսիստները «ողնաշարը ջարդած մի ժողովուրդ դարձան, իսկ դաշնակցությունը նստած մնաց «հայության» ազգային զգացումների և անձև սպասումների խանձարուրի մոտ»[70]: Դ. Անանունի համոզմամբ մարքսիստների ազգաշինությունը կերպարանք չուներ, իսկ դաշնակցության գործելակերպի հաջող ու սուր քննադատությունը շրջանակ

---

[69] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, Վենետիկ, 1926, էջ 408:
[70] Նույն տեղում, էջ 411-412:

չէր դառնում, որ «հայկական մեղուն իր մեղրահացը հյուսեր...մնաց որ հեղափոխությունը, այսինքն՝ գործնական լուծե այն, և մարքսիստները գնան շարվելու պատրաստի սեղանի շուրջը: Իսկ թե գործնականը, առանց լուսաստղի, առանց գաղափարական ուղեցույցի, հպատակվելով կույր տարերքին միայն՝ ի՞նչ տանջանքներով է լուծում խնդիրը,- այդ մասին մենք լռում ենք»[71]:

Գրքի առաջաբանում Դ. Անանունը գրում է, որ «Հայությունը-...իր ազատարար Ողիսևսը գտավ ռուսական հեղափոխության մեջ»: Փույթ չէ բնավ, որ սպասածին հակառակ, այդ հեղափոխությունը պատռեց բուրժուական պետականության շրջանակը և ինքնորոշվեց որպես հեղափոխություն: Հայ բանվոր դասակարգը, ըստ նրա, ունկնդրելով պատմության թելադրանքին, կոչված է իրագործելու «ազատամտության» կրակը: Հրաժարվել այդ կրակից նա չի կարող անպատիժ: «Հայության ինքնուրացման դեմ,- շարունակում է Անանունը,- պիտի ծառանա բանվորական Ռուսաստանը, քանի նա ընթանում է սոցիալիզմի դրոշակի տակ և կամենում է ազատագրել իրեն թե բռնարար շրջանի ժառանգությունից և թե մեր օրերի գայթակղություններից»[72]:

Հավատարիմ մնալով ազգայնական իր ըմբռնումներին՝ Դ. Անանունը քննադատական ընդարձակ էջեր է նվիրում դաշնակցական «ազգաշինության» պրակտիկային: Սա առիթ է տալիս դաշնակցականներից ոմանց, մասնավորապես Ս. Վրացյանին, վերապահ դիրք բռնելու Դ. Անանունի գրքի նկատմամբ: Իսկ դաշնակցության մեկ այլ գաղափարախոս՝ Միքայել Վարանդյանը, ընդհանուր մակարդակի վրա դնելով Անանունի այս աշխատությունը Լեոյի «Անցյալից» ուսումնասիրության հետ, ակնարկ է անում այն մասին, թե երկու հեղինակների գործերն էլ գրվել են խորհրդային ազգային անվտանգության մարմինների արտոնությամբ: Այս մասին շատ հստակ է դաշնակցական ամբողջ տպագիր մամուլի դիրքորոշումը: Հատկանշական է, որ Անանունի հատորի լույս տեսնելուց առաջ, 1926 թ. նո-

[71] Նույն տեղում, էջ 418:
[72] Նույն տեղում, էջ 693:

յեմբերյան իր համարում «Հայրենիք» ամսագիրը գրում էր, թե Երևանի կառավարությունը ծրիաբար, անշահախնդրորեն չի տար նրան առանձնաշնորհումներ և այս պարագային ալ գիտցել է բավական սուղ գնով ծախել իր ընծեռած արտոնությունը...Երևանի վարիչները կգուրգուրան այդ «չեզոք» պատմագիրներու վրա, ամեն կերպ կքաջալերեն անոնց պատմագրական փորձերը, նույնիսկ կհանդուրժեն անոնց այս կամ այն ուրույն ժեստը, ուրույն անկախ կարծիքները՝ փոխարենը ստանալու համար Հ.Հ.Դաշնակցության վերջնական սնանկացումի ու փլուզումի վկայագրեր»: Ընդհանուր առմամբ դաշնակցական քննադատները ողջունեցին Դ. Անանունի հատորի երևան գալը՝ նկատելով այն իրենց հետապնդած «ազգաշինական» նպատակների սկզբունքային ջատագովություն՝ «անաչառ» գրչով: Աշ. Հովհաննիսյանն այն կարծիքին է, որ «դաշնակցական իդեոլոգիայի հիմունքներն այնքան են խարխլված այսօր (1927 թ. – Ն. Ս.), որ նրա ներկայացուցիչները պատրաստ են ճաշակել լախտի ու ճիպոտի ամեն մի հարված, կրել անձնական ամեն մի թուք ու մուրմիայն թե չանարգվի «սրբության սրբոցը», այն «հին պատգամը», որին ծառայել է կուսակցությունը տասնամյակների բախտախնդիր և արկածավոր իր գործունեության ընթացքում: Ի՞նչը կարող էր ավելի դյուրին ու ձեռնտու լինել, քան այն, որ *լրագրական հոնարարների հետամուտ դաշնակցական_պարապ գրչակները* (Արտ. Աբեղյան, Վ. Ահարոնյան և Վ. Նավասարդյան) *ամեն չափ_ու սահման հեգնող իրենց «ակնարկներով»* մի ավելորդ առիթ որսացին Դ. Անանունի աշխատության մեջ՝ *ծորոգելու իրենց գրական արշավանքը Հայաստանի խորհրդային իշխանության և նրա ղեկավարների դեմ»*[73](ընդգծումները Աշ. Հովհաննիսյանի Ն. Ս.): Ի՞նչ է սպեցիֆիզմը: Այդ հարցի սպառիչ պատասխանը ժամանակին տվել է Ստ. Շահումյանը: «Պայքար» թերթի 1916 թ. 33-րդ համարում Շահումյանը գրել է. «Հայտնի է, որ 1904 թվականի համառուսական մարքսիստների մեջ աշխատող մի երկու ինտելիգենտ միանալով նույնքան նախկին դաշ-

[73] Հովհաննիսյան Աշ., «Ձախ» պանիկյորության հայկական մի վարիանտի մասին. Երևան, 1927, էջ 6:

նակցական կիսաինտելիգենտների հետ, հիմնեցին (հրեական Բունդին նմանելու ցանկությամբ) մի կազմակերպություն, որը կոչվեց «բանվորական հայ կազմակերպություն»: Սկզբում շնորհիվ իրենց հին դաշնակցական կապերի, նրանք ունեին իրենց հետ որոշ թվով հայ բանվորներ և մի խումբ ուսանող երիտասարդներ: Ժամանակի ընթացքում նրանց միջից կենսունակ տարրերը, ինտելիգենտ թե բանվոր, միացան համառուսական կուսակցությանը, իսկ մնացածները՝ առաջին իսկ ռեակցիայի ազդեցության տակ՝ կազմալուծվեցին և ցրվեցին»[74]: Ստ. Շահումյանի այս տողերը, ըստ Աշ. Հովհաննիսյանի, պետք է ելակետ ծառայեն սպեցիֆիկների պատմահասարակական դերի բնորոշման համար: Որպես ամբողջություն սպեցիֆիզմը եղել է ազգային-օպորտունիստական սոցիալ-դեմոկրատիայի հայկական մի տարբերակը: Ջտարյուն բանվորական կազմակերպության՝ հետևողական միասնական ծրագրով, մարտավարական խնդիրների քաղաքական միասնական ըմբռնումով և որ կարևորն է՝ մասսայական-հեղափոխական գործնական աշխատանքի միասնական ղեկավարությամբ՝ սպեցիֆիզմը չի եղել երբեք: Սակայն կասկածից դուրս է նաև այն, որ զարգացման սկզբնական շրջանում սպեցիֆիկների շարքերում եղել են հեղափոխությանը և պրոլետարիատին հարազատ որոշ տարրեր՝ մարքսիստական ընդհանուր աշխարհայացքով՝ բոլշևիկյան թեքումով[75]: Մարքսիստական «բոլշևիկյան թեքումով» այդ տարրերին նկատի ուներ Ստ. Շահումյանը, երբ տակավին 1906 թ. միավորիչ համագումարից հետո, կշտամբելով Սոցիալ դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը՝ համագումարի որոշումներին ենթարկվել չցանկանալու հանգամանքը, այդ կազմակերպության ղեկավարների մասին գրում էր. «Փոխանակ պարզ ու անկեղծ ներկայացնելու իրենց բանվորներին այն, ինչ որ կատարվել է համագումարում, փոխանակ պարզելու, որ մեր տարիների վեճը արդեն վճռված է այդպես գլխավորապես այն լատիշների և լեհացիների ջանքերի շնորհիվ, որոնց անունով իրենք միշտ երդ-

---

[74] «Պայքար», 1916, N 33:
[75] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 24:

վում էին մինչև այժմ, նրանք սկսում են խծբծանքով զբաղվել, հիստերիկական աղաղակներ բարձրացնել, հայհոյանքներ թափել, աղավաղել ճշմարտությունը...Այդ բոլորով ընկերներ, դուք կարող եք ժամանակավորապես շփոթեցնել, մոլորեցնել ձեր ընթերցողներին, բայց դրանից, հավատացնում եմ ձեզ, չի շահվի երբեք հայ պրոլետարիատը, որի անունից դուք խոսում եք, որի «միակ ներկայացուցիչը» դուք կամենում եք լինել»[76]:

Հարկավ, կազմակերպչական համակարգի շուրջը եղած «տարիների վեճը» Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական և հայ կազմակերպությունների միջև սաղմնային վիճակում պարունակում էին իրենց մեջ բանվորական ինտերնացիոնալիզմի և բուրժուական նացիոնալիզմի միջև եղած այն տարածայնությունները, որոնք հետագայում վիհ ստեղծեցին այդ կազմակերպությունների միջև: Սակայն խնդիրն էլ հենց այն էր, որ սպեցիֆիզմի ներսում եղած «կենսունակ տարրերի» քաղաքական աշխատանքն ընթացել է այդ տարաձայնությունները հաղթահարելու գծով: Եվ եթե մոտենանք սպեցիֆիզմի հիմնահարցին հենց նրա «կենսունակ տարրերի» հասարակական-քաղաքական աստիճանական զարգացման տեսակետից, այն մեզ կներկայանա որպես մի կամուրջ՝ բուրժուական-դաշնակցական ազգայնականությունից դեպի պրոլետարական-բոլշևիկյան ինտերնացիոնալիզմը[77]:

1905 թ. հեղափոխության նախօրեին հայ ազգայնականության մեջ ընկղմված մտավորականության և բանվորության որոշ «կենսունակ տարրեր» պրոլետարական-հեղափոխական առաջապահ դիրքերն անցնելու համար կարիք ունեին քաղաքական քավարանի, որ պիտի սրբվեր նրանց նախածին մեղքը: Քավության միջոցն այն պայքարն էր, որ վարեցին այդ «կենսունակ տարրերը» իրենց ծնող մոր՝ պանարմենիստական դաշնակցության դեմ[78]:

---

[76] Շահումյան Ստ., հ. 1, Մոսկվա, 1926, էջ 136-137:
[77] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 24-25:
[78] Տե՛ս նույն տեղում:

1908–1909 թվականներից սպեցիֆիկների մեջ ուժեղանում է բացահայտ օպորտունիստական-նացիոնալիստական խմբակի ղեկավարությունը: Այս խմբակի համար «մարքսիզմն» ու «սոցիալիզմը» միայն ձևական, երբեմն անհրաժեշտ նկատված, մի տուրք էր՝ համառուսական հեղափոխությանը: Եվ եթե մոտենանք սպեցիֆիզմին հենց նացիոնալիստական-օպորտունիստական այդ խմբակի հասարակական-քաղաքական հետագա էվոլյուցիայի տեսակետից, այն կներկայանա մեզ որպես մի կամուրջ՝ դաշնակցության «սոցիալիստական» ֆրազաբանությունից դեպի լիկվիդատորություն, հայկական սիոնիզմ, մերկապարանոց շովինիզմ և սանձարձակ հակահեղափոխություն: Բուրժուական-ազգայնական հակահեղափոխության ուղղությամբ նավարկող այս տարրերի ղեկավարության շրջանում 1905-1907 թթ. սպեցիֆիզմը որպես ամբողջություն փաստորեն կազմալուծվել էր: Հենց այդ է նշում Ստ. Շահումյանից այն մեջբերումը, որ կատարեցինք վերևում: Այն, ինչ մնաց հրապարակում ՍԴԲՀԿ անունով և օգտագործեց սնանկացած այդ ֆիրման հասարակական-քաղաքական աշխատանքի համար՝ վերասերվել էր փաստորեն որպես նացիոնալիզմի ավելի հետադեմ, ավելի հակահեղափոխական մի տարբերակը, քան էր ինքը «մայր կուսակցությունը»՝ դաշնակցությունը:

1905-1907 թթ. սպեցիֆիկների շարքերում դեգերող հեղափոխական տարրերը, բանվոր թե մտավորական, սպեցիֆիզմի բուրժուա-նացիոնալիստական վերասերման հետին շրջանում արդեն իսկ լքել էին հին կազմակերպությունը և անցել որպես բոլշևիկներ ՌՍԴԲԿ շարքերը: Դրանցից միայն ոմանք, մի առ ժամանակ դեգերելով հին դիրքերի վրա՝ քիչ թե շատ հետևողական պայքար էին տանում կազմակերպության ազգայնական ղեկավարության դեմ: Իրողություն է սակայն, որ իմպերիալիստական պատերազմի նախօրեին սպեցիֆիկների շարքում դեգերող այդ տարրերն իսկ խզեցին իրենց կապերը կազմակերպության հետ: Դրանց մի մասը ևս հետագայում ՌՍԴԲԿ մեջ մտան:

Աշ. Հովհաննիսյանը անդրադառնում է Դ. Անանունի ռուսահայերի հասարակական-քաղաքական զարգացմանը՝ ազգային-մշակութային ինքնորոշման տեսությունից դեպի դաշնակցական պետականության «հարազատության» տեսությունը: «Հայը լրիվ մարդ դարձած չի լինի,- գրում է Դ. Անանունը,- եթե նա չհրաժարվե «ներքին թուրքից», եթե նա վերջ չտա իր հոգին ներքինացնող օտար ազգություններին, իսկ դա հնարավոր է, եթե նա մկրտվի հայրենի պետականության ջինջ «ավազանում»[79]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, սա արդեն բացահայտ հետադիմական-պահպանողական բարբառ էր, որ բանաձևում էր վերասերման իր գործընթացը բոլորած սպեցիֆիզմը:

Մի պահ դեգերելով մտայնության այս նավահանգստում՝ սպեցիֆիզմի թափառ հոգուց վերանում էր ոչ միայն «սոցիալիստական» գաղափարախոսությունը, այլև նրա ֆրազաբանությունը՝ այսպիսի սպառիչ եզրահանգմամբ է ավարտում իր գիտական բնութագիրը Աշ. Հովհաննիսյանը[80]:

### *Բ) 1920-1930-ական թթ. պատմագիտական աշխարհը:*

«Խորհրդային գրականություն» ամսագրի 1935 թ. երրորդ համարում լույս տեսավ Աշ. Հովհաննիսյանի «Մառ պատմագետը» հոդվածը, որտեղ հեղինակը ցույց տվեց, որ Նիկոլայ (Նիկողայոս) Յակոլևիչ Մառ գիտնականը համաշխարհային համբավ է ստացել որպես լեզվաբան, որպես լեզվի նոր ուսմունքի, այսպես կոչված հաբեթական տեսության հիմնադիր: Մառը հայտնի է մեծապես նաև որպես բանասեր և հայագետ-կովկասագետ: Ցավալի իրողություն է, որ 1930-ական թվականներից սկսած փորձեր կատարվեցին թերագնահատելու հսկայական այն նշանակությունը, որ Մառն ունի որպես պատմագետ, որչափ վերջինիս նշանակությունը որպես հնագետի ու բանասերի չափվում է հենց նրանով, որ և հնագիտությունը, և բանասիրությունը նա դրեց պատմագիտության բարձրության վրա և որ-

[79] «Հայաստանի կոոպերացիա», 1920, N 19, էջ 87:
[80] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխատությունը:

չափ միաժամանակ, նա դարձավ մեր ժամանակի մեծագույն լեզվագետը հենց այն պատճառով, որ բացահայտեց լեզվի դերը, որպես պատմական զարգացման արգասիք և հայտաբերեց նրա նշանակությունը որպես պատմական իմացության գործիք: Հայտնի է, որ մինչև Մառը բուրժուական հնագիտությունը իմացողության հասարակական-պատմական մեթոդը կիրառել է բացառապես իրավաբանական նպատակներով: Մառի մոտ, ընդհակառակը, իրը պատմական հասարակաիմացության պրագմատիկ ֆունկցիա է՝ արտացոլելով պատմական զարգացման որոշ աստիճան, որոշ որակ հասարակական գիտակցության զարգացման մեջ: Նրա համար իրի ուսումնասիրությունը պատմության պրոցեսի ճանաչման միջոց է: Ըստ Աշ. Հովհաննիսյանի Մառի մոտ և լեզուն, և գրականությունը, դադարելով ինքնաբավ լեզվագիտության առարկա լինելուց, ենթարկվում են պատմագիտության խնդիրների սպասարկմանը: Լեզվագիտական շահագրգռությունը Մառ գիտնականին առաջնորդեց դեպի հին ու նոր աշխարհի կենդանի ու մեռած լեզուների ու գրական հիշատակարանների ուսումնասիրությանը: Սկզբնապես նրա առջև դրված էր վրացերենի ուսումնասիրության խնդիրը՝ սերտորեն կապակցված Կովկասի և Առաջավոր Ասիայի կենդանի ու մեռած լեզուների հետ: Բացահայտելով բառի իսկական իմաստը, իրական դերակատարությունը, նա իր գիտական շահագրգռության ոլորտի մեջ առավ Կովկասի և Առաջավոր Ասիայի ժողովուրդների առասպելները ու լեզուները, էպոսն ու ֆոկլորը, միաժամանակ՝ պատմա-համեմատական ուսումնասիրության համար մեջ բերելով այսպես կոչված քրիստոնեական և մահմեդական արևելքի գրավոր հիշատակարանները և ամենից առաջ միջնադարյան Վրաստանի և Հայաստանի հիշատակարանները:

Ն. Մառը չսահմանափակվեց այդ աղբյուրների լոկ բանասիրական ուսումնասիրությամբ: Հետզհետե ձևի ուսումնասիրությունից անցնելով լեզվի հասարակական-պատմական ֆունկցիայի և իմաստի ուսումնասիրությանը, հայտաբերելով գրավոր աղբյուրի իրական պատմական բովանդակությունը, նրա առաջ ծառացավ գրավոր

խոսքի տվյալները կենդանի խոսքի տվյալների հետ բաղդատելու, գրավոր պատմության տարեգրությունները նյութական մշակույթի հիշատակարանների և կենդանի հնության հիշատակարանների մեջ դրոշմված տարեգրությունների հետ բաղդատելու խնդիրը:

Ն. Մառի համար բնորոշ էր աղբյուրների համալիր ուսումնասիրությունը: Օրինակ, ուսումնասիրելով Աբխազիայի Ցեբելդա բնակավայրում գտնված եկեղեցու միջնորմի բեկորները, հնագետները գտել էին Աստվածաշնչի տեսարանները պատկերող բարձրաքանդակներ, որոնց մեջ կար մեկը, Իսահակի զոհաբերության տեսարանով, որտեղ ավանդական խոյը պատկերված չէ կանգնած և եղջյուրները ծառի ճյուղերի մեջ խճճված դիրքով, այլ՝ եղջյուրներով ծառից կախված:

Ն. Մառը ցույց տվեց, որ անսովոր այդպիսի մի պատկեր գտնված է նաև Անիի արքունական եկեղեցում: Պատկերի նմանը գոյությունը բացատրվում է նրանով, որ ի տարբերություն Աստվածաշնչի հունարեն տեքստի՝ արևելյան հնագույն տարբերակներում, հատկապես հայերեն և վրացերեն թարգմանությունների մեջ պատմվում է, որ «խոյը եղջյուրներով կախված է ծառից»: Հայաստանում այս տարբերակը բխում է սիրիական միսիոներներից, որոնք քրիստոնեության անդրանիկ քարոզիչներն էին այդ երկրում 4-5-րդ դարերում: Ընդհակառակը, Աբխազիայում նույն տարբերակը կարող էր երևան գալ միայն այն ժամանակից հետո, երբ հունարեն եկեղեցին նահանջեց վրացականի առաջ, այսինքն ոչ ավելի շուտ, քան IX-X դարերը: Անիի արքունական եկեղեցու քանդակը, ըստ Ն. Մառի, չի կարող ավելի ուշ ժամանակի գործ լինել, քան X դարը, մանավանդ, որ մի շարք այլ տվյալների զորությամբ այդ քանդակը կարող է համարվել VI դարի աշխատանք, մինչդեռ Ցեբելդայի քանդակը ոչ մի դեպքում չի կարող IX դարից ավելի հին լինել[81]:

Աղբյուրների քննությունը հենց սկզբից հայտաբերում է Մառի մոտ հիշատակարանների հասարակական-պատմական բովանդա-

---

[81] Տե՛ս **Марр Н. Я.**, Кавказоведение и абхазский язык. журнал министерства народного просвещения (ЖМНП), 1916, էջ 4:

կությունը բացահայտելու միտում: Բացահայտելով ամենատարբեր էթնիկական շերտաբարդումների արտացոլումը վաղնջական աղբյուրների մեջ, որոշ հետնաղարյան աղբյուրների բովանդակության գաղափարական կամ դասակարգային ուղղությունը, ըստ Աշ. Հովհաննիսյանի, այս է աղբյուրների քննության ընդհանուր միտումը Մառի մոտ: Այստեղից են բխում աղբյուրների թվագրման նրա ձևերը և նրանց գնահատման համար գործադրած չափանիշները: Աղբյուրների մառյան քննադատությունը տարանջատվում է քննադատության ձևական եղանակներից, որոնք անտեսում են աղբյուրների մեջ արտացոլված հասարակական արտադրական հարաբերությունների առանձնահատկությունները, պոկելով աղբյուրը նրան ստեղծած հասարակական-պատմական միջավայրից և լուսաբանելով անցյալը բուրժուական մտածողության համար բնորոշ ձևական-տրամաբանական կատեգորիաների տեսանկյունից[82]: Անցյալի վավերագրերին մերձենալով այսպիսի մեթոդաբանությամբ, Ն. Մառը հնարավորություն ունեցավ իր աշխատություններում վեր հանելու կովկասյան և միջերկրական մշակույթների պատմական այնպիսի շերտեր, որոնց տակավին չէր մոտեցել պատմագիտությունը: Հայկական և վրացական միջնադարյան պատմագրության գրական աղբյուրների ուսումնասիրությունը նրան բերեց այն հաստատ համոզման, որ անհնար է գնահատել այդ նյութերը եզակի այն փաստերի հիման վրա, որոնք վերցված են հիշատակարաններից՝ այն էլ քննադատորեն ստուգված տեքստերով, որ գրողների գնահատման մեջ պետք է պահպանվեն պատմական հեռանկարները և որ չի կարելի պատմագրողին դատել այլ կերպ, քան թե նրա ժամանակ տիրող գիտական և գրական չափերի տեսակետից, հաշվի առնելով նրանց գաղափարաքաղաքական ուղղությունը և այլն: Հատկանշական է, որ Մառի հայ և վրացական գրականության պատմության համալսարանական դասընթացները պատմագրական նյութը դասավորում են ոչ թե հեղինակի սոսկ ժամանակագրական հաջորդականությամբ, այլ ըստ նրանց պատ-

---

[82] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Մառ պատմագետը, «Խորհրդային գրականություն», 1935, N 3, էջ 104-105:

կանելությանը գիտական-գրական որոշ դպրոցների, խմբավորումների, հոսանքների: Ն. Մառի համար այս ճանապարհով գրական աղբյուրները դառնում էին որոշ, հաճախ տիրող հասարակական գաղափարների և նրանց համապատասխանող հարաբերությունների ցուցանիշներ: Նա հենց սկզբից առանձին ուշադրություն հայտաբերեց աղբյուրների բազում էթնիկական կապերի, շեշտաբարդումների, խաչաձևումների վերաբերմամբ: Ն. Մառը հայտնագործեց վրացական աղբյուրների կապը այսպես կոչված հարևան մյուս ժողովուրդների գրավոր աղբյուրների հետ, վեր հանեց իրանական ազդեցության արտացոլումը Վրաստանի միջնադարյան գրականության մեջ, ցույց տվեց մի շարք հիշատակարանների, այդ թվում՝ Աստվածաշնչի վրացերեն թարգմանության հայկական սկզբնաղբյուրները: Նա միաժամանակ ցույց տվեց այն խոր կապերը, որ գոյություն ունեն հայ գրականության և սիրիական, արաբական և այլ գրականությունների միջև: Մշակութային կապերի և միջնորդավորումների քողը բարձրացնելով, հաճախ նա բացահայտում էր նրանց համապատասխանող քաղաքական, տնտեսական կապերը, վեր հանելով հաճախ նրանց դասակարգային-գաղափարախոսական ընդհանուր ակունքները, այս կամ այն էթնիկական երանգ ստացած հիշյալ ազդեցությունների բնույթը, իմաստն ու ուղղությունը[83]:

Վարդանի առակների մասին Ն. Մառի քննական հայացքն ընթերցողի առաջ կենդանի պատկերներով վերակենդանացնում էր Հայաստանի և Առաջավոր Ասիայի միջավայրում տիրող սոցիալական կարգերն ու վարքի նորմերը: Մասնավորապես ցույց են տրված ժողովրդական, գյուղացիական ստեղծագործության տարրը էպոսի բնագավառից: Ոչ նվազ դասական՝ Գ. Խանձիացու վարքագրության մեջ Ն. Մառը հայտնագործեց կենցաղագրական հրաշալի մի աղբյուր, որը պատկանում է մենակյացների տիպական կերպարանքներ նկարված կենդանի, երբեմն գունագեղ կերպով տեղական, մասնավոր կամ հասարակական կյանքի ֆոնի վրա և դրված տեղական բնության շրջանակների մեջ:

---

[83] Տե՛ս նույն տեղում:

Որպես հիմնական դրույթ Շոթա Ռուսթավելու «Ընձեռնավորին» նվիրված մենագրության մեջ առաջադրում է այն հայեցակետը, որ «Ընձեռնավոր» հռչակավոր պոեմը ծագել է որոշ՝ ոչ միայն ազգային, այլև ցեղային միջավայրում, համակովկասյան մշակութային-պատմական հոսանքների, մասնավորապես մահմեդական և քրիստոնեական կենդանի, ժողովրդական փոխազդեցությունների կիզակետում[84]: Հետագայում Ն. Մառը ուրվագծեց մեծ բանաստեղծի դեմքը, որպես լռության մատնված և դիտմամբ մոռացված մի գաղափարախոսի, որը կապված է եղել Անդրկովկասի և Վրաստանի քաղքենիական և գյուղական ստորին խավերի հետ, որպես մի հեղաբեկիչի, որը թոթափել է ֆեոդալական շղթաները, պայթեցրել է տիրապետող բարձր դասի գաղափարական սահմանափակության ամրոցը և այնուամենայնիվ կամ հենց այդ պատճառով այլանդակված է նրա գաղափարախոսության համակերպվող ազնվատոհմ խմբագիրների և նրանց համախոհ մեկնիչների ձեռքով:

Պատմական հիշատակարանների սոցիալական նշանակության վրա Ն. Մառի ուշադրությունն ավելի ու ավելի սրեցին Անիի հնագիտական պեղումները: Նրա պատմական իրական հայեցակետը պայքարի մտավ քրիստոնեական և մահմեդական միջնադարի ֆեոդալական պատմագրության դավանորեն և ազգայնորեն սահմանափակ հայեցակետերի հետ:

Ն. Մառ պատմագետի ուշադրության կենտրոնը, ըստ Աշ. Հովհաննիսյանի, կազմում էր Կովկասի ժողովուրդների մշակութային կյանքի փաստերի հարակցության և ազգակցության կամ հակամարտության ու խոտորման հիմնախնդիրը: Օրինակ, ուսումնասիրելով կովկասյան և առաջավորասիական միջնադարի ուղղափառ և հերետիկոսական հոսանքների հակամարտությունը, Ն. Մառն ընդգծում էր հատկանշական այն երևույթը, որ այստեղ պայքարը տեղի ուներ ոչ թե ազգությունների միջև, այլ դասակարգայնորեն հակադիր երկու մշակույթների միջև՝ քրիստոնեական նոր մշակույթի, որը միշտ

---

[84] Տե՛ս **Марр Н. Я.**, Грузинская поэма «Витязь в барсевой шкуре» Шоты из Руетава и новая культурно-историческая проблема. Известия Академии наук, СПб, 1917.

ճնշման գործիք է եղել այլևայլ ցեղերի պատկանող ֆեոդալների ձեռքում, և վաղեմի՝ ժողովրդական, հեթանոսական հին մշակույթի, որի արմատները հասնում են մինչև «վաղնջական-հաբեթական» անցյալը: Ազգային բնույթ չունեն նաև քրիստոնեական տիրող հոսանքների միջև տեղի ունեցած վեճերը: Քաղկեդոնականությունը միացնում էր վրացիներին ու հույներին ընդդեմ հայերի ու սիրիացիների, այլ հերձվածող վրացիներին, հայերին, սիրիացիներին և արաբներին նույն ազգությունների այն ներկայացուցիչների դեմ, որոնք հանդես էին գալիս քրիստոնեական հակադիր դոգմաների նշանաբանի ներքո[85]:

Անիի պեղումներին նվիրված իր մենագրության առաջաբանում Ն. Մառը գրում է, որ նույնիսկ գրավոր կերպով վավերագրված դասակարգային պատմությունը՝ հակառակ իրականությունը կեղծելու իր փորձերին արյունոտ էջեր է բացել ամենից առաջ դաժան գոտեմարտերի, որոնք տեղի են ունեցել հենց քրիստոնյաների և քրիստոնյաների միջև, մահմեդականների և մահմեդականների միջև, «ուղղահավատ» հույների և ուղղափառ վրացիների միջև, քաղկեդոնական վրացիների և հայերի միջև, մոնոֆիզիտ (միաբնակ) հայերի ու դիոֆիզիտ (երկաբնակ) հայերի միջև, և համապատասխան սոցիալական միջավայրում տիրող եկեղեցու, այս կամ այն ազգին պատկանող կողմնակիցների և «հերետիկոսների», «հնահավատների» միջև (որոնք հիմքում հեթանոս էին և իրենց համախոհ մահմեդականների հետ փրկում էին ազգային իրական արժեքների կորուստը քրիստոնեական և մահմեդական եկեղեցական ուսմունքի մոլեռանդներից, փաստորեն, մեծապետական միջազգային-դասակարգային տնտեսապես գերազանցող ուժից), ինչպես և սուննի մահմեդական քրդերի և շիա մահմեդական պարսիկների ու սուննի թուրքերի միջև և այլն[86]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, եթե Ն. Մառի վրացագիտական աշխատությունները հարված հասցրին ազնվական-բուրժուական պատմագրության ավանդույթներին, ապա ոչ նվազ ուժգին հարված

---

[85] Տե՛ս «Кавказ и памятники его духовной культуры» 2-ое изд., СПб., 1919, էջ 8:

[86] Տե՛ս **Марр Н. Я.**, Ани. М.-Л., 1934, предисловие, էջ VI:

հասցրին նրա հնագիտական աշխատությունները հայ կղերական պատմագրությանը: Ն. Մառը պարզեց, որ Անի քաղաքը, հայ ֆեոդալների և վաճառականների «մայրաքաղաքը», ոչ նվազ չափով եղել է սելջուկ, քուրդ, վրացի, մոնղոլ և այլն ֆեոդալների և վաճառականների մայրաքաղաք: Պարզվեց, որ հակառակ կղերաֆեոդալական պատմագրության ներհակ պնդումներին, հայ Բագրատունիների դինաստիայի անկումից հետո քաղաքն ունեցել է բարգավաճման ու վերելքի շրջան «այլազգի» տիրապետության պայմաններում: Հենց այդ շրջանում է տեղի ունեցել քաղաքի և նրա ճարտարապետության հոյաշեն կոթողների բուռն աճումը:

«Հայկական քաղաքների աճման և առաջին հերթին վերածնվող Անիի աճման հետ միասին,- գրել է Ն. Մառը,- տեղի ունեցավ հայկական հարուստ բուրժուազիայի առաջացումը (Մառը նկատի ունի առևտրական դասին – Ն. Ս.): Հայ իշխանները դեռ գոյություն ունեին և այստեղ դեռ մեծ դեր էին խաղում, բայց ոչ որպես ազգայնորեն կազմակերպված հայ հասարակական ուժ: Բուն Հայաստանում ազգային հասարակական այդպիսի ուժի տեղը բռնեց...առևտրական և արհեստավորական հարուստ դասակարգը, որ ուներ համաշխարհային կապեր: Նրա շնորհիվ վերածնվեց բուն Հայաստանի մշակութային կյանքը: Գրականության մեջ մուտք գործեց քաղքենիական-աշխարհիկ հոսանքը: Ստեղծվեց հայկական նոր արվեստ, որի ճարտարապետական գլուխգործոցները այսօր իսկ ավերակ վիճակում հիացմունք են պատճառում անգամ արվեստի ամենաանուրբ գնահատողներին: Եկեղեցականի կողքին զարգացավ քաղաքացիական-քաղաքային ճարտարապետությունը ավելի լայն բազայի վրա՝ իրանական-մուսուլմանական արվեստի ավելի սերտ հաղորդակցությամբ»[87]: Աշ. Հովհաննիսյանի գնահատմամբ Ն. Մառն այն տեսակետն ուներ, որ իրանական-մուսուլմանական մշակութային հոսանքը հիմքեր չտվեց և չէր էլ կարող տալ տեղում արդեն իսկ առաջացած քաղաքակրթության, սակայն նա պատճառ եղավ կովկասյան աշ-

[87] Марр Н. Я., Кавказский культурный мир и Армения, Журнал министерства народного просвещения (ЖМНП), 1915, стр. 320.

խարիի հորիզոնի լայնացման, նպաստելով նրա ազատագրմանը կրոնական միակողմանի ուղղության շղթաներից, իրանական-մուսուլմանական մշակութային հոսանքը աշխարհականացրեց հասարակական միտքը և կյանքի կոչեց զուտ աշխարհիկ մի ուղղություն, որ ազգային միջավայրի պայմանների համեմատ արտահայտվեց մի տեղ՝ քաղաքացիական արվեստի, մի այլ տեղ՝ աշխարհիկ գեղարվեստական գրականության մեջ[88]:

Ն. Մառի համոզմամբ, բոլոր այն ժողովուրդները, որոնք հասել են համախումբ ազգություն կազմելու աստիճանին, չէին կարող միայն մի անուն ունենալ իրենց գոյության ողջ ընթացքում: Յուրաքանչյուր ազգություն արդյունք է մի շարք ցեղային խմբավորումների, որի ընթացքում ավելի կենսունակները ու զորեղները բոլորին միացրել են իրենց տոտեմին, իրենց այսպես կոչված ցեղային անվան: Վաղեմի ցեղային անունների չքացումը գրավոր հիշատակարանների մեջ հաճախ նշվում է այլ բնույթի մի երևույթ, քան ցեղի փոփոխությունը, և հաստատված փաստը, շատ դեպքերում պահանջվում է պարզել միավորման ընթացքում կատարված սոցիալական բեկումը, այլ ոչ թե հետաքննել փոփոխություններ միմիայն այսպես կոչված էթնիկական կազմի մեջ: Ն. Մառի մոտ այս կապակցությամբ նոր լուսաբանություն է ստանում նաև Եվրոպայի և Ասիայի տոպոնիմիկան, որը ջնջում է պատմականորեն անանցանելի սահմանները հնադարի «հելլենների» և «բարբարոսների» միջև և սահմանները «Արևմուտքի» և «Արևելքի» միջև, մետրոպոլիաների և գաղութների միջև, մեծապետական ազգերի և արհամարհված ազգային փոքրամասնությունների միջև և հետագա կապիտալիստական դարաշրջանում: Հնադարյան սկյութներից և կիմերներից մինչև մեր օրերի ռուսները ու ուկրաինացիները, Կովկասի մեգրելներից և լազերից մինչև Եվրոպայի գոթերը և գերմանացիները, Պիրենեայի բասկերից և իբերացիներից մինչև Պամիրի բուրեշկները և վերշիկները՝ ամենուրեք Սառը հաստատում է պատմական միասնական գործընթացի ու միջնորդավորումների ամենաանուրբ գծերը, դրանց վրա ուղղելով լեզվագիտության և հնագի-

[88] Նույն տեղում, էջ 292:

տության պրոմեթեյական վառ լույսը: Պակաս արժեքավոր չէ միգրացիաների (գաղթականությունների) տեսության մառյան քննադատության նշանակությունը՝ միջնադարյան ֆեոդալիզմի ծագումն անշեղ ըմբռնելու համար: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Ն. Մառի հարցադրման մեջ այս խնդրի բանալին չի գտնվում այսպես կոչված ժողովուրդների մեծ գաղթի մեջ, այլ, ինչպես գերմանացիների, այնպես էլ Հռոմեական կայսրության մեջ ծագած այն հարաբերություններում, որոնք տարան դեպի Եվրոպայի «բարբարոսացումը» ժողովուրդների մեծ գաղթից շատ առաջ, որի նշանակությունը չափազանցեցնում էին պատմագիրները: Գերմանական և սլավոնական «բարբարոսների» դիալեկտիկական թռիչքը դեպի ավելի բարձր աստիճան՝ նախապատրաստված էր ոչ թե հռոմեական ռազմական, ոչ թե բյուզանդական կրոնական կուլտուրտրեգերությամբ, այլ հռոմեական պետության ներսում շահագործվող, իսկ հետագայում գյուղերում և քաղաքներում աշխատող թշվառ, մուրացկան սոցիալական խավերի «համերաշխությամբ»: Հին աշխարհը պայթեցվեց այդ զանգվածների շարժումով պայմանավորված՝ սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների առաջացումից: Բարբարոսների ստեղծած պետությունները իրենց հերթին պայթեցրին արաբների ստեղծած, ամրացած և որակական նոր աստիճանի վրա կանգնած պետական կազմավորումների շնորհիվ: Այդ կազմավորումները իրենց հերթին հաղթահարվեցին շնորհիվ հեղափոխական ընդհանուր այն արշավի, որը պայմանավորված էր նյութական արտադրության զարգացումով[89]: Ն. Մառի հայեցակետը, Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, նրան մոտեցրեց ընդհուպ հին աշխարհից դեպի միջնադարը կատարված հեղափոխական անցման գիտական պատմականության ըմբռնումին: Ավելորդ չենք համարում հավելել, որ Աշ. Հովհաննիսյանը այստեղ ևս տիրապետում էր գիտնականի իր մտքերը հիմնավորելու բարդ արվեստին:

Աշ. Հովհաննիսյանի տեսադաշտից դուրս չի մնացել հայկական հարցի շուրջ երիտթուրքական պարագլուխներից մեկի՝ Ջեմալ

[89] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նույն տեղում, էջ 113:

փաշայի կեղծարարության քննադատությունը: Գիտնականի խորաթափանց միտքը Հայկական հարցի լուծումը հայոց մեծ եղեռնի հասցնելու ներքին թուրքական մթնոլորտը և միջազգային դիվանագիտության պահվածքը քննում է համապարփակ իմաստավորմամբ, փաստերի ու մտքերի համակցությամբ հիմնավորում երիտթուրքական ոճրագործության հեռահար նպատակը: Ջեմալ փաշայի 1919 թ. գրած «նոթերի» 1923 թ. ռուսերեն հրատարակությունն ունեցել է այս տեսքը՝ «Джемал-паша, записки, 1913-1919», изд. Заккрайкома РКБ (б), 1923: Հուշագրությունների գիրքը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ ա) Կոստանդնուպոլսի 1913 թ. նահանգապետը, բ) Բալկանյան երկրորդ պատերազմի սկիզբը և վերջը, գ) Ռազմածովային նավատորմում, դ) Չորրորդ բանակի հրամանատարի պոստում, ե) Էքսպեդիցիան դեպի Սուեզի ջրանցք, զ) Բանակն անապատում, է) Գազայի պաշտպանությունը, ը) Արաբների ապստամբությունը, թ) Հայկական հարցը:

Աշ. Հովհաննիսյանի 1927 թ. հրատարակածը ընդգրկում է երիտթուրք ոճրագործի «նոթերի» միայն վերջին՝ «Հայկական հարցը» գլուխը: Այն գերմաներեն հրատարակությունից թարգմանել է Ա. Աթանասյանը:

Աշ. Հովհաննիսյանն իր առաջաբանում անհրաժեշտ է համարում որոշ տեղեկություններ տալ Ջեմալ փաշա անհատի մասին. Ահմեդ Ջեմալը երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքերի ղեկավար եռյակի անդամ, հայոց Մեծ եղեռնի իրագործման գլխավոր հանցագործներից էր, սահմանադրական Թուրքիայի ռազմական և պետական ականավոր մարդկանցից: Առաջին աշխարհամարտից առաջ վարել է պատասխանատու վարչական և ռազմական պաշտոններ, վերջում ստանձնելով ծովային գործերի նախարարի պոստը: Առաջաբանում Աշ. Հովհաննիսյանի նպատակն է եղել ցույց տալ Ջեմալ փաշայի գրառումների կեղծարարությունը, գրառումներ, որոնցում տեղ են բռնում այն առարկումները, որ հեղինակն ասում է ռուս և եվրոպական «հայրենասերներին» տաճկահայ շարժման մասին: Նրա

խորհրդածություններն այս առումով մի բանավեճ է առաջին հերթին ցարական Ռուսաստանի քաղաքականության և այդ քաղաքականության պաշտպան Ա. Մանդելշտամի հետ: Նպատակ ունենալով ընթերցողին լիակատար գաղափար տալ բախվող տեսակետների մասին, Հայաստանի հեղափոխության թանգարանը, որպես հրատարակիչ, գրքի վերջում ընդարձակ հավելվածներ է տեղակայել Մանդելշտամի գրքից: Ընդսմին նշենք, որ Ջեմալ փաշայի «Հայկական հարցի» հրատարակությունը Աշ. Հովհաննիսյանի նախաձեռնությունը չէ: Նա այդ գրքի առաջաբանը գրել է Դավիթ Անանունի հանձնարարությամբ: Հայաստանի հեղափոխության թանգարանում ստեղծվել էր «Հայոց հարցի» ուսումնասիրման հանձնաժողով, որը կազմել էր ուսումնասիրությունների և հրատարակությունների ծրագիր: Թանգարանը լույս է ընծայել «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտը» խորագրով ժողովածուն, արդեն իսկ Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով: Այնպես որ Ջեմալ փաշայի «Հայկական հարցի» գրառումների հրատարակությունը Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով գալիս է հաստատելու այդ ծրագրի կատարման շարունակականությունը: Ջեմալ փաշայի քաղաքական և պետական դերակատարության մասին Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ 1914 թվականին, Էնվեր փաշան, որոշ հարցերում տարակարծիք լինելով Ջեմալի հետ և երկյուղ կրելով նրա սաճող ազդեցությունից մայրաքաղաքում՝ Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատարի պաշտոնով հեռացնում է նրան Կ. Պոլսից: Որպես Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար, Ջեմալը գործուն մասնակցություն է ունեցել Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից հայերի զանգվածային տեղահանությանն ու կոտորածներին, արյան մեջ խեղդել է Ուրֆայի հայերի ինքնապաշտպանությունը: Ջեմալն է ճնշել արաբների ազատագրական շարժումները Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Պաղեստինի վրայով Ջեմալը ղեկավարում է թուրքական ուժերի արշավանքը դեպի Սուեզի ջրանցքը, նպատակ ունենալով անմիջական հարված հասցնել անգլիական տիրապետությանն Արևելքում: Սակայն ի վերջո ձախողվում է:

1917 թ. նա վերադառնում է Կ. Պոլիս՝ ստանձնելով իր նախկին պաշտոնը ծովային գործերի նախարարությունում: 1918 թ. պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո Ջեմալը փախչում է Գերմանիա: 1919 թ. Կ. Պոլսի ռազմական ատյանը հեռակա կարգով մահվան է դատապարտում Ջեմալին: Նա ի վերջո սպանվում է հայ վրիժառուների կողմից:

Ջեմալ փաշան իր գրառումներում փորձել է արդարացնել իր և իր գործակիցների հանցագործությունը՝ հայ-թուրքական հարաբերությունների վատթարացման գործում մեղադրելով Ռուսաստանին: Ավելին, Ջեմալը փորձում է հերքել իր մեղսակցությունը 1915-1916 թվականների հայերի զանգվածային տեղահանությանը և զանգվածային ջարդերին: Նշելով, որ ինքը ոչ մի մեղսակցություն չի ունեցել այդ ամենի մեջ, նա ապագային է թողնում պարզելու հայկական աղետի պատկերը և դրա հետ կապված իր քաղաքական ընկերների գործողությունների շարժառիթները: Բայց նաև ընդգծել է, որ թուրքական բանակի թիկունքում հայերը ծրագրել էին մի ապստամբություն, որը կարող էր վերացնել օսմանյան տիրապետությունը Փոքր Ասիայում: Կառավարությունը, նկատում է Ջեմալը, հայերի տեղահանությունը համարել է թուրք և քուրդ ազգաբնակչության պաշտպանության, զորքի և օսմանյան պետության քաղաքական գոյության տեսակետից միակ դրական և կտրուկ միջոցը: Որտեղ փնտրել իսկական ճշմարտությունը հարցին, Ջեմալն առանց տատանվելու պատասխանում է՝ խտացած այն ատելության մեջ, որ XIX դարի կեսերից ի վեր բուն է դրել հայերի և թուրքերի սրտերում: Հեղինակի կարծիքով, այդ ատելությունը սկիզբ չի առել իրենց՝ ժողովուրդների մեղքով: Երկու ժողովուրդներին իրար դեմ հանողը մոսկովյան քաղաքականությունն է: «Մոսկովները», պնդում է Ջեմալը, այլ ցանկություն չունեին, քան թուրքերին սպանելը և նրանց հազարամյա ազգային հուչակը ոչնչացնելուց հետո, թուրքերի ժառանգությունը գրավելը: Մոսկվացին է, որ արյան մեջ լողալու մասին է միայն հոգում, նա է, որ գրգռել է հային թուրքի դեմ: Սրա հետևանքն այն եղավ, շարունակում է Ջեմա-

լը, որ եթե թուրքերը ցանկանում էին ապահովել իրենց կյանքը, պետք է կոտորեին հայերին...:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, ազգայնամոլությունը և դասակարգային նախապաշարումը հնարավորություն չեն տալիս պանթուրքիստ Ջեմալին ըմբռնելու և վեր հանելու երևույթները իրենց սոցիալ-քաղաքական կապակցության մեջ: Նշելով մոսկովյան քաղաքականության դերը հայկական շարժման և «Հայոց հարցի» ձևակերպման մեջ, Ջեմալը դիտավորյալ շրջանցել է այդ քաղաքականության սոցիալ-դասակարգային բովանդակությունը: Ավելին, ձևակերպելով իթթիհատականների պանթուրքական ընդհանուր տեսակետը, երիտթուրքական կառավարության տապալումից հետո իսկ՝ անգամ 1919 թվականին, Ջեմալը հետամուտ էր թուրքերի ղեկավարությամբ անդրկովկասյան դաշինք ստեղծելու «մոսկովյան» ներխուժման դեմ՝ Կովկասյան լեռնաշղթայի այս կողմը ռազմաքաղաքական պատնեշ ստեղծելու ձգտմամբ: Որ Անդրկովկասում բուրժուազգայնական կուսակցությունների տիրապետության ժամանակաշրջանում թուրքերը՝ ինչպես ջախջախված երիտթուրքերը, այնպես էլ նրանց հաջորդած քեմալականները, չէին հրաժարվել ռուսներին Անդրկովկասից վերջնականապես «պուրս քշելու» մտքից, բացարձակ ճշմարտություն է: Ռուսական «վտանգը» շարունակում էր մղձավանջի մեջ պահել թուրքական համառող հետադիմությանը, որը Ռուսաստանի նկատմամբ նոր չէ որ որոճում էր պանիսլամական ծրագրեր, Բաքուն դիտում էր որպես Թուրանի բանալի, իսկ Անդրկովկասի նվաճման գործում գործուն ուժ էր դիտում աղրբեջանցի բեգական և աղալարական վերնախավերին: Ավելի քան իրենց պանիսլամական և պանթուրքական ծրագրերի իրացման նպատակով, թուրքերը նույնիսկ մտածում էին օգտագործել Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների կառավարություններին: Պատահական չէ, որ 1919 թ. գրված Ջեմալ փաշայի «Գրառումների» վերջում ուղղակի ասված էր.

«Եթե...մենք չորսս՝ Օսմանյան կայսրությունը, Աղրբեջանական, Վրացական և Հայկական հանրապետությունները, Մերձավոր Արևելքի ժողովուրդների հետ միասին դաշինք չկնքենք Ռուսաստանի

դեմ՝ մեզ պաշտպանելու համար, եթե մենք համերաշխ չգործենք հանրապետության կազմավորմանը Հյուսիսային Կովկասում, մենք կասկած չունենք, որ նորից կդառնանք Ռուսաստանի զոհը, որը միշտ ձգտել է մեզ իր լծի տակ գցելու..., որ հարկավոր է «բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի թույլ չտանք, որ ռուսական հեղեղը անցնի կովկասյան լեռնաշղթայով: Այդ նպատակի համար այդ չորս պետությունները պետք է միմյանց միջև կնքեն պաշտպանողական դաշինք, որն ուղղված լինի մոսկվացիների ներխուժման դեմ»[90]:

Զարմանալին այն է, որ ձախողվելով իր «մարգարեություններ»-ի մեջ՝ նա այնուհանդերձ հույս ուներ, թե կհաջողվի կազմակերպել որպես հանրապետություն նաև Հյուսիսային Կովկասը՝ այն հարավի հակահեղափոխական ֆեդերացիայի մեջ առնելու համար:

Պանթուրքիստական մտածողությունը, ըստ Աշ. Հովհաննիսյանի, չի լքում Ջեմալին «Հայկական հարցի» քաղաքական ներքին շարժիչները երևան հանելու գործում: Ցարիզմի արտաքին ծավալապաշտական քաղաքականությունը և առհասարակ իմպերիալիզմի քաղաքական մեքենայություններին թերևս կարելի է վերագրել ամեն կարգի չարիք: Սակայն պարզ է նաև, որ արտաքին չարիքը արևմտահայության 1915-1916 թթ. հայոց Մեծ եղեռնին չէր հասցնի, եթե Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական ներքին պայմանները նպաստավոր միջավայր չստեղծեին օտար միջամտության համար: Կա՞ր այդ միջավայրը: Այս հարցին երիտթուրքերի պարագլուխը ոչ միայն չունի դրական պատասխան, այլև մինչև XIX դարի կեսերը Արևելյան Անատոլիան նրան ներկայանում է որպես «երկիր դրախտավայր», իսկ հայերի և թուրքերի հարաբերությունները ողջ կայսրության մեջ՝ «որպես լիակատար իդիլլիա»: Կարծես ավելի վաղ անցյալում չեն եղել ազգամիջյան ընդհարումներ, հակաթուրքական շարժումներ, ամբողջ պետությունում ամեն ինչ եղել է խաղաղ ու ներդաշնակ: Իր գրառումներում երիտթուրք ջարդարարը հիշում է XIX դարի կեսերին Եվրոպայում արծարծվող ազգամիջյան շարժումները, որով տարվում էր նաև առևտրական կամ ուսում առնելու նպատակով

[90] Джемал-паша, Записки 1913-1919, изд. Заккрайкома РКП(б). Тифлис. стр. 238-239.

արտասահման ուղևորված հայ երիտասարդությունը: Սակայն հայ երիտասարդության այդ արտահոսքին իսկ երիտթուրք գործիչը հիշատակում է որպես ազդեցություն՝ մատնանշելու համար դարձյալ, թե ինչպես ռուս դիվանագիտությունն այն ողջունեց «որպես աստվածային մի պարգև» հայերին թուրքերի դեմ գրգռելու համար:

Ահմեդ Ջեմալը գտնում է, որ հայ կղերը, սեղանավորը, առևտրականը, քաղքենին կամ գեղջուկը այս կամ այն իմաստով մեղսակից չեն ազգային շարժմանը: Հայկական շարժումը չի ունեցել իր զուտ ներքին սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական դրդիչները: Թուրքիայի հասարակական-քաղաքական միջավայրը համապատասխան մթնոլորտ չի ստեղծել այդ շարժման համար՝ «ահա Ջեմալի պատմահայեցողությունը»: Այսպես է հեգնում Աշ. Հովհաննիսյանը:

Ջեմալ փաշան սուր խոսք չի ուղղում անգամ հայ «հեղափոխական» կազմակերպությունների դեմ: Ինչո՞վ բացատրել այս ներողամտությունը: Ակներև է Ջեմալի ձգտումը՝ միայն արտաքին գործոնների, միջազգային քաղաքական բանսարկությունների ներսը փոխադրել ամբողջ պատասխանատվությունը, քանզի նրա նպատակն է ազատել որևէ պատասխանատվությունից թուրք տիրող վերնախավերին:

Այդ է պատճառը, որ նա կշտամբանքի ոչ մի խոսք չի ուղղում հին Թուրքիայի սոցիալ-քաղաքական վարչակարգի հոռի հատկությունների մասին: Ջեմալ փաշան «մոռանում է», որ դարեր շարունակ Թուրքիայում տիրել է մի վարչակարգ, որին տապալելու համար իր իսկ կուսակցությունը հարկ է համարել Հայ հեղափոխական դաշնակցության հետ համագործակցելով՝ գլուխ բերել 1908 թ. «պանծալի» հեղափոխությունը:

Իր գրառումների հենց առաջին էջում Ջեմալը գրում է, որ մենք՝ երիտասարդ թուրքերս հայերին և հատկապես հայ հեղափոխականներին հույն և բուլղար հեղափոխականներից անհամեմատ գերադասում ենք: Հայերն ավելի շիտակ են և ավելի քաջ, քան հիշածս երկու ազգերի հեղափոխականները. նրանք ավելի անկեղծ են իբրև բարե-

կամներ և ավելի համառ՝ երբ ատում են: Մենք խորապես համոզված ենք, որ թուրքերի և հայերի մեջ գոյություն ունեցող թշնամության միակ հեղինակը եղել է ռուս դիվանագիտությունը: Եվ իրոք. վաթսուն տարիներից ի վեր, կամ ավելի ճիշտ, 1877-1878 թվականների ռուս-տաճկական պատերազմից դեռ տաս տարի առաջ այդ երկու ցեղերի մեջ կրոնական հողի վրա ծագած ընդհարման ոչ մի դեպք չի եղել, ուրիշ խոսքով՝ մահմեդականների և քրիստոնյաների մեջ մտքերի տարաձայնություն չկար...Ամբողջ Անատոլիայում, Ռումելիայում, նույնիսկ Կ. Պոլսում չկար մի հայ, որ հայերեն խոսել կարողանար:

Բոլոր դպրոցներում թուրքերենը հայ տառերով էին սովորեցնում, իսկ հայ եկեղեցիներում պատարագը թուրքերեն լեզվով էին մատուցվում: Հայերի համար բաց էին պետական ամենակարևոր պաշտոնները, նրանք Օսմանյան կայսրության ամենահավատարիմ հպատակներն էին համարվում[91]:

Ինչպիսի՞ հայասիրություն, ինչպիսի՞ հայ-թուրքական բարեկամություն՝ «հայ եկեղեցիներում պատարագը թուրքերեն լեզվով էր կատարվում»: Այնպես որ, ըստ Ջեմալի մայրաքաղաքի ռուսական դեսպանության առաջին թարգման Անդրեյ Մանդելշտամը իզուր է հենվում պատմական փաստերը հեղաշրջող մի շարք պատմաբանների ասածների վրա և թուրքերի մեծահոգությունը քրիստոնյաների նկատմամբ բացատրում դեպի քրիստոնեությունն ունեցած արհամարհանքով[92]:

Ըստ Ջեմալ փաշայի, «մինչև 1856 թվի Ղրիմի պատերազմի վերջը թուրքերը հայերի հետ ամենամեծ համերաշխության մեջ էին գտնվում և նրանք հայերի վերաբերմամբ ոչ մի բռնություն չեն արել: Սակայն այն օրից, երբ ռուսներն իրենց ագահ և ավազակաբարո հայացքը գցեցին Օսմանյան կայսրության վրա, նրանք գտան, որ քաղաքական տեսակետից իրեն ձեռնտու կլինի, եթե նրանք Ռումելիայի

---

[91] Տե՛ս Ջեմալ-փաշա, Հայկական հարցը (Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով), Երևան, 1927, էջ 1:

[92] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

քրիստոնյա տարրերին իրենց հաջողության գործիք դարձնեն»[93]: Ջեմալը ջանք չի խնայում համոզել, որ հետագայում ռուսական դիվանագիտությունը շատ ավելի հաշվի էր առնում այն հանգամանքը, որ Բուլղարիայի անկախություն ստանալուց հետո ինքն այլևս զրկվելու է Թուրքիայի ներքին գործերին միջամտելու առիթից: Եվ քանի որ ռուսական կառավարությունը չէր ուզում այդ իրավունքը կորցնել, ուստի հենց այդ նպատակը աչքի առաջ ունենալով՝ Սան-Ստեֆանոյում Թուրքիայի հետ կնքած պայմանագրի մեջ մտցնում է հայերի վերաբերյալ հատուկ մի հոդված, որը հետագայում փոքր ինչ փոփոխված ձևով մտցվում է Բեռլինի պայմանագրի մեջ: Եվ ահա սրանից հետո է, որ, ըստ Ջեմալի, հայերի, թուրքերի և քրդերի հարաբերությունները ծայրաստիճան սրվում են: Թուրքական պետության մեջ ամենուրեք ոչ միայն մեծ քաղաքներում, այլև փոքր գյուղերում անգամ առաջ են գալիս կազմակերպված հայ հեղափոխական գաղտնի կոմիտեներ, որոնք ընդհանուր ջանք են թափում հայերին գրգռելու թուրքերի և քրդերի դեմ, պահանջում են կազմել մի անկախ, առանձնաշնորհված Հայաստան, որը բաղկացած պիտի լիներ Արևելյան Անատոլիայի վեց վիլայեթներից: Այս ծրագիրը, հասկանալի է, պետք է առաջ բերեր առաջին հերթին այդ վիլայեթների մահմեդականների հակահայկական տրամադրությունները: Թուրքական կառավարությունը և թուրք վերնախավը այդ ծրագիրը համարում էր ոչ այլ ինչ, եթե ոչ ռուսների կողմից սարքված մի պատրվակ գործուն մասնակցություն ունենալու Օսմանյան կայսրության տարածքի անդամահատմանը: Ջեմալ փաշան ամենահայտնի պատմական իրողությունները և երևույթները գլխիվայր է շրջում: Նա անգամ ենթագիտում է արդուլհամիդյան 1890-ական թվականների հայկական կոտորածների էությունը՝ գրելով, թե «1894–96 թվականներին հայերն ուժգին գործունեություն սկսեցին և ամենուրեք մեծ ու փոքր ապստամբություններ առաջացրին: Այսպիսով ահա հայկական խռովությունները մինչ այն աստիճան գրգռեցին այդ երեք, մինչ այդ գրեթե հինգ-վեց դար շարունակ իրար կողքին խաղաղ ու հաշտ ապրող ազգերին, որ այժմ

[93] Նույն տեղում, էջ 26:

դրանք պատրաստ են հարձակվել իրարու վրա՝ իրար արյունով ներկելու Անատոլիայի հողը և նույնիսկ Կ. Պոլսի փողոցները»[94]:

Ջեմալ փաշան փայլուն տիրապետում է բացահայտ սուտը աղավաղված ճշմարտությունն ներկայացնելու կեղծարարության արհեստին: Նա «պատապարտում» է հայերի աբդուլհամիդյան կոտորածները, որովհետև «պետություն կառավարելու մասին» ունեցած իր հայացքներով ինքը զզվանքով մերժում էր «հեղափոխությունը խեղդելու նպատակով մասսայական կոտորածներին դիմելու սիստեմը. այդ միջոցը բացի այն, որ երկրին մեծ վնաս է հասցնում, միաժամանակ արատավորում է...ժողովրդի պատմությունը»[95]: Երիտթուրք ցեղասպանը փորձում է համոզել, որ նման հայացք ունեին բոլոր այն հայրենաերները, որոնք խմբված էին «Միություն և առաջադիմություն» կազմակերպության մեջ: Վերջիններս իբր թե մերժում էին աբդուլհամիդյան հայկական կոտորածների քաղաքական մարտավորությունը, այն համարում Համիդ Երկրորդի սխալներից մեկը, որով նա իր բռնակալական վարչակարգն ամրակայելուն էր հետամուտ: Այս տեսակետից ելնելով թե՛ Եվրոպայում, թե՛ հայրենիքում մերկացնում էին Աբդուլ Համիդին, որը հայկական կոտորածներով Օսմանյան կայսրության հեղինակությանը մեծ վնաս էր պատճառում: Ջեմալ փաշան դիտավորյալ անտեսում է այն իրողությունը, որ օրավուր խորացող անգլո-ռուսական հակամարտությունները ավելի էին ուժեղացնում գերմանա-թուրքական մտերմությունը: Այդ մտերմությունն այնքան ուժեղացավ, որ սուլթանն իր զորքերը դրեց գերմանական միսիայի հսկողության տակ՝ այն վերակառուցելու և վերազինելու նպատակով: Այդ հանգամանքն անհանգստացնում էր Ռուսաստանին, որը Գերմանիային զսպելու համար տակավին 1893 թ. կարողացավ ավստրո-ռուսական համաձայնագիր կնքել Բալկաններում գոյություն ունեցող վիճակը պահպանելու համար, իսկ 1900 թ. հատուկ համաձայնագիր կնքեց Թուրքիայի հետ, որի համաձայն, Թուրքիան պարտավորվում է Կովկասին սահմանակից շրջաններում ուրիշ պե-

[94] Նույն տեղում, էջ 12:
[95] Նույն տեղում:

տություններին արգելել երկաթուղի և այլ ճանապարհներ կառուցել, իսկ Ռուսաստանը թույլ չի տա 1896 թ. դեպքերից հետո Թուրքիայից Կովկաս գաղթած հայերին նորից Թուրքիա վերադառնալ: Ջեմալ փաշան 1909 թ. Ադանայի հայկական կոտորածները համարում է «հայ-թուրքական արյունալի կոտորածներ»: «Եվ քանի որ,- շարունակում է Ջեմալը,- այդ դեպքերից չորս ամիս հետո, այն է՝ 1909 թվի օգոստոսի կեսին ես Ադանայի նահանգապետ նշանակվեցի, ուստի թույլ եմ տալիս պնդել, որ ոչ ոք ավելի լավատեղյակ չէ այդ արյունահեղության հոգեբանական շարժառիթներին, մի արյունահեղություն, որը մեր սահմանադրության պատմության ամենացավոտ էջերից մեկն է կազմում»[96]:

Այնուհետև կեղծարարը շարունակում է, որ «Այս արյունահեղությանն Ադանայում զոհ գնացին 17 հազար հայեր և հազար ութ հարյուր հիսուն թուրքեր: Այս թվերը ցույց են տալիս, որ եթե Ադանայում հայերը մեծամասնություն կազմեին, տեղի կունենար դրա հակառակը-հայերը մեծ թվով թուրքեր կկոտորեին: Գալով փոխադարձաբար գործած վայրագություններին՝ հակառակորդները ոչ մեկը մյուսից հետ չէր մնում: Հայերն ամեն մի հարմար դեպքից օգտվել են թուրք կանանց ու երեխաների վրա հարձակվելու. թուրքերն անում էին նույնը. և այս երկու կատաղած ազգերն ապացուցեցին, որ այդ կողմից նրանց մեջ ոչ մի տարբերություն չկա»[97]:

Ջեմալ փաշան փորձում է համոզել, որ կոտորածների նախաձեռնողները եղել են հայերը, որոնք օգտվելով սահմանադրության բերած ազատությունից, սկսեցին իրենց վերապահել ամեն ինչ՝ ընդհուպ Օսմանյան պետության քայքայման միջոցով նաև հայկական պետականության վերականգնման ցնորքներ: Երիտթուրք ջարդարարը դրվատում է այդ ժամանակաշրջանի իր գործունեության գերմարդասիրությունը: Գրում է, որ երբ ինքը Ադանայի գեներալ-նահանգապետ է նշանակվում, կառավարությունն իր տրամադրության տակ երկու հարյուր հազար ֆունտ-ստերլինգի վարկ է բացում, որից

---

[96] Նույն տեղում, էջ 21-22:
[97] Նույն տեղում:

հարյուր հազարը ծառայելու էր հայերի և թուրքերի տների վերաշինության գործին...Շնորհիվ իր կողմից ձեռք առնված միջոցների, չորս ամիսների ընթացքում վիլայեթի հայերի վնասված տները նորից շինվում են, և Ադանայում չի մնում մի հայ ընտանիք, որի կարիքները բավարարված չլինեին: Հակիրճ՝ Ջեմալն իր ինքնագովազդը ձևակերպում է այսպես. ընդամենը հինգ-վեց ամիսների մեջ հայերը նորից ամբողջովին կպան իրենց առևտրին, երկրագործությանն ու արհեստներին, և հայերի ու թուրքերի միջև նախորդ դեպքերից մնացած ոչ մի հետք չէր երևում[98]:

Ահմեդ Ջեմալը բացահայտ ստում է, երբ գրում է, որ ինքը ոչ մի տեղեկություն չի ունեցել մեծ պատերազմի սկզբին և ընթացքում հայերի տեղահանության վերաբերյալ կառավարության կայացրած որոշման մասին. որ այդ մասին առաջին անգամ ինքն իմացել է վիլայեթներին ուղղված կառավարության այն հաղորդագրությունից, ըստ որի հայերը պետք է ժամանակավորապես Միջագետք տեղահանվեին և այնտեղ մնային մինչև պատերազմի վերջը: Ինչպես վերևում նշեցինք, Ջեմալ փաշան հայերի տեղահանության և ոչնչացման հիմնապատճառները որոնում է Ռուսաստանի նվաճողական քաղաքականության մեջ: Նա ուղղակի գրում է. «Ես այն հաստատ համոզմունքն ունեմ, որ հայերը ծրագրել էին մի ապստամբություն, որը վտանգում էր մեր բանակի թիկունքը և որը, ըստ հանգամանքի, կարող էր նրան ոչնչացման տանել: Այդ ունենալով աչքի առաջ, իմ ընկերները եկել էին այն որոշմանը, որ անհրաժեշտ է ամբողջ հայ ժողովուրդը մի այնպիսի երկիր տեղափոխել, որ նրանք մեզ ոչ մի վնաս չէին կարող հասցնել. այնինչ հայերին իրենց տեղերում թողնելով, նրանք օսմանյան հայրենիքը ենթարկած կլինեին մի կատաստրոֆայի, որը տեղի կունենար, եթե Ռուսաստանը Փոքր Ասիան տիրեր: Ինչ վերաբերում է այն անցքերին, որ տեղի են ունեցել այս աքսորման ընթացքում, այդ պետք է վերագրել այն խտացած ատելությանը, որ վաթսուն-յոթանասուն տարիներից ի վեր գոյություն ուներ թուրքերի, քրդերի և հայերի միջև: Թող անիծյալ լինի մոսկովյան այն քաղաքա-

[98] Տե՛ս նույն տեղում:

կանությունը, որի հետևանքով երեք ազգերի, որոնք դարերի ընթացքում խաղաղ ապրել էին իրարու հետ, իրարու մահացու թշնամի դարձրեց»[99]: Այս բոլորից հետո Ջեմալ փաշան կատարում է հետևյալ եզրակացությունը՝ հայ և թուրք ազգերի հարաբերությունների լուսաբանման խնդրում պետք է լինել «արդար»: Եվ որպես իսկական երիտթուրք նա տալիս է օրինակը՝ ստապատիր դատողություններով հիմնավորել, որ հայկական կոտորածների պատճառ դարձան Օսմանյան կայսրության զանազան մասերում նրանց ապստամբությունները թուրքական իշխանությունների դեմ: «Դարձյալ նույն ռուսական քաղաքականությանն ենք պարտական,- շարունակում է Ջեմալը,- որ Մորգենթաուի նման մարդիկ, իրենց հիմար ու թուլամիտ համախոհների հետ, ամոթը մի կողմ թողած, բոլոր մեղքը թուրքերին են վերագրում և ամբողջ աշխարհի մամուլը լցնում են իրենց աղմուկով»[100]:

Ջեմալը ջանում է ամբողջովին հերքել նաև Ա. Մանդելշտամի այն պնդումը, թե հայերը հազիվ կարողանում էին մի շարք տեղերում կազմակերպել միայն զինյալ ինքնապաշտպանություններ, որ դրանք ապստամբություններ չէին: «Եթե Մանդելշտամն այնուհետև պնդում է,- եզրագծում է պանթուրքիստ կեղծարարը,- որ այդ բոլոր եղելությունները ապստամբություն լինելուց շատ ու շատ հեռու էին, և որ նրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ դիմադրության փորձեր, որոնք զինված ինքնապաշտպանության դիմելու իրավունք էին տալիս նրանց, այն ժամանակ պետք է ես նրա ուշադրությունը հրավիրեմ այն երևույթի վրա, որ նրա դաշնակիցները՝ ֆրանսիացի և անգլիացի սպաները, որոնք այդ ապստամբության իսկական կազմակերպիչներն էին, սրանք նրա այդօրինակ բացատրության վրա կծիծաղեին: Այս է, ահա, հայկական կոտորածների մասին իմ ունեցած համոզմունքն ու հայացքը»[101]:

---

[99] Նույն տեղում, էջ 53:
[100] Նույն տեղում:
[101] Նույն տեղում, էջ 87:

Ջեմալ փաշան առաջարկության ձևով պարտադրում է հետևյալը՝ եթե ներկա վիճակում հայկական փոքրամասնությունը ցանկանում է օսմանների մեջ մնալ, նա դրանով կապացուցի, որ գնահատում է հավատարմության զգացմունքը և իսկական օսմանականություն: Ջեմալ փաշայի կարծիքով դա այն միակ միջոցն է, որ ինքը կարող է առաջարկել՝ մեկընդմիշտ թողնել արյունոտ անցյալը հարուստ բախտավոր ապագա կերտելու համար, որ ինքը և իր հայրենակիցները միշտ էլ պատրաստ են ամենալուրջ կերպով բանակռվելու այն բոլոր անձանց հետ, ովքեր Հայկական հարցի համար մի ուրիշ, ավելի լավ լուծում կառաջարկեն: Կարծում ենք մեկնաբանություններն ավելորդ են, քանի որ նրա առաջարկությունում առավել քան երևում է երիտթուրք ղեկավարի պանթուրքիստական իսկական դեմքը:

Ամփոփենք: Ջեմալ փաշայի «Հայկական հարցը» գրառումների մասին Աշ. Հովհաննիսյանի գրած առաջաբանը հայ պատմահրապարակախոսական երգիծանքի փայլուն նմուշներից է: Այն արդիական է եղել ինչպես գրելու ժամանակ, այնպես էլ այսօր, երբ թուրքական հակահայկական կեղծարարությունը շարունակվում է: Պատմագիտական, թե հանրամատչելի հրապարակումներում ամեն ինչ ներկայացվում է խեղաթյուրված: Թուրքական հակահայկական քարոզչությունը կեղծում է այն ամենը, ինչ կապված է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճշմարիտ մեկնաբանությունների հետ:

Աշ. Հովհաննիսյանը միայն պատմաբան չէր, նա նաև բանասիրության և հայ նոր գրականության խորագիտակ մեկնաբան էր: Պատմագիտությունը և բանասիրությունը նրա ուսումնասիրություններում ցուցաղրում էին ներքին միասնություն:

Առավել ճիշտ և դիպուկ՝ Աշ. Հովհաննիսյանը հմուտ պատմաբան էր բանասիրության բնագավառում և հազվագյուտ բանասեր պատմագիտության ասպարեզում: Պատմաբան-բանասերի հետազոտական շրջանակները շատ լայն էին՝ աղբյուրագիտական որոնումներ, տեքստաբանական աշխատանք, մենագրական հետազո-

տություններ, հոդվածներ և ուսումնասիրություններ հայ գրականության պատմության առանցքային այլևայլ հարցերի վերաբերյալ:

Աշ. Հովհաննիսյանի գրականագիտական մերձեցումներն առավել անմիջական դարձան, երբ նա թևակոխեց XIX հարյուրամյակը: Այստեղ արդեն նրա իսկական հերոսները հայ դասական գրողներն ու գործիչներն էին՝ Ալամդարյան, Թաղիադյան, Աբովյան, Նալբանդյան, Պատկանյան, Րաֆֆի, Պռոշյան, Ս. Շահազիզ, Սվաճյան, Ոսկան, Մամուրյան և ուրիշներ: Պատմագրականագիտական ուսումնասիրություններում Աշ. Հովհաննիսյանը հետամուտ եղավ հասնել մի հիմնարար նպատակի՝ վեր հանել գրականության սոցիալական հենքը և գաղափարական հիմնաշերտը, գտնել այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք գեղարվեստական գրականությունը մերձեցնում էին հասարակական մտքի պատմությանը և յուրովի արտացոլում XIX դարի հայ հասարակական կյանքի իրողությունները:

Աշ. Հովհաննիսյանի քննական հայացքը նախապես միտված էր հայ մտավոր մշակույթի պատմության ըմբռնումը ավանդական ազգային մեկնաբանությունների նեղ ոլորտից դուրս բերելու և ժամանակի պոզիտիվ մեթոդաբանության ուղեգծի վրա դնելու-միակցելու մտահոգությամբ:

XIX դարի հայ գրականության պատմության մեթոդաբանության հարցերի համակողմանի քննությանն է նվիրված Աշ. Հովհաննիսյանի «Գրական նկատողություններ» («Խորհրդային գրականություն», 1934, N 3, 4, 1935, N 1) ընդարձակ հոդվածը: Հայոց նորադարյան գրականության գիտական պատմության առաջին փորձը, ինչ խոսք, մեթոդաբանական լուրջ ճեղքվածքներ ուներ, որը չէր կարող անտես մնալ քննադատության ուշադրությունից, ինչպես և չմնաց: Չանտեսենք, որ գռեհիկ սոցիոլոգիզմի բեռը չափազանց ծանր նստեց գրականության պատմության հեղինակների մտավոր հայեցության վրա: Իրականում ստացվեց ոչ թե գրականության պատմություն՝ գեղարվեստական զարգացման օրինաչափությունների հենքի վրա, այլ մի տեսակ հասարակական հոսանքների սխեմաներ՝

սրանց վրա գրողների և գրական երևույթների մեխանիկական համադրությամբ:

«Խորհրդային գրականություն» ամսագրի 1934 թ. 3-4-րդ և 1935 թ. առաջին համարներում տպագրած իր ծավալուն հոդվածում Աշ. Հովհաննիսյանը փաստորեն սկզբնավորում է Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր» ժողովածուի առաջաբանում առաջադրած այն միտքը, թե 1860-ական թվականների տիպական և իսկական լուսավորիչը հայ կյանքում լիբերալ-պահպանողական Ստ. Նազարյանցը չէր, այլ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը[102]: Ժամանակաշրջանի բանաստեղծության «բուրժուական-լիբերալ» և «բուրժուական-մարտական ազգայնական» հոսանքները «Հայ գրականության պատմության» երկրորդ հատորում ներկայացված է Վահրամ Թերզիբաշյանի երկու հոդվածով, որոնցից առաջինը վերաբերում է Ս. Շահազիզին, երկրորդը Ռաֆայել Պատկանյանին (Հայ գրականության պատմությունը պետք է հրատարակվեր յոթ հատորով): Իր առաջին հոդվածում Սմ. Շահազիզի լիբերալիզմի վրա դնելով շերտը Թերզիբաշյանը իրավացի է անշուշտ, երբ քննության է առնում բանաստեղծի վաղ շրջանի գործերը, սակայն ճիշտ չէ, «Լևոնի վիշտը» պոեմի հեղինակի նկատմամբ: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Թերզիբաշյանի կարծիքով Շահազիզը եղել է բուրժուական լուսավորության գործիչ Ստ. Նազարյանի գաղափարական աշակերտը, որը սակայն 1860-ական թվականների քաղաքական-սոցիալական պայմաններում՝ մեծ ռեֆորմների էպոխայում իր ստեղծագործության մեջ արտահայտել է ազատագրական-դեմոկրատական գաղափարներ, հիմնականում մնալով բուրժուական լիբերալ, 60-ական թվականների տիպական լուսավորիչ:

Չպետք է մոռանալ, որ բանաստեղծական երկ լինելուց առաջ, «Լևոնի վիշտը» քաղաքական առաջնակարգ փաստաթուղթ է Մ. Նալբանդյանի քաղաքական նշանավոր պամֆլետներից հետո ժամանակի ամենանշանակալից երևույթներից մեկը: Որպես քաղաքա-

---

[102] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Գրական նկատողություններ, «Խորհրդային գրականություն», 1935, N 1, էջ 126:

կան գեղարվեստական փաստաթուղթ, անհամեմատ ավելի ուշագրավ է, քան որպես գեղարվեստական կատարելություն: Ս. Շահազիզի պոեմին բաժին է ընկել կիսելու սուր քաղաքական միտում պարունակող այն ստեղծագործություններից շատերի բախտը, որոնց մասին կարելի է ասել՝ լավ աշխատություն է, բայց կատարված է շատ ոչ բարձր մակարդակով: Այստեղից բնավ չի բխում, թե իբրև բանաստեղծական գործ անորակ է: Երբեք:

1860-ական թվականներին ռուսահայ գրականության մեջ չկա ծավալուն մի այլ գործ, որ այդ տեսակետից մրցել կարողանար «Լևոնի վշտի» հետ: Աշ. Հովհաննիսյանը հիշատակում է նյութեր (դրանք նա տեղաղրում է Նալբանդյանի «Անտիպ երկերում»), որոնք պարզաբանում են այն իրողությունը, որ «Լևոնի վիշտը» Նալբանդյանին համախոհ բանաստեղծի կողմից կատարված գրական-քաղաքական մի յուրօրինակ գրոհ էր, որի ղեկավարող նպատակն էր՝ մեծարել պետրոպավլովյան ռավելինի կալանավորին՝ անարգանքի սյունին գամելով նրա հակառակորդներին: Դա հաստատում է ինքը՝ երկը: Հետագայում Սմ. Շահազիզը պատմել է, թե երբ լույս է տեսնում «Լևոնի վիշտը» Խաչատուր Լազարյանը հատուկ քննություն է նշանակում ճեմարանում պաշտոնավարող հեղինակի վերաբերյալ, քանի որ հարց էր դրվում Լազարյան ճեմարանից նրան վտարելու մասին: «Լևոնի վշտի» հերոսը Մ. Նալբանդյանի կրկնակն է:

Դեկաբրիստական շարժման առաջնորդ Պավել Պեստելի օրինակով (Ալ. Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» կարդալուց հետո Պ. Պեստելն ասել է՝ կոմեդիայի հերոս Չացկին ես եմ) Մ. Նալբանդյանը բարձրաձայնել է՝ «Լևոնի վիշտը իմ վիշտն է»: Սմ. Շահազիզի պոեմի սյուժեն Նալբանդյանի 1860 թ. ուղևորությունն է Կովկաս և արտասահման: Պոեմն անդրադարձնում է Նալբանդյանի և Գաբրիել Այվազովսկու, Նալբանդյանի և Խալիբի բախումները: Ակնարկներ կան Նալբանդյանի դեմ լարված դավերի և կալանքի մասին: Կարևորը հարկավ պոեմի գաղափարական բովանդակությունն է, նրա ազգային-քաղաքական միտումը: Պոեմը գրելու պահին Շահազիզը լիակատար գաղափար չուներ Նալբանդյանի աշխարհայացքի

մեջ տեղի ունեցած նոր տեղաշարժերի մասին: Բանաստեղծը չարունակում էր տուրք տալ Նալբանդյանի տակավին վաղեմի, հյուսիսափայլյան շրջանի հայացքներին: Տպավորությունն այնպիսին է, որ Լևոնն ընդհանուր առմամբ վերարտադրում է կարծես Նալբանդյանի 1858-1860 թվականների մանր-բուրժուական լիբերալիզմի հայացքները: Թուրքիայում նա ավելի խիզախ է և կտրուկ: Այստեղ նա ներբողում է ազգային ինքնորոշման սկզբունքը և նրա իրացման համար կոչ է անում զինված ապստամբության, հռչակում հասարակական ապահովության և «բարօրության վերին նպատակը»՝ ժողովուրդների մեծ դաշնակցությունը: Սակայն էականը միայն այս չէ, այլ այն, որ պոեմի հերոսը ազգային ազատագրության իր ծրագիրը շաղկապում է Եվրոպայում արծարծվող ազգային-ապստամբական շարժումների հետ. նա ուղղում է իր հայացքը դեպի Գարիբալդիական Իտալիան, դեպի Եվրոպայի համադեմոկրատական շարժումը: Պոեմի արարման հավանական խթաններից մեկը 1863 թ. Լեհական ապստամբությունն էր, որի մասին, սակայն, գրաքննական պայմանների բերումով, բանաստեղծը հնարավոր չի համարել խոսք բացելու իր գրվածքի մեջ: Հիմնական, վճռական այս կետերում է հենց, որ գաղափարական միություն ենք տեսնում Շահազիզի և Նալբանդյանի միջև: Այստեղ հեղինակը հեռանում է խոհեմության լիբերալ-քարոզիչ Նազարյանից կամ ազգային-պահպանողական հայացքներով շարժվող Ռ. Պատկանյանից, այլև հենց իր իսկ հետագայում պաշտպանած հայացքներից: «Լևոնի վշտից» 15 տարի անց Շահազիզը հրապարակեց Նազարյանցի ներբողականը, որտեղ հրաժարվում էր երիտասարդական «մեղքերից», արծարծում լիբերալիզմի քաղաքական քարոզչությունը. «Մեր այսօրյան դարի նշանը և հպատակների ընդհանուր հավասարությունը օրենքի առջև. ոչինչ առանձին արտոնություն, ոչինչ դավանաբանական զանազանություն. քաղաքացու միակ արժեքը յուր առաքինությունն է. քաղաքացու միակ վարձը յուր ազատությունն է: Բայց ազատությունը կարող է լինել և ախտաբորբոք և վտանգավոր բան. խանձակոտոր, կապակոտոր ազատությունը ծնում է մտավորական անիշխանություն և գայլաբարո ընչասիրութ-

յուն…Անձնահարգությամբ միայն կարելի է յուր և յուր ընկերի պատիվը և օգուտը ճանաչել, անձնահարգությամբ հնարավոր է միայն պատվել և տերութենական հորինվածները որպես մեր պատվի, մեր կյանքի, մեր ընտանիքի նախապատճառը»[103]:

Անդրադարձ կատարելով հայկական շարժման և ինքնավարության խնդրի մասին, Սմ. Շահազիզը գրում է. «Այս խնդրի լուծումը, անկարոտ և անկախ մնալով մեր ցանկությունից սաստիկ կարոտ է եվրոպական իրավախոհ հրամանին, այլև նույն տեղական անցքերի աջողության…Տալով ասիական նահանգներին այդ ինքնավար իշխանությունը, ինքը Եվրոպան կարող է ահագին օգուտ քաղել դրանից, ***հայերի*** ձեռքով տարածելով յուր ֆաբրիկացիոնի կերտվածքները և լուսավորությունը…»[104]:

Խոսելով «տեղական անցքերի աջողության» մասին Շահազիզը նկատի ուներ թուրքահայերի ապստամբությունը: Նրա համար «խորհրդավոր նահատակություն» էր այդ, որի փորձը պիտի լիներ Հայաստանի ազատությունը՝ ցարի և «մարդասեր Եվրոպայի» շնորհիվ: «Այնուհետև մեր աստվածապսակ Կայսրը, հավատարիմ մնալով յուր ծիրանածին նախորդների քաղաքականության, և հայ ազգին կմեկնե Յուր կարող բազուկը, այն որ տաճկաց բարբարոսության առջև չդիմանալով, տիրաբար բաշխեց և բուլղարներին ազատություն: Եվ մարդասեր Եվրոպան, որ խափչիկների և վայրենի ցեղերի մեջ տարածում է մարդկային իրավունք, կապում է բռնավորին, պաշտպան է հանդիսանում խեղճերին, մի՞թե կներե մահմեդական փարավոններին տանջել ու չարչարել աստծո ժողովուրդը»[105]: Աշ. Հովհաննիսյանը 1930-ական թվականների հայ գրականագիտության մեջ Շահազիզի այս կերպարանափոխության չնկատելը բացատրում է նրանով, որ մտակառույցը հենում էր բացառապես 1860-ական թվականներին Շահազիզի մասին տարածված ոչ ճիշտ կարծիքների վրա: Սակայն դառնանք Սմ. Շահազիզի «Լևոնի վշտի» ժա-

---

[103] «Հրապարակախոս ձայն», Մոսկվա, 1881, էջ 327:
[104] Նույն տեղում, էջ 332:
[105] Նույն տեղում, էջ 350:

մանակաշրջանին: Նշելով պոեմի վրա Ջ. Բայրոնի թողած զորեղ ազդեցությունը, գրականագետ Թերզիբաշյանը կամեցել է բացատրել երևույթի պատճառը: Բայց բացատրել այն երևույթը, որ Շահազիզը հետևել է Բայրոնին և ոչ թե Բերանժեին ու Նեկրասովին հարցին գրականագետը պատասխանել է՝ բայրոնյան լիբերալիզմի մեջ: Բերանժեի ու Նեկրասովի ստեղծագործության մեջ, ըստ Թերզիբաշյանի, անդրադառնում էին մանր բուրժուազիայի հակակապիտալիստական տրամադրությունները, մինչդեռ Շահազիզի պոեմը, նույն հեղինակի կարծիքով, անդրադարձնում է լիբերալ բուրժուազիայի պայքարը ֆեոդալիզմի դեմ: Բնական է, ուրեմն, որ բանաստեղծին ոգևորելը թափառաշրջիկ Հարոլդի դիմապատկերը, նրա կոչերը հանուն ազգերի ազատագրման, նրա բողոքն ընդդեմ բռնատիրության: Աշ. Հովհաննիսյանը դժվարանում է համաձայնել նման կարծիքի հետ, քանզի այն գերագնահատում է լիբերալ բուրժուազիայի «հեղափոխականությունը»: 1860-ական թվականներին ռուսահայ լիբերալիզմը կռվում էր ֆեոդալիզմի դեմ: Հեղափոխակա՞ն էր այդ կռիվը: Կարո՞ղ ենք արդյոք ասել, թե «Լևոնի վշտի» ազգային-հեղափոխական քարոզչությունը հարազատ պատճենն էր հայկական լիբերալիզմի քաղաքական գաղափարախոսության: Որտե՞ղ և ե՞րբ է արտահայտվել լիբերալների ազգային-հեղափոխական այդ քարոզչությունը: Այնուհետև: Չի՞ թերագնահատվում այստեղ բայրոնիզմի հեղափոխական-դեմոկրատական նշանակությունը: Ժամանակին Եվրոպայի առաջադիմական միտքը մատնանշում էր խոշոր այն հետաքրքրությունը, որ գոյություն ուներ դեպի Բայրոնը անգամ անգլիական բանվորության շարքերում: Եվ դա զարմանալի չէ: Բայրոնն իր զգայացումն ավյունով և ժամանակակից հասարակության դեմ ուղղած իր դառն երգիծանքով, ամենից շատ ընթերցողներ էր գտնում նույն հասարակության վերին շերտերում: Բայրոնի գրական արձագանքների շառավիղը շատ լայն էր: Ռուսաստանում և Գերմանիայում նրան ձայնակցում էին ոչ միայն լիբերալ ազնվականները, այլև հեղափոխական-դեմոկրատները: Բավական է հիշել միայն Հայնրիխ Հայնեի անունը: Հետաքրքրական է, որ և՛ Գերմանիայում և՛ Ռուսաստանում

Բայրոնի լիբերալ հետևորդները ընդօրինակում էին նրա՝ շրջապատի ռոմանտիկական մերժումը, նրա օրիենտալիզմը, մինչդեռ հեղափոխական-դեմոկրատները յուրացնում էին նրա երգիծական վերաբերմունքը դեպի նեխված միջավայրը, նրա հեղափոխական մարտակոչը՝ ուղղված բռնակալության, ազգային և սոցիալական ճնշման դեմ: Հենց վերջին ուղղությամբ է, որ ընթացավ նաև Սմ. Շահազիզի բայրոնիզմը: Աշ. Հովհաննիսյանը ճիշտ չի համարում գրականագետ Վ. Թերզիբաշյանի այն կարծիքը, թե իբր Սմ. Շահազիզի ստեղծագործության բովանդակության և ոճի զարգացման մեջ նկատելի է Մ. Նալբանդյանի քաղաքացիական պոեզիայի ազդեցությունը, սակայն Շահազիզի գաղափարաբանության կազմավորման վրա վճռական ներգործություն է ունեցել լիբերալ Նազարյանի աշխարհայացքը: Աշ. Հովհաննիսյանը վերոհիշյալ ձևակերպումը անվանում է ֆորմալիստական և էկլեկտիկ, քանզի, ըստ նրա, չի կարելի զատել ստեղծագործական բովանդակությունը նրա գաղափարախոսությունից: Գաղափարախոսությունը հենց ինքը բովանդակությունն է, որով պայմանավորված է նաև գրվածքի ձևն ու ոճը: «Լևոնի վշտի» մեջ դրված է անշուշտ նազարյանական լիբերալիզմի զորեղ թթխմորը: Բայց չէ՞ որ մի ժամանակ Նալբանդյանն իսկ ազատ չէր Նազարյանի «վճռական ներգործությունից»: Ինչու՞ խղեալացնել Նալբանդյանին և կամ անպատճառ «սևացնել» Նազարյանին: Լիբերալիզմի բնորոշ արտահայտությունն է, իհարկե, երբ Շահազիզը փոխադրում է ազգային ազատագրության կռվի ասպարեզը Ռուսաստանի սահմաններից դեպի Արևմտահայաստան, կամ երբ նրա հերոսը լքում է պայքարի դաշտը՝ չկարողանալով «թավալել չարին»: Այս բանի մեջ կարելի է որոնել նաև Նազարյանի գաղափարական ազդեցությունը: Բայց չէ՞որ Նազարյանից ավելի զորեղ էր տրամադրությունների այն դեպրեսիան, որ ծայր առավ 1862-1864 թվականներին համառուսական ագրարային հեղափոխությանը համընթաց ազգային-ազատագրական պայքարի պարտությունից հետո: Հատկապես հենց ազգային շարժման այդ պարտությունը Արևմտյան Եվրոպայի դեմոկրատական միտքը համարեց համաեվրոպական հետադիմության աղետա-

բեր այնպիսի մի անցք, որ հիշեցնում էր նրան «սրբազան դաշնության» ժամանակները:

Համառուսական հետադիմությունը նահանջի ճանապարհի վրա դրեց նաև Շահազիզի քաղաքացիական քնարը: Այդ մասին է վկայում հետագա նրա ամլությունը և նրա հայացքների նացիոնալ-լիբերալ այն էվոլյուցիան, որ գաղափարական որոշ համերաշխություն ստեղծեց նրա և Նազարյանի միջև: Այդ համերաշխության ազդակն էր հենց Շահազիզի «Հրապարակախօս ձայն»-ը:

«Գրական նկատողություններ» հոդվածում Աշ. Հովհաննիսյանը անդրադառնում է նաև Ռ. Պատկանյանի գնահատման հարցին, ընդգծելով, որ «գրականագետ Վ. Թերզիբաշյանին չի հաջողվել գեթ սխալ կամ միակողմանի հարցադրումով հարուցել գրողի շուրջը հետաքրքրական որևէ հիմնահարց: Հոդվածը կրում է կենսագրական ուրվագծի բնույթ, գրված է նկարագրական-պատմական ոճով, առանց վերլուծության լուրջ փորձի»[106]: 1850-1860-ական թվականների Ռ. Պատկանյանը, ըստ Վ. Թերզիբաշյանի, սկսում է գրական իր գործունեությունը՝ «գրականացված» աշուղական, գյուղացիական, ժողովրդական երգերով: Ենթարկվում է Կոլցովի և Նեկրասովի ազդեցությանը և միաժամանակ մնում նացիոնալ-կոնսերվատիվ կամ նացիոնալ-կղերական, ռեակցիոն դիրքերի վրա[107]: Այնուհետև գրականագետը շարունակում է, որ այդ չի խանգարում նրան լինել լիբերալ ինտելիգենցիայի ներկայացուցիչ, որը մի պահ հիասթափվում է բուրժուազիայից, համակվում մանր-բուրժուական «ըմբոստ տրամադրություններով»: Այնուամենայնիվ «նա զոհում է իր քնարի «ոլորուն երգերը», դառնում բուրժուազիայի քաղաքական պոետ», մնալով հասարակական լայն առաջավոր գաղափարներից զուրկ, նեղ ֆրու ազգայնական, տարամերժ, շովեն բանաստեղծ, հեռու «սկսված լիբերալ շարժումից», «իր հայացքներով չափավոր լիբերալ, նույնիսկ պահ-

---

[106] Հովհաննիսյան Աշ., Գրական նկատողություններ. «Խորհրդային գրականություն», 1935, N 1, էջ 130:

[107] Տե՛ս Հայ գրականության պատմություն, Երևան, 1933, էջ 332:

պանողական»[108]: Սրան հաջորդում է 1870-1880-ական թվականների «ռազմի երգերի» շրջանը, երբ լիակատար չափերով արտահայտվում է նրա քնարի մարտական-նացիոնալիստական բնույթը[109]: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, սրանք բնութագրություններ չեն, այլ ածականների և հասկացողությունների իմաստազուրկ խճողում:

Վ. Թերզիբաշյան գրականագետը չի կարողացել վեր հանել Ռ. Պատկանյան բանաստեղծի զարգացման տարբեր փուլերը, պարզաբանել սրանց առանձնահատկությունները պայմանավորող հանգամանքները: Հեղինակը չի կարողացել լուծել այս խնդիրը, քանի որ սկզբից ևեթ նպատակ է դրել Պատկանյանին ներկայացնել որպես մարտական նացիոնալիստական հոսանքի ներկայացուցիչ:

Վ. Թերզիբաշյանը ջանք չի թափել գեթ պատասխանելու այն հարցին, թե գաղափարների և ստեղծագործական ձևերի ի՞նչ նմանություններ կամ տարբերություններ կային Ռ. Պատկանյանի և մարտական նացիոնալիզմի մյուս ներկայացուցիչների միջև: Եթե հաշվի չառնենք Ռ. Պատկանյանի ստեղծագործության 1877-1878 թվականների պատերազմի հետ կապված վերջին շրջանը՝ վերը բերված հակասական, հեղհեղուկ, հասարակական-քաղաքական հստակ կոնտուրներից զուրկ որակումները չեն կապվում ժամանակակից իրադարձությունների, սոցիալական տեղատվությունների և մակընթացությունների, դասակարգային հարաբերությունների կոնկրետ դասավորության, կողմնորոշումների բախումների հետ և այլն: Օրինակ չի շոշափված կարևոր այնպիսի մի հարց, ինչպիսին Պատկանյանի՝ դեպի ցարիզմը կամ կապիտալիզմը հայտաբերած վերաբերմունքի հարցն է: Ամեն ինչ փոխարինում է հեղինակի համար չպարզաբանված սոցիոլոգիական և քաղաքական ընդհանուր տերմինների ու կատեգորիաների («պահպանողական», «լիբերալ», «առևտրական բուրժուազիա», «ռեակցիա», «ազգային շարժում») անհոգ մանիպուլյացիան, կարճ՝ հողվածը թողնում է խմորագունդ դարձած թխվածքի տպավորություն:

---

[108] Տե՛ս նույն տեղում, էջ 337-338:

[109] Տե՛ս նույն տեղում, էջ 342:

Հարկավ, Աշ. Հովհաննիսյանի մեթոդաբանական նախասիրությունը չէր զանցառում գրականության պատմության և հասարակական հոսանքների մերձակցումը, սակայն, նա ակնկալում էր երևույթի գիտական բացատրություն և բնավ ոչ կանխակալ պիտակավորում, որտեղ դոգմատիզմը հարցերի հեշտաբավ լուծումներ է գտնում և կանխում վերլուծության ազատ հնարավորությունը: Ամենևին էլ պատահական չէ, որ գրականության պատմության հեղինակների՝ պատմական ժառանգության գնահատման հարցում առաջին հայացքից «լիբերալ» թվացող չափանիշները ավելի պակաս դրական արդյունքներ է խոստանում, քան նրանց դրույթները քննադատող պատմաբանի «արմատական» դիտակետը: Խնդիրն այն է, որ գրական երևույթների, գրողի ստեղծագործության և հասարակական հոսանքների գաղափարական զուգահեռներում, այնուամենայնիվ, Աշ. Հովհաննիսյանը նշմարում է ինչ-որ միջնորդում, մի որոշ տարածք, որտեղ գրողի աշխարհայացքային նախապաշարմունքները այլ հարաբերակցություն են ստանում նրա ստեղծագործության օբյեկտիվ բովանդակության նկատմամբ: Այսպես, մինչդեռ «Հայ գրականության պատմության» հեղինակների կամքով «կղերական հոսանքին» հատկացված Թումանյանը հիմնականում ներկայանում է որպես հետահայաց մտածող, «Գրական նկատողությունների» հեղինակը պարտադրում է առաջին գծի վրա դնել այն երանգները, որոնք գրողին կապում են «ոչ թե հայ գրականության անցյալի, այլ նրա գալիք «վերածնության» հետ»[110], այստեղ իսկ նշմարելով այն թելերը, որոնք նրան միացնում են Խ. Աբովյանի, Րաֆֆու ստեղծագործությանը: Եվ մինչդեռ «մանր-բուրժուական գյուղացիական պահպանողական հոսանքին» հատկացված Պռոշյանը ներկայացվում է որպես ֆեոդալական աշխարհայացքի ջատագով, Աշ. Հովհաննիսյանը պարտադրում էր գնահատության չափանիշ պարզել սոցիալական առաջադիմության այն ներքին լիցքը, որ պարփակում էր նրա «գրական տարերքը», գրողի «հասարակական-քաղաքական նախապատճառմունքների ռեակցիոն կեղևից» զատել նրա ստեղծագործության

[110] «Խորհրդային գրականություն», 1934, N 3-4, էջ 97:

օբյեկտիվ բովանդակությունը, որն արտացոլում է «նախապաշարված գյուղացիության» տարերային բողոքը վերահաս բուրժուական կարգերի դեմ: Աշ. Հովհաննիսյանը նույնպիսի բանական դիտողություններ է անում նաև Հ. Ալամդարյանի, Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Գ. Սունդուկյանի, Ստ. Շահազիզի, Ռ. Պատկանյանի, ինչպես նաև ժամանակի գրական-հասարակական շարժման այլևայլ հարցերի վերաբերյալ այն մեկնաբանությունների առթիվ, որ առաջադրում են հայ գրականության պատմության հեղինակները: Թող որ «Հայ գրականության պատմության» սխալներն ու վրիպումները անխուսափելի տուրք լինեին ժամանակի մտայնությանը, սակայն, ի վերջո, դրանք արդյունք էին մեթոդական մի սահմանափակության, որի հանդեպ քննադատական մոտեցում էր պարտադրում «Գրական նկատողությունների» հեղինակը»[111]: «Ամենից առաջ,-գրում է Աշ. Հովհաննիսյանը,- հատորի խմբագիրներն ու հեղինակները փորձում են կարծես գրել ոչ թե գրականության պատմություն, այլ՝ գրականության սոցիոլոգիա: Արվում են գրական փաստերի ընդհանրացման փորձեր, բայց բացակայում է փաստերի կապակցված շարադրանք: Ժողված կցկտուր նյութերը, որպես կարկատված վերնազգեստ, հագցված են գրական-սոցիոլոգիական ոսկրաբեկ կմախքներին, անկարող փոխարինելու այն, ինչ կոչված է փաստագրված պատմություն...Սակայն գրողը, գրական երկը հետաքրքրում է պատմաբանին ոչ թե ինքն իրեն, այլ որպես հայտնի ուղղության, հոսանքի, կազմակերպության, դասակարգի արտահայտություն, որպես պատմական պրոցեսի արտադրանք և միաժամանակ՝ որպես պատմական պրոցես արգասավորող գործոն: Հատորի հեղինակներն ու խմբագիրները...այս ճշմարտությունը հասկացել են այնպես, որ ուրեմն, պետք է իրենց ուշադրությանն արժանացած գրողներին նստացնել «դասակարգային», «քաղաքական» առանձին-առանձին կամերաներում և պրակտիկորեն այդ կամերաները հատուկ ազդերով՝ «կղերա-ֆեոդա-

---

[111] Տե՛ս Սարինյան Ս., Հայ գրականության պատմության մեթոդաբանության մի քանի հարցեր. «Լեզեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության» ժողովածու, Երևան, 1971, էջ 45:

լական հոսանք», «բուրժուա-դեմոկրատական հոսանք», «մանր-բուրժուական հեղափոխական հոսանք», «բուրժուական-լիբերալ հոսանք» և այլն...»[112]:

Սակայն իրողությունը դիտելուց առաջ էական է երևույթի պատմական ճիշտ գնահատականը: Իրողություն, որ հատուկ շեշտով է հնչել Աշ. Հովհաննիսյանի աշխատություններում և ինքնին ստացել մեթոդական ուղեցույցի նշանակություն, դա գիտական հնարավորությունների գերադասությունն է դոգմատիզմի և սխեմատիզմի հանդեպ: Ամեն բանից առաջ պետք է լինել հետազոտող, ուսումնասիրել փաստերը, հայտաբերել փաստերի ներքին կապակցությունը և ենթարկել այն պատմության տրամաբանությանը, որսալ օրենքն ու օրինաչափությունը գաղափարական արտահայտությունների բարդ ու հակասական ուղիներում: Գիտական սկիզբը, ինքնին, ներքին տրվածք ունի մերձենալու օբյեկտիվ օրինաչափությունների ճշմարիտ ըմբռնման և հենց այդ սկզբին պիտի վերագրել ռացիոնալ այն տարերքը, որ պարփակում է Աշ. Հովհաննիսյանի 1930-ական թվականների գիտական ստեղծագործությունը[113]:

«Գրական նկատողություններում» Աշ. Հովհաննիսյանը քննական վերլուծության է ենթարկում նաև հայ գրականության մեջ ռեալիզմի սկզբնավորողներից մեկի՝ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանի մասին Սուրեն Հարությունյանի և ժողովրդական բանաստեղծ ու հրապարակախոս Ղ. Աղայանի մասին Խորեն Սարգսյանի հոդվածները՝ մասնավորապես կարևորելով դեմոկրատ գրողների աշխարհայացքային հարցերը:

Աշ. Հովհաննիսյանի 1930-ական թվականների գիտական ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ ունի Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր» ժողովածուն: «Խմբագրական մեր լուսաբանությունների մեջ,- գրում է ժողովածուն կազմողը նրա առաջաբանում,- խուսափել ենք գրեթե գրական բանավեճից: Ոչ այն պատճառով, որ սկզբունքորեն հրաժարվում ենք հակառակ հայացքների

---

[112] «Խորհրդային գրականություն», 1935, N 1, էջ 114:
[113] Տե՛ս Սարինյան Ս., նույն տեղում, էջ 47:

քննադատությունից, այլ որ խոսքի քննադատությունից գերադասում ենք գործի քննադատությունը, առձեռն գրականության մեթոդաբանական ֆորմալ քննադատությունից առավել կարևոր գործ համարելով աղբյուրների քննադատական յուրացումը, նյութի գրական վերլուծությունն ու շարադրանքը...Զարգացման միասնական պրոցեսի աստիճաններից քաղված պատմական կցկտուր դեպքերի ու օրինակների կուտակումը պատմություն չէ տակավին, ինչպես նաև պատմական պրոցեսի սխեմատիկ ընդհանրացումը չի նույնանում պատմական իրական ու ամբողջական պրոցեսի հետ: Պատմությունը գրվում է կապակցվող փաստերի հիման վրա, և պատմական պրոցեսի դիալեկտիկական ընդհանրացումն իսկ արվում է կոնկրետ նյութի մանրազնին վերլուծության ու առկա աղբյուրներն սպառող ուսումնասիրությունից հետո միայն»[114]:

Աշ. Հովհաննիսյանի կազմած Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր» ստվար հատորը իր ողջ կառուցվածքով՝ առաջաբան, ծանոթագրություններ, մեկնաբանություններ՝ գիտական բացառիկ մի հրատարակություն է, որն այսօր իսկ պահպանում է իր օրինակելիությունը: Առաջին անգամ լույս աշխարհ հանելով Նալբանդյանի ստեղծագործության մի պատկառելի, ի դեպ և արժեքավոր բաժինը, Աշ. Հովհաննիսյանը այն արժեքավորեց մեկնաբանություններով, որոնք փաստերի հարստությամբ, ընդհանրացումների ուժով և գիտական խորությամբ նոր լույս են սփռում ոչ միայն գրողի կյանքի ու ստեղծագործության, այլև ժամանակաշրջանի գրական-հասարակական շարժման հանգուցային հարցերի վրա: «Անտիպ երկերը» գիտական նոր սկիզբ դրեց և շատ կողմերով ուղենշեց նալբանդյանագիտության գալիքը[115]:

Ձեռնարկելով Մ. Նալբանդյանի երկերի ամբողջական նոր ժողովածուն կազմելու և հրատարակելու գործը, Աշ. Հովհաննիսյանը կանգնում է որոշակի դժվարությունների առաջ: Հրապարակի վրա կար Մ. Նալբանդյանի XX դարասկզբին (1903-1906 թթ.) լույս տեսած

---

[114] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, Երևան-Մոսկվա, 1935, էջ XI-XII:
[115] Տե՛ս Սարինյան Ս., նույն տեղում:

հրատարակությունը: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, կիսատ-պռատ այդ գործը ոչ միայն չէր տալիս Մ. Նալբանդյանի գրական ժառանգության մասին ընդհանուր պատկերը, այլև աղճատում էր երբեմն նրա տեքստերը: Ոստիկանական մարմինների միջամտության շնորհիվ՝ թերի էր մնացել «Երկերի» հրատարակությունը: Գրաքննիչի շնորհիվ կրճատումներով էր արտատպվել «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշխատությունը: Բայց «անկախ պատճառներից» բացի՝ «Երկերի» այդ հրատարակության մեջ կային թերություններ, որոնց բացատրության բանալին, Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, պետք էր որոնել «խմբագրողների անփութության կամ նրանց նահապետական անգիտության մեջ»[116]: Դարասկզբին հրատարակված Մ. Նալբանդյանի «Երկերի» խմբագիրները հնարավոր են համարել «ամբողջացած» այս հրատարակության մեջ արտատպել հեղինակի միևնույն ամսաթվում լույս տեսած մի շարք բանաստեղծությունները, բաց թողնելով մյուսները: Այսպես, օրինակ, «Հյուսիսափայլում» տպված «Հայ մարդու հայրենիքը» բանաստեղծությունների շարքից դուրս է մնացել «Հայկ և Տիգրան հիշենք միշտ, յեղբարք» հանրածանոթ պարողիան, որ խմբագրողներին անհայտ այլ բանաստեղծությունների հետ լույս է տեսել «Քնար հայկական» տարածված երգարանում: Սրա փոխարեն, կծու հումորով շարունակում է Աշ. Հովհաննիսյանը, «ճոխացրել են» Նալբանդյանի բանաստեղծությունները, մուծելով շարքը Վահունու «Տեսիլ» ոտանավորը, նույնացնելով Նալբանդյանի հետ «Հյուսիսափայլի»՝ նրան գաղափարակաորեն խորթ, անտաղանդ այդ աշխատակցին:

Բարեբախտաբար, Վահունու՝ «Հյուսիսափայլում» լույս տեսած մյուս ոտանավորները ինչ որ պատահմամբ վրիպել են խմբագրողների ուշադրությունից և դուրս մնացել Նալբանդյանի բանաստեղծությունների «ամբողջացած» շարքից: Առհասարակ հարկավոր է նկատել, որ Նալբանդյանի կեղծանունների հարցը չի զբաղեցրել Նալբանդյանի «Երկերը» խմբագրողներին: Մինչդեռ այս հարցի ու-

[116] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր (խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի), Երևան-Մոսկվա, 1935, էջ V:

սումնասիրությունը ոչ միայն կազատեր «Երկերը» ներմուծվող տարրերից, այլև կամբողջացներ Նալբանդյանի ստեղծագործական ժառանգությունը նոր գործերով: Օրինակ, անուշադրության չէր մատնվի Մեչոխեչային (իմա՝ Հարություն Սվաճյանին) ձոնած այն ուղերձը, որը 1864 թ. Պետրոպավլովյան բերդում կալանված Նալբանդյանը տպագրել տվեց «Հյուսիսափայլում»՝ Փառախոտ Ցոլակյանց անունով:

Աշ. Հովհաննիսյանը գտնում էր, որ գլխավոր անհանգստացնողը «Երկերի» այս կամ այն թերությունները չեն, քանզի «Երկերից» առաջ և «Երկերից» հետո հրատարակվել են Նալբանդյանի մի շարք կարևոր գործերը, որոնք հնարավորություն են տալիս զգալիորեն լրացնելու վերջին «Երկերի» բացը: Հարկավոր է ընդգծել, մանավանդ, դրական այն աշխատանքը, որ կատարել է Նալբանդյանի գրական ժառանգության հրատարակման բնագավառում Երվանդ Շահազիզը: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Մ. Նալբանդյանի գործերի գիտական հրատարակության համար գրեթե անհաղթահարելի դժվարություն առաջացնողը նրա ձեռագրերի հարցն էր:

1920-1921 թթ. ընթացքում Եր. Շահազիզի եռանդուն գործակցությամբ Աշ. Հովհաննիսյանին հաջողվում է ստանալ և Նոր Նախիջևանից Խորհրդային Հայաստանի Պետական թանգարան փոխադրել Նալբանդյանի ժառանգների մոտ եղած ձեռագրերը: Վերջիններս որոշ հենք են ստեղծում երկերի նոր հրատարակության համար: Սակայն ձեռք բերված ձեռագրերն ընդգրկում են տպված և անտիպ գործերի փոքր մասը միայն: Մյուս, ավելի խոշոր և կարևոր մասը, ժառանգներից ստացված ֆոնդը չուներ:

1930-ական թվականների առաջին տարիներին Աշ. Հովհաննիսյանին հաջողվում է հայտնաբերել և ուսումնասիրել Խորհրդային Միության արխիվներում կամ մասնավոր անձանց մոտ պահված Նալբանդյանի նոր ստեղծագործությունները: Այդ նյութերը զգալի չափով ընդարձակում են Նալբանդյանի մինչ այդ հայտնված կամ հրապարակված գործերի քանակը և միաժամանակ՝ մատակարարում մեծ հեղափոխականի կյանքն ու գործունեությունն ուսումնասի-

րողին մատակարարում փաստական նոր տվյալներ: Կցելով անտիպ և անհայտ այդ նյութերին Նալբանդյանի միևչ այդ միայն անունով հայտնի, սակայն անտիպ ու լրիվ չուսումնասիրված գրությունների կարևոր մասը՝ Աշ. Հովհաննիսյանը իր կազմած «Անտիպ երկերում» հրապարակում է հեղինակի հենց այդ գործերը, դիտելով իր այդ ձեռնարկությունը որպես նախապատրաստական աշխատանք երկերի լիակատար հրատարակության համար: Ինքնին Աշ. Հովհաննիսյանի ցանկությունն այն էր, որ դրանով ոչ թե պիտի ավարտվեր, այլ սկսվեր երկերի գիտական հրատարակության համար նախապատրաստական աշխատանքը: Հրապարակ հանելով Նալբանդյանի «Անտիպ երկերի» 1935 թ. ժողովածուն, Աշ. Հովհաննիսյանը նպատակներից առաջնային էր համարում ոչ միայն ընթերցողի սեփականություն դարձնել օր առաջ նորույթի հրապույր ունեցող նյութերը, այլև հասարակական հարցասիրություն առաջացնել դեպի հրապարակախոսի ձեռագրական ժառանգությունն ի հայտ բերելու խնդիրը:

Մ. Նալբանդյանի 1858 թ. մի հոդվածից, օրինակ, պարզվում է, որ նա գրած է եղել «Մեր տեսած ու լսածը» վերնագրով մի աշխատություն, որը պարունակել է «մեր ազգի ժամանակակից ճիշտ պատմությունը»[117]: Աշ. Հովհաննիսյանը կարծում է, որ հիմնականում այդ աշխատությունը վերաբերվել է Ներսես Աշտարակեցու, Խալիբովի և Գաբ. Այվազովսկու դեմ վարած նրա պայքարին: Նույն այդ նյութերին է վերաբերվել Ստ. Պալասանյանի դեմ ուղղված Նալբանդյանի մի այլ գրվածքը, որը, ինչպես վկայում է Ստ. Նազարյանի՝ 1859 թ. մարտի 11-ին Աբել Մխիթարյանին գրած նամակը, ներկայացրել է իրենից «մի մեծապարունակ ճառ, համարյա թե հինգ թերթ տպած» (այսինքն՝ հինգ տպագրական թերթ – Ա. Հ.): Աշ. Հովհաննիսյանը կարողացել է պարզել, որ ձեռագիրն անտիպ է մնացել գրաքննիչի հարուցած «տեխնիկական» դժվարությունների պատճառով: Դրանից հետո արտասահմանյան ճանապարհորդության ժամանակ Նալբանդյանը գրի է առել իր հիշատակարանը, որի մասին տեղեկա-

[117] Տե՛ս Նալբանդյան Մ., «Երկեր», հատ. 2, Դոնի Ռոստով, 1906, էջ 242:

նում ենք բերդում գրած նրա նամակից. «Մի օր գուցե աստու այցելելով հիշատակարանս կարգի կբերեմ և կտպեմ ուշադրության արժանի շատ տեղեկություն և դիտողությունք մեր ցիրուցան եղած հայերի մասին»[118]: Մ. Նալբանդյանի դատական ցուցմունքների վրա հենվելով Աշ. Հովհաննիսյանը տեղեկացնում է, որ նույն այդ ժամանակ նա գրի է առել Զեյթունի ապստամբության «հերոս» Լևոն Լուսինյանի դեմ ուղղված իր մերկացումները: Հայտնի է դարձյալ, որ Պետրոպավլովյան բերդում եղած ժամանակ Նալբանդյանը գրել է աշխարհաբարի քերականությանը վերաբերող ուսումնասիրություններ, քիմիայի և շերամապահության ձեռնարկ, բնապատմության ներածություն, Կիրակոս Գանձակեցու աշխատության վերաբերյալ և այլն: Այս ամենից բացի Աշ. Հովհաննիսյանը կարևորում է նաև Նալբանդյանի նամակները, որոնց աննշան մի մասն է միայն հայտնվել մինչև 1935 թ. հրատարակված Նալբանդյանի մասին ստեղծված գործերում: Աշ. Հովհաննիսյանը իր կազմած Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերում» տեղակայած «Ծոցատետրի նկատողությունները» պարունակում են այդ ուղղությամբ կատարելիք հետազոտությունների համար արժեքավոր տվյալներ: Մ. Նալբանդյանի՝ իր կազմած «Անտիպ երկերին» Աշ. Հովհաննիսյանը կցել է խմբագրական ընդարձակ ծանոթություններ, կոմենտարներ և անվանական բառարան: Իր լուսաբանությունների մեջ նա հետամտել է հետևյալ նպատակը՝ բնութագրել ժամանակի քաղաքական և գաղափարական այն մթնոլորտը կամ անձնական այն հանգամանքները, որոնց ներշնչմամբ գրի են առնվել զբաղեցնող երկերը, դեմքերով ու դեպքերով ներկայացնել 1850-1860-ական թվականների անցքերն ու գործիչները, որոնց մասին հիշատակվում է ընթերցողի և ուսումնասիրողի հետազոտությանը հանձնվող Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերում»: Ժողովածուի հեղինակն իր մեկնաբանություններում «առանձնապես մտահոգված է եղել պարզելու» անտիպ երկերի մեջ հիշատակվող ռուսահայ և թուրքահայ «վերածնության» շրջանի մարդկանց հասարակական-քաղաքա-

---

[118] Նալբանդյան Մ., Ղազար Փարպեցու գրած թուղթը, Ս. Պետերբուրգ, 1868, Մ. Տեր-Գրիգորյանի կազմած կենսագրականը, էջ XVIII-ի ծանոթագրությունը:

կան դիրքորոշումները: Աշխատել է սակավագիր լինել պատմական հանրահայտ գործիչների և ժամանակով հեռու այն մարդկանց և երևույթների նկատմամբ, որոնց մասին քիչ թե շատ մշակված կարծիք կա գիտական գրականության մեջ: Աշ. Հովհաննիսյանը ջանացել է մոռացության գրկից հանել ժամանակաշրջանի երկրորդական պերսոնաժները, ինչպես նաև անհայտ կամ սակավահայտ այն երևույթները, որոնք կարող են թեկուզ և աննշան, բայց նոր շեշտադրում ավելացնել Նալբանդյանի ու նրա մերձավորների հասարակական-քաղաքական և գրական-գաղափարական բնութագրության վրա: Բնականաբար, Աշ. Հովհաննիսյանին չի հաջողվել ի հայտ բերել Նալբանդյանի շուրջը պտտվող բոլոր կատարված և կարծեցյալ իրողությունները: Բազմաթիվ դեպքեր կան, որոնք կարոտ են լրացուցիչ պարզաբանության: Շատ դեմքեր էլ կան, որոնց դիմաց Աշ. Հովհաննիսյանը ստիպված դրել է «անհայտ» բառանիշը: Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերի» հենց գլխավոր նպատակներից մեկը կազմողը համարել է այն, «որպեսզի առիթ տալ քննադատներին նշելու այն աղբյուրները, «որոնց միջոցով հնարավոր կարող է լինել երկերի լիակատար հրատարակության մեջ վերացնել մեր լուսաբանությունների թերին»[119]:

«Անտիպ երկերի» խմբագրական իր լուսաբանությունների մեջ Աշ. Հովհաննիսյանը խուսափել է գրեթե գրական բանավեճերից: Ոչ այն պատճառով, որ սկզբունքորեն հրաժարվել է հակառակ հայացքների քննադատությունից, այլ որ խոսքի քննադատությունից գերադասել է գործի քննադատությունը, առձեռն գրականության մեթոդաբանական ձևական քննադատությունից առավել կարևոր գործ համարելով աղբյուրների քննադատական յուրացումը: Ըստ էության քննադատության ավելի դժվարին ու պատասխանատու տեսակն է դա, որից հետո վերանում է հաճախ նույնիսկ շահագուրկ բանավեճի նյութ դարձած հին խնդիրը և կամ խնդրի լուծումը փոխադրվում է բանավեճի սկզբունքային ավելի բարձր մի աստիճան:

---

[119] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, խմբագրություն և կոմենտարներ Աշ. Հովհաննիսյանի, Երևան-Մոսկվա, 1935, էջ XI:

Առաջընթացի միասնական գործընթացի տարբեր աստիճաններից քաղված պատմական կցկտուր դեպքերի և օրինակների կուտակումը պատմություն չէ դեռևս, ինչպես նաև պատմական գործընթացի սխեմատիկ ընդհանրացումը չի նույնանում պատմական իրական և ամբողջական գործընթացի հետ: Պատմությունը գրվում է կապակցվող փաստերի հիման վրա, և պատմական գործընթացի դիալեկտիկական ընդհանրացումն իսկ արվում է կոնկրետ նյութի մանրազնին վերլուծության և առկա աղբյուրներն սպառող ուսումնասիրությունից հետո միայն:

Աշ. Հովհաննիսյանն անհնարին և անօգուտ է համարել մեկ առ մեկ թվարկել Նալբանդյանի կամ նրա ժամանակաշրջանի մասին արտահայտված թյուր կարծիքները: Դրանք չափազանց շատ են: Աշ. Հովհաննիսյանը հիշատակում է դրանցից մի քանիսը միայն՝ նպատակ ունենալով դրանց սոսկ հակադրելու իր այն դրույթները, որոնց նա պիտի անդրադառնա Նալբանդյանի երկերին կցված իր կոմենտարներում: Դրանք են՝ «Ну хорошо!»-ն, Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը, Պոլսահայ լուսավորչական համայնքը, Սենատական ցուցմունքները, «Սոս և Վարդիթեր»-ի «Կրիտիկա»-ն, Ծոցատետրի նկատողությունները, Բերդի հիշատակարանը: Իր կոմենտարներում Աշ. Հովհաննիսյանը պաշտպանում է այն տեսակետը, թե բուրժուական գրականագիտության մեջ Նալբանդյանին նվիրված տեսությունները տառապում են ընդհանուր մի արատով: Հրապարակախոսին զետեղելով բացառապես հայկական ներաշխարհի սահմաններում, նրանք պոկում են նրա կյանքի և գրականության ուսումնասիրությունը Ռուսաստանի հասարակական-քաղաքական ընդհանուր միջավայրից և մանավանդ՝ երկրի հեղափոխական հասունացման և «հեղափոխական շարժման» ընդհանուր գործընթացից:

«Գերագնահատելով առաջադիմական այն դերը,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- որ կատարել է ժամանակին Ստ. Նազարյանը արևելահայ գրական լեզվի և եվրոպական «քաղաքակրթության» տարածման բնագավառում և միաժամանակ ստվերի տակ թողնելով

նրա հասարակական-քաղաքական հայացքների ռեակցիոն կողմը...հետագա հեղինակները առանձին սիրով վեր են հանել Նալբանդյանի գործունեության լիբերալ էտապը, ինչպես նաև նրա հետագա լիբերալ շեղումները, արհամարհելով, նացիոնալիստորեն աղճատելով և կամ թե հայկական իրականությանը խորթ, վաղանցուկ մոլորություն համարելով ցարիզմի դեմ վարած նրա կռիվը և դրա հետ կապված բուրժուական-դեմոկրատական, ազգային-հեղափոխական նրա պայքարը»[120]:

Համեմատելով Ստ. Նազարյանին և Մ. Նալբանդյանին, վաստակաշատ Եր. Շահազիզը նրանց մեջ տեսնում էր միայն «խառնվածքի» տարբերություն: Գրեթե նույն ձևով էր հարցին մերձենում նաև Լեոն: «Սկզբունքները, դավանությունները,- գրել է Լեոն,- իհարկե, միևնույնն էին, խմբագրի և գլխավոր աշխատակցի մեջ ոչինչ գաղափարական անհամաձայնություն չէր երևում: Այն, ինչ Ստ. Նազարյանցը հայտնում էր իր լուրջ ու ծանրախոհ, բարձր ոճով ու հաճախ կաբինետային ոգով գրած հոդվածներում, Մ. Նալբանդյանը ժողովրդականացնում էր իր թեթև և վառվռուն գրչով»[121]: 1912 թ. «Հորիզոն» թերթում Լեոն գրել է. «Նալբանդյանը, կրկնելով Պրուդոնի և ուրիշների թեորիաները, մնացել է թուրքահայ իրականության վերաբերմամբ մի վերին աստիճանի չափավոր և բարեմիտ մտածող, ինչպես մեկը իր ժամանակակիցներից, առանց հեղափոխական ձգտումների, առանց բռնի միջոցների, առանց քաղաքական ալյումոտ պայքարի նշանաբանի, այլ կողմնակից է և քարոզիչ խաղաղ զարգացման»[122]: Չորս տարի անց, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Լեոն, նույն «Հորիզոն» թերթում, պատմական փաստերի աղճատման ճանապարհով, Նալբանդյանին դուրս է բերում եվրոպական տերությունների զինված միջամտության ակնկալությամբ ձեռնարկված 1862 թ. Զեյթունի ապստամբությունը կազմակերպողի դերում[123]:

---

[120] Նույն տեղում, էջ XV:
[121] Լեո, Ստեփանոս Նազարյանց, հատ. 2, Թիֆլիս, 1905, էջ 56:
[122] «Հորիզոն», 1912, N 135:
[123] «Հորիզոն», 1916, N 72:

Շատ բնորոշ է, որ 1934 թ. հրատարակված իր «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» աշխատության մեջ, դատապարտելով Նալբանդյանի քաղաքական «մոլորությունները», Լեոն նշում է 1862 թ. Զեյթունի ապստամբության մեջ Նալբանդյանի ունեցած մասնակցության մասին պատմվող դաշնակցական այն հորինվածքից, որ հնարել էր հենց ինքը՝ Լեոն «Հորիզոն» թերթում 1916 թ. N 72-ում տպագրած իր հոդվածում: Ուշագրավ է, որ Նալբանդյանի քաղաքական գործունեության մասին գրող դաշնակցական հեղինակները նրան բնորոշում են դարձյալ ըստ Լեոյի՝ մերթ որպես քաղաքական կարգերի հանդեպ ինդիֆերենտ մտածողի, մերթ որպես պետությունների ինտերվենցիայի մասին երազող «հեղափոխական» մարտնչողի:

Լեոյի հին, լիբերալ հայացքներին արձագանքել է դաշնակցական գրականագետ Նիկոլ Աղբալյանը, Ա-Դոն և ուրիշներ: «Նազարյանը միակ մարդն էր,- Ստ. Նազարյանի «Երկերի» առաջին հատորին կցած կենսագրական ակնարկում գրել է Ն. Աղբալյանը,- որ կարող էր և պատրաստ էր վարելու աշխարհական դասի պայքարը հոգևորականության դեմ: Ոչ ոք նրանից լավ չէր ըմբռնում հայության ճակատագիրը Ռուսաստանում, մեր ազգայնությանը սպառնացող վտանգները և այն միջոցները, որոնցով հնարավոր է ազգային կերպարանքն անվտանգ պահելով՝ ընթանալ ժամանակի հետ: Ժամանակի գրական գործիչների մեջ կան ավելի տաղանդավորները, բայց չկան ավելի հաստատակամներն ու տոկունները, որոնք ժամանակի մեծ դատն իրենց ձեռքն առնելով՝ կարողանային ոչ միայն համարձակ պայքարել, այլև հաղթանակել: Նազարյանն էր միայն, որ կարող էր «ստանալ հաղթության արմավենին»: Այսպես ուրեմն Նազարյանն իր ժամանակի մարգարեն է, որ ժողովրդին ցույց է տալիս փրկության ուղին: Նա հայի կուլտուրական ինքնագիտակցության առաջին մարմնացումն է կուլտուրական ինքնապաշտպանության առաջին մեծ մարտիկը»[124]: Ակներև է, որ քննադատության հարվածն

[124] Նազարյանց Ստ., Երկեր, հատ. I, Թիֆլիս, 1902, էջ 47:

ուղղված է «ժամանակի գրական գործիչների մեջ» տաղանդավորներից մեկի՝ Մ. Նալբանդյանի դեմ:

Իրականությունը նենգափոխելու ավելի «գիտական» ուղի է ընտրել Ա-Դոն: «Պարզաբանելով» Նալբանդյանին հասցեագրված և մինչ այժմ սխալմամբ Հարությունն Սվաճյանին վերագրվող այն նամակը, որի ռուսերեն թարգմանությունը հրատարակել է Մ. Լեմկեն, Ա-Դոն ձգտում է ապացուցել, թե տաճկահայ հարցի վերաբերմամբ «Նալբանդյանի և նրա համախոհ հայերի հույսը դրված էր ոչ միայն եվրոպական ազատագրական շարժման ղեկավարների, այն է՝ Գարիբալդու, Մաձձինիի, Չարտորիժսկու, Գերցենի, Բակունինի, այլ եվրոպական պետությունների, մասնավորապես Անգլիայի վրա, հավատացած լինելով, որ կարիք եղած դեպքում կարելի կլիներ Կիլիկիա իջեցնել անգլիական զորքեր...»[125]: Ա-Դոյի այս առասպելական հորինվածքի դեմ հիմնական առարկություններ հետագայում կատարել է Արտաշես Կարինյանը[126]: Աշ. Հովհաննիսյանը Նալբանդյանի «Անտիպ երկերի» իր մեկնաբանություններում տալիս է մի շարք ճշտումներ և լրացումներ, որոնք ամբողջովին են Ա-Դոյի դեմ Ա. Կարինյանի առարկությունները:

Մ. Նալբանդյանի մասին եղած դաշնակցական հորինվածքների (տեսությունների) շարքը լրացնելու համար Աշ. Հովհաննիսյանը նպատակահարմար է գտել հիշատակել նաև դաշնակցության գաղափարախոս և պատմաբան Միքայել Վարանդյանի՝ Ստ. Շահումյանի գնահատմամբ՝ «Տիեզերական թութակի» մի քանի դատողությունները: «Ինչպես սովորաբար,- «Անտիպ երկերի» առաջաբանում գրում է Աշ. Հովհաննիսյանը,- այս խնդրում ևս խանդավառ այս կոմպիլյատորի ասածներում ինքնուրույնության հյուլե չկա, հարկավ: Կարծես իր հին կոչումն արդարացնելու համար «Տիեզերական թութակը» կրկնում է միայն ուրիշներից լսածը: Թութակելով Լեոյին և Ա-Դոյին՝

---

[125] Ա-Դո, Միքայել Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի էջը և Բակունինի նրան գրած նամակները, Երևան, 1908, էջ 23:

[126] Կարինյան Ա., Դեմքեր և դեպքեր, Երևան, 1928, էջ 114:

բացականչություններ է անում Զեյթունի ապստամբությունը «նախապատրաստող» քաղաքական գործի մասին...:

Այն փաստը, որ Նալբանդյանի աչքում արժեք չուներ «ազգի իրավական կամ ֆորմալ ազատությունը, եթե որ նա չի վայելում ազատության տնտեսական կամ նյութական բարիքը, կամ այն հանգամանքը, որ կանխելով արյունոտ հեղափոխությունը, Նալբանդյանը պահ մի հեղափոխություն էր ակնկալում պետության և հասարակության առկա տերերից՝ Վարանդյանին ևս առիթ է տվել «ապոլիտիկ» հռչակելու Նալբանդյանին: Մեղքը, իհարկե, վերագրվում էր դարձյալ «անիշխանական» բակունիզմի ազդեցությանը... Վարանդյանը գոհ չէ հարկավ, նաև Նալբանդյանի «հեղհեղուկ կոսմոպոլիտիզմից», որից, ինչպես ասում է «մարքսյան հոտ է փչում»...Այնուամենայնիվ մեր թութակը շտապում էր դարձյալ հանգստացնել դաշնակցական սարսափահար տղաներին...«կոսմոպոլիտիզմը,- հավատացնում է Վարանդյանը,- ժամանակավորապես մի հափշտակություն է մեր մեծանուն հայրենակցի մեջ- հափշտակություն նիհիլիստական հռսանքներով, մասնավորապես բակունիզմով»[127]:

Մ. Նալբանդյանի գաղափարական և հեղափոխական գործունեությանը տրված վերոհիշյալ շեղ գնահատական մեկնաբանություններին առատ տուրք է տվել նաև սպեցիֆիկյան գրականագիտությունը: Քայլելով նացիոնալիստական գրականագիտության տրորված շավիղներով Բախշի Իշխանյանը Նազարյան–Արծրունյան լիբերալիզմի պատգամախոս էր դարձնում ոչ միայն Նալբանդյանին, այլև ռուսահայ լուսավորիչներին առհասարակ: «Եվրոպական լիբերալիզմի և միմիայն լիբերալիզմի վճռական սկզբունքներն էին, որնոց կենդանի արտահայտիչները դարձան մեր մեջ Խ. Աբովյան, Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան (Գամառ-Քաթիպա), Ս. Շահազիզ, Գր. Արծրունի, Րաֆֆի և նրանց շավիղները»[128]: Այստեղ հումորը չի լքում Աշ. Հովհաննիսյանին: Վերոհիշյալ

---

[127] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, էջ XIX:

[128] Իշխանյան Բ., Հասարակական գաղափարները Ռ. Պատկանյանի և Շահազիզի բանաստեղծություններուն մեջ, Թիֆլիս, 1910, էջ 43:

տողերից հետո նա երգիծում է այսպես. «Սպեցիֆիկ այս «անալիտիկ»-ի ասելով, «վեարածնիչները» (լուսավորիչները- Ն.Ս.) անդրադարձնում էին հասարակական միևնույն խավի- «մանր-բուրժուազիայի ստվար վերին շերտերի» մտայնությունը, նրանք այդ շերտերի մեջ մտնող «առևտրական խավի և բարձրակարգ արհեստավորության» գաղափարական ներկայացուցիչներն էին»[129]:

Գռեհիկ այս սոցիոլոգիան կատարելության է հասցնում Բ. Իշխանյանի գաղափարակից Դավիթ Անանունը: Ռուսահայ լուսավորիչների (Անանունն օգտագործում է «վերածնիչներ» բառը- Ն. Ս.) մեջ «ամենաականավորի» տիտղոսը հատկացնելով լիբերալ Նազարյանին՝ Անանունը վերջինիս մասին գրում էր. «Իր հասարակական համակրանքների մեջ նա քայլ առ քայլ մոտեցել էր հայ «հասարակին», որ այն ժամանակ շվարման մեջ էր առևտրական կապիտալի հասցրած հարվածների տակ: Իր բարոյախոսական հրապարակայնությամբ նա այդ «հասարակի» տենչերի թարգմանն էր»[130]:

Ժխտելով Նազարյանի լիբերալիզմը, դարձնելով նրան մանրբուրժուական դեմոկրատիայի առաջնորդ, Անանունը, ըստ էության վերացնում է դասակարգային ու գաղափարական այն անջրպետը, որ բաժանում էր նրան Նալբանդյանից: «Նալբանդյանի համար ևս, - շարունակում է Անանունը,- ինչպես այդ Ս. Նազարյանցի համար էր, հայ ազգը հարստահարված, աղքատ, մերկ ու քաղցած «հասարակն» էր: Այդ «հասարակի» համար Նալբանդյանն իրեն ընդունակ էր համարում ամեն բանի: Նույն այդ «հասրակաի» համար նա գրում է երկրագործական ուտոպիան»[131]: Գրական-պատմական այս հետահայացները, ըստ Աշոտ Հովհաննիսյանի Անանունը կատարում է մի նպատակով. ներկայացնել ռուսահայ լուսավորիչներին որպես «ազգային» ժողովրդական մի հոտ և մի բանակ, դարձնելով նրանց իր հեծած «ազգահավաքման գաղափարի» բանբերները: Այս մտայնութ-

---

[129] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, էջ XX:
[130] Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, Բարու, 1916, հատ. Ա., էջ 345:
[131] Նույն տեղում, էջ 380:

յամբ է հենց, որ եռանդ է վատնել նաև ռուսահայ «հասարակ»-ին սպասարկող դեմոկրատական միևնույն սայլին լծել և՛ որպես գյուղացիական և՛ որպես քաղքենի դեմոկրատիայի «ուտոպիստ» գաղափարախոսներ ներկայացնող Նազարյանցին և՛ Նալբանդյանին և՛ անգամ «լիբերալ-նարոդնիկի շապիկ հագցրած Գ.ր. Արծրունուն»[132]:

XX դարի 50-60-ական թվականների լուսավորչությունը ներկայացնելով որպես դասակարգայնորեն մոնոլիտ մի շարժում՝ XX դարասկզբի հայ ազգանվիրյալ պատմագիտությունն ու գրականագիտությունը, ինչպես ակնհայտ է, համապարփակ լիբերալիզմի ստվերի տակ էր դնում ժամանակի հայ դեմոկրատական մտքի ամեն մի խլրտում: Անտեսելով ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական բախում-կռիվների գլխավոր ու բուն առանցքը՝ Ղրիմի պատերազմից հետո հասունացող համառուսական հեղափոխական ճգնաժամը, նրանք ըստ ամենայնի մթագնել են «ջերմախտական ու լաված» (Մ. Նալբանդյանի խոսքերն են – Ն. Ս.) այդ տարիներին բորբոքված դասակարգային կռիվներն ու դրանց գրական անդրադարձումները: Նրանք ներկայացրել են հայ ժողովրդի և եկեղեցու, դպրոցի և լեզվի առտնին ու առօրյա խնդիրները որպես «վերածնիչ»-ներին» հուզած միակ խնդիրներ: Պարզ ու հստակ նրանք բնութագրում են «խավարամիտ» և «ազատամիտ» համապարփակ բանակների տրոհված ռուսահայերին որպես «ապոլիտիկ ազգ», և շղարշում ըստ կարելվույն ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրարամերժ հայացքները, վեր հանելով ըստ ամենայնի «վերածնիչ»-ներին» կամ նրանց հակառակորդներին «միավորող», «հաշտեցնող», «հավաքող» հասկացությունները: «Հայերը,- հարում է Անանունը,- պիտի ազգ կազմեին, այսինքն մի ուղղյն մարդկային հավաքական մարմին, որն ունենար իր տարբեր կուլտուրական ձգտումների հա-

---

[132] Տե՛ս Նալբանդյան Մ., Ընտիր երկեր, էջ XXI:

մագումարը, պահպաներ իր առանձին նկարագիրը, սովորություններն ու լեզուն»[133]:

Այս և նման մտակառույցների նպատակն էր աղճատել հեղափոխական շրջանի ընդհանուր պատկերը, որչափ, հայ կյանքի շրջանակներում իսկ ժամանակի զսպանակը ռուսահայ լուսավորիչների մտահոգության գլխավոր նյութն ու խնդիրը, սկզբնապես ոչ թե ազգի «տարբեր կուլտուրական ձգտումների համագումարն էր» իսկապես, կամ ազգի «առանձին նկարագրի, սովորությունների ու լեզվի» պահպանումը, այլ հայ ազգ կոչված կոլնգլոմերատի վերակազմությունը, ազգի «եվրոպականացումը», նրա «մկրտությունը իմացական նոր ավազանում», մտահոգություն, որ իր հերթին առաջնորդում էր «ազգը» ոչ թե դեպի տարբեր ձգտումների հաշտեցումը, դեպի այդ ձգտումների «համագումարը» ստեղծելու նացիոնալիստական իդիլիան, այլ դեպի դասակարգային սուր հակամարտ, դեպի քաղաքական տարամտությունների ու պայքարի արծարծում: Սակայն, ըստ Աշոտ Հովհաննիսյանի, բուրժուական պատմագիտությունն ու գրականագիտությունը ժամանակաշրջանի դասակարգային այդ հակամարտությունն ու ազգային-քաղաքական հայացքների համապատասխան բախումներն է հենց, որ փորձում էր բառախեղդ անել հայկական ազգայնականության նորակառույց պահեստարանում:

XIX դարի 60-ական թվականների ռուսահայ այսպես կոչված «վերածնության» մասին Բ. Իշխանյանի և Դ. Անանունի հայտնած ընդհանուր կարծիքներից հիմնականում շատ չէին տարբերվում այն տեսակետները, որ սպեցիֆիկյան «Գարուն» ալմանախի էջերում ձևակերպել էին Ալ. Ռուբենին և Ալ. Մարտունին (Ալ. Մյասնիկյանը – Ն. Ս.): «Վաթսունական թվականների ռուսահայ նովատորների աշխարհայացքը,- գրել է Ալ. Ռուբենին,- կազմված էր լիբերալիզմի գաղափարական բովանդակությունից, որը հատուկ գունավորություն էր ստացել մեր հասարակական պայմանների մեջ»[134]:

---

[133] Անանուն Դ., նույն տեղում, էջ 245:

[134] «Գարուն» գրական-գեղարվեստական ալմանախ, գիրք III, էջ 40: (Այմանախը լույս է տեսել 1910-1912 թթ. Մոսկվայում, խմբագրել է Մոսկվայի խմբակը):

«Հայ ազատամտականության գաղափարների երգիչները,- Ալ. Ռուբենուն յուրովի հարում էր Ալ. Մարտունին,- տարված են մանր բուրժուական ձգտումներով և թերևս վերջինն ավելի բնորոշում է նրանց հասարակական դեմքը: Լիբերալիզմը ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ զերծ չի մնացել մանր-բուրժուական իդեոլոգիայից, քանի որ դեմոկրատական տարրերի շահերի պաշտպանությունը և այդ տարրերի ղեկավարությունը բուրժուազիան միշտ էլ հոժարությամբ իր վրա է վերցրել: Լիբերալիզմի գունավորումը մանր-բուրժուականությամբ նկատելի է մանավանդ հայ իրականության ծոցում. մի երևույթ է դա, որ մինչև վերջին ժամանակներս գիտակցված չի եղել և հայոց քննական գրականության մեջ առաջին անգամ նկատել է Ալ. Ռուբենին»[135]: Ըստ Աշոտ Հովհաննիսյանի, Ալ. Մարտունին նկատել էր լիբերալիզմի և դեմոկրատիայի տարբերությունը, բայց տրամաղրված էր ավելի շեշտելու երկուսի գործնական մերձավորությունը, քան նրանց մեջ եղած սկզբունքային տարբերությունը: Լիբերալիզմը, նրա կարծիքով, ավելի շատ ազդվում էր, քան ազդում: Նա տոգորված է մանր-բուրժուական ոգով: Հայ խոշոր բուրժուազիան, ըստ Ալ. Մարտունու 1912 թվականին հայտնած կարծիքի, միշտ էլ եղել է ոչ այնքան ուժեղ. իրականության գույն տվողը «մանր ժողովուրդն» է եղել, շարժումների կորիզը նա է կազմել: Հայ մտավորականությունն անմիջապես դուրս է եկել դեմոկրատիայի ծոցից, որի գաղափարախոսությունը նրա վրա խոր կնիք է թողել, իսկ լիբերալ մտավորականությունը ավելի շուտ մանր բուրժուական է, քան խոշոր-բուրժուական: Եվ ինչպե՞ս կարող է քաղաքային մանր բուրժուազիայի և առհասարակ դեմոկրատական տարրերի զավակ մտավորականությունը, թեկուզ լիբերալ, հեռու մնալ իր ծնողից: Հայերի մեջ չի եղել հողատիրական դաս, գաղափարախոսները նրանից օգտվել չէին կարող, իսկ թուլակազմ խոշոր բուրժուազիայի կրթություն ստացած զավակը երբեք էլ չի հանդիսացել իր դասակարգի գաղափարախոսը[136]:

---

[135] Նույն տեղում, էջ 231:

[136] Տե՛ս նույն տեղում, էջ 232:

Այս տեսակետից Գր. Արծրունին կարծես թե բացառություն է կազմում: Աշ. Հովհաննիսյանը բարեբախտություն է համարում, որ Ալ. Մյասնիկյանը կարողացավ ազատագրվել բուրժուական ազգայնական պատմագրությունից և գրականագիտությունից, տարտամ ու սխալ հայացքներից: Գիտական նոր հայեցակետ մշակելով Նալբանդյանի ու նրա ժամանակի մասին, Ալ. Մյասնիկյանը 1919 թ. գրել է «Խոստովանած՝ Նալբանդյանին մեզ մոտ չգիտեն, իմացողներն էլ նրան չեն հասկանում. այստեղ ցավը կրկնապատկվում է. Նազարյանի հետ միաժամանակ հիշվում է Նալբանդյանը. հայ լիբերալների անվանաշարքում հիշատակվում է և Նալբանդյանի անունը. գրականության մեջ նրան համարել են ռահվիրաներից մեկը: Ճիշտ է, նա մի ժամանակ տարել է այն կռիվը, ինչ որ Նազարյանը և ուրիշները: Նալբանդյանը որոշ ժամանակ մտածել է այնպես, ինչպես և նրանք, սակայն որոշ ժամանակ և ընդհարումից մի քիչ տարբեր ձևով: Դրանից դուրս, իր կյանքի ամենաբեղմնավոր և ամենահասուն շրջանում նա ներկայանում է մեզ որպես գաղափարների տեր մարդ, որը տարբերվում է Նազարյանից և լիբերալներից: Եվ մինչև վերջ էլ նա այդպես մնաց: Կարո՞ղ էր միթե նազարյանական շրջանը կամ լիբերալիզմը, այն էլ հայկական լիբերալիզմը ծնել իրենից Նալբանդյանի նման առաջադիմական դեմք ու ըմբոստ ոգի: Ու այդ մտքի-ոգու տերը մեր մտավոր կյանքի առաջին ու միակ բազմաչարչար դեմքը դարձավ: Մեր հասարակական մտքի անպայման ամենահետաքրքիր ու մեզ համար շահեկան դեմքը»[137]:

Մ. Նալբանդյանի գնահատման հարցում փոքր ինչ տարբեր, սակայն վերջին հաշվով, բուրժուական «բանասիրության» շեշտված նպատակասլացության գծով է ընթացել նաև հայ ծայրահեղ լիբերալ պատմագրությունն ու գրականագիտությունը: Այդ տեսակետից առանձնապես ուշադրության է արժանի նախքան Առաջին համաշխարհային պատերազմը «Հորիզոն» թերթում և առանձին տպագրված Թադեոս Ավդալբեգյանի այն վերլուծությունը, որ որպես ցայտա-

[137] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, էջ XXIV, Տե՛ս նաև Մարտունի Ալ., Միքայել Նալբանդյան, Մոսկվա, 1919, էջ 4:

կան գրաքննիչներից հալածված «մարքսիստական» անդրդվելի ճշմարտություն անփոփոխ հրապարակ է հանել հեղինակը նաև խորհրդային հրատարակությամբ, 1928 թվականին:

«Հայ վերածննության գրականությունը,- գրել է Թադ. Ավդալբեգյանը,- միայն մեկ դասակարգի միապաղաղ իդեոլոգիա չէ, այս օպոզիցիոն գրականությունն ինքն իր մեջ ունի աջակողմ ու ձախակողմ. այս գրականությունը իր տարբեր ներկայացուցիչների բերանով արտահայտում է ոչ միայն մանուկ բուրժուազիայի, այլ նաև հասարակական ուրիշ խմբերի, որոնց միջից գլխավորապես գյուղացիության գաղափարախոսները»[138]:

Հեղափոխական վերելքի շրջանի բուրժուական գաղափարախոսների անուններ Ավդալբեգյանը չի հիշատակում, թեև գիտի անշուշտ, որ այդ անունների բացահայտումը, շատ ավելի կարևոր է Նալբանդյանի «գրական-պատմական վերլուծության համար», քան ասենք, առանձին խնամքով ցուցակագրվող «քանասիրական» բոլոր մյուս տեսակի իր հայտնությունները՝ վիմական արձանագրություններից լույս աշխարհ հանած «գաղտնիքները» կամ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ծածկագրերի «վերծանումը»՝ Հայաստանի պատմության նվազ հրատապ ժամանակների ուսումնասիրության համար: Այստեղ կարծում ենք, որ ավելորդ են մեկնաբանությունները: Բարեբախտաբար նույն Ավդալբեգյանը չի թաքցնում ուրիշ մի գաղտնիք՝ այն մարդկանց անունները, որոնք իր ասելով, արտահայտել են հեղափոխական «վերածննության» շրջանի գյուղացիության հոգսերն ու գաղափարները: Վեր հանելով Նալբանդյանի հեղափոխական գաղափարախոսությունը՝ Ավդալբեգյանը հայտարարում է, թե Նալբանդյանի սիրած «ազգը» հենց մանր, աշխատավոր գյուղացիությունն է, իսկ նրա դավանած «նյութը» համայնացրած հողը[139]:

Ըստ Թադ. Ավդալբեգյանի, Նալբանդյանը ջատագով է քյոնևավաստակ գյուղացիության՝ ընդդեմ մակաբույծ բուրժուազիա-

---

[138] Ավդալբեգյան Թ., Մ. Նալբանդյան, Երևան, 1928, էջ 16:

[139] Տե՛ս նույն տեղում, էջ 57:

յի: «Մանր տնտեսություններ պաշտպանողը,- գրում է ժամանակի և տարածության պայմանականությունը հերքող հեղինակը,- գիտակցաբար թե անգիտակցորեն արգելք է լինում խոշոր արդյունաբերության, ուրեմն և բուրժուազիայի զարգացմանը, իսկ խոշոր արդյունաբերության ջատագովը ձգտում է քայքայելու ժողովրդի, այսինքն մանր արտադրողների տնտեսությունը, ուրեմն նպաստում է մանր գյուղացիության և մանր արհեստավորության անկմանը»[140]:

Առարկելով Թադ. Ավդալբեգյանին, Աշ. Հովհաննիսյանը հիմնավորում է, որ կապիտալիզմի քննադատության հեղափոխական սլաքը Նալբանդյանի երկերում ուղղված է հիմնականում ոչ թե բուրժուազիայի, այլ կապիտալիստական կարգերի հետ մերվող կալվածատիրության և նրա շահերին ծառայող հողատիրական կարգերի դեմ և որ, ընդհակառակը, բուրժուազիայի դեմ վարած նրա պայքարը ոչ մի տեղ չի հասնում հեղափոխական շիկացման աստիճանին: Այնուհետև անհրաժեշտ է նկատել, որ բուրժուազիայի հետևողական քննադատությունն անհնարին է առհասարակ կապիտալիզմի շեմին կանգնած ապրանքարտադրող գյուղացիության տեսանկյունից և որ նման քննադատություն հնարավոր է միայն հեղափոխական բանվորության դիրքերից: Ավելին, «գյուղացիության փիլիսոփա դարձնելով Նալբանդյանին», Թադ. Ավդալբեգյանը փաստորեն «արհամարհել է անմիջական և օրգանական այն կապը, որ գոյություն ուներ Նալբանդյանի և ռուսահայ քաղաքային դեմոկրատիայի միջև»[141]:

Ընդգծելով Մ. Նալբանդյանի հեղափոխական գործունեության հակաբուրժուական բնույթը, Թադ. Ավդալբեգյանը փաստորեն ցատկում է գյուղացիության հակաֆեոդալական պայքարի վրայից:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Թ. Ավդալբեգյանի «պատմական» աշխատությունների ընդհանուր արատը հենց այն է, որ պոկելով պատմական գործիչներին դասակարգային կռվի կոնկրետ միջավայրից՝ «վերծանում» է նրանց գործերը վերացականորեն: Դրությունը չի փոխվում բնավ. երբ նեղն ընկած տեղը նա դիմում է պատմական

---

[140] Նույն տեղում, էջ 20:
[141] Նալբանդյան Մ., Ընտիր երկեր, էջ XXVI:

անալոգիաների և օրինակների օգնության կամ՝ երբ ապաստան է որոնում աստվածաշնչյան պատկերների և առարկաների մեջ: Նման մեթոդներով, չենք էլ զարմանում, որ գերազանցելով Դ. Անանունին, Ավդալբեգյանը հանգում է խորիմաստ այն եզրակացության, թե՝ «Աբովյանն ու Նալբանդյանը դասակարգային աշխարհայացքով նույն բանակի մարդիկ են. երկուսի իդեալն էլ գյուղն է, գյուղացին ու երկրագործությունը»[142], կամ թե կանխելով նույն Դ. Անանունին, Ռ. Պատկանյանի մասին խոսելիս հայտարարում է՝ թե «Հայ գյուղացիությունն է, որ աշխատում, խնդրում, արտասվում ու մարտնչում է բանաստեղծի երկերի մեջ»[143]: Այս բոլորից հետո, շարունակում է Աշ. Հովհաննիսյանը, մեզ այլևս չի զարմացնում, երբ կրկնելով Ա-Դոյի, Լեոյի և այլոց հայտարարությունները, Ավդալբեգյանը ևս գրում է, որ իբր Նալբանդյանն ու իր համախոհները հետամուտ էին «Տաճկաստանում հեղափոխական կոմիտեներ հաստատել, արտասահմանից զենք անցկացնել և օտարազգի նշանավոր հեղափոխականների գործակցությունով և Կիլիկիայի ափերն անգլիական զորք իջեցնելով հայ ժողովրդին ապստամբեցնել»[144]: Այսքանից հետո պարզ է, որ Ավդալբեգյանի «վերլուծությունը» ևս փաստորեն թևակոխել էր դասակարգային պայքարի պատմական կոնկրետ կացությունը շղարշելու այն մտայնությունը, որ ժամանակին բանուկ շրջանառության մեջ էր լիբերալ մտավորականության միջավայրում: Աշ. Հովհաննիսյանը Թադ. Ավդալբեգյանի հետ բանավեճում այստեղ չի դնում վերջակետ: Ուղիղ քառորդ դար անց հրատարակած իր «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության երկրորդ գրքում նա քննադատության առարկա է դարձնում «ազգային վաճառականության» մասին Նալբանդյանի արծարծած հայացքների բնութագրության ուղղությամբ Թադ. Ավդալբեգյանի առաջադրած հետևյալ մտակառույցը: «Նալբանդյանի աչքում 1928 թ. գրել էր Թադ. Ավդալբեգյանը՝ աշխատանքի նպատակահարմար գործադրությունն ինքնստինքյան արժեք չու-

---

[142] Ավդալբեգյան Թ., Մ. Նալբանդյան, Երևան, 1928, էջ 94.
[143] «Սուրհանդակ», 1911, N 287:
[144] Նույն տեղում:

նի, որովհետև չի մեծացնում ժողովրդի հարստությունը: Որքան էլ զարգացած լինեն երկրագործությունն ու կամ արդյունաբերությունն, այնուամենայնիվ, սրանք մի ազգ հարստացնել չեն կարող, եթե նրանց արդյունքները չեն արտահանվում արտասահման և փոխարենը փող չի ներմուծվում: Ներքին շուկան, ներքին փոխանակությունը նշանակություն չունեն, որովհետև այս դեպքում նոր դրամ չէ մտնում հասարակության մեջ և մեկը հարստանալ կարող է միմիայն ի հաշիվ հարևանի: Ժողովրդի հաթստության աղբյուրն արտաքին առևտուրն է, որովհետև արտահանած ապրանքի փոխարեն փող է ներս մտնում հասարակության մեջ: Այսպիսի առևտրով պարապելու համար անհրաժեշտ է արտահանելու ապրանքներ պատրաստող արտադրություն: Արդյունքն, ապրանքն ինքնստինքյան հարստություն չէ, իսկական հարստությունը փողն է, ոսկին ու արծաթը: Արդյունքն, ապրանքը լոկ միջոցներ և ուժեր են, որոնցով հնարավոր է քաշել ու ներս բերել դրսի հարստությունը-փողը, ոսկին կամ արծաթը»[145]:

Թադ. Ավդալբեգյանը, ըստ Աշ. Հովհաննիսյանի, իրեն իրավունք է համարել պնդելու, թե Նալբանդյանը ժողովրդի հարստության վերաբերյալ ունեցած իր հայացքներով մի «անկասկածելի մերկանտիլիստ» է, որը, ի տարբերություն առևտրական բուրժուազիայի և կալվածատեր ազնվականության շահերին ընդառաջած արևմտաեվրոպական և ռուսական մերկանտիլիստների, հանդիսացել է «հայ գյուղացիության թեորետիկը»: «Այս հետաքրքրական հայտնություն է,- ավելացնում է Ավդալբեգյանը,- ոչ միայն հայոց գրականությունն ուսումնասիրողի համար, այլև ուշագրավ նորույթ նույնիսկ տնտեսագիտության պատմության հանդիսարանում»[146]: Թադ. Ավդալբեգյանի արած «հետաքրքրական հայտնությունը» Աշ. Հովհաննիսյանի կարծիքով «հանգչում է լիակատար թյուրիմացության վրա», քանի որ

---

[145] Ավդալբեգյան Թ., Մ. Նալբանդյան, Երևան, 1928, էջ 99:
[146] Նույն տեղում, էջ 106 և 113:

«Երկրագործության» հեղինակը ոչ մի առնչություն չունի մերկանտիլիզմի որևէ տարատեսակության հետ»[147]:

(Մերկանտիլիզմը որպես բուրժուական քաղաքատնտեսության ուղղություն և պետության տնտեսական քաղաքականություն արտահայտում էր կապիտալի նախասկզբնական կուտակման դարաշրջանի առևտրական բուրժուազիայի շահերը):

Մ. Նալբանդյանի նպատակն էր Հայաստանն ազատել եվրոպական գաղութի վերածելու սպառնալիքից: Եվ քանի որ այդ սպառնալիքը սկսում էր իրական կերպարանք ընդունել եվրոպական կապիտալին սպասարկող հայ վաճառականության ձեռքերով՝ Նալբանդյանը կամենում էր «տնտեսական հեղափոխության» իր ծրագրով փոխել հայ վաճառականության տնտեսական ու քաղաքական գործառույթների բնույթը: Ցանկանում էր, որ «առևտրական միջնորդի իր դերակատարումով հայ վաճառականությունը սպասարկի ոչ թե եվրոպական կապիտալին, այլ հայ ազգի ընդհանրությանը, «հասարակ ժողովրդին» և ամենից առաջ՝ հայ գյուղացիությանը: Վերջինիս արտադրած գյուղատնտեսական ապրանքները եվրոպական շուկաները տարածելու փոխարեն, ըստ Նալբանդյանի, հայ վաճառականը սովորություն է արել եվրոպացուց մանուֆակտուրան վաճառել հայ գյուղացիներին, ավերել հայ ժողովրդի նյութական բարեկեցությունը: «Գրեթե ազգովին սովորություն առնել ապրանք գնել Եվրոպայից,- գրում է Նալբանդյանը,- մինչև ինքյանք կրկին անգամ պիտի կարողանային վաճառել նորան, դրամ ուղարկել Եվրոպա մի այնպիսի տեղից, որ ոսկին և արծաթը դարձել է մի առասպել, և որ ինքը տերությունը չգիտե թե ինչ ճանապարհով առնու Եվրոպայից, մեր կարողությունից վեր է այս սովորության հետ հաշտվիլ»[148]: «Երկրագործության» հեղինակը համոզված էր, որ եվրոպական կապիտալին սպասարկող հայ վաճառականի հարստությունը դրված է անապահով հիմքերի վրա, որչափ նա չի խարխխված ազգային վաճառականութ-

---

[147] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 592:

[148] Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. III, Երևան, 1940, էջ 75:

յան ամուր հենքի վրա: «Ուր չկա դուրս արտադրող զորություն, որ յուր կարգով դեպի ներս պիտի գրավեր դուրսի հարստությունը, այնտեղ մի ընկերության անդամ ուրիշ կերպ չի կարող հարստանալ, եթե ոչ նույն ընկերության մյուս անդամների հաշվով: Եվ այդ հարստությունը չէ, այլ պատահական հարստության կշռի երբեմն դեպի այս և երբեմն դեպի այն կողմը: Այսօր դու ես հարուստ, վաղը ես կլինեմ, և այն ժամանակ քո հարստությունը անպատճառ պիտի նվազի»[149]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, իր պաշտպանած նման հայացքներով «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքի հեղինակը հայ ժողովրդի հարստության հիմք կամ աղբյուր չէր համարում արտաքին առևտրի միջոցով գանձվելիք փողը, ինչպես կարծել է Թադ. Ավդալբեգյանը: Ազգի հարստության հիմքն ու աղբյուրը, դրա «ուղիղ ճանապարհը», նա տեսնում էր ոչ թե արտաքին առևտրի կամ դրա միջոցով գանձվող փողի, այլ երկրագործության մեջ:

«Երկրագործությունը,- գրում էր Նալբանդյանը,- ունի հիմք, նա ունի հող, նորա ձեռքում կա նյութ, որ ասել է ույժ և կարողություն դրամի համազոր... Աշխատությունը առանց նյութի և առանց հիմքի, հասարակաց վերաբերմամբ, չունի այն ույժը և զորությունը, երբ նորա հետ զուգընթաց է նյութը, երբ այդ բոլորը հաստատած է հիմքի վրա»[150]:

«Երկրագործության» հեղինակը հարստության միակ ձևը չէր դիտում փողը կամ դրամը և խիստ հարաբերական էր համարում փողի կամ դրամի արժեքը: «Դրամի արժեքը,- շարունակում էր նա,- պայմանական մի բան է, նորա զորությունը կամ անզորությունը, նրա բարձրանալը կամ ցածրանալը կապված է այն նյութի շատության կամ սակավության, որոնց հետ կենթադրվեր փոխանակել դրամը: Թանգությունը և դրամի արժեքի ընկնիլը համարձակ կարելի է թարգմանել պակասություն կամ կալտություն այն նյութերի, որոնց հետ պիտի փոխվի դրամը. այստեղ կամքը կամ հաճույքը հանդես չունի... Ապա եթե երկրագործությունը ծաղկի, դրամի հետ փոխվելու նյութե-

[149] Նույն տեղում, էջ 95:
[150] Նույն տեղում, էջ 62:

րը առատանան, դրամը չէ կարող կենտրոնանալ զանազան ձեռքերում, հասարակ ժողովուրդը, յուր պատրաստած նյութերի զորությամբ, կցրվե նորան, որով ոչ միայն դրամի շրջանառությունը կմտանե ժողովրդի մեջ, այլ դրամի արժեքը ևս կբարձրանա նյութերի շատության չափով»[151]:

Երկրագործության նշանակությունը մղելով առաջին բնագիծ՝ կարևորելով-ընդգծելով, Նալբանդյանը բնավ չէր անտեսում նրա հետ կապված խոշոր արդյունաբերության դերը: Նա վեր էր հանում նաև երկրագործությունն ու արդյունաբերությունն սպասարկող ազգային առևտրի դերը, սակայն այդ չէր դարձնում նրան առևտրական ակտիվ բալանսը ֆետիշացնող մերկանտիլիստ: Նալբանդյանը վճռական այդ կետում այնքան էր հեռանում մերկանտիլիստներից, որ բացասում էր նույնիսկ փողի ու մետաղի ուրույն արժեքը: Մետաղի ու դրամի անկումը կամ բարձրացումը, Նալբանդյանի կարծիքով կախված են բացառապես գյուղատնտեսական ապրանքների գոյություն ունեցող քանակից: Ե՛վ մերկանտիլիստները, և՛ ֆիզիոկրատները (ֆիզիոկրատները բուրժուական դասական քաղաքատնտեսության XVIII դարի կեսին Ֆրանսիայում առաջացած ուղղություններից մեկի ներկայացուցիչներն էին: ֆիզիոկրատների տնտեսագիտական ուսմունքում գլխավորը հավելյալ արժեքի կամ «զուտ արդյունքի» խնդիրն էր: Նրանք մերժում էին մերկանտիլիստական պատկերացումն այն մասին, թե հարստությունը երկրում դրամի կուտակումն է: Հավելյալ արժեքը, ըստ ֆիզիոկրատների սպառողական արժեքների, այլ ոչ թե արժեքի աճն է) կապիտալիզմի գաղափարախոսներն էին, մինչդեռ ըստ Աշ. Հովհաննիսյանի, Նալբանդյանը ելնում էր կապիտալիզմի ժխտման միտումից: «Տնտեսական հեղափոխության» շրջանցումով Նալբանդյանը մտահոգված էր վերացնելու հայ ժողովրդի կապիտալիստական էվոլյուցիայի հնարավորությունը: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով, Թադ. Ավդալբեգյանը ի վիճակի չեղավ բացահայտել այն իրողությունը, որ Նալբանդյանին զբաղեցնողը ոչ թե կապիտալիստներին կամ կալվածատերերին սպասարկող պե-

[151] Նույն տեղում:

տության եկամուտների, այլ ժողովրդի բարեկեցության խնդիրն է, պետական եկամուտների և ժողովրդի բարեկեցության գաղափարները ոչ թե համընկնող, այլ իրարամերժ գաղափարներ են նրա հայեցակետում: Սրանք, ըստ Աշ. Հովհաննիսյանի, հանգամանքներ են, որոնք գաղափարական անջրպետներ են ստեղծում ոչ միայն «Երկրագործությունը որպես ոտիղ ճանապարհ» աշխատության հեղինակի և մերկանտիլիստների, այլև նրա և ֆիզիոկրատների միջև: Նեղ մասնագիտական այս դիտողությունները բնավ կաշկանդող կռվան չդարձան Աշ. Հովհաննիսյանի համար, որպեսզի նա շատ բարձր գնահատի Թադ. Ավդալբեգյան տնտեսագետի, հայագետի, գրականագետի, պատմաբանի, բառարանագետի, հրապարակախոսի գիտական վաստակը: Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Աշ. Հովհաննիսյանն է Ավդալբեգյանին հրավիրել Երևանի նորաբաց համալսարանում կարդալու «Հայ հասարակական մտքի և տնտեսական զարգացման պատմություն» դասընթացը: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով Ավդալբեգյանի մի շարք աշխատություններում գիտական պատմականության անշեղ դիրքերից մեկնաբանվել են հայ տնտեսագիտական մտքի զարգացման, հասարակական հոսանքների ձևավորման և գրականության պատմության էական հարցերը: 1925 թ. հրատարակված «Կարլ Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» աշխատության մեջ Ավդալբեգյանն այն միտքն է զարգացրել, որ ասիական արտադրաեղանակը նշանակում է հասարակական ուրույն տնտեսակարգ, և որ արժեքի կատեգորիան հատուկ է ոչ միայն կապիտալիստական, այլև նախակապիտալիստական հասարակակարգերին:

Հայաստանի նյութական մշակույթի և տնտեսական զարգացման պատմությանը նվիրված իր հետազոտություններում Ավդալբեգյանը նոր լույս է սփռել քննարկվող այնպիսի խնդիրների և հիմնահարցերի վրա, ինչպիսին են բահրան և մուլքը XIV-XVIII դարերի Հայաստանում, հայ շինականների վարձատրությունը V դարում և այլն: Թադ. Ավդալբեգյանը, որպես գրականագետ, գիտական ճիշտ մեկնակետից է լուսաբանել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ալ.

Շիրվանզադեի, Մուրացանի, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների հասարակական արժեքը:

Թադ. Ավդալբեգյանն է գերնաներենից թարգմանել Կ. Մարքսի «Կապիտալը»: Այդ առթիվ Աշ. Հովհաննիսյանն իր հուշերում գրում է, որ երբ Թադ. Ավդալբեգյանն ավարտեց «Կապիտալի» հայերեն թարգմանությունը, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը Հայկ Ազատյանին հանձնարարեց պատասխանատու այդ թարգմանության խմբագրությունը[152], որի առաջին հատորը լույս տեսավ 1933 թվականին, երկրորդը՝ 1936-ին: Եվ որովհետև 1937 թ. Թադ. Ավդալբեգյանը բռնադատվեց և գնդակահարվեց, ուստի բնական է, որ «Կապիտալի» մյուս մասերի տպագրությունը կասեցվեց:

[152] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 94:

# ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

## ԱԲՈՎՅԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ XX ԴԱՐԻ 20-30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: ԱԾ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԱԲՈՎՅԱՆ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաչատուր Աբովյանը պատկանում է հայ հասարակական-քաղաքական մտքի այն մեծերի շարքին, որոնց վաստակը համազգային սեփականություն է դարձել սերունդների գիտակցության մեջ:

Խ. Աբովյանի կյանքի և գործունեության նշանակությունը ժամանակի հասարակական միջավայրում հուզող խնդիրների տեսակետից գնահատելու գործում առավել գործուն և արդիական են դառնում XIX դարի 50–60-ական թվականները: Մեծ գեղագետի մտավոր ժառանգությունը դառնում է կիրառական զենք, որին հավասար իրավունքով և կամեցողությամբ ձեռք են մեկնում մի կողմից՝ պահպանողականները, մյուս կողմից լիբերալ-վերանորոգչականները: Պակաս ուշագրավ չէ, որ Աբովյանի առաջին մերձավորները, նրա կենդանության իսկ ժամանակ, պահպանողական հոսանքի ապագա ղեկավարներից էին: Դրանցից մեկը Մսեր Մսերյանն էր՝ հետահայաց պահպանողական «Ճռաքաղ» հանդեսի հետագա խմբագիրը: Ուշագրավ է նաև այն, որ «Վերք Հայաստանի» («Ողբ հայրենասերի») վեպի առաջին ժողովրդականացնողը, Աբովյանի պաշտամունքի քարոզողը, երբ տակավին ձեռագիր վիճակում էր, ազգային-պահպանողական հոսանքի ղեկավարներից էր դարձյալ, Աբովյանի «հոգեսուն» աշակերտ Գևորգ Աքիմյանը, որը XX դարի 50-ական թվականների սկզբին Դորպատ տարավ վեպի մի օրինակը և կազմակերպեց հայրենասերների շրջանում նրա ընթերցումը:

Այդ ժամանակվա դորպատյան ուսանողության համար Աբովյանի վեպը դարձավ նոր հայախոսության ձեռնարկ:

1858 թ. Հ. Փոնդոյանի հետ միասին կրկին նույն Աքիմյանն էր, որ հոգաց վեպի առաջին տպագրության մասին:

1860-ական թվականների սկզբին Խ. Աբովյանի անտիպ երկերն սկսում են լույս տեսնել պահպանողական Համբարձում Էնֆիսճյանցի տպարանում՝ առանձին գրքերով, կամ պահպանողականների «Կռունկ» գրական պարբերականում: Վերջինիս խմբագիր Մարկոս Աղաբեկյանը Գր. Նարեկացու հետ է համեմատում Խ. Աբովյանին, երկինք հանելով «հայկական աստվածասեր և հայրենասեր հանգուցյալ բանաստեղծին»[153]:

«Կռունկի» էջերում է լույս տեսնում «Վերք Հայաստանի» վեպի անդրանիկ գրական արձագանքը՝ Պ. Պռոշյանի «Մոս և Վարդիթեր», որտեղ գրողը յուրացրել էր Աբովյանի ստեղծագործության պահպանողական միտումները, նրա կենցաղագրական, ժողովրդագրական տարրերը:

«Կռունկի» միջավայրից դուրս եկավ նաև Աբովյանի մյուս նշանավոր հետևորդը՝ Ղ. Աղայանը, որը թեև ենթարկվեց հետագայում լիբերալների ազդեցությանը, ջատագով դառնալով «ժամանակակից լուսավորության», «մտքի ու խելքի զարգացման», բայց չազատագրվեց իսպառ պահպանողականների կրոնաբարոյական հայացքների թովչանքից:

«Կռունկի» ուղիով ընթացավ «Փարոս» պարբերականը, որը հրատարակեց Մսեր Մսերյանի՝ Աբովյանին ուղղած հին, հետաքրքրական նամակները, կարծես ցույց տալու համար վաղեմի խոր այն կապը, որ հարազատացնում էր Աբովյանի վաղեմի «մուրազը»՝ «միաբանության», «ընկերության» ներսիսյան հոսանքի ընդհանուր ուխտը:

«Ես Խաչատուրայ, և Խաչատուր ինձ»,- Մսերի այս խոսքերը պահպանողականները հրապարակում էին՝ կարծես Աբովյանի ժառանգության վրա սեփականության կնիք դրոշմելու համար:

Դեպի Աբովյանի գաղափարական ժառանգությունը հետագայում նույն կերպ դրսևորեց նաև ազգային-պահպանողական «Նոր-

---

[153] «Կռունկ», 1860, էջ 875:

դար» պարբերականը, որը 1893 թ. նախաձեռնություն ստանձնեց հրապարակելու «Վերք Հայաստանին» և արծաթ կանգնեցնելու Աբովյանին՝ Երևանի ավագ եկեղեցու գավթում, Հրազդան գետի մոտ, Մասիսի դիմաց[154]:

«Ոչ մեկ հայ գործիչ այնքան մոտիկ չէ մեր սրտին և մտքին, որքան Խաչատուր Աբովյանը, հոգով ու սրտով և յուր ամբողջ էությամբ հայը և «Նոր- դարիե մեծ հայը»[155],- գրել է խմբագիր Սպ. Սպանդարյանը:

Խ. Աբովյանի մահվան (այսպես էր որակվում «անհայտ-բացակայումը») 50-ամյակի առթիվ Սպանդարյանը գրում է մի առաջնորդող, որտեղ ազգային-պահպանողականության էր վերապահում Աբովյանի գաղափարական ժառանգության անշեղ պահպանությունը: «Մարդիկ,- գրել է խմբագիրը,- ինչպես և մեր պարբերական մամուլը, զանազան հայեցակետերով կարող են փառաբանել նրա հիշատակը միացած: Այսպես, մեկը կարող է Աբովյանի հիշատակը տոնել միմիայն նրա տաղանդի համար, մյուսը՝ վոր նա առաջին վիպասանն է հանդիսանում, մեկ ուրիշը՝ վոր նա առաջին անգամ աշխարհիկ բարբառով, ժողովրդի խոսած լեզվով գրեց և մեր նոր գեղեցիկ գրականության հիմքը դրեց և դրա համար ճանապարհ բացեց, և դրանք ամենքը կարող են չընդունել նրա մտքերը, նրա գաղափարները, չզգալ նրա զգացածները: Այդպիսով միայն կարելի էր պահպանել մտքի ճշմարտությունը և զգացումների անկեղծությունը: «Նոր -դարը» փառաբանում է գրող Աբովյանին իր ամբողջ էությամբ և ուրիշ կերպ էլ չի կարող, ուրիշ կերպ էլ անհասկանալի կլիներ: Այն մարդը, որ այնպիսի սուրբ և կրակ կտրած զգացումներով սիրում է յուր մայրենի լեզուն և հայրենի հավատը, ինչպես «Վերք Հայաստանի»-ն ստեղծողը, չի կարող «Նոր-դարի» սիրելին, պաշտելին չլինել»[156]:

Ազգային-պահպանողական հոսանքի գործիչները մեծարում էին Աբովյանին այն խոշոր դերի համար, որ նա հատկացնում էր ազ-

---

[154] Տե՛ս «Նոր դար», 1893, N 30:
[155] Նույն տեղում:
[156] «Նոր դար», 1898, N 94:

գային լեզվին ու հավատին, որպես ազգապահպանության գործոնների: Նրանք մեծարում էին գրողին հատկապես հանուն այն ակնածանքի, որ տածում էր նա դեպի ազգային եկեղեցին ու ավանդույթները, ազգային բարքերն ու առանձնահատկությունները:

Աբովյան գործչի ու գրողի մեջ նրանք պաշտում էին այն ամենը, ինչ հարազատացնում էր նրան անցյալին, նրա պատկառանքը դեպի ազգային պատմության, ազգային գիտակցության մղած նախապաշարումները, նրա լուսավորչական հայրենասիրությունը, նրա քաղաքական խոհեմությունն ու կրավորական դիմադրողականությունը, նրա հարգալի վերաբերմունքը դեպի ազգի իշխաններն ու մեծատունները[157]:

Սակայն այդքանը չէր միայն: Աբովյանին տված ազգային-պահպանողականների գնահատականը չէր բավարարում Աշ. Հովհաննիսյանին, քանզի վերջինիս համար Աբովյանը «ոչ միայն հմայիչ անուն էր՝ դեպի անցյալը միտված, հասարակական արտոնյալ վերնախավերի հայացքներն անդրադարձնող պահպանողականների համար, այլև պայքարի հրավառ զինադրոշ՝ գալիքի դռները բախող բուրժուական-դեմոկրատական վերանորոգիչների ձեռքում»[158]:

Մի պահ թվում է, թե Աբովյանին վերանորոգչական գաղափարների զենք պիտի դարձներ Ստ. Նազարյանը, նրա վաղեմի բարեկամը: Բայց կյանքը զարգացավ այն ուղղությամբ և հակառակը լինել չէր կարող, քանզի ինքը Նազարյանը գաղափարական մշտակայուն անհատականություն չէր, նա XIX դարի 30-40-ական թվականներին վերանորոգիչ էր պահպանողականների մեջ և պահպանողական վերանորոգիչների մեջ. նա չկարողացավ համակողմանի թափանցել Աբովյանի գաղափարաքաղաքական ներաշխարհը, քանի որ ընտրել էր տեսական ու գործնական այլ մարտավարություն:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Ստ. Նազարյանի միտքը միայն XIX դարի 50–60-ական թվականներին իր շատ կողմերով կարողացավ դուրս գալ նախորդ տասնամյակներին գծագրված հեռանկարային

---

[157] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Աբովյան, Երևան, 1933, էջ 113:
[158] Նույն տեղում:

շրջափուլից և ընտրել մի քիչ շեղված նոր մարտավարություն: Դա մի պահ էր, երբ հուսախաբված մեծատուններից՝ նա հայացք նետեց ազգի «հասարակին», իրողություն, որ կովկասահայության տնտեսական-հասարակական հետագա աստիճանական առաջընթացի հայտարարը լինելով, միաժամանակ անդրադարձնում էր դարի 60-ականների համառուսական շարժումների ազդեցությունը: Այս ամենով հանդերձ, նա շարունակում էր շատ կողմերով տուրք տալ նաև հետադեմ այն հայացքներին, որ շաղկապում էր նրան հարմարվողականությանը:

Հետագայում նրա «խոհեմ» ընթացքը ցարիզմի հաղեպ, նրա դրական կարծիքները եկեղեցու լուսավորչական դերակատարության մասին, բխում էին ավանդական հարմարվողական այն ակունքներից, որոնցից ժամանակին ջուր էր խմել նաև Խ. Աբովյանը:

Ստ. Նազարյանի հակասական դիմագիծը հետագայում շատ սրտաճմլիկ է ներկայացնում նույնիսկ պահպանողական «Մեղու Հայաստանի» թերթը, գրելով, որ «Ազգն ու եկեղեցին միշտ սուրբ են եղել հանգուցյալ Նազարյանցի համար և նոցա թերությանց վրա խոսելիս ցավից միշտ նորա վաթսունամյա աչքերում արտասուք է երևացել...»[159]:

Խ. Աբովյանի դեմոկրատական ժառանգության հետևողական յուրացնողն ու զարգացողը դարձավ Մ. Նալբանդյանը: Իր «Մեռելահարցուկ» գործում նա իմաստալից տողեր նվիրեց «Վերք Հայաստանի» վեպի բովանդակությանը: Նա Աբովյանի ստեղծագործության գլուխգործոցի արժանիքը համարեց նրա հեղինակի ծգտումը «պատկերացնել ազգի կյանքը նույն իսկ ազգի համար», նրա խորհուրդը գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծե թե գիրք է կարդում, այլ կարծե թե «մի մարդ խոսում է յուր հետ»:

Նալբանդյանի համար «Վերք Հայաստանի» երկը ազգային մի վիպերգություն է, որտեղ «...մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը... նա ցույց է տալիս, թե ոչ բոլորովին սառել է հայկական արյունը Հայաստանի զավակների

[159] «Մեղու Հայաստանի», 1881, N 123:

երակներում, ցույց է տալիս, թե մի հերոսի հրավեր, ազգի իրավունքների, կրոնի և ազատության անարգվելու վրեժը մի թշնամուց հանելու համար դեռևս տեղ գտնում է ազգի երիտասարդների սրտի մեջ ... ցույց է տալիս բանաստեղծը այն հարաբերությունը, որ մի անկիրթ ազգ կարող էր ունենալ դեպի մի բռնակալ իշխանություն»[160]: Ըստ Մ. Նալբանդյանի ընդհանուր հուսահատ դրությունից դուրս գալու հնարը Խ. Աբովյանը ոչ թե լացի ու ողբի մեջ է որոնում, այլ բռնակալ իշխանության դեմ մարտնչելու, կռվելու և հաղթանակելու:

Սա է «Վերք Հայաստանի» վեպին տրված Մ. Նալբանդյանի խոսուն գնահատականի տրամաբանական եզրակացությունը: Քնորոշ է, որ նա զանց է առնում այն հանգամանքը, որ Աբովյանի հերոսը զինակցում էր պարսիկների դեմ կռվող ռուս զորականների հետ: Աղասու պայքարը պարսիկների դեմ Մ. Նալբանդյանի պատմաքննական հայացքի ներքո ստանում է փոխաբերական իմաստ և նշանակություն. դա պայքար է բռնակալության դեմ ընդհանրապես:

1850-1860-ական թվականներին սկսում են արծարծվել նաև Խ. Աբովյանի ժառանգության մեջ ամփոփված հայդուկային գաղափախոսության տարրերը: Տակավին Ղրիմի պատերազմի ժամանակ, 1855 թվականին, Գևորգ Քանանյանին (1854 թ. «Գամառ-Քաթիպա» գրական ընկերության հիմնադիրներից է) հղած նամակում Ռ. Պատկանյանը գծագրում էր հայդուկային-ազգասիրական ռոմանտիզմի մի ամբողջ ծրագիր: «Գամառ-Քաթիպա» վերտառությամբ հրապարակվելիք պարբերականը, գրել է Ռ. Պատկանյանը, չպետք է «անդորր» ապրելու սեր ներշնչի ընթերցողներին, դարձնելով նրանց «կրոնասեր քրիստոնյա, զավակասեր կամ ընտանեասեր ծնող». պարբերականում զետեղված ամեն մի հոդված «թող կարողանա արծարծել նոցա սրտի մեջ, եթե ոչ ուղղակի կերպով հայրենասիրությունը, գոնե թո՛ղ հիշեցնեն սոցա նոցա կորցրած երջանկությունը. թող հայը կամաց կամաց սովորի պաղարյուն նայել այն մահվան վրա, որ նա կարող է ստանալ զոհելով անձը ազգի ազատությանը. մեկ խոսքով այն

[160] Նալբանդյան Մ., Երկեր, հ. I, Երևան, 1945, էջ 279:

ամեն զգացմունքները, որոնք խորը տպավորվել են մեր մեջ, որ մենք չենք համարձակում հրապարակով քարոզել և որն որ հային ըստ մեծի մասին անհայտ է... մենք պիտի աշխատենք մուծանել Գամառ-Քաթիպայի մեջ վարք երևելի սրանց՝ ինչպես որ էին Գուստավ Ադոլֆը, Վիյլգելմ Թելը, Բոցարիսը, Դիմիտրի Դոնսկոյը... Իմ կարծիքով ավելի լավ է *նկարագրել ապստամբ ավազակների կյանքը,* զոր օրինակ Պուգաչովի, Ստենկա Ռազինի..., քան գերմանական կյանքից առած մեղր ու կարագով ծեփած ու սերով կոկած էռնեստներու, Վոլդեմառներու և Դյուվայլներու: Երգերս թող պարունակեն իրենց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զզվումն՝ քան թե բնության և աստծո ողորմությունը...

Թող հայ աղջիկը սիրե քաջություն, քան թե բարոյական առաքինություն, սև ու խուճուճիկ մազեր, զգայուն հոգի, տռփոտ (страстный) աչքեր, քան թե փայլուն ուսադիրներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա»[161]:

Այս տողերը Ռ. Պատկանյանը թղթին է հանձնել նախքան «Վերք Հայաստանի» վեպի տպագրությունը, որի բովանդակությունը կանխում էր բանաստեղծի ծրագիրը: Խ. Աբովյանի վեպը ուժեղ տպավորություն էր թողել Ռ. Պատկանյանի վրա և 1862 թ. բանաստեղծը գրում է նշանավոր «Աղասու մոր երգը»՝ նվիրված հեղինակի անմահ հիշատակին: Երգը անդրադարձնում է «Վերքում» առկա հայդուկային տարրի ազդեցությունը:

Իհարկե, Ռ. Պատկանյանի ազգայնականությունը ոչ միայն չէր ներբողում ինքնակալական Ռուսաստանը, այլև որոշակիորեն ուղղված էր նրա դեմ: Եվ Գ. Քանանյանին գրած նամակում բանաստեղծը նկատի ուներ Ռուսաստանը, երբ ընդգծում էր, թե հրատարակվելիք պարբերականը պետք է չքողարկի հայ ազգայնական այն զգացմունքները, որ չենք համարձակվում բացահայտ ու հրապարակավ քարոզել: Ռ. Պատկանյանը դատապարտում էր ռուս այն գրող-

[161] Պատկանյան Ռ., Երկեր, Երևան, 1980, էջ 653:

ներին, որոնք իրենց շողոքորթ գրվածքներով նվաստանում են ցարական բռնատիրության առաջ[162]:

Բանաստեղծը քննադատում էր ռուսական կողմնորոշմանը հետևած վեղարավոր հայ դիվանագետներին, որոնց քաղաքականությունը չէր բխում ազգի հեռահար նպատակներից: Այս տեսակետից, ըստ նրա, «նմանապես խիստ քննադատության կարոտ է Ներսես Ե-ի գաղթեցնելը հայերուն Պարսկաստանեն և Կարապետ եպիսկոոսին՝ Տաճկաստանեն: Բանի վրա այսօրվա աչքերով նայելով՝ թե Ներսեսը և թե Կարապետը մեծամեծ չարիք են հասցրել հային և ոչ բարիք»[163]:

Սակայն այս ամենը Ռ. Պատկանյանին չէր դարձնում կովկասահայ հետևողական դեմոկրատիայի համախոհ: Հետևողական դեմոկրատիայից նա զատվում էր միապետապաշտական հայացքներով: Օրինակ. ապագա «ազատ» Հայաստանում նա կամենում էր վերականգնել ազգի խորտակված թագն ու գահը: Նրա պայքարն ուղղված էր բացառապես ազգի արտաքին թշնամու դեմ, ինչ ազգության էլ պատկանի այն:

Հակակրանքը դեպի ռուսական ցարիզմը նշանակում էր, ցավոք, ի վերջո հակակրանք դեպի Ռուսաստանն առհասարակ: Ավելին, 1880-ական թվականներին շատ ամուր տեղ գտած հետաղիմության տարիներին ցարիզմի ոչ հայանպաստ քաղաքականությունից հիասթափված, բանաստեղծը տրամադրվեց հավատալու Թուրքիայի ապագային և իր լիրիկական հերոսին հորդորում էր Ռուսաստանից փոխադրվել Վան.

Ձեռքդ ինձ տուր իմ նազելի,
Թողնենք այս նոր Խուժաստան
Հայոց ազգիս, գաղթենք դեպի
Վանը:- մեր բուն Հայաստան...
Կյանքի կեսը ստրուկ եղանք,
Գ-եթ կեսն լինենք մենք ազատ,

---

[162] Տե՛ս «Մուրճ», 1903, N 2-3, էջ 94:
[163] «Փորձ», 1880, N 1, էջ 186:

Ազատությունն կտա մարդուս
Լոկ յուր հողը հարազատ[164]:

Պարզ է ինքնին, որ Ռ. Պատկանյանը փախչում էր ոչ թե Ռուսաստանից, այլ վերջինիս անբարենպաստ հուն մղած ցարիզմի հակահայկական քաղաքականությունից: Այս առումով, կարծում ենք, չափազանց խիստ է հնչում Աշ. Հովհաննիսյանի այն բանաձևումը, թե Պատկանյանի «դժբախտությունն այն էր, որ դիմադիր լինելով ցարական Ռուսաստանից, նա անգիտացավ ռևոլյուցիոն Ռուսաստանը: Դրանով էլ հատկանշված է նրա քաղաքական հորիզոնի սահմանափակությունը»[165]:

Մեծ գիտնականն անտեսում էր այն իրողությունը, որ ինչքան էլ Պատկանյանը խտացներ ցարիզմի հայահալած քաղաքականության գույները, միևնույն է, նրա համար Ռուսաստանում գոյություն չուներ այսպես կոչված Հայկական հարց, որովհետև այստեղ չէին վտանգված «յուր ազգայինների» անձն ու ինչքը, այստեղ բանաստեղծ հրապարակախոսի համար «հայրենիքի փրկության» խնդիր չկար, իսկ ազգային-պահպանողական նրա հայացքների համակարգը, բնական է, սկզբունքորեն պետք է մերժեր հեղափոխական Ռուսաստանի գաղափարը:

Խ. Աբովյանի հայդուկային գաղափարախոսության շունչը նշմարելի հետք է թողել Րաֆֆու ստեղծագործության վրա: Իր գրական գործունեության ամբողջ ընթացքում Րաֆֆին լիակատար կերպով օգտագործեց Աբովյանի ժառանգության ազգային ոգեշնչման ամբողջ ներուժը:

«Մշակ» թերթը չէր սխալվում, երբ, հանրագումարի բերելով Րաֆֆու ստեղծագործությունը, գրում էր, թե «Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն հրաբխային զորության առաջին ժայթքումն էր: Բայց այդ ժայթքումը կատարվեցավ բավական թույլ և դանդաղ կերպով և վեր հանեց դեռ ոչ կատարելապես կազմակերպված մի բայծրութ-

---

[164] Նեցբերումն ըստ Աշ. Հովհաննիսյանի, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 112:
[165] Նույն տեղում, էջ 114:

յուն: Հետո ժայթքումները կատարվում են ավելի սաստիկ կերպով, երևան են հանում ավելի մեծ բարձրություններ, որոնց վերջինը և իր կազմակերպությամբ ավելի կատարելագործվածը պետք է համարել Րաֆֆու «Կայծերը»[166]:

Ժամանակի ամենազանգվածային լրագիրը երիցս ճիշտ էր: Այդ ժայթքումը, իրոք, միանգամից տեղի չունեցավ: Տակավին 1860-ական թվականների վերջերին, Ղ. Աղայանն իրեն Նալբանդյանի հոսանքի համակիր էր հռչակում[167]: Պատահական չէ, որ դեռևս 1857 թ. գրած մի նամակում Րաֆֆին ևս խիստ բացասական կարծիք էր հայտնում ցարական վարչակարգի քաղաքականության մասին:

«Գիտե՞ք,- գրել է Րաֆֆին,- ինչ դժբախտ ներգործություն ունի այժմ Ռուսիո կայսրությունն յուր հայ բնակչաց վրա, որո դիտավորությունն կորցրել է համայն Արամյան որդիքն Հայաստանից»[168]:

«Սալբի» վեպում Րաֆֆին անիծում էր Ներսես Աշտարակեցուն և Եղիազար Լազարյանին պարսկահայերին Ռուսաստանի նորագրավ երկրներ գաղթեցնելու համար: Րաֆֆու կարծիքով, եթե չլինեին արքեպիսկոպոս Աշտարակեցին և գնդապետ Լազարյանը, ապա միանգամայն ուրիշ ընթացք կստանար պարսկահայերի տնտեսական և հասարակական կյանքը: «Հայոց պատմության ատյանում,- գրում էր Րաֆֆին «Սալբիի» առաջաբանում,- չեն կարող պարզ երեսներով երևալ երկու հայազգի անձինք,- մինը՝ մի հոյակապ և արժանի հիշատակի եկեղեցական ոմն, շատ ուշ հասկացավ յուր սխալը...մյուսը՝ մի փառասեր հայ աստիճանավոր ռուսաց զորքի մեջ, որ խաբվելով շքանշաններից, հազարավոր գերդաստաններ ձգեց ռուսաց խորամանկ քաղաքականության շղթաների մեջ և թողեց նրանց մաշվել՝ քսվելով մի հզոր տերության երկնաքարի տակ...»[169]:

Րաֆֆին մեկընդմիշտ այդ կարծիքին գերի չմնաց: 1877-1878 թթ. նա, ռուս-թուրքական պատերազմի նախօրեին և ընթացքում ընտրեց այլ կողմնորոշում: Րաֆֆին այն տեսակետն ուներ, որ Պարս-

---

[166] «Մշակ», 1884, N 148:
[167] Տե՛ս Աղայան Ղ., Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Թիֆլիս, 1894, էջ 102:
[168] «Հայրենիք», 1929 N 11, էջ 80:
[169] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1962, էջ 56:

կաստանն ու Թուրքիան դարավոր հետամնացությամբ տառապող պետություններ են, ուր դաժանորեն հյուսված որոգայթներին զոհ է գնում ոչնչի մեղսակից քրիստոնյա հայ ժողովուրդը, ուստի «պետք է մտածել, եթե այս գաղթականությունը չլիներ,- երբեմնի կարծիքը վերանայում է գրող հրապարակախոսը,- ամբողջ Արարատը և Նախիջևանի գավառը կմնար թուրքերի սեփականություն: Ուրեմն Ներսես Ե-ի ջանքը՝ յուր որդիներից թափուր Հայաստանը կրկին զետեղել հայոց ազգաբնակչություն, ունեցել է յուր բարի նպատակները»[170]:

Խ. Աբովյանը հայ գրականության և հասարակական մտքի խոշոր այն դեմքերից է, որի մասին չնայած բազում ուսումնասիրություններ են գրվել, սակայն նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող շատ հարցեր տակավին մնում են վիճարկելի:

Խ. Աբովյանի կենսագրությունը գրել են դեռևս մինչխորհրդայինի հեղինակներ Մ. Տեր-Ազարյանցը և Ներսես քահանա Տեր-Կարապետյանը, որոնք միաժամանակ փորձել են արժեքավորել գրողի գրական ժառանգությունը[171]: Սակայն դրանք թերի էին և միակողմանի: Հայաստանի Հանրապետությունում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո թվում էր, թե մեծ թափ կստանա աբովյանագիտության զարգացումը: Սակայն միայն թվում էր: Պատկերը մռայլ էր հատկապես առաջին տասնամյակում: Խ. Աբովյանին 1920-ական թվականներին սկսեցին մեղադրել այն բանի համար, որ նա ներբողներ է ձոնել Արևելյան Հայաստանն «ազատագրող» Նիկողայոս կայսրին և նրա պետական ու ռազմական գործիչներին, որ նա գովերգել է լեհական ապստամբությունը ճնշող, Վարշավայում արյան բաղնիքներ սարքող գեներալ Պասկևիչին[172], որ նա փառաբանել է

---

[170] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1887, էջ 686:

[171] Տե՛ս Տեր-Ազարյանց Մ., Մեկ քանի խոսք Ապովյանի վերա (Քանի մի նյութ կենսագրության համար), «Կռունկ հայոց աշխարհին», Բ տարի, թիվ է, Տփղիս, էջ 531-553: Տե՛ս նաև՝ Ներսես քահանա Տեր-Կարապետյան, Խաչատուր Աբովյան, Տփղիս, 1897, Թիֆլիս, 1911:

[172] Տերտերյան Ա., Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, Երևանի համալսարանի հրատարակություն, 1927, էջ 21:

ցարական կառավարության «բարերար դիտավորությունները» տեղացիների նկատմամբ, իսկ հաճախ էլ «ինքն է առաջ անցել և հեղինակ հանդիսացել այս կամ այն պահանջի կամ առաջարկի»[173]:

Խ. Աբովյանը ցարական վարչակարգի հնազանդ կամակատար է, մեծավորի ստվերի առջև ծունր դնող սոսկական աստիճանավոր, «չափազանց գահասեր, հլու հնազանդ տիրող օրենքներին և գոյություն ունեցող կառավարության ձևերին...»[174]: Ավելին, Աբովյանին պատկերել են որպես առևտրական դասի շահերը արտահայտողի, որը «ջերմորեն ընդունեց և մեծարեց ռուսական կապիտալի հաղթանակը»[175]: Խ. Աբովյանի նկատմամբ մերժողական մտայնությունն ավելի իշխող է դառնում 1930-ական թվականների սկզբում, երբ «Վերք Հայաստանի» վեպը որակվում է որպես իր «ազգային տենդենցներով նացիոնալիզմի համար պաշտելի դարձած երկ»: Ոչ անհայտ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը (1931-1933 թթ. ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար) պնդում էր, որ «մեր սոցիալիստական կուլտուրան չի կարող Աբովյանի գրական ստեղծագործության գաղափարական բովանդակության մեջ ժառանգելի տարրեր գտնել»[176]:

1933 թվականի հուլիսին Երևանում, Աբովյանի արձանի բացման ժամանակ, նույն թվականի մարտի 14-ին Հայաստանի խորհրդային գրողների միության նախագահ ընտրված Եղիա Չուբարը ամբիոնից հայտարարում է, թե «Մերը չէ և չի կարող լինել այն Աբովյանը, որը արտահայտում էր ժամանակի բուրժուական ազգայնական տենդենցները: Մերը չէ այն Աբովյանը, որը ազգի փրկությունը տեսնում էր ռուսաց կայսրի գահի և նրան ծառայող Ասլան Բալասի Աղասիների հեքիաթային քաջագործությունների մեջ: Մերը չէ այն Աբով-

---

[173] Շահազիզ Ե., Խ. Աբովյան, «Տեղեկագիր» ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1928, N 3, էջ 129-130:
[174] Նույն տեղում, էջ 160:
[175] Հրանտ Ե., Ռուսական առևտրական կապիտալի քաղաքականությունը և Անդրկովկասի նվաճումը, «Նոր ուղի», Երևան, 1929, N 5, էջ 172-173:
[176] «Գրական թերթ», 1933, N 12 (13 հուլիսի):

յանը, որը թեպետ տեսավ ու նկատեց մասսաների ճնշումը, բայց երբեք չդարձավ հեղափոխական»[177]:

Խ. Աբովյանին Ռուսական կայսրության վարչակարգի ջատագով հորջորջողներին հակառակ, նույն թվականներին եղան նաև այլ տեսակետներ պաշտպանողներ: Այս առումով առաջին քայլը կատարեց նշանավոր գրող Ակսել Բակունցը, ստանձնելով պատմաբան-բանասերի դեր: Բակունցի նախաձեռնությունն իր հիմքում ուներ հիմնարար խնդիր՝ Աբովյանի կյանքի ընթացքը և աշխարհայացքը միանգամից դիտել երկու պատմական իրականության լույսի տակ. այն իրականության, որի ծնունդն էր նա և այն իրականության, որի մասին խոսք պիտի ասեր:

1932 թ. հրատարակում է «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացկայումը» խորագրով մենագրությունը: Նրա ուսումնասիրության հրապարակ գալու բուն դրդապատճառը եղել է Խ. Աբովյանի մասին գրվելիք վեպի ծրագիրը: Ուշագրավ է փաստն ինքնին, որը խոսում է այն մասին, թե ինչքան լուրջ էր մոտենում Բակունցը առաջադիր իր ստեղծագործական խնդրին, որքան պատասխանատու էր գեղարվեստական գրվելիք վեպում պատմական ճշմարտությունը պահպանելու հարցում:

Դիմելով ստեղծագործական ընդգրկուն և տարողունակ ծրագրի պատմական հենքը պեղելու միջոցին, Բակունցի ուսումնասիրությունը, սակայն, վիպական խնդիրներով ու վիպական շրջանակներով չի սահմանափակվում: Միաժամանակ նա ամբողջ սրությամբ առաջ է քաշում Աբովյանի գործի ու անձնավորության շուրջը գոյություն ունեցող և արդեն հնացած տեսությունների վերանայման հարցը:

Ընդսմին, չպետք է անտեսել այն իրողությունը, որ Բակունցի աշխատությունը խորհրդային ժամանակաշրջանում լույս տեսած առաջին մենագրությունն էր Աբովյանի մասին՝ ինքնաբերաբար դառնալով աչքի ընկնող նշանածող աբովյանագիտության նորագույն ժամանակաշրջանի համար: Արխիվային նոր վավերագրերի և նոր հայտնաբերված նամակների հենքի վրա գրված «Խաչատուր Աբով-

---

[177] Նույն տեղում (Ելյա Չուբարի ճառը):

յանի «անհայտ բացակայումի» ուսումնասիրությունը՝ նվիրված է երկու գլխավոր խնդրի պատմական պարզաբանման: Առաջին խնդիրը Աբովյանի «անհայտ բացակայումի» առեղծվածի նոր բացատրության փորձն է, երկրորդը՝ Աբովյանի աշխարհայացքի ու քաղաքական կողմնորոշման, գաղափարական դրքորոշման վերագնահատության խնդիրը: Առաջին խնդրի պատասխանը Բակունցի ուսումնասիրության թուլությունն է՝ «աքիլլեսյան գարշապարը», երկրորդը՝ նրա կարևորագույն ծառայությունը աբովյանագիտությանը:

Խ. Աբովյանի անտիպ հիշատակարանների, նամակագրության, նրա գեղարվեստական ստեղծագործության առանձին տվյալների, արխիվային նորահայտ վավերագրերի, ժամանակակիցների հիշողությունների ու ժողովրդի մեջ շրջող զրույց-ավանդությունների հիման վրա Բակունցը քննում է Աբովյանի անհայտացման վերաբերյալ գոյություն ունեցող ծանոթ և անծանոթ ենթադրությունները («Սև կառեքի»՝ քաղաքական աքսորի լեգենդի կերպարանք ստացած վարկածը, սիբիրյան հողի վրա նրա դեմ կազմակերպված դավադրության մեկնարկը և այլն) և առաջադրում «անհայտ բացկայումի» կամ «կամովին հեռանալու» մի նոր տարբերակ, որը հանգում է հետևյալին. Խ. Աբովյանը իր կյանքի վերջին շրջանում հիասթափվում է հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականությունից, ռուսական պետականությունից սպասած իր ծրագրերի և ակնկալությունների իրացման անհեռանկարայնությունից, և առնելով «անհանգիստ ժամանակի»՝ 1848 թվականի եվրոպական հեղափոխության համբավը, «շարժվում է տեղից»՝ հայ փախստական գյուղացիության մի մեծ խմբի հետ հեռանալով «ռուսական պետության սահմաններից» Արաքսի ձախ ափը: Աբովյանի «հարկադրյալ փախուստը», նրա գաղափարական «շրջադարձը» Բակունցը չի կապում որևէ քաղաքական խմբակցության գործունեության հետ, այլ այդ անցումը դիտում է որպես «Հայաստանի ներսի մասում»՝ պապենական հողերում երկրագործությամբ զբաղվելու նպատակով արված

ձեռնարկ[178]: Ըստ Բակունցի Խ. Աբովյանը կյանքի վերջին շրջանում «անձնական հիասթափություն» էր ապրում, որի գլխավոր պատճառն այն էր, որ «ցարական ռեժիմը հայոց ազգի»՝ այսինքն նախկին «Հայկական մարզի» գյուղացիության համար ակնկալած բարիքների փոխարեն բերեց կնուտ և աղքատություն»[179]: Հուսախաբությանը հետևեց «փախուստ այն միջավայրից, որտեղ այլևս ոչ մի կռվան չուներ»[180]: Իսկ այստեղ ի՞նչ առնչություն ունեն Եվրոպայում տեղի ունեցող 1848 թ. հեղափոխական իրադարձությունները: Այս հարցին Բակունցի տված պատասխանից պարզվում է, որ «հեղափոխության լուրը միայն առիթ էր, արտաքին հարված, որը նրան տեղից շարժեց այնպիսի նպատակով, որ անմիջական ոչ մի կապ չուներ 1848 թվի հեղափոխության հետ»[181]:

Ա. Բակունցը Աբովյանի «շրջադարձը», նրա հարկադրյալ փախուստը բացատրելու համար գերազանցապես հենվում է այն մի քանի վկայությունների վրա, որ պարունակում է «ժողովրդի մտածմունք» կոչված գրի առնված փաստաթուղթը (նամակը) Աբովյանի «չերևալու» պատճառի մասին: Նամակագրի ենթադրյալ հույսը՝ «ումուտը», թե մի օր Աբովյանը կերևա, նրա հավաստիացումը, թե նրան տեսել են այս ու այն վայրերում (Ակոռի, Կարս, Գյանջա և այլն), Բակունցը դարձնում է «զորեղ փաստարկներ», խորամուխ չլինելով դրանցում ընդգրկված ցանկության, հույսի և ոչ թե հավաստիության մեջ: Մյուս մերձակա փաստարկը, թե պաշտոնական գրագրություններում Աբովյանին դիմում են որպես «անհայտ բացակայող», նույնպես չեն ամրապնդվում առաջարկված ենթադրությունը: Եվ, վերջապես, Բակունցի մեջբերած գերմանացի ճանապարհորդի տեղեկությունները՝ Մորից Վագների և Ֆր. Բոդենշտեդի թողած վավերագրերը, ընդգծում են Աբովյանի անբավականությունն իր միջավայրից և նրա համապարփակ հուսահատությունը, բայց չեն բա-

---

[178] Տե՛ս Աղաբաբյան Ս. Բ., Հայ սովետական գրականության պատմություն, հատոր առաջին, Երևան, 1986, էջ 497:
[179] Բակունց Ա., Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը», Երևան, 1932, էջ 27:
[180] Նույն տեղում, էջ 62:
[181] Նույն տեղում, էջ 52:

ցահայտում անհայտացման նոր ուղիներ: Այնպես որ, այս բոլորի հենքի վրա Բակունցի տեսակետը քննություն չի բռնում:

Ահա այսպիսի վիճակում էր աբովյանագիտությունը, երբ հարցի քննության իր մասնակցությունը բերեց հայտնի հասարակական-քաղաքական գործիչ և պատմաբան Աշ. Հովհաննիսյանը 1933 թ. հրատարակելով «Աբովյան» ուսումնասիրությունը: Հեղինակը բանավիճային-պատասխան այդ տրակտատում Բակունցի տեսակետը իրավացիորեն համարում է ավելի շատ «վիպական բելետրիստիկա», քան գիտականորեն հիմնավոր ու համոզիչ տեսակետ, տեսակետ, որն առաջ չի շարժում Աբովյանի «անհայտացման» առեղծվածի լուծումը, այլ «Արաքսի մի ափից տեղափոխում է մյուս ափը»[182], դարձյալ անպատասխան թողնելով այդ ժամանակ գրեթե հարյուրամյա վաղեմություն ունեցող գաղտնիքը: Բակունցի հետ բանավիճող պատմաբանը ծաղրող հեգնանքով Աբովյանի կորստյան առեղծվածը համեմատում է մեռնող ու վերադարձող ժողովրդական առասպելաբանության հերոսների (Սիեր, Արտավազդ և այլն) հետ և դրանով մեկնում «ժողովրդի մտածումների» մեջ անդրադարձած «հեռանալու և մի օր երևալու» մոտիվը:

Ա. Բակունցի առաջ քաշած վտարանդիության տեսակետը և փաստական առումով, և մանավանդ որպես եզրակացություն՝ սխալ էր և գիտականորեն չհիմնավորված: «Առեղծվածի» լուծման նախկին ուղիներին գրողը հավելում էր մի նոր առեղծված: Բակունցի ուսումնասիրական դրական միտումն իբրև թե հնացած տեսակետներին ներուստ հակադրվող հայեցակետն է:

«Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը» հետազոտությունը՝ վերագնահատության առումով յուրահատուկ մարտավարական քայլ էր Բակունցի կողմից ավելի խոր իսկական արմատներով ու բնորոշ կապակցություններով հասկանալու Աբովյանի անձնավորությունն ու նրա ժամանակը, ավելի ճիշտ ըմբռնելու պատմության զարգացման գլխավոր ուղղությունը՝ հակասություններով ու զիգզագներով, և ճիշտ որոշելու երևելի անհատի պատմական տեղը:

---

[182] Հովհաննիսյան Աշ., Աբովյան, Երևան, 1933, էջ 76:

«Խաչատուր Աբովյան» վեպի տպագրված հատվածները վկայում են Բակունցի երկարատև ու ջանադիր քննական աշխատանքը պատմական ժամանակաշրջանի համար բնորոշ վավերագրերի և Աբովյանի ձեռագրերի հետ, որոնք վեպի կառուցման տարիներին մեծ մասով տակավին հրապարակված չէին (Ի դեպ, Բակունցը Աբովյանի ձեռագրերը ուսումնասիրել է գրողի թոռան՝ Կ. Աբովյանի տանը, երբ դեռ նրանք հանձնված չէին գրական թանգարան):

Հմուտ հետազոտողի աչքով Բակունցը վերականգնել է դարաշրջանի կենցաղի ու սովորությունների, էթնիկական ու աշխարհագրական միջավայրի, տարբեր հասարակական շերտերի փոխհարաբերությունների «պատմագիտական» նկարագիրը: Ինչևէ, Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպը մնաց կիսատ, ինչպես կիսատ մնաց նրա կյանքը: Հարուստ փաստարկներով ներկայացնելով Աբովյանի հերոսական մաքառման ուղին, նրա պայքարն ընդդեմ ցարական պաշտոնեության, Էջմիածնի հոգևորականության և հայ վաճառականության, Բակունցն այդ գործում և հետևողական ընդդիմության հիմքում ցանկացել է տեսնել գյուղացիական դեմոկրատիայի հետ Աբովյանի ունեցած մերձավորագույն առնչությունները:

Մինչդեռ Աշ. Հովհաննիսյանը առասպել և նախապաշարմունք է համարում Աբովյանին «գյուղացիական գաղափարախոս» դիտարկող Բակունցի տեսակետը: Աշ. Հովհաննիսյանը հերքում է նաև «փախուստի» տեսակետը՝ այդ ամենը կատարելով հակապատմական նախադիր սխեմայի համաձայն՝ հայ դեմոկրատիայի և Աբովյանի մեջ «գյուղացիական խրամատը» հաստատելու նպատակով: Ինչու՞ հարցն ունի իր հստակ պատասխանը: Աշ. Հովհաննիսյանը Աբովյանին համարում է ոչ թե քաղաքական մթնոլորտի զոհ, այլ նրա ողբերգությունը, նրա «վերապրած հոգեկան գալարումները» դիտում որպես դավանած գրական ուղղության բնորոշ «հիվանդագին անդրադարձում»: Սակայն, ի տարբերություն Աշ. Հովհաննիսյանի, որն Աբովյանի գաղափարական բարձրակետը հանգեցնում էր ցարիզմի գաղութային զավթողամոլության գովքին, Բակունցն ամենատարբեր վկա-

յակոչումներով Աբովյանին տեղադրում է հասարակության ստորին շերտերի (գյուղացիության) վերածնության երազների շրջագծում:

Ո՞րն է Բակունցի առաջադրած խնդիրը հարցին Աշ. հովհաննիսյանը պատասխանում է, որ գրողը իր գրվածքում փորձում է «Աբովյանի անհայտացման գոյություն ունեցող տարբերակներին ավելացնել նորը, նոր մի տարբերակ, որը ջանք է անում վերագնահատել Աբովյանին: Աբովյանը հայտնվում է մեր առաջ որպես մի մարդ, որը պառակտվում է ֆեոդալական և կապիտալիստական տիրող դասակարգերի և ցարական տիրող վարչակարգի հետ, փախչում շրջապատող մութ ու գորշ միջավայրից, ողբերգական վիճակ ունեցած իր այդ ժեստով իսկ կարծես նախատինք դառնում միջավայրի իշխող ուժերի և հասկացողությունների համար:

Դատեցեք ինքներդ: Այն մարդը, որի գործունեությունը թվում էր թե գաղափարախոսական անդրանիկ ազդարարն էր կովկասահայ միջավայրում սաղմնավորվող կապիտալիստական հարաբերությունների և որի գլուխգործոցը միաժամանակ՝ գովքը ցարական էքսպանսիայի և նախերգանքը բուրժուական նացիոնալիզմի,- հայտնվում է այստեղ որպես մեկը, որ անդրադարձնում է գյուղացիության հակակրանքը ցարիզմին ու բուրժուազիային, երես շուռ տալիս տիրող ռեժիմին և տիրող դասակարգին, անցնում Արաքսը, ապավինում հայկական բնաշխարհում երկրագործական չարքաշ աշխատանքով ապրող մասսայի բախտին կամ, ով գիտե, հենց նույն այն ժամանակ, 1848 թ. գարնանը, Եվրոպայում բռնկած հեղափոխության հուսակայանին: Վերագնահատումը կատարյալ է, իրոք: Այդ տեսակետից է հենց, որ ընկ. Ակսելի կոնցեպցիան թե նոր է, թե խիզախ, թե հետաքրքրական միանգամայն: Բայց որքա՞ն հնարավոր է այն: Այս է խնդիրը: Եվ այս խնդրի շուրջ է հենց, որ պիտի դառնա ամեն մի քննադատություն, որ նպատակ դնի իրեն՝ որոշել ակսելյան հայտնության բուն նշանակությունը, մերկացնել նրա վիպական, ֆոլկլորային ատաղձը, բնութագրել այն որպես լեգենդ Աբովյանի մասին»[183]:

---

[183] Նույն տեղում, էջ 1-2:

Ուշագրավ է կաթողիկոս Ն. Աշտարակեցուն տված Աշ. Հովհաննիսյանի գնահատականը, մի գործչի, որի հետ, իբրև թե, ժամանակին մեծ հույսեր է կապել Աբովյանը: Ն. Աշտարակեցու մասին Աշ. Հովհաննիսյանի «Աբովյան» գրքում կարդում ենք. «Ախակալ, հիշաչար, կամապաշտ և ինտրիգան այս կղերականը սովորություն ուներ հաշտվողական կամ համբերատար վերաբերմունք ցույց տալու մարդկանց, որոնք անբարյացկամ էին դեպի ինքն ու իր կուսակցությանը: Զուր չէ, որ Նիկոլայ Պալկինի վեղարավոր այդ սատրապը լրտեսական մի ամբողջ ցանց կազմակերպեց Անդրկովկասում, մի տեսակ հոգևոր III բաժանմունք, որ ահ ու դողի մեջ էր պահում կաթողիկոսի թշնամիներին և բարեկամներին: Աբովյանին, համենայն դեպս, Ներսեսը չէր դասում թշնամիների շարքը: 1844 թվին Պետերբուրգից հատուկ գրությամբ Աբովյանին էր հանձնարարում ուղեկցելու Աբիխի վերելքը դեպի Արարատ:

Անհավանական չէ, որ 1846 թ. աշնանն Աբովյանը ուղեկցած լինի նաև Ներսեսի հովանավորության ներքո գտնված գեներալ Մուրավյովին – 1848 թ. լույս տեսած «Грузия и Армения» գրքի հեղինակին – նրա՝ Հայաստանում կատարած ճանապարհորդության ժամանակ: Նույն թվին Երևանում Ներսեսը խոստանում էր Աբովյանին՝ Գերմանիա ուղարկել նրա լավագույն աշակերտներին՝ ուսումը շարունակելու համար: Վերջապես 1848 թվի փետրվարին առաջարկել էր Աբովյանին, ինչպես ասում են, Թիֆլիսի իր անվան դպրոցի տեսչության պաշտոնը: Ներսեսի կողմից վստահության գերագույն նշան էր այս. այն մարդը, որ հոգևոր և աշխարհիկ ոստիկանության բոլոր ճանապարհներով տարիների ընթացքում հալածում էր Մ. Նալբանդյանին, չհանդուրժելով անգամ, որ «հեստյալ»այդ դպիրն ուսուցչության պաշտոն վարի Լազարյան ճեմարանում-հոժարում էր նախկին դպիր Աբովյանի ձեռքը տալ իր սրտին ու մտքին մոտ դպրոցի ղեկը»[184]:

Վերոհիշյալ այս ընդարձակ մեջբերման մեջ Ն. Աշտարակեցու անձը բնութագրված է չափազանց անկողմնակալ, իսկ Աբովյանի

[184] Նույն տեղում, էջ 39-40:

հետ նրա հարաբերությունները՝ բացահայտ աչառու: Աշ. Հովհաննիսյանը շրջանցում է այն իրողությունը, որ Աշտարակեցին չկատարեց Աբովյանին տված և ոչ մի խոստում: Եվ դա բնական է, նա չէր կարող հակառակ գնալ ցարիզմի քաղաքականությանը, քաղաքականություն, որը չէր խրախուսում ժողովրդին կրթելու և լուսավորելու ուղղությամբ ժամանակի առաջադեմ գործիչների ջանքերը: Մի ժամանակաշրջան էր դա, ինչպես գրում էր Բելինսկին Գոգոլին գրած իր նամակում, «մարդ վաճառքի է հանում մարդուն..., որտեղ ոչ միայն չկա ապահովություն անձի, պատվի, սեփականության, այլ չկա նույնիսկ ոստիկանական կարգապահություն, այլ կան միայն պաշտոնական գողերի ու կողոպտիչների ահագին կորպորացիաներ»[185]: Պաշտոնատար գողերի և կողոպտիչների սանձարձակ գործունեության համար լայն ասպարեզ էր մանավանդ ռուսական նորանվաճ գաղութ Անդրկովկասն ու նրա մաս կազմող Արևելահայաստանը: Այստեղ ռուսական տիրապետության ժամանակ հսկայական չափեր ընդունեց արտատնտեսական հարկադրանքի համակարգը: Տուժում էր առաջին հերթին գյուղացիությունը, որին ցարական «փրկիչները» դնում էին ռուս ճորտի վիճակում և որի հավելյալ արդյունքի հսկայական բաժինը օրինավոր և ապօրինի կողոպուտի ճանապարհով գոփում էին նույն այդ «փրկիչները»: Իրողություն էր այս, որ շոշափում էր ոչ միայն գյուղացիության անմիջական շահերը, այլև ներքին վեճ առաջ բերում գյուղացիության եկվոր և բնիկ շահագործողների միջև, որչափ դրանով նվազում էր հավելյալ արդյունքի այն մասը, որ մտնելու էր ազգային արտոնյալ դասերի գրպանը: Օրինաչափ է, որ տեղական արտոնյալ դասերի, պահպանողական վերնախավի մեջ իսկ պիտի հասունանար դիմադիր որոշ տրամադրություն դեպի ռուս «ճորտատերերի դիկտատուրան», դեպի ցարիզմի գաղութային քաղաքականությունը և հատկապես դեպի եկվոր աստիճանավորների խմբակցությունը: Ցարիզմի գաղութային քաղաքականությունը հարվածի տակ էր առնում նաև «ազգի» լուսավորության գործը: Աբովյանի և նրա համախոհների լուսավորական ջանքերը Ռուսաստանի

[185] Նույն տեղում, էջ 77:

կողմից ճնշվում էին ըստ ամենայնի: Ինչքան էլ բարեհույս լինեին Աբովյանի ռուսամետ տրամադրությունները, շարունակում է Աշ. Հովհաննիսյանը, նրա մշակութային-լուսավորական ջանքերը խորտակվում էին՝ տեղի տալով ցարական վարչական մարմինների դիմադրությանը: Գիտությունների ակադեմիան, հանճին Բրոսսեի, մերժում էր աշխարհաբարի քաղաքացիականացմանը նվիրված նրա ձեռնարկները որպես «գիտականորեն» արժեզուրկ գործեր[186]:

Այստեղից հասկանալի է, որ Աբովյանը չնայած իր ընդունակություններին և տոկունության, անկարող պիտի լիներ Ռուսաստանում իրացնելու իր ծրագրավորումները: Ինքյան այն չէր Աբովյանի դժբախտությունը, որ պարփակվեց գավառական դպրոցի միջավայրում, և ոչ իսկ այն, որ արժանի հատուցում չէր ստանում ցարական իշխանությանը ցույց տված «անբասիր» ծառայության համար: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, վատթարագույնն այն էր, որ Աբովյանի միտքը չէր կարողանում պատռել իրեն ժամանակակից հասարակական հակասությունների շրջանը, թեկուզ և նրա միշտ «դեպի վեր սավառնացող ոգին», նրա «ազնիվ» ու բուռն ձգտումները, նրա «մուրազը» օբյեկտիվորեն դուրս էին խոյանում հաճախ ֆեոդալաբյուրոկրատական վարչակարգի սահմաններից: Աբովյանը նկատում է իշխող ռուտինայի (հնապաշտություն) բազում այլանդակությունները: Երգիծաբանական «Հազարապետեն» գրվածքում նա հարվածում է ռուս այն աստիճանավորներին, որոնք Կովկաս գալով, վերից վար էին նայում տեղական «խալխին», ծաղրում նրա բարքերը, նրան դիտում իբրև բեռնակիր գրաստի կամ կաթնատու անասունի.

Ասածն էլ չանես, խնդիրը չկատարես,
Ելի ոսկիքը, գլխով շաքարներ,
Սունդուկով չայը, չալ-չալ մանեթներ,
Ելի ջեբդ ածես, նրանց հոգին հանես,
Թե խոսք էլ ասեն, քամակդ դեմ անես.
Ասիացի մարդն զակոն ի՞նչ գիտի,
Վոր քեզ հետ խոսա կամ համարձակվի:

---

[186] Նույն տեղում, էջ 78:

Գլխին տու՛ր, ղրաղին կանգնի՛ր, քեֆ արա՛,
Ջեբդ լցրու, քո երկիր գնա՛.
Ո՞վ ա հարցնում, կամ գլուխդ կտրում,
Անլեզու հայվանն տուն թողում, պահում:
Շատ էլ որ անեն, մեկ պողսուդ կտան,
Պրծար, գլուխդ ա՛ռ, ու գնա՛ քո տուն[187]:

Այս կարգի տրտունջները, ինչ խոսք, կարևոր են Աբովյանի քաղաքական մտայնությունը բնորոշելու համար: Սակայն, ըստ Աշ. Հովհաննիսյանի, իրողություն է նաև, որ այդ տրտունջների մեջ բացակայում են վարչակարգի հետևողական քննադատությունը, նրա հեղափոխական բացասումը: Աշ. Հովհաննիսյանը բավարար չի համարում տրտունջն ու գանգատը, անցողակի հիշեցնելով, որ ռուսական բյուրոկրատիայի ծայրագավառային անկարգություններին մասին գանգատներ էր հղում Պետերբուրգ նույնիսկ կառավարչապետ Պասկևիչը: Չէ՞ որ նրա պահանջով էր, որ սենատորական վերահսկող հանձնաժողով ուղարկվեց Կովկաս՝ սենատոր Գանի գլխավորությամբ, որը իբրև թե վերջ պիտի դներ երկրամասում առկա կամայականություններին ու բռնություններին, աստիճանավորների կողմից պաշտոնական դիրքի չարաշահումներին: Սենատոր Գանի գլխավորած վերահսկող հանձնաժողովը, որին ուղեկցվել և որի հետ Աբովյանն արդարություն հաստատելու որոշ հույսեր էր կապել, ինչպես հայտնի է, հօդս ցնդեցին: Եվ դա որպես պետական քաղաքականության մեջ դեմագոգիան գործի դնելու դրսևորում, օրինաչափ էր:

Իր հիմքում լինելով իբրև «ճորտատերերի դիկտատուրա», գրում է Աշ. Հովհաննիսյանը, ցարիզմը Կովկասում և Միջին Ասիայում հայտնի չափով անդրադարձնում էր նաև առևտրական կապիտալի շահախնդրությունները: Նա այս կամ այն կերպով ընդառաջում էր բուրժուազիային, սակայն ընդգծված կերպով կապիտալիզմի ծավալմանը սստարելով, ոչ թե դեպի խորքը, այլ դեպի լայնքը, այսինքն գաղութային կապիտալիզմի կայացման գծով: Աբովյանի աչքը շլաց-

[187] Նույն տեղում, էջ 79-80:

նում էին կապիտալիստական լուսավորության և մանավանդ արդյունագործության այն բնագավառները, որոնք, անմիջորեն դատելով, առաջադիմական դիրք էին տալիս Ռուսաստանին Պասկաստանի հանդեպ: Այս ամենը համարելով ճիշտ, սակայն Աշ. Հովհաննիսյանն անսպասելիորեն շեղվում է իր ձևակերպումից և կատարում տարամետ շարունակություն, թե՝ «Սահմանափակ իր տեսանկյունից Աբովյանը չնկատեց և չէր էլ կարող նկատել ոչ միայն ցարական էքսպանսիայի քաղաքականապես ռեակցիոն դերն Արևելքում, այլ չըմբռնեց ընդհանուր-պատմական առքով պրոգրեսիվ այն նշանակությունը, որ այդ ժամանակ իսկ ստանում էր ցարիզմի դեմ ուղղած ամեն մի ժողովրդական շարժում, անգամ եթե ժամանակավորապես այդ գլխավորում էին մեղկ ու ծույլ դասակարգի ներկայացուցիչները»[188]:

Աշ. Հովհաննիսյանը կարծում է, որ չկարողանալով գտնել ծովացած անարդարությունների վերացման համար պայքարի արդյունավետ ուղի, Աբովյանը հաճախ է ուղղակի և անուղղակի ակնարկում անձնասպանության մասին ոչ միայն նամակներում, այլև բանաստեղծություններում: 1846թ. Մ. Էմինին հղած նամակում Աբովյանը գրել է.

«Եվ վերջացուցի համարյա թէ՝ նպատակ կենացս...
Անհնարին է ընդդեմ խթանի աքացել...»[189]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, գնալով ավելի մահասարսուռ էր դառնում Աբովյանի կյանքի ընթացքը: Նա իբր «սեր ու հարգանք» չէր վայելում համաքաղաքացիների շրջանում: Ինչու՞ հարցին, հենվելով Ի. Շոպենի մատակարարած նյութերի վրա, պատմաբանը պատասխանում է՝ որովհետև Աբովյանի հետ շփում ունեցող Երևանի առևտրականները և սրանց հետ կապված կամ սրանց ազդեցությանը ենթակա քաղքենիները ճանաչում էին նրան որպես ռուսական շահերին նվիրված, «ռուսական տիրապետությունը գովերգող կոլեժսկի ասեսոր Խրիստափոր Արտեմևիչ Աբովյան»: Այդ էր նաև պատճառը, որ Աբովյանի առաջարկած լուսավորական բարեփոխումներն իսկ,

---

[188] Նույն տեղում, էջ 83:
[189] Շահազիզ Եր., Դիվան Խ. Աբովյանի, հատ. I, Երևան, 1940, էջ 63:

նման պայմաններում, «չարիք» էին թվում դարձյալ՝ դեմ առնելով շրջապատի թանձրացած տգիտությանը: Սակայն տգիտությունից առավել ընդդիմանում էր դասակարգային գիտակցված շահախնդրությունը: Իրողություն էր, որ ռուսական տիրապետությունը, որը վերջին հաշվով քաղաքակրթական բարիք եղավ կովկասահայության առևտրական բուրժուազիայի համար ընդհանրապես, լիակատար չարիք եղավ Երևանի վաճառականության համար: Պարսիկների տիրապետության վերջին շրջանում Երևանը մի յուրատեսակ շահաստանն էր: Անդրկովկասի ազատ տրանզիտը նպաստում էր սարդարների նստավայր քաղաքի տնտեսական կյանքին: Սարդարներին ենթակա զորքի, հարեմի և արքունական մյուս պետքերի գոհացումը նպաստում էր ըստ ամենայնի առևտրավաշխառուական կապիտալի կայունությանը: Ի դեպ, ըստ Շոպենի, սարդարները միաժամանակ խոշոր առևտրականներ էին, որոնք շոշափելի ներդրումներով նպաստում էին քաղաքի ձեռնարկությունների գործունեությանը: Խաները ևս, սարդարների օրինակով, մեծ վարկեր էին հատկացնում քաղաքի առևտրականներին[190]:

Այստեղ զարմանալին ու տարօրինակն այն է, որ Երևանի վաճառականական դասի բարեկեցիկ վիճակի Շոպենի գնահատման հիպերբոլիկ չափազանցությունը պատմության խորագիտակ Աշ. Հովհաննիսյանի կողմից չի արժանանում քննադատության (Շոպենը անհարկի ուռճացնում էր Երևանի վաճառականական կապիտալի դերակատարությունը պարսկական տիրապետության ժամանակ):

Այն տեսակետը, թե իբր ցարական վարչակարգի ներմուծած չարիքների դեմ կռվելու անզորության հուսահատությունից է Աբովյանը դիմել ինքնաոչնչացման՝ հեռու է արժանահավատությունից: Դյուրին չէ համաձայնել Աշ. Հովհաննիսյանի այն ձևակերպման հետ, թե՝ «Կովկասահայ բուրժուազիայի առաջին «արժանավոր ուսումնականների» համար ստեղծված անելանելի...կացության մեջ է, ան-

---

[190] Տե՛ս **Шопен И.**, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения её к Российской империи. СПб., 1852, էջ 877:

շուշտ, որ պետք է որոնել նաև Աբովյանի վերապրած ողբերգության և նրա «անհայտ բացակայումի» սոցիալական գաղտնիքը»[191]:

Մերժելով Բակունցի «Արաքս անցնելու» վարկածը, նա ջանում է ընթերցողին համոզել, թե Աբովյանի «վախճանը ըստ ամենայնի համապատասխանում է նրա ողբերգական կացությանը, որ ճգնաժամի ամենից սուր վայրկյաններին ինքնասպանության միտքն էր մխում նրա գիտակցության մեջ... Անհայտացման հանգամանքները վկայում են այն մասին, որ հեռացել էր նա տնից ինքնաբերաբար՝ արտակարգ իր որոշումը գլուխ բերելու համար: Նրա ողբերգության վերլուծումը համոզում է, որ ընդունած այդ որոշումը փրկարար փախուստը չէր, այլ՝ կամավոր մահը»[192]:

Առաջ քաշելով այն կարծիքը, թե պատմությունը մինչև այսօր չի կարողացել «նկարագծել Աբովյանի լիակատար դիմապատկերը...»[193], որ Բակունցի գիրքը ևս չի նպաստել Աբովյանի «յուրացման և հաղթահարման խնդրի լուծմանը», պատմաբանը շարունակում է, որ «ընկ. Ակսելին զբաղեցնողը, նրան հուզողը Աբովյանի ժառանգության պրոգրեսիվ, դեմոկրատական տարրերի յուրացման կամ հաղթահարման խնդիրը չէ, այլ քաղաքական նրա ***ռեաբիլիտացիան*** ընթացիկ սերնդի աչքում: Աբովյանի քաղաքական ռեաբիլիտացիայի մտայնությամբ է անշուշտ, որ ընկ. Ակսելը փորձել է դուրս բերել նրան գյուղի և գյուղացիության գաղափարախոս... երևան հանել նրա սկզբունքային ներհակությունը քաղաքական տիրող կարգերին կամ եկեղեցական տիրող նվիրապետությանը և այլն...

Բայց կարիք կա՞ դրան: Կարիք կա՞, որ Աբովյանը եղած լիներ անպատճառ գյուղացի կամ գյուղագիր, անձնապես պառակտված լիներ տիրող կարգերի և ռեժիմի հետ, ունեցած լիներ, ասենք, հեղափոխական ստաժ, որպեսզի Խորհրդային Հայաստանի բանվորական և գյուղացիական մասսաները կարողանային արժանի տուրքը տալ Աբովյանին հենց թեկուզ նրա համար, որ նրա միջոցով հռչակվե-

---

[191] Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 103:
[192] Նույն տեղում, էջ 106:
[193] Նույն տեղում, էջ 133:

ցին կովկասահայ դեմոկրատիայի մանակավարժական պրոգրեսիվ հայացքները, կամ նրա համար, որ այդ մարդու ձեռքով է գրվել աշխարհաբարի անդրանիկ մանիֆեստը՝ «Վերք Հայաստանին»[194]:

Աշ. Հովհաննիսյանն իր «Աբովյան» ուսումնասիրություն-տրակտատը գրեց մի ժամանակ, երբ իշխող էր գռեհիկ սոցիոլոգիզմը, երբ տիրում էր գաղափարական վախի կարգապահությունը: Այդ է վկայում քննարկվող թեմայի հետ ոչ մի աղերս չունեցող Ի. Ստալինից կատարված նրա մեջբերումը: Ահա այն. «Պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության դարաշրջանը ԽՍՀ միության մեջ ազգային կուլտուրաների-բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային-ծաղկման շրջանն է իսկապես»[195]: Ինչևէ, «Աբովյան» աշխատության հեղինակը մեծ լուսավորչի գրական ժառանգության և ազգանվեր գործունեության դեմոկրատական իմաստն ու ուղղվածությունը որոշակիորեն կտրել է գիտական պատմականությունից:

«Ընկ. Ակսելը,- ըստ Աշ. Հովհաննիսյանի,- մոռանալով ազգային կուլտուրայի վերագնահատման հիմնական ուղեցույցը, Աբովյանի ժառանգության դեմոկրատական *տարրերը* նրա բուրժուական նացիոնալիստական տենդենցներին հակադրելու փոխարեն ջանք է թափել... ազատել կորստից Աբովյանի *ամբողջական* ժառանգությունը: Նա փորձ է արել սրբել «Վերք»-ի ճակատից պատմական նրա արատը, զանց առնել կամ մեղմացնել ռեգրեսիվ տարրերը նրա մեջ: Բայց քանի որ ըստ երևույթին իրեն իսկ վերջիվերջո անհուսալի մի ձեռնարկ է թվացել այդ, հանգել է «շրջադարձի» տեսության, ազատել «Վերք»-ից նրա հեղինակին, վերհիւսել ազգային նոր վիպասանություն, նոր լեգենդ՝ Աղասու փոխարեն հերոսացնելով այս անգամ հենց իրեն՝ Աբովյանին»[196] (ընդգծումները՝ Աշ. Հովհաննիսյանինն են – Ն. Ս.):

---

[194] Նույն տեղում, էջ 134:

[195] Նույն տեղում, տե՛ս նաև՝ **Сталин И.В.**, Вопросы ленинизма, 3-изд., 1931, էջ 702:

[196] Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 142:

Խորհրդային տոտալիտարիզմի առաջնորդին «հարգանքի» տուրք տալուց հետո Աշ. Հովհաննիսյանը շարունակում է, որ Աբովյանը կովկասահայ առաջին հեղինակն է փաստապես, որ դիտել է սոցիալական անհավասարության փաստը, շոշափել «աղքատության» և «հարստության» խնդիրը, նկատել զանգվածների ճնշված ու հալածական կացությունը՝ կարեկից վերաբերմունք հանդես բերելով դեպի աղքատը, սակայն խնդիրը լուծելու համար երևան բերել իր լիակատար անօգնականությունը և անկարությունը: Շարունակելով ժամանակի թելադրանքի ոգուն հարազատ մերկ քարոզչությունը, Աշ. Հովհաննիսյանը հավելում է, որ անօգնականության և անկարության գիտակցությունն է հենց, որ պատճառ դարձավ Աբովյանի հոգեկան ճգնաժամին, նրա տրագիկական վախճանին: Աբովյանի հոգեկան այդ կրախը տիրող հակասություններից ելնելու բուրժուական իլյուզիաների կրախն էր: Նրա անձնական ողբերգությունը՝ պատմական դաս, որ կոչված պիտի լիներ ազատագրելու մասսաներին «գերդասակարգային ֆեոդալ-բուրժուական իլյուզիաներից»՝ առաջնորդելով նրանց դեպի դասակարգային գիտակցության զարթոնք, դեպի հեղափոխական անհաշտ պայքար...»[197]:

1927 թ. չնայած Աշ. Հովհաննսիյանը թողել էր քաղաքական եռանդուն գործունեության ասպարեզը, բայց միևնույն է, տևական ժամանակ (գուցե մինչև 1937թ. ձերբակալությունը, բանտն ու աքսորը) չկարողացավ ձերբազատվել բոլշևիկյան քարոզչության միտք խեղդող ու կաշկանդող ծանր բեռից՝ շարունակելով ենթարկվել և ծառայել իշխող գաղափարախոսության պարտադրանքին: Հետաքրքրական է, որ հետաքսորական կյանքի, հատկապես պատմության ինստիտուտում աշխատած տարիներին այդ իրողությունը հաստատում է ծերունազարդ գիտնականը՝ անցյալի իր գաղափարական համախոհների թույլ տված սխալները բացատրելով հենց տոտալիտարիզմին սպասարկող վայրահրամայական գաղափարախոսության պարտադրանքի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով:

---

[197] Նույն տեղում, էջ 139:

Աբովյանագիտությունը որոշակի առաջընթաց ապրեց գրողի երկերի լիակատար ժողովածուի (հ. 1-10, Երևան, 1947-1961) հրատարակումից հետո: Կարճ ժամանակահատվածում Աբովյանի մասին լույս տեսան գիտական հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ: Հաշվի առնելով նախորդ սերունդների թողած ժառանգությունը, հենվելով նորահայտ նյութերի վրա, աբովյանագետների նոր սերունդը իր կատարած ճշտումներով և լրացումներով, հետստալինյան ժամանակաշրջանի առաջադրած խնդիրների լույսի տակ կարողացան առաջ մղել Աբովյանի կյանքի և գործունեության գործը: Նրանք ոչ միայն նորովի հիմնավորեցին Աբովյանի՝ հայ նոր գրականության և դեմոկրատական մանկավարժության հիմնադիր լինելը, այլև արծարծեցին նրա աշխարհայացքի, հասարակական-քաղաքական մտածողության հետ առնչված բազմաթիվ նոր խնդիրներ: Այս տեսակետից հիշարժան են Գևորգ Աբովի, Վաչե Պարտիզունու, Հրայր Մուրադյանի, Սահակ Բազյանի, Սերգեյ Սարինյանի աշխատություններում առաջադրված նոր մտքերն ու բանաձևումները:

1963 թ. հրատարակվեց Հր. Մուրադյանի «Խաչատուր Աբովյան» ուսումնասիրությունը՝ առաջին ծավալուն ուսումնասիրությունը մեծ դեմոկրատ-լուսավորչի երկերի ակադեմիական հրատարակությունից հետո, երկեր, որոնցում ընթերցողը շատ ավելի համակողմանիորեն էր ծանոթանում Աբովյանի պատմաբանասիրական ստեղծագործություններին և «մեծապես օգնում... մինչև վերջ ճանաչելու Աբովյանին»[198]: Իր մենագրությունում Մուրադյանը վերանայում է աբովյանագիտության մեջ տեղ գտած որոշ տեսակետներ և վերագնահատում մասնավորապես գրողի քաղաքական համոզմունքների ձևավորման գործում դորպատյան միջավայրի ազդեցության դերը[199], միջավայր, որ ազատորեն թափանցում էին ֆրանսիական հուլիսյան հեղափոխության և լեհական ապստամբության հեղաբեկիչ գաղափարները: Աբովյանի դորպատյան օրագրերի ուսումնասիրությունը

---

[198] Մուրադյան Հ., Խաչատուր Աբովյան, Երևան, 1963, էջ 182:

[199] Տե՛ս նույն տեղում, էջ 14-25:

Մուրադյանին բերում է այն համոզման, որ ցարական հետախուզական համակարգը կաշկանդել է գրողին բացահայտ շարադրելու մտքերը, և այդ պատճառով այնտեղ շատ բան քողարկված է խորհրդավորության շղարշով:

«Վերք Հայաստանի» վեպի վերլուծման ընթացքում Մուրադյանը հանգում է շատ կարևոր եզրակացության. ցարիզմի հետ կապված քաղաքական հույսերի պատրանք լինելը «Աբովյանը ի վերջո գիտակցեց, և որքան խորացավ այդ գիտակցությունը, այնքան ավելի խորացավ նրա հիասթափությունը միապետական Ռուսաստանից, կյանքի վերջում վերածվելով սկզբունքային, անհաշտ թշնամանքի»[200]:

Հ. Մուրադյանը, անտարակույս, անհետևողականություն է դրսևորում, երբ Աբովյանի ընդդիմությունը վերագրում է նրա կյանքի վերջին շրջանին, գտնելով, որ «Վերքը» գրելու ժամանակ տակավին չէր ազատագրվել ցարիզմի հետ կապվող քաղաքական հույսերի պատրանքից[201]: 1971 թ. լույս տեսավ տողերիս հեղինակի «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ» աշխատությունը, որտեղ պատմաքննական լուսաբանման է ենթարկվել նաև Աբովյանի հասարակական-քաղաքական մտքի էվոլյուցիայի փուլերը: Աշխատության մեջ Աբովյանի հասարակական-քաղաքական մտածողության զարգացման ընթացքը և դրան համապատասխան ծավալած գործունեությունը բաժանվել է երկու փուլի, առաջինը՝ նախադորպարտյան, երկրորդը՝ դորպարտյան և հետդորպարտյան: Ցույց է տրվել, որ գործունեության նախադորպարտյան ժամանակաշրջանում Աբովյանը Ռուսաստանն ընկալում էր իբրև մի ամբողջություն՝ ռուս ժողովուրդ, ռուս կառավարիչ: Նա գովաբանում էր, գովերգում ցարական վարչակարգի ներմուծած օրենքները, Անդրկովկասում ցարական աստիճանավորների գործելակերպը: Արևելյան Հայաստանի ազատագրման իրողությունը ինչպես ժողովրդի, այնպես էլ նրա ծգտումներն արտահայտող Աբովյա-

---

[200] Նույն տեղում:

[201] Տե՛ս նույն տեղում:

նի կողմից ընկալվում էր որպես քաղաքական վերածննդի սկիզբ, նկատվում որպես անհրաժեշտ շրջան հայերի՝ իբրև հավաքական ազգ և պետականություն ձևավորելու մոտալուտ գալիքի ուղիներում: Հեղինակը «Ո՛հ, դար երջանիկ», «Ո՛հ, չքնաղ գարուն» որակումներ էր տալիս իր հայրենիքի համար սկիզբ առած նոր ժամանակին:

1820-ական թվականներին քաղաքականապես անփորձ բանաստեղծը երգում էր իր հայրենիքի փայլուն այն ապագան, երբ Հայաստանի ցիրուցան զավակները խմբվելով մայր երկրում, Ռուսաստանի հովանու ներքո հարություն են տալիս Հայաստանի երբեմնի փառքին: Խանդավառ բանաստեղծը գովեստի տողեր էր ձոնում Հայաստանն ազատագրող գեներալ Իվան Պասկևիչին, մեծ ինքնակալին, ողորմած կայսեր Նիկողայոսին: Աբովյանը ռուս գեներալների և ցարի մեջ էր մարմնավորում հայության գոյովանքը ապագայի հանդեպ: Արևելյան Հայաստանի ազատագրման և Ռուսաստանին միացման պատմության նոր փուլից բխող ու հայերին համակած ուրախությունն Աբովյանն ապրեց ամբողջությամբ, սակայն նորագրավ երկրի, նրա ժողովրդի նկատմամբ ցարական վարչակարգի գաղութային քաղաքականությունը դուրս չմնաց նրա տեսադաշտից: Տակավին դորպարտյան տարիներին Աբովյանի գրած հայրենասիրական պոեզիայից դյուրին է նկատել, որ հեղինակին հանգիստ չէր տալիս օտար պետությունների բռնությանը ենթարկված և այդ պատճառով աշխարհով մեկ սփռված իր ժողովրդի աննախանձելի կացությունը[202]: Դորպարտյան ուսումնառության տարիներին Աբովյանին այլևս չէր ամոքում իր հայրենիքի ազատագրված վիճակը: Ռուսական տիրապետության վաղեմի պատկերացումները աստիճանաբար մոլորության են հանգում, անցած ժամանակաշրջանում կատարված դեպքերի հաշվառմամբ նա վերանայում է երբեմնի պատկերացումները: Դորպարտյան շրջանի իր բանաստեղծություններից մեկում

---

[202] Տե՛ս Աբովյան Խ., ԵԼԺ, հ. 1, Երևան, 1948, էջ 69: Տե՛ս նաև՝ Սարուխանյան Ն., Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական պատմագրության մեջ, Երևան, 1971, էջ 58-113:

Աբովյանը նախանձում է «դառնաղետ» գերությունից ազատ գերմանացի ուսանող երիտասարդությանը.

Երգեցէ՛ք ասեմ երջանիկ որդիք ազատ բնութեան,
Օրհնեցէ՛ք զպատճառն՝ որ ստեղծ զձեզ ի խաղաղ երկրի,
Ուր չի՛ք գերութիւն, ո՛չ սուր կամ հարուած դառնաղէտ կրի,
Որով անողորմ, ազգն իմ խղճալի տանջի յաւիտեան…[203]:

Խ. Աբովյանն աստիճանաբար մերձենում էր իր համար բյուրեղացող այն ճշմարտությանը, որ Թուրքմենչայի պայմանագիրը ծանր հիվանդի ցավերը մասնակիորեն մեղմող դեղատոմս էր միայն, որ Պարսկաստանում տառապող քրիստոնյա հպատակների համար ազատություն նվաճելը երբեք չէր մտել ցարական Ռուսաստանի գաղութատիրական հաշիվների մեջ:

Ըստ լայնքի ու խորքի ցարիզմի աբովյանական քննադատությունը ավելի ուժգին թափով շարունակվեց հետդորպարտյան ամբողջ ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև գրողի այսպես կոչված «անհայտ բացակայումը»: Աբովյանը գալիս է այն համոզման, որ ցարիզմի քրիստոնեասիրական և ազատագրական կարգախոսները եղել են և են լոկ միջոց ծավալապաշտական ծրագրերի իրացման ճանապարհին: 1840թ. Հայկական մարզի վերացումից հետո նոր օրենքով ստեղծված վարչաձևը իսպառ անտեսում էր հայերի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ազգային-մշակութային շահերն ու առանձնահատկությունները: Այս ամենը խոր կնիք են դնում Աբովյանի ստեղծագործությունների վրա, ուժգին բորբոքում ցարական վարչակարգի նկատմամբ տածած նրա ատելությունը:

«Տեսնում էի,- «Վերքի» առաջաբանում գրում է Աբովյանը,- որ էլ հայի գիրք ձեռն առնող, էլ հայի լեզուն խոսող քիչ է գտնվում: Մեր ազգի պահողն էլ՝ լեզուն ա ու հավատը, եթե սրանց էլ կորցնենք, վայն եկելա մեր օրին: Հայոց լեզուն առաջս փախչում էր Կրեսոսի նման…»[204]: Աբովյանը սրեր էր խրում ցարիզմի տիրապետության շնորհներով արբեցած այն «հաստափոր» հայազգիների մարմիններ-

---

[203] Նույն տեղում, էջ 78:
[204] Աբովյան Խ., Եր.Ժ, հտ. III, Երևան, 1948, էջ 5:

րը, որոնք արտոնյալ դիրքեր, տաքուկ պաշտոններ ձեռք բերելու համար պատրաստ են գնալ ցանկացած ստորության: «Աստվածով հինգ տարուցը եղը,- ասում է նրանցից մեկը,- էլ ոչ հայ կտեսնիս, ոչ հայի անուն կլսես, կորչին, դրանց քոքն էլ կտրվի. հայի անումը՝ որ վերս չէր էլել, ես գիտեմ՝ թե ի՞նչ տեղ կը ճարեի, ի՞նչ փառքի կհասնեի, քանի խաչ ու կավալեր կճարեի»[205] :

Ցարիզմի գաղութային քաղաքականության քննադատությունն Աբովյանն ավելի ուժգին հնչեցրեց «անհայտ բացակայումից» ամիսներ առաջ, 1847 թ. երկրորդ կեսին, կաթողիկոս Ն. Աշտարակեցուն գրած նամակում, որտեղ մասնավորապես ընդգծում էր, որ չի կարելի աննկատ անցնել այն ամենի կողքով, որոնց մասին քարերն էլ են աղաղակում, չի կարելի սրտում թաքցնել այն տանջող ցավը, որ զգում է ամեն մի հայրենասեր:

«Ինչու՞ են խաբում մեզ,- շարունակում է հեղինակը,- Կովկասի կեղծավոր լրագրերը, թե մեր ազգը փառքի ու բարեբախտության մեջ է, որ ճշմարտության օդածայն շռինդ է միայն»[206] :

Պատմական իրադարձությունների կանխակալությունները առավել ցայտունորեն ցույց տալու համար, Աբովյանը սրում էր ռուսական տիրապետության շրջանի անարդարությունները, չարաշահումները, կամայականությունները: «Այժմ ամենաօրհնված Ռուսաց տերության խնամքի թևերի տակ անառակությունը և անկարգությունները կեղեքում են ամեն տեսնող անցավորի անմեղ սիրտը միայն: Ինչո՞վ կարող ենք ազատվել մեր այս ցավերից, ինչպե՞ս թաքցնեմ վերքերս, որոնք օրըստօրե սպառնում են նաև ազգի ամբողջ մարմինը գիշատել: Եվ ի՞նչ է այս բոլորի աղբյուրն ու պատճառը, եթե ոչ տգիտությունը, որ զորեղ բռնակալության ներքո սպառնում էր, իսկ այժմ օրենքի պաշտպանության վարագույրի տակ, ինչպես անբուժելի ժանտախտ, վարակել և գրավել է ամենքի սիրտն ու հոգին... Որտե՞ղ

---

[205] Նույն տեղում, էջ 237:

[206] Աբովյան Խ., ԵԼԺ, հտ. X, Երևան, 1961, էջ 265:

է բարեբախտությունը, ու՞ր է ազատությունը՝ իր անգին հատկության արժանի արդյունքը»[207]:

Ի դեպ, ցարական վարչակարգի կողմից իրականացվող ազգային քաղաքականության նկատմամբ իր խիստ բացասական վերաբերմունքը Աբովյանը շատ բացահայտ արտահայտել էր «Վերքը» գրելուց տարիներ առաջ՝ 1830-ական թվականների կեսերին կազմած «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական վիճակը բարելավելու մասին» զեկուցագրում: Զեկուցագիրը կազմելու պատվիրատուն իշխանությունն էր: 1836 թ. մարտին Մոսկվայի արքունական մի խորհրդականի կողմից կառավարության կողմից առաջարկվում է Աբովյանին զեկուցագիր ներկայացնել Հայաստանի և հայ ժողովրդի վիճակը բարելավելու մասին: Աբովյանը շատ արագ պատրաստում է զեկուցագիրը, որի սկզբնամասի հակիրճ դրվատանքի խոսքերին հաջորդում են փաստարկված քննադատությունը կառավարության հասցեին անդրկովկասյան երկրամասը անուշադրության մատնելու, ինչպես նաև նրա սոցիալական խտրական քաղաքականության համար: Զեկուցագրում Աբովյանն անդրադառնում է ոչ միայն ժողովրդի ծանր սոցիալական դրության, այլև արտադրողական ուժերի զարգացմանը խանգարող ճորտատիրության խնդրին: «Հայ երկրագործը թեև ի բախտավորություն յուր, ուրիշի ճորտը չէ և ունի իր սեփական հողակտորը,- շարունակում է զեկուցագիրը,- սակայն ի՞նչ օգուտ կարող է ունենալ այդ բոլորից, եթե նրան չտանեն այն ուղիով, որպեսզի նա կարողանա, ինչպես հարկն է, օգտվել այդ առավելություններից»[208]:

Արևելյան Հայաստանի և նրա ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքը բարեփոխելու նպատակով զեկուցագիրն առաջարկում է ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությանն անհարիր կապիտալիստական տիպի արդյունագործական ձեռնարկությունների ստեղծում, մանկավարժական ուսումնական հաստատության բացում և այլն:

---

[207] **Աբովյան Խ.**, ՆԼԺ, հտ. 10, Երևան, 1961, էջ 298:
[208] **Աբովյան Խ.**, հատ. 8, էջ 86:

Ինքնին պարզ է, որ գաղութային քաղաքականություն վարող կայսրության 3-րդ բաժանմունքի պետ Ալ. Բենկենդորֆի մեջ ինչպիսի զգացումներ կառաջացնեին նման ազատամտական վտանգավոր առաջարկները: Զեկուցագիրը գնահատվեց ոչ միայն վնասակար, այլև բացահայտ հակապետական:

Եվ այդ գնահատականը Աբովյանին հետապնդեց նրա հետագա ողջ գործունեության ընթացքում:

Խ. Աբովյանը ռուս նոր գրականության վերելքի, ռուսական հասարակական-քաղաքական մտքի դեմոկրատական գաղափարաբանության, ռուսական ինքնուրույն գիտության ստեղծման ժամանակակիցն էր և գրեթե դրանց բոլորի հիմնավորողն ու ներդնողը հայ կյանքում: Նա առաջին արևելահայն էր, որ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական հովանու ներքո գտնվող Ասիայի և Եվրոպայի խաչմերուկ Դորպատի համալսարանում հնարավորություն ստացավ միջնադարականությունից նորին անցման պատմաշրջանում համադրելու եվրոպականն ու ասիականը և կանգնելու առաջադեմ մտածողների մակարդակին: Ասվածը հիմնավորող ցայտուն օրինակ են «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի 1843-1846 թթ. մի շարք համարները բաժանորդագրությամբ ստանալու վերաբերյալ մանրամասները: Այս առումով չափազանց ուշագրավ են այն վավերագրերը, որ հայտնաբերել է Վ. Ղազարյանը ՀՀ Ազգային արխիվում պահպանվող Աբովյանի՝ Երևանի գավառական տեսուչ եղած ժամանակաշրջանի (1843–1848) գրագրություններից: Դրանք թվով 12-ն են, որից 10-ը Ղազարյանը հրատարակել է 1971 թվականին[209]: Փաստաթղթերը որոշակի պարզություն են մտցնում և հնարավորություն են տալիս նոր տեսանկյունով մոտենալու Աբովյանի գործունեությանը:

Հայտնի է, որ 1830-1840-ական թվականներին բորբոքված գաղափարական պայքարի ընթացքում կառավարությունը գրաքննության խստացմանը զուգահեռ՝ կրճատում էր առաջադեմ հրատարակությունները: Միակ շատ թե քիչ լիբերալ թեքումով հրատարակությունը «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագիրն էր Վ. Բելինսկու գոր-

[209] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, N 4, էջ 73-81:

ծուեեռության շրջանում, 1839-1846 թթ.: Գլխավորելով այդ տարիներին ամսագրի գրականության և քննադատության բաժինները, Բելինսկին կարողացել էր այն բարձրացնել առաջադիմական ամսագրի մակարդակի՝ դառնալով նրա գաղափարական առաջնորդը: Այդ է պատճառը, որ հետադիմության բոլոր ուժերը պայքար սկսեցին ամսագրի դեմ: Հետադիմության ձայնափողերն էին «Մոսկովիտյանին», «Մայակ», մանավանդ 3-րդ բաժանմունքի գաղտնի գործակալ Բուլգարինի «Սևերնայա պչելա» պարբերականները: «Օտեչեստվեննիե զապիսկիին» մեղադրելով հեղափոխական վտանգավոր գաղափարների տարածման մեջ՝ ցարական իշխանությունները գաղտնի գրություններով գրադարաններից հանում են «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի 1840–1843 թվականների հավաքածուները: «Մայակը» ծայրահեղ խավարամոլության դիրքերից Պուշկինին, Լերմոնտովին, Բելինսկուն և առաջադեմ մյուս գրողներին ամբաստանում էր բարոյազրկության և նմանողականության մեջ:

Խ. Աբովյանի արխիվի 264 համարի վավերագիրը վկայում է, որ «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրով գրողը հետաքրքրվել է հետադիմական լրագրերի անբարո հարձակումների ամենաթեժ՝ 1842 թվականին: Անցողակի նշենք, որ դա այն պահն էր, երբ «Նախաշավիղի» ապօրինի հրատարակության կապակցությամբ իրար էին խառնվել 3-րդ բաժանմունքը, լուսավորության նախարարությունը և Կովկասի կառավարչապետությունը, որոնք կայսերական ակադեմիայի ընդհանուր ժողովին տված ակադեմիկոս Մարի Բրոսսեի զեկուցման միջոցով ուզում էին պարզել պաշտոնական գաղափարախոսության դեմ ուղեցած Աբովյանի դեմոկրատական մտայնության մասին և նրան մերժել Կազանի հայագիտական ամբիոնի վարիչությունը[210]: Նրա մտայնության բացահայտումից հետո կովկասյան բարձրադիր իշխանությունները, չսպասելով ուսումնական տարվա ավարտին, 1843թ. հունիսի 19-ին Թիֆլիսի գավառական դպրոցի տե-

[210] Տե՛ս Ղազարյան Վ., «Խ. Աբովյանի «գործը», Բանբեր Հայաստանի արխիվների. 1974, N 3, էջ 39-74:

սուչ և ուսուցիչ Աբովյանին, որպես իջեցում, որպես միայն տեսուչ, փոխադրում են Երևան[211]:

Երևան փոխադրվելու ամիսը տակավին չլրացած՝ Աբովյանի դեմ 40 թվահամարով հարուցվում է գործ՝ նրա «անվայելուչ արարքների» համար: Գործ հարուցողն Էջմիածնում «կառավարության աչք» Սինոդի դատախազ Մարտինովն էր, այն անձնավորությունը, որը լավատեղյակ էր «Նախաշավիղի» հետ կապված պատմությանը և ընդհանրապես Աբովյանի ընդդիմադիր մտայնությանը:

Աբովյանը 1843թ. նոյեմբերին ստանում է ուսումնարանների դիրեկտորի հանձնարարական գրություն այն մասին, որ նա պետական հատկացումներով իրավունք ունի Երևանի՝ իր տնօրինության տակ գտնվող ուսումնարանի համար 1844թ. դուրս գրել միայն պաշտոնական պարբերականներ: Դիրեկտորը միաժամանակ զգուշացնում է՝ եթե ուսուցիչները կցանկանան այլ ամսագիր ևս ստանալ, ապա դա պետք է կատարվի իրենց հաշվին և ամենանախընտրելին «Մայակ» ամսագիրն է[212]:

1844 թ. հունվարի 22-ին Աբովյանն ուսումնարանի միջոցներով դուրս է գրում «Մայակ» և «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրերը միասին[213]: Միաժամանակ ուշագրավ է, որ 1844 թ. համար բաժանորդագրվելուց բացի, Աբովյանը ձեռք է բերել նաև «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի նախորդ տարվա՝ 1843 թ. հավաքածուն, որը տպագրական կազմ չունենալու պատճառով ինքը կազմել և իր ձեռագրով բոլոր մեզ հասած 11 համարների վրա գրել է ամիսն ու տարեթիվը: Այդ հավաքածուն պահվում է հանրապետության Ազգային գրադարանում: Ընդսմին, Աբովյանի ձեռագիրը կրող 1843թ. 4-րդ և 12-րդ համարների առաջին էջերում տպագրված են Լերմոնտովի «Երազ» և «Ձեր հուսարի դիմանկարը» բանաստեղծությունները: Ի դեպ, «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի հավաքածուի հետին թվով ձեռքբերման փաստը ևս կարևոր մի գաղտնիք է բացահայտում:

---

[211] Տե՛ս նույն տեղում:

[212] Տե՛ս ՀՀ ԿՊՄԱԱ, ֆ.1, ց.1, գ. 1710, թ. 3-4:

[213] Տե՛ս նույն տեղում, թ. 7, 9, 10:

Խոսքն այն մասին է, որ Պուշկինի սպանությունից հետո ամսագրի խմբագիր Անդրեյ Կրաևսկուն հղած նամակում Բելինսկին գրել է. «Ճշմարիտ մի բանաստեղծ կար Ռուսաստանում, որը լրիվ չավարտեց իր կոչումը: Կենդանության օրոք վատ հասկացան նրան, կհասկանա՞ն արդյոք այժմ»[214]:

1843 թ. հունիսից «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի համարներում հրատարակվում են Բելինսկու՝ Պուշկինի երկերի մասին թվով 11 հոդվածաշարը, որոնցից 4-ական՝ 1843-1844 թթ. համարներում, 2-ը՝ 1845 և վերջինը՝ 1846 թվականին: Հավաքածուի ձեռքբերումն ինքնին խոսում է այն մասին, որ Աբովյանն այդ կատարել է Պուշկինի մասին Բելինսկու ամբողջ հոդվածաշարն ունենալու համար: Չէ՞ որ կենդանության ժամանակ Պուշկինին վատ հասկացվելու կամ լրիվ չսպառելու Բելինսկու ակնարկը վերաբերում էր հանճարեղ գրողին հնարավորություններից զրկելուն և նրան ըստ արժանվույն չգնահատելուն: Եվ բնավ էլ պատահական չէ, որ, նախաձեռնելով Պուշկինի գնահատման գործը հասարակության լայն շերտերի համար 1840-ական թվականներին, Բելինսկին, ըստ էության, հայտնաբերեց մի նոր Պուշկին, հանուն դեմոկրատիայի ծնված գաղափարախոսի, որն ավելի ակնբախ էր դարձնում հետադիմության դեմ սկսած իր պայքարը: Կարծում ենք՝ դարձյալ պատահական չէր, որ հենց այդ ժամանակ ուժեղացան հետադիմական պարբերականների վայրենի գրոհը «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի և Բելինսկու դեմ, որոնք անհետևանք էին մնում միայն բարձրագույն շրջաններում Անդ. Կրաևսկու ունեցած հզոր պաշտպանության հետևանքով, հրատարակչի բնածին առևտրական հոտառությունը նրան մղում էր գիտակցելու, որ նորն ընկալող ընթերցող հասարակության մեջ Բելինսկու առաջացրած քաղաքական այդ ուղղությունն է ապահովում ամսագրի լայն տարածումը, որի բերած եկամուտներից որոշ բաժին էր հանում իր հովանավորներին:

Որ բորբոքված գաղափարաքաղաքական պայքարին Աբովյանը լավատեղյակ է եղել և ուշի-ուշով հետևել է Բելինսկու ծավալած

---

[214] **Белинский В. Г.**, ПСС, т. XI, Москва. 1956, стр. 129.

հեղափոխական-դեմոկրատական գործունեությանը, վառ ապացույց է Պուշկինի մասին մեծ քննադատի 8-րդ և վերջին հոդվածների ձեռքբերման պատմությունը:

Երևանի գավառական ուսումնարանի արխիվից աբովյանագետ Վլ. Ղազարյանի հայտնաբերած վավերագրերը վկայում են, որ մեծ դժվարությամբ հաջողեցրած «Օտեչեստվեննիե զապիսկի» բաժանորդագրությունից Աբովյանը 1846թ. ապրիլի 27-ի գրությամբ անսպասելիորեն հրաժարվում է այն դեպքում, երբ նույն թվականի հունվարի 26-ին ամսագիրը դուրս գրելու հայտ է ներկայացրել ամբողջ 1843 թվականի համար[215]:

Ի դեպ, Աբովյանն այդ հրաժարումը ձևակերպում է շատ զգույշ, նա բացահայտ ամսագրի անունը չի նշում, այդ մասին տեղեկանում ենք միայն Սանկտ-Պետերբուրգի փոստատան առաքման բաժնի պատասխան գրությունից[216]: Վավերագրերը նաև վկայում են, որ հակառակ հրաժարման պատճառաբանության, թե ուսումնարանն այլևս միջոցներ չունի, 1846թ. դեկտեմբերի 21-ին, Աբովյանը Պետերբուրգի փոստատուն է ուղարկում լրացուցիչ գումար և պահանջում ամսագրի 1844թ. 12-րդ և 1846թ. 10-րդ համարները: Հիշենք, որ ամսագրի 10-րդ համարում էր գտնվում Բելինսկու 8-րդ հոդվածը՝ նվիրված «Եվգենի Օնեգինի» վերլուծությանը, իսկ 10-րորդում՝ վերջին եզրափակիչը, ապա ավելի պարզ կդառնա ամբողջ պատկերը:

Պուշկինի մասին Բելինսկու վերջին հոդվածը բովանդակող 1846թ. 10-րդ համարը անպայման ձեռք բերելու նպատակով Աբովյանը երկրորդ անգամ է դիմում մայրաքաղաքի փոստատան առաքման բաժին, իսկ հինգ ամիս հետո՝ 1847թ. մայիսի 30-ին, երրորդ անգամ նույն հարցով նա դիմում է ուղղակի ամսագրի խմբագրությանը[217]: Իսկ արդյունքը լինում է այն, որ խմբագրության գրասենյակը պատասխանում է, որ այդ համարը դիմողին է ուղարկվել ժամանա-

---

[215] Տե՛ս Ղազարյան Վլ., Աբովյանագիտական ճշտումներ և փաստաթղթեր, ՊԲՀ, 1971, N 4, փաստ. N 6:

[216] Տե՛ս նույն տեղում, փաստ. N 7 և 9:

[217] Տե՛ս նույն տեղում, փաստ. N 12:

կին՝ 1847 թ. հոկտեմբերի 12-ին, բայց այն «կորել է» Երևանում[218]: Ակամա հարց է առաջանում. ինչո՞վ է բացատրվում ամսագրից Աբովյանի անսպասելի հրաժարումը, այնուհետև հետևողականորեն Բելինսկու հոդվածները պարունակող համարների ձեռքբերումը: Այս հարցը ևս ունի բացատրություն: Խմբագրի հետ ունեցած սկզբունքային տարաձայնությունների պատճառով 1846 թ. ապրիլի 1-ին Բելինսկին թողնում է «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի խմբագրությունը, որին հետևում են բանաստեղծ Ն. Նեկրասովն ու արձակագիր-երգիծաբան Ի. Պանաևը: Առիթն օգտագործելով՝ ծայրահեղ խավարամոլ Ֆ. Բուլգարինն իր խմբագրած «Սևերնայա Պչելայում» 1846 թ. նոյեմբերին ֆելիետոն է տպագրում ամսագրի դեմ: Այդ կապակցությամբ հրատարակած գրքույկում Կրաևսկին, պաշտպանվելով 3-րդ բաժանմունքի մեղադրանքներից, կշտամբանքներ է ուղղում իր նախկին աշխատակիցներ Բելինսկու, Նեկրասովի և Պանաևի հասցեին: Վերջիններս հանդես են գալիս հայտարարությանք, որում նշում են նաև, որ թեև Բելինսկին խմբագրությունից հեռացել է 1846թ. ապրիլի 1-ին, բայց Պուշկինի մասին նրա եզրափակիչ հոդվածը լույս է տեսել «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի հոկտեմբերյան 10-րդ համարում[219]: Դեպքեր են սրանք, որոնք նախորդել և պատճառ են դարձել Աբովյանի կողմից «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրից ապրիլի 27-ին անսպասելի հրաժարմանը, և այնուհետև 1846 թ. վերջին 10-րդ համարը ձեռք բերելու նպատակով նրա ձեռքբերելու պնդմանը:

Ամենակարևորն այս ամբողջ պատմության մեջ այն է, որ Ռուսական կայսրության հեռավոր ու հետամնաց ծայրամասում, ծառայության կաշկանդումներով Երևանում շրջափակված Աբովյանն ինչպես և ինչ միջոցներով էր կարողանում անմիջապես տեղյակ դառնալ մայրաքաղաքում տեղի ունեցող գաղափարաքաղաքական պայքարին և արձագանքում նրան: Վերն ասածի հենքի վրա տրամաբանո-

---

[218] Տե՛ս ՀՀ ԿՊԱԱ, ֆ.1, ց.1, գ. 1725, թ. 13-13 ա:

[219] **Боград В. Э.**, Белинский. Некрасов и Панаев в борьбе с Краевским. «Некрасовский сборник», М.- Л. т. 2. էջ 412-424:

րեն հարց է ծագում, ինչո՞վ բացատրել մասնավորապես Պուշկինի և Բելինսկու անունների բացակայությունն Աբովյանի գրական ժառանգության մեջ, ինչու՞ ռուս գրողներից ամենուրեք նա հիշատակել է Լոմոնոսովի, Դերժավինի, Կարամզինի և Ժուկովսկու անունները միայն:

Այս հարցին պատասխանում են ժամանակակիցները:

Պատմաբան և հնագետ, արվեստի ճանաչված քննադատ Վլ. Ստասովը Պուշկինի մասին գրել է, որ «Ռուս գրականության այն ժամանակվա դասընթացներում նրա մասին խոսք անգամ չկար (աստիճանով դեռ չի հասել, չափազանց երիտասարդ է, ռուս հիմնական դասականների՝ Լոմոնոսովի, Դերժավինի, Կարամզինի՝ «իսկական գրողների դիմաց ի՞նչ է նա, ասում էին մեր ուսուցիչները), բայց այնուամենայնիվ մենք ուժգին սիրում էինք Պուշկինին»: Նույնը վկայում է նաև հայտնի վիրաբույժ Ն. Պիրոգովը, գրելով, որ «Պուշկինի մասին այն ժամանակվա դպրոցներում... չէր թույլատրվում խոսել»[220]:

Դրա պատճառն այն էր, որ Դեկաբրիստների ապստամբությունից հետո ցար Նիկոլայ Առաջինը անձամբ իր վրա վերցնելով Պուշկինի ստեղծագործությունների գրաքննությունը, դրանք տպարան էր իջեցնում միայն 3-րդ բաժանմունքի միջոցով:

Պուշկինի ողբերգական սպանությունից հետո գրաքննիչ Ալ. Նիկիտենկոն իր օրագրերում գրել է. «Ժուկովսկու մոտ էի, ինձ ցույց տվեց Պուշկինի «Բորիս Գոդունովի» ձեռագիրը կայսեր գրաքննությամբ: Ահա թե ինչու տպագրված «Գոդունովը» առանձին հատվածների հավաքածու է թվում»[221]: Որ մահացած Պուշկինն անգամ մեծ հոգս է պատճառել ցարին՝ գրաքննիչ Նիկիտենկոն իր 1837թ. հունվարի 31-ի օրագրում այսպես է գրել. «Այս իսկ րոպեին ստացա գրաքննության հանձնաժողովի նախագահի կարգադրությունը՝ չթույլատրել Պուշկինի մասին որևէ բան տպագրել»[222]:

---

[220] **Стасов В. В.**, Училище правоведения 40 лет тому назад. «Русская старина», 1881. N 2. стр. 410.

[221] **Пирогов Н. И.**, Севастопольские письма и воспоминания, М., 1950, стр. 306.

[222] Дневник Александр Васильевича Никитенко, «Русская старина», 1889, N 9, стр. 553.

Պուշկինի անվան բացակայությունն Աբովյանի ժառանգության մեջ պետք է միայն սրանով բացատրել:

Առհասարակ, երբ Աբովյանի դորպատյան օրագրերը ուսումնասիրում ենք համառուսական հասարակական-քաղաքական վիճակի տեսակետից, բացահայտվում է մի ուշագրավ երևույթ. չկան այնտեղ հատկապես այն մարդկանց անունները, ովքեր շատ մտերմական շփման մեջ են եղել Պուշկինի հետ, սիրել ու գնահատել են մեծ բանաստեղծի տաղանդը, նրա ազատաշունչ բանաստեղծությունները:

Մասնավորապես դա վերաբերում է Դալ և Մոյեր ընտանիքներին: Աբովյանագետ Պ. Հակոբյանը հաշվարկել է, որ մեկ տարուց մի փոքր ավելի ժամանակամիջոցում Յուլյա Դալն իր օրագրերում հարյուրից ավելի գրառում է թողել Աբովյանի մասին[223], սակայն Աբովյանը նրա և ընդհանրապես Դալ ընտանիքի մասին ոչ մի նշում չի կատարել իր օրագրերում: Դա պատահականություն չէ: Պատահականություն չէ, քանի որ Դալ ընտանիքը ոչ միայն սերտ հարաբերությունների մեջ էր Պուշկինի հետ, այլև Դալ որդիները (Վլադիմիրն ու Պաուլը) իրենց այլախոհ մտայնության պատճառով տուժել էին 3-րդ բաժանմունքի կողմից:

Այսպիսով, Աբովյանի դորպատյան օրագրերի վկայությունները, «Օտեչեստվենննիե զապիսկի» ամսագրի ձեռքբերումների մանրամասները վկայություններն են այն իրողության, որ նա ոչ միայն գիտեր ռուս դեմոկրատական մտքի առաջատարներին, այլև հետևողականորեն կարդում էր Պուշկինի մասին Բելինսկու հոդվածները:

Տեսնելով Ռուսաստանում հասունացող գաղափարական և քաղաքական գործընթացները, Աբովյանն իր հայրենիքի ներկան և ապագան կապում էր կայսրության մեջ բողբոջներ արձակող այն սերնդի հետ, որը թեև չէր ապահովում ազատության ներկան, բայց ապագայի համար այն դարձնում էր խիստ հնարավոր:

1840-ական թվականներին ելնելով վարչակարգի ամրակայման շահերից, ցարական արքունիքը որոշում է մեծ կարևորություն

---

[223] Տե՛ս Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան. Երևան. 1967, էջ 522:

տալ առավել խիստ պատժիչ միջոցների գործադրմանը: Նիկոլայ Առաջինի հրամանով 1844 թ. սկզբին Կովկասի կառավարչապետին իրավունք է վերապահվում 5-8 տարով և կամ ընդմիշտ Սիբիր, Ռուսաստանի ներքին նահանգներ աքսորել նույնիսկ կասկածի ենթակա մարդկանց: Ցարի գրասենյակին կից 6-րդ բաժանմունքի պետ Պոզենը հարց է բարձրացնում ժանդարմական վարչության պետ Ալ. Բենկենդորֆի առաջ՝ վերակառուցելու և ուժեղացնելու Անդրկովկասի ժանդարմական կորպուսի աշխատանքները: Վեցերորդ բաժանմունքի պետը երրորդ բաժանմունքի պետին առաջարկում է Անդրկովկասի ժանդարմական մարմինները չզբաղեցնել միայն գաղտնի տեղեկություններ հավաքելով, այլ ոստիկանական գործադիր ֆունկցիաներ տալ նրանց, իսկ ժանդարմական կորպուսի պետին՝ գեներալ-պոլիցմայստերի իրավունքներ, քանզի, ինչպես ինքն է պատճառաբանում, միայն գաղտնի տեղեկություններ հավաքելով «անկարգությունները» չեն խափանվի[224]:

Ինչ խոսք, Աբովյանը լիովին տեղավորվում էր ցարի հրամանում հիշատակված «կասկածի ենթակա մարդկանց» ցուցակի մեջ:

Արդ՝ շատ հակիրճ Աբովյանի «անհայտացման» առեղծվածի մասին:

Հանրապետության գիտական ամսագրերում տպագրված հոդվածներում աբովյանագետ Վլ. Ղազարյանը պատմաբանասիրական, պատմաիրավագիտական և քրեական-հետաքննական գիտական ուսումնասիրության մեթոդով, հայտնի ու նորահայտ պատմական վավերագրերի վերաիմաստավորմամբ ու բացահայտմամբ կարողացավ տեսանելի դարձնել նաև Աբովյանի «անհայտացման» առեղծվածի գաղտնիության մութ ծալքերը: Գիտնականը Աբովյանի «անհայտացման» բացահայտման բանալի համարեց մեկ դար ու մի քանի տասնամյակ շփոթի պատճառ դարձած «անհայտ բացակայում» և «անհայտ կորուստ» հասկացությունների նմանեցումը: Նա դրանց իմաստի և նշանակության տարբերությունները հիմնավորեց

---

[224] Տե՛ս С. Петербургский ЦентральныйГосударственный Архив, фонд Кавказского Комитета. 1844 года. д. 331. pp. 34:

ժամանակին մարդկանց նկատմամբ կիրառված փաստական օրինակներով, վավերագրերով: Այս առումով պերճախոս է Թիֆլիսի նահանգապետի՝ Կովկասյան կոմիտեին տված հաշվետու զեկուցման մեջ 1848 թ. Անդրկովկասից անհայտացած 6 մարդուց 5-ի դիմաց գրվել է «անհայտ կորած» և միայն Աբովյանի դիմաց՝ «անհայտ բացակայող», որպեսզի պարզ դառնա վերջինիս նկատմամբ իրավաբանական գործավարության էությունն ու բովանդակությունը: «Անհայտ բացակայումից» հետո Աբովյանի նկատմամբ տեղի ունեցած ինչպես դատավարությունների, այնպես էլ դրանց նյութերի ուսումնասիրությունները ակնհայտ է դարձնում զբաղեցրած պաշտոնից զրկվելուց հետո նրա աքսորված կամ և աքսորավայրում մինչև 1853 թ. ողջ մնալու իրողությունը: Դրանով պետք է բացատրել, որ երբ 1853 թ. մարտին լրանում է Աբովյանի՝ Կովկասից դուրս երկրորդ ծառայության դիմաց նրա ընտանիքին նպաստի իրավունք տվող ստաժի պակասը, փոխարքա Վորոնցովը իրեն իրավասու է համարել 1853 թ. ապրիլին միջնորդագիր ուղարկել լուսավորության նախարար Ն. Նորովին և այդ պատճառով էլ նա հոգաբարձուին կարգադրել է նորից իրեն դիմել[225]:

Փաստորեն Աբովյանը ծառայության իրավունքը սահմանափակված, բարձրից ցածր պաշտոնի փոխադրված և առանց դատարանի ծառայությունից հեռացած և բոլոր այդ պատճառներով աքսորված դատապարտյալ էր (վարչակարգի գործող օրենսգրքով աքսորված ազնվականը նոր ապրելավայրում հինգ տարի անբասիր պահելու դեպքում միայն նրա կնոջը և երեխաներին տրվում էր միանվագ նպաստ և նշանակվում թոշակ): Որպես աքսորված դատապարտյալ, Աբովյանի ծառայության նոր, երկրորդ ստաժն էլ հաշվվել է 1848 թ. ապրիլի 2-ից, և 1853 թ. ապրիլին լրանում է նրա ծառայության հինգ տարին, որը և փոխարքային իրավունք է տալիս 1853 թ. մայիսին միջնորդագիր ուղարկելու լուսավորության նախարարություն: Ամեն ինչ կատարվել է գործող օրենքների համաձայն, չի կատարվել կարգ ու կանոնից որևէ շեղում: Գործող օրենքի մեջ մտել է նաև Աբովյանի՝

[225] Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 19, ց. 1, գ. 1553, թ. 1:

որպես «անհայտ բացակայողի» մասին գրավոր որևէ փաստաթուղթ չստեղծելը, քանի որ անհայտ բացակայության ամենագլխավոր պայմանը բացակայողի գտնվելու վայրի գաղտնիությունն էր թե ժամանակակիցներից, և թե հետագա սերունդներից: Ոչ մի կասկած չկա, որ փոխարքա Վորոնցովի միջնորդագիրը գրված է ժամանակի օրենքներին լավագիտակ բարձրադաս պաշտոնյաներին միանգամայն հասկանալի լեզվով՝ օրենքների տրամաբանությամբ մտքեր հաղորդելու ձևով:

Միջնորդագրի հենց առաջին նախադասությունը, թե Երևանի գավառական ուսումնարանի հաստիքավոր տեսուչ Աբովյանը 1848 թ. մարտի 9-ին իր դիմումի համաձայն ուսումնական մասի կառավարչի կողմից ազատվել է իր զբաղեցրած տեսչի պաշտոնից, լուսավորության նախարարի համար, առանց որևէ լրացուցիչ բացատրության, միանգամայն հասկանալի է եղել, որ վատ հակումներ ցուցաբերելու և մանավանդ խռովարարության պատճառներով Աբովյանը ղեկավարության կողմից ծառայությունից հեռացված աստիճանավոր է:

Փոխարքայի երկրորդ հաղորդումը, թե դեռ պաշտոնի հանձնումը չհասցրած, չորս շաբաթ հետո՝ ապրիլի 2-ին, հայտնի չէ, թե ուր է թաքնվել, նշանակում է, որ ծառայությունից հեռանալուց հետո, ապրիլի 2-ին Աբովյանը ձերբակալվել է:

Փոխարքա Վորոնցովի հաջորդ հաղորդումը, թե ձեռք առնված միջոցառումները չեն պարզել նրա հետքերը և Երևանի գավառային դատարանի որոշումն արդեն ի կատար է ածված, նշանակել է, որ Աբովյանը ենթարկվել է «անհայտ բացակայման» վարչական տույժին, կամ որ նույնն է՝ գաղտնի աքսորվել է: Իսկ թե որտե՞ղ, կոնկրետ աքսորավայրի տեղի անունը հայտնի չէ: Հայտնի է միայն, որ Աբովյանի ընտանիքին տրված 600 ռ. միանվագ նպաստի լոկ չափի ուսումնասիրությունը բացահայտում է, որ թոշակի համար պահանջվող երկրորդ, հնգամյա ստաժը, Աբովյանը ձեռք է բերել Սիբիրում, որի հետևանքով էլ նրա ընտանիքին միանվագ նպաստ է տրվել Սիբիրի աքսորվածներին վերաբերող 282-րդ հոդվածով (որպես ղեկավարության կարգադրությամբ պաշտոնաթող արված Աբովյանը դասվել

է 3-րդ կարգի հանցագործների շարքը և նախատեսված աքսորավայրը պետք է լիներ ոչ թե Արխանգելսկի, Օրենբուրգի կամ Պերմի նահանգը, այլ Սիբիրը):

Խ. Աբովյանի կյանքի նման ընթացքը պատահական չէր: Այդպիսին պետք է լիներ «Ուղղափառություն, ինքնակալություն, ժողովրդայնություն» եռամիասնության պաշտոնական քաղաքականության նկատմամբ ամեն կարգի «վատ հակումներ» ցուցաբերողի ճակատագիրը:

Խ. Աբովյանը XIX դարի 30-40-ական թվականներին կովկասահայ իրականության մեջ ամենից շատ «վատ հակումների» տեր, ըմբոստությամբ հանդես եկող ռուս դեմոկրատական հոսանքի գաղափարախոսությունը յուրացրած մեծ մտածողն ու գործիչն էր, ցարական կառավարության հակադեմոկրատական քաղաքականության ընդդիմադիր գործիչը, հատկանիշներ, որոնք տարաբախտաբար իր «Աբովյան» աշխատության մեջ չկարողացավ բացահայտել և ճիշտ արժեվորել Աշ. Հովհաննիսյանը: Չես ուզում հավատալ, որ լայն մտահորիզոնի տեր այնպիսի անհատականություն, ինչպիսին հայտնի հասարակական-քաղաքական գործիչ և պատմաբան Հովհաննիսյանն է, կարող էր թղթին հանձներ հետևյալ էկլեկտիկ և նույնիսկ անհեթեթ տողերը. «Չենք թաքցնում, որ Աբովյանի աղքատասիրությունը, նրա ազատասիրությունը բուրժուական լուսավորչության ատրիբուտներ էին միայն: Չենք մոռանում հատկապես նրա գլուխգործոցի՝ «Վերքի» մեջ ամփոփված ռեակցիոն տարրերը: Չենք անգիտանում այն դերը, որ կատարեց այդ վեպը կովկասահայ ազգային շարժման հետագա շրջադարձի մեջ հենց իր այդ ռեակցիոն տենդենցների շնորհիվ: Գիտենք, որ տակավին Աբովյանի կենդանության ժամանակ, կովկասահայ բուրժուազիայի վերելքի նախօրյակին, նրա պետքերի համար մշակվող բարբառն աշխարհ եկավ այն երկնող դասակարգի պատմական արատով: Սակայն մեզ չի կարող շփոթեցնել Աբովյանի ժառանգության պատմական այդ արատը: Մենք օգտագործում ենք...թշնամի դասակարգերից ստացած կուլտուրական ժառանգություն, մերժելով այդ կուլտուրայի պասիվը, ընդունելով

նրա ակտիվը...» (Աշ. Հովհաննիսյան, Աբովյան, Երևան, 1933, էջ 141): Թվում էր, թե վերոհիշյալ քարոզչական գաղափարախոսության տողերից հետո դեպի գիտություն տանող ճանապարհը փակ է: Սակայն բարեբախտաբար այդպես չեղավ:

1960-ական թվականների վերջերին, մայրամուտից առաջ գրած իր անտիպ աշխատության մեջ Աշ. Հովհաննիսյանը (գիտնականի այդ աշխատությունը մեքենագրված վիճակում պահվում է Մատենադարանի նրա անձնական արխիվում) Աբովյանի «Վերք Հայաստանիին» տալիս է գիտական բարձր գնահատական: Անտիպ այդ աշխատության մեջ նա գրում է, որ «Վերքը» իր հայրենակիցների աչքերը բացելու, նրանց երբեմնի ակնկալությունները իրօրյա կացությանը հակադրելուն էր հետամուտ, և եթե անցյալին հավատարիմ պատմավիպասանը իր ժողովրդի երախտագիտությունն էր հայտնում ռուս ժողովրդին՝ այդ չէր խանգարում նրան մոռացության տալ իր ժողովրդի ազգային-քաղաքական նպատակադրումները...

Եթե հայ ժողովրդի ողբերգությունը միայն պարսկական բռնատիրությունը լիներ, ապա թերևս այլ երանգ կունենար վեպի պաթոսը, բոլորովին այլ՝ նրա լուծումը, անհասկանալի կլիներ հետադարձ հայացքի հեղինակային սուբյեկտիվ ապրումների ամբողջ ողբերգությունը: Ուրեմն կար իսկական վերքեր և իզուր չէր «Վերք Հայաստանիին» լրացվում «Ողբ Հայրենասերի» ենթավերնագրով:

Վերոհիշյալ տողերը Աբովյանի գլուխգործոցի գաղափարաբանության սպառիչ բնութագրում է և մանավանդ նրա վերնագրի ճշմարիտ վերծանում, որը մինչ այդ չէր դրվել մեծ գրողին նվիրված ուսումնասիրություններում:

1950-1960-ական թվականների աբովյանագիտության առաջընթացի, Աբովյանի «անհայտ բացակայումի» վերաբերյալ փաստահիրավագիտական նոր հրապարակումների և իր իսկ ժողված փաստերի քննական վերլուծության հենքի վրա Աշ. Հովհաննիսյանը հանգեց այն համոզման, որ մեծ գրողը եղել է առաջին քաղաքական ազատականն ամբողջ Անդրկովկասում:

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## ՖՐԻԿԸ ԵՎ ՆՐԱ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԱՇ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔԻ ՆԵՐՔՈ

Ֆրիկը միջնադարյան հայ աշխարհիկ գրականության խոշոր դեմքերից է: Հայ բանաստեղծներից ոչ մեկը միջնադարյան Հայաստանի ֆեոդալական հասարակության ներսում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական անհավասարությունը, իշխող վերնախավի արատները խորը և անողոք այնպես չի քննադատել, որքան Ֆրիկը: Սակայն, տարաբախտաբար, անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով բանաստեղծի կյանքի ու գործունեության շատ դրվագներ մնում էին գրեթե չլուսաբանված: Ֆրիկի մասին մեզ հայտնի միակ վկայությունը նրա տաղերից մեկի վերնագրում պահպանված հետևյալ տողերն են. «Ոտանավոր ասացեալ է Ֆրիկն որդի Թագվորշին, եղբայր որդի Դոդինոյի վերայ իւր մեղացն...»[1]:

Բանաստեղծի տաղերի հավաքման, դրանց գիտահամեմատական բնագրերի կազմման ասպարեզում հսկայական գործ է կատարել բանասեր, թարգմանիչ, եկեղեցական գործիչ Տիրայր Վարդապետ Մելիք-Մուշկամբարյանը: Նա է ուսումնասիրել Արևմտյան Եվրոպայի գրադարաններում պահվող հայկական միջնադարյան ձեռագրերը, պատրաստել մի քանիսի վերլուծական ցուցակները («Ցուցակ հայ ձեռագիրների Օքսֆորդի Բոդլեյան գրատան», «Ցուցակ հայ ձեռագիրների Մանչեստրի Ջ. Ռայնոլդս գրատան», «Ցուցակ հայ ձեռագիրների Բրյուսելի արքայական գրատան»), որոնք, թեպետ անտիպ, որոշակի նպաստ են բերել հայագիտությանը և օգտագործվում են առ այսօր (պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում): Տիրայր Վարդապետը հայտնաբերել է Ֆրիկի ստեղծա-

---

[1] Ակինյան Ն., Ֆրիկի «Հիվանի» առթիվ գրված գրախոսականը, «Հանդես ամսօրեայ», 1953, էջ 310:

գործությունները և հրատարակության պատրաստել դրանց գիտաքննական բնագրերը՝ ընդարձակ ուսումնասիրությամբ և հավելվածներով: Տիրայր Վարդապետի երկն արժանանում է ռուսական ակադեմիայի մրցանակին, բայց Առաջին աշխարհամարտի պատճառով չհրատարակվեց, լույս տեսավ միայն տասնամյակներ հետո, 1952 թ. Նյու Յորքում, «Ֆրիկ. Դիվան» խորագրով: Մինչ այդ նույն ժողովածուի բնագրերի սևագիր տարբերակն օգտագործվել էր «Ֆրիկ. Բանաստեղծություններ» (1941, կազմողներ՝ Մ. Մկրյան, Է. Թորոսյան) գրքում:

«Դիվանի» հրատարակությունը զգալի հետաքրքրություն առաջ բերեց բանաստեղծի կյանքի և ստեղծագործության նկատմամբ: Լույս տեսան գրախոսություններ, որոնցում ուշագրավ դիտողություններ եղան Ֆրիկի կյանքի և ստեղծագործության առանձին չլուսաբանված և վիճելի հարցերի վերաբերյալ: Իրողությունն այն էր, որ Ֆրիկի ծննդյան ստույգ թվականի, Ֆրիկ անվան ստուգաբանման, բանաստեղծի ծննդավայրի մասին չկային ճշգրտված տեղեկություններ: Ամեն ինչ քննվում էր ենթադրությունների աշխարհում: Բանասեր Տիրայր Վարդապետը ջանում էր ապացուցել, որ Ֆրիկն իբրև թե ղարաբաղցի է: Նրա կռվանը հիմնականում այն էր, որ բանաստեղծի օգտագործած մի քանի բառեր կան Ղարաբաղի բարբառում: 1955 թ. լույս տեսած իր «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» աշխատության մեջ Աշ. Հովհաննիսյանը ընդդիմացավ այդ առաջադրույթին, նշելով, որ որևէ բարբառի կամ գրական լեզվի բնույթը որոշվում է ոչ թե նրա բառամթերքով, այլ նրա քերականական համակարգով, իսկ այդ տեսակետից Ֆրիկի լեզուն սերտ մերձավորություն չի մատնում առհասարակ հայերենի արևելյան բարբառներից որևէ մեկի հետ, և որ Ֆրիկի գրական լեզուն ավելի մոտ է արևմտահայ բարբառների ճյուղին: Որոշ ուսումնասիրողներ (Ա. Ղանալանյան, Մ. Մկրյան) Ֆրիկի «Յաղագս փոշմանութեան» բանաստեղծության մեջ հիշատակված «Հարգայ» տեղանունը համարել են Կիլիկիայի պատմական Հարգա, այսինքն՝ այժմյան Հաջըն քաղաքը, որտեղ ըստ նրանց Ֆրիկը եկել էր գրավ դրած որդուն որոնելու (այս տեսակետը բնավ

քննության չի բռնում, քանզի Կիլիկիան մոնղոլական տիրապետության տակ չի եղել և անիմաստ էր որդուն որոնել Կիլիկիայում): Ճիշտ համարելով «Հարգայ» բառի «Հարզայ» փոփոխակը, Մ. Աբեղյանը կարծել է, որ դա Աղձնիքի նշանավոր կենտրոն Հազրան է: Հենվելով 1417 թ. գրված մի հիշատակարանի վրա, Աշ. Հովհաննիսյանը առաջադրում է այլ տեսակետ. ըստ նրա Ֆրիկի հիշատակած «Հայգայ» անունը ոչ թե Կիլիկիայի Հարգա քաղաքը կամ Աղձնիքի Հազրա կենտրոնն է, այլ Առանի «Հերդա» գավառը, որի կենտրոնն էր հանդիսանում Աղվանքի հին մայրաքաղաք Պարտավը կամ Բարդավը: Աշ. Հովհաննիսյանը շատ ավելի է մերձենում ճշմարտությանը՝ գրելով, որ Ֆրիկը, մասսաչիության գործի հետ կապված (այս տերմինի էության մասին փոքր ինչ հետո), բազում անգամներ եղել է մոնղոլների ձմեռանոց-ամառանոցներում, այսինքն՝ Ալաղաղի, Գեղարքունյաց լեռնալանջերում, Մուղանի դաշտավայրում... Որ Ֆրիկը իրոք եղել է Անդրկովկասում և հատկապես Աղվանքում ոչ միայն երևում է նրանից, որ նրա տաղերում գործածված են արևելահայ բարբառներին միայն հատուկ մի շարք բառեր ու դարձվածքներ, այլև նրա գործածած «առան» բառից: Այս բառը, որ Ղարաբաղի բարբառում նշանակում է քոչվորների ձմեռանոց, անշուշտ, առաջացած պետք է լինի «Առան» («Աղվանք») երկրի անունից: Կարծում ենք, որ «Հարգայ-Հազրա» տեղանվան կամ բառի մասին եղած մեկնաբանություն-բացատրությունից ամենահավանականը Աշ. Հովհաննիսյանի բացատրությունն է: Վերջինիս կարծիքով Ֆրիկը ծնվել է 1245-1248 թվականներին, իսկ ստեղծագործել սկսել է 1270-ական թվականների վերջերից:

Ֆրիկի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրողներից ոմանք էլ այն կարծիքն են հայտնել, թե իբր բանաստեղծը իր կյանքի մեծ մասում եղել է թափառաշրջիկ (Տիրայր, Աշ. Աբրահամյան), և որ բանաստեղծի «Ֆրիկ» անունը իբր կապվում է «Ֆըռիկ», «Ֆըռֆռիկ», «Ֆըռան», այսինքն՝ «պտտող», «թափառող» բառերի հետ: Այս բացատրությունն անընդունելի է համարվել ոչ միայն այն պատճառով, որ բանաստեղծը թափառաշրջիկի ցուպ է վերցրել իր ստեղծագործա-

կան կյանքի վերջին շրջանում, այլև որ «Ֆռան» «Ֆըռֆռիկ» մակդիրները բոլոր բառարաններում էլ ունեն բացասական իմաստ և նշանակում են «խելքից, բարոյականությունից թեթև մարդ, աննպատակ թափառող, թեթևսոլիկ»: Ճիշտ է նկատել Աշ. Հովհաննիսյանը, որ բանաստեղծը երբեք ոչ մի տեղ իրեն չի կոչել «Ֆռիկ», այլ միշտ՝ Ֆրիկ: Ֆրիկ անունը, եթե իրոք բանաստեղծի կեղծանունն է, ապա պիտի կարծել, որ բոլորից հավանականը և ճիշտը Մ. Մկրյանի ենթադրությունն է, ըստ որի «Ֆրիկ» նշանակում է «խանձված նորահաս ցորեն, նորահաս հասկերից պատրաստված բովվածք»: Այս բառը շատ բարբառներում պահպանված է «Ֆերիկ» ձևով, իսկ Մալաքիայի բարբառում «Ֆրիկ» ձևով: Այս բառը նույն կերպով և իմաստով օգտագործում է նաև Ամիրդովլաքը: Նա գրում է. «Ֆրիկ որ է եղի ցորենն, որ այրեն ի կրակն և ուտեն» (Ամիրդովլաք, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 623):

Որպես ապացույց այս բացատրության համար կարող է ծառայել նաև իր մասին Ֆրիկի գրած հետևյալ տողը. «Ո՛չ ծլիմ, ո՛չ բուսանիմ, զերդ դաղընճած սերմ եմ գերիս»: Աշ. Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» մենագրությունը կարողացավ պատասխաններ տալ բազմաթիվ չբացահայտված և թերի լուսաբանված հարցերի, ճշտեց ու պարզեց վիճելի որոշ պատմագիտական հասկացություններ: Աշխատության մեջ փայլեց պատմաբան բանասերի տաղանդը, վառ երևակայությունը և պատմելու անզուգական վարպետությունը: Դյուրին տեսանելի են այն միակցող ամրակները, որոնցով իրար են զոդվում երկի պատմագիտական և բանասիրական խորհրդածությունները: Կաղապարված չէ կառուցվածքը, բարդ հանգույցները, ժամանակն ու հանգամանքները քննող մտքի շեղահետախուզումները անկաշկանդ ուղեկցում են երկի պատմելաոճին: Հեղինակը միջնադարյան քնարերգուի մտավոր աշխարհը վերլուծում է՝ սերտորեն կապված հայափոփոխ հասարակական միջավայրին: Նյութը մատուցվում է էպիկական հանդարտությամբ, հաճախ ընդմիջվում է տաղերի բանասիրական քննության ընթացքը՝ կողմնակի թվացող, բայց անհրաժեշտ պատմահետախուզական վերլուծութ-

յուններին ընդառաջելու համար: Պատմությունից գրականություն, գրականությունից պատմություն անհրաժեշտ շրջադարձերից բացի, Հովհաննիսյանը դիմում է նաև վիպական համեմատությունների եղանակին, և տեղ-տեղ, պատմության իմաստասիրությունն ավելի դյուրամարս դարձնելու համար գործածում է գիտնական հրապարակախոսի կտրուկ և պատմաբանի սառն ու զուսպ ոճը: Խոհուն պատմագետի մտքի հստակությամբ ու բանասերի ազատ անբռնազբոս ոճով Հովհաննիսյանը ընթերցողին է ներկայացնում միջնադարյան հայ տաղերգուի՝ պատմական սկզբնաղբյուրի արժեք ունեցող գրական աշխարհը:

Լավագիտակ միջնադարյան պատմության հայ և օտարալեզու սկզբաղբյուրներին, ամեն մի երևույթ քննելով ժամանակի համապարփակ միջավայրում, աշխատությունը շատ հարցերում դուրս է գալիս խորագրի մեջ առաջադրված նպատակից և դառնում ժամանակի միջազգային կացությունը գնահատելու մի ուշագրավ փորձ: Ի մի կապակցելով և օգտագործելով Ֆրիկի ստեղծագործության մեջ սփռված ակնարկները ու հիշատակարանները իր իսկ՝ բանաստեղծի անձնական կյանքի ու շրջապատի հանգամանքների վերաբերյալ, հեղինակը հանգամանորեն բնութագրում է Ֆրիկի ապրած դարաշրջանի ողջ վարիվերումները, դրանց հետ առնչված բանաստեղծի ստեղծագործության ազդակները ու դրդապատճառները: Ընդհանրապես ոչ միայն Ֆրիկի ու նրա գրական ժառանգության ամբողջական գիտական պատկերը ներկայացնելու տեսակետից, այլև միջնադարյան հայ գրականության մեջ մի շարք հիմնահարցերի՝ պատմականության դիրքերից խորը գիտական վերլուծության առումով, բացահայտ պետք է ընդունել, որ Աշ. Հովհաննիսյանի գիրքը լուրջ ներդրում է: Եվ այդ ներդրման մեջ ամենից էականն այն է, որ նրանում Ֆրիկի կյանքի և ստեղծագործության հարցերը մեկնվում են պատմաշրջանի արտաղրահարաբերությունների համալիր գործընթացների խորքի վրա, երևույթների միակցության մեջ, մի անհրաժեշտություն, որ հաճախ անտեսում է գրականության պատմաբանը: Պատմական մոտեցումը հնարավորություն է տալիս վերծ մնալ Ֆրիկի

ստեղծագործության բովանդակության էկլեկտիկ մեկնաբանությունից: Իր գիտագաղափարական մակարդակով Աշ. Հովհաննիսյանի աշխատությունը մտավոր մշակույթի զարգացման պատմության բարդ և վիճահարույց հարցերի լուսաբանման աննախընթաց օրինակ է: Իրողությունն այն է, որ Ֆրիկով զբաղվող գրեթե բոլոր բանասերներին գրավել է բանաստեղծի կյանքի հետ կապված չպարզված հարցերից մեկը՝ նրա սոցիալ-տնտեսական միջավայրի հարցը: Բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրողները հատուկ ուշադրություն են դարձրել «Վասն Արղուն ղանին և Բուղային» բանաստեղծության վրա, քանի որ այն կարևոր հիմքերից մեկն է հանդիսանում Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը ճիշտ գնահատելու հարցում: Մինչև Աշ. Հովհաննիսյանի գրքի հրատարակվելը, բոլոր ուսումնասիրողները, որոնց թվում և՛ բանասեր Տիրայրը, և՛ Մանուկ Աբեղյանը, այս բանաստեղծության առանձին մասերը սխալ են լուսաբանել՝ ճիշտ չհասկանալով այնտեղ բազմիցս գործածված «մասաս» և «մասասչի» բառերի իմաստը:

«Ըստ գործածության այս բառը («մասասչի»),- գրել է Մանուկ Աբեղյանը,-նշանակում է՝ իշխանավոր, կառավարիչ, վերակացու, պաշտոնյա, իսկ «մասաս»՝ իշխանություն, կառավարություն (թաքթական), վերակացություն, գուցե և կողոպտում, կամ սրանց նման մի բան: Մասասչիները, ըստ Ֆրիկի, կողոպտիչներ են»[2]:

Բանասեր Տիրայրը, հակադրելով այս երկու բառերը, գտնում էր, որ սրանք ծածկալեզվի բառեր են, ըստ որում, «մասաս» նշանակում է «հայ, ազգակից, արյունակից, ցեղակից», իսկ «մասասչիք»՝ «ոչ հայ, օտար, թշնամիք»: Մեկ այլ տեղ նա սխալ կերպով Ֆրիկին վերագրված մի տաղի տնագլուխ բառերից կազմվող «Յովասափ Մազազ» անունը նույնացնելով Ֆրիկի հետ, կարծել է, որ «մասասը» բանաստեղծի երկրորդ անունը կամ կեղծանունն է[3]:

---

[2] Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 262:

[3] Տե՛ս Տիրայր, Ֆրիկ. Դիվան, Նյու-Յորք, 1952, ծանոթագրություն, էջ 662-663: (Բնագրի վկայակոչումներն առնչվում են Ֆրիկի «Դիվան» հրատարակությունից, ընթերցողի հարմարության համար նշելով նաև 1941թ. Ֆրիկի «բանաստեղծութ-

Պրոֆեսոր Աշ. Աբրահամյանը Ֆրիկի «Դիվանի» հրատարակության առթիվ գրած իր գրախոսականում կարծիք էր հայտնում, որ «մասաս» բառը պարսկերեն «մոասաս» բառն է, որ նշանակում է՝ «գործ, ձեռնարկ, նպատակադրում», իսկ «մասասչի»՝ գործակալ, հավանական է մոնղոլական հարկեր հավաքող գործակալ[4]: Աշ. Հովհաննիսյանը իր ուսումնասիրության մեջ հենվելով պարսիկ պատմիչ Ռաշիդ- Էդ-Դինի վկայությունների վրա ոչ միայն մերժում է «մասաս» և «մասասչի» բառերին տրվող վերոհիշյալ անհիմն բացատրությունները, այլև ցույց է տալիս, որ այդ տերմինները կապված են մոնղոլական բանակի մատակարարման գոյություն ունեցած պրակտիկայի հետ[5]: «Մասաս» և «մասասչի» բառերին տված Աշ. Աբրահամյանի բացատրությունների հետագա ճշտումը թողնելով իրանագետներին և մոնղոլագետներին, այնուամենայնիվ Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ այստեղ «փորձ է արվում ի հայտ բերվել «մասաս» բառի սկզբնական կամ ընդհանուր իմաստը »[6]:

«Պատմաբանասիրական հանդեսի» 1958 թ. անդրանիկ համարում տպագրված «Պատմա-բանասիրական դիտողություններ Ֆրիկի և նրա տաղերի մասին» շահեկան հոդվածում պատմաբան Հայկազ Ժամկոչյանը ցույց տվեց, որ Ռաշիդ-էդ-Դինը այդ բառերը գործածում է ոչ թե «մոասաս» և «մոասասչի» ձևով, այլ «մասաս» և «մասասչի» [7]:

Ռաշիդ-էդ-Դինը վերոհիշյալ բառերը գործածում է հինգ անգամ, ըստ որում չորս անգամ «մասաս», իսկ մեկ անգամ՝ «մասասչի» ձևով:

Պարսիկ պատմիչի վկայություններից երևում է, որ «մասաս» էր կոչվում մոնղոլական բանակի զինահանդերձավորման գործը, իսկ «մասասչի»՝ զինահանդերձանք մատակարարողը:

---

յուններ» ժողովածուի համապատասխան տեղերը: Հայկական կամ հռոմեական թվանշանները ցույց են տալիս բանաստեղծության համարը, իսկ արաբականը դրանցից քաղված տողերը:)

[4] Տե՛ս «Էջմիածին», 1954, հունվար, էջ 35:

[5] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Ֆրիկը պատմաբանական լույսի տակ, Երևան, 1955, էջ 14:

[6] Նույն տեղում, էջ 15-16:

[7] Տե՛ս Рашид-Ад-Дин, Сборник летописей, т. III, М. Л., 1947, էջ 288-286:

Ռաշիդ-էդ-Դինը հաղորդում է, որ Աբաղա խանի (1265-1282) ժամանակ մի քանի «օրթախներ» (մասասչիների ընկերակիցներ) (այսինքն՝ առևտրական ընկերության անդամներ) լավ զենքեր ու ձիեր են բերում: Չինահանդերձանքի ու ձիերի հայթայթման գործին հսկող կառավարիչներից նրանք բերած զենքերի ու ձիերի դիմաց ստանում են խոշոր գումար: Կարճ ժամանակից հետո մի քանի հազար մահմեդականներ և հրեաներ, թողնելով իրենց զբաղմունքը, սկսում են զբաղվել բանակի մատակարարման շահավետ գործով: Մոնղոլական բանակին մասնավոր կարգով զենքեր, ձիեր և հանդերձանք մատակարարողները կամ մասասչիները, հատկապես սկզբնական շրջանում, մեծ հարստություն էին ձեռք բերում: Իրենց հանձնած զենքերի և ձիերի դիմաց նրանք համապատասխան պետական պաշտոնյաներից կամ մոնղոլ էմիրներից ստացագրեր էին ստանում և դրանք ներկայացնում մոնղոլական պետության հարկային-ֆինանսական գրասենյակին՝ այսինքն «Դիվանին», վճարման համար: Եվ քանի որ ֆինանսական-հարկային գրասենյակում շատ հաճախ կանխիկ դրամ չէր լինում, դրա համար էլ մասասչիներին պարտամուրհակ, վճարման գիր («բարաթ») էր տրվում, երկրամասերի կառավարիչներին ներկայացնելու և պետական հարկերի հաշվին իրենց հասանելիք գումարը ստանալու համար:

Պետական հաշվառման և վերահսկողության բացակայության հետևանքով, մոնղոլական հարկային համակարգում շուտով առաջ են գալիս մեծ թվով չարաշահումներ և կեղծիքներ: Մասասչիներից շատերը, բանակին առանց որևէ բան հանձնելու, կաշառքով, համապատասխան պետական պաշտոնյաներից կամ մոնղոլ էմիրներից մեծ գումարների ստացագրեր էին ձեռք բերում: Այնուհետև նրանք այդ ստացագրերը ներկայացնում են դիվանի աշխատակիցներին, որոնք, լավ տեղյակ լինելով գործի հանգամանքներին, սակայն և լռության համար կաշառք վերցնելով՝ երկրամասից կանխիկ փող ստանալու համար յառլիկ (հրամանագիր) և բարաթ էին տրամադրում: Երբ կեղծիքներր և չարաշահումներն անցնում են չափ ու սահման Սահիպ դիվանր (դիվանի պետ, վեզիր) ասում է իր վճռական

խոսքը: Նա խոստանում է մասասչիների ունեցած պարտամուրհակների դիմաց բավարարել 10 թումանին երկու թուման հաշվով, այսինքն 20 տոկոսի չափով, սակայն պայմանով, որ ստանալիք գումարի կեսը տրվի իրեն՝ ցույց տված աջակցության համար: Մասասչիները համաձայնում են: Սակայն Սահիպ դիվանը պայմանը չի կատարում. պետական գանձարանից դուրս գրված կանխիկ դրամը ինքը յուրացնելով, նա մասասչիներին հասանելիք բաժինը վճարում է իրերով և մթերքներով, որոնց արժեքը չի հասնում նույնիսկ խոստացած գումարի մեկ քառորդին:

Որոշ ժամանակ անց, երբ մասասչիները պետությունից այլևս ոչինչ չեն կարողանում ստանալ, նրանց հետ գործարքի մեջ մտած կամ շահաբաժնով ու բարձր տոկոսով փող տված հարուստներից շատերը հրաժարվում են այլևս նյութապես օգնել մոնղոլական բանակի մատակարարներին: Միևչդեռ նրանք, ովքեր արդեն իրենց ամբողջ հարստությունը տվել էին մասասչիներին, բարաթներում նշված գումարները ստանալու հույսով, թողնում են իրենց գործը և ընկերակցում նրանց թափառումներին: Ըստ այդմ, քանի որ բարաթները գրված էին երկրամասերի վրա և վերջիններիս կառավարիչներից այնքան էլ դյուրին չէր գումար ստանալը, մասասչիները և նրանց ընկերակիցները («օրթախները») այս կամ այն մոնղոլ արքայազնից կամ էմիրից, վարձատրման կամ կերակրման պայմանով, զինված խմբեր էին վերցնում: Մասասչիների օրթախները ստիպված են լինում այս խմբերը վարձատրելու կամ կերակրելու համար ոչ միայն վաճառել կամ գրավ դնել իրենց կալվածքները, այլև իրենց հերթին վաշխառուներից բարձր տոկոսով պարտքեր վերցնել:

Արղուն խանի (1284-1291) տիրապետության ժամանակաշրջանի մատակարարած փաստերով հիմնավորվում է, որ մասասչիները և նրանց օրթախները, իրենց ունեցած բարաթների գումարը ստանալու հույսով, անընդհատ թափառումներ են կատարում երկրամասերում, բայց չեն կարողանում ոչինչ ստանալ: Իսկ, այնուամենայնիվ, եթե նրանց հաջողվում էր որոշ բան էլ ստանալ երկրամասերի կառավարիչներից, ապա դա նույնիսկ չէր բավականացնում իրենց

ուղեկցող զինված խմբերի՝ թիկնապահների կերակրմանը: Այս ամենի հետևանքը ի վերջո լինում էր այն, որ գրեթե բոլոր մասասչիները, իրենց ընկերակիցների հետ միասին սնանկանալով հասնում են մուրացկանների դրության: Նրանցից շատերը, չկարողանալով վճարել ծանր պարտքերը պարտատերերի գերիներն են դառնում իրենց կանանց և երեխաների հետ միասին:

Պատմության մատակարարած ուղղակի և անուղղակի տեղեկությունների քննությամբ համոզված, որ անտարակույս նույն բախտին է արժանացել նաև Ֆրիկը, Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ Ֆրիկը պատկանում էր միջնադարյան Հայաստանի այն մտավոր մարդկանց թվին, որոնց կյանքի մռայլ իրիկնաժամը հանդիսանում էր նրանց հուսառատ լուսաբացի հակապատկերը: Նա դուրս էր եկել մոնղոլական շահաստաններում ելումուտ ունեցած այն գործիչների շրջանից, որոնք «ջանքեր էին անում վեր բարձրանալ հասարակական ազդեցության սանդուղքներով և անցողակի հաջողություններից հետո ավարտում իրենց կյանքի ընթացքը էլխանների զնդանում կամ մուրացիկի քսակն ուսած»[8].

Շատ մի դատեցայ, եղբայրք,
Ի Հարգայ ես շատ մի տարի,
Ասցի թ՛իմ ջանօքս առնեմ
Սեծութիւն՝ առանց հրամանի[9]:

Ֆրիկի տողերից ակնբախ է դառնում, որ մոնղոլների օրոք կայուն հարստության և անիշխան մեծության աղբյուր էր հռչակված գնովի կալվածքը և զրնգուն ոսկու բանալիով էր բացվում իշխանության և վայելքի բոլոր դռները.

Նախ ու նասիճ իմ ճոխալուս,
Գոհար շարեմ թագ իմ գլխուս,
Շինեմ դարպաս նախշուն ֆլսուս,
Գեո՛ւ ագարակ շինեմ ժամուս:
Շատ մի ծառայ Հլուիչախ ւ՛ ըռուս,

---

[8] Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 5:
[9] Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, IV, էջ 6-7:

Ժողովեմ բարիք տուն ւ՛ի դուրս,
Լինիմ իշխան իմ ժողովուս[10]:

Ֆրիկը իր տաղերում պատկերում է նաև մոնղոլական շրջանում Հայաստանում իշխած ճորտատեր առևտրականների կամ առևտրական ճորտատերերի հասարակական իդեալը, որին երիտասարդական իր տարիներին հավանաբար տուրք էր տվել նաև ինքը: Բանաստեղծը հետագայում մտաբերում էր այն հարստությունն ու վայելքները, որ ունեցել էր երբեմն, և որոնցից իր վերջո զրկվել էր՝ չհասնելով «փառքի» և այլ մեծության.

Լուկ վազեցի հետ շատ շահի,
Ձինչ տէրն երետ հերիք չածի,
Ա՛յլ մեծութեան սիրտ ունէի...
Այն բազային եմ նըմանի,
Որ փոքր որսի ոչ հավանի[11]:

Հիրավի, որոշ հաջողություն պիտի ունեցած լիներ բազեի մեծ որսը, որպեսզի Ֆրիկ-որսորդը չհավաներ «փոքր որսին»:

Մինչդեռ Ֆրիկի երազն ավերվում է, չքանում տևական բարեկեցիկ կյանքով ապրելու պատրանքը.

Ժողովեցի շատ մի բարի՝
Ըոզակ արի զինք թաթարի...
Ոսկայ եղաւ այնչափ տարի,
Որ տուն ու տեղ դեռ կու քակի,
Ձինչ մեծամեծ վաստակ արի՝
Տանիլ տուի զինք հեղեղի[12]:

Մոնղոլների տիրապետության օրոք ագրարային և խաշնարածային տնտեսության կողքին նշանակություն էին ստանում նաև առևտրական և պետաարքունական եկամուտները: Պետական հարկերի ձև ստացած հողային ռենտան իրացվում էր արտաքին շուկաների հետ հանգուցավորվող կենտրոններում, վերածվում ապրանքի և

[10] Նույն տեղում. XV, էջ 7:
[11] Նույն տեղում. I, էջ 13–16:
[12] Նույն տեղում. I, էջ 17–18:

դրամի: Ֆրիկի ապրած ժամանակ քաղաքներում կենտրոնացված էին զորքերի մատակարարման, հարկահավաքման, հանքերի շահագործման, պետական շինարարությունների հետ կապված կապալային և առևտրավաշխառուական գործարքները, քարվանսարաների, ջրանքների շինարարությունն ու մասնավոր շահագործումը:

Մոնղոլների իշխանության օրոք չարաշահումներն ու կեղեքումները կազմալուծում և քայքայում էին քաղաքային տնտեսության հիմքերը, վերարտադրում կամ նոր կաղապարների մեջ մտցնում տնտեսության հին ֆեոդալական համակարգը, տալով նրան ավելի դաժան և գիշատիչ բնույթ, որ օրինական վավերացում է ստանում XIII դարի կեսերից՝ Հուլաու (1217-1265) և Ղազան (1271-1304) էլխաններից ի վեր: Պարզ է ինքնին, որ այս ամենը պետք է խիստ ազդեր ժողովրդի վրա, կասեցներ նրա դիմադրողականությունը, նախապայմաններ ստեղծելով այլևայլ աղետների համար: Բանաստեղծի ունեցվածքը նույնպես զոհ է դառնում նման աղետի կամ պատուհասի: Նա իրեն հանդիպած այդ աղետը համեմատում է «հեղեղի» հետ: «Կուզես որ ազիս կենաս» բանքում Ֆրիկը իրեն հանդիպածը ներկայացնում է այսպիսի տեսքով.

Ես ան հաւերուն էի, ւր գետինըն կուտ չուտէի
Թղոչ՛ի, երկքնաւքն անցնէի, թէ սիրուն՝ ակնատ չընկնէի,
Ակնատն ի ծովուն կրդգին լարած էր ւ՛ես չգիտէի,
Ամեն հաւ ոտոքն ընկներ, ես ոտաւքս ու թես ավելի[13]:

Բանաստեղծություններից մեկում Ֆրիկը նշել է իր տարաբախտության բուն պատճառը՝ թաթարական մասսան ու մասսաչությունը: Ահա այն.

«Գեմ չի մընաց աղբիւր ու գետ,
Որ լացուցածքըս չի խմեցին:
Գեմ չի մընաց լեռներ ու դաշտք,
Որ մասսաչիքըն չկոխեցին:
Ջմեռն առան՝ յերթին լալով

[13] Ֆրիկ, Դիվան, Խդ, էջ 23:

Ի՛ ամառն ի քոչըն խաչէին,
Քսան տարի դար քաշեցաք,
Որ հալեցաւ ոսկր ու մորքի [14]:

Մ. Աբեղյանը կարծել է, թե մեջբերված հատվածում նշված «քսան տարի դար քաշեցաք» արտահայտությունը վերաբերում է 1249 և 1259-1261 թթ. հայ-վրացական հարաբերություններից հետո ընկած ժամանակաշրջանում հայ ժողովրդի կրած տառապանքներին: Իրավացիորեն մերժելով մեծ հայագետի այս ենթադրությունը, Աշ. Հովհաննիսյանը հենվում է Ֆրիկի նշած 20-ամյա տառապանքների վրա՝ աչքի առաջ ունենալով 1269-1289 թվականների «մասասի» հետ կապված տագնապալից իրադարձությունները, որոնց նկարագրությունը հանդիպում ենք Ռաշիդ-էդ-Դինի մոտ[15]: Ֆրիկից մեջբերված 8 տողանոց հատվածի վերջին երկու տողում ակնարկվում է մասասչիների պարտամուրհակների դիմաց պետությունից գումար ստանալու հետ կապված դժվարությունների, տառապանքների մասին: Ֆրիկը այդ բանաստեղծության մեկ այլ հատվածում կշտամբում է մասասչիներին այն բանի համար, որ նրանք շատ դեպքերում ազնիվ չեն գործում օրթախների հետ: Վերջում Ֆրիկն ակնարկում է մասասչիների կատարած կեղծիքներն ու չարաշահումները:

Իր ուսումնասիրության մեջ Աշ. Հովհաննիսյանը հենվելով Ռաշիդ-էդ-Դինի վկայությունների վրա, ինչպես և նկատի ունենալով այն հանգամանքը , որ «օրթախ» բառը նշանակում է առևտրական ընկերություն և առևտրական ընկերության մասնակից անդամ, հաճախ այդ «օրթախ» բառը նույնացվում է «մասասչի» բառի հետ կամ այս երկու բառերի միջև հավասարության նշան դնում[16]:

Բանն այն է, եթե Ռաշիդ-էդ-Դինի վկայությունները այս կամ այն կերպ հիմք են տալիս այս երկու բառերի իմաստների նույնացման համար, նույնը չի կարելի պնդել Ֆրիկի վկայությունների նկատմամբ: Ֆրիկի մոտ երկու անգամ օգտագործված «օրթախ» բառը գոր-

---

[14] Ֆրիկ, Բանաստեղծություններ, XXXVIII. էջ 63:
[15] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 27, 87:
[16] Նույն տեղում, էջ 21-22:

ծածված է ոչ թե առևտրական ընկերության, ընկերության անդամի կամ «մասասչիի» իմաստով, այլ պարզապես «ընկեր», «ընկերակցի» իմաստով: Ֆրիկը տարբերություն է դնում մասասչիների և նրանց օրթախների միջև: Ըստ տաղերգուի, ոչ թե մասասչիների, այլ նրանց օրթախների անեծքով է աստված պատժել մասասչիների չարակամներին. մասասչիներն են, որ «փետ ընկերաց ծուռ են կացել»:

Ֆրիկը «օրթախ» բառի տակ հասկանում էր մասասչիներին շահաբաժնով փող տված մարդկանց: Կատարված մեջբերումներից դժվար չէ նկատել, որ Ֆրիկի համակրանքը մասասչիների, առավել ևս նրանց օրթախների կողմն է: Հատկապես անհրաժեշտ ենք համարում նշել, որ բանաստեղծը եղել է մասասչիներից մեկի «օրթախը», այսինքն մեկն այն հարուստ մարդկանցից, որը շահաբաժնով փող է տվել մասասչիներից մեկին: «Բանաստեղծի տողերը,- հարում է Աշ. Հովհաննիսյանը,- հիմք են տալիս ասելու, թե նա ինքը ժամանակին պետք է եղած լինի մասասի գործով զբաղված օրթախներից մեկը: Սակայն, նրա մի շարք ակնարկություններից պարզ է, որ նա մեկն էր նրանցից, որոնց պարտական էին մնացել օրթախները և սրանց անվճարունակության հետևանքով ընկել էին մեծամեծ պարտքերի տակ»[17]:

Որ Ֆրիկը իրոք սերտ առնչություն է ունեցել «մասասի» գործի և մասասչիների հետ, երևում է ոչ միայն նրանից, որ բանաստեղծը հաճախ իրեն էլ մասնակից է դարձնում մասասչիների կրած տանջանքներին և նրանց գործի նկատմամբ անմիջական շահագրգռվածություն է ցուցաբերում, այլև նրա հետևյալ վկայությունից.

Աւուրքս անցաւ հետ մասասիս,
Եզըր չի կայ, հուն չերևին.
Ցաւս երկարեց ւի յոսկր անցաւ,
Այլ չի մընաց համբերութիւն[18]:

Գիտակցան իր առաջադրույթների հիմնավորումը Աշ. Հովհաննիսյանը խարսխում է թափանցելով խոսուն իրողությունների խորքը:

---

[17] Նույն տեղում, էջ 34:
[18] Ֆրիկ, Դիվան, էջ 215:

Նա ամենից առաջ կարևորում է «մասասի» և «մասասչիների» մասին Ֆրիկի «Վասն Արղուն դանին և Բուղային» բանաստեղծությունում հայտնված պատմականությունից բխող տվյալները: Ֆրիկի այս քերթվածքում Բուղան այն դեմքն է, որի պատճառով կամ որի վարչության ժամանակ էլխանների հպատակները ենթական են եղել «մասասի» հետ կապված զրկանքներին: Բուղան առաջ էր քաշվել և էմիրների էմիրի կամ հեծելազորի բեյլերբեյի դիրքի հասել էլխան Աբաղայի ժամանակ: Եվ երբ Աբաղայի ժառանգության շուրջը գժտություն է առաջանում նրա մերձավորների՝ Ահմեդի և Արղունի միջև, Բուղան թեքվում է վերջինիս կողմը: Արղունը գրավելով Էլխանների գահը (1284-1291) պետության վարչական ղեկը վստահում է Բուղային՝ տալով նրան բացառիկ լիազորություններ: Այս վստահությունը նա շահագործում է ի վնաս Արղունի և շնորհազրկվում: Դրանից հետո Բուղան դավադրություն է սարքում ընդդեմ Էլխանի, որը ձախողվում է և 1289 թ. սկզբին ավարտվում Մուղանի դաշտում, Քուռի ափին, Բուղայի գլխատումով և նրա գործակիցների մահապարտությամբ: Այս կապակցությամբ «Վասն Արղուն դանին և Բուղային» բանքում անդրադառնալով Բուղային վերաբերող անցքերին, Ֆրիկը չէր դատում ոպես կողմնակի մարդ, այլ գրում էր դեպքերի թարմ տպավորության ներքո, եռանդով պաշտպանում Արղունին և նշավակում ըմբոստացած նրա զորավարին.

Դու քան զԱրղունըն չէր պակաս,
Ի քո յահէդ խիստ կու վախին:
Բուղա էիր՝ չինքսան եղար,
Բեկլար բէկի իր հեծեալին,
Չգիտեմ, թէ զինչ կամիր լինել,
Դու չէիր որդի Չինկըզ դանին[19]:

Սակայն, ըստ էության, այստեղ Արղունի դատը չէ սոսկ, որ Ֆրիկը պաշտպանում է Բուղայի դեմ: Ընդդեմ Բուղայի նա հրապարակ է հանում իր և իր գործակիցների՝ «օրթախների» դատը, և այս առնչությամբ էլ հենց խոսում է «մասասի» և «մասասչիների» մասին:

[19] Ֆրիկ, Բանաստեղծություններ, XXXVIII, էջ 25-30:

Մինչև մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանի վերջը ռազմական մատակարարումները կենսական առաջնահերթ նշանակություն ունեին էլխանների համար և զինվորական վարչությունը հետամուտ էր մասսայի կանոնավոր կազմակերպությանն ու գործունեությանը: Մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանն ավարտին հասավ՝ ասպարեզ տալով ֆեոդալական ներքին կռիվներին և կախաղանի կամ թույնի օգնությամբ գլուխ բերող դինաստիական դավադրություններին, մասսայի գործը դարձնելով ֆինանսական չարաշահումների միջոց, որից լայնորեն օգտվում էին, մանավանդ, էլխան պաշտոնակալները ու վարչապետները: Ահավոր չափերի հասնող բազմաթիվ գործարքներ էին կատարվում Բուղայի զինվորական վարչության ժամանակ: Անհաշխատ հարստություններ են կենտրոնանում մասսաչիների ձեռքում: Նրանք չմատակարարված զենքերի դիմաց կազմել էին տալիս կեղծ ստացականներ առ այն, թե օրինակ այսինչը հանձնել է 1000 ձեռք լիակատար զենք ու զրահ և այսքան-այսքան կոտած ձի:

Նրանք այդ ստացականները, ինչպես վերևում նշել ենք, ներկայացնում էին պետության բիթիկչիներին (լիազորներ), որոնք քաջատեղյակ գործի հանգամանքներին, սակայն լռության համար վարձատրված՝ յառլիկ ու բարաթ էին դուրս գրում մասսաչիների համար: Հաճախ էին պատահում, որ մասսաչիների պարտականություն ստանձնած օրթախներից իրենց շուրջն էին խմբում բազմաթիվ քիկնապահներ, հարուստ հանդերձանքով նստում շքեղորեն թամքած ջորիների և ուղտերի վրա և հանդիսավոր շարժվում դեպի մեծ քաղաքները ու բազմամբոխ շուկաները:

Պետության ղեկավարները շատ լավ ծանոթ էին չարաշահումներին, սակայն հանցավոր անգիտակցումն այստեղ ևս ոչ միայն խրախուսում էր չարաշահումները, այլև եկամտի առատ աղբյուր ծառայեցնում այլևայլ կեղեքումների համար:

Խոսելով քսանամյա իր տառապանքների մասին՝ Ֆրիկն աչքի առաջ ուներ 1269-1289 թթ. «մասսայի» հետ կապված տագնապալից

այն իրադարձությունները, որոնց նկարագրությունը ներկայացրել է էլիանների պատմագիր Ռաշիդ-էդ-Դինը:

Աշ. Հովհաննիսյանի համոզմամբ Ֆրիկը պատկանում է այն մարդկանց թվին, որոնք ինչ-որ գործարքներով կապված են եղել մասսաչի օրթախների հետ, և, բնականաբար, նաև շահագրգռված լինելով նրանց գործերի հաջողությամբ և մյուս կողմից՝ ըստ երևույթին նաև մեկն այն անձնավորություններից, որոնք չարաչար տուժել էին բարաթը ձեռքին քոչվոր «քիթիկչիների» կամ «էլխաննների» պետության բախտը տնօրինող էմիրների և վեզիրների դռները ծեծող մասսաչիներին հանդիպած պատուհասներից, սրանց նյութական քայքայումից: Ֆրիկի մի շարք ակնարկություններից ելնելով՝ Աշ. Հովհաննիսյանը պարզում է, որ նա մեկն էր նրանցից, որոնց պարտական էին մնացել օրթախները և սրանց անվճարունակության հետևանքով ընկել էին մեծամեծ պարտքերի տակ: Բանաստեղծի տաղերում կան տողեր, որոնք հիմք են տվել պատմաբանին եզրակացնելու, թե մասսաչիների կամ օրթախների վերապրած ծանր տագնապով է պայմանավորված եղել Ֆրիկի նյութական կեցության փլուզումը: «Վասն Արղուն դանին և Բուղային» բանքում իր և իր նմանների մասին Ֆրիկը գրում էր.

Իսրայելի գերիքն էաք
Չեռն ինք ընկել ի Բուղային
Ու մեկ հատել էր ի սրտէ,
Թէ զի՞նչ լինի ճար մեր բանին[20]:

Բանաստեղծը մեկն էր այն պարտապաններից, որոնք ճաշակելով պարտատերերի ծաղրը դառնությամբ էին վերհիշում հեշտ ճանապարհով հարստանալու և իշխելու իրենց ունայնամտությունը.

Գիտեմ՝ կային հանցեղ մարդիկք,
Որ ի մեր չարըն խընդային:
Երբ նըստէաք ի հրապարակ,
Ամէնն ըզմեզ ծիծաղէին[21]:

---

[20] Նույն տեղում, էջ 133-138:
[21] Նույն տեղում, էջ 99-102:

Ֆրիկը չէր շրջանցում նաև մասսայի գործով տարվածների զղջման մասին:

Որչափ կապվելով մասսաչիների հետ՝ նա ևս տուրք է վճարել դյուրին ուղիով հարստանալու գայթակղությանը և մեղսակից հանդիսացել երկրում առաջացած ընդհանուր տագնապին, ինքն իսկ ոչ միայն գիտակցում է իր մեղսակցությանը մասսայի գործում, այլև խոր-րապես զգում սեփական «մեղքը»:

Աշ. Հովհաննիսյանը համաձայն չէ Ֆրիկի կյանքով ու գործով որոշ զբաղվողների (Տիրայր և ուրիշներ) հետ, որոնք կարծել են, թե Ֆրիկի մոտ հանդիպող զղջման մոտիվը սոսկ միջնադարյան մարդուն հատուկ կրոնական ինքնախարազանման արտահայտություն էր կամ միջնադարյան հեղինակների՝ գրական բանուկ մի նախակաղապար, ուստի և արժանի անուշադրության:

Սակայն, ըստ էության, Ֆրիկի զղջումը սոցիալ-բարոյական շրջադարձի և ինքնամաքրագործման բուռն մի գործողություն էր՝ ի վերջո առնչված դարձյալ մասսային հաջորդած նրա չարակրություններին հետ.

Սի՛րտ իմ, ընդէ՞ր ես խըռովել,
Ա՛չք իմ, ընդէ՞ր էս խաւարել,
Խե՛լք իմ, ընդէ՞ր ես յապաղել,
Սի՛տք իմ, ընդէ՞ր ես շիւարել...
Դու քո ձեռաւքդ ես հոր փորել,
Եվ քո կամօքդ ի ներս մըտել,
Զայս ու՞մ կամիս դու մեղադրել,
Խընդիր կուգան ըզքեզ տանել[22]:

Աշ. Հովհաննիսյանը ճիշտ է մեկնաբանել Ֆրիկի աշխարհայացքի աստիճանական զարգացման խնդիրը: Եթե իր ստեղծագործական կյանքի առաջին փուլում, խորհրդածելով աշխարհի մասին, նա ապավինում էր աստծուն ու քրիստոնեական գաղափարախոսությանը, ապա աստիճանաբար հեռանում է դրանցից ու իր ուշադ-

[22] Նույն տեղում, VI, էջ 2:

րության կենտրոնը դարձնում մարդու իրական վիճակը: Նա դառնում է առավել լայնախոհ և իրատես, տեսնում է աշխարհում թագավորող սոցիալական անարդարությունն ու անհավասարությունը և ըմբոստանում դրանց դեմ: Բանաստեղծը ի վերջո շահի ու բարեկեցության խելացի աղբյուր է հայտարարում աշխատանքը և մարդ արարածի գործողությունների չափավորությունը.

Զոտքըդ քո չափով փընռես,
Եւ ապա լինիս շահավոր,
Զայս յիմարըն կու ասէ
Թէ անաշխատ հարըստանամ[23]:

Բանաստեղծն այստեղ հռչակում է մի սկզբունք, որը Աշ. Հովհաննիսյանի կարծիքով հակադրված է ֆեոդալական միջավայրում իշխող մտայնությանը: Դա արտահայտում էր միջնադարյան հասարակության ստորին շերտերի սոցիալական ըմբոստության տակավին ամուր չկաղապարված հավատամքը: Սակայն դա դեռ բոլորը չէ: Խորաթափանց հայ տաղերգուն մտահոգված էր ոչ միայն իր հայրենիքի ու ժողովրդի, այլ բովանդակ աշխարհի ու մարդկության բարօրությամբ: Մեծարելով «աստուածադիր» Արղունին՝ նա սպասում էր քրիստոնյաների թագակիր այն առաջնորդին, որն ընդառաջելով պապական Հռոմի հետ դաշնակցած հեթանոս իշխանին, պատյանից հանելու է հատու իր սուրը՝ ազատելու տառապող մարդկությանը «... յանաւրինաց եւ ի ձեռաց չար տանջանաց»[24]:

Դա այն ժամանակն էր, երբ բանաստեղծը հույս ուներ տակավին, թե Արղունը վերջ պիտի տար իր և օրթախների տառապանքներին ու չարարկություններին: Ջանում էր հավատալ, թե մոնղոլների և ֆրանկների զինակցությունը վերջ պիտի դնի քրիստոնյա աշխարհի բոլոր տառապանքներին: Որ մամլուկների ու սարակինոսների դեմ պապական Հռոմի և արևմտաեվրոպական պետությունների հետ զինակցելու համար Արղունի վարած բանակցությունները հանդիպում էին անհաղթահարելի խոչընդոտների՝ կարծես թե ակներև էր քրիս-

[23] Նույն տեղում XXXIX, էջ 61-62:
[24] Նույն տեղում XXXIV, էջ 103:

տոնյաների անմիաբանության մասին Ֆրիկի տրտունջներից: Ինչպես Արևմուտքի պետությունները, այնպես էլ պապական մարտնչող օրդեները ներքուստ պառակտված էին: Նրանց շահախնդրությունները միմյանց էին բախվում նաև Արևելքի վերաբերմամբ: Հատկանշական է, որ Արղունի եվրոպական «դաշնակիցների»՝ Անգլիայի Էդուարդ Առաջին և Ֆրանսիայի Ֆիլիպ Չորրորդ թագավորների հարաբերությունները հասան ծայրահեղ լարման և հանգեցին պատերազմի: Արշավանքը Սիրիայի խաչակիրների դեմ և Կիլիկիայի քրիստոնյաներին Եգիպտոսից պաշտպանելու նրանց խոստումը չիրականացավ:

Ավելին: Մյուս եվրոպական պետությունները՝ Վենետիկը, Ջենովան, Արագոնիայի և Սիցիլիայի թագավորությունները, տնտեսական և քաղաքական իրենց շահախնդրություններով ուղղակի կապված էին եգիպտական մուլթանի հետ:

Անգամ մամլուկ զորքերով պաշարված՝ Աքքեայի բերդում իրար դեմ պայքարում էին ջենովացիները, տաճարականները և յոհանիտները: Այս ամենն արագացրեց 1291թ.-ի Աքքեայի անկումը վերջ տալով խաչակիրների տիրապետությանը Սիրիայի ծովեզրին և անմիջական վտանգի տակ դնելով մոնղոլների և արևմտաեվրոպական «դաշնակիցների» հետ հույսեր կապած Կիլիկիայի հայկական պետությանը[25]: Արղունի և նրա գործակիցների վրա դրված Ֆրիկի բոլոր հույսերն ի դերև են լինում: Էլխանը չվերացրեց մասասչիների չարարկությունները: Բուդային հաջորդած էմիրներն ու վեզիրները ևս, որոնցից Ֆրիկն ակնկալում էր դրական տեղաշարժեր, մահվան դատապարտվեցին: Սինչդեռ երկրի տնտեսությունը գնալով վարընթաց էր ապրում: Արղունին հաջորդած Քեյղաթու խանի ժամանակ արդարադատության անկումը և չարաշահումները լիակատար էր և համատարած: Մոլեգնորեն պտտվող թղթադրամների մեքենան ոչ միայն չէր վերացնում ճգնաժամը, այլև նոր հարված էր հասցնում ապրանքների շրջանառությանը: Մեծ չափերի է հասնում տարագնացությու-

---

[25] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 45, տե՛ս նաև՝ **Микаелян Г.**, История Киликийского армянского государства. Ереван. 1952, էջ 419:

ը: Խուսափելով պարտատերերից և հարկահավաքներից, տեղերում մնացածները ծեփում էին տների մուտքերը, ելումուտ անում տանիքներից:

Երևույթներ էին սրանք, որոնք մասնավորապես ազդանշում էին Հայաստանի և Անդրկովկասի պատմության շրջադարձը, որ IX-XIII դարերի ապրանքաշրջանառության, քաղաքային, կյանքի և քաղաքաշինության վերընթաց զարգացումից հետո ասպարեզ էր բացում նույնքան երկարատև հետընթացի և ավերումի առաջ: Քրիստոնյաների ազատագրման հույսերն իսպառ մարեցին Աքքեայում խաչակիրների կրած պարտությունից հետո: Անցնելով հակահարձակման, եգիպտացիները սպառնում էին Կիլիկիայի հայկական պետությանը: Էլխանների պետությունը իր հերթին խճճվում էր քաղաքացիական կռիվների մեջ, որից հետո, Ղազան խանի գահակալության սկզբում, Հայաստանի դրությունը սկսում է ավելի վատթարանալ: Գոյություն ունեցող հարստահարություններին ավելանում են դինաստիական պատերազմները, մուսուլման վեզիրների և էլխանների ծեռնարկած կրոնական հալածանքներն ու դաժանությունները: Ֆրիկը «Գանգատ» ընտվածքում գրում է.

Այլ կամք ի ձեռս անաւրինի,
Որ կու վարեն անգին գերի,
Քանի՞ քակեն եկեղեցի,
Քանի՞ շինեն պիղծ մզկիթնի:
Քանի՞ կանայս թողուն այրի,
Եվ քանի որք քրիստոնէի.
Որքան արիւն հեղուն յերկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի[26]:

Ֆրիկի քնարերգությունը վերաճում է ըմբոստությամբ տոգորված սոցիալական իմաստասիրության: Իր կյանքի դառը փորձը լծորդած ընթացիկ իրադարձությունների հետ, ծայր է տալիս բանաստեղծի խորաթափանց մտածումներին: Նրա անձնական խոհերը ստանում են համրային-հասարակական իմաստ: Ֆրիկի քնարն անդ-

[26] Ֆրիկ, Դիվան, հավելված Ջ, էջ 79-86, բանաստեղծություններ, XVI, էջ 43:

րաղառնում է աշխարհի վայրիվերումներին, «Ֆալաքի» նենգ կատակներին, «բախտի» ծոռ դատաստանին:

Բանաստեղծը նշավակում է երկրի տերերին ու իշխաններին, վողատերերին ու խաշնատերերին, մեծատուններին, շահատակողներին ու զրկողներին, պաշտպանության տակ առնում, կարեկցում «Ֆալաքից» հալածված աղքատներին ու զրկավծներին, ծառաներին ու անտուններին: Նման հարցեր արծարծող Ֆրիկի քեթվածքներում մեր առաջ մերկանում է քրիստոնեական միջնադարի իշխող մտայնությունն աշխարհի ունայնության մասին: Անշուշտ, Ֆրիկն ազատ չէ միջնադարյան բանաստեղծներից շատերին հատուկ միստիցիզմից: Բայց նրա միստիցիզմը գաղափարական շղարշ է գեթ, որ սքողում է նրա հակաֆեոդալական տրամադրությունները: Բանաստեղծի միտքը տվայտում է կրոնական կապանքների մեջ, սակայն նա սկսում է արդեն ազատագրվել այդ կապանքներից: Իր հայացքով նա հակվում է դեպի մարդը, դեպի նրա կարիքներն ու պահանջները: Իդեալիստական աշխարհայեցողության մեջ Ֆրիկը մտցնում է վերլուծություն և քննադատություն:

«Գանգատ» քերթվածքում բանաստեղծը դիտում է, որ աստծու ստեղծած աշխարհը լի է ազգերի ու լեզուների, անհատների ու դասակարգերի տարակարծություններով: Դժգոհ է մանավանդ, որ հարուստների կողքին կան աղքատներ, պարոնների կողքին՝ ծառաներ և այսպես շարունակ: Նման հակադրություններով միջնադարյան Հայաստանի ըմբոստահույզ միտքը ոչ միայն անդրադարձնում էր դարաշրջանի իշխող հերհակությունները, այլև գժտվում տիրող հասարակարգի հետ: Ֆրիկը կծու երգիծանքով է խոսում այն սրբասացների մասին, որոնց ոսկի նզովող լեզուն և ոսկու վրա դողացող ձեռքը շատ համերաշխ են գործում:

Կյանքի դեպի մայրամուտ շտապող տարիներին Ֆրիկը սկսում է ավելի խոր գիտակցել նաև, որ պառակտված և անիրավ կարգերից տառապող քրիստոնյա աշխարհը կարող է տակավին դիմադրել անօրենների բռնատիրությանը: «Վասն անմիաբանութեան քրիստոնէից» բանքում ընթերցողի առջև մերկանում են քրիստոնյա ֆրանկ-

ների դեմքերն ու հոռոմ կղերի արարքները, նրանց գավազանակռիվը, կրոնական անհանդուրժամտությունն ու մյուս արատները: Կաթոլիկ եկեղեցու պետերը հալածում են «հերձվածողներին», ատում այլադավան քրիստոնյաներին: Նա հատկապես վեր է հանում հույն եկեղեցականների վերաբերմունքը դեպի հայերը[27]: Բանաստեղծը նույն հենքի վրա չի շրջանցում պետությունների փոխադարձ թշնամանքը և նրանց հակամարտությունները.

Ամէնն ատողք են միմեանց,
Բեստէ աւտարք ըզմեզ կոխեն,
Գեմ քրիստոնեայք մեծ մեղուց են,
Որ հանց յերկար դար կու քաշեն…
Թագատրքն չը հաշտին,
Հետ միմեանց ոխ կու պահեն,
Հանապազ զաւր ժողովեն,
Եւ զմիմեանս ի սուր քաշեն[28]:

Բանաստեղծի միտքը թևածում է ամենուրեք տիրող բռնության դեմ, նրա խոսքը դարձնում խռովահույզ ժողովրդի ազատության համար մղվող անհամազոր պայքարում: Սակայն Ֆրիկը հոռետես չէ: Նա միաժամանակ խորհում է չարիքների անցավորության մասին, այդ թվում՝ փողի ու բռունցքի իշխանության: Եվ կարծում է, որ վախճան պիտի ունենա նաև թաթարական բռնապետությունը:

Իր գործուն կյանքի երկրորդ փուլի ստեղծագործություններում, մասնավորապես «Ընդդէմ Ֆալաքին» և «Գանգատ» բանաստեղծություններում, Ֆրիկը հանդես է գալիս որպես սոցիալական բողոքի անհողդողդ արտահայտիչ: Աշ. Հովհաննիսյանը հատուկ ուշադրություն է նվիրում միջնադարի այդ ինքնատիպ ստեղծագործությունների վերլուծությանը, տալով դրանց գիտականորեն խոր և բազմակողմանի գնահատականը: Գիտնականը հանգում է այն եզրակացության, որ Ֆրիկի հասարակական իդեալը արդարացի հասարակությունն էր՝ «խարսխված անհատական աշխատանքի և անհատական ունա-

[27] Տե՛ս Ֆրիկ, Բանաստեղծություններ, XXIV, էջ 7-10:
[28] Նույն տեղում, էջ 31-34:

կությունների ազատ կենսագործման սկզբունքի վրա»[29]: Վերլուծելով «Ընդդէմ Ֆալաքին» բանաստեղծությունը, գիտնականը նկատում է, որ Ֆրիկը աշխարհի անարդարության համար նշավակում է Ֆալաքին, բայց նա դրանով իսկ քողարկված ձևով դատապարտում է աստծուն, որի հրամանով է շարժվում ֆալաքը, որի հրամանին է ենթակա մարդկային բախտի քմայքը:

Բախտի ու աստծու հանդեպ, ինչպես նկատում է Հովհաննիսյանը, Ֆրիկը հլու ընկալողի դերում չէ, այլ՝ ըմբոստ բողոքողի: Եթե ստեղծագործության առաջին փուլում Ֆրիկը իր և ուրիշների տառապանքը դիտում էր իբրև «արդար և իրավ», ապա երկրորդ փուլում ինքն է դառնում մեղադրող և դատավոր, աստծուց հաշիվ պահանջելով նրա ստեղծած անհավասարության, անարդարությունների և զրկանքների համար: Լիովին համաձայն ենք Աշ. Հովհաննիսյանի այն բանաձևման հետ, թե Ֆրիկը «բախտի» և «Ֆալաքի» մեջ անճնավորում էր հասարակական սիրող հակասություններն ու անարդարությունները և սրանց համար հաշիվ պահանջում աստծուց: Հայերի կրած տառապանքները նրանց մեղքերի հատուցում համարելու փոխարեն, Ֆրիկը սկսում է ընկալել որպես աստծու անտարբերության նշան: Միջնադարյան իշխող մտայնությունը սպառնում էր շրջվել գլխիվայր. իշխող դասակարգերի քարոզած հայացքների հանդեպ գլուխ էր բարձրացնում ճնշված ու կեղեքված մասսաների՝ աստծու դեմ ուղղված բողոքը»[30]: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Ֆրիկը բողոքում է աստծու դեմ, կասկածի տակ առնում նրա արդարամտությունը, բայց չի հասնում նրա գաղափարի ժխտմանը: Աստծու անօրինությունների դեմ Ֆրիկի բողոքը նրա գոյության բացահայտ ժխտումը չէր, բայց գեթ առաջին քայլն էր՝ ուղղված օբյեկտիվորեն դեպի այդ: «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ» գրքի հեղինակը բանաստեղծի սոցիալական աշխարհայեցողությունը վերլուծելիս հենվում է վերոհիշյալ երկու քերթվածքների վրա, այս առիթով էլ, ի միջի այլոց, քննադատելով «Դ-անգատ» բանաստեղծության գաղա-

[29] Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 74:
[30] Նույն տեղում, էջ 81:

փարական հիմնական բովանդակության մասին Մ. Աբեղյանի հայացքները: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով Աբեղյանը մի կողմ է դրել բանաստեղծության հիմնական մերկացնող մարտական ոգին, ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ Ֆրիկի քերթվածքի մեջ հիմնականը բողոքն է՝ ֆեոդալական հասարակության մեջ տիրող սոցիալական անարդարության, անհավասարության դեմ, նկատի չունենալով այն իրողությունը, որ Ֆրիկի կարծիքով աշխարհում տիրող անարդարությունների սկզբնապատճառը ինքն աստվածն է: Աբեղյանը հանգում է ոչ ճիշտ հետևության, իր քննությունը կառուցում սոսկ բանաստեղծության վերջաբանի վրա, այն դիտում իբրև «մեղա», որով, իբր, Ֆրիկը փաստորեն ամբողջապես համակերպվում է աստծու դատաստանի, և հետևաբար՝ աշխարհում գոյություն ունեցող անարդարությունների ու սոցիալական անհավասարության հետ[31]:

Ֆրիկի «Գանգատ» և «Ընդդեմ Ֆալաքին» ստեղծագործությունները Աշ. Հովհաննիսյանը որպես շրջադարձ է ընկալում դեպի նոր, կենսահաստատուն մի իմաստասիրության, որը ժխտելով տիրող կարգերի իրավացիությունը, միաժամանակ տարակուսանք է առաջացնում դրանք ճվիրագործող կլոնաճակատագրական աշխարհայեցողության նկատմամբ: Այդ բանաստեղծությունները հնարավոր դարձան տիրող աշխարհայեցողության և տիրող կարգերի դեմ բարձրացած տրամադրությունների շնորհիվ[32]: Ուստի պատահական չէ, որ Ֆրիկի այդ բանաստեղծությունները, մանավանդ «Գանգատը», միջին դարերի ընթացքում շատ մեծ տարածում են գտել, տպագրվել և տարածվել են դրանց փոփոխականները, մի շարք ստեղծագործողներ նրանց նմանողությամբ նոր բանքեր են հորինել, իսկ ոմանք էլ իրենց անուններն են մտցրել այդ բանաստեղծությունների մեջ՝ տեքստերում որոշ փոփոխություններ կատարելով (Թորգոմ, Բարսեղ, Հովհաննես և ուրիշներ):

---

[31] Տե՛ս Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. II, Երևան, 1946, էջ 272-273:

[32] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 84:

Ֆրիկյան տեքստերի նման վերամշակումներն առիթ են տվել բանաստեղծներից ոմանց Ֆրիկին զրկելու այդ հռչակավոր ստեղծագործության հեղինակ լինելու պատվից: Այդպես է վարվել Տիրայրը, որը ջանք չի խնայել ապացուցելու, որ «Գանգատը» պատկանում է ինչ-որ Բարսեղի: Բանասերը այդ ստեղծագործության մեջ տեսել է հոռետես փիլիսոփայական աշխարհայացք, այն համարել արևմտաեվրոպական բարքերի ու մտածողության անդրադարձ՝ կամենալով համոզել, որ այդ քերթվածքի մեջ պատկերված նկարագրությունները կապ չունեն հայ իրականության մեջ եղած կացության հետ: Այստեղ արդեն արտահայտվում է ֆեոդալական Հայաստանի պատմական իրականությունը գունազարդելու բացահայտ միտում: Կան նաև կարծողներ, թե «Գանգատի» սյուժեն ժողովրդական է, որը մշակման է ենթարկվել զանազան ստեղծագործողների կողմից: Աշ. Հովհաննիսյանն այս հարցերը խոր քննության է ենթարկել, գիտական անհերքելի կռվաններով հիմնավորել նմանօրինակ մտածողության անլրջությունը: «Գանգատը» իր տաղաչափական արվեստով, պատկերավորությամբ, մտքերն արտահայտելու եղանակով ոչնչով չի տարբերվում Ֆրիկի մյուս ստեղծագործություններից և, որ կարևոր է, «Գանգատի» հեղինակը նույն մտքերն ու արտահայտություններն է օգտագործում, ինչ որ գտնում ենք «Ընդդէմ Ֆալաքին» գրվածքի մեջ: «Գանգատը» սերտորեն կապված է Ֆրիկի մյուս ստեղծագործությունների հետ, այն Ֆրիկի բարդ ստեղծագործական կյանքի տրամաբանական ավարտն է, և բացարձակապես ոչ մի հիմք չկա Ֆրիկից այն օտարելու և մեկ ուրիշին վերագրելու համար:

Անցնելով Ֆրիկի քաղաքացիական հայացքների քննարկմանը՝ Աշ. Հովհաննիսյանը գրում է, որ «նրա հասարակական-քաղաքական ձգտումներն ու իդեալները շարունակում են պարուրված մնալ միջնադարյան աշխարհայացքի շամանդաղում: Նրա գրվածքների իդեալական լեյտմոտիվը կյանքի ու մահի կրոնական-քրիստոնեական ըմբռնումն է: Մի վայրկյան անգամ չի թողնում նա աստծու փեշը, անգամ այնտեղ, ուր տրտնջում է նրա դեմ: Խորհում է՝ արարչագոր-

ծության և անօրինականության, աստենի ու անդենի, դժոխքի ու աւետքի, գայթակղության և զղջման կատեգորիաներով»[33]:

Ֆրիկի քաղաքացիական հայացքների մեկնաբանը միաժամանակ հատկանշական է համարում այն, որ կյանքի վերջին շրջանում, երբ անձնական ողբերգությունը սրում է նրա քաղաքական ներհուսությունը, լարում նրա միտքն ընդդեմ իշխող բռնության, Ֆրիկի «...հույզերն ու ապրումները, կրոնական համազգեստի մեջ իսկ սկսում են տոգորվել երկրավոր, հասարակական, համաժողովրդական ու համամարդկային հույզերով ու բաղձանքներով: Նրա պատկերած աստվածը բարի ու ողորմած չէ միայն, այլև ցասկոտ ու վերժխնդիր»[34]: Ահա ինչ է գրում բանաստեղծը «բարի աստծուն» ուղղած դիմումում.

Դու արդարոց քաղցր ու բարի,
Մեղաւորաց հուր ու կրակ,
Դու աղքատաց ես ողորմած
Եւ զըրկողաց տաս փոխանակ:
Դու ցըրուելոց ես ժողովող,
Որբոց 'ւ այրեաց ես դու պահակ,
Դու խոնարհից բարձրացնող,
Եւ հըզորաց կաս հակառակ[35]:

Աստծու արդար դատին չապավինելով միայն, իր գծագրած պատկերների մեջ Ֆրիկն ինքն իսկ «դժոխք» է փոխադրում բոլոր զրկողներին ու հզորներին: Դժոխքի հավերժական հուրը միջոց չէր անձնական վրեժի, այլ դատաստան՝ ճնշվածների ու հարստահարվածների: Դժոխքն այն վայրն է հատուցման, որտեղ վերջին կատակլիզմի պահին պիտի կարկամեն տիյռող կարգերի «բարձրախոսները», «հզորները», հարստության բոլոր ասպետները: Կյանքի երեկոյին Ֆրիկի կենսաընկալումը սկզբունքորեն տարբեր է երիտասարդական տարիների անձնապաստան կենսազգացումից: Այդ անձնա-

[33] Նույն տեղում, էջ 70:
[34] Նույն տեղում, էջ 71:
[35] Ֆրիկ, Բանաստեղծություններ, XXIII, էջ 27-34:

կան երջանությունը չէ նրա որոնածը: Անհատի ճշմարիտ բարեկեցությունն ու երջանկությունը կյանքի երեկոյին նա լծորդում է ամենքի բարեկեցության և երջանկության հետ, որ հիմնված չէ ծառաների ու ճորտերի շահագործման վրա: Իսկ դա միջնադարում սոցիալական երազանք էր միայն: Ֆրիկի հասարակական իդեալն ավելին չէր, քան ժողովրդական հավասարապաշտություն (էգալիտարիզմ)՝ խարսխված անհատական ունակությունների և անհատական աշխատանքի ազատ կենսագործման սկզբունքի վրա: Բանաստեղծն այնուամենայնիվ զգում էր անհատական ջանքերից և այդ ջանքերի ընթացքը որոշող, մարդու կամքից ու գիտակցությունից անկախ ինչ-որ ուժերի ու գործոնների գոյությունը: Եվ հենց դրանց իմաստավորման շուրջն են դառնում նրա շրջադարձային տաղերի լեյտմոտիվային բանաձևումները: Նա սկսում է դրվատել մարդու մտավոր աշխարհը, նրա մտքի իմաստասիրությունը: Ի ցույց դնելով իր գրածների արժանիքը, նա դրանք չի համարում հորից ժառանգած հարստություն կամ որևէ վանքում ստացած ուսման արգասիք: Բայց բավական չէ միայն մարդու շնորհքը, նրա կատարյալ խոսքն ու միտքը: Ֆրիկը որոնում է մարդու մեջ նաև բարոյական կատարելություն: Ըստ բանաստեղծի, չկա կատարյալ բարիք՝ առանց բարի գործի: Ֆրիկը մերժում էր նրանց, ովքեր մարդկանց չար արարքը վերագրում են սատանայի ներշնչմանը: Նրա կարծիքով, չարը սատանայի գործ չէ, այլ մարդկային չար մտքի ու չար կամքի արդյունք: Տիրողների ուժի ու խաբկանքի միջոցով ծեռք բերված բարեկեցության իդեալին, նրանց եսակենտրոն էթիկային ու բարոյական սանձարձակության սկզբունքին Ֆրիկը հակադրում է «Ամէնի հասար կամենաս» սոցիալական իր էթիկայի կտրուկ պահանջը (իմպերատիվը):

Ֆրիկը հանգում է այն խոհաիմաստասիրության, թե մարդկանց անձնական արատն ու առաքինությունը կամ նրանց կամքն ու կարծիքը չէ, որ ղեկավարում է աշխարհը: Մարդկային գործունեության արդյունքը կախված չէ սոսկ գործողների անձնական ունակություններից, նրանց ցանկությունից ու ձգտումներից.

Թե ճարտարութեամբ որևէ մարդ ըզիացն զինչ իւրն է տուած,

Տըխմարն յաշխարհիս վերայ չի պիտէր մէկ օր ապրած…[36]

Ֆրիկը նույն այս միտքն արծարծում է «Ֆալաքի», «բախտի», «չարխի» պատկերներով: Նրա «Ընդդէմ ֆալաքին» և «Գանգատ» բանաստեղծությունները բողոքի պոռթկումներ են և միաժամանակ՝ հասարակության ստորին խավերի կրած հուսահատությունների հայտարար: Դրանցում բանաստեղծը հաշիվ է պահանջում աստծուց նրա ստեղծած աշխարհի և մարդկանց ներհակությունների ու զրկանքների համար: «Ֆալաքի» ու «բախտի» մեջ նա անձնավորում է հասարակական տիրող հակասություններն ու անարդարությունները և սրանց համար աստծուց հաշիվ պահանջում: Ֆրիկը հայերի կրած տառապանքները նրանց մեղքերի հատուցում համարելու փոխարեն, սկսում է ընկալել որպես աստծու անտարբերության արտահայտություն: Երբ իշխող միջնադարյան մտայնությունը պատրաստվում էր շրջվել գլխիվայր, տիրող դասակարգերի քաղաքական հայացքների հանդեպ ներքուստ ներուժ է հավաքում ճնշված զանգվածի՝ աստծու դեմ ուղղված բողոքը: Ջուր չէ, որ ըստ բովանդակության այնքան հնամահունչ են «Գանգատ» և «Ընդդէմ Ֆալաքին» քեթվածքները: Աստված «Ֆալաքի» միջոցով դատում է մարդկանց ոչ միայն «այն», այլ «այս» կյանքում: Ֆալաքի անունից է Ֆրիկն ինքն իսկ գուշակում ճնշողների և հարստահարողների կործանումը:

Ֆրիկը չէր վստահում ծուռ ու նենգ հռչակելու աստծո դատաստանը, բայց բողոքելով նրա անօրինությունների դեմ՝ կասկածի տակ է դնում նրա արդարամտությունը, որը տիեզերքի արարիչը չէր միայն, այլ նրա բարեխնամվածության աղբյուր-երաշխավորը: Դա այն սկեպտիցիզմն էր, որ պատմականորեն կանխում էր մտքի ազատագրմանը: Հարկավ, արարչի անօրինությունների դեմ Ֆրիկի տրտունջը կամ աստծո արդարամտության մասին հայտնածը դրանց գոյության բացահայտ բացասումը չէր, դա սոսկ առաջին քայլափոխն էր՝ օբյեկտիվորեն ուղղված դեպի այդ նպատակը: Բանաստեղծի հավատ չընծայող միտքը նույն այս կերպով հարցական է դարձնում ոչ միայն աստծու, այլև սատանայի բիբլիական հորին-

[36] Ֆրիկ, Դիվան, Իբ, էջ 15-20:

վածքը: Ինչ խոսք, անվիճելի է, որ նախապաշարումի իներցիան, ի վերջո, կարծես իջեցնում է Ֆալաք-աստծու դեմ ուղղված բողոքի քափը, լսելի դարձնում նրա զոջումի մեղեդին: Սակայն այն տեղի է ունենում, երբ արդեն մերկացվում են Ֆալաք-աստծու կույր ու անիրավ գործերը, բացահայտվում անբարո «բախտավորների» հակամարդկային արարքները: Այս ամենը ի վերջո տեղի է ունենում մարդկանց ահ ու սարսափի մեջ պահող ֆանտաստիկ ուժի առաջ և բանաստեղծը քրիստոնեաբար «մեղայ» է գալիս իր ըմբոստության համար՝ «բայց ինձ ներա՛, ո՛վ հայր բարի»: Անտարակուսելի է, որ համարձակ մերկացումից հետո ինչպես «Գանգատի» այնպես էլ «Ընդդէմ Ֆալաքին» բանքի խոնարհ վերջաբանը հնչում է կարծես ինքնազոջման դառն հեգնանք: Վերջին տաղերը պիտի ընկալվեին որպես շրջադարձ դեպի նոր, կենսահաստատ մի իմաստասիրություն, որը ժխտելով տիրող կարգերի իրավացիությունը, միաժամանակ տարակույս էր առաջացնում դրանք նվիրագործող կրոնաճակատագրական իշխող հայեցողության նկատմամբ: Եվ ոչ միայն այս կարգի իմաստասիրական խորհրդածությունները հնարավոր դարձան իշխող աշխարհայեցողության և ընդդեմ իշխող բազիսի տրամադրությունների շնորհիվ:

Աշ. Հովհաննիսյանի գրքում հարևանցիորեն անդրադարձ կա դեպի պավլիկյանների և թոնդրակեցիների ուսմունքը Ֆրիկի ունեցած վերաբերմունքին: Գրքի 61-րդ էջում նա նշում է, որ Ֆրիկն ազատ չէր միջնադարյան քերթողներից շատերին հատուկ միստիցիզմից: Սակայն նրա միստիցիզմը իդեոլոգիական շղարշ է սոսկ, որը սքողում է նրա հակաֆեոդալական տրամադրությունները: Այնուհետև ավելացնում է, որ «...մի քայլ էր պավլիկյանների միտքը, որին, պիտի կարծել, իսպառ անհաղորդ չէ նաև Ֆրիկը. եկեղեցու հովիվները չէ, որ միջնորդ պիտի լինեն մարդու և աստծու միջև-խորհում է նա: Փրկության կամուրջը եկեղեցու միջնորդությունը չէ, այլ մարդու հավատը» (էջ 68):

Չափազանց ուշագրավ մտքեր են: Միայն պետք է ափսոսալ, որ դրանք աշխատության մեջ չեն ստացել գիտական լուսաբանութ-

յուն: Հեղինակը չի կարևորել այս իրողությունը, որ ֆեոդալիզմի դեմ ուղղված հերետիկոսական ընդդիմությունը նկատվում է ամբողջ միջնադարի ընթացքում: Նայած ժամանակի պայմաններին, նա հանդես է գալիս մերթ որպես միստիկա, մերթ իբրև զինված ապստամբություն: Նկատի ունենալով այս և միջնադարյան սոցիալական շարժումների կրոնական քողի մասին լուսավորիչների բնութագրումները, անհրաժեշտ էր ավելի լայն լուսաբանություն տալ Ֆրիկի՝ դեպի միստիցիզմը և աղանդավորական շարժումներն ունեցած վերաբերմունքի հարցին: Այս հանգամանքը հատուկ շեշտում ենք, նկատի ունենալով դրա կարևորությունը ոչ միայն Ֆրիկի պատմահայեցողության ամբողջական պատկերը ներկայացնելու, այլև միջնադարի հայ գրականության առաջընթացի միտումները ճիշտ գնահատելու տեսանկյունից:

Ֆրիկի բանաստեղծություններում կան հույզեր և խոհեր , որոնք անդրադարձնում են իշխող գաղափարախոսությանը դեմընթաց ժողովրդի լայն հատվածի ներքնաշխարհը: Մեղքի ու զղջման, տանջանքի ու փրկագործման, հանցանքի ու հատուցման տրամադրություններով առատ իր գրվածքներում բանաստեղծը պատմում է ալեկոծ իր կյանքի ողջ ողբերգությունը, որի մեջ արտացոլված են ըստ էության միջնադարի հայ ժողովրդական զանգվածների չիրացված ապրումներն ու տրամադրությունները, հուսավառություններն ու հուսախաբությունները: Ֆրիկը սակայն գամված չէ այդ հասարակարգի մտաշխարհին: Նրա միտքը բարձրանում է այդ մակարդակից վեր, արձագանքում իրեն նախորդած առաջադեմ իմաստասիրաբան խորհող մեծ մտածողներին: Եթե աստծուն հասցեագրած իր դիմումներով, զղջումի և բարոյազրկման իր մոտիվներով Ֆրիկը քայլում էր մի արահետով, որի վրա X դարում ոտք է դրել Գր. Նարեկացին, ապա ֆեոդալական դաժանությունների և կեղեքումների նշավակումով, իրավունքի և արդարության հաղթանակի տենչով նա հիշեցնում էր Նիզամուն:

Երևույթների անցավորության մասին Ֆրիկի իմաստասիրությունը, բողոքը կույր ճակատագրի դեմ, կրոնական սկեպտիցիզմը կամ

հեգնանքը կրոնավորների հասցեին՝ ըստ էության պարսից XII դարի բանաստեղծ Խաքանիին էր արձագանքում: Նախախնամության մասին Ֆրիկի ունեցած հայացքը, ժողովուրդների բարեկամության նրա իղեալը, անձի բանականության նրա մեծարանքը և խոր մարդասիրությունը համահնչուն էին XII դարի վրաց բանաստեղծ Շոթա Ռուսթավելուն: «Ծանո՞թ էր Ֆրիկը սրանց գործերին. այդ չէ էականը, այլ այն, - գրում է Աշ. Հովհաննիսյանը,- ինչ փաստապես մերձեցնում է նրան դրանց և միաժամանակ այն, ինչ տարբերանշում է նրան դրանցից: Ֆրիկը չունի մեծ այդ նախորդներից ոմանց մոնումենտալ մտահղացումներն ու սյուժետային նրբին ու շքեղ հյուսվածքները, նրանց պլաստիկ կերպարներն ու հերոսական բնավորությունները, ասպետական պատվի, սիրո և հավատարմության նրանց պաշտամունքը: Բայց որքա՛ն դիպուկ է ու հարուստ նրա բնութագրած հասարակական հակասությունների պատկերը, որքա՛ն անմիջական ու խոր նրա անձնական ողբերգությունը, որքա՛ն վճռական ու նշանակալից նրա շրջադարձը դեպի ճնշված ու հարստահարված ժողովրդական խավերը, նրա դեմոկրատական ազատությունն ու հավասարությունը, նրա ըմբոստացումը բռունցքի և կեղեքումների իշխանության դեմ, նրա տիտանական մենամարտը Ֆալաք-աստծու դեմ:

Նրա մեզ հասած քերթվածքները ուրույն ապրումների և խոհերի սղոցունք են: Նրա ներքնաշխարհը դրսևորող գծագրություններն ու ներկերը, կենդանի ու աշխույժ, ժողովրդական լեզվին մոտեցող խոսքի վարպետությունը արտացոլում են հեղինակի խոր իմաստասիրությունը և վերարտադրում հակասություններով ու բախումներով լի պատմական նրա դարաշրջանի հարազատ պատկերը»[37]:

Բանասիրության ու պատմագիտության խորհիմացությամբ Աշ. Հովհաննիսյանն առավել պարզ ու հասկանալի դարձրեց, որ Ֆրիկի կրոնաբարոյական տաղերը չեն, որ բնորոշում են միջնադարի հռչակավոր բանաստեղծի գրական դեմքը, չնայած նրանց քանակը շատ է և նրանց մեջ ևս մեծ տաղասացը շռայլ կերպով սփռել է վարպետ

[37] Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 120-121.

ստեղծագործի իր գոհարները: Ֆրիկի «Ընդդէմ Ֆալաքին», «Գանգատ» և նման կարգի քերթվածքներն են, որ նրան ոչ միայն հայտնի չափով բարձրացնում են իր ժամանակակիցներից, այլև դարձնում միջնադարյան հայ և համաշխարհային գրականության նշանավոր դեմքերից մեկը:

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԱԾ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» (ԵՐԿՀԱՏՈՐ) ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԲՆՈՒԹԱԳԾԵՐԸ

Հայ ազատագրական մտքի գաղափարախոսության պատմության քննությանը նվիրված «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր (գիրք առաջին, 1957, գիրք երկրորդ, 1959) մեծարժեք աշխատության մեջ Աշ. Հովհաննիսյանը հանգամանալից քննության-վերլուծության ենթարկեց ազատագրական մտքի զարգացումը՝ սկսած վաղ միջնադարից մինչև XVIII դարի սկիզբը: Գիտնականն իր աշխատության մեջ չի սահմանափակվում միայն հայ ազատագրական տեսիլների և լեգենդների տեսության վերլուծությամբ, այլև ցույց է տալիս պատմական տարբեր ժամանակաշրջանների առանձնահատկությունները, տվյալ ժամանակահատվածի բնորոշ սոցիալական միջավայրը և դրանում տեսիլների կրած ձևական ու որակական փոփոխությունները: Աշխատության հեղինակը բավական հանգամանորեն կանգ է առնում շուրջ հազարամյա ժամանակահատվածում հայ ժողովրդի որդեգրած սոցիալ-քաղաքական ընթացքի վրա, և այդ պարագան հնարավորություն է տվել, նրա խոսքերով արտահայտած, ազատագրական «շարժման իդեական տարբերակներն ու բախումները լուսաբանելու կամ նրան մասնակցած դասակարգերի ու խմբավորումների, հոսանքների ու գործիչների նպատակադրումն ու հայացքներն ըմբռնելու համար»[1]:

Աշ. Հովհաննիսյանը ցույց է տալիս, որ չափազանց առանձնահատուկ է եղել Առաջավոր Ասիայի մատույցներում ռազմավարական կարևոր դիրք գրավող Հայաստանի պատմական ճակատագիրը:

---

[1] Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 7:

Դարեր շարունակ դառնալով կռվախնճոր Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ պետությունների միջև, այն հանդիսացել է արյունալի գոտեմարտերի ասպարեզ և կրել բազում ծանր հարվածներ: Ֆեոդալական տարանջատվածությունն ու անընդմեջ երկպառակությունները խանգարել են կենտրոնացված միասնական և ուժեղ պետության կազմակերպմանը, թուլացրել երկրի ռազմունակությունը և հաճախ անզոր դարձել արտաքին հարվածների դիմաց: Արևելքից ներխուժած վաչկատուն նվաճողների վայրագ արշավանքները՝ խաթարելով երկրի արտադրողական ուժերի զարգացումը, հետ են շրջել պատմական առաջընթացի անիվը՝ նետելով երկիրը օտարերկրյա բռնատերերի գարշապարի տակ: Պատմական հանգամանքների նման դառնաղետ ընթացքը, հարկադրյալ գաղթականությունը, որպես փրկության դյուրին ու հնարավոր ելք, օտարամուտ տարրերի ներգաղթը Հայաստան և բնակություն հաստատելը առավել ևս թուլացրին հայ ժողովրդի դիմադրական կարողությունն ու դժվարացրին նրա ազատագրական պայքարը: Հայ ժողովրդի ազատագրական բաղձանքները ստացան որոշ իմաստով միստիկական երանգ, ընդունեցին կրոնական գունավորում՝ ծնունդ տալով դրսի ուժերից փրկություն ակնկալող տեսիլների և առասպելների: Սոցիալական ամեն մի միջավայրում առանձնահատուկ գունավորում ընդունելով հանդերձ, այդ տեսիլներն ու առասպելները միաձույլ ու միաբնույթ էին մի էական հարցում՝ անպայման հայ ժողովուրդն ազատագրվելու է և այդ ազատագրությունը հնարավոր է դառնալու միայն արտաքին օգնության շնորհիվ, որ բերելու էին հեռավոր, բայց հզոր քրիստոնեական պետությունները: Բայց ազատագրական պայքարի հարցում բոլորովին այլ դիրքորոշում ուներ հայ հասարակ ժողովուրդը՝ գյուղացիությունը, որը ֆեոդալական մասնատվածության պայմաններում իսկ կարողացավ մեծ չափով պահպանել իր տարածքի ու լեզվի, կենցաղի ու բնավորության, ինչպես նաև սոցիալական ու քաղաքական իր ազատագրական ձգտումների շեշտված ընդհանրությունը: Հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը ղեկավարող հայ ֆեոդալները օտար բռնապետությունների դեմ պայքարելիս հենց գյուղա-

ցիական զանգվածների վրա էին հենվում. վերջիններս էին նաև հայրենի սահմանները պահպանողները: Ինքնին հասկանալի է, որ այստեղից էլ բխում էր հայ վերին շերտի ուրույն դիրքորոշումը ազատագրական պայքարի հարցում: Հայ գյուղացիությունը հույս չէր կապում օտար օգնության հետ, այլ մշակում էր ազատության հասնելու իր տեսությունը, հարկավ հարկադրվելով շրջող տեսիլներին ու գուշակություններին, ստեղծում էր իր ազատարարին՝ «Սասնա ծռերի» Սիերին, որը ապրում էր ժամանակագրական նույն շրջանակներում և նույն տարածքում, որտեղ և երբ ծնունդ էր առնում հայ ազատագրական լեգենդը: Միայն շատ ավելի ուշ, XVIII դարի առաջին քսանականներին էր, որ Ռուսաստանից շարունակ սպասվող ռազմական օգնության ակնկալությունների եռուն շրջանում, այն պետք է համակեր նաև ժողովրդական ավելի լայն զանգվածներին:

«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» առաջին գրքում Աշ. Հովհաննիսյանի ուշադրության հանգուցակետում է գտնվել հատկապես այն փաստերի ուսումնասիրությունը, որոնք նախապատրաստեցին և սկզբնավորեցին ազատագրության համար պայքարող հայ ժողովրդական զանգվածների քաղաքական, պատմության կողմից արդարացված շրջադարձը դեպի Ռուսաստան, որոնք Իսրայել Օրուն, Եվրոպայում կատարած երկարատև և ապարդյուն դիմումներից ու դեգերումներից հետո, տարան Մոսկվա: Տրամաբանորեն ըմբռնելի դարձնելու և իմաստավորելու համար հայ ազատագրական մտքի շրջադարձը, Աշ. Հովհաննիսյանը ըստ խորքի ու լայնքի քննում և մեկնաբանում է արևմտաեվրոպական տերությունների հետ կատարված բանակցությունները, ցույց տալիս քաղաքական նախորդ ուղեծրի աննպատակասլացությունն ու դրա հիմնապատճառները:

«Դրվագներ հայ ազատագրական մտքի պամության» աշխատության առաջին գիրքը բաղկացած է երկու բաժնից՝ «Հայ ազատագրական լեգենդը» և «Լեգենդի սոցիալական միջավայրը»: Հեղինակը առաջին գրքի առաջին բաժնում քննարկում է հայ ազատագրական առասպելը, որն իր արտահայտությունն է գտել Ներսես

Պարթևին վերագրվող տեսիլքի, Ագաթոնի և Կոզեռնի գուշակությունների, «Դաշանց թղթի» կամ Հռոմի հետ «սիրո և միության» թղթի մեջ և դրանց ուշ միջնադարյան դրսևորումներում: Այդ տեսիլքներն ու գուշակությունները իրենց տարբեր պատումներով ու պատմա-քաղաքական հանգամանքների փոփոխություններով պայմանավորված խմբագրություններով խոսում են հայ պետականության անկման, Լուսավորչի հայրապետական տան վերացման, օտար տիրապետությունների մեկը մյուսին հաջորդելու մասին և ունեն մի ընդհանուր միտում, որով հայկական գահի և հայրապետական աթոռի վերականգնումը ակնկալվում էր դրսեկ ուժերի օգնությամբ:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, հայ ազատագրական առասպելը կղերա-ֆեոդալական պատմագրությունը քննարկել է ֆեոդալական և եկեղեցական գաղափարախոսության դիրքերից, իսկ հայ բուրժուական պատմագրության ներկայացուցիչները ավելի ուշադրություն են նվիրել առասպելը պարունակող աղբյուրների բանասիրական քննությանը, չկարողանալով վեր հանել առասպելի բուն էությունը, դիտելով այն կտրված իր սոցիալական միջավայրից և ժողովրդական զանգվածների մղած ազատագրական պայքարից: Ավելին, հայ ազատագրական առասպելը պարունակող տեսլային գրականությունը ոմանք (օրինակ՝ Լեոն) դիտել են սոսկ որպես «հայ կղերական դիվանագիտական հերյուրանք»: Աշ. Հովհաննիսյանը հայ ազատագրական մտայնությունը բացահայտող գրականությունը քննարկելով իրօրյա պատմագրության գիտական պատմականության դիտակետից, բացահայտում է ազատագրական առասպելի բուն էությունը, նրա կրած փոփոխություններն ու զարգացման ընթացքը՝ հայ ժողովրդի պատմության շրջադարձային փոփոխությունների համեմատ, խորը կերպով վերլուծում է ազատագրական առասպելի սոցիալական միջավայրը: Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում ժողովրդական զանգվածների ազատագրական պայքարի հարցերին, բացահայտում ներհակ դասակարգերի ու տարբեր սոցիալական խավերի գաղափարախոսության հակամարտը հայ ազատագրական մտքի պատմության մեջ, ցույց է տալիս, որ իշխող ֆեոդալական դա-

սի և ժողովրդի որդեգրած ազատագրական գաղափարները միանգամայն իրարից տարբեր էին:

Սակայն այստեղ կցանկանայինք նշել, որ մեծ պատմաբանը իր հետազոտության առանցքը դարձնելով ազատագրության առասպելի քննությունը, անհրաժեշտ չափով չի քննարկել և վերլուծել հայ ազատագրական մտքի այն դրսևորումները, որոնք իրենց արտահայտությունն են գտել պարսկական և արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած տևական պայքարի գաղափարախոսության մեջ: Այս հարցերի լուսաբանման համար, կարծում ենք, զգալի նյութ կտային V-X դարերի մատենագիրները, ինչպես նաև «Սասնա ծռեր» ժողովրդական վեպ-ասքը:

Բացահայտելով ազատագրական առասպելի պատմական զարգացումն ու կրած փոփոխությունները՝ հեղինակը պարզում է, որ Ներսես Պարթևի տեսիլքի հնագույն աղբյուրները և վարկածը անդրադարձրել են հայ իշխող դասերի սպասումները հույներից (Բյուզանդիայից), իսկ մեզ հասած 1131 թ. խմբագրությունը՝ նաև դառը հիասթափությունը նրանցից, քանի որ «Յունաց թագավորքն,- Ուռհայեցու ասելով,- ոչինչ փրկութիւն են գործեալ քրիստոնէից, այլ մանաւանդ խլումն եւ առումն քաղաքաց եւ գաւառաց, եւ նոցա շնորհիւ ելան Հայք երկրէն իւրեանց եւ այլազգիքն զօրացան եւ եկեալ տիրեցին ամենայնի»[2]: Ահա թե ինչու տեսիլքի այս խմբագրության մեջ ազատարարների դերը վերապահվում է ֆրանկներին, որոնց միջամտությամբ է ակնկալվում հայերի ազատագրությունը մոնղոլներից և հույներից: Աշ. Հովհաննիսյանը ցույց է տալիս, որ ազատագրական ակնկալությունների նույն ուղին անցել են նաև Ագաթոնի և Կոզեռնի գուշակությունները: Այնուհետև վերլուծելով «Դաշանց թուղթը», որը առասպելաբար ներկայացվում է որպես «սիրո և միաբանության» դաշինք, իբրև թե կնքված է մի կողմից՝ հայոց Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի, մյուս կողմից՝ Հռոմի Կոստանդինոս կայսրի և Սեղբեստրոս պապի միջև: Հեղինակը իրավացիորեն եզրակացնում է, թե «Դաշանց թուղթը» Կոստանդինոսի և Տրդատի ժամանակներից

[2] Նույն տեղում, էջ 27:

մեզ փոխադրում է Խաչակրաց արշավանքների և կիլիկյան հայ թագավորության միջավայրը, անդրադարձնելով մի կողմից՝ այդ ժամանակների հայ ֆեոդալական շրջանների ազատագրական սպասումներն ու կողմնորոշումը, մյուս կողմից՝ խաչակիրների և նրանց ոգեշնչող Հռոմի եկեղեցու շահախնդիր քաղաքականությունը Արևելքի նկատմամբ: Իր էությամբ «Դաշանց թուղթը» հռչակում է Հռոմի եկեղեցու տիեզերական եկեղեցապետության գաղափարը:

Աշ. Հովհաննիսյանը հատկապես ընդգծում է, թե «Դաշանց թուղթը» կոչված էր հիմնավորել կիլիկյան կաթողիկոսների հպատակությունը Հռոմի եկեղեցուն և վավերացնելու կիլիկյան թագավորների վասալական կախումը դրախտի բանալուն տիրած Պետրոս գահաժառանգից, ուստի «Դաշանց թղթի» «գաղափարական առանցքը կազմում են միսիոներական թեոկրատական իդեաները»,- ասում է հեղինակը, իսկ «բուն ջերմոցը՝ Ինոկենտիոս III-ի Հռոմը»[3]: Աշ. Հովհաննիսյանը ջանացել է ցույց տալ, որ ստեղծված ծանր վիճակից ելք գտնելու որոնումների գործընթացին շարունակ ուղեկցում էր սխալները:

Առաջին գրքի առաջին բաժնի վերջում հեղինակը խոսում է մոնղոլների, թուրքերի և Սեֆեվյան Պարսկաստանի տիրապետությունների ժամանակաշրջանում Հայաստանի և հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց ծանր վիճակի մասին և նշում ազատագրական մտքի դիմաշրջումը դեպի նոր հորիզոն և հուսակայան՝ դեպի Ռուսաստան:

Առաջին գրքի երկրորդ բաժինը նվիրված է լեգենդի սոցիալական միջավայրի վերլուծությանը և կազմում է գրքի առավել կարևոր ու ծավալուն մասը, որտեղ ավելի ցայտուն կերպով երևան են գալիս հեղինակի լայն ու հետազոտող մտքի թափը:

Այս բաժնում խոսելով հայ ժողովրդի պատմության տարբեր դարաշրջանների մասին, հեղինակը ջանում է ցույց տալ, թե ինչն էր կազմում տվյալ շրջանի պատմության սոցիալական կամ քաղաքական առանցքը: Նշելով, որ Արշակունյաց հարստության ժամանակ, մանավանդ նրա անկումից հետո երկրի փաստական տերերը նա-

---

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 75:

խարարներն էին, հեղինակը համաձայնում է բանասեր Վաչե Նալբանդյանի հետ, որ V դարի կեսերին, Վարդանանց պատերազմի նախօրեին և պատերազմի ընթացքում Արշակունյաց գահի ժառանգորդի հավակնորդի հավակնությամբ սուր վերցրած Սյունյաց, Մամիկոնյան, Արծրունյաց և Բագրատունյաց նախարարական տների միջև եղած պայքարը կազմում էր Հայաստանի պատմության քաղաքական առանցքը: Աշ. Հովհաննիսյանն այս դրույթը զարգացնելով տարածում է նաև 481-484 թթ. պատերազմի վրա:

Հայ պետականության վերականգնման անհաջողությունը չէր նշանակում այդ ուղղությամբ տածվող երազների սպառում ֆեոդալական շրջաններում, բայց պառակտված ֆեոդալական տներն իրենց հույսը պետք է դնեին դրսի ավելի զորեղ մի ուժի վրա: Ահա թե ինչու ազատագրական լեգենդը հաջորդաբար արտահայտում էր բուն Հայաստանի և Կիլիկիայի ֆեոդալական շրջաններում գերիշխած կողմնորոշումը նախ և առաջ դեպի հույները, ապա՝ դեպի ֆրանկների միջամտությունը:

Խոսելով Հայաստանի և Անդրկովկասի պետական միավորման փորձերի անհաջողության մասին X–XIII դարերում, Աշ. Հովհաննիսյանը իրավացիորեն դա բացատրում է երկրի զարգացման ցածր մակարդակով և բնական տնտեսության գերիշխումով, մի խոսքով միավորման համար տնտեսական հիմքերի բացակայությամբ: Ուշագրավ է հեղինակի եզրակացությունը, թե Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վերամիավորման գործը, ի դեմս տեղական ֆեոդալների, հաջորդաբար ստանձնում էին հայերը՝ IX-XI դարերում և վրացիները XI-XIII դարերում:

Ներսես Պարթևի տեսիլի մեջ Արշակունիների պետությունը դիտվում է որպես հայոց և վրաց պետություն, Մուշեղ Մամիկոնյանը նույնպես հայոց և վրաց զորավարն է, կաթողիկոսի վիճակը Հայաստանն ու Վրաստանը: Այս և նման փաստերի հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ «Նախապես Ներսեսի անվան հետ կապված առասպելը առաջացել էր հայ-վրացական քաղաքական միավորմանը հարող ֆեոդալների միջավայրում կամ համենայն դեպս, հրապա-

րակ բերվել նրանց ձգտումներն ու սպասումները հիմնավորելու համար»[4]:

Անդրկովկասի և Հայաստանի միավորված թագավորության ստեղծման գործը XI դարում գտնվում էր վրաց Բագրատունիների ձեռքում: Այդ բանն ավելի ցայտուն կերպով երևան եկավ XII դարում, մանավանդ սելջուկների պետության քայքայումից հետո և XIII դարի սկզբներին: Աշ. Հովհաննիսյանը միանգամայն ճիշտ է պնդում, թե վրաց Բագրատունիների միավորման ջանքերը անհամեմատ ավելի երկարատև և արդյունավոր եղան, քան հայ Բագրատունիներինը: Նա բացատրում է և դրա քաղաքական պատճառները՝ սելջուկների պետական միասնության քայքայումը, խաչակիրների պայքարը սելջուկների դեմ, Բյուզանդիայի թուլացումը, որոնցից մեծապես շահում էր Վրաստանը: Չի անտեսվում նաև Վրաստանի քաղաքաբնակչության մեծացումը, առևտրի զարգացումն ու առևտրի դերի աճը: Վրաց պետության միավորիչ ջանքերին և դրանց հաջողություններին համեմատ աճում է վրաց և հայ ժողովուրդների բարեկամության գաղափարը, այժմեականություն են ստանում երկու ժողովուրդների անցյալի համերաշխությունն ու կապերը և դրանք նշանավորող սովանդությունները՝ հայ և վրաց լեզուների ազգակից լինելու, հայոց Արշակ թագավորի՝ մորով Արշակունի, հորով Նեբրովթյան-Փառնավազյան ծագման, Արշակի թագը վրաց թագավորներին փոխանցելու մասին և այլն: Այսպիսի գաղափարները մարմնավորվում կամ իրենց դրսևորումն էին գտնում XI-XIII դարերում պատմական այնպիսի եղելությունների մեջ, ինչպես հայ և վրաց թագավորական տների միջև և Շաղդաղյանների հետ խնամիական կապերի հաստատումը, Անիի թագավորության անկման պահին՝ 1045 թ., որպես հայոց գահի ժառանգորդ վրացիներին ճանաչելու քաղաքական ուղղության առկայությունը, 1124 թ. Շաղդաղյանների դեմ ապստամբած անեցիների դիմումը վրաց Դավիթ IV թագավորին և նրա իշխանության ու հովանավորության ճանաչումը, հետագայում նույն կարգի դիմումը Կարսի բնակչության կողմից, Դվինի առումը վրացիների ձեռքով իբրև քա-

[1] Նույն տեղում, էջ 128-129:

ղաքի ազատագրություն դիտելը, հայերի զինակցությունը վրաց պետության հետ՝ Զաքարեի և Իվանեի գլխավորությամբ, կրոնական հանդուրժողականությունը և այլն: Կարևոր ենք համարում ընդգծել, որ հայ ու վրաց ժողովուրդների բարեկամության հասնող մերձակցության միջնադարյան եղելությունների ու գաղափարաբանության բացահայտումը Աշ. Հովհաննիսյանի գրքի մեծագույն արժանիքներից է: Հայերի քաղաքական կողմնորոշման և հայ-վրացական զինակցության տեսակետից կարևոր է Զաքարյանների ու նրանց իշխանության և վրաց թագավորության փոխհարաբերության հարցը: Հայ այդ իշխանները տիրում էին Հյուսիսային Հայաստանի մեծ մասին, սակայն նրանց տիրույթները մտնում էին վրաց պետության սահմանների մեջ: Զաքարյանների զինական և քաղաքական-վարչական հաջողությունները հայ ֆեոդալական միջավայրում ածեցրել էին հայ քաղաքական իշխանության զորեղ տրամադրություններ: Զաքարյանները իրենց ազգակից էին համարում հայ Բագրատունիներին ու նրանց գահի հավակնորդն էին, իրենք իրենց մեծարելով «թագատրազն», «թագատր», «աշխարհակալ», «շահնշահ» տիտղոսներով: Նրանք վայելում էին ինքնուրույնություն, սակայն այդ ամենով հանդերձ չէին դադարում և չէին հրաժարվում վրաց սյուզերենների վասալներ լինելուց: Այստեղ էլ մեծ գիտնականը ճիշտ է ընթերցողին կողմնորոշում պատմաքաղաքական հարցի նկատմամբ: «Վրաց Բագրատունիների ներքո,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- հայ վասալները վայելում էին տեղական ֆեոդալական նույն արտոնությունները, ինչպիսին հայ Բագրատունիների ժամանակ վայելում էին վրաց վասալները...Այստեղ ժողովուրդների քաղաքական համակեցությունը հանգչում էր ոչ թե նրանց իրավահավասարության կամ, ինչպես կարծել են ոմանք, նրանց «ֆեդերատիվ» կապերի, այլ ֆեոդալական սուբորդինացիայի սկզբունքի վրա, որ համապատասխանում է ֆեոդալական հիերարխիայի մեջ այդ ժողովուրդների իշխող դասի գրաված դիրքին և սրանց դասային իրավասության հպատակության պարտավորությունների տարբեր աստիճաններին»[5]:

[5] Նույն տեղում, էջ 160-161:

Հայ ժողովրդին նոր ու առավել ծանր փորձություններ բերեցին մոնղոլական նվաճումները: Հայ և վրաց ֆեոդալները հպատակվելով մոնղոլներին, ձգտում էին պահպանել իրենց տիրույթները ու արտոնությունները, ուստի և առժամանակ հրաժարվեցին պայքարից, գործակցեցին նրանց: Նույնիսկ ոմանք փորձում էին իրական ուժ հաղորդել իրենց «թագավոր» կամ «արքա» փքուն պատվանուններին: Շուտով սակայն վրա հասավ հիասթափությունը մոնղոլներից և վրացի ու հայ ֆեոդալները համատեղ պայքար սկսեցին նրանց դեմ: Ջուրկ վճռականությունից և ժողովրդական լայն զանգվածների վրա չհենվող այդ պայքարը, անշուշտ, հաջողություն բերել չէր կարող և ճնշվեց: Ամրապնդելով իրենց դիրքերը, հակադրվելով սելջուկներին և կամենալով զավթել նրանց ենթակա երկրները, մոնղոլները ցուցաբերեցին եվրոպական միապետների և Հռոմի պապի հետ բանակցելու և սելջուկների դեմ ընդհանուր ճակատ կազմելու տրամադրություններ: Այդ հանգամանքը խրախուսում էր հայ և վրաց ֆեոդալներին՝ ավելի ջերմ արձագանք գտնելով Կիլիկիայի արքունիքում:

Հայտնի է Սմբատ Գունդստաբլի և Հեթում I թագավորի բանագնացությունները Գոյուկ և Մանգու խաների մոտ՝ Կարակորումում: Խոսելով այդ եղելությունների մասին, հեղինակը մերժում է պատմագիտության մեջ տեղ գտած այն կարծիքը, թե դա նշանակում էր Կիլիկյան հայկական թագավորության հրաժարումը արևմտյան կողմնորոշումից և նոր «արևելյան կողմնորոշման» ընդունում: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով դա ոչ այլ ինչ էր, քան Կիլիկիայի՝ «հին արևմտաեվրոպական կողմնորոշման նոր դրսևորում», քանի որ նրանք չանցան սելջուկների և արաբների կողմը՝ խաչակիրների դեմ պայքարելու համար, այլ հանգամանքներից դրդված հպատակվեցին մոնղոլներին ու դաշնակցեցին նրանց հետ, երբ նման դաշինք որոնում էին և եվրոպական պետությունները: Հեթումյանների և նրանց հաջորդած Լուսինյանների արևմտյան կողմնորոշումը, հեղինակի կարծիքով միայն վնաս բերեց հայերին և արագացրեց Կիլիկյան հայկական թագավորության անկումը: Եվրոպայից հուսահատությունն ու հիասթափությունը իրենց արտահայտությունն են գտել ժա-

մանավկի հայ գրականության մեջ: Եվրոպական պետությունները, Հռոմի պապը և նրանց առաջապահ խաչակիրները Արևելքում հետապնդում էին քաղաքական, տնտեսական և դավանաբանական շահախնդիր նպատակներ, ուստի նրանց ունիտորական փորձերը հանդիպում էին հայ ժողովրդի, նրա առաջավոր մտածողների ու գործիչների, այլև մոլեռանդ եկեղեցականներից և ֆեոդալներից շատերի համառ դիմադրությանը: Աղետալի եղավ նաև հայ-մամելուքյան հակամարտության և կիլիկահայերի եվրոպական կողմնորոշման ավարտը, որը բերեց պետության կործանում և բնակչության զգալի մասի արտագաղթ՝ անհայտության մեջ կորչելու տխուր հեռանկարով: Ուշագրավ և կարևոր է քաղաքային վերնախավի ներկայացուցիչներին կամ մեծատուններին տրվող բնութագիրը: Մեջ բերելով բազմաթիվ փաստեր և տալով Տիգրան Հոնենցի, Սահմադինի, Ումեկի, Շնորհավորի, Սահիպ Դիվան Շեմս էդ-դինի սոցիալական սպառիչ բնութագիրը, Հովհաննիսյանը ցույց է տալիս, որ առևտրական և վաշխառու մեծատունները ձեռք բերելով հող և անշարժ ունեցվածք, ֆեոդալականանում էին: Մոնղոլների տիրապետության ժամանակ Հայաստանը և մասնավորապես նրա քաղաքները ենթարկվում էին ծանր հարկահանության, մանավանդ հարկահանության համակարգի ազդեցությանը և դիմում դեպի անկում: Աշ. Հովհաննիսյանի կարծիքով դրան առավելապես ենթակա էր Հարավային Հայաստանը, իսկ Հյուսիսային Հայաստանում Զաքարյանների, Վահրամյանների և Օրբելյանների տիրույթները ազատ էին մոնղոլ-բասկակների կամ սրանց հետ կապված խոշոր կապալառուների միջամտությունից, ուստի տեղ-տեղ հայտնի չափով շարունակում էր տնտեսական նախկին բարվոք վիճակը: Սակայն պետք է նկատել, որ այդ վերաբերում է ոչ թե ամբողջ Հյուսիսային Հայաստանին կամ հեղինակի թված Զաքարյան, Վահրամյան և Օրբելյան երկրներին, այլ միայն Օրբելյանների տիրույթ Սյունիքին, որն ստացել էր ինջույական իրավունք:

Աշ. Հովհաննիսյանը իրավացիորեն նկատում է, որ Հայաստանի տնտեսական քայքայումը, Արևմուտքի հետ կապերի թուլացումը և հայ ֆեոդալների ու քաղաքային վերնախավի ներգրավումը մոնղոլա-

կան հարստահարչական համակարգի մեջ՝ թուլացրին ազատագրական լեգենդի ճգտողական ուժը: Հեղինակը շատ դիպուկ է բնութագրում քաղաքային վերնախավի դերը ազատագրական մտքի պատմության մեջ: Կարևոր է մասնավորապես այն եզրակացությունը, որ քաղաքաբնակ զանգվածները շրջակա գյուղերի բնակչության հետ միասին պաշտպան էին կանգնել իրենց երկրին և քաղաքներին, դրանով դրսևորելով իրենց բացասական դիրքավորումը իշխող խավերին ոգեշնչող ազատագրական լեգենդի հանդեպ, թե քաղաքի, և թե գյուղի աշխատավորները չէին բաժանում Արևմուտքի օգնությամբ ազատագրվելու պատրանքները: Ճիշտ է նկատում նաև, որ քաղաքների բնակիչները պայքարում էին ինչպես օտար նվաճողների, նույնպես քաղաքի ֆեոդալ իշխողի դեմ: Միակողմանի կլիներ, սակայն. Անիի բնաչության 1124 թ. ապստամբությունը Մանուչեի որդի Աբուլսուարի դեմ վերագրել միայն կամ գլխավորապես տիրող կացության վատթարացմանը: Այդ ապստամբության գլխավոր պատճառը քաղաքային բնակչության և քաղաքի տեր ֆեոդալի հակամարտն էր: Անին սկսում է ամոքել սելջուկների հասցրած ծանր վերքերը, առաջ տանել քաղաքային ինքնավարության գործը, սակայն դրան խանգարում էր քաղաքի ենթակա լինելը մի ֆեոդալ տիրոջ: Հայաստանի մյուս քաղաքների և Անիի միավորումը վրաց պետության մեջ ձեռնտու էր վրաց պետությանը, քանի որ ընդլայնվում էր նրա տնտեսական և սոցիալական հենարանը, ինչ որ շատ իրավացիորեն կարևորում է Աշ. Հովհաննիսյանը: Մյուս կողմից՝ Հայաստանի քաղաքները մտնելով վրաց պետության կազմի մեջ ազատագրվում էին տվյալ ֆեոդալին պատկանող (սենիորալ) քաղաքի պակաս նպաստավոր վիճակից և դառնում պետական ընդհանուր ենթակայության քաղաքներ, դրանով հնարավորություն էին ստանում զարգացնելու իրենց ինքնավարությունը և տնտեսական ու քաղաքական աճման ավելի լայն հնարավորություններ էին ձեռք բերում: Այս իմաստով պիտի հասկանալ Ուռհայեցուն, երբ նա Անիից Մանուչեի որդիների վտարման մասին ասում է. «Եվ ազատեցան ի ծառայութենէ թագաւորաբնակ քաղաքն

Անի, որ կացեալ էր ի ծառայութեան զամս վաթսուն»[6]: Բնորոշ է, որ Կարսի բնակչությունն էլ 1206 թ. դիմելով Թամար թագուհուն և հայտնելով հանձնվելու պատրաստակամության, պայման էր դնում, որ թագուհին քաղաքը չհանձնի ուրիշի ձեռքը, այլ ենթարկի իրեն՝ հռչակելով «թագավորական քաղաք»: Կարսի փաստը նկատի ունենալով, հեղինակը ճիշտ է դիտել «քաղաքացիների և ֆեոդալական տեղական իշխողների հակամարտը»:

Հեղինակը ցույց է տալիս, որ ժողովրդի վարի խավերի և ամենից առաջ քաղաքային պլեբսի կացությունն ու փոթորկվող ներքին աշխարհը իրենց առավել պայծառ արտահայտությունն են գտել հանճարեղ Ֆրիկի խոհերի մեջ[7]:

«Դրվագների» առաջին գրքի երկրորդ բաժնի երրորդ գլուխը խորագրված է «Եկեղեցին և լեգենդը»: Ֆեոդալական համակարգում եկեղեցին ինքը խոշոր հողատիրական ֆեոդալական կազմակերպություն էր, այդ հասարակության տնտեսական և քաղաքական կյանքի անբաժան մասը:

Պարսկական տիրապետության դեմ V դարում մղվող պայքարը եկեղեցին ջանում էր ամբողջովին պարուրել կրոնական գաղափարախոսությամբ, նույնիսկ նպատակադրումով: Եկեղեցին Բագրատունիների ժամանակ դաշնակից էր հայ թագավորների վարած միավորման քաղաքականության, իսկ երբ այդ քաղաքականությունը ձախողվեց և Բագրատունիների թագավորությունն էլ վերացվեց, եկեղեցին հավակնում էր բռնելու վերջինիս տեղը հայ ժողովրդի քաղաքական կյանքում: Զարմանալի չէ, որ միջնադարյան գրականության ասպարեզում տիրապետող դիրք ունեցող հոգևորականությունը, իբրև ֆեոդալական գաղափարախոսության կրող, պիտի արտահայտեր ֆեոդալական դասերի քաղաքական ձգտումները, մանավանդ հոգևորականության եկեղեցապետական ձգտումները: Սակայն առարկելով Լեոյին, ճիշտ է նկատում Աշ. Հովհաննիսյանը,

---

[6] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նույն տեղում, էջ 148-149:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 252-253: Այս մասին մանրամասն տես Աշ. Հովհաննիսյանի «Ֆրիկը պատմաբննական լույսի տակ» աշխատությունը:

որ դա իրավունք չի տալիս ազատագրական լեգենդը համարել սոսկ իբրև «հայ կղերական դիվանագիտական հերյուրանք»[8]: Իբրև ֆեոդալական դաս, հոգևորականությունը իր ուրույն նպատակները և ակնկալություններն ուներ, որոնք ավելի ցայտուն կերպով դրսևորվել են «Դաշանց թղթի» մեջ, բայց այստեղ էլ երևան են եկել ոչ միայն հոգևորականության, այլև ֆեոդալական մյուս դասերի իղձերն ու ակնկալությունները:

Ազատագրական լեգենդն իր նստվածքներով ու շերտավորումներով հիմնականում ձևավորվել է այն ժամանակ, երբ դեռ սպառված չէին հույն կայսրների և ֆրանկ խաչակիրների ուժերը, երբ զորեղ էր Վրաստանը, իսկ հայերն ակնկալություններ ունեին ինչպես Ռուբինյանների, նույնպես և Զաքարյանների զորեղացումից: Հայտնի է, որ երկրի դրությունը դեպի վատը փոխվելու հետևանքով լեգենդը ստեղծող միջավայրը, ներառյալ և հոգևորականության զգալի մասը երես դարձրեց ոչ միայն հույներից, այլև ֆրանկներից՝ սուր քննադատության ենթարկելով նրանց:

Արևմուտքից եկող օգնությամբ ազատագրվելու թեև պատիր հեռանկարը մոնղոլների ժամանակներից սկսած հետզհետե աղոտանում էր և դրան համեմատ հոգևորականության ճնշող մեծամասնությունն էլ, հրաժարվելով այդ սին հույսերից, ապավինում էր աստծուն, հայերի գլխին եկած փորձությունները մեկնաբանում աստծո կամքով, քարոզում հնազանդություն տերերին և փրկությունն էլ սպասում էր տիրոջ երկնային բարձունքներից:

Աշ. Հովհաննիսյանը առանձին կանգ է առնում Մխիթար Գոշի հայացքների վրա, ընդգծում, որ Գոշն իր գործունեությամբ և Դատաստանագրքով հակադրվում էր Արևմուտքի միջամտությանը և առաջադրում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական անկախության գաղափարը: Գոշի Դատաստանագիրքը, առակները միաժամանակ նպատակ ունեին մեղմելու սոցիալական հակադրությունները՝ գյուղացիության և քաղաքի աշխատավորության պայքարը ընդդեմ ֆեոդալների և կենտրոնացնելու

[8] Հովհաննիսյան Աշ., նույն տեղում, էջ 273:

նրանց ուշադրությունը արտաքին թշնամու դեմ: Գոշը դեմ էր ֆեոդալական պառակտվածությանը ոչ միայն Հայաստանում, այլև ձգտում էր հայ-վրացական ուժերի միավորմանը[9]:

Գոշը, ինչպես արտաքին ուժերի դեմ պայքարի հարցերում, այնպես էլ ներքին հակադրությունների վերացման համար ջանքերի գործադրման խնդիրներում կանգնած էր հակամարտ ուժերի իրական զորության հաշվառման և հավասարակշռման տեսակետի վրա: Գոշը իր Դատաստանագրքում և առակներում ելնում էր այն համոզումից, որ ուժը և ուժերի հարաբերությունն են օրենքի հիմքը: Սակայն նրա հայեցողության մեջ կոպիտ ուժը դեռ լիովին ազատագրված չէր բարոյական խրատների սանձերից: Պետության, նրա դերի, իրավունքի, ներքին և արտաքին հարաբերությունների և այլ բազմաթիվ հարցերում «Գոշը վեր էր սլանում իր դասի գիտակցության և շահագրգռվածությունների միջին հարթավայրից, մեծապես ընդառաջում երկրի ընդհանուր շահերին, նրա պրոգրեսիվ մղումներին»[10]: Նրա քաղաքական մտածելակերպը ազատ էր դրսի ուժերի միջամտությամբ ազատագրություն ակնկալող մտայնությունից: Նա քարոզում էր քաղաքական արթնացում, ինքնուրույնություն և վրաց միավորված պետականության մեջ հայ և վրաց ֆեոդալների գործակցության հիման վրա Հայաստանի քաղաքական ինքնորոշում՝ զուգակցված Զաքարյանների դինաստիական բաղձանքների հետ:

Աշ. Հովհաննիսյանի աշխատության մեջ կարևոր է նաև Վարդան Այգեկցուն տրվող բնութագիրը: Անդրադարձնելով Կիլիկիայում տեղի ունեցող դասակարգային հակամարտը, Վարդան Այգեկցին քարոզում էր մեղմել զրկողությունը, բայց նա ավելի երկյուղ էր կրում զրկողների դեմ զրկվածների մղած պայքարից և իր քարոզներով և առակներով ջանում էր մեղմել այդ պայքարը, քարոզում էր հնազանդություն տիրողներին և եկեղեցուն: Նա ընդվզում է աղանդավորների և հերձվածողների դեմ, կանգնած չէր կեղեքվողների մղած պայքարի

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 279-294:
[10] Նույն տեղում, էջ 292:

դիրքերում, այլ միայն ջանում էր սոցիալական խաղաղություն հաստատել պայքարող կողմերի միջև:

Ներսես Պարթևի տեսիլին արձագանքելով Վարդան Այգեկցին 1204 թ. խաչակրաց չորրորդ արշավանքներից հետո, այդ տեսիլը ավելի սերտորեն է կապում կիլիկյան իրականության՝ Լևոնի թագավորության զորքի և հայերի գործակցության հետ: Խոսում է անօրենություններից բազմապատիկ վրեժ լուծելու և Տրդատի ազգից թագավոր նստելու մասին, երբ երկրում կհաստատվեն խաղաղություն և արդար կարգեր: Այգեկցին երկրային դրախտի բաղձանքը կապում էր խաչակրաց նոր արշավանքի հեռանկարների հետ:

Հակառակ կիլիկյան մտածող Վարդան Այգեկցու, Սյունիքում մոնղոլների կողմից արտոնված, հարկերից ազատված և իր հողային տիրույթները ընդարձակելու հնարավորություններ ստացած եկեղեցու հովվապետներից Սյունաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը ազատագրական պատրանքներ Լ.իր կապում «քրիստոսասէր» իշխողների (մոնղոլ խաների - Ն. Ս.) հետ, որոնց հարելով նոր կյանք կստանան հայ աշարհիկ և հոգևոր ֆեոդալները և այդ իշխողների ձեռքով, ըստ նրա, Էջմիածնում պիտի վերականգնվեն հայոց թագավորական գահն ու հայրապետական աթոռը: Աշ. Հովաննիսյանը հետաքրքրական զուգահեռներ է անցկացնում Գոշի և Ստեփանոս Օրբելյանի քաղաքական հայացքների միջև:

Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների միավորման գոշյան գաղափարին հակադիր էին Սյունյաց իշխանների անջատական ձգտումները արտահայտող Ստ. Օրբելյանի գաղափարները, բայց նրանց միավորում էր պայքարը հայերի և նրանց դավանանքի ինքնության համար ընդդեմ քաղկեդոնականության և Հռոմի հետ եկեղեցական միավորման:

Աշ. Հովհաննիսյանը հատուկ քննության առարկա է դարձրել նաև գյուլացիական ազատագրական շարժումների և ազատագրական լեգենդի փոխհարաբերության հարցը: Իրավացի է պատմաբանը, երբ ասում է, թե ժողովրդական զանգվածներն էին միայն նյութական բարիքներ ստեղծողը, այլև ազատագրական պայքարի գլխա-

վոր հենարանն ու առաջմղիչ ուժը: Հետևաբար ազատագրական լեգենդի մեջ դրսևորված բաղձանքները, արտացոլելով գերազանցապես իշխող վերնախավի տրամադրությունները, կարող են լիակատար չափով իմաստավորվել միայն հայ գյուղացիության մղած ազատագրական պայքարի հենքի վրա: Հայ գյուղացիությունն էր հիմնականում, որ անցնելով ազգի գլխին եկած պատմական բոլոր փորձությունների միջով, պահպանեց հայոց լեզուն, մշակույթը, սովորությունները, նա էր, որ ապահովեց իրեն իսկ ժողովրդի գոյությունը: Ամեն կարգի զավթիչների դեմ ցույց տված դիմադրությունները մեծ մասամբ կրում էին գյուղացիության մղած ազատագրական շարժումների բնույթ: Հեղինակը իրավացի է, որ առարկելով Նիկողայոս Ադոնցին, որի կարծիքով ազատագրական շարժումները առաջանում էին ֆեոդալական միջավայրում, իսկ Հայաստանի ազատագրությունը արաբական լծից, հայ պետականության վերականգնումը IX դարի վերջերին կազմում է սոսկ Բագրատունյաց արքայական տան պատմական «փառքը»: Իրականում ժողովուրդների պարբերաբար կրկնվող ապստամբությունները խալիֆաթի ծայրամասերում պայմաններ ստեղծեցին տեղական թագավորությունների առաջացման համար: Աշ. Հովհաննիսյանը ճշմարիտ կերպով գտնում է, որ ժողովրդի ազատագրական պայքարը արաբների դեմ կրում էր միաժամանակ սոցիալական բնույթ: Ապստամբություններ էին ծագել Վրաստանում, Աղվանքում՝ գյուղացիական զանգվածների և տարբեր տեղերում գլուխ բարձրացրած մանր ֆեոդալների մասնակցությամբ: Ընդհանրացնելով, հեղինակը եզրակացնում է, որ զանգվածային ապստամբությունները ճնշելու նպատակով է անշուշտ, որ խալիֆաթն ու Բյուզանդիան «Էրմենիայի» սահմաններում գոյություն ունեցած մյուս իշխանությունների նկատմամբ շտապեցին ճանաչել Շիրակի Բագրատունիների գերիշխանությունը:

Այդ հանգամանքի նշանակությունը կարևորելով, հեղինակը, սակայն, հաշվի չի առել արաբա-բյուզանդական մրցակցությունը, Հայաստանի և հայերի դերը այդ մրցակցության մեջ, հայ-բյուզանդական դաշինքը և արաբների ծգտումը՝ Հայաստանը պահելու իրենց

գերիշխանության տակ: Ըստ ամենայնի բարձր գնահատականի է արժանի Աշ. Հովհաննիսյանի ընդհանրացումը հայ ժողովրդի պատմությունն առաջ մղող ներհակությունների վերաբերյալ: Հեղինակը գտնում է, որ հայ ժողովրդի հավաքականության և Հայաստանում իշխած օտարերկրյա բռնությունների հակամարտը մի կողմից, և հայ ժողովրդական ու հայ հասարակական վերնախավերի հակամարտը մյուս կողմից, հանդիսանում էին ֆեոդալական Հայաստանի պատմության առաջմղիչ ներհակությունները: Հայ ժողովրդի միջնադարյան ամբողջ պատմությունն ընթանում էր այդ ներհակությունների մերթ մի, մերթ մյուս արտահայտության նշանաբանի տակ, հաճախ էլ երկուսի զուգորդությամբ: Մանավանդ հեղինակը կարևորում է, որ խոշոր սոցիալական շարժումները ուղղված էին և՛ ներքին, և՛ արտաքին կեղեքողների դեմ:

Աշ. Հովհաննիսյանը նոր խոսք է ասում Թոնդրակյան շարժման առաջացման ժամանակի և տևողության մասին, գիտական ճիշտ դիրքերից խոր վերլուծության է ենթարկում շարժման սոցիալական էությունն ու գաղափարախոսությունը, ցույց է տալիս նրա կապերը հարևան երկրների սոցիալական շարժումների գաղափարախոսության և դրսևորման ձևերի հետ, քննարկում է շարժման զարգացումը տարբեր փուլերում:

Հիմնավոր է հեղինակի այն եզրակացությունը, թե «Թոնդրակյան շարժումը սոսկ հայ եկեղեցու դավանաբանության դեմ ուղղված մի աղանդ չէր կամ սոսկ հայ ֆեոդալների դեմ բորբոքված մի հուզմունք»: Այն ուղղված էր ոչ միայն հայ տիրող դասերի, այլև՝ Հայաստանի նկատմամբ ավելի մեծ հավակնություններ ունեցող օտար ուժերի դեմ[1]:

Մանավանդ կարևոր է Հայաստանի ներքին սոցիալական ճգնաժամի մանրամասն վերլուծությունը: Հեղինակը նշում է դրա խորացումը՝ Թոնդրակյան շարժման ծավալմամբ ոչ միայն գյուղաշ-

[1] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նույն տեղում, էջ 353:

խարհում, այլև քաղաքներում, օրինակ Անիում. այնուհետև նրա տարածվելը Հարավային և Արևմտյան Հայաստանում:

Հեղինակը շեշտադրում է Թոնդրակյան շարժման վճռական նշանակությունը Հայաստանի ֆեոդալական դասերի՝ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ներքին և արտաքին քաղաքական դիրքորոշման գործում, մանավանդ այն բանից հետո, երբ Բագրատունիների թագավորությունը անկարող գտնվեց ճնշելու շատ լայն ծավալ ընդունած և ժողովրդական սոցիալական պատերազմի բնույթ ստացած այդ շարժումը, որը դուրս էր եկել Բագրատունիների թագավորության սահմաններից: Գրիգոր Մագիստրոսի, Վեստ Սարգիսի և Պետրոս կաթողիկոսի գլխավորած քաղաքական ուղղությունը Բյուզանդիայի գիրկը նետեց ամենից առաջ Թոնդրակյան շարժումը բյուզանդական առավել զորեղ զենքով ճնշելու նպատակով: Սրանցով բացահայտվում է նաև Բագրատունիների թագավորության անկման գլխավոր սոցիալական պատճառը, որը շատ ավելի վճռական դեր խաղաց այդ հարցում, քան ֆեոդալների կենտրոնախույս ձգտումների դերն էր: Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ Թոնդրակյան ժողովրդական շարժումը X–XI դարերում դարձել էր հայ հասարակական կյանքի գլխավոր զսպանակը: Թոնդրակյան և մյուս շարժումները քննարկելով, հեղինակը ցույց է տալիս, որ ժողովուրդն ուներ ազատագրական պայքարի իր սեփական ուղին:

«Սասնա ծռեր» հայ ժողովրդական էպոսի (վեպի) և ազատագրական լեգենդի փոխհարաբերությանն անդրադառնալով, Աշ. Հովհաննիսյանը միանգամայն ճիշտ ընդգծում է, որ թեև դրանք առաջացել և ձևավորվել են նույն ժամանակաշրջանում և միևնույն պատմական իրադրությունների մեջ, սակայն կատարյալ հակոտնյաններ են: Լեգենդի դրսեկ ուժերի միջամտությանը, էպոսը հակադրում է ժողովրդի միջից ելած նրա հավաքական կամքով, ուժով ու բարոյական կորովով օժտված հերոսների ազատագրական պայքարը: Մինչդեռ առասպելն անդրադարձնում էր իշխող դասերի ազատագրական ակնկալությունները, վեպն արտացոլում էր «ժողովրդական մասսաների վարած պայքարի գեղարվեստական հանրապատկերը»: Էպո-

սի (վեպի) հերոսներն իրենց պայքարն ուղղում են ոչ թե որևէ ժողովրդի՝ «իսմայելացիների», «հագարացիների» կամ «նետողների», այլ նրանց ևս ճնշող հարստահարողներին մարմնավորող բռնակալների դեմ, որոնք խաղաղ դրացիություն չեն հարգում և իրենց ժողովրդին պատերազմի են քշում ուրիշների դեմ, նրանց վրա ևս բռնանալու և դաժանորեն կեղեքելու համար: Քնորոշ է, որ եթե վեպի մեջ ֆրանկները ներկայանում են ազատարարի դերով, ապա վեպի մեջ նրանք նվաճողներ են և վեպի մի շարք պատումներով Դավթի սուրը իջնում է ֆրանկի գլխին:

Պետք է այնուամենայնիվ նկատել, որ իր աշխատության առանցքը դարձնելով ազատագրական լեգենդի քննությունը, հեղինակը միայն ընդհանուր գծերով և լեգենդին հակադրելու իմաստով է քննում հայկական մեծ էպոսը, որի մեջ հայ ժողովրդի ազատագրական պայքարը և նրա գաղափարախոսությունը երևան են գալիս զարմանալի իրողությամբ, բազմազան կողմերով և կապակցություններով ու հարուստ երանգներով:

Աշ. Հովհաննիսյանը ֆեոդալական Հայաստանի պատմության մեջ տեսնում է երկու իրարամերժ պատմաշրջան՝ նույնքան իրարամերժ միտումներով: Առաջինը ֆեոդալական հարաբերությունների զարգացման և ֆեոդալական իշխանությունների ամրացման շրջանն է՝ V դարից մինչև մոնղոլների տիրապետությունը: Այս շրջանում են առաջանում Անդրկովկասի և Հայաստանի մի շարք ֆեոդալական պետությունները, Անդրկովկասի ժողովուրդների պետական միավորման ձգտումը և փորձերը՝ ուղեկցված օտար տիրապետողների դեմ հայերի, վրացիների և աղվանների համատեղ պայքարի հաջողություններով: Այս շրջանում ժողովրդի ազատագրական պայքարը երևան է գալիս տարբեր ուղղություններով և ծավալուն շարժման ձևով: Երկրորդ շրջանը սկսվում է մոնղոլական տիրապետությամբ, երբ ֆեոդալական տները նվազում, նրանց իշխանությունները մանրանում են, երկրի տնտեսական կյանքը անկում է ապրում, քաղաքները ամայանում են, Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական կապերը միավորված պետության հետ թուլանում,

ապա խզվում են, ազատագրական շարժումները կորցնում են իրենց զանգվածային բնույթը և աստիճանաբար տեղի տալիս ամուլ ու ապարդյուն բանագնացություններին:

IX-XIII դարերի զարգացած ֆեոդալիզմը իր հետագա բնականոն առաջընթացը չի ապրում, ընդհակառակը, տեղի է ունենում վերադարձ դեպի մի կացություն, որը հիշեցնում է ֆեոդալիզմի նախնական, պարզունակ, անզարգացած աստիճանը: Լայն չափերի է հասնում ֆեոդալական տարրերի էքնիկական և սոցիալական դիմախեղումը և քայքայումը: Տակավին հույների, սելջուկների ժամանակ ծայր առած դավանափոխությունը, ֆեոդալական օտար տարրերի հաստատվելը երկրում, ապա և ֆեոդալների կրոնական սքեմավորումը, տեղական ֆեոդալներին, նաև եկեղեցականներին տիրույթներից և իշխանությունից բռնի զրկելը և այլն մեծ չափեր են ընդունում Լանգ Թամուրի ժամանակներում: Տեղի էր ունենում նաև ժողովրդական զանգվածների էքնիկական դիմախեղում, որը նույնպես հետևանք էր օտարների տիրապետության քայքայիչ ազդեցության, արտագաղթի, գերեվարության, տեղահանությունների: Հայ ժողովուրդը ցիրուցան եղավ ամենուրեք օտար ժողովուրդների մեջ, ժողովրդական զանգվածների շաղկապը խզվեց, խախտվեց ամեն կարգի միաբանություն, հայ ժողովրդի հավաքական ուժը կազմալուծվեց: Նման պայմաններում հայ քաղաքական կյանքը նվազում է, ազատագրական շարժումները թուլանում են, սահմանափակվելով XV-XVII դարերի դիվանագիտական ապարդյուն բանակցություններով:

Հայ կղերի եկեղեցապետական ձգտումները զորեղանում է XV դարում, որոնց ցայտուն արտահայտիչն էր Թովմա Մեծոփեցին: Վերջինիս գործունեությունն ուղղված էր ոչ միայն հայերի եկեղեցական վերամիավորումը իրականացնելու, այլև Էջմիածնում վերականգնված հայրապետական աթոռի գերիշխանությունը նաև քաղաքական կյանքում հաստատելու նպատակին: Նույնպիսի երազանքներ ուներ նաև Աղթամարի Ջաքարիա կաթողիկոսը Սեֆեղինյաններին տնից, որը փորձում էր եկեղեցու միջոցով վերահաստատել նաև Վասպուրականի քաղաքական միությունը: Այդ նպատակով նա ջան-

քեր էր գործադրում Ջհանշահի օգնությամբ վերականգնել Վասպուրականի վաղուց մարած թագավորությունը: Նրա հաջորդը՝ Ստեփանոս կաթողիկոսը 1466 թ. թագավոր օծեց իր եղբորը՝ Սմբատ Սեֆեդինյանին: Օրապակաս այս թագավորը Աղթամարի հոգևորականի դրածոն էր և Կարա-Կոյունլու Ջհանշահի և Ակ-Կոյունլու Ուզուն-Հասանի միջև տեղի ունեցող պայքարի դիվանագիտական խրտվիլակը, մյուս կողմից՝ նրա թագավորությունը հայ ֆեղալական տների՝ կաթողիկոսական գավազանին և արքայական մականին տիրանալու հին կռիվների մի անփառունակ արտահայտություն էր: Դա այնուամենայնիվ ցույց էր տալիս, որ քաղաքական ինքնուրույնության գաղափարը տակավին բոլորովին մարած չէր:

Խոսելով եկեղեցապետական մտայնության բազմաթիվ արտահայտությունների մասին, Աշ. Հովհաննիսյանը կատարում է ճշմարիտ հետևյալ եզրակացությունը. «Հայ քաղաքական մտքի թեոկրատական վերազգեստավորումը ազդանշում էր այն դասալքումը, որին ենթարկվում էր այս դարերում տկարացած և փոշիացած հայ աշխարհիկ ֆեոդալիզմը»[12]:

Հեղինակը, բազմաթիվ փաստեր մեջբերելով, բացահայտում է աշխարհիկ ֆեոդալների այդ դասալքման, եկեղեցական սքեմավորման և եկեղեցու քողի տակ իրենց տիրույթները պահպանելու պատկերը: Այդ ամենից հետևում է աշխարհիկ ֆեոդալների արատավոր բարքերի ու քմայքների ճոխ զարգացումը հոգևորականության մեջ, հակադիր աշխատավոր զանգվածների թշվառ կյանքին ու նյութական վայրընթացին: Այս պայմաններում բորբոքվում է Մեխլուի գլխավորած շարժումը XVII դարի սկզբներին, հակաեկեղեցական ժողովրդա-ազատագրական շարժումներին բնորոշ գծերով: Հայ կղերը նույն XVII դարում հիշում էր ազատագրական լեգենդի մասին, սակայն խոսում էր առավելապես Հայոց տան ավերի, բարքերի ապականության, օրենքի, արդարության խանգարման, վերջապես՝ աշխարհի կործանման մասին, զանց առնելով լեգենդի քաղաքական կանխատեսումները, ինչպես դա անում էր Դրիգոր Դարանաղցին:

[12] Նույն տեղում, էջ 455:

Իսկ Հակոբ Կարնեցին Հայաստանը զավթած թուրքերին համեմատելով Դանիելի մարգարեության չորրորդ գազանի հետ, որը «ահեղ էր եւ զարմանալի, ուժէր եւ զմնացեալն առ ոտն կոխէր», այնուամենայնիվ ըմբոստության կոչ չէր անում: Նա ոչ մի հավատ չուներ նաև դեպի քրիստոնյա Արևմուտքին հայող առասպելը: Հայաստանին և նրա ժողովրդին բաժին ընկած անասելի ծանր վիճակից ելք չտեսնելու այս անհեռանկար մտայնությունն էր իշխում հայ հոգևորականության շրջաններում XVII դարում:

«Դրվագների» առաջին գրքի վերջում հեղինակը քննարկում է դավանաբանական կողմնորոշումների և պայքարի հարցը: Եթե քաղկեդոնական և հակաքաղկեդոնական, ունիտորական և հակաունիտորական վեճերն ու պայքարը անդրադարձնում էին հարևան մեծ տերությունների հակամարտը, նրանց քաղաքական ազդեցությունների ելևէջները և դրանց հետ կապված ակնկալությունները, ապա եկեղեցական դավանաբանական ներքին զսպանակները հանդիսանում էին տարանցիկ առևտուրը և Հայաստանի քաղաքների կապը դրա հետ:

Խոսելով քաղկեդոնական եկեղեցու օջախների մասին, Աշ. Հովհաննիսյանը կրկնում է ընդունված այն տեսակետը, թե քաղկեդոնական էին այն եկեղեցիները, որտեղ որմնանկարներ են հանդիպում: Այդ տեսակետից վերանայված է ու պարզված, որ չի կարելի քաղկեդոնականների կառույցը կամ նկարազարդվածը համարել ամեն մի եկեղեցի, որտեղ նկարազարդումներ են արվել: Գիտականորեն հաստատված է, որ պատկերամարտությունը Հայաստանում դրսևորվել է առավելապես այն ժամանակ, երբ զորեղ են եղել բյուզանդական քաղաքական ճնշումը և նվաճողական հավակնությունները: Սինչդեռ դրանց թուլացման կամ բացակայության պայմաններում որմնանկարները հայկական եկեղեցիներում արվել են սովորական կարգով, չհանդիպելով պատկերամարտության և չհանդիսանալով քաղկեդոնականության արտահայտություն: Բոլորովին չպիտի նկատի ունենալ այն դեպքերը, երբ որմնանկարները երևան են եկել Հայաստանի տարածքի վրա տարբեր ժամանակներում նկատվող

հատուկենտ քաղկեդոնիկ եկեղեցիներում: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Հայաստանում քաղկեդոնականությունը հանդիպելով ժողովրդական զանգվածների դիմադրությանը և առանձին հաջողություն չունենալով, տեղի տվեց և նահանջի դիմեց սելջուկյան և մոնղոլական հարվածների տակ նահանջող կայսերական բանակների հետ: Դրանից հետո զորեղանում են պապական եկեղեցու կողմից հրահրող և առավելապես Կիլիկիայում, մասամբ և Արևելյան Հայաստանում, իրենց արտահայտությունները գտած ունիտորական քարոզը, ձգտումները և պայքարը դրանց շուրջ:

«Դրվագների» հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ ունիտորական քարոզչության առաջավորասիական ուղիները համընկնում են համաշխարհային առևտրի առաջավորասիական մագիստրալին: Ունիտորությունը լինելով գերազանցապես պապական եկեղեցու և Իտալիայի ու այլ կենտրոնների շահախնդրությունների գործիքը, միաժամանակ նկատելիորեն արտահայտում էր Հայաստանի քաղաքաբնակչության, մանավանդ տարանցիկ առևտրի հետ կապված հայ առևտրականների շահերը, այլապես նա հող չէր գտնի ծիլեր արձակելու: Ունիտորները իրենց հաջողությունն ապահովելու նպատակով հանդես էին գալիս ժամանակի գիտության որոշ պահանջներին ընդառաջողի տեսքով, մատչելի մտքերով և պարզ հասկանալի լեզվով քարոզելու պահանջով: Նրանք շահատակում էին նաև հայ եկեղեցու և հոգևորականության թույլ կողմերի ու արատների քննադատությամբ, վարագուրելով պապական եկեղեցու հանցանքներն ու արատները: Նրանք սերմանում էին պապական եկեղեցու միջոցով հայերի ազատագրման և Հռոմի եկեղեցապետության գաղափարները: Դրան հակադրվելով, Տաթևացու և Որոտնեցու դպրոցը առաջ էր քաշում առանց Արևմուտքի օգնության հայ թագավորական գահը և կաթողիկոսական աթոռը Էջմիածնում վերականգնելու, թագը և գավազանը միավորելու հայկական եկեղեցապետության գաղափարը:

Ունիթորական քարոզը քաղաքների և առևտրի անկման պայմաններում ծավալուն և տևական հաջողություն չունեցավ: Հաջողութ-

յուն չունեցավ նաև քաղաքական հանգամանքների աննպաստ դասավորության պատճառով՝ խաչակրաց արշավանքների անարդյունք հետևանքների և Կիլիկյան հայկական թագավորության անկման հետևանքով: Այնուհանդերձ XV-XVII դարերում եվրոպական պետությունների միջամտությամբ ազատագրվելու պատրանքով ուղեկցված ունիտորական քարոզը և հակամարտը այդ հարցի շուրջը շարունակվում էին, երբեմն առանձին ուժ ստանում բնաշխարհից դուրս հայ այն գաղթավայրերում, որտեղ առևտրական կապիտալը զարգացնալու և Արևմուտքի հետ կապերը ընդլայնելու հնարավորություն ուներ: Նման պայմաններում կաթոլիկ քարոզիչները լայնորեն օգտագործում էին հայ ազատագրական լեգենդը՝ խոստանալով Արևմուտքի միջամտությունը, եթե հայերը պապական եկեղեցու հոտը դառնալու պատրաստակամություն ունենան, իսկ դրա տնտեսական-քաղաքական, շահադիտական նպատակադրումը շատ ավելի հեռահար էր: Արդ՝ փորձենք ամփոփել մեր շարադրանքը:

Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության առաջին գիրքը՝ ընդգրկելով վաղ միջնադարից մինչև XVII դարը, շուրջ 12 հարյուրամյակ կազմող մի ընդարձակ ժամանակաշրջան, շոշափում է հայ ժողովրդի պատմահասարակական մտքի բազմաթիվ կարևոր հարցեր: Գիտնականի երկհատոր աշխատության առաջին գիրքը՝ առանձին վերցրած այնքան է ուրույն և ինքնատիպ, որ որպես այդպիսին կարևոր ներդրում է հայագիտության մեջ: Առաջին գրքում ցույց է տրվում, որ ազատագրական լեգենդը դրսևորել է հայ իշխող դասերի քաղաքական կողմնորոշումները և դրանց հաջորդական շրջադարձերը դրսի ուժերի նկատմամբ, այդ ուժերից ազատություն ստանալու որոշակի միտումով: Հեղինակն էլ ազատագրական մտքի պատմության հարցերը քննարկելով առավելապես ազատագրական լեգենդի կապակցությամբ, հարկադրված է եղել շատ հաճախ խոսելու հենց այդ կողմնորոշումների մասին: Դա, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ «Դրվագների» ընդհանուր առանցքը,- ինչպես հեղինակն է ասում,- կազմում է այն փաստերի ուսումնասիրությունը, որոնցով նախա-

պատրաստվել ու սկզբնավորվել է իր ազատագրման համար պայքարող հայ ժողովրդի քաղաքական շրջադարձը դեպի Ռուսաստան»[13]: Կարծում ենք, որ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատորյակի առաջին գիրքը ժամանակի և հարցերի ընդգրկումով շատ է դուրս եկել հայ ազատագրական մտքի՝ դեպի Ռուսաստան դիմաշրջման նախապատմության շրջանակներից և ստացել է ինքնուրույն ուսումնասիրության բնույթ, սակայն դրանից այն չի կորցրել իր ինքնատիպությունը, ինքնատիպություն, քանզի առաջին անգամ գիտական պատմականության դիրքերից քննարկում է հայ հասարակական մտքի մի ուրույն կողմը՝ ազատագրական մտքի պատմությունը: Աշխատության առաջին գրքի խոշոր արժեքը պիտի համարել առաջին հերթին այն, որ նրանում հաջորդաբար քննարկված և բնութագրված են ժողովրդի քաղաքական պատմության տարբեր դարաշրջանները իրենց սոցիալական բովանդակությամբ և ներքին ու արտաքին քաղաքական հանգամանքներով: Նշվում է, թե որ դարաշրջանում ինչն է գլխավորը և որոշիչը, բացահայտված է ազատագրական լեգենդի և տեսիլների ու գուշակությունների բուն իմաստը, դրանք ստեղծող սոցիալական միջավայրն իր դասային տարբերակումներով, որոնք իրենց յուրովի կնիքն են դրել լեգենդի վրա, ըստ որում այդ ամենը տրված են իրենց շարժման, զարգացման և փոփոխությունների մեջ: Հաջող է մեկնաբանված ազատագրական սին պատրանքներից և դրսի միջամտությունից զերծ ժողովրդական զանգվածների ազատագրական պայքարի և սեփական ուղու վերլուծությունը, բացահայտված է ժողովրդի դերը քննարկված ժամանակաշրջանի հայոց պատմության մեջ: Հեղինակը նոր խոսք է ասում Թոնդրակյան ժողովրդական շարժման առաջացման, նրա գաղափարախոսության սոցիալական բովանդակության, ներքին ու արտաքին կեղեքիչների դեմ ուղղվածության լինելու և իշխող ֆեոդալական դասերի քաղաքական կողմնորոշումների մեջ նրա որոշիչ դերի մասին: Եվ վերջապես, «Դրվագների» առաջին գրքում ցույց են տրվում սոցիալական և քաղաքական այն պայման-

[13] Նույն տեղում, էջ 7:

ներն ու իրադարձությունները, որոնց հետևանքով ազատագրական շարժումները XV-XVII դարերում ընդազեցին, արևմտյան և արևելյան հորիզոններում տեղի ունեցող ազատագրական դեգերումները արդեն սկսեցին երևան բերել իրենց սնանկությունը, սակայն ազատության հույսը չմնաց անմար: Դեպի Արևմուտք ապարդյուն բանագնացություններից հետո հայ ազատագրական միտքը պիտի շրջվեր դեպի մի նոր հորիզոն՝ Ռուսաստան:

«Դրվագների» երկրորդ գրքում Աշ. Հովհաննիսյանը բացահայտում է XV-XVII դարերում Հայաստանի ազատագրության հարցի շուրջ արևմտաեվրոպական պետությունների հետ հայերի ունեցած բանակցությունների պատմությունը և ի վերջո՝ Իսրայել Օրու գործունեության քննական վերլուծությամբ հայ ազատագրական մտքի դարակազմիկ շրջադարձը և ժողովրդի ազատագրական ակնկալությունների լծորդումը Մոսկվային: Այդ շրջադարձի գործում մեծ է հայ ազատագրական շարժման գործիչ Իսրայել Օրու դերը: Ո՞վ էր Իսրայել Օրին: Ծնվել է 1659 թ. օգոստոսին Սյունիքի Սիսիան գյուղում: Հայաստանի ազատագրության խնդրով 1677 թ. Էջմիածնի գաղտնի ժողովում ընտրված պատվիրակների և հոր՝ Մելիք Իսրայելի հետ 1679 թ. հոկտեմբերին մեկնել է Կ. Պոլիս: Պատվիրակության՝ Եվրոպա մեկնելու ձախողումից հետո պատվիրակ արքեպիսկոպոսներից մեկի հանձնարարությամբ, հայ վաճառականների հետ, 1683 թ. վերջին անցել է Վենետիկ, 1683 թվականին՝ Փարիզ, որտեղ սկզբում զբաղվել է ֆրանսիական բանակի պարենամատակարարմամբ, ապա՝ մտել զինվորական ծառայության՝ հետևազորի լեյտենանտի, այնուհետև հեծելազորի կապիտանի աստիճանով և 1688-1695 թթ. մասնակցել անգլո-ֆրանսիական պատերազմին: 1695 թ. գերի է ընկել անգլիացիներին, ապա ազատվել և մեկնել Հռենոսյան Պֆալց, որտեղ եղել է Հայդելբերգի, Ֆրանկենթալի և Մանհայմի մատակարարման կոմիսար: 1698 թ. կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին ներշնչել է Հայաստանը ընդաճելու, նրա թագավորը դառնալու և Օսմանյան կայսրության (որի դեմ մղվող պատերազմին մասնակից էր նաև

Պֆալցը) թիկունքում անկախ Հայաստան և Վրաստան կազմավորելու միտքը:

Հովհան Վիլհելմը համաձայնել է և Իսրայել Օրու միջոցով թղթեր է հղել Քարթլիի Գիորգի XI թագավորին, հայ մելիքներին, Ամենայն Հայոց և Աղվանից կաթողիկոսներին և մանրամասն տեղեկություններ խնդրել Հայաստանի և հարևան երկրների տնտեսական, քաղաքական և ռազմական պայմանների մասին: 1698 թ. օգոստոսին Իսրայել Օրին ժամանում է Վիեննա՝ ավստրիական Լեոպոլդ I կայսրից ևս հուսադրող գրություն ստանալու, սակայն մերժվել է թուրքերի հետ սկսած բանակցությունների պատճառով: Այնուհետև մեկնել է Ֆլորենցիա, ստացել Տոսկանայի դուքս Կոզմաս III-ի համաձայնությունը և 1699 թ. ուղևորվել Հայաստան: Սակայն Հայաստանում և Վրաստանում իրադրությունը լրիվ փոխվել էր: Նախկինում ապստամբ Գիորգի XI-ը հնազանդվել և գտնվում էր Սպահանում, իսկ հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեսացին ու Գանձասարի Սիմեոն կաթողիկոսը չեն արձագանքել Իսրայել Օրու ձեռնարկմանը: Միայն Մելիք Սաֆրազի օժանդակությամբ Իսրայել Օրուն հաջողվում է Անգեղակոթ գյուղում (Սիսիանի գավառ) ապրիլին գումարել Սյունիքի 11 մելիքների խորհրդաժողով, որտեղ կազմվել են գրություններ՝ ուղղված Հովհան Վիլհելմին (Հայաստանի թագը ստանալու), Հռոմի պապին, Ավստրիական կայսրին, Տոսկանայի դքսին և Ռուսաստանի ցար Պետրոս I-ին՝ Հայաստանի ազատագրության գործին սատարելու խնդրանքով: Իսրայել Օրուն Անգեղակոթի ժողովը տրամադրում է նաև կնքված մաքուր թղթեր՝ ըստ անհրաժեշտության դիմումներ կատարելու: Իսրայել Օրու հետ Եվրոպա է ուղարկվել Մինաս վարդապետ Տիգրանյանցը՝ որպես մելիքների ներկայացուցիչ և Իսրայել Օրու օգնական: 1699 թ. սեպտեմբերին մեկնելով Դյուսելդորֆ՝ Իսրայել Օրին և Մինաս վարդապետը մշակել ու 1700 թ. սկզբին Հովհան Վիլհելմին են ներկայացրել Հայաստանի ազատագրման այսպես կոչված պֆալցյան ծրագիրը, ըստ որի կազմվելու էր եռյակ դաշինք (Ավստրիա, Պֆալց և Տոսկանա): Դաշնակիցների բանակն անցնելու էր Ռուսաստանով՝ վերջինիս համաձայնությամբ, հետևաբար, ծրագ-

րի իրագործմանը պետք է մասնակցեր նաև Ռուսաստանը: Դրսի օգնությունը դիտվել է որպես ազդակ երկրում ապստամբական շարժում հրահրելու: Հայաստանի ազատագրությունը պետք է իրագործվեր հիմնականում սեփական ուժերով: Ծրագրում առաջնահերթ տեղ տրվել է պարսկական լծի տակ գտնվող Արևելյան Հայաստանի ազատագրությանը՝ հատուկ ընդգծելով հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարի անհրաժեշտության գործոնի կարևորությունը: Ծրագիրն իրականացնելու համար Հովհան Վիլհելմը Իսրայել Օրուն հանձնարարականներով ուղարկում է Տոսկանայի դքսի և ավստրիական կայսրի մոտ, սակայն վերջինս հրաժարվում է Հայաստանի ազատագրության գործին մասնակցելուց՝ իսպանական ժառանգության համար սկսված պատերազմի պատճառով: Ավստրիայի հրաժարումը խափանել է եռյակ դաշինքի ստեղծումը և, Արևմուտքից հուսախաբ, Իսրայել Օրին 1701 թ. մեկնում է Մոսկվա: Ռուսաստանի պետական գործիչների հետ վարած բանակցությունները նրան հանգեցնում են այն մտքին, որ քրիստոնյա Ռուսաստանը, որպես մերձավոր և Արևելքում լուրջ քաղաքական և տնտեսական շահախնդրություններ ունեցող երկիր, ի վիճակի և տրամադիր է սատարելու Հայաստանի ազատագրության գործին: Ուստի, Իսրայել Օրին մշակում է նոր ծրագիր՝ Մոսկովյան ծրագիրը, որում Հայաստանի ազատագրության գործում գլխավոր դերը հատկացվում է Ռուսաստանին: Վերջինս պետք է տրամադրեր 25-հազարանոց բանակ, որը Դարիալի կիրճով և Կասպից ծովով պետք է մտներ Հայաստան, ուր նրան էին միանալու հայ և վրաց ապստամբները և համատեղ ուժերով, օգտվելով Պարսկաստանի ընդհանուր թուլությունից, կարճ ժամանակում ազատագրելու էին Արևելյան Հայաստանը: Ըստ Իսրայել Օրու, ռուսական օգնությունը պետք է զուգակցվեր հայերի ապստամբական լայն շարժման հետ, որպես ազատագրության և հայրենի պետականության վերականգնման կայուն երաշխիք: Համոզմունք ունենալով, որ Արևելյան Հայաստանն ազատագրելու անհապող փորձը կարող է վտանգավոր կացություն ստեղծել հայ ժողովրդի համար՝ Իսրայել Օրին ձգտել է ապահովել Ռուսաստանի և Հռոմեական սրբազան

կայսրության հակաթուրքական կոալիցիան, փորձել է հայ ժողովրդի ազատագրական պայքարը դուրս բերել ազգային պարփակվածությունից: Այդ նպատակով էլ սերտ հարաբերություններ է հաստատել Մոսկվա ապաստանած Իմերեթի թագավոր Արչիլ II-ի, իսկ հետագայում նաև Արևելյան Անդրկովկասի թաթարների հետ: Իսրայել Օրին իր Մոսկովյան ծրագիրը ռուսական կառավարությանն է ներկայացրել 1701 թ. հունիսի 25-ին: Հոկտեմբերին Պետրոս I-ը ընդունում և զրուցում է Իսրայել Օրու և Մինաս վարդապետի հետ, իսկ 1702 թ. մարտին հայ պատվիրակներին պաշտոնապես հայտնվել է, որ ռուսական արքունիքը Հայաստանի ազատագրությամբ կզբաղվի միայն Հյուսիսային (Շվեդական) պատերազմից հետո: Իսրայել Օրու նախաձեռնությամբ 1703 թ. կազմվել և ռուսական կառավարությանն է ներկայացվել նաև Հայաստանի քարտեզը: Դեպի Անդրկովկաս նախատեսվող արշավանքի հաջողության համար Պարսկաստանի ներքին կացության վերաբերյալ առավել ճշգրիտ տեղեկություններ հավաքելու և հայ ու վրաց ապստամբական ուժերը համախմբելու նպատակով ռուսական արքունիքը հավանություն է տվել նաև Իսրայել Օրու առաջարկած պարսկական դեսպանության գաղափարին: Դեսպանության նկատմամբ կասկածանք չառաջացնելու նպատակով 1704 թ. Իսրայել Օրին մեկնել է Եվրոպա, Հռոմի պապից ձեռք բերել պարսկական տիրապետությունում քրիստոնյաների հալածանքը դադարեցնելու մասին պարսից շահին ուղղված դիմում, գնել զենք և 1706 թ. վերադարձել Ռուսաստան: Պետրոս I-ը նույնպես գրել է համանման դիմում, Իսրայել Օրուն շնորհել ռուսական բանակի գնդապետի աստիճան, նշանակել դեսպանության ղեկավար և 1707 թ. ուղարկել Պարսկաստան: Իսրայել Օրին շքախմբով և ռազմական ջոկատի ուղեկցությամբ 1708 թ. սկզբներին մուտք է գործում պարսկական պետության սահմանները: Իսրայել Օրին չնայած պաշտոնապես Հռոմի պապի դեսպանն էր, սակայն հանդիպում է մեծ արգելքների: Պարսկաստանում գործող արևմտաեվրոպական, հատկապես ֆրանսիական միսիոներները Հուսեին շահին ներշնչում էին, թե Իսրայել Օրու նպատակը հայկական պետականության վերականգ-

նումն է: 1709 թ. Իսրայել Օրուն այնուամենայնիվ հաջողվում է հանդիպում ունենալ շահի հետ, որից հետո վերադարձել է Անդրկովկաս և այնտեղ մնացել մինչև 1711 թվականը: Այդ ընթացքում հանդիպումներ է ունենում Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցու, Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի, հայ մելիքների և անդրկովկասյան այլ գործիչների հետ, որոնց նպատակն էր ազատագրական շարժման բորբոքումը, ընդհանուր ճակատի և հայկական միացյալ զորական ուժերի ստեղծումը: 1711 թ. Իսրայել Օրին Եսայի Հասան-Ջալալյանի հետ վերադառնում է Աստրախան, որտեղ էլ օգոստոսին մութ հանգամանքներում հանկարծամահ է լինում:

Բնութագրելով հայ ազատագրական մտքի և ազատագրական շարժումների պատմության մեջ Իսրայել Օրու տեղը, ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը «Դրվագների» երկրորդ գրքի վերջաբանում գրում է. «XVII-XVIII դարերի արանքում հանճին Օրիի՝ ասպարեզ իջավ հայ նշանավոր մի գործիչ, որի համար Հայաստանի ազատագրման հարցը դարձավ համառ ու եռանդուն պայքարի խնդիր»[14]:

Իսրայել Օրին գործում էր մի ժամանակ, երբ հմուտ էր համարվում այն դիվանագետը, որը կարողանում էր «չեղածը ձևացնել որպես եղած և, ընդհակառակը, իրոք եղածը վարագուրել որպես չեղած»[15]:

Իսրայել Օրիի վարքագծի մեջ բացակայում էր անձնական շահախնդրության արատը, որի առկայությունը բախտախնդրության երանգ կարող էր հաղորդել նրա դիվանագիտական դիմափոխություններին: Նրա նախաձեռնությունների և բանավարությունների մեջ անձնականը ստորադրված էր հանրայինին և երևակայականը իրականին: Նա մի գործիչ էր, որի հորդ եռանդն ու աշխույժ խառնվածքը տոգորված էր հայրենի երկրի բարօրության նկատմամբ ունեցած անկեղծ ձգտումով և ազատաբաղձության նպատակասլացությամբ: Իսրայել Օրիի «դիվանագիտական պրակտիկան,- շարունակում է

---

[14] Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 625:
[15] Նույն տեղում, էջ 625-626:

«Դրվագների» հեղինակը,- հիմնականում ելնում էր հայրենի երկրի և միջազգային հարաբերությունների իրական վիճակից: Երկարամյա թափառումներից հանած դիտողությունները և վառ երևակայությանը զուգակցված ամուր գործնականությունը միջոց էին տալիս նրան՝ քաղաքական իր հեռանկարների շենքը կառուցել փաստերի ատաղծով և միաժամանակ հարդարել նրա ճակատը ֆանտաստիկ զարդաքանդակներով: Ֆանտաստիկան այստեղ պայմանական այն սուտն էր, որի մեջ ծրարված էր նրա քաղաքական ճշմարտությունը՝ Հայաստանի ազատագրության անշեղ ձգտումը»[16]:

Արագամիտ և դյուրընկալ՝ Իսրայել Օրին ուներ փորձված բանավարի և ճարպիկ ու գաղտնապահ գործչի տվյալներ: Երբ անհրաժեշտ էր՝ լռակյաց էր, պերճախոս էր՝ երբ պահանջում էր այդ: Դատումների ճկունությամբ և խոսքի ջերմությամբ Օրին կարողանում էր համակել նրանց, որոնց գործակցության կարիքն ուներ:

Ժամանակակիցները չեն ժխտել Իսրայել Օրիի խորագիտությունը, մարդկանց հետ հարաբերություններում նրա բարեկրթությունն ու դիվանագիտական գործունեության համար նրա ունեցած ունակությունը: Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմը դրվատում էր նրա անձնվիրությունն ու խելքը, նրա ճարպկությունն ու «անհամեմատելի գործունակությունը»: Կիրք մտքի և ասպետական բնավորության տեր մի մարդ, ինչպես վրաց թագավոր Արչիլը, համակիր էր նրա նպատակներին և հանճարարում էր նրան որպես հայ և վրաց ժողովուրդների ազատագրման գործին ծառայող անկեղծ ու հավատարիմ իր բարեկամի: Իսրայել Օրիի անձնական հաջողությունները նույնիսկ մարդագետ ու սրատես Պերտրոս I-ի մոտ ապացույց է, որ հայ գործիչ-դիվանագետի պահվածքը համոզիչ էր, վարքագիծը՝ նպատակադեպ:

Աշ. Հովհաննիսյանը հանգամանորեն ցույց է տալիս, որ Իսրայել Օրիի քաղաքական բեմելի պահին հայ ազատագրական շարժումն ընթանում էր քաղաքական-դավանաբանական նույն հունով, որը XV-XVI դարերից ի վեր ձև և ուղղություն էր հաղորդել հայ դիվա-

[16] Նույն տեղում, էջ 626:

նագիտական բանավարություններին: Օրու պֆալցյան ծրագիրը սկիզբ էր առել հուսապատիր ակնկալությունների նույն աղբյուրից, որից ջուր էին խմել նաև նրա գաղափարական նախորդները: Թերևս նորը միայն այն էր, որ այս անգամ Հայաստանի ազատագրության շուրջ տարված բանավարությունների գաղափարախոսական հիմնավորումը ստանում էր ավելի ներդաշնակ ձևավորում: Եվ որպես հայ հայրենասեր, և որպես հայ կաթոլիկ բանավարությունների ընթացքում Օրին անկեղծ էր[17]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, Օրիի անցյալի հետքերից ավելի նշանակալից է նրա վերաբերմունքը դեպի իր ժամանակի առաջադիմական պահանջները: Օրիի նպատակադրումների մեջ անդրադառնում էր պարսկական ֆեոդալիզմի այն տագնապը, որը ծայր առնելով Շահ-Աբբասի ժամանակներից, վերջին Սեֆյանների օրերին կազմալուծմամբ էր հասցրել պարսկական պետականությունը՝ դուռ բացելով ներքին ապստամբությունների և արտաքին միջամտությունների առաջ: Նա մերկացնում էր Պարսկաստանում իշխող քաղաքական վարչակարգի այլանդակությունը և մասնավորապես դրա անդրադարձումը հայ եկեղեցական վարչության մեջ: Օրին նախանձախնդիր էր իր դասի իրավունքների և ազատությունների վերահաստատման: Հայ մելիքական դասը շփման որոշ կետեր ուներ Պարսկաստանի և Թուրքիայի ուղիները չափող հայ առևտրականների հետ: Հեռանալով հայրենիքից Սյունյաց մելիքների ժառանգը ինքն իսկ մխրճվել էր առևտրական գործերի մեջ և հետամուտ համագործակցության եզրեր գտել համերկրացի վաճառականության հետ: Սակայն փարվելով Հայաստանի թագավորությունը վերականգնելու ավանդական մտայնությանը, քաղաքականապես փոշիացած մելիքության և ինքնապաստան վաճառականության ձգտումներից առավել նա ի վերջո ընդառաջեց հայ ժողովրդի ինքնորոշման նորադարյան հեռանկարին: Օրին գծագրեց Հայաստանի ազատագրման իրական այն նա-

---

[17] Տե՛ս նույն տեղում, էջ 631:

խաշավիղը, որով քայլելու էր հայ ժողովուրդը մի ամբողջ հարյուրամյակ՝ մինչև Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին[18]:

Իսրայել Օրին առաջինն էր, որ մոսկովյան իր ծրագրով հայ ազատագրական շարժումը և հայ դիվանագիտական բանակցությունները դուրս բերեց կրոնադավանաբանական հին փակուղուց: Եթե պֆալցյան ծրագիրը առաջ տանելու նպատակով Օրիի թղթերում հանդիպում ենք տողերի, որոնք առիթ են տալիս կարծելու, թե հայ ազատագրական շարժումը նա ի սպաս էր դնում հայ ժողովրդին խորթ միսիոներական նպատակների և հանդես գալիս ի փառս պապական եկեղեցու, մոսկովյան իր ծրագրով հայերի ազատագրական սպասումները նա մտցրեց զուտ քաղաքական շրջանակների մեջ: Օրիի գործունեության այդ փուլում եկեղեցական շուրջառը կատարում էր սոսկ քաղաքական առագաստի դեր: Փաստ է հարկավ, որ մոսկովյան ծրագրի իրագործման համար իսկ հարկ եղավ, որ Օրին զգեստավորվեր որպես պապական դեսպան: Սակայն այս անգամ եկեղեցու վարագույրը ծառայում էր սոսկ քաղաքական քողարկման: Մենք,- հետագայում գրել է Մինաս վարդապետը,- տարածում էինք այն կարծիքը, իբր թե ի սեր պապի է հովանավորում մեզ ցարը կամ՝ արտոնում հովվելու Ռուսաստանում հայ հավատացյալներին ազգային-եկեղեցական օրենքների ու կանոնների համաձայն: «Սակայն մենք այդ անում ենք հետին մտքով,- գրում է վարդապետը,- առաջինը այն նպատակով, որպեսզի լսելով այդ մասին մեր ժողովուրդն ամեն տեղից հավաքվի ու գա նորին մեծության երկիրը, և երկրորդ, որպեսզի մյուս թագավորները խոչընդոտ չհարուցեն նորին մեծությանը»[19]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, եթե Օրիի գործունեությունը քննենք միջնադարյան անցյալի դիտակետից, դժվար չէ նրան համարել սոսկ հայ ազատագրական շարժման ավանդույթների հերթական հետևորդ, սակայն դիտելով նրա գործունեությունը հայ նորադարյան պատմության սկզբնակետից, նա մեզ կպատկերանա որպես «քաղա-

---

[18] Տե՛ս նույն տեղում, էջ 632:

[19] **Эзов Г. А.**, Сношения Петра Великого с армянским народом. СПб., 1898. փաստաթուղթ N 212, § 81.

քական մի ռահվիրա, որի գործունեությունը լծորդվում էր XVIII դարի հայ նշանավոր այն գործիչների հետ, որոնք բացառապես Ռուսաստանի մեջ էին որոնում Հայաստանի ազատագրման հենարանը»[20]: Կարևորելով ժամանակաղիմացկուն այս հայեցակետը, հեղինակը շարունակում է, որ եթե պֆալցյան իր ծրագրով Օրին ուղղում է իր հայացքը դեպի հայկական շարժման երեկը, մոսկովյան իր ծրագրով դիմաշրջվում էր դեպի շարժման գալիք օրը: Օրին առաջին դեպքում կատարում էր Հայաստանի ազատագրման խնդրի լուծման միջնադարյան վերջին ապարդյուն փորձը, երկրորդ դեպքում՝ անում էր խնդրի առաջադրման նորադարյան առաջին արգասավոր քայլը: Խաչակիր ասպետների մտապատրանքներից երես դարձնելով, հայ քաղաքական մտքի պատմության մեջ Օրին կատարում էր լիակատար հեղաբեկում, հանդիսանալով հայ այն գործիչների նախահայրը, որոնք մշակեցին ու կենսագործեցին հայ ազգային քաղաքականության ռուսական կողմնորոշման ուղեգիծը: Դա XVIII դարից ի վեր միակ առաջադիմական ուղեգիծն էր պարսկա-թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի համար: Ի. Օրին առաջին հայ մարդը չէր, որը քաղաքական ակնկալություններ էր լծորդում Ռուսաստանի հետ: Հայ-եվրոպական բանավարությունների շրջանակներում նման ակնկալություններ մերթ ընդ մերթ առաջանում էին տակավին XV-XVI դարերում: Սակայն նա առաջին հայ քաղաքական գործիչն էր, որ XVIII դարի սկզբներին, վերանայելով ու ճշտելով հայ ազատագրական շարժման քաղաքական ուղեգիծը՝ բացառապես Ռուսաստանի հետ կապեց Հայաստանի ազատագրման հեռանկարը:

Իսրայել Օրիի ձևակերպած քաղաքական մոսկովյան ծրագիրը և հայ-ռուսական հարաբերությունների պատմության ընթացքում այդ ծրագրի դրսևորած մեծ կենսունակությունը նախապատրաստված էր ու պայմանավորված հայ և ռուս ժողովուրդների տնտեսական, քաղաքական և մշակութային բազմաթիվ հանդիպումներով և ժողովուրդների շահերի զուգադիպման կամ ընդհանրության բազմաթիվ

[20] Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 633:

հին ու նոր փաստերով: Օրին կատարեց մի շրջադարձ, որի համար նրա ժամանակ արդեն կային նպաստավոր նախապայմաններ: Բայց փաստ էր նաև, որ հայ իրականության ներսում իսկ այդ շրջադարձը պիտի լծորդվեր դիմադիր ուժերի և խոչընդոտների հաղթահարման պայքարի հետ: Այդ պայքարն Օրին ձեռնարկեց՝ հանդես բերելով անսպառ եռանդ և հնարամտություն: Նրա ուղեգիծը սկսում էր համակիրներ գտնել ոչ միայն հայ իշխող դասերի ներսում, այլև հայ ժողովրդական խավերի կողմից: Աշ. Հովհաննիսյանը դրա խոսում արտահայտությունն է համարում ազատագրական լեգենդի նոր, Օրիի անվան հետ միացող այն տարբերակը, որի ժողովրդականության մասին վկայում են նրա Պարսկաստան դեսպանագնացության մասին մեզ հասած հուշագրերը: Նրա մահից ընդամենը մեկ տասնամյակ անց, Պետրոս I-ի պարսկական արշավանքի ժամանակ, Ղարաբաղում և Սյունիքի մի մասում, ինչպես և Անդրկովկասի վիրաբնակ և թաթարաթուրքաբնակ մարզերում ռուսական զենքի աջակցության հեռանկարով ոգևորված ժողովրդական շարժուները պատմականորեն հավաստեցին Օրիի ուղեգծի ձեռք բերող ժողովրդականությունը: Հենց հատկանշականն էլ այն է, որ Օրին իր նպատակադրումները չսահմանափակեց հայերի ազատագրման մեկուսացած հեռանկարով: Պարսկական և թուրքական օտարատիրությունների դեմ նա ջանում էր ոտքի հանել ոչ միայն հայ ու վրացի ժողովուրդներին, այլև Արևելյան Անդրկովկասի թաթարներին: Սա լայն մի մտահղացում էր, որով հայ ազատագրական շարժման դիվանագետ գործիչը յուրովի արձագանքում էր շարժման նախընթաց դարերի առավել առաջադիմական քաղաքական մղումներին: Հայաստանի պատմության հետագայի դաժան դասերը լիովին պիտի արդարացնեին հայ ազատագրական շարժման լայնախոհ գործչի գործունեության նաև այս կողմը, երևան հանելով նրա ուղեգծի կենսունակությունը և ճշմարտությունը:

Անդրկովկասյան երկրների աստիճանական միակցումը Ռուսաստանին հնարավորություն տվեց կայսրությանը վերջ տալ երկրատարածքում իշխած անարխիային, տեղական ժողովուրդներին ըն-

ձեռեց գույքի, անձի ազատություն, տնտեսական և մշակութապես առաջադիմելու տարրական հնարավորություն և ստեղծեց նախապայմաններ նորագրավ մարզերի կապիտալիստական զարգացման համար: Անդրկովկասի հայկական գավառները Ռուսաստանի հետ աստիճանաբար միացան կանոնավոր խճուղիներով: Նոսր բնակչություն ունեցող, տնտեսապես հետամնաց, մեծ մասով դեռ ֆեոդալա-ցահապետական կենցաղի մեջ սուզված՝ նրանք ներգրավվեցին ապրանքաշրջանառության ու հետզհետե զարգացող բուրժուական հարաբերությունների ոլորտի մեջ: Ռուսական տիրապետությունը նախադրյալներ ստեղծեց կովկասահայերի ազգային-քաղաքական համախմբման համար: Ռուս առաջավոր մշակույթը բարերար ներգործություն ունեցավ նրանց ազգային մշակութային կյանքի զարգացման վրա:

Նման մերձեցումը գաղափարապես արտահայտվեց Հովսեփ Էմինի մտայնության մեջ, որի մասին է վկայում նրա այն համոզումը, թե Վրաստանը կարող է դառնալ «ազատ» պետություն, եթե Հերակլը ոչ միայն համաձայնի գլխավորել հայ և վրաց ժողովուրդների ազատագրական շարժումը, այլև համաձայնի մտցնել երկրում այն բարեփոխումները, որ առաջարկում էր ինքը՝ իր դարի բուրժուական լուսավորչության գաղափարներով ներշնչված Էմինը:

Իսրայել Օրիից և Հովսեփ Էմինից մի քայլ առաջ անցնելով՝ այդ նույն դարում Շահամիրյանները հրաժարվում էին հին ֆեոդալական կարգերն ու դինաստիաները վերականգնելու մտքից և փայփայում հայկական նոր, սահմանադրական կամ հանրապետական պետություն ստեղծելու գաղափարներ: Անշուշտ քաղաքական մտքի սահմանափակությունը հատուկ էր անգամ XVIII դարի հայ բուրժուազիայի առավել առաջադիմական ներկայացուցիչներին: Հայ բուրժուազիան ակներևաբար բավականաչափ ուժ և ազդեցություն չուներ, քաղաքական շարժման համար հասունացող մյուս հասարակաշերտերը՝ քաղքենի պլեբսը, մանր ազնվականությունը և գյուղացիությունը, միավորելու և ղեկավարելու համար: Նրանք իրենց ծրագրերը իրագործելու համար վերջին հաշվով ապավինում էին ոչ այն-

քան հայ զանգվածների քաղաքական հասունությանը, որքան ցարիզմի, Հերակլ Բագրատունու, հայ կղերի և մանր ազնվականության օժանդակությանը: Ավելի ուշ, հրաժարվելով նույնիսկ բուրժուական թերատ ծրագրերից, Արղությանն ու Լազարյանները ռուսական արքունիքին ներկայացրած իրենց Դաշնաղրության նախագծի մեջ հարկադրված եղան վերստին ընդգծելու այն բաղձանքը, որ Հայաստանի անկախ պետականությունը կառուցված լինի մուլքադարական հիմքերի վրա՝ «որպէս յառաջ եղեալ են ի ժամանակս թագաւորաց մերոց եւ Օսմանցւոց եւ Պարսից»: Նախագծի հեղինակները նկարագրեցին անգամ սպագա հայ թագավորի կնիքը, որի վրա, ինչպես երբեմնի Արշակունյաց կնիքներն «քանդակվելու էին միգլխանի արծիվ, գառ և առյուծ...»[21]:

Չմոռանանք, որ նույնիսկ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ դեպի անցյալը միտված նման տրամադրությունները խամրած չէին: Ճշմարտությունն այն է, որ ռուս ժողովրդի և ռուս մշակույթի առաջատար դերը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու դրանով պայմանավորված դրական հետևանքներն այնուամենայնիվ չի կարելի համարել ցարիզմի գիտակից նպատակադրման, նրա «ազատարար միսիայի» կենսագործման արդյունք: Ցարիզմի արտաքին քաղաքականությունը մեծարելու նման ջանքերը ընդհանուր ոչինչ չունեն պատմության քննական ընկալման հետ: Օբյեկտիվորեն դիտված՝ Արևելյան Հայաստանը միացումը Ռուսաստանին նախապայմաններ էր ստեղծում արևելահայության ազգային-քաղաքական ազատագրման համար, բայց դրանով տակավին չէր նպատակադրվում և չէր կենսագործվում այդ ազատագրումը: Արևելահայությունը դեռ պիտի նվաճեր իր ազատությունը՝ կապելով իր գալիքը Ռուսաստանում արծարծվող համաժողովրդական հեղափոխական պայքարի հետ: Պատմական ընդհանուր հեռանկարների մեջ դիտված՝ հենց այս էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միակցվելու գործողությամբ ստեղծված իրադրության ամենադրական արդյունքը:

---

[21] «Հին հայոց պատմության», հ. գ. Թիֆլիս, 1894, էջ 733.

Ազգային-գաղութային իր քաղաքակրթությամբ ցարիզմը հանդիսանում էր Անդրկովկասի և Ռուսաստանի բոլոր ոչ ռուս ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի ոխերիմ թշնամին: Անդրկովկասի ժողովուրդները ինքնորոշվեցին որպես ազգություններ միայն մասնակցելով ռուս ժողովրդի գլխավորած ազատագրական այն մեծ պայքարին, որը վերջ դրեց ցարական բռնակալությանը: Հայտնի է, որ միջնադարյան իրադրության պայմաններում հայ ժողովրդի ազատագրման շարժիչ ուժերն առաջին հերթին երկրի գյուղական և քաղաքային զանգվածներն էին, որոնց վրա հենվում և դրանց պահանջներին ընդառաջում էին անգամ հայ ֆեոդալական այն տները, որոնք հետամուտ էին Հայաստանի և Անդրկովկասի միավորմանը: Միավորման այդ քաղաքականությունը չէր կարող այս կամ այն չափով և թեկուզ ժամանակավոր հաջողություն ունենալ, եթե իր կողմը չունենար գյուղի և քաղաքի հոծ զանգվածների աջակցությունը: Որպես արտադրական կենտրոններ, մասնավորապես քաղաքները՝ ածեցնում էին իրենց մեջ տնտեսական-հասարակական նախապայմաններ, որոնք մեծապես նպաստում էին երկրի քաղաքական միավորման այն գաղափարին, որով հատկանշված էր հայ և վրաց Բագրատունիների պետական քաղաքականությունը: Հայաստանի և Անդրկովկասի ազատագրման հայ և վրացի Բագրատունիների իդեալին հետագայում պիտի հարկադրվեր երկրի ազատագրման բուրժուական իդեալը: Նկարագրելով 1828 թ. պարկահայ ներգաղթը, կիսապաշտոնական ժամանակի տեղեկագիրն ազդարարում էր. «Յայսմ հին խանճարուրս ամենայն մարդկութեան մանաւանդ ազգիս հայոց՝ խմբեսցին ցրուեալ ընդ երեսս երկրի տոհմք հայոց, և ընդ բարերար իշխանութեամբ Նիկողայոսի առաջնոյ, յարիցէ թագաւորութիւն հայոց փառոք և ամենայն յիշատակ իւրոք»:

Ընավ էլ պատահական չէ, որ հայ կղերականության միջավայրում XVIII դարում հանդես եկան գործիչներ, որոնք քննադատում էին հայ ազատագրական շարժումը և նրա գաղափարախոսությունը՝ ելնելով տեսական կամ գործնական քաղաքական դիրքերից: Ոմանք էլ հարելով Հայաստանի հողերը ռուսական զենքով նվաճելու բաղ-

ծանքին՝ կուսակից չէին շարժման ապստամբական մարտավարությանը: Եթե կային եկեղեցականներ, ոմանք փարելով Հայաստանի ազատագրման գաղափարին, կանգ չէին առնում նույնիսկ զինված ապստամբության մտքի առաջ, կային նաև մարդիկ, որոնք պայքարում էին ազատագրական շարժման դեմ և պաշտպան կանգնում իշխող պետականության: Ինքնին պարզ է սակայն, որ այս հողի վրա հայ եկեղեցու գմբեթի տակ միայն արտացոլվում էր կյանքում պայքարող դասակարգերի ու խմբավորումների գաղափարական հակամարտը[22]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի, սկսվել էր մի նոր դարաշրջան, ուր փրկագործման միջնադարյան լեգենդները արդեն կորցրել էին իրենց վաղեմի ճգողական ուժը: Եթե կային դեռևս միամիտներ, որոնք հավատում էին հին մարգարեություններին, նրանք ևս չէին սպասում դրանց մոտալուտ կատարմանը: XIX դարի 40-ական թվականներին Մաղարթա վանքի մոտ հայ մի ճգնավոր, լսելով ռուսների՝ Արևելյան Հայաստանի գրավման մասին, ասում է. «Ուրեմն մեր ծերերն մարգարեացա՞ն, որք կասեին թե, մին ռուս անուն ազգ գալոց է փրկե մեր հայրենիքը... Բայց էս ևս կը կցեին, թե նոցա հեռավորությունը մեզանից և ճանապարհաց դժվարությունները, հարյուրավոր տարիք կքաշե...»[23]:

XIX դարի 50-60-ական թվականներին ռուսահայ բուրժուազիայի գաղափարախոսները հրաժարվում էին ոչ միայն ֆրանկների միջամտության միջնադարյան տեսիլներից, այլև Ռոմանովների և Արշակունյաց արծիվները նույնացնելու պատրանքից: Նրանք ընկալում էին հայ իրականությունը որպես ցարական ինքնավար գաղութ:

«Հյուսիսափայլի» լիբերալները վերհիշելով միջնադարյան լեգենդը կամենում էին համոզել անգամ, թե «վերագույն սուրբ վարդա-

---

[22] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 638:

[23] Տե՛ս Գ. Շերմազանյանի ճամբորդական հիշատակարանը, «Կռունկ հայոց աշխարհին», 1863, էջ 492: Տե՛ս նաև՝ Աշ. Հովհաննիսյան. նշվ աշխ., էջ 639:

պետը անեծք է գրել, որ հային թագավոր չլինի, իրան կուտե, եթե իշխանության թագ ստացավ»[24]:

1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական բանակի կողմից Երևանը գրավելուց անմիջապես հետո Ներսես Աշտարակեցուն գրած անտիպ մի նամակում, վերհիշելով Սահակ Պարթևի կանխագուշակությունը, Մեսրոպ Թաղիադյանն ասում էր, որ Արշակունյաց մի գլխանի արծիվը, որպես մոխիրների միջից հառնող փյունիկ՝ վերակենդանացել է ահա Մոսկովյան կայսրության երկգլխյան արծվի համասփյուռ թևերի ներքո: «Երկրպագցուք աշխարհասասան դրօշակին Արշակունեաց, որ ննջեացն և յարեաւ, և այլ ևս ոչ մեռանի»: Երևանի գրավումից հետո համաքաղաքացիներին հղած նամակում Թաղիադյանը գրում էր իր հայտնի տողերը. «Իմ լավ քաղաքացիք, էսպես երջանիկ բախտի որ դուք եք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագատրութեան ժամանակումն էլ չէին պատահել, զերա թեպետև թագատրութիւնն իւրեանցն էր, սակայն բարբարոսութիւնն և զուլումն պակաս չէր»[25]:

Սինչև դորպատյան տարիները Թաղիադյանից շատ տարբեր չէր անգամ Խ. Աբովյանի ազգային-քաղաքական հայեցակետային իղեալը: Երևանի գրավման ժամանակ հայերին համակած տրամադրությունը նկարագրելով՝ Աբովյանն ասում էր, թե Հայաստանի գետերը խառնում են իրենց արտասուքը Քուռի հետ, որ ընդհանուր հոսանքով գնան թափվեն Կասպից ծովի աղի ջրերը, ուր լողում են Ռուսաստանի նավերը: Խ. Աբովյանի նախադորպատյան տարիների բաղձանքն այն էր, որ Ռուսաստանը «իր բարի ոտը մեր աշխարհից չկտրի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա, ու էլ եղ իր առաջին փառքին հասնի»[26]: Հարկավ, ոչ մի տարակույս չկա, որ և Թաղիադյանը, և Աբովյանը խորապես տոգորված էին հայ ժողովրդի ազատագրման վսեմ հույսերով, չնայած այդ վսեմ հույսերը նրանք տակավին լծորդում էին

---

[24] «Հյուսիսափայլ», 1861, տետր 6, էջ 493:

[25] Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ֆոնդ կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 210:

[26] Աբովյան Խ., Եր. Ժ, հատ. 3, Երևան, 1948, էջ 113-114:

ցարիզմի «ազատարար միսիայի» հետ: (Խ. Աբովյանի ազգային-քաղաքական մտածողության շուրջ Աշ. Հովհաննիսյանի հայեցակետը փոքր-ինչ հանգամանորեն լուսաբանվում է սույն աշխատության երրորդ գլխում): Ըստ Աշ. Հովհաննիսյանի, մինչև XX դարի 60-ական թվականները հայ ժողովրդի առաջավոր մտածողներն սակայն հստակորեն չէին ընկալում ռուս ժողովրդի և ռուս կառավարության տարբերանքը: Գիտնականի կարծիքով, անգամ նրանք, ովքեր քննափետում էին ցարիզմի ազգային քաղաքականությունը, դեռ չէին կապում հայ ժողովրդի քաղաքական հեռանկարները ռուս ժողովրդի ազատագրական ոգորումների հետ: Հայ հրապարակախոսության մեջ ցարիզմի նկատմամբ գաղափարական ճեղք ստեղծվեց միայն 1860-ական թվականներին, երբ դիմաշրջվելով դեպի ռուս ժողովրդի հեղափոխական շարժումը, հայ հեղափոխական դեմոկրատիայի գործիչները հայերի ազատագրման երաշխիքը տեսան միայն ռուսական գյուղացիական հեղափոխության հաղթանակի հեռանկարում, ցարիզմի տապալման մեջ:

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## ԱԾ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ» ԵՐԿՀԱՏՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԿԵՏ*

Մեծավաստակ գիտնականի երկհատոր աշխատությունը մեծ ներդրում է հայագիտության մեջ: Այս գրքի արժեքն ու նշանակությունը առավել ակնառու կդառնա, եթե այն դիտարկենք նալբանդյանագիտության զարգացման գործընթացի մեջ: Այդ իսկ առնչությամբ էլ գիտական առանձին հետաքրքրություն է ներկայացնում նալբանդյանագիտության անցած ճանապարհը, նախ՝ Աշ. Հովհաննիսյանի նշանավոր գործի՝ Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերի» հրապարակումները և այնուհետև նրան հաջորդած Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածուի» քառահատոր ակադեմիական հրատարակությունը: Միայն այս ամենը նկատի ունենալով է, որ կարելի կլինի ճիշտ և արժանավույն գնահատել Աշ. Հովհաննիսյանի այս աշխատությունը: Աշխատությունը իր թեմատիկայով և առաջադրած խնդիրների լուծումով նալբանդյանագիտության անցած ամբողջ ճանապարհի ամենաընդգրկուն հանրագումարն է: Հեղինակը հաստատորեն հենվում է այն լավագույնի վրա, ինչ որ առկա է նալբանդյանագիտության ամբողջ պատմության մեջ՝ սկսած մեծ հեղափոխականի կյանքն ու գործը առաջինն ըստ արժանավույն գնահատողների՝ Հարություն Սվաճյանի և Մատթեոս Մամուրյանի ոգեշունչ հոդվածներից, Գ. Երցենի և Օգարյովի սրտագին բնութագրումներից և նրա մասին եղած առաջին կենսագրական համառոտ ակնարկից (գրված 1868 թ.) մինչև Նալբանդյանի հերոսական կյանքի ու գործունեության վերաբերյալ 1954 թ. «Տարեգրությունը»:

---

* Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, գիրք առաջին, 1955, գիրք երկրորդ, 1956:

Աշ. Հովհաննիսյանը հենվում է նաև ռուս հեղափոխական դեմոկրատների՝ Բելինսկու, Գերցենի, Օգարյովի, Չեռնիշևսկու, Դոբրոլյուբովի և մյուսների կյանքին ու գործունեությանը վերաբերող ամբողջ գրականության բազմակողմանի իմացության վրա:

Աշ. Հովհաննիսյանը հսկայական չափով օգտագործել է նաև բոլոր այն անտիպ վավերագրերն ու բազմազան նյութերը, որ կարող էին ընծեռել Երևանի, Թիֆլիսի, Մոսկվայի և Ս. Պետերբուրգի արխիվները: Աշխատության գիտական հավաստիության երաշխիքներից մեկն էլ հենց այդ է՝ բազմաթիվ արխիվների հարյուրավոր ֆոնդերի ջանադիր ուսումնասիրությունը, որ կատարել է հեղինակը, սկսած այն օրերից, երբ նա ձեռնարկել էր «Անտիպ երկերի» մեծարժեք հրատարակությունը:

Աշ. Հովհաննիսյանի օգտագործած աղբյուրների շարքում նկատելի տեղ են գրավում այն նյութերը, որոնք ժամանակի ընթացքում կուտակվել են նաև իր անձնական արխիվում, զգալի քանակությամբ ստացված Նալբանդյանի մերձավոր ժամանակակիցների հետնորդներից:

Աշ. Հովհաննիսյանի մենագրությունն իր բնույթով, իր հիմնահարցի և ժամանակի ընդգրկումով ոչ միայն Նալբանդյանի կյանքն ու գործունեությունն է պատկերում, այլև, ըստ էության և փաստորեն այն տվյալ դարաշրջանի՝ XIX դարամիջի 40-50-60-ական թվականների, մասամբ էլ հետագա տասնամյակի հայ հասարակական-քաղաքական ու փիլիսոփայական մտքի և հասարակական ու քաղաքական շարժումների, ազատագրական պայքարի պատմությունն է ուրվագծում:

Նույնիսկ աշխատության այն գլուխները, որոնք կարծեք առավելապես Նալբանդյանի կյանքի այս կամ այն փուլի, նրա աշխարհայացքի ու գործունեության այս կամ այն բնագավառի բնութագրմանն է նվիրված, փաստորեն շատ ավելի լայն ընդգրկում ունեն, քան պետք է տվյալ հարցում Նալբանդյանին բնութագրելու համար: Ամբողջ երկհատոր ընդարձակածավալ մենագրության մեջ, կարելի է ասել, սակավաթիվ են այն գլուխները, որոնք առավելապես վերաբե-

րում են Նալբանդյանին: Մենագրության երկու գրքերում էլ բաժինների և գլուխների գերակշռող մասը իր բովանդակությամբ կրկնակի ու եռակի չափերով ավելի է, քան Նալբանդյանի կյանքի և գործի անմիջական բնութագրումն է պահանջում: Սակայն, հարկավ դա չի նշանակում, թե հարցերի նման լայն ընդգրկումն ու ծավալումը օրգանապես չի կապվում հեղինակի ուսումնասիրության կենտրոնական հարցի հետ. ընդհակառակն՝ այն միայն լիովին արդարացնում է աշխատության արտահայտիչ վերնագիրը՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը», որն, ըստ երևույթին, հեղինակը հղացել է հենց Նալբանդյանի «Հեգելը և նրա ժամանակը» փիլիսոփայական աշխատության նմանակմամբ:

Աշ. Հովհաննիսյանի մենագրության լայն պատմաքննական ընդգրկումների մասին գաղափար տալու համար հիշենք մի քանիսի բովանդակությունը: Այսպես, օրինակ, առաջին հատորի առաջին բաժնի երկրորդ գլուխը՝ «Բախում ռուտինայի հետ» վերնագրով (ընդգրկում է 35–62 էջերը): Այս գլխի 28 էջից միայն 2–3 էջն են վերաբերում պատանի Մուխալի կենսագրությանը, մնացածը անդրադարձնում է «ռուտինայի միջավայրի պատկերը» իր ներքին հակադրություններով: Վերնագրի տակ նշված հիմնական կետերը բացահայտում են գլխի բովանդակությունը՝ «Տիրացու Մուխալը հոգևոր կառավարության գրագիր» սա առաջին կետն է, որի շարադրանքը գրավում է մոտ մեկ ու կես էջ: Այնուհետև՝ «Հասարակական ասպարեզ», «Գ. Պատկանյանը որպես քաղքենի դժգոհությունների թարգման», «Գյուղացիների և քաղաքացիների բախումները», «Ներսես Աշտարակեցի», «Եկեղեցական վեքիլների ռեժիմը», և ապա միջանկյալ մի կետ՝ «Նալբանդյանի ընդհարումը Եկենյանի հետ» և «Կեղծված նամակների պատմությունը»: Իսկ այնուհետև՝ «Հոգևոր և աշխարհիկ դպրոցական սիստեմների բախումը», «Գ. Պատկանյան և Խ. Աբովյան», «Պատկանյանի դիրքորոշումը Աշտարակեցու ընդհանուր քաղաքականության դեմ», «Պատկանյանի կալանքը»: Եվ, վերջապես նորից Նալբանդյանի մասին, որպես ռուտինայի դեմ «վերսկսված պայքարի դեկավարի», և «Մտրակի, գավազանի ու ոսկեպար-

կի դաշինքը նրա դեմ»: Հաջորդ՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ գլուխները («Հանգրվան Մոսկվայում», էջ 62-86, «Գաղափարական զինման ճանապարհին», էջ 87-106, «Գործակցություն Ստ. Նազարյանցի հետ», էջ 107-126) գրեթե ամբողջովին վերաբերում են Նալբանդյանին: Բայց և ահա այդ գլուխներին հաջորդող «Հյուսիսափայլ» վերնագրով երկրորդ բաժինն իր ութ գլուխներով (127-283): Այստեղ տրված է ո՛չ միայն Նալբանդյանի, այլև նրա ու Ստ. Նազարյանի համատեղ գործունեության և, ընդհանրապես, «Հյուսիսափայլի», որպես «ղուսավորական հրապարակախոսության օրգանի» բնութագիրը, հարակից նաև բազմաթիվ այլ հարցեր, ինչպես՝ «Ռուսահայ մամուլի ուղղությունները», «Հյուսիսափայլի միջոցով ծավալված «պրոպագանդան որպես հայերի ազգային կոնսոլիդացման միջոց» (էջ 158–164), «Հայ կնոջ ազատագրման խնդիրը» (էջ 165-180), իսկ այս առնչությամբ հեղինակն անդրադառնում է հայ ընտանիքի վիճակի բնութագրմանը, ոչ միայն ըստ «Հյուսիսափայլի» հեղինակների, այլև բերում է Ստ. Ոսկանյանի, Մ. Թաղիադյանի, Ծերենցի, Կ. Փանոսյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Բաֆֆու և Գր. Արծրունու համապատասխան մտքերը, ինչպես նաև նույն հարցի արձագանքները Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմում և Մ. Մամուրյանի «Հայկական նամականիում»:

Աշ. Հովհաննիսյանի մենագրության ամենից արժեքավոր մասերից է «Հյուսիսափայլին» վերաբերող բաժինն իր մյուս գլուխներով հանդերձ՝ «Հյուսիսափայլը և ընթերցողները», «Շրջադարձ դեպի ռևոլյուցիոն լուսավորականությունը», «Նալբանդյանի պայքարը ազատ խոսքի և ազատ մամուլի համար»: Այս բաժնի վերջին՝ ութերորդ գլուխը նվիրված է Նալբանդյանի և «Հյուսիսափայլի» ամենահամառ հակառակորդներից մեկի՝ Գաբրիել Այվազովսկու դեմ մղված պայքարին, առանձնապես «Հյուսիսափայլ» ամսագրի էջերում:

Մենագրության այդ բաժնում առաջին անգամ առավել բազմակողմանիությամբ պատկերվում է «Հյուսիսափայլի» գործունեությունը, բացահայտվում նրա խորապես առաջադիմական բովանդակությունը և առաջատար դերը հայ գրականության, հրապարակախո-

սության, հասարակական մտքի պատմության մեջ: Այդ էջերը արժեքավոր են նաև Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի փոխհարաբերությունների պատմությունը, նրանց համագործակցության բնույթն ու նշանակությունը փաստական մեկնաբանություններով ներկայացնելու տեսակետից: Այս բաժինն արժեքավորվում է և նրանով, որ «Հյուսիսափայլի» առնչությամբ համառոտ ակնարկով բնութագրվում է հայ մամուլի և հրապարակախոսության վիճակը մինչև «Հյուսիսափայլի» հանդես գալը և նրա գոյության տարիներին, թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հատվածում:

Մենագրության կարևորագույն արժանիքներից է Նալբանդյանի հասարակական և գրական գործունեության ընթացքում (1853 թ. սկսած, տարեցտարի արագորեն ընդարձակվող շրջանակներում, նախ՝ արևելահայկական, ապա՝ համազգային և համառուսական մասշտաբով) անսահմանորեն ընդարձակված նրա անձնական կապերի ակնառու բացահայտումը: Ընդսմին, կոնկրետ բնութագրվում են Նալբանդյանի հետ կապված և կամ նրա գործունեությանն առնչվող բազմազան գործիչներ՝ Նոր Նախիջևանից, Մոսկվայից ու Պետերբուրգից սկսած մինչև արտասահմանյան ուղևորությունների բոլոր այն վայրերը (Կ. Պոլիս և Զմյուռնիա, Փարիզ և Լոնդոն, Կալկաթա ու Երուսաղեմ և այլն), ուր նա մարդկանց հանդիպել և որևէ չափով առնչվել է նրանց հետ: Իսկ այդ մարդկանց թիվը, հավանաբար, մի քանի տասնյակից ավելի է: Այդ թիվը մենք կարող ենք անսխալ որոշել Աշ. Հովհաննիսյանի մենագրության մեջ ամփոփված հարուստ նյութի ու տվյալների հիման վրա:

«Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորյակում բազմակողմանի բացահայտված են ռուս հեղափոխական-դեմոկրատիայի գործիչների հետ Նալբանդյանի ունեցած սերտ կապերն ու հարաբերությունները, հանրագումարի են բերված բոլոր այն տվյալները, որոնք հեղինակը հնարավորություն է ունեցել ձեռք բերել, թե՛ տպագիր աղբյուրներից և թե՛ արխիվային: Ամենից ավելի լայն չափերով Աշ. Հովհաննիսյանի այս մենագրության մեջ է մեզ ներկայանում հայ հեղափոխական-դեմոկրատիայի տեսաբանն ու քաղաքական առաջ-

նորդը՝ ռուս հեղափոխական-դեմոկրատիայի մեծ գործիչների՝ Վ. Բելինսկու, Ա. Գերցենի, Ն. Օգարյովի, Ն. Չեռնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի և մյուսների հետ ունեցած իր գաղափարական կապերով: Չի մոռացվել կամ չի անտեսվել նաև Մ. Բակունինի հետ Նալբանդյանի ունեցած առնչությունն ու սերտ կապը, որի կողքից անցել են գրեթե բոլոր նալբանդյանագետները, մասնավորապես անգիտանալով այն, որ Նալբանդյանի գործունեության շրջանում Բակունինը «Լոնդոնի պրոպագանդիստների» շարքում շատ նշանավոր դեմք էր, միասնական գործակցությամբ կապված Գերցենի և Օգարյովի հետ, արժանացած նաև Կ. Մարքսի և Ֆր. Էնգելսի դրվատական գնահատականներին ընդհուպ մինչև 1866-1867 թվականները: Ո՞րեմն, Մ. Նալբանդյանի սերտ կապն ու սրտակից բարեկամությունը «Լոնդոնի պրոպագանդիստ», հեղափոխական-դեմոկրատ Միխայիլ Բակունինի հետ է եղել և ո՛չ թե 1860-ական թվականների վերջերից սկսած՝ ռուսական և համաեվրոպական անարխիզմի տեսաբանի ու ղեկավարի դեր կատարած Բակունինի հետ, որի վնասակար ուղղության դեմ անհաշտ ու եռանդուն պայքար էին մղում այդ տարիներից սկսած Գերցենը, Օգարյովը և մյուսները:

Աշ. Հովհաննիսյանը զգալի արդյունքների է հասել՝ բազմակողմանիորեն պարզելով Նալբանդյանի իրական կապերը ռուս հեղափոխական-դեմոկրատական մտքի ներկայացուցիչների հետ՝ «ծանրանալով հատկապես նրա սոցիալ-քաղաքական ու փիլիսոփայական հայացքների կազմավորման փոթորկահույզ այն շրջանի վրա, որ նշանակալի անկյունադարձ կազմեց հայ հասարակական-քաղաքական առաջավոր մտքի պատմության մեջ» (Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 10-11):

Առաջինն Աշ. Հովհաննիսյանն է հանգամանորեն ու համոզիչ պարզել, որ Նալբանդյանի մտածողության կազմավորման առաջին լուրջ խթանը հանդիսացել է ռուս հեղափոխական-դեմոկրատիայի նախահայր Վիսարիոն Բելինսկու բարերար ազդեցությունը՝ «Յաղագս հայկական մատենագրության ճառի» գրության օրերից սկսած («Գաղափարական զինման ճանապարհին» գլուխը՝ առաջին հատո-

րում և այլն): Վ. Բելինսկու գաղափարական ազդեցության բարերար նշանակությունը, առավել ցայտուն կերպով, բացահայտվում է ազգի, ազգության նալբանդյանական տեսության շարադրանքում:

«Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության մեջ համակարգված է Նալբանդյանի ամբողջ աշխարհայացքն իր բոլոր կողմերով:

Առաջին՝ ազգային հարցի նալբանդյանական տեսությունը, որն ընդհուպ մոտենում է մարքսիստական տեսությանը, մասնավորապես, ազգի, որպես պատմական կատեգորիայի իր ըմբռնումով, ազգերի լիակատար իրավահավասարության պահանջով, ռասսայական տեսության և ազգային բացառիկության իրավունքի անվերապահ մերժումով: Այս հարցին է նվիրված ո՛չ միայն «Մտորումներ ազգության հարցի շուրջը» հատուկ գլուխը (գիրք երկրորդ, էջ 197-233): Այդ հարցի նկատմամբ Նալբանդյանի հայացքների շարադրանքը կա մենագրության այլևայլ բաժիններում ևս: Մենագրության մեջ ցույց է տրված, որ ազգային-ազատագրական շարժման ուղիների և խնդիրների նալբանդյանական ըմբռնման հիմքում ընկած է ազգային հարցի հեղափոխական-դեմոկրատական տեսությունը:

Երկրորդ՝ տալով Նալբանդյանի իմացաբանական-փիլիսոփայական հայացքների սիստեմատիկ շարադրանքը, հեղինակը ցույց է տալիս, որ Նալբանդյանը «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը գրելուց հետո էլ մասնակի շեղումներով, բայց հաստատորեն հաղթահարում էր ո՛չ միայն յուրովի ըմբռնված Բոկլյան տեսությունը մարդկային հասարակության կյանքում բնական-աշխարհագրական գործոնների վճռական նշանակության մասին, այլև Ֆոյերբախյան անտրոպոլոգիզմը: Հետևելով Չեռնիշևսկուն, Նալբանդյանը հաստատվում էր մատերիալիստական փիլիսոփայության դիրքերում: Աշ. Հովհաննիսյանը ցույց է տալիս, որ փիլիսոփայության բնագավառում Նալբանդյանի ապրած աստիճանական վերընթացը, նրա վճռական շրջադարձը իդեալիզմից դեպի մատերիալիզմ, իր բնորոշ և ցայտուն արտահայտությունն է գտել նրա գրական և գեղագիտական հայացքներում (Տե՛ս «Իդեալիստական էս-

թետիկայի հիմնավորումը» և «Գրական քննադատության շուրջը»): Բազմակողմանիորեն ցույց տալով Նալբանդյանի փիլիսոփայական էվոլյուցիան իդեալիզմից դեպի մատերիալիզմ, հեղինակը բացահայտում է այն առանձնահատուկ հայացքը, որ ուներ Նալբանդյանը գիտության գործնական-հասարակական նշանակության նկատմամբ՝ ընդհանրապես, և փիլիսոփայության նկատմամբ՝ մասնավորապես: Նա Նալբանդյանին, որպես մտածողի նաև իր փիլիսոփայական հայացքներով, իրավացիորեն նույնատիպ է համարում ռուս մատերիալիստական փիլիսոփայության ներկայացուցիչներին:

Աշ. Հովհաննիսյանի մենագրության մեջ Նալբանդյանի գեղարվեստական ստեղծագործությանը առանձին բաժին չի հատկացված, Նալբանդյան գրող բանաստեղծը, արձակագիրը, պամֆլետիստը չի բնութագրվում առանձին-առանձին հատվածներում, սակայն չմոռանանք, որ տվյալ տիպի ու բնույթի մենագրության մեջ այդպիսի առանձին բաժիններ համապատասխան տեղ չէին էլ ունենա, քանզի տվյալ պարագայում չէր արդարացվի անցումն ընդհանուրից դեպի մասնավորը:

Պատմաբանի և իմաստասերի դիտակետից նայելով նաև Նալբանդյան գրողի ստեղծագործությանը՝ Աշ. Հովհաննիսյանը բացահայտել է նրա գաղափարական ու պատմական հարուստ բովանդակությունը, հմտորեն օգտագործելով իր մենագրության գրեթե բոլոր գլուխների շարադրանքի մեջ: Հեղինակը Նալբանդյան գրողի ստեղծագործությունը դիտել և գնահատել է իբրև դարաշրջանի «ճշգրիտ հիշատակարան, ինչպես պատմությունը» (Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 1, էջ 279):

Աշ. Հովհաննիսյանի մենագրության կենտրոնական հիմնահարցերից մեկը, առանց որի ճիշտ լուծման, դյուրին չէ հասկանալ ու գնահատել նաև Նալբանդյանին, որպես հեղափոխական-դեմոկրատի, որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենաառաջադեմ գաղափարախոսի և առաջնորդի, դա տվյալ դարաշրջանի հայ հասարակական հոսանքների խմբավորումն ու նրանց բնութագ-

րումն է: Արևելահայ իրականության մեջ Աշ. Հովհաննիսյանը տեսնում է հիմնական չորս հոսանք.

Առաջինը ռեակցիոն կղերա-աղայական խմբակցությունն էր՝ հանձինս Խաչատուր Լազարյանի և Հարություն Խալիբյանի, Գաբրիել վարդապետ Այվազովսկու և Սարգիս վարդապետ Ջալալյանի, Մսեր Մսերյանի և Ստ. Մանդինյանի, Մկրտիչ Էմինի և Առ. Արարատյանի, Ալ. Թահիրյանի, Ալ. Շերմազանյանի, Հովս. Չերքեզյանի և նրանց հետևորդների:

Երկրորդը ազգային պահպանողականներն էին, որոնց տիպական ներկայացուցիչներն էին Մարկոս Աղաբեկյանն ու Պետրոս Շանշյանը, Գևորգ Ախվերդյանն ու Պետրոս Սիմոնյանը, Գևորգ Տեր-Ալեքսանդրյանն ու Կարապետ Շահնազարյանը, Համբարձում Էնֆիաճյանն ու Սարգիս Բաստամյանը: Ըստ հեղինակի հայեցակետի, այս խմբավորման մեջ էին նաև Գաբրիել քահանա Պատկանյանը և նրա բանաստեղծ որդին՝ Ռափայել Պատկանյանը:

Երրորդը լիբերալ-բուրժուական կամ ազգային-լիբերալ հոսանքն էր, որի գլխավոր ներկայացուցիչը Ստեփանոս Նազարյանն էր՝ իր շուրջը համախմբված մարդկանցով, մեծ մասամբ «Հյուսիսափայլի» աշխատակիցների ու պարբերականի բաժանորդների շարքերից:

Եվ վերջապես չորրորդ հոսանքը կամ «խմբակցությունը» դեմոկրատական, հեղափոխական-դեմոկրատական հոսանքն էր Միքայել Նալբանդյանի գլխավորությամբ:

Արևելահայ հատվածում այս հոսանքի մեջ էին մտնում Անանիա Սուլթանշահը, Մովսես Բաղրամյանը, Հովսեփ Բերբերյանը, Հովհ. Սահրատյանը, երիտասարդ Ղազարոս Աղայանն ու Հակոբ Մելիք-Հակոբյանը (Րաֆֆին): «Հյուսիսափայլի» բանաստեղծներից այս հոսանքի հետ էր կապվում նաև «Լևոնի վշտի» հեղինակը՝ Սմբատ Շահազիզը, ըստ երևույթին, ճիշտ այն չափով, ինչ չափով որ Ռ. Պատկանյանն է կապվում-միանում ազգային-պահպանողական հոսանքի կամ խմբակցության հետ: Աշ. Հովհաննիսյանի մենագրության մեջ հոսանքների այս խմբավորումը հիմնականում ճիշտ է ար-

տահայտում հայ մտավորականության գաղափարական-քաղաքական այն շերտավորումը, որ տեղի էր ունենում XIX դարի 50-60-ական թվականներին: Կատարելով այդ բաժանումը՝ Աշ. Հովհաննիսյանը իրավացիորեն հասարակական հոսանքները խստորեն և անանցանելի պատնեշով չի անջատում իրարից, ինչպես որ նրանք թե՛ իրենց ներկայացուցիչների փոխադարձ հարաբերություններով և թե՛ գաղափարական հարակցությամբ, իրականում խստորեն բաժանված չէին իրարից: Հեղինակը համոզիչ փաստերով համոզում է, որ իրար հետ կենսական շփման և միացման կետեր ունեին, մի կողմից, կղերա-աղայական հոսանքը՝ լիբերալ-բուրժուական կամ ազգային-լիբերալ հոսանքի հետ՝ ցարական կողմնորոշման պաշտպանությամբ, մյուս կողմից, «ազգային-պահպանողական խմբակցությունը»՝ դեմոկրատական հոսանքի հետ, ցարիզմի նկատմամբ անհաշտ դիրքորոշումով, թեև ազգային-քաղաքական կյանքի զարգացման, հայ ժողովրդի ազատագրության տարբեր ծրագրերով ու հեռանկարներով: Նկատելով և նշելով պայքարի որոշ խնդիրներում դեմոկրատների և լիբերալների, դեմոկրատների և ազգային-պահպանողականների ընդհանրությունը, հեղինակը, սակայն, հետևողականորեն սահմանագծում է, մասնավորապես, հեղափոխական-դեմոկրատական հոսանքը մյուս բոլոր հոսանքներից:

Եթե Աշ. Հովհաննիսյանին փորձ արվի առարկել այս կամ այն հոսանքի առանձին ներկայացուցիչների բնութագրման խնդրում՝ բավականաչափ համոզիչ չհամարելով, օրինակ, ասենք, Սմբատ Շահազիզին հեղափոխական-դեմոկրատների, կամ Ռափայել Պատկանյանին՝ ազգային-պահպանողականների շարքը դասելը, ապա կարծում ենք, որ լուրջ առարկություն չի կարող լինել Աշ. Հովհաննիսյանի նշած չորս հոսանքների գաղափարական և քաղաքական ուղղության բնութագրման խնդրում: Աշ. Հովհաննիսյանը տեսականորեն լուրջ և փաստարկությամբ ակնառու է տվել հոսանքներից ամեն մեկի սահմանազատումը, նրանցից յուրաքանչյուրի սկզբունքային տարբերիչ գծերը մյուսների համեմատությամբ: Այդ հոսանքների առաջացումը, նրանց ձևավորման ընթացքը և փոխադարձ՝ երբեմն

հակամարտության հասնող, բանավեճերը դիտելով իբրև տվյալ պատմաշրջանի հայ կյանքի օրինաչափության արդյունք, հայ բուրժուականացող հասարակական հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանն օրգանապես ընթացակցող երևույթ, հեղինակին հաջողվում է ցույց տալ, որ հոսանքներից ամեն մեկի առաջացման սոցիալ-տնտեսական պայմանավորվածությունը և հասարակական-քաղաքական դիրքորոշումը հասկանալի են նախ և առաջ ներազգային և համառուսական կյանքի պայմանների փոխկապակցության հաշվառումով:

Նախորդ էջերում բազմիցս շեշտադրել ենք, որ Անդրկովկասի միակցումը Ռուսական կայսրությանը շրջադարձային դեր կատարեց երկրամասի հատկապես քրիստոնյա ժողովուրդների համար: Ռուսաստանի տնտեսական-քաղաքական և մշակութային կյանքի հետ առնչված՝ այլևայլ գործոնների ներքո արևելահայության ընդհանուր կյանքը պայմանավորվում էր համապետական գործոնների օրինաչափություններով: Կայսրության և Անդրկովկասի միջև տեղի ունեցող ապրանքափոխանակության ընդարձակումը, քաղաքային կյանքի առաջընթացը և մտավորական աշխուժացումը համապատասխան արձագանքներ են գտնում արևելահայության մտավոր կյանքում, մամուլի և գրականության մեջ: Ընդհանուր առաջընթացը խթանում է արևելահայության ազգային, թեկուզ և դանդաղ զարգացումը, ընդառաջում, խթանում ազգային-մշակութային և հասարակական-քաղաքական զարթոնքին: Չնայած երկրատարածքի՝ գաղութային կացության մեջ գտնվելուն՝ նոր վարչակարգի հաստատած խաղաղությունն ու բնակչության կյանքի և գույքի ապահովությունը, երկրամասի և կայսրության կենտրոնի միջև ամրացող համակողմանի կապերը նպաստում են արևելահայության տնտեսական առաջընթացին, տնտեսական-հասարակական պահանջմունքներն արտահայտող գաղափարաքաղաքական խմբավորումների երևան գալուն: Հայ հասարակական-քաղաքական սկզբնավորվող հոսանքների ձգտումներն ու մտահոգությունները դառնում են հայության ազգային համախմբման, դեպի նպատակ տանող խնդիրների լինելիության հնա-

րավոր ապահովումը: XIX դարի կեսին ստեղծված տնտեսական կացության հենքի վրա բախվում են կայսերական վարչակարգի հետ կապված արևելահայ կղերաաղայական հետաղիմությունը և ժողովրդական շահերը պաշտպանող ազգային դեմոկրատիան, որն սկսում է դիմադրել գաղութային վարչակարգին՝ առաջադրելով ազգային ինքնության դողդոջուն պահանջներ: Իրար բախվող այս բևեռների արանքում միջանկյալ դիրք էին զբաղեցնում արևելահայության բուրժուականացող հասարակական խավերի շահերի արտահայտիչները՝ ազգային-պահպանողական և ազգային-լիբերալ հոսանքները: Ընդդիմադիր ճակատ ստեղծելով կղերաաղայական հետաղիմության դեմ՝ նրանք հայտնի չափով ընդառաջում էին ազգային-մշակութային և ազգային-քաղաքական գիտակցության բարձրացմանը, նպաստում հասարակական առաջադիմության հաղթանակին: Մի զգալի չափով սատարելով բուրժուական հայացքների կաղապարմանը, սրանք մյուս կողմից չէին վարանում սահմանազատվել ազգային-դեմոկրատական աշխարհայեցողության հետևողական ուղեգծից՝ երես դարձնելով ցարական վարչակարգի և ճորտատիրական հետաղիմության դեմ արծարծվող գյուղացիական դեմոկրատիայի հեղափոխական խնդիրներից և նրա հեռանկարներից: Բայց և չպետք է այնպես պատկերացնել, թե կղերաաղայական հետաղիմության ներկայացուցիչները կանգնած էին հայկական միջնադարում իշխած ֆեոդալական գաղափարախոսության դիրքերի վրա, անվերապահորեն հակադրվում էին իրենց ժամանակաշրջանի գիտությանն ու քարոզում խավարամոլություն: Այդ հոսանքի աչքի ընկնող ներկայացուցիչների մեջ կային նաև կրթված անհատներ, որոնք վայելում էին ուսումնական ու գիտուն մարդկանց համբավ: Ոմանք նրանցից անգամ հայ լուսավորական հաստատությունների մեկենասներ և հովանավորներ էին: Հայտնի է, օրինակ, որ XIX դարի առաջին տասնամյակներին կղերաաղայական ճամբարի այնպիսի հայտնի ներկայացուցիչներ, ինչպես Լազարյանները և Ներսես Աշտարակեցին, ոչ միայն կապված էին Մոսկվայի Լազարյան ճեմարանի և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի գործունեության հետ, այլև ժամա-

նակին առաջատար դեր էին կատարել որպես հայության ռուսական կողմնորոշման ջատագովներ: Լազարյանների և Ներսես Աշտարակեցու գործունեության՝ դեպի հետաղիմություն շրջադարձը սկիզբ առավ և պայմանավորվեց բացասական այն դիրքորոշմամբ, որ գրավեցին հայ կղերն ու աղայական դասը Անդրկովկասը Ռուսաստանին միակցվելուց հետո: Չպետք է անտեսել, որ Լազարյանների ու Աշտարակեցու երբեմնի առաջադիմական դիրքորոշումը բխում էր ոչ թե նրանց ի վերուստ տրված անձնական բարեմասնություններից, այլ ժամանակի հայ իշխող խավերի շահախնդրություններից: Չմոռանանք, որ պարսկական-տիրապետության վերջին շրջանում խանական ճնշումներից և կեղեքումներից տուժում էին ոչ միայն հայ ժողովրդական զանգվածները, այլև հայ վերնախավը, կղերի և մեծատունների, մելիքների և յուզբաշիների, ինչպես նաև հայ խոջայական շերտի ներկայացուցիչները:

Այս տեսակետից բնական էր և օրինաչափ, որ XVII դարի վերջերից սկսած և ամբողջ XVIII դարում այդ շերտերի ներկայացուցիչներն էլ գլխավորում էին հայ ազատագրական շարժումը:

Դրությունը կտրուկ փոխվեց, երբ կատարվեց Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին: Նորեկ ցարական վարչակարգը չնայած չբավարարեց հայ իշխող վերնախավերի ակնկալությունները, նրանք մեծ մասամբ գոհացան իրենց տրված արտոնություններով, նյութական բարիքներով և համարյա չէին բաժանում իշխող վարչակարգի հանդեպ ժողովրդի դժգոհությունը: Հայ կղերի և կալվածատիրության շահախնդրությունները, միահյուսվելով առևտրավաշխառուական բուրժուազիայի միտումներին, հիմնական հարցերում սկսում են համընկնել ռազմաֆեոդալական կարգերի պահպանման և ամրապնդման քաղաքականության:

XIX դարի կեսերին արևելահայ կղերաաղայական հոսանքի աչքի ընկնող ղեկավարները հայ իշխող վերնախավերի պաշտոնյաները և նրանց շահախնդրությունների ձայնատարերն էին: Այդ հոսանքի նշանավոր դեմքերից մեկը Ն. Աշտարակեցին էր, որը 1843 թ. հետո, որպես կաթողիկոս, գործում էր իբրև այդ ուղղության թելադրող

ղեկավար: 1830-40-ական թվականների հայ մտավորականության ստեղծագործող ներկայացուցիչները՝ Մ. Թաղիադյանը, Խ. Աբովյանը, Հ. Ալամդարյանը, Ստ. Նազարյանցը, Գաբրիել Պատկանյանը, Կարապետ Շահնազարյանը և նրանց շատ համախոհներ, մտաբերելով Ն. Աշտարակեցու գործունեության փայլուն անցյալը, լավագույն սպասումներ ունեին նորընտիր կաթողիկոսից: Մինչդեռ նրանցից որոշների թողած հետագա վկայությունները համակված են խոր հիասթափությամբ:

Եթե Ն. Աշտարակեցին մի կողմից շարունակում էր տակավին համառ դիմադրություն ցույց տալ հայ եկեղեցու ազգային անկախությունը սահմանափակելու ուղղությամբ ցարական վարչակարգի ոտնձգություններին, մյուս կողմից՝ համառորեն դիմադրում էր հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչների վերանորոգչական ձգտումներին ու նպատակադրումներին: Նա կաթողիկոս եղած ժամանակ ամեն ինչ ըստ էության անում էր հայ ծխական համայնքները և թեմերը անսասան հպատակության մեջ պահել կղերի և աղայական դասի անբաժան տիրապետությունից: Լինելով եկեղեցական կալվածատիրության խոշորագույն ներկայացուցիչը՝ նա միաժամանակ կապված էր առևտրավաշխառուական կապիտալի երևելի տերերի հետ, որոնք այս կամ այն չափով առնչված էին ռուսական բարձր բյուրոկրատիային և համակերպված նրա գաղութային քաղաքականությանը: Իսկ ցարական վարչակարգի ժամանակ ստեղծված խաղաղության նպաստավոր իրադրությունից առաջին հերթին և ամենից շատ ոտճանում էին հայ կալվածատիրական դասի ներկայացուցիչները և ցարիզմի ռազմական պետքերին ծառայող առևտրա-վաշխառուական խավը: Ն. Աշտարակեցու և նրա գործակիցների քաղաքականությունը հենվում էր հասարակական հենց այս վերնախավերի վրա, որոնք, ըստ կաթողիկոսի, եկեղեցու ու ազգի բուն նեցուկը և ամենաարժանավոր զավակներն էին:

Իսկ արևելահայության նոր կացության պայմաններում ի՞նչ դերակատարություն ունեին Լազարյանները: Սրանք միայն խոշոր կալվածատերեր, հանքատերեր և գործարանատերեր չէին, այլ գա-

րական վարչակարգի խորհրդականներ: Նրանք իրենց դիրքն օգտագործում էին ոչ թե հայության ու նրա եկեղեցու անկախության օգտին, այլ սրանց դիմազուրկ և տիրահաճ վիճակում պահելու համար: Լազարյանների դիմադրությունը հատկապես վճռական էր հայերի ազգային-քաղաքական ինքնորոշման հարցերում: Անդրադառնալով Զեյթունի ապստամբությանը՝ 1860-ական թվականների սկզբին ռուսական պետական խորհրդական և կամերգեր (սենեկապետ) Խաչատուր Լազարյանը դատապարտում էր հայերի ազգային-ազատագրական պայքարի գաղափարը[1]:

Լազարյանները ազգային-մշակութային հարցերում դիմակայում էին հայ գրականության աշխարհիականացման ձգտումներին՝ մերժելով ըստ ամենայնի նոր գրական լեզվի քաղաքացիականացման և գրական մտքի աշխարհիականացման առաջադրույթը: Խոսելով «Հյուսիսափայլ» ամսագրի ուղեգծի մասին Խաչատուր Լազարյանն այն կարծիքին էր, որ. «...ճշտապես օգտակար ամսագրի գլխավոր պարտականությունը և նպատակը պետք է լինի որչափ կարելի է շուտ ամրացնել հայ ժողովրդի մեջ խաղաղություն, համերաշխություն և բոլորին տանել դեպի ընդհանուր բարի նպատակ, բայց ոչ մի դեպքում չբաժանել, չտարածել թշնամանքի սերմեր և չգրգռել կրքեր ու արատներ, որոնք առանց այն էլ չափազանց շատ են տարածված անբարեհույս հայերի մեջ»[2]:

Հայ եկեղեցուն 1836 թ. ցարիզմի պարտադրած «Պոլոժենիե»-ին կաթողիկոսի կողմից ցույց տրվող դիմադրությունը նույնիսկ Խաչատուր Լազարյանի կողմից անընդունելի էր: Նա ցարական վարչակարգին հնազանդ լինելու կոչ էր անում կաթողիկոսին՝ նախազգուշացնելով ընդդիմության վատթար հետևանքներից:

Մոսկվայի և Ս. Պետերբուրգի տիրապաշտ վերնախավին արծագանքում էր կովկասահայ բարձրադիր կղերի և կալվածատերերի

---

[1] Տե՛ս Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 79:

[2] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 20:

դասը, որին ներդաշնակ ձայնակցում էին մեծահարուստ ապրանքատերերը և կապիտալի տերերը, Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի խոշոր կապալառուներն ու կայսրության զարգացող արդյունաբերության հետ կապված հայ առևտրականները, երկրամասի ռազմական և վարչական մարմիններում ծառայող հայազգի բարձրաղիր պաշտոնյաներն ու զինվորականները:

Վերոհիշյալ հասարակախավերի մտայնության իրական դրսևորման հիմնավորումը կատարել է նրանց գաղափարախոսներից Առաքել Արարատյանը (1808-1887), որն իր պատմահրապարակախոսական գրվածքներում արձանագրում էր, թե հայերն աճում և բազմանում են ամենուրեք, նրանք միաբան են ուսումնառության և շահութաբերության բոլոր գործերում, ամենուրեք պահում են իրենց կրոնն ու լեզուն: Ուր էլ գտնվեն նրանք, «...հասնում են մեծամեծ պաշտոնների ու արտոնությանց... Անգամ մեր հարազատ թագավորները չէին տա մեզ այն, ինչ տալիս է ռուսաց ամենախնամ տերությունը մեզ մատակարարած ուսումով, ռոճիկով, պատիվներով ու աստիճաններով»[3]:

Տիրահաճ այս մտայնությունը նույն թվականին յուրօրինակ ձևակերպում ստացավ նաև Սարգիս եպիսկոպոս Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկհատոր աշխատության մեջ, որտեղ հեղինակը ինքնաբավ ընդգծում է, թե իբր հայերը պատրաստ են հավատարմորեն ծառայել բոլոր տիրակալներին, եթե միայն վերջիններս չդիպչեն նրանց կրոնին»[4]:

Արևելահայ կղերաաղայական հոսանքի մտայնությունից հետ չէին մնում արևմտահայ սուլթանահաճները: XIX դարի առաջին կեսին նոր ձևավորվող կղերաամիրայական խմբավորումը նույն դարի 50–60-ական թվականներին կազմավորվեց որպես ընդգծված հետադիմական հոսանք և դիմագրավեց ոչ միայն ազգային-ազատագրա-

---

[3] **Արարատյան Առ.**, Սխալանք գրոցն որ կոչի վարժապետարան կրօնի ի գպուշութիւն համազգեաց, Տփխիս, 1858, էջ 16:

[4] Տե՛ս **Ջալալյանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հատ. 2, Տփխիս, 1858, էջ 102:

կան շարժումներին, այլև բարեփոխումների չափավոր պահանջներին: Արևմտահայ կղերաամիրայական հոսանքի պարագլուխն էր հրապարակախոս, բանասեր և թարգմանիչ Հովհաննես Չամուռճյանը (Տերոյենց, 1801–1888): Չամուռճյան-Տերոյենցը հանդես է եկել որպես հայ իրականության մեջ ազատասիրական արտահայտությունների մոլեռանդ հակառակորդ: Նա և նրա գաղափարակիցները հակամարտության մեջ են եղել սահմանադրական շարժման կողմնակիցների, մասնավորապես «Մեղու» պարբերականի շուրջ համախմբված հայ գործիչների և Մ. Նալբանդյանի հետ: Հ. Չամուռճյանի գլխավորած հոսանքը խիստ բացասաբար է արձագանքում 1862 թ. Զեյթունի ապստամբությանը, դատապարտում է «անհավատարիմ» ազգայինների «անխոհեմ» ընթացքը, սահմանադրությունը ներկայացնում իբրև «պետության մեջ պետություն ստեղծելու» փորձ, իսկ «Թանզիմաթը»՝ սրբագործված օրենքների ոչնչացում: Կղերաամիրայականները աստիճանաբար սերտ կապեր են հաստատում արևելահայ կղերաաղայական իրենց համախոհների՝ Մսեր Մսերյանի, Գաբրիել Այվազովսկու, Սարգիս Ջալալյանցի, Հարություն Խալիբյանի (Խալիբ) հետ, նպատակադրվում միասնական ճակատով դուրս գալ ոչ միայն դեմոկրատական հոսանքի, այլև լիբերալ-բուրժուական հոսանքի չափավոր պահանջների դեմ:

Կղերաաղայական հետադիմության առավել աչքի ընկնող դեմքերից էր Գաբրիել եպիսկոպոս Այվազովսկին (1812-1880): Նա հայացքներով շեշտված խավարամոլ էր, անվերապահորեն պաշտպանում էր հոգևորականության, տիրող վերնախավի, վարչակարգի շահերը: Գ. Այվազովսկին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանը հասցեագրած իր ամբաստանագրերում կանգ չէր առնում նույնիսկ քաղաքական մեղադրանքների առաջ՝ անխնա նշավակելով ինչպես լիբերալ, այնպես էլ դեմոկրատական կողմնորոշում ունեցող հայ գործիչներին: 1860-ական թվականներից սկսած, ըստ Աշ. Հովհաննիսյանի, զարգացող կապիտալիզմի հարվածների տակ հայ կղերաամիրայական միտքը աստիճանաբար թևակոխեց իր կազմալուծման փուլը: Վերջում կղերաաղայական դասի փոքրիշատե կեն-

սունակ տարրերին մնում էր միայն հարմարվել տնտեսական-հասարակական կյանքում կապիտալիստական հեղաբեկմանը և իրենց գոյատևման համար դիրքեր գրավել բուրժուական բազիսի և վերնաշենքի կառույցներում: Կղերաազգայական հին և բուրժուական նոր ուժերի վերադիրքավորումը նպատակ էր հետամտում վերելք ապրող դեմոկրատական ուժերին դիմակայելու միավորված ուժերով:

Ազգային-պահպանողական հոսանքի դեմ իր պայքարը դյուրացնելու մտայնությամբ, գրում է Աշ. Հովհաննիսյանը, լիբերալ հրապարակախոսությունը նրան համառորեն ներկայացնում էր «կղերապահպանողականության» պիտակով: Պարզունակացնելով հակառակ հոսանքների պաշտպանության գործը, լիբերալները գիտակցաբար անտեսում էին ազգային-պահպանողականների դիրքավորման ինքնուրույնությունն ու առանձնահատկությունները: Եթե կղերաազգայական հետադիմությունը, շարունակում է Հովհաննիսյանը, ազգի փրկության միակ հենարանն էր համարում հայադավան եկեղեցին, ապա ազգային-պահպանողականների համար գերագույն հեղինակությունը ոչ թե հայադավան եկեղեցին էր, այլ նրան իր գոյության պատվարներից մեկը դարձնող ազգը: Ազգի հետ չնույնացնելով, եկեղեցին նրանց մոտ հանդես էր գալիս որպես ազգը միազորող, ապահովող գործոններից մեկը, բայց ոչ միակը[5]: Այսպես օրինակ, եթե կղերա-աղայական հոսանքի գաղափարախոս Առ. Արարատյանը գրում էր, թե գրաբար լեզուն ու կրոնն են ազգության սյուները[6], ազգային-պահպանողական գաղափարախոս Մարկոս Աղաբեկյանը եկեղեցուց զատ ազգության բարոյական շաղկապ էր համարում ոչ թե գրաբարը, այլ ազգային կենդանի լեզուն: Ընդսմին ազգային լեզուն և գրականությունը, ազգային պատմությունը, ավանդույթներն ու բարքերը և, վերջապես մանուկների ազգային ուսումնառությունն ու դաստիարակությունը- սրանք են նրա համար այն գործոնները, որոնք

---

[5] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., նույն տեղում, էջ 389:

[6] Արարատեան Առ., Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ ամենավայրագութեան նախատմայր լեզուիս Հայոց, ի Տպխիս. 1858, էջ 8:

եկեղեցու, նրա դավանության հետ մեկտեղ երաշխիք էին նկատվում ազգի կենդանության[7]:

Ազգային-պահպանողական այն մտայնությունը, որ ստեղծվել էր Անդրկովկասում Արևելահայաստանը Ռուսաստանին միակցվելուց հետո, սրվում էր հատկապես այն դժգոհություններից, որոնք ծավալվում էին կովկասյան միջավայրում ցարիզմի գաղութային քաղաքականության շուրջը: Վտանգված համարելով ազգի ու եկեղեցու գոյությունը Ռուսաստանում՝ նրանք յուրովի ընդդիմակայում էին ցարիզմին, նրա գաղութային քաղաքականությանը Կովկասում[8]:

Իրենց սոցիալ-տնտեսական շահախնդրություններով արևելահայ ազգային-պահպանողականները դրսևորում էին այն անբավականությունը, որը սրվում էր կովկասահայ առևտրական բուրժուազիայի միջավայրում Ռուսաստանի արդյունաբերական ապրանքների կովկասյան ներմուծումը հովանավորող ցարիզմի մաքսային քաղաքականությունից: 1846 թվականից ի վեր շեշտակիորեն կրճատվեց արևմտաեվրոպական ապրանքների ներմուծումը, հարվածի տակ դնելով արտասահմանյան շուկաների հետ կապված և կովկասյան տրանզիտով շահագրգռված հայ առևտրականների շահերը: Կովկասահայ առևտրական բուրժուազիան ավելի շատ զբաղված էր արտասահմանյան ապրանքները Կովկասի, Պարսկաստանի կամ Թուրքիայի շուկաներում վաճառելու գործով, դժգոհ էր ռուսական կապիտալիզմի մենատիրությանը նպաստող ցարական քաղաքականությունից: Ազգային-պահպանողականները տրտնջում էին ցարական գաղութային քաղաքականության դեմ, պաշտպանում տեղական հայ առևտրականների շահերը, դաշնակիցներ որոնում արդյունաբերողների ապրանքների ներմուծումից տուժող տեղական մանր արտադրողների միջավայրում, պաշտպանության տակ առնում գյուղի և քաղաքի մանր գործատերերին ու ապրանքավաճառողներին: Իրենց հերթին վերջիններս հաճախ ձեռք էին մեկնում նրանց, իրողություն, որ դեռ հիմք չի տալիս ազգային-պահպանողականներին արևելահայ

---

[7] Տե՛ս «Կոռունկ», 1860, էջ 925:

[8] Տե՛ս Հովհաննիսյան Ա., նույն տեղում:

մանր արտադրողների կամ արևելահայ գյուղական ու քաղքենի դեմոկրատիայի հետևողական արտահայտիչներ համարելու: Այս առումով ուշագրավ է վրաց առաջադեմ գործիչ Ն. Նիկոլաձեի 1865 թ. «Колоколе» հանդեսում տպագրված հոդվածը, որտեղ նա, նկարագրելով Թիֆլիսի համքարների ելույթը, գրում էր. «Թիֆլիսի քաղաքային աշխատավոր բնակչությունը (рабочее население) ձեռք է տվել մոքալաքներին, որպեսզի համատեղ դիմադրեն ռուս կառավարությանը... Մարդիկ, որոնք ոչ մի գաղափար չունեին կուսակցությունների պրակտիկայի մասին, այն ժամանակ քայլեցին «ընդհանուր բշնամու» դեմ, ձեռք ձեռքի տված, մոռանալով, որ երեկ մոքալաքը կողոպտում էր այսօրվա իր զինակից մշակին և որ վաղը պիտի կրկնվի նույն պատմությունը»[9]:

Ն. Նիկոլաձեն այստեղ նկատի ուներ 1865 թ. հուլիսի 27-ին Թիֆլիսի քաղաքային վարչության դեմ տեղի ունեցած համքարների այն ապստամբությունը, որի հրահրման համար քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանը կշտամբում էր Պ. Շանշյանին, Պ. Սիմոնյանին, Գաբրիել Խատիսյանին, Համբ. Էնֆիաջյանին և Գր. Իզմիրովին, որոնց մի մասը ազգային-պահպանողականների ղեկավարներն էին: Այս շարժումը հիմնականում ուղղված էր ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ, որի գործիքն էր տիրահաճ քաղաքային վարչությունը:

Հայ ազգային-պահպանողականների ղեկավարներից Պ. Շանշյանն ու Գ. Ախվերդյանը պաշտպանում էին տեղական առևտրի և արդյունագործության ընթացիկ շահերը և մեծապես ընդառաջում հնօրյա համքարությունների պահանջներին: Ցարիզմի կովկասյան իշխանավորներին Շանշյանն առաջարկում էր օգնել երկրատարածքի տեղական առևտրի զարգացմանը, հոգ տանել մանավանդ Կասպից և Սև ծովերի հետ միացող առևտրական ճանապարհների կարգավորմանը և նպաստել Երևանի նահանգի երկրագործությանը, որով, ըստ նրա, կվճռվեր նաև Թիֆլիսի համքարությունների

[9] «Исторические записки», 1940, հատոր 8, էջ 223.

հուզող խնդիրներից մեկը՝ էժան հացի մատակարարումը: Գ. Ախվերդյանը քննադատելով «կապիտալիստներին» փաստապես հակադրվում էր միայն ցարական գաղութարարների կողմից մենաշնորհված այն դրամատերերին, որոնք «հանուն ազատ արդյունագործության» արգելափակում էին տեղական արդյունագործության զարգացման ուղիները և պահանջում առևտրաարդյունագործական ձեռնարկությունների լիկվիդացումը: Ընդսմին, Ախվերդյանը Կովկասի փոխարքային ներկայացրած իր զեկուցագրերի մեջ պաշտպանության տակ է առնում համքարությունների գոյությունը, քննադատում դրանց վերացման կողմնակիցներին, հիմնավորում, որ չհասկանալով Թիֆլիսի համքարությունների առանձնահատկությունները, նրանք դրանք նույնացնում են Արևմտյան Եվրոպայի արտոնյալ համքարությունների հետ: Ախվերդյանը հիմնավորում է, որ Թիֆլիսի համքարությունները ունեն եվրոպական համքարությունների բոլոր դրական կողմերը, բայց զուրկ են որևէ պետական արտոնություններից:

Գ. Ախվերդյանի նպատակն էր պաշտպանել արհեստավորական համքարությունները, բայց նա կանխամտածված արհեստավորներին չի անջատում առևտրականներից միայն առաջինների դիրքերը չթուլացնելու նպատակով, շատ լավ հասկանալով երկուսի միջև գոյություն ունեցող հակասությունները: Թիֆլիսի համքարությունների դրական կողմերն ի ցույց դնելու նպատակով նա օրինակ է բերում, թե ինչպես դրանցում համախմբված արհեստավորները սերտորեն կապված են իրար հետ, փոխադարձ օգնության ձեռք են մեկնում միմյանց, և քաղաքի չքավորությունն այս կամ այն դժբախտության դեպքում (օրինակ, 1855 թ. սովի ժամանակ) ստանում է համքարությունների անհրաժեշտ նյութական աջակցությունը: Գ. Ախվերդյանն Անդրկովկասի համար ժամանակավրեպ է համարում համքարությունների վերացումը այն հիմնական պատճառաբանությամբ, որ այստեղ կապիտալիզմի լայն զարգացման համար տակավին չկան նախապայմաններ, դեռևս ցածր մակարդակի վրա է գտնվում արդյունաբերական արտադրությունը, որը չի բավարարում երկրատարածքի պահանջարկը: Առկա իրականության խորապատկերի ան-

կողմնակալ ցուցադրմամբ Ախվերդյանն առաջարկում է չվերացնել համքարությունները, քանզի նման ձեռնարկումը վնասակար է ոչ միայն ժողովրդի, այլև պետության համար:

Միայն ցարիզմի տնտեսական քաղաքականությունը չէ, որ քննադատում էին ազգային-պահպանողականները, նրանք մերկացնում էին նաև Անդրկովկասում սահմանված գաղութատիրական ռեժիմը: Ցարիզմի գաղութային, նվաճված ժողովուրդներին ռուսականացման ենթարկելու քաղաքականությունը սուր քննադատության էին ենթարկում ազգային-պահպանողական նշանավոր գործիչներ Գաբրիել Պատկանյանը, Պետրոս Սիմոնյանը, Մարկոս Աղաբեկյանը, Կարապետ Շահնազարյանը և սրանց գաղափարակիցները: Սակայն չպետք է նաև մոռանալ, որ ցարիզմի քաղաքականության նրանց քննադատությունը հետևողական չէր: 1860-ական թվականների կեսերին, Ռուսաստանում գլուխ բարձրացրած հետադիմության պայմաններում, ազգային-պահպանողական երևելի շատ գործիչներ, երես դարձրին նույնիսկ արևմտահայ ազատագրական շարժումից և փրկության հույսեր կապեցին արևմտաեվրոպական պետությունների դիվանագիտական խաղերի հետ:

Լիբերալ-բուրժուական հոսանքը հայ իրականության մեջ ձևավորվեց XIX դարի 50-60-ական թվականներին: Այն արտահայտում էր այն հասարակախավերի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական տրամադրությունները, որոնց բարեկեցությունը կախված էր ապրանքադրամական հարաբերությունների զարգացումից: Եթե ազգային-պահպանողական հոսանքը պաշտպանում էր կովկասահայ և արևմտահայ այն խավերի շահերը, որոնք իրենց բարեբախտության աղբյուրը որոնում էին ներքին և տրանզիտային առևտրի զարգացման մեջ, ապա ազգային-լիբերալ հոսանքը մեծ մասամբ արտահայտում էր ռուսահայ և արևմտահայ բուրժուականացող այն շերտերի ձգտումները, որոնք ազգի բարեկեցության աղբյուրը տեսնում էին նրա ամբողջ արտադրողական ուժերի զարգացման և ներքին շուկայի ընդլայնման մեջ: Լիբերալները և՛ արևելահայ և՛ արևմտահայ հատվածում հանդես էին գալիս կղերապահպանողա-

կան հոսանքի դեմ՝ հայ տնտեսական-հասարակական կյանքի բուրժուականացման նշանաբանով, հին կարգերը խաղաղ ճանապարհով վերափոխելու և եվրոպական առաջադիմական ուղու վրա դնելու համար: Նրանք կողմնակից էին հայ ժողովրդի ազգային առաջադիմությանն ու ազատագրությանը, սակայն ոչ թե հեղափոխությամբ, այլ բարեփոխումներով՝ մեծ տեղ տալով ազգային լուսավորության, դպրոցի, գրականության և գիտության զարգացմանը:

XIX դարի 50-60-ական թվականների հայկական բուրժուական լիբերալիզմի առաջատար, առավել աչքի ընկնող ներկայացուցիչներն էին արևելահայության միջավայրում Ստեփանոս Նազարյանը (Նազարյանց 1812-1879), արևմտահայությունում՝ Նահապետ Ռուսինյանը (1819-1876): Ստեղծագործական գործունեության առաջին իսկ քայլերից Ստ. Նազարյանցը լուսավորականության դիրքերից դատապարտել է հայ իրականության մեջ տակավին իր դիրքերում համառող կղերահետադիմական գաղափարախոսությունը՝ այն զուգորդելով թուրքական բռնատիրությունից արևմտահայության ազատագրության և ռուսական կողմնորոշման գաղափարները: Նազարյանցի աշխարհայացքում արտացոլվել են հայության ազգային համախմբման հույսերը, ասիական, նահապետական կյանքից հրաժարվելու, եվրոպական մշակույթը յուրացնելու բարդ և հակասական հասարակական-քաղաքական ձգտումները: Ժամանակին կղերաազգայական հոսանքի երևելի ներկայացուցիչները (Առաքել Արարատյան, Մսեր Մսերյան, Գաբրիել Այվազովսկի և ուրիշներ) Նազարյանցին համարել են լուսավորչական եկեղեցուց հերձվածող, լութերական, նույնիսկ աստվածուրաց, արժանի Յան Հուսի դատաստանին: Ցարական վարչակարգի ջատագով բուրժուականացող հայ տիրահաճ աղաները, համաձայնելով Երրորդ բաժանմունքի տված «անբարեհույս» պիտակին, նրան համարում էին «ազգային խռովարար»:

Ստ. Նազարյանի ազգային-լուսավորական գործունեությունը բարձր են գնահատել հայ առաջադիմական մտքի ներկայացուցիչները՝ հեղափոխական-դեմոկրատներ Մ. Նալբանդյանը, Հ. Ավաճյանը,

բանաստեղծ Սմ. Շահազիզը, հասարակական մտքի, գրականության ու գիտության խոշոր ներկայացուցիչներ Գ.դ. Արծրունին, Ավ. Արասխանյանը, Րաֆֆին, Լեոն, Հովհ. Թումանյանը և շատ ուրիշներ: Ստ. Նազարյանի լուսավորական ձգտումները խմորվում են տակավին 1820-ական թվականների հայրենասիրական շարժման մթնոլորտում: Նա «Դորպատի նոր մկրտության ավազանում» յուրացնում է եվրոպական ազգերի և մարդկության առաջադիմությանը նպաստող համաշխարհային քաղաքակրթության նվաճումները, դառնում լուսավորության և բանականության դարաշրջանի գաղափարների երկրպագու: «Աբովյանից անմիջապես հետո,- գրում է Աշ. Հովհաննիսյանը,- որ ասպարեզ էր իջնում որպես ազգային լուսավորության սկզբունքների ռահվիրա: Մասնագիտորեն պատրաստված կուռ և շեշտված համոզմունքի ու նկարագրի տեր՝ ազգային լեզվի, գրականության, դպրոցական կրթության մարզում նա մշակեց և առաջադրեց կղերաֆեոդալական տիրող մտայնությանը հակադրված հայացքներ, որոնք մեծաքայլ առաջադիմության հայտարար էին ռուսահայ կյանքի «եվրոպականացման», այսինքն՝ նոր կազմավորվող ռուսահայ բուրժուական հասարակության պահանջների ոգով»[10]:

Նիկոլայ Առաջինի կառավարման հետադիմության ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում, ինչպես նկատել է Ալ. Գերցենը, «ամեն ինչ սեղմված էր գետնին, միայն պաշտոնական ստորությունն էր բարձր խոսում, գրականությունը դադարեցված էր և գիտության փոխարեն դասավանդում էին ստրկության տեսությունը»[11], Նազարյանը հանդես է գալիս հայության հոգևոր վերածննդության հարցեր արծարծող՝ 1846 թ. Կազանում հրատարակված «Обозрение истории Гайканской письменности в новейшие времена» աշխատությամբ՝ ցույց տալով, որ ժամանակակից հայկական գիտությունը տակավին իր վրա է կրում միջնադարի կնիքը և չի կապվում իրական կյանքի պահանջների հետ:

---

[10] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 212.

[11] Գերցեն Ա. Ի., Եղերություններ և խոհեր, Երևան, 1952, էջ 92:

Հին աշխարհամասի ժողովուրդների ազգային կազմավորման, արևելյան ժողովուրդների արթնացման նոր դարաշրջանի ինքնորոշման մղումներն արտահայտող կարևոր փաստաթուղթ է Նազարյանի 1843 թ. օգոստոսին Լազարյաններին գրած նամակը: Ապրելով ժամանակի մեջ, գրում է Նազարյանը, մենք պարտավոր ենք ապրել և սովորել, գոյություն ունենալ ժամանակի հետ և նրա համար: Մեր ժամանակը արթնացուցիչ է, նրա երկաթե լեզուն հզոր կերպով ազդարարում է հայկազյան որդիներին՝ արթնանալ մտավոր թմբիրից և գնալ մարդկության զարգացման ճանապարհով: Եվրոպական կրթության ականավոր ներկայացուցիչները ստեղծեցին հոգևոր մեծ հարստություն, որը մղեց «սլավոններին դեպի ժողովրդական զարգացումը և գիտությունները», հույները, խորտակելով իրենց վրայից ամոթալի ստրկության դարավոր շղթաները, հարություն են առնում կարծես դագաղից, ուրախաբեր ձայներ են գալիս Հնդկաստանից, որտեղ հայրենասերները պայքար են սկսել սեփական ժողովրդի ազգային կյանքի արթնացման համար: Գիտնական հրապարակախոսը կոչ էր անում հայ ժողովրդի մեկենասներին որդեգրել ժամանակի պատգամախոսությունը, վերափոխել Լազարյան ճեմարանի դասավանդման սկզբունքները, դարձնել այն բարձրագույն ուսումնական հաստատություն, հայ երեխաներին ճանաչել տալ սեփական անցյալը, բարձրացնել ազգային արժանապատվությունը, ստեղծել հայրենասիրական ոգևորություն՝ եվրոպական քաղաքակրթությամբ ազգային լուսավորական գաղափարների համակողմանի առաջընթացի համար[12]:

Ստ. Նազարյանի ազգային-քաղաքական դավանանքը հատկապես բացահայտվում է, երբ 1858 թ. նրան հաջողվում է հրատարակել «Հյուսիսափայլ» ամսագիրը: Չնայած բաժանորդների չափազանց փոքրաթիվ լինելուն, որի հետևանքով ո՛չ հրատարակիչը և ո՛չ էլ աշխատակիցները, Մ. Նալբանդյանի արտահայտությամբ, «մի քոռ կոպեկ էլ» չէին ստանում, այնուամենայնիվ պարբերականը շարու-

---

[12] Տե՛ս Նազարյանց Ստ., Նամականի, էջ 73-79:

նակվում էր հրատարակվել՝ տարածելով լուսավորական գաղափարներ, պայքարելով տգիտության և խավարամոլության դեմ՝ հանուն հայության հասարակական ու մշակութային առաջադիմության: Ամսագրի հրատարակության երկրորդ տարում խմբագրությունից հեռանում է գլխավոր աշխատակից Նալբանդյանը, որը հրատարակիչ-խմբագրի հետ կիսում էր բոլոր դժվարությունները: Նալբանդյանի հեռանալով խմբագիրը հարկադրված էր միայնակ վարել հանդեսի հրատարակությունը: Սկսած 1864 թվականից, երբ ամսագիրը դադարեց հրատարակվել, Նազարյանը գործունեություն ծավալեց մանկավարժության ուղղությամբ՝ միաժամանակ շարունակելով պայքարել մի նոր ամսագրի հրատարակման համար: Ի վերջո, երբ ցարական գրաքննությունը, նկատի առնելով «Հյուսիսափայլի» շրջանի նրա լիբերալ գործունեությունը, մերժեց «Լապտեր Հայաստանի» ամսագրի հրատարակման նրա ծրագիրը, Նազարյանը լիովին նվիրվեց կրթական գործին՝ 1869 թվականից ստանձնելով Ներսիսյան դպրոցի տեսչի պաշտոնը: Թիֆլիսում հետադիմական ուժերի հարուցած խոչընդոտների պատճառով Նազարյանը հարկադրված վերադառնում է Մոսկվա և Լազարյան ճեմարանում աշխատում մինչև կյանքի վերջը՝ 1879 թվականը:

Ստ. Նազարյանի պատմագիտական հայեցակարգում սրտացոլվել են բոլոր այն հակասությունները և երերումները, որոնք բնորոշ էին հին կացութաձևի դեմ քաղաքական բախումներին նախապատրաստվող բուրժուազիային ընդհանրապես և տնտեսական տեսակետից նվազ հայ բուրժուազիային մասնավորապես: Բնական է ինքնին, որ նման սոցիալ-հասարակական պայմաններում և գաղափարաբանական արևմտաեվրոպական և ռուսական զանազան ազդեցությունների ներքո Նազարյանն իր պատմահասարակագիտական հայեցակետով երբեք չդարձավ որևէ տեսության սոսկական, կույր հետևող: Լիբերալ հրապարակախոսը դիմում էր աշխարհի տարբեր մասերում հայերի սրտին և հոգուն ու կոչ անում միավորվել որպես մի լեզվով մտածող ու խոսող հասարակություն և հանուն ազգի տնտեսական և հոգևոր առաջադիմության՝ գործել համատեղ: Ստ. Նա-

զարյանը գրում էր՝ ազգային համախմբման համար անհրաժեշտ է ազգային ներդաշնակություն: Եվ քարոզելով ազգային միաբանության անհրաժեշտության գաղափարը, սակայն, նա չէր ըմբռնում այդ միասնության սոցիալական բովանդակությունը և այդ պատճառով էլ չէր կարողանում տեսնել ազգի կյանքում խմորվող այն նոր հակասությունները, որոնք անհնարին պիտի դարձնեին ժողովրդի տարբեր շերտերի՝ նրա երազած ներդաշնակությունը: Խնդրի այս կողմն էր նկատի առնում Աշ. Հովհաննիսյանը, երբ գրում էր, թե «...Նազարյանը տակավին 1853 թ. լույս տեսած «Վարդապետարան կրոնի» աշխատության առաջաբանում հենվում էր ազգի «հասկացող և մեծատուն» փոքրամասնությունների վրա»[13]:

Այն իրողությունից, որ համազգային լուսավորության գործում Նազարյանը հիմնական դերը հատկացնում էր մեծահարուստներին, չպետք է ստեղծվի այն տպավորությունը, թե Նազարյանը տոգորված էր միայն դեպի մեծահարուստները ունեցած համակրություններով: Այստեղ պարզապես դրսևորվում էր լուսավորչի ոչ միայն սոցիալական կողմնորոշումը դեպի ազգի մեծատուն փոքրամասնությունը, այլ սոսկ սոցիալական պատրանքը՝ ազգի մեջ հարուստի և աղքատի հավասար վիճակի վերաբերյալ: Նազարյանը ոչ թե հայ մեծատուններին էր հանձնում ժողովրդի ազգային առաջադիմության բախտը, այլ նրանց հիշեցնում էր իրենց բարոյական պարտականությունները: Եթե հարուստները, ժողովրդին շահագործելով, հարստացել են, ապա այդ հարստությունից պետք է առատ բաժին հանեն նույն ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման համար:

1840-ական թվականներից կարևոր նշանակություն տալով ֆեոդալական հարաբերությունների դեմ ընդվզող հասարակական նոր ուժերին՝ Նազարյանը երազում էր ծառայեցնել նրանց ազգի լուսավորությանը, նրա պահանջների իրականացմանը, ուստի բնականաբար ելնում էր, ինչպես Աշ. Հովհաննիսյանն է նշում, ոչ թե «...ռուսահայ բուրժուազիայի դասակարգային շահերը պաշտպանելու նեղ մտահոգությունից, այլ ռուսահայ հասարակական կյանքի բուրժուա-

---

[13] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 139:

կան ուղու հետ լծորդված ազգի ընդհանուր բարեկեցության, նրա համախմբման ու ինքնապահովության մղումներից»[14]:

Ռուսահայության ինքնապահովումը 1840-1860-ական թվականներին ամբողջովին լուսավորության և բարոյականության կատարելագործման ոլորտներում դիտարկող հրապարակախոսը կյանքի վերջին տարիներին՝ հատկապես առնչված 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և քաղաքական ինքնորոշման համար ազգային-ազատագրական պայքարի դրոշ պարզած բալկանյան ժողովուրդների հաջողությունների հետ, կատարում է մտավոր կողմնորոշման շրջադարձ դեպի մարտական պայքարի ճանապարհը: Ավելին, հատկապես վերջին նամակները կասկած չեն թողնում եզրահանգելու, որ սրընթաց իրադարձությունների ներքո և Բեռլինի կոնգրեսի նախօրեին և կոնգրեսից հետո Նազարյանը կանխազգում էր Օսմանյան կայսրությանը հովանավորելու, այսպես կոչված status quo-ն համառորեն պաշտպանելու եվրոպական տերությունների քաղաքականության աղետալի հետևանքները Արևմտյան Հայաստանի և ամբողջ հայության ճակատագրի վրա:

Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ XIX դարի կեսին առանձնահատուկ դերակատարություն ունեցավ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որը պայքարի մարտադրոշ բարձրացրեց ոչ միայն ցարական ու սուլթանական վարչակարգերի՝ գաղափարական-քաղաքական խոսափող-սպասարկումների՝ հետադեմ պահպանողականության և հաշտվողական լիբերալիզմի դեմ: Հետևողական ընդդիմադիր այդ հոսանքը ձգտում էր հայ ժողովրդի ազգային ազատագրությանը, ֆեոդալական կարգերի վերացմանը, բուրժուադեմոկրատական բարեփոխումների ուղիով ագրարային-գյուղացիական հիմնախնդրի լուծմանը:

Հոսանքի գաղափարական-քաղաքական առաջնորդն ու կազմակերպական ղեկավարը Միքայել Նալբանդյանն էր (1829-1866):

---

[14] Հովհաննիսյան Աշ., 19-րդ դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, Պատմա-բանասիրական հանդես, 1966, N 1, էջ 37-38:

1859-1861 թթ. համառուսական հեղափոխական իրադրության տարիներին հայ դեմոկրատ լուսավորիչները Մ. Նալբանդյանի գլխավորությամբ կազմում են ռուսական հեղափոխական դեմոկրատիային ընդառաջող հեղափոխական ջոկատներից մեկը, որին մեծ դեր էր վերապահված հայ հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման մեջ: Ճնշված և հարստահարված ժողովրդական զանգվածների դասակարգային շահերը Նալբանդյանը տարբերանշում էր համաժողովրդական այն շահերից, որոնց պաշտպանության համար ժողովրդի անունից մինչ այդ հանդես էին գալիս միայն արևելահայ բուրժուազիայի պահպանողական և լիբերալ գաղափարախոսները:

Եթե սկզբնապես ազգային գործիչները ազգի լուսավորությունն ակնկալում էին իշխող վերնախավերի ձեռնտվությունից և նրա զարթոնքի կրողներ համարում լուսավորված մտավորականությանը, ապա Մ. Նալբանդյանը «հասարակ ժողովրդի» մեջ տեսավ ազգի հենարանն ու վերակենդանության լծակը: Հատկանշական է, որ Մ. Նալբանդյանը երիտասարդության առաջավոր ջոկատներին նվիրեց «Երկրագործությունը որպես ոսկի ճանապարհ» աշխատությունը: Նալբանդյանը հանդես եկավ որպես հայ հասարակական մտքի և ազգային-ազատագրական շարժման հեղափոխական-դեմոկրատական ուղղության հրապարակախոսը: Այդ երկում նա պայքարի կոչ արեց հայ առաջավոր երիտասարդությանը՝ հանդես գալ հանուն հայրենիքի վերածնության, հանուն նրա ազատագրման և «կենսանորոգ ու որոտընդոստ հարության»:

Ֆեոդալա-կալվածատիրական բռնության դեմ Խ. Աբովյանի պարզած հայ դեմոկրատական ազգայնության ղրոշը Մ. Նալբանդյանի և իր հետևորդների համար դարձավ ցարական գաղութատիրության և սուլթանական բռնատիրության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժման զինանշան: Հայ դեմոկրատիայի ազգային-ազատագրական ջանքերը նրանք գաղափարապես և կազմակերպչորեն կողմնորոշում էին դեպի Ռուսաստանում բռնկող գյուղացիական հեղափոխությունը, Արևմուտքում արծարծված ազգային և սոցիալական շարժումները: Մ. Նալբանդյանի հայացքներով հա-

մակված էին հայ ուսանողության այն շրջանները, որոնք համոզված էին, թե հայ ժողովրդի լուսավորական ջանքերը և ազգային-քաղաքական ինքնորոշման ձգտումները չունեն ավելի վստահելի հենարան և ուղեցույց, քան ցարիզմին հակադրված դեմոկրատական Ռուսաստանն ու նրա առաջավոր միտքը[15]:

Մ. Նալբանդյանը ռուս առաջավոր մտքի ներշնչումներից զատ՝ ընդառաջում էր առաջադիմական այն հայացքներին, որոնք նրանից առաջ հայ կյանքի ու գրականության մասին մշակել և ձևակերպել էին Խ. Աբովյանը և Ստ. Նազարյանը: Հայ գրականության այդ ռահվիրաները տակավին 1840-ական թվականներին էին վերագնահատում անցյալի հայ գրականությունը կյանքի արդիական պահանջներից ելնելով:

1850-ական թվականների կեսերին Մ. Նալբանդյանի գրած «Յաղագս հայկական դպրութեան ճառ»-ը կրում էր նույնիսկ Ստ. Նազարյանի խմբագրող գրչի միջամտության հետքերը[16]: Սակայն ի տարբերություն Ստ. Նազարյանի, նա չէր սահմանափակվում սոսկ արևելահայ նոր գրական լեզվի պաշտպանության խնդրով, այլ մտահոգված էր, որ հայ նոր գրական լեզուն միջոց դառնա հայերի համազգային համախմբման, իսկ ազգային-մշակութային զարթոնքին ձգտում էր հաղորդել ազգային-քաղաքական մղումներ:

Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի լուսավորական ջանքերի համար կարևոր ասպարեզ բացեց «Հյուսիսափայլ» ամսագիրը: Ազգային լուսավորության և ազգային բարեկեցության խնդիրներ, մտքի և խղճի ազատության գաղափար, մամուլի և գրականության, կնոջ և ընտանիքի և, վերջապես, հայրենիքի ազատագրության հարցեր. սրանք էին «Հյուսիսափայլ» ամսագրում Նալբանդյանի զետեղած գրական-հրապարակախոսական նյութերի թեմաները: Նրան ամենից շատ հուզում էին ընթացիկ կացության ու քաղաքականության, լուսավորության և գիտության, մամուլի ու գրականության խնդիրնե-

---

[15] Տե՛ս Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 31 և էջ 79:

[16] Տե՛ս, նույն տեղում, գիրք առաջին, էջ 111:

րը: «Հեղինակի զգայացունց և ալեկոծ լեզուն, նրա տողերի բուռն ու անհանգիստ ինտոնացիաները հակադրվում էին դժգույն ու անկենդան այն ոճին,- ընդգծել է նրբանկատ նալբանդյանագետը,- որ իշխող էր հայ ընթացիկ մամուլի էջերում, միաժամանակ անհարիր՝ ազգային զարթոնքի ոտին բռնող ընթերցողի մտածությանն ու պահանջներին: Մ. Նալբանդյանի հյուսիսափայլյան հրապարակախոսության առանցքը ևս ազգային լուսավորությունն էր: Դրանով էլ հենց պայմանավորված էր նրա նյութերի բովանդակությունը, դրանց հանրագիտական բովանդակությունն ու մարտական-քննադատական ուղղությունը»[17]: Մ. Նալբանդյանի ստեղծագործական միտքը շատ ավելի հեռուն էր թափանցում: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, ի տարբերություն «Հյուսիսափայլում» իշխող լիբերալ-բուրժուական գաղափարախոսության՝ Մ. Նալբանդյանը ազգային-քաղաքական գործուն տրամադրություն էր ներշնչում ամսագրի ընթերցողներին և ավելի շեշտակի դարձնում նրա հրապարակախոսության դեմոկրատական նպատակասլացությունը[18]:

Ազգային լուսավորության խնդիրը չնայած Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի գաղափարական համագործակցության հիմքն էր, այնուամենայնիվ, այս հարցում ևս սկզբից աչքի է ընկնում նրանց տարախոհությունը: Եթե Նազարյանը պաշտպանում էր հայերի գիմնազիական ու բարձրագույն ուսման և «ազգային ուսումնական դպրոցի» պահանջը կամ շեշտում մասնագիտական՝ վաճառականական կամ արհեստագիտական դպրոցներ հիմնելու կարևորությունը, առաջ էր քաշում «տերության համար հայ ուսումնական չինովնիկներ» կամ «մտահայաց ժողովրդակարգերի» համար լուսավոր կադրեր և եկեղեցու համար կրթված տիրացուներ պատրաստելու խնդիրը, ապա Նալբանդյանը շեշտում էր ժողովրդական հանրակրթարանների անհրաժեշտությունը: Նա կամենում էր ազգային կրթության գործը սկսել ոչ թե նրա վերնատնից, այլ հիմքից, ապահո-

---

[17] Հովհաննիսյան Աշ., Արևելահայ հասարակական հոսանքները, Հայ ժողովրդի պատմություն, հատոր V, Երևան, 1974, էջ 409-410:

[18] Տե՛ս նույն տեղում:

վելով ժողովրդական «ընդհանուր և հասարակ կրթությունը» և այն ծառայեցնել աշխատավորության նյութական բարեկեցության շահերին: Նա պահանջում էր «Հայաստանի բոլոր գյուղերում և քաղաքներում հաստատել պարզ դպրոցներ, որոնց պաշտոնը չէ լեզու և գիր ուսուցանել ազգի զավակներին: Այնպիսի դպրոցներում, ուր ժողովրդի չքավորությունը արգելառիթ է այս գաղափարի իրագործությանը...»[19]: Մատնանշելով «լույսի» ու «խավարի», «ճշմարտության» և «ստրկության» ներհակությունը՝ «Հյուսիսափայլ» ամսագրի առաջին տարում Նալբանդյանը դեռևս չէր բացահայտում ազգի ներսում բախվող դասակարգային ներհակությունները: Այնուհանդերձ, այս հարցում ևս ավելի ու ավելի էին ակնառու դառնում ամսագրի լիբերալ և դեմոկրատական բևեռների հակադրությունները: Շատ ակնառու օրինակ. մինչդեռ Ստ. Նազարյանի հրապարակախոսությունը ելնում էր խղճի ու մտքի ազատության սկզբունքից և, ըստ էության, դառնում անհատի «բարոյական» ազատության շուրջը, Մ. Նալբանդյանի գերիշխող գաղափարը ազգության հարցն էր, որն ի վերջո նույնանում էր ժողովրդի սոցիալական և քաղաքական ազատագրման խնդրի հետ: Եթե Ստ. Նազարյանը հակվում էր տիրող կարգերին համակերպվելուն, ապա Մ. Նալբանդյանի հայացքները հասունանում էին այդ կարգերի հետ առճակատվելու ուղղությամբ: Ի վերջո բացահայտ է դառնում Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի անկամրջելի տարակարծությունը: Նալբանդյանը 1859 թ. հրաժարվում էր հայ իշխանությունների և հարուստների միջոցներով ազգը լուսավորելու մտքից և նույնիսկ ժխտում ազգի վերնախավի ազգասիրությունը: «Ազգասեր. որտեղից որտեղ... դու երկու կոպեկով ոչ միայն ազգասեր պատվանունը, այլև քո բոլոր ազգը և քո հոր ոսկերքը կհանես գերեզմանից և կվաճառես»[20],- ասում էր նա ազգի հարուստին: «Ազգության հարստարանը և լծակը,- շարունակում է նա,- է հասարակ ժողովուրդը... Եվ ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկ, որ արծաթի սանդուղքով վեր են բարձրացել ազգի մակերևույթից, այլ

---

[19] Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, Երևան, 1945, էջ 459:
[20] Նույն տեղում, էջ 225:

այն խեղճ ու կարեկցության արժանի ժողովուրդը, որի վրա ծանրացել է ապաբախտության հետևանքը»[21]:

Ըստ Նալբանդյանի, ազգաշինության գործը, պիտի սկսվի ցածից և հիմքից, հասարակ ժողովրդից: Երես շուռ տալով ազգի վերնախավերից, ազգի մտավորականները պիտի կողմնորոշվեն դեպի հասարակ ժողովուրդը, ուղղություն տան ազգաշինության գործին: Հայ հեղափոխական-դեմոկրատիայի ղեկավարը հանգում էր այն համոզման, որ չի կարող խոսք լինել ազգի «եվրոպական լուսավորության» մասին, եթե ապահովված չէ նրա քաղաքական ազատությունն ու նյութական բարգավաճումը: «Ուր չկա մտքի և բանականության ազատություն,- գրում էր նա,- այնտեղ կա հոգու ստրկություն, իսկ ուր ստրկություն՝ այնտեղ չկա կյանք: Հայոց ազգը առանց նորան ևս քաղաքականապես մեռած է ներկայումս. մի վերանորոգություն, մի բարոյական վերածնություն, եթե կարելի է երբևիցե հուսալ, ապա ուրեմն պիտի լինի այն ճշմարիտ և ստույգ լուսավորության միջնորդությամբ»[22]: Մ. Նալբանդյանը ծառանում է ազգային մտքի և խղճի ստրկության դեմ և պահանջում ազգի սոցիալական և քաղաքական ազատագրում, առանց որի չի կարող լինել ճիշտ և ստույգ ազատություն: Ըստ նրա, արդի հասարակության մեջ ազատությունը սոսկ իշխող վերնախավերի մենաշնորհն է, որոնք մյուսներին դիտում են որպես իրենց հրամանները կատարող ծառաներ ու ստրուկներ և նրանց ազատագրական ձգտումները համարում ապստամբություն[23]: Մ. Նալբանդյանը գտնում էր, որ «հասարակ և անզոր մարդերի» համար առանց իշխանության չի կարող խոսք լինել քաղաքական ազատության մասին: Բայց անզոր է նաև քաղաքական իշխանությունը, եթե զուրկ է նյութական հենարանից՝ տնտեսական պատվանդանից:

Ըստ Նալբանդյանի, «Մարդիկ պիտո է ամրացնեին յուրյանց նյութեղեն ոտքերը, այնուհետև կարողանային գնալ բարոյականի և

---

[21] Նույն տեղում, էջ 452:
[22] Նույն տեղում, էջ 441.
[23] Տե՛ս Նալբանդյան Մ., Երկ., հատ. 2, Երևան, 1945. էջ 399:

իմացականի քամակից»[24]: Սրանք մտքեր են, որոնք ըստ էության համընկնում են այն հայացքներին, որոնք 1858-1860 թթ. «Современник» պարբերականի էջերում շեշտադրում էին Ն. Չեռնիշևսկին և Ն. Դոբրոլյուբովը: Իր «Հուլիսյան հեղափոխությունը» հոդվածում Չեռնիշևսկին կարևորում էր հետևյալը. «Քաղաքական իշխանությունը, նյութական բարեկեցությունը և կրթությունը իրար հետ անքակտելիորեն կապակցված բաներ են. ով դեգերում է չքավորության մեջ, չի կարող իրեն ձեռնտու եղանակով օգտվել իշխանությունից, ով չի օգտվում քաղաքական իշխանությունից, չի կարող փրկվել ճնշումից, այսինքն՝ չքավորությունից, ուրեմն նաև՝ տգիտությունից»[25]:

Չեռնիշևսկու այս դրույթներից բխում էին մարտական եզրակացություններ. պորտաբույծ դասակարգերի տիրապետության պայմաններում անհնարին է դուրս գալ ստեղծված վիճակից, եթե չլինի հեղափոխության միջամտությունը: Նույնպիսի հետևություններ էին բխում նաև Նալբանդյանի դրույթներից:

Տակավին «Յաղագս հայկական դպրության ճառում» խիզախում էր նրա այն միտքը, թե լուսավորությունը երկնառաք տուրք չէ, այլ բարիք, որ պիտի նվաճվի զոհերով ու նվիրագործությամբ: Ոչ միայն իր ժողովրդի լուսավորության խնդիրները, այլև նրա ազատության և բարեկեցության հեռանկարները հրապարակախոսը լծորդում է ռուս և եվրոպական հեղափոխական շարժումների հետ: Ջինվորագրվելով այդ շարժումներին՝ անձամբ նա դրանց մեջ էր տեսնում իր ժողովրդի ազատագրման երաշխիքը:

Ցարական ինքնակալության դեմ պայքարելու համար Նալբանդյանը ըստ կարելվույն օգտագործեց լեգալ հնարավորությունները և գրեց նույնիսկ իր «Իտալացի աղջկա երգը», «Մանկության օրեր» և «Ազատն աստված» բանաստեղծությունները: Աշ. Հովհաննիսյանը քննական խոր վերլուծության է ենթարկում Մ. Նալբանդյանի հեղափոխական դավանանքն արտահայտող նրա «Երկու տող» պամֆլետը, ուր հեղինակը բացահայտ հեղափոխական մարտնչողի

---

[24] Նույն տեղում, հատ. 2, էջ 274:

[25] **Чернышевский Н. Г.**, Полное собрание сочинений. том V. М., 1950, стр. 97.

իր ծրագիրն է առաջադրում. «Մենք ազատակամ ընվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ... Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով ու արյունով, եթե մի օր արժանի լինենք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը ընվիրել և սրբել մեր արյունով»[26]:

Մ. Նալբանդյանի գործունեության հեղափոխական-դեմոկրատական փուլի ամենից վառ և կատարյալ արտահայտությունը եղավ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, որը գրվեց ճորտատիրության վերացման մասին ցարական մանիֆեստի հրապարակումից հետո ստեղծված նոր կացության՝ հետադիմության հարձակման պայմաններում: Կտրուկ փոխված իրադրության մեջ Նալբանդյանն արդեն այն համոզմունքն ուներ, որ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների ձևափոխություն հնարավոր է միայն «կացնի դիմելով»:

Այս աշխատությունը մարդկությանը դեպի մարդավայել կեցություն տանող մտորումների նալբանդյանական հրապարակախոսության բարձրակետն է: Քննելով եվրոպական ժամանակակից հասարակության սոցիալ-տնտեսական վիճակը՝ Նալբանդյանը ցույց է տալիս բուրժուական հեղափոխությունների, ազատության, հավասարության և եղբայրության ժողովրդավարական կարգախոսների ներքին վակուումը, քանզի այդ կարգախոսները չեն ապահովել մարդու և հասարակության բարօրության հիմնական պայմանը՝ տնտեսական խնդիրը: Մ. Նալբանդյան հեղափոխական-դեմոկրատի գաղափարաքաղաքական հայեցակետը չէր խոտորվում գյուղացիական համայնքի միջոցով արդարացի հասարակության հասնելու մասին ռուս 1860-ականների ոչ իրատեսական, ռոմանտիկական ծրագրա-

---

[26] Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985, էջ 442:

յին ուղեգծից: Սակայն դա չպետք է խանգարի մեզ՝ անշեղ արժեվորելու հասարակական-քաղաքական տվյալ պատմական կացությունից բխող այդ երևելի անհատականությունների արծարծած գաղափարների պատմական տեղը, ռուսական ազատագրական շարժման ընդհանուր օրինաչափության մեջ դրանց հումանիստական վեհությունը:

Մ. Նալբանդյանի շատ աշխատություններ («Հիշատակարան», «Երկու տող», «Հեգելը և նորա ժամանակը», «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» և այլն) ոչ միայն հասարակագիտական մտքի ուսումնասիրության, գեղարվեստական հրապարակախոսության արժեքավոր վավերագրեր են, այլև բարոյաքաղաքական վեհ հայեցակետ պարունակող հումանիստական իմաստասիրություններ: Եվ վերջապես. հայ հեղափոխական-դեմոկրատիայի առաջնորդի մտավոր ներուժը հորդաբուխ դրսևորվեց և այն դեպքում, երբ նա խորհրդածում էր ժողովուրդների ճակատագրի և ազգությունների լինելիության խնդիրների շուրջ: Այդ հարցերում նա մերկացնող տողերով բացասեց «քաղաքակրթություն տարածելու» անբարոյական կարգախոսով իրականացվող գաղութատիրական ավերող ու խոշտանգող արյունոտ քաղաքականությունը[27]:

Ըստ Աշ. Հովհաննիսյանի՝ «Մ. Նալբանդյանի գլխավորած հեղափոխական-դեմոկրատական հոսանքը կարևոր դեր կատարեց հայ ժողովրդի հասարակական-քաղաքական մտքի հետագա զարգացման պատմության մեջ»[28]:

Մ. Նալբանդյանի հրապարակախոսությունը պատմահասարակագիտական կուռ և ընդգրկուն համակարգ է՝ ներքին միասնության և ամբողջականության միաձուլվածք: Չկա XIX դարի 50-60-ական թվականների եվրոպական, ռուսական և հայ հասարակական-քաղաքական կյանքի որևէ ասպարեզ, որ այս կամ այն կերպ շոշափված չլինի նրա գեղարվեստական, հրապարակախոսական և գիտական երկերում: Անգամ պոեզիայում Նալբանդյանը հասարակագետ-

---

[27] Տե՛ս նույն տեղում, էջ 509-511:

[28] Հայ ժողովրդի պատմություն, հատ. V, Երևան, 1974, էջ 426:

հրապարակախոս էր: Պատահական չէ, որ Նալբանդյանի ստեղծագործության համապարփակ ուսումնասիրող Աշ. Հովհաննիսյանը նրա երկերում տեսնում էր Հայնեի և Գերցենի «սինկրետիկ ոճի» արտահայտություն, «մի տեսակ հրապարակախոսություն, որ փոխանցվում էր բանաստեղծության, և մի տեսակ բանաստեղծություն, որ փոխանցվում էր հրապարակախոսության»[29]:

Տնտեսական-քաղաքական, հասարակական-մշակութային յուրաքանչյուր երևույթ գնահատող Նալբանդյանի կարծիքներն ու նկատառումները ելնում էին պատմականությունից և ընթացիկ կյանքի առաջադրած պահանջներից: Նա այն տեսակետն ուներ, որ իրականության դոմինանտ և ածանցյալ բոլոր իրադարձությունները ժամանակի ընթացքում դառնում են պատմություն, ուստի դրանք պետք է քննվեն և գնահատվեն ժամանակի հարափոփոխ գործընթացների մեջ:

Մ. Նալբանդյանի բազմաթիվ ստեղծագործություններում շոշափվում են հայ հին, միջնադարյան և նոր պատմության հետ կապված հարցեր, բայց ավելի խորքային դրանք արծարծվում են նրա «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ», «Թափառական հրեա» վեպի թարգմանության առաջաբանում, «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք», Ղ. Փարպեցու «Թուղթը», «Նկատողություններ» երկերում: Սրանցից զատ՝ Նալբանդյանը զբաղվել է նաև հայ հին գրականության երկերի թարգմանությամբ՝ կատարելով պատմաբանասիրական ծանոթագրություններ:

Հայաստանի հին պատմության հարցերին նվիրված Նալբանդյանի անդրանիկ աշխատությունը «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ»-ն է՝ գրված 1854-1855 թվականներին՝ Մոսկվայի համալսարանում ուսումնառության ժամանակ: Քննադատելով և մերժելով կղերական պատմագրության սխոլաստիկական էությունը՝ հեղինակը սրտի անհուն ցավով արձանագրում է, որ հայ պատմագրության մեջ չեն երևում ժողովուրդը, նրա ոգին ու սոցիալական կյանքը: «Մեր սիրտը արյունով է լցվում այս ճշմարտությունը ասելու ժա-

[29] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 155:

մանակ,- գրում է Նալբանդյանը,- որովհետև մեր չար բաղդով այս րոպեիս այնտեղ ենք հասած, որ չենք կարող առանց մեր խղճմտանքը արատավորելու ասել, թե մեր ազգը ունի մատենագիտություն»[30]: Ըստ Նալբանդյանի, ամեն մի անցյալ այն չափով է միայն հիշարժան և օգտակար, որ չափով նա կարող է «պտուղ տալ ներկայումս» և շահեկան լինել ապագային: Գտնում էր, որ պետք է ուսումնասիրել հեռավոր անցյալից եկող ավանդույթները. «...ազգային ավանդությունքը որքան կարելի է, անշուշտ, արժան է քրքրել և դուրս բերել փոշիների տակից, բայց ավանդությունք ենք ասում, իբրև մի պատմական սերմ, միշտ կարող է ազգի մեջ ծլիլ, ծաղկիլ և պտուղ բերել»[31]: Եվ բոլոր հնությունները չէ, որ պետք է որպես սրբություն պաշտել: «Դպրության և լուսավորության խորհուրդը այն է,- շարունակում է Նալբանդյանը,- որ ամեն անցած խավար լույս քարոզե, ամեն դարերի ծանրության տակ ճնշվածին անխտիր ծունր դնե, այլ որպեսզի փաստե այդ խավարը»[32]:

Մինչդեռ միջնադարյան խավարը փարատելու փոխարեն ժամանակակից «գրագետ պարոնները», անդադար այդ միջին դարերի կուպրե կարասում լողալով ազգության և լուսավորության անունով, ջանում են նորոգել և հաստատել ազգի վրա այդ խավար ուղղության իշխանությունը: Նման «գրագետ պարոնները», Նալբանդյանի կարծիքով, իրենց պահպանողական հայացքներով անընդունակ են առաջնորդել ժողովրդին առաջադիմության ուղիով, քանզի հասարակ ժողովուրդը շատ անգամ ավելի ազատ է միջնադարյան լծից, քան թե մեր «գրագետ պարոնները»: Մերժելով ազգային կյանքը դեպի առաջադիմություն մղելուն խանգարող պահպանողական մտածողությունը՝ Նալբանդյանը միաժամանակ հպարտության զգացումով էր խոսում հայ ժողովրդի անցյալի մշակութային արժեքների լավագույն դրսևորումների մասին:

---

[30] Նալբանդյան Մ., ԵԼԺ, հատ. 2, Երևան, 1945, էջ 146:
[31] Նույն տեղում, ԵԼԺ, հատ. 3, Երևան, 1940, էջ 137:
[32] Նույն տեղում, էջ 140:

Նա Ղազար Փարպեցու «Թղթի» թարգմանության ծանոթագրություններում իր ջերմ հիացմունքն է արտահայտում նրա անհայտ ընդօրինակողի և պահպանողի հասցեին, որը նաև ուշագրավ տեղեկություններ է փոխանցել պատմիչի կյանքի վերաբերյալ: Այդ գործը ձեռնարկողը եղել է «...մի արժանավոր մարդ, որ քաջ էր ճանաչում Ղազար Փարպեցու արժանավորությունը: Անտարակույս, նորան ենք պարտական, որ այս հրաշալի «Թուղթը» կարդում ենք այսօր մենք, մեր նախահարց օրերից հեռացած, նորա սրտերից օտարացած, կորած ու շվարած որդիքս...»[33]:

Մ. Նալբանդյանը վաղմիջնադարյան հայ պատմիչների ըստ արժանավույն գնահատողն էր: Նա հրապուրված էր հայ մատենագիրների նվիրական հայրենասիրությամբ, նրանց մտքի խորաթափանցությամբ, վարպետությամբ, լեզվի ճոխությամբ, արտահայտամիջոցների զարմանալի ներդաշնակությամբ և, որ ամենակարևորն է՝ ժամանակի առաջադրած խնդիրների համապարփակ անդրադարձմամբ:

Մ. Նալբանդյանը հայոց պատմագրության ամենից արժանահիշատակ ժամանակաշրջանը համարում է V դարը, երբ ամենից ընդգրկուն են արտացոլված ազգային կյանքի բնորոշ կողմերը՝ այն էլ գեղարվեստական մատուցման կատարյալ դրսևորումով: Հետագա պատմիչների մոտ ևս առկա է ազգային պատմության արտացոլում, սակայն այստեղ զգալիորեն նահանջ են ապրում աշխարհայացքի լայն մտահորիզոնն ու գեղարվեստական համապատասխան որակը: Այս իմաստով էլ և՛ որպես հեղինակ անհատականություններ, և՛ որպես ամբողջություն, Նալբանդյանը հաճախ է առանձնացնում ոսկեդարի պատմիչներին: V դարը առանձնացրել և գովերգել են նաև կղերական պատմագրության ներկայացուցիչները, սակայն Նալբանդյանը բացարձակապես նրանցից տարբերվում է նրանով, որ եթե առաջինները V դարի գործիչներին համարում են հայ եկեղեցական գրականության ամենափայլուն և տիպական դեմքեր, Նալբանդյանը

[33] Նույն տեղում, էջ 251:

սրանց առանձնացնում է իրենց գործունեությամբ և հակադրում կղերական-եկեղեցական գործիչներին, որպես նրանցից տարբեր և նրանց հակադրվող ուժեր: «Երկու տող» պամֆլետում (պարսավագրում) Նալբանդյանն այսպես է ներկայացնում պատմական իրողություն-երևույթը. «Մեր...խոսքերը, հոգևորների ընդդեմ, չէ վերաբերվում... Ինքյանք, այդ սուրբ թարգմանիչքը, աքսորվեցան և հալածվեցան մինչև ի մահ ընդհանուր հոգևորականության ձեռքով: Խնկելի Խորենացին, այն հրեշտակ ծերունին չարաչար հալածվեցավ, որին ի վերջո Բագրևանդի եպիսկոպոսները, որպես մահադեղ տալով, անհանգիստ հալածանքով վախճանեցուցին և որ, յուր վախճանի ժամանակ ահավոր ոգովք գրեց հայոց կաթողիկոսի վերա: Հայոց եկեղեցականությունը և մահով չհաշտվեցավ այն պատկառելի ծերունու հետ, նորա ոսկերքը փորեց հանեց գերեզմանից և գետը թափեց: Ղազար Փարպեցուն ոտքը բոբիկ քշեցին վանքից, որ Մամիկոնյանց Տիրոջ Վահանի հանճնարարությամբ բարեկարգել էր, յուր սեփական ունեցած-չունեցածը ծախելով: Վանքից հալածելու ժամանակ նորա բոլոր ինչքը հափշտակեցին, նաև հունարեն գրքերը, թեև մարդ չկար վանքում հունարեն կարդացող:

...Խորենացու տգիտահալած մատյանները փաթաղիկոս հռչակեցին, իսկ Ղազար Փարպեցին աղանդավոր»[34]:

Մ. Նալբանդյանը հին անցյալի ժառանգության մեջ տեսնում է երկու միմյանցից տարբեր ուղղություններ. մեկը՝ իշխող, հետահայաց կղերաաբեղայական ուղղությունը, իսկ մյուսը՝ առաջադեմ, համազգային առաջահայաց ձգտումներ արտահայտող ուղղությունը: Հին Հայաստանի պատմագրության ներկայացուցիչներից ոչ մեկն այնքան չի արժանացել Նալբանդյանի բարձր գնահատականին, որքան Մովսես Խորենացին: Նա Նալբանդյանին գոհունակություն է պատճառել իր շրջահայեցությամբ ու խոհուն մտքով՝ հայության պատմական անցյալը ազգային բանահյուսությամբ լրացնելու և հարևան ժողովուրդների հետ ունեցած առնչություններով լուսաբանելու յուրածնությամբ: Խորենացին Նալբանդյանի երկերում բնու-

[34] Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1985, էջ 446:

քագրվում է մեծարանքի ամենաջերմ խոսքերով՝ «իմաստուն փիլիսոփա», «խնկելի», «անզուգական», «անմահ»: Նալբանդյանը հիմնարար է համարում լուսամիտ Պատմահոր առաջադրությը, թե բանահյուսական հնագույն նմուշներն իսկ անդրադարձնում են ժողովուրդների կյանքի պատմությունը, որ նույնիսկ ամենավերացական թվացող ավանդույթներն էլ իրենց հիմքով պատմական են:

«Որ ազգի մեջ կամենա թող լինի, բայց և այնպես չկա աշխարհիս երեսին մի ավանդություն,- մեկուկես հազարամյա հեռավորությունից Խորենացուն ձայնակցում է Նալբանդյանը,- որ առանց ամենայն պատճառի առաջանար... բայց և այնպես անհնար է թե նոցա հիմքը եղած չլինի կամ մի ստույգ պատահած իրողություն կամ մի գաղափար, որի այլաբանությունը, վերջի սերունդը ընդունում է պատկերաբար, առանց նոցա մեջ թաքնված ճշմարտության կամ փիլիսոփայության վերահասու լինելու: Բայց ասիական այլաբանությունը մի աննշան բաներ են համեմատելով հունական դիցաբանության հետ»[35]:

Որպես ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը, որը մեծ քաղաքացիությամբ մինչև կյանքի վերջը ժողովրդի լուսավորության հարցերն էր առաջ քաշում՝ ձգտելով տեսնել լուսավոր ու բարգավաճ հայրենիք, շեն ու խաղաղ ապահով ժողովուրդ, Խորենացին որպես օրինակելի երկիր հիշատակում էր Հունաստանը, որի ղեկավար պետական այրերը ջանացել են մարդկության արարած մշակութային արժեքները հասու դարձնել և ծառայեցնել իրենց ժողովրդին: «Բազմաթիվ անվանի և գիտությամբ պայապած մարդիկ հունաց աշխարհից հոգ տարան հույն լեզվի թարգմանելու ոչ միայն ուրիշ ազգերի թագավորների դիվանների ու մեհյանների գրքերը... այլև և մեծամեծ զարմանալի արժանի արվեստները,- գրել է Պատմահայրը,- որոնք այս այնտեղ դժվարությամբ գտնելով փոխադրեցին հույն լեզվի... Եվ գովելի են ինչպես ուսումնասիրողները՝ իրենց ջանքի և գիտությունը ուրիշ ազգերից ձեռք բերելու համար, նույնքան և ավելի

---

[35] Նալբանդյան Մ., Եր.ժ., հատ. 3, էջ 144:

նրանք, որոնք գիտության այդպիսի գյուտերն ընդունեցին և պատվեցին»[36]:

Մ. Խորենացու այս խոսքերը Նալբանդյանի ժամանակ հնչում էին նույնքան արդիականությամբ, որքան այն Ողբը, որով Քերթողահայրը վերջացնում էր Հայոց պատմությունը:

Ըստ Նալբանդյանի՝ հայ գրականության մեջ այդ Ողբը առաջին նմուշն է այն հայրենասիրության, որ մերկացնում է ազգը բարոյալքող ու քայքայող հասարակական արատներն ու ապականված բարքերը: Մ. Նալբանդյանի գնահատմամբ Խորենացու Հայոց պատմությունը եղել է ազգի սրբազան գիրքը, իսկ նրա հեղինակը՝ ազգային առաքյալ, նվիրական հասկացություն դարերի ու սերունդների համար:

Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ ամենից երանելիները միհնչքրիստոնեական շրջանի գործիչներն են, վիպական գունագեղությամբ նկարագրված Արամը, Արտաշեսը, Տիգրանը, որոնք, ըստ Պատմահոր, շենություն ու անդորրություն են պարգևել երկրին: Եվ Խորենացու համար չկա առավել սուրբ գործ, քան այդպիսիներին մեծարելը: Մ. Խորենացու պատմության մեջ փառաբանված են ժողովրդի մշակույթին ծառայող ու նպաստող անհատները, իսկ դրանց թվում առաջին հերթին Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը: Գրական տեսակետից Խորենացու Հայոց պատմությունը հայ մտքի կոթողն է: Դրա համար էլ այսօր իսկ զարմացնում են պատմիչի կուռ, ազդու, վերին աստիճանի ինքնատիպ ոճն ու քննական հայացքը: Ըստ Նալբանդյանի՝ այնպիսի խիզախ մեծագործություն, որ կատարել է Խորենացին, ո՛չ ոք չի կարողացել կատարել ոչ նրանից առաջ և ո՛չ էլ նրանից հետո:

Մ. Խորենացու Հայոց պատմությունը Նալբանդյանին հմայել է ոչ միայն իր գիտական հիմունքներով, սկզբունքների ճշգրտությամբ, այլև քնարական հայացքով ու լայնամասշտաբ ընդգրկմամբ: Մ. Նալբանդյանն անողոք էր բոլոր նրանց նկատմամբ, ովքեր փորձ

---

[36] Խորենացի Մ., Պատմություն Հայոց, թարգմանություն Մտ. Մալխասյանի, Երևան, 1940, էջ 5:

կկատարեին նսեմացնել կամ ակամա ստվեր նետել Պատմահոր ժառանգության վրա: Այդպիսիների նկատմամբ իր անհաշտ վերաբերմունքը Նալբանդյանը շատ ավելի ընդգծված արտահայտել է Ալ. Մ. Խուդաբաշևի (Խուդաբաշյան) «Ակնարկ Հայաստանը աշխարհագրական, պատմական և գրական տեսակետներից» (ռուսերեն) 1859 թ. Ս. Պետերբուրգում հրատարակված գրքի առթիվ: Բանաքաղական (կոմպիլյատիվ) այդ աշխատության մասին Նալբանդյանը ջախջախիչ քննադատական հոդված տպագրեց «Հյուսիսափայլ» ամսագրի 6-րդ համարում և առաջին հերթին բացահայտեց, որ գրքի հեղինակը հայերի նկատմամբ ցարիզմի վարած ռուսացման գաղութային քաղաքականության քարոզչության հայազգի պարզունակ ծայնատարներից է[37]:

Գիտական հավակնություն ունեցող այդ գրքի մասին Նալբանդյանը յուրօրինակ հեգնանքով գրել է. «Մեծ հաճությամբ նայեցա վերնագրին, բայց երբ սկսեցի կարդալ, արդեն հառաջաբանը, ասես թե, ապտակ իջեցուց երեսիս...Թողունք պ. Խուդաբաշևի ծուռ և սխալական հայացքը ազգային պատմությանն մեջ երևեցած իրողությունների վերա, բայց ինչպես լուռ մնանք, մանր դևի պես պապանձված, կամ ինչպես չբողոքենք այն զրպարտությունների ընդդեմ, որ պարոնը ժողովում է մեր երանելի և սուրբ նախահարց գլխին, որպիսիք էին սուրբ Պարթևը, սուրբ Մովսես Խորենացին և սուրբ Ներսես Շնորհալին, որոնց անունը խնկվում է հայկական եկեղեցու մեջ, և որոնց գերեզմանի հողը համբուրելի են մեզ: Ինչպես չհարցնենք պ. Խուդաբաշևից, թե Խորենացու ո՞ր բառը իրավունք է տվել նրան, որ նա Խորենացուն անվանե թեթևամիտ: Խորենացին, մեր պատմության հայրը, յուր ժամանակի անգուգական փիլիսոփան, ազգի համար մինչև ի մահ աշխատողը և այն խոհեմ, ծանր, խելացի և իմաստուն ծերունին, մի թեթևամիտ հռչակել, և այն էլ օտար լեզվով, մինչ եվրոպական գիտությունը ընդունել է նորան և օրինավոր քննության առնելով հարուցել է արժանի վարձը: Ո՞չ ապաքեն առավել, քան թե

---

[37] Տե՛ս Նալբանդյան Մ., Անտիպ երկեր. խմբագրություն և կոմենտարներ Ա. Հովհաննիսյանի. Երևան-Մոսկվա. 1935. էջ 300.

թեթևամիտ է նա, որ այսպիսի անհիմն և անտեղի կարծիք ունի այն երկնաքաղաքացի ծերունու վերա: Առաջին անգամ լսելով այս բանը պ. Խուդաբաշևից, բնավ չտարակուսեցանք, որ պարոնը, կամ բոլորովին չի կարդացել Խորենացին, կամ թե չէ հասկանում նորա գրվածքը»[38]:

Մ. Նալբանդյանը ցույց տվեց, որ Ալ. Խուդաբաշևը և նրա նման տիրահաճ միջակությունները, որոնք Խորենացու պատմության մեջ տեսնում են ամեն կարգի թերություն և արատ, բայց ոչ իսկական պատմություն, նրանք ունակ չեն ընկալելու և գնահատելու մեծ գիտնականի հեղինակած պատմության իսկական արժեքը և նրա դերը ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթի մշտամնա գանձարանում: Մ. Նալբանդյանի մտավոր ժառանգության մեջ բարձր գնահատականի է արժանացած Եղիշեն, ուր հատկապես կարևորված են նրա հայրենասիրության զվարթ շունչն ու ոգին: Տակավին իր առաջին գործում («Յաղագս հայ մատենագրութեան ճառ») Նալբանդյանը Եղիշեին, Խորենացու և Փարպեցու հետ մեկտեղ, առանձնացնում է որպես լավագույն հեղինակ: Ըստ Նալբանդյանի՝ վաղմիջնադարյան ոչ մի գրող այնպիսի պատկերավորությամբ չի տվել հայ ժողովրդի սոցիալական կացությունը, օտարների հարկահանությունը, որքան Եղիշեն: «Բայց ո՞վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր էին նշանակված լեռների, դաշտերի ու անտառների վրա,- գրել է պատմիչը,- առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով, այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից, որ այդքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպե՞ս է շեն մնում այս աշխարհը[39]: Նալբանդյանը բարձր է գնահատել Եղիշեի պատմության նաև «առողջ և կենդանի հայեցողությունը», այն վերին աստիճանի լուսավոր մտքերը մարդկային բանականության և հերոսական կատարյալ սխրանքների մասին, որոնք հանճարեղ պատմիչի պատմության մեջ մարմնավորված են Վարդանանց նահատակնե-

[38] Նալբանդյան Մ., Երկեր, էջ 416:
[39] Եղիշե, Վարդանանց պատմությունը, Երևան, 1946, էջ 115:

րի մեջ՝ «...չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն»[40]:

Եղիշեի պատմությանը Նալբանդյանը բազմիցս է դիմել իրօրյա համազգային խնդիրների արծարծման ժամանակ: Հայրենասիրության մասին Եղիշեի թևավոր խոսքերը ինչքա՞ն համահունչ էին Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծության տողերին.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

Հանուն ազատասիրության պայքարի դրոշ պարզած Նալբանդյանը բարձր գնահատեց նաև Ղազար Փարպեցու ստեղծագործությունը: Փարպեցու արժեվորման վառ արտահայտությունն է Պետրապավլովյան ռավելինում 1864 թ. կատարած պատմիչի «Թղթի» աշխարհաբար թարգմանությունը՝ պատմաքննական առաջաբանով և ծանոթագրություններով:

Ո՞ր է Ղազար Փարպեցու «Թղթի» էությունը:

486 թ. մարզպան դարձած Վահան Մամիկոնյանը Փարպեցուն, որը մինչ այդ ուսումնակրթական գործունեությամբ էր զբաղվում, նշանակում է Վաղարշապատի վերակառուցված վանքի առաջնորդ: Փարպեցին վերանորոգում է վանքի շինությունները և ձեռնամուխ լինում լուսավորական աշխատանքի, որն էլ նրա դեմ է հանում հետադեմ կղերականությանը: Փարպեցին ստիպված հեռանում է ժամանակի հայ մշակույթի հայտնի կենտրոններից մեկը՝ Ամիդ (Դիարբեքիր), որտեղ և գրում է «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» ուղերձը, որը վավերական աղբյուր է V դարի վերջերին հայոց եկեղեցում գոյություն ունեցող երկու թևերի անհաշտ պայքարի մասին, երբ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մահից հետո հետադեմ հոգևորականությունը հալածանք էր սկսել առաջադեմ մտավորականության

[40] Նույն տեղում, էջ 108:

դեմ: Փարպեցու «Թուղթը» ունի փոքրիկ առաջաբան, որը Գր. Խալաթյանցի ենթադրությամբ գրել է պատմիչի աշակերտներից մեկը:

Ղազար Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնյան» ուղերձը ամբաստանագիր է ընդդեմ ժամանակի տգետ և փառասեր հոգևորականության, անհատի իրավունքների պաշտպանության փործ, միջնադարյան ազատամտության կարևոր փաստաթուղթ: Ղազար Փարպեցու «Թուղթը» առաջին անգամ հրատարակել է Մ. Էմինը 1853 թվականին: Մ. Նալբանդյանի մեկնաբանած Ղազար Փարպեցու «Թուղթը»՝ հրապարակախոսի լուսաբանումներով ճոխացած, լիովին ուղղված էր ժամանակակից աբեղաների դեմ:

Մ. Նալբանդյանին հետաքրքրել է «Թղթի» պարունակած այն իրողությունը, թե հայ հոգևորականությունը երբեք միատարր չի եղել, և նրա առաջադեմ գործիչները միշտ էլ կործանվել են հետադեմ ուժերին ընդդիմանալիս: «Թղթի» թարգմանությունը ռավելինի կալանավորը հենց այդ նպատակով էլ կատարել է:

Թարգմանության ծանոթագրություններում Նալբանդյանն աշխատել է ընթերցողին միևչև վերջ հասկանալի դարձնել Փարպեցու բարդ և այլաբանություն պարունակող մտքերը: «Թղթի» թարգմանությանը հավելած իր ծանոթագրությունների առթիվ Նալբանդյանը գրել է, թե «մեր ուսումնական եղբայրքը չնեղանան մեզ, որ այդպիսի մանրամասն ծանոթություն ենք դնում ամեն քայլափոխի-նոքա ազատ են չկարդալ, մենք հասարակ ժողովրդի համար ենք գրում»[41]:

Իր ծանոթագրություններով թարգմանիչ Նալբանդյանը մի կողմից նպատակ է ունեցել դիպուկ և հստակ դարձնել «Թղթի» բոլոր գաղափարները, մյուս կողմից՝ նրանց միջոցով անհամաձայնություն հայտնել հայագիտության սխոլաստիկական ուղեգծին, ցույց տալ Մ. Էմինի ծանոթագրությունների գիտաքննական միակողմանիությունը:

Ըստ Նալբանդյանի՝ կրոնն ու եկեղեցին կարող են միջոց լինել ազգապահպանության, եթե գործիք չեն ազգի գլխին ընկույզ փշրող իշխանավորների և սրանց թվում՝ հետադեմ եկեղեցականների ձեռքին: Նալբանդյանն առաջինն էր հայ նորադարյան պատմության

---

[41] Նալբանդյան Մ., ԵԼԺ, հատ. 3, էջ 277:

մեջ, որ հիմնավոր հերքեց կրոնական այն լեգենդը, թե հայ եկեղեցին է եղել ազգության միակ պահապանը:

Հայոց քննական պատմագիտության հիմնադիր համարված Անտոն (Մաղաքիա) Գարագաշյանից առաջ է, որ Նալբանդյանը նշել է կրոնական վեճերի, բախումների և կռիվների քաղաքական ազգավնասությունը: Առարկելով ժամանակի հետադեմ պահպանողականներին՝ Նալբանդյանը տալիս է Փարպեցու ուրվագծած եկեղեցու և ազգի հարաբերությունների այժմեական հասարակական-քաղաքական պայմաններից բխող վերլուծությունը:

Պատմագիտական առումով ավելի ընդգրկուն է Ղ. Փարպեցու «Պատմություն Հայոց» երկը, որ գրվել է մարզպան Վահան Մամիկոնյանի պատվերով: Պատմությունը բաղկացած է առաջաբանից և երեք դրվագից: Առաջաբանում պատմիչը հիշատակում է իր նախորդների՝ Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի աշխատությունների համառոտ բովանդակությունը, արժեքավորում դրանք, նշում, որ գլխավոր սկզբնաղբյուրներից բացի օգտագործել է նաև ականատեսի պատմածները՝ նախապես ստուգելով և ճշտելով:

Ղ. Փարպեցին իր աշխատությունն սկսել է 387 թ. իրադարձություններից՝ Հռոմի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին բաժանումից՝ շարունակելով Բուզանդին: Առաջին դրվագում մանրամասն շարադրված է Արշակ Երկրորդի և Վռամշապուհի գահակալության տարիների քաղաքական պատմությունը և Սասանյան Պարսկաստանի պառակտիչ ու դավադիր քաղաքականությունը մինչև Արշակունյաց հարստության (դինաստիայի) անկումը: Երկրորդ դրվագի նյութը Վարդանանց պատերազմն է, որը համընկնում է Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկի ժամանակաշրջանին և շատ ընդհանրություն ունի այդ երկի հետ: Երրորդ դրվագը, որպես սկզբնաղբյուր, ամենաարժեքավորն է, քանզի Փարպեցին իր նկարագրած դեպքերի ականատեսն էր: Այն ընդգրկում էր 481-484 թթ. ազատագրական ապստամբության պատմությունը: Պատմիչի հաղորդած տեղեկություններն անփոխարինելի աղբյուր են հայ ժողովրդի պատմության այդ ժամանակաշրջանն ուսումնասիրելու համար:

Մ. Նալբանդյանը Փարպեցու «Պատմություն Հայոց» աշխատությունը համեմատում էր Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգրություններ» երկի հետ: «Այս զուգահեռը,- գրել է Աշ. Հովհաննիսյանը,- «Պատմագրության Շեքսպիրի» հետ Նալբանդյանն իրավամբ համարում էր ամենամեծ գովքը, որ կարելի էր տալ Փարպեցու պատմությանը՝ առանց վախենալու եվրոպական գիտության դատաստանից»[42]:

Բերված օրինակները վկայությունն են այն իրողության, որ Նալբանդյանը տալիս էր հայ հին պատմագրության մեծարժեք գործերին:

Մ. Նալբանդյանի երկերի մեջ պատմագիտական հարցասիրությունը խորապես շաղկապված է նրա լուսավորական մտածողության և հասարակական-քաղաքական գործունեության հետ: Եվրոպական և ռուս հեղինակների ուսումնասիրությունը նպաստում էր նրա պատմափիլիսոփայական հայացքների մշակմանը, պատմաքննական մտքի սրմանը, հասարակական-քաղաքական նոր ըմբռնումների պարզաբանմանը: Դա հատկապես արտահայտվեց Հայաստանի պատմության աղբյուրների լուսաբանության նրա առաջադրած հայեցակետերի մեջ:

Տակավին 1854 թ. գրած իր «Յաղագս հայ դպրութեան ճառ» աշխատության մեջ լուսավորիչ-դեմոկրատը դնում էր Հայաստանի պատմության վերստուգման և վերաշարադրման հարցը: Նա նպատակահարմար էր համարում տալ հայ նոր ընթերցողին հայկական ավանդությունների ուսումնասիրությունը՝ «որպէս պահանջէին կարգք եւ օրէնք պատմաբանականք»[43]:

1860 թ. Կոմս Էմմանուելի «Հիշատակարանում» Նալբանդյանն առաջարկում է պատմական հետազոտությունների և հրատարակությունների գործն առաջ մղելու համար կազմակերպել «Հայոց պատմության և հնության ընկերություն», որի բուն նպատակն էր լինելու նպաստել Հայաստանի պատմությունը գրելու և հրատարակելու գործին: Ի՞նչ սպասելիք ուներ Նալբանդյանը նոր գրվելիք Հայաս-

---

[42] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 103:
[43] Նալբանդյան Մ., ԵԼԺ, հատ. 1, էջ 41:

յանքը»[47]: Միաժամանակ Նալբանդյանը չէր անտեսում նաև այն տխուր իրողությունը, որ Չամչյանների, Ավգերյանների, Ինճիճյանների հորինած ազգասիրական լեգենդները շատ հաճախ անառարկելի ճշմարտության տեղ էին անցնում նաև հայ լուսավորչական «գրագետների» գրվածքներում, և Ս. Ղազարի կղզում տպված գրքերի քննադատությունը բարոյական չէր դիտվում նաև սրանց կողմից: Մխիթարյանների գրականության համազգային ազդեցության Նալբանդյանի դիտարկումը ճիշտ էր ընդհանրապես: Այսպես, նույնիսկ հայ լուսավորչական այնպիսի մոլեռանդ մի անձնավորություն, ինչպես Նալբանդյանին ժամանակակից Առաքել Արարատյանն էր, ըստ ամենայնի կանգնած էր Մխիթարյանների գաղափարական դիրքերի վրա, երբ բարբաջող իր ազգամոլությամբ դիտարկում էր հայ ազգը որպես «անդրանիկ ազգ Ասիոյ եւ որպէս յաբեթասերունդ աւագապատիվ ժողովուրդ արևելյան ի սկզբանէ աշխարհի»[48]: Հայերի ծագման Մխիթարյան այս տեսությունը որդեգրելով՝ Արարատյանը հայ լեզուն բնականաբար համարում էր «...նախամարդոյն Աղամայ պարգև պսակ բանականության շնորհեալ ամենաիմաստ արարչապետէն դեռ ի խանձարուրս նորուածին կենաց և միայն դպրութեամբ կրտսեր ժամանակաւ, այն է զկնի լուսաւորութեան իւրոյ քրիստոնէական լուսով»[49]:

Մ. Նալբանդյանը ոչ միայն անողոք էր կաթոլիկ կամ լուսավորչական կղերի՝ գիտության հետ կապ չունեցող հնախոսական և պատմագիտական երկերի, այլև քննադատորեն էր տրամադրված Մ. Էմինի և Ք. Պատկանյանի պես «աշխարհիկական» պատմաբանասերների նկատմամբ: Մ. Էմինի մասին Նալբանդյանը քննադատական է-ջեր էր նվիրել ոչ միայն Ղ. Փարպեցու «Թղթի» թարգմանությանը կցած ծանոթագրություններում, ինչպես նշվեց վերևում, այլև «Վէպք հնոյն Հայաստանի» աշխատության մասին դիտողություններ իր «Յաղագս հայկական դպրութեան ճառում»: Այս հրապարակումնե-

---

[47] Նույն տեղում, ԵԼԺ, հատ. 2, էջ 49:

[48] Արարատյան Առ., Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս Հայոց, 1858, էջ 5:

[49] Նույն տեղում:

րում Նալբանդյանը կասկածի տակ էր առել հայկական բանահյուսության մասին Մ. Էմինի առասպելախառն տեսությունները: Նա վերստին Էմինին նկատի ուներ, երբ «Սոս և Վարդիթերի» կրիտիկայում նշավակելով հայացքների միջնադարյան խառնափնթորության մեջ ընկղմված հեղինակների գործելակերպի անշահավետությունը, ասում էր, թե ինքը մինչև այսօր պարտական է մնացել առաջ քաշելու դրանց դեմ այն արդարացի մեղադրությունները, որոնց դրանք լիամասն կերպով արժանի են:

Ինչպես ակնարկել ենք վերևում, Մ. Նալբանդյանը հայեցակետային անհամաձայնություն ուներ նաև Ք. Պատկանյանի հետ: Խոսքը մասնավորապես այն մասին է, որ Ա. Ա. Կրաևսկու հանրագիտարանում կարդալով Հայաստանի պատմության մասին Ք. Պատկանյանի շարադրած տեսությունը՝ Մ. Նալբանդյանը շատ մեղմ ու բարեկիրթ հեգնանքով գրել է. «Եթե ես բանտարկված չլինեի, աշխարհի և ոչ մի բարիքի համար էժան չէի ցստեցնիլ պ. Պատկանյանին նրա՝ հայոց պատմության վերաբերյալ գրած հոդվածը: Ասենք, ավելի լավ հոդվածներ, այդպարացիորեն դատելով, չէին էլ պատշաճիլ այդ բառարանին-այժմ դրանք լավ են ներդաշնակում իրար և դրանց ստեղծողները, հավանորեն հանգիստ են վայելում դափնիների վրա»[50]: Այստեղ պակաս կարևոր չէ Նալբանդյանի արհամարհանքը Կրաևսկու հանրագիտակցի հրատարակության նկատմամբ, որը տխուր համբավ ուներ որպես գրական վաշխառու, որպես Բելինսկուն շահագործող, որպես Չեռնիշևսկու և Դոբրոլյուբովի գլխավորած «Սովրեմեննիկ» պարբերականի բացահայտ թշնամի[51]: Կրաևսկին լիբերալ-պահպանողական «Օտեչեստվեննիե զապիսկի» ամսագրի խմբագիրն էր: Նալբանդյանի տողերը նրա հանրագիտարանի մասին իրենց վրա կրում էին հեղափոխական դեմոկրատիայի դիրքորոշմանն ընդառաջող հոսանքայնության տրամաբանական կնիքը:

Անկախ այս ամենից ակնբախ էր, որ Նալբանդյան հայ ազգային մտածողը համաձայն չէր «եվրոպական հասկացողությամբ գի-

---

[50] Նալբանդյան Մ., Անտիպ երկեր, էջ 173:

[51] Տե՛ս Նալբանդյան Մ., ԵԼԺ, հատ. 4, էջ 139:

տուն» Ք. Պատկանյանի մեթոդին, «առասպելախառն պատմագիտության» նրա հայացքներին, պատմականությունից կտրված նրա եզրահանգումներին: Այստեղ նա ընդգծում էր իր կողմից բազմիցս մեծարված Ղ. Փարպեցու պատմագրական այն հրահանգը, թե «չպետք է ընդունայն ավելորդաբանությամբ հնարել չեղածը կամ անփույթ համառոտությամբ զեղջել եղածը, այլ ամեն ինչ ի հայտ բերել ողջախոհ զգուշությամբ»[52]:

Ա. Կրաևսկու հանրագիտարանում զետեղած իր հոդվածում Ք. Պատկանյանը գրել է, թե սրի քաշելով հայ նախարարներին՝ արաբները հասան նրան, որ հայերին զրկեցին առաջնորդներից և ոչնչացրին նրանց մեջ ամեն մի միտք ազատության մասին: Շատ ավելի ուշ՝ 1873 թվականին, Պատկանյանը, վերհիշելով 1720-ական թվականների Սյունիքի ազատագրական պայքարի տարիները, պիտի գրեր, որ «այդ պայքարը վերջինն էր, որ մղել էին հայերը իրենց անկախության համար: Այդ ժամանակից ի վեր նրանք կորցրել են անգամ անկախության զգացմունքը և պահպանել հն միայն կապ իրենց ազգային կրոնի հետ»[53]:

Դյուրին չէ հաշտվել այն մտքի հետ, թե քննադատելով Հայաստանի պատմության Ք. Պատկանյանի հայեցակետը՝ Նալբանդյանը կարող է համաձայնել այն մտքին, որ արաբական սուրը հայությունից խլել էր ազատության բաղձանքը:

«Կարծել այդ՝ կնշանակեր,- տեղին նկատել է Աշ. Հովհաննիսյանը,- թե հայոց պատմություն ասելով նա կամենում էր հասկանալ սոսկ հայ թագավորների և նախարարների պատմությունը... կարծել այդ կնշանակեր անգիտանալ այն իրողությունը, որ հայոց պատմության ֆեոդալական ամբողջ ժամանակամիջոցը, ներառյալ նաև 14–18-րդ դարերի ֆեոդալիզմի անկման էտապը, հանդիսանում է ոչ միայն հայ ժողովրդի գոյության և կուլտուրական զարգացման, այլև նրա ազատագրման համար մղված բազմադարյան պայքարի ժամա-

---

[52] Փարպեցի Ղ., Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 16 (Փարպեցու խոսքերը Աշ. Հովհաննիսյանի թարգմանությամբ – Ն. Ս.):

[53] Патканов К., История монголов по армянским источникам, СПб. 1873, с. 73.

նակաշրջան... Հայաստանի պատմության միջնադարյան էտապի ուրույն օրինաչափությունների անտեսումով Նալբանդյանի տեսադաշտից դուրս էր ընկնում երկրի պատմության ֆեոդալական օղակը: Պատմական նրա կոնցեպցիայի մեջ աննշմարելի է գրեթե ֆեոդալական հողատիրության և ֆեոդալ ազնվականության դերը»[54]:

Հարկավ, միջին դարերում Հայաստանի պետականազուրկ գոյությունը չուներ ներքին միասնություն: Օտար իշխանների կամքով ու թելադրանքով բզկտված նրա տարածքների միջև չկար տնտեսական և հասարակական կյանքի կապ ու օրինաչափություն: Ավելին, Նալբանդյանն արդեն վաղ միջնադարում Արշակունյաց Հայաստանի պետականության կործանումը դիտում էր որպես հայ քաղաքական մշակութային գոյության վերջալույս: Մի հայացք էր սա, որ գալիս էր XVIII դարի լուսավորիչներից, որոնք միջին դարերն ընկալում էին որպես եկեղեցու գերիշխանությամբ պայմանավորված մտավոր ստրկության և խավարի տիրապետություն, որպես վայրէջքի և ավերումի բազմադարյան մի ժամանակաշրջան: Ըստ Աշ. Հովհաննիսյանի՝ յուրովի հետևելով XVIII դարի լուսավորիչներին, Նալբանդյանն էլ գիտակցում էր Հայաստանի պետականության «անտիկ» շրջանի դրական նշանակությունը և միանգամայն անգիտանում կամ ուղղակի մերժում դրան հաջորդած ֆեոդալական պատմաշրջանի դերը: Բայց, ցավոք, դրանով նա անտեսում էր դարերով ֆիքսված այն անհերքելի իրողությունը, որ միջին դարերի ճնշումների և կեղեքումների ֆեոդալական տիրապետության ժամանակաշրջանում կազմավորվեցին այսպես կոչված տեղական թագավորություններ և իշխանություններ, քաղաքային նորատիպ կենտրոններ՝ նախադրյալներ ստեղծելով նրա քաղաքական և մշակութային առաջընթացի համար: Գաղտնիք չէ, որ երկրի տնտեսական և մշակութային ամենափոքր առաջընթացն իսկ անմիջական հետք էր թողնում վանական մշակույթի «միջնադարյան ուղղության» վրա: Աշխարհիկ կենցաղավարությունն ու մտավոր տեղաշարժը ակամա թափանցում էին նույնիսկ վանական մռայլ խուցերի ներսը, տարածում իրենց կենարար ճառագայթները

---

[54] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը. գիրք երկրորդ, էջ 516:

նրանց կամարների տակ առաջադիմող գիտության, գեղարվեստի, գրչության վրա:

Անտարակույս, Հայաստանում հաստատվող օտարատիրությունը խոչընդոտում էր պատմական զարգացման բնականոն ընթացքը, բազմապատկում ժողովրդին ճնշող ու հարստահարող ֆեոդալիզմի դաժանությունը և հետ մղում պատմության առաջընթացի անիվը: Բայց միևնույն է, չպետք է մոռանալ, որ օտարատիրությունն իսկ ուներ իր օրինաչափությունը: Հպատակ ժողովրդի ինքնակայունության սահմանների պայմաններում անգամ մինչև XVIII դարը վերացած չէ իսպառ երկրի դանդաղ տեղաշարժի ընթացքը, որն իր հերթին դարձյալ օրինաչափորեն ցոլանում էր նաև նրա ազատագրական ջանքերի մեջ: Նալբանդյանի տեսադաշտից վրիպում են նման կարգի երևույթները: Նա բոլորովին կամ գրեթե բոլորովին անտեսում էր IX դարից մինչև XIII դարի սկիզբը տևած այսպես կոչված հասուն ֆեոդալիզմի շրջանը՝ ակնարկ իսկ չանելով այդ ժամանակաշրջանի ճարտարապետական հուշարձանների և արվեստի այլ արժեքների մասին: Նրա խորաթափանց հայացքից զարմանալիորեն դուրս են մղվել անգամ ճարտարապետական հուշարձանների պատերին դրոշմված ազգային հսկարտություն քարոզող արձանագրությունները՝ երկրի ու ժողովրդի կացությունը մի հայտնի չափով արտացոլող ժամանակի խոսուն վկաները: Հայացքով շրջված դեպի ապագան՝ Նալբանդյանը բացասական, մերժողական կողմերով էր վերապատկերում Հայաստանի միջնադարը, մանավանդ Ռուբինյան հարստության անկումից հետո: Ըստ Նալբանդյանի՝ դրանով հայերը կորցրին իրենց ազատության վերջին մնացորդը՝ ցաքուցրիվ լինելով աշխարհի տարբեր կողմերում: Հայոց վերջին թագավորության անկումից հետո ստեղծվեց մի «Տխուր տեսարան,- գրում է Նալբանդյանը,- ողբալի դրություն, որի մեջ մեր... ազգի կյանքը օրստօրե վայրենացավ, նախնի ժամանակների հստակ հայասիրությունը աղավաղվեց և մի անմխիթար, աղջամուղջ գիշեր տարածեց առհասարակ Հայաստանի հորիզոնի վրա յուր խավարի վարագույրը...Հայոց ազգը

առանց աչք բանալու քնում է միալար չորս հարյուր տարի - մինչև տասնութերորդ դարի սկիզբը»[55]:

Մ. Նալբանդյանի պատմահասարակագիտական հայացքների վրա մեծ ազդեցություն է թողել (ռուս հեղափոխական-դեմոկրատիայի հայտնի դեմքերից բացի) անգլիական ազատամիտ, ռադիկալ հայացքների տեր պատմաբան Հենրի Թոմաս Բոքլը (1822-1866), որն իր «Քաղաքակրթության պատմությունը Անգլիայում» աշխատությամբ հիմք դրեց պատմագիտության նատուրալիստական դպրոցին: Բոքլի հայացքների վրա անմիջականորեն ազդել էին բնագիտության XIX դարամիջյան վերելքը և դրա հետևանքով դիրք նվաճած պոզիտիվիզմը: Մարդկային պատմության որոշիչ գործոնը, ըստ Բոքլի, «նախախնամությունը չէ և ոչ իսկ մարդկային «ազատ կամքը», այլ նյութական աշխարհի և մարդկային ոգու օրինաչափ փոխազդեցությունը: Քաղաքակրթության ստորին աստիճանի վրա գերակշիռ ուժ ունի բնությունը, զարգացման բարձր աստիճանի վրա՝ ոգին, մարդու հետախուզվող և բնությունն ընկճող միտքը: Ըստ Բոքլի՝ քաղաքակրթության գլխավոր խոչընդոտներն են միշտ եղել հասարակությունը միշտ խնամակալող եկեղեցին և պետությունը: Անգիտանալով հասարակական արտադրության և տնտեսական հարաբերությունների որոշիչ դերը՝ պատմական գործընթացի օրինաչափություններն ուսումնասիրելիս Բոքլը լայնորեն կիրառում էր վիճակագրության և ազգագրության տվյալները և մեծ տեղ հատկացնում աշխարհագրական միջավայրին:

Մ. Նալբանդյանի վրա գործուն ազդեցություն են թողնում Բոքլի խոր հավատը դեպի մարդկային մտքի զորությունը, նրա պայքարը օբսկուրանտիզմի և կղերամտության դեմ, նրա քաղաքական ռադիկալիզմը և, մանավանդ, նրա ձգտումը՝ ըմբռնել պատմությունը որպես բնական օրինաչափությամբ զարգացող երևույթ: Աշ. Հովհաննիսյանը նկատել է, որ նատուրալիստական հասարակահայացքի հիմնաղիր համարելով Հենրի Բոքլին՝ Նալբանդյանը զանց էր առ-

[55] Նույն տեղում, էջ 117:

նում պոզիտիվիստական սոցիոլոգիայի հեղինակ Օգյուստ Կոնտին (1798-1857):

Պատահակա՞ն էր այս: Բնավ, ոչ: Եթե, ըստ Նալբանդյանի, Ռոքլի մոտ ոգին հնազանդ է բնությանը, Կոնտը, ընդհակառակը, ելնում էր այն դրությունից, թե գաղափարներն են, որ ղեկավարում և շուռ են տալիս աշխարհը: Այլ խնդիր է, որ ըստ էության նատուրալիստ Ռոքլը գրեթե նույնքան հեռու էր «քարոյական մարդկության» կենսաբանությունը ըմբռնելու կարողությունից, որքան պոզիտիվիստ Կոնտը[56]:

Սրանից ելնելով, Աշ. Հովհաննիսյանը նկատում է նաև, որ Նալբանդյանի հասարակահայացքի մեջ ակներև է ներքին մի հակասություն: Ռոքլի ազդեցությունը նրան խանգարում էր ըմբռնելու, որ քաղաքակրթության ընթացքը չի որոշվում ինքնին վերցրած բնական-աշխարհագրական պայմաններով, այլ այն հարաբերությունների զարգացումով, որոնք առաջանում են հասարակական արտադրության գործընթացում: Եթե, մի կողմից, նա մարդկային կամքն ու բանականությունը բացատրում էր «շրջապատող աշխարհի» ազդեցությամբ, մյուս կողմից, չափում էր ժամանակի ընթացքը, սոսկ մարդկային մտքի ու հայացքների հոլովույթով: «Հայտնի է,- գրել է Նալբանդյանը,- թե ինքը ժամանակը ուրիշ բան չէ, եթե ոչ հասկացողության և կարծիքի գումար, որևիցե առնված հասարակության առնված միջոցում»[57]: Այստեղից հետևում է, որ ըստ Նալբանդյանի՝ ոչ թե հասարակական հարաբերությունների ընթացքում է որոշվում նրանց հասարակական գաղափարախոսության վիճակը, այլ ընդհակառակը, այլ վերջինն է պայմանավորում հասարակական զարգացման գործընթացը:

Մ. Նալբանդյանի մեզ հասած պատմագիտական որակումների մեջ չկա պատմության մեջ ժողովրդի և անհատի դերի հասարակագիտական և սոցիոլոգիական իմաստավորումներ: Նրա պատմաքննական դիտողությունների հատուկ օբյեկտ չեն դարձել հին և

---

[56] Հովհաննիսյան Աշ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 487:
[57] Նալբանդյան Մ., ԵԼԺ, հատ. 3, էջ 293:

միջնադարյան Հայաստանի ժողովրդական շարժումների, գաղափարական հոսանքներին և հակամարտերին առնչված խնդիրները, սակայն Հայաստանի ներքին կյանքի լուսաբանությունը նրան հետաքրքրել է ոչ թե հնախոսական և կենցաղագրական նեղ շրջանակներում, որոնց մեջ կամենում էին դիտել Հայաստանի պատմական կյանքը Մ. Էմինը, Կ. Եզյանը, Ստ. Պալասանյանը, Ստ. Նազարյանը, Ք. Պատկանյանը և նրա ժամանակակից այլ գիտնականներ: Նալբանդյանն այն տեսակետն էր պաշտպանում, որ Հայաստանի պատմության սպիտակ էջերում պետք է գրվեն ազգի ընտանեկան կյանքը, բոլոր հասարակախավերի առտնին կենցաղը: Կարևորելով վիճակագրական տումնասիրությունները՝ նա միաժամանակ չէր անգիտանում, որ առանց սոցիալական տարբերակման մեթոդի կիրառման անհնար է թափանցել հասարակության անտեսանելի ներքնահարկը, պատմությունն ուսումնասիրողի մեջ հետաքրքրություն առաջ բերել հայրենի երկրի ճակատագրի, նրա ժողովրդի անցյալի ու ներկայի կացության նկատմամբ: Նալբանդյանը պայքարի կոչ էր անում «արծաթե թումբերի» տակ պատսպարված ազգի վամպիրների դեմ:

Աշ. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ ստեղծագործական կյանքի մեկնարկին Նալբանդյանը տակավին ուներ պատմական գործընթացի մի ըմբռնում, որը մեծապես ազդված էր կրոնական-իդեալիստական նախապաշարումներից: Վաղ շրջանի նրա պատմագիտական հայեցակետի մեջ բաժին ուներ դեռևս «նախախնամության» շունչը: Բիբլիական ավանդությունը և այդ ավանդությանը հարող Չամչյան-Ինճիճյան կղերամիտ ազգասերների հայացքները նկատելի նստվածք ունեին Նալբանդյանի պատմահասարակագիտական մտաշխարհի ծալքերում: Ինչու՞ անտեսել այն իրողությունը, որ Նալբանդյանի գրչի տակ Հայաստան աշխարհը ևս հայտնվում էր որպես մի երկիր, որտեղ խորտակվում են համաշխարհային աշխարհակալները, կամ երբ նա ներկայացնում է նույն Հայաստանը իբրև առաջին այն երկիրը, որ «լուսավորեց քրիստոնեական հավատի լույսով» և հերոսաբար պաշտպանեց իր կյանքի ազատությունը: Գիտական քննադատության չդիմացող նման հետադարձ «չեղումները» Նալ-

բանդյանի ընդհանուր կողմնորոշման մեջ ուներ թերևս միայն ժամանակի կացությունից թելադրված ազգային-քաղաքական արդարացում: Դրանով թերևս հեղինակը կամենում էր ընթերցողին ներշնչել այն միտքը, թե հայերը կամովին չեն նահանջել իրենց ազատության դեմ կանգնած բռնությունների առաջ: Չմոռանանք, որ Նալբանդյանն այս կարծիքը հայտնում էր փոքր ժողովուրդների ազատությունը տրորող ցարական Ռուսաստանում XIX դարի կեսին, երբ կայսրությունում տիրող կացությունը չէր մատակարարում մտավոր ազատ միջավայր պատմական անցյալի և ներկայի փոխառնչությունների աննախապաշար ճանաչողության համար: Հասունացող սոցիալ-քաղաքային ճգնաժամի հաջորդ տարիներին միայն Նալբանդյանը գաղափարաբանությամբ վճռական շրջադարձ կատարեց պատմական կաշկանդված նախապաշարմունքների մշուշը ցրելու ուղղությամբ: Այդ մասին են վկայում «Երկու տող», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Ղազար Փարպեցու Թուղթը», «Հեգելը և նրա ժամանակը» ստեղծագործությունները, որոնցում նա կարողացավ արմատականորեն հաղթահարել պատմահասարակագիտական երևույթների գնահատման երբեմնի կաշկանդումները և նույն երևույթների բացահայտման հիմք ընդունել գործընթացների արժեվորման դիալեկտիկական ըմբռնումը:

Մ. Նալբանդյանը ոչ միայն XIX դարի 50-60-ական թվականների հայ արմատական դեմոկրատական շարժման ամենաերևելի դեմքն էր՝ բանականության ու խղճի բոլոր թելերով շաղկապված ժողովրդի հետ, մարտնչողի արիությամբ ամենաանկաստ պայմաններում կարողանալով մնալ հասարակական հոսանքը գլխավորողի դերում, այլև որպես գրչի մարդ աննախադեպ հետաքրքրական, բացառիկ երևույթ էր ժամանակի հայ գիտական հրապարակագրության մեջ՝ նոր բարձր մակարդակի վրա դնելով ազգի նաև հասարակագիտական և պատմագիտական միտքը:

# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Զարմանալիորեն բարեհաճ էր բնությունը Աշոտ Հովհաննիսյանի նկատմամբ: Գիտելիքների լայնածավալ ընդգրկում, ստեղծագործող կյանք, անկեղծություն և սկզբունքայնություն, խոսքի ու գործի ներդաշնակություն՝ ահա անհատականության որակների այս համակցությունն էր տասնամյակներ շարունակ ուղեկցում Աշոտ Հովհաննիսյան քաղաքացուն ու գիտնականին: Կյանքում չի եղել իրեն հրապուրող որևէ պատմական իրադարձություն, որի քննությանը նվիրվեր և չասեր իր ինքնությունը հաստատող խոսքը: Հիշենք թեկուզ հետաքսորյան ժամանակաշրջանը, նրա 1950-1960-ական թվականների հրապարակումները, որոնցից յուրաքանչյուրը՝ վերաբերեր դա հայ ազգային-քաղաքական հոսանքների, կուսակցությունների ծագման և կայացման պատճառների բացահայտմանը, հայերի քաղաքական կողմնորոշումների ուսումնասիրությանը, Հայաստանի պատմության ներգափոխման մերկացմանը, մշակութային արժեքների անշեղ գնահատման հարցերին՝ լայն արձագանք էին գտնում հայ մտավորականության ամենաստարբեր շերտերում: Յուրաքանչյուր հրապարակման մեջ գիտնականն ընթերցողին կանգնեցնում էր հանկարծական անակնկալի առաջ, պարտադրում՝ շարժել միտքը, մտածել, խորհել իր իմացածի և չիմացածի շուրջ: Աշ. Հովհաննիսյանը երբեք կաղապարված արտահայտություններ չէր շրջանառում: Նրա հրապարակումները ակնբախ էին դարձնում, թե որքան խորքային գիտի այն, որի մասին գրում է: Իրենց գիտական ընդգրկումներով նրա հրապարակումները առանձնանում էին համապարփակ ընդհանրացումներով, տարածում գտած կարծիքների և տեսակետների հիմնավոր և համարձակ վերանայումներով: Նա գիտական պատմականության դիրքերից կարողանում էր գնահատել ու վերագնահատել պատմական անցյալի տակավին համառող բանաձևումները:

Աշոտ Հովհաննիսյանը, որպես պատմաբան ուներ իր գաղափարաբանությունը: Խոսքն այն գաղափարաբանության մասին է, որ նմանակված չէ որևէ քաղաքական ուղղության տեսությունից, ունի

սեփական հայեցակետ՝ նայելու պատմական իրադարձություններին և դրանցում որոշակի դերակատարություն ունեցող երևելի անհատներին: Ըստ Աշ. Հովհաննիսյանի, եթե պատմաբանը չունի նման մերձեցում, ապա նա ինչքան էլ ջանա շատ փաստեր կուտակի, միևնույն է, լավագույն դեպքում կդառնա կատարվածի սոսկ արձանագրող: Որպես հետազոտող, Աշոտ Հովհաննիսյանն ուներ անցյալի երևույթների և իրողությունների խոսքը թափանցելու իր իմաստասիրությունը, ըստ որի ժողովուրդների կյանքում տեղի ունեցած ամեն ինչ անհրաժեշտությունների ու պատահականությունների դիալեկտիկական միասնության բնականոն գործընթաց է: Նրա ստեղծած պատմագիտական համակարգը երևույթների խորքը թափանցող գիտություն է: Պատմական գործընթացները և շրջադարձերը, վերընթացներն ու վարընթացները քննական հայացքի ներքո իմաստավորելու դիրքերից են գրված նրա ոչ միայն հիմնարար աշխատությունները, այլև ժամանակի, պահի անհրաժեշտությամբ թելադրված գիտահրապարակախոսական հոդվածները: Աշ. Հովհաննիսյանի անդրանիկ գործերն իսկ վկայում են, թե ինչքան խորն է նա զգում անցյալի մտավոր ժառանգությունն իրօրյա ժամանակաշրջանի հետ առնչակցելու անհրաժեշտությունը, հայոց մշակութային պատմության շրջադարձային որակները անշեղ գնահատելու կարևորությունը: Ի տարբերություն էմպիրիկ պատմագրողների, անցյալի և ներկայի կապի հայտնաբերման և զուգորդությունների շղթան նրա գիտական հետազոտությունների մեջ ունեցան խորապես հասարակական արդիական նշանակություն, կապ, որի մեջ նա տեսավ իր ժամանակակցի հոգևոր-բարոյական հասունությունը՝ ամրապնդելով նրանում գործուն կյանքի լինելիությանը նպաստող կայուն հավատը:

Աշ. Հովհաննիսյանը հետազոտողի իսկական խառնվածք էր՝ որոնող, խոհուն, հավասարակշռված, փաստերով ծանրաբեռնված, բազմակողմանի հետաքրքրությունների և լայն մտահորիզոնի տեր: Նա ինչ որ անում էր հայագիտության ասպարեզում, անում էր անսահման նվիրումով, հետազոտվող թեման նոր մակարդակի բարձ-

րացնելով, անում էր փաստերի, ապացույցների, եզրակացությունների մի ամբողջ շտեմարան շարժելով:

Աշոտ Հովհաննիսյանի բանաձևմամբ՝ քաղաքակիրթ մարդու առաջին հատկանիշը կամ արժանիքը հայրենասիրությունն է: Լինելով մեծ հայրենասեր և դրվատելով ազգայինը, նա ուներ նաև համամարդկային մտավոր արժեքների պաշտամունք: Այստեղից էլ նրա առաջադրած ծրագրային բանաձևումը. *«Մեծարել ազգային պատմության լուսավոր դրվագները՝ չի նշանակում քողարկել նրա անցյալի կամ ներկայի մռայլ էջերը»* (Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, էջ 509, ընդգծված տողերը մերն է –Ն. Ս.):

Ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում գիտնականը հավատարիմ մնաց վերոհիշյալ բանաձևմանը: Մենագրության մեջ ձգտել ենք ցույց տալ, որ Աշոտ Հովհաննիսյանը ոչ միայն պատմաբան, այլև կենդանի, քայլող պատմություն էր: Նրա մտավոր ներաշխարհը մի մեծ կամերտոն էր, որտեղ արտահայտվում էին XX հարյուրամյակի բոլոր տատանումները: Թերևս կային այնտեղ նաև բեկված հնչյուններ, անհամաչափ ամպլիտուդներ, բայց դրանք գալիս էին դարից և ոչ կամերտոնից:

Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգության մեջ համատեղված են և՛ ազգային պատմության լուսավոր դրվագները, և՛ անցյալի ու իր ապրած դարի մռայլ էջերը:

Հայացքը հառած հայ ազատագրական մտքի բեկումնային մակընթացություններին ու տեղատվություններին, շատ ամուր գամված ազատասիրության գաղափարին, արմատները ձգած հայ մշակութային շերտերի ընդերքը, նա պատմագիտության պահեստարանը հարստացրեց հիմնարար երկերով, ուղեցույցային հրապարակումներով: Նրա պատմագիտական հետազոտությունների հերոսները ազատության համար պայքարի՝ ժամանակի հայ իրականության ռահվիրաներ էին, որոնց վերելքներն ու վայրէջքները, ուրախությունն ու ողբը, լավատեսությունն ու հիասթափությունը, որքան ազգային իրականության ծնունդ էին, բայց և ուներին համամարդկային բնույթ, հասկանալի էին ամենուրեք, ուր առկա էին վերանորոգման ու բարե-

նորոգման պայմաններ, տենչ ու բարեշրջման անհրաժեշտության ձգտող կեցություն, որոնց բոլորի համակցությունը դրանք դարձնում են հասարակական կյանքի առաջընթացի ճանապարհը հարդարող պահանջվածություն:

Աշ. Հովհաննիսյանի աշխատությունները իսկական գլուխգործոցներ են ոչ միայն իրենց մեթոդաբանական սկզբունքներով, այլև գիտահետազոտական մասշտաբների համապարփակ իրացումներով: Պատմաբանը հետազոտական ընդգրկումների իր քննական-վերլուծական չափանիշներով ընդլայնեց հարցասիրությունների շրջանակները: Սոցիալական, հասարակական-քաղաքական կյանքի հանգուցակետերում քննելով հայ երևելի գործիչների անհատականությունները, նա գիտական համակարգի տակ դրեց հասարակության բազիսի ու վերնաշենքի երերումների օրինաչափությունները, հետադարձ և առաջադարձ տարածումներով բացահայտեց բոլոր այն կապերը, որոնք XIX դարավերջը կապում, միացնում էին անցյալի հետ և դիալեկտիկական այդ միասնության մեջ ի հայտ բերում անցյալ, ներկա ու գալիք ժամանակների հասարակական մտքի ու շարժման փոխկապակցված օրինաչափությունները: Եվ ինքնին հասկանալի են դառնում այդ օրինաչափությունների գիտական նշանակությունը Հայաստանի պատմության մեթոդաբանության տեսակետից, երբ, ինչպես նշել ենք աշխատության ներածության մեջ, Աշ. Հովհաննիսյանն իր «Ուրվագծեր XIX դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային-քաղաքական կուսակցությունների պատմության» աշխատության մեջ ուսումնասիրության շրջանակների մեջ առավ բոլոր երևելի գործիչների, հրապարակախոսների, գրողների աշխարհայացքային հարցադրումները, վերլուծեց հոսանքների ու կուսակցությունների սոցիալ-քաղաքական կացության առանձնահատկությունները՝ դրանով իսկ ամբողջականացնելով ժամանակի հասարակական-քաղաքական այն մթնոլորտը, որի մեջ պարտադրված գոյատևում էր հայ համազգային գաղափարաբանությունը:

Անգնահատելի է Աշ. Հովհաննիսյանի ստեղծագործական ժառանգության գիտական արժեքը հայագիտության, մասնավորապես ազատագրական մտքի ու շարժման ուսումնասիրության ասպարեզում: Հովհաննիսյանը գիտական նոր բարձունքի վրա դրեց հայ պատմագիտական միտքը՝ իր մշտական տեղը վավերացնելով հայագիտության դասականների շարքում: Նրա գիտական ժառանգությունը մշտամնա արժեք է բոլոր ժամանակների համար:

# РЕЗЮМЕ

Видный общественно-политический деятель и ученый-историк Ашот Гарегинович Иоаннисян (1887-1972 гг.) прошел большой и славный путь.

Юность Аш. Иоаннисяна совпала с периодом бурных политических потрясений, размахом революционной и национально-освободительной борьбы. В этой сложной политической обстановке Аш. Иоаннисян, еще будучи учащимся Шушинского реального училища, навсегда связал свою судьбу с революционным движением, видя в нем единственный путь социального и национального освобождения армянского народа. Этот выбор стал определяющим для всей последующей деятельности Аш. Иоаннисяна – как общественно-политической, так и научной.

Вступив в 1906 году в ряды РСДРП, он стал одним из активных бойцов революционной гвардии, а после установления советской власти в Армении крупным государственным и партийным деятелем.

Кем бы он ни работал – заведующим литературно-издательским отделом, комиссаром по армянским делам Народного комиссариата по делам национальностей РСФСР, народным комиссаром просвещения Советской Армении, первым секретарем (1922–1927) центрального комитета компартии Армении – Аш. Иоаннисян всегда был беззаветно предан делу консолидации армянского народа. С именем Иоаннисяна связаны важнейшие мероприятия молодой Советской Армении в области культурного строительства, первые успехи в восстановлении и развитии экономики республики. Партийную и государственную деятельность Аш. Иоаннисян совмещал с плодотворной научной работой. Блестящая историко-философская подготовка, полученная за годы обучения в университетах Германии, широкая эрудиция, смелость и оригинальность суждений, владение лучшими традициями

арменоведения и русской историографии – все это явилось основой для формирования Аш. Иоаннисяна как ученого широкого диапазона, ставшего первым профессиональным историком – марксистом в армянской действительности. Необычайно широк круг научных интересов Аш. Иоаннисяна. Им опубликовано более 120 научных работ, которые хронологически охватывают громадную эпоху – с V века до 70-х годов XX века, а тематически посвящены многим вопросам политической истории, социально–экономических отношений, общественной мысли, филологии и философии. Но стержнем его исследований является изучение кардинальных вопросов истории армянского национально–освободительного движения и его идеологии, к разработке которых он приступил с первых же шагов своей научной деятельности. В докторской диссертации, посвященной одному из выдающихся деятелей армянского освободительного движения Исраэлу Ори и изданной на немецком языке в 1913 году, молодой ученый наметил основные пути, по которым впоследствии должны были развиваться его научные интересы.

Исследуя в течение многих лет историю армянского освободительного движения и общественной мысли, Аш. Иоаннисян обобщил результаты своих изысканий в таких капитальных трудах как "Очерки истории армянской освободительной мысли" (в 2 томах). "Налбандян и его время" (в 2 томах).

Справедливо рассматривая историю социальной и освободительной борьбы в качестве стержня многовековой истории армянского народа, Иоаннисян впервые в армянской историографии с позиции подлинного историзма дал освещение истории армянского национального-освободительного движения и его идеологии на огромном временном протяжении – с V века до 60-х годов XIX столетия. Автор приходит к выводу, что идея восстановления государственной независимости армянского народа являлась господствующей на протяжении многих веков – от падения царства Аршакидов и до

второй половины XIX века. Наряду с этим, он с большим мастерством показал роль народных масс в освободительном движении, подлинное содержание средневековых крестьянских движений в противовес политическим устремлениям светских и духовных феодалов.

В своих трудах ("Очерки истории армянской освободительной мысли", "К предыстории ориентации армян на Россию") Аш. Иоаннисян подчеркивает, что исторические связи, возникшие между народами по обе стороны Кавказского хребта еще до начала нашей эры, наличие товарообмена между этими народами в эпоху раннего средневековья подтверждаются как археологическими фактами, так и свидетельствами сирийских, арабских, византийских и армянских письменных источников. Позднее товары купцов–армян проникали к булгарам Поволжья. Армянские поселения Поволжья в своем составе насчитали большое количество ремесленников и купцов. В свое время многие из них перемещались на север монгольскими завоевателями, принуждавшими их к обслуживанию своих армий.

Впоследствии значительная их часть переселилась в Крым. Установив связи с итальянскими факториями полуострова, господствующая их верхушка принимала активное участие как в сухопутном, так и водном товарообороте между Востоком и Западом. Несмотря на то, что после падения Константинополя былое значение средиземноморской и левантийской торговли было утеряно, армяне Крыма поддерживали торговые связи Украины, Польши и Юга России с городами и портами Востока, – даже после захвата Крыма турками.

Далее Аш. Иоаннисян отмечает, что после взятия Казани и Астрахани торговля России с Ираном вступила в полосу некоторого оживления. При Иване IV становятся заметными попытки Московского государства "приласкать купцов" – армян в целях усиления торговых связей с Ираном и особенно для поощрения вывоза главного объекта иранской торговли – шелка-сырья через волжский путь. Покровительственная политика Московского государства в отношении

купцов–армян начинает усиливаться в XVII веке в связи с заключением московским правительством торгового договора с представителями Новоджульфинской армянской торговой компании.

В результате этого договора армянский товарооборот через Россию значительно увеличился. Однако крупное армянское купечество не отказывалось ни от старых путей иранского экспорта, ни от старых связей с иностранными контрагентами Ирана. Положение не изменилось даже при Петре I, несмотря на все предпринятые этим царем меры для оказания давления на шахское правительство и на крупное купечество Ирана. Известно, тем не менее, что в эпоху Петра I необычно усилились политические связи России с народами Закавказья и, в частности, с армянским народом. Не менее известно и то, что в это же время, и особенно к концу царствования Петра, чрезвычайно усилилась также и политическая тяга армян к России, которую они признавали единственной своей опорой в неравной борьбе с турецкой агрессией. Несмотря на то, что некоторое оживление торговли содействовало развитию русско-армянских отношений, все же было бы неправильно искать только в этом реальную причину для возникновения или усиления политической ориентации армян и армянской освободительной мысли на Россию.

На протяжении ряда столетий как освободительное движение армян, так и различные его идейно-политические направления формировались в феодально-церковной народной среде Армении.

В армянских фольклорных, литературных и историографических источниках XV–XVII веков Московское государство начинало фигурировать в роли покровителя освободительной борьбы угнетенных народов Востока против чужеземных захватчиков. Ясно выраженные в этих источниках умонастроения связаны лишь с теми кругами армянского населения, которые в той или иной мере испытывали тяжесть господствовавшего в Турции или Персии социального или национально-политического гнета.

Положение начинает меняться с конца XVII века. Это было время, когда экономический упадок Турции и Персии и усиливающийся в связи с этим гнет этих государств по отношению к населению создавали условия для роста центробежных сил в этих странах. Вместе с тем наблюдается рост освободительного движения, в котором участвуют различные слои народа, вносящие в общее его русло свои особые, классовые, зачастую взаимоисключающие интересы.

Заключенный в Карловице мир с Турцией (1699 г.) показал, что единственной державой, на которую может уповать армянский народ, является только Россия. С расчетом на помощь России, в начале XVIII века в населенных армянами районах Закавказья активизируется освободительное движение против персидских и турецких захватчиков. В основном это движение протекало под руководством мелких армянских феодалов, некоторых групп духовенства и местного купечества. С этими прослойками населения было связана также и деятельность Исраэла Ори – замечательного армянского дипломата, который повернул руль освободительных чаяний своего народа в сторону России, заложил политические основы для установления прочных связей всей последующей истории армянского народа с историей русского народа.

Следующий этап армянского освободительного движения и общественной мысли, уже непосредственно связанный с революционным движением в России, анализируется Аш. Иоаннесяном в аспекте освещения деятельности крупнейшего армянского революционного демократа Микаела Налбандяна. Монография о Налбандяне – это не только краеугольной камень современного налбандяноведения, но и фундаментальное исследование общественно – политических явлений его эпохи.

В своей капитальной работе Аш. Иоаннесян отмежевывается от господствовавшей в армянской либеральной историографии концепции, согласно которой в общественной жизни восточных

армян в 50–60-х годах XIX века признавалось существование лишь двух противоборствовших друг с другом течений: клерикально–консервативного и прогрессивно–просветительского. Подобное понимание вопроса в угоду либерализму упрощает и искажает картину исторического процесса, поскольку оно под общим ярлыком реакционного клерикально–консервативного направления отождествляет разные по своим классовым истокам и общественно–политической направленности течения – клерикально–барское и национально–консервативное. При этом либеральные авторы пытались распространить прогрессивную роль армянского просветительства середины XIX века на весь последний период преобладания среди восточных армян буржуазного либерализма. Таким образом, оставляя в тени факт формирования в 60-х годах боровшегося с либерализмом революционно-демократического течения и выделения отдельных группировок народнического толка на протяжении 1870-х – 80-х годов.

По мнению Аш. Иоаннисяна, общий обзор общественного развития и конкретный анализ позиции деятелей этого периода показывает, что идеологи клерикально-барского направления отражали интересы армянских поборников царского режима и его политики и на Кавказе.

Устремления представителей этого направления в основном отстаивали взгляды высшего армянского духовенства и привилегированных представителей денежного мешка, богатевших на военных подрядах и казенных поставках, а также верхушки чиновничества и военнослужащих из армян. В отличие от этих прослоек, тесно связанных с реакционной политикой царизма, идеологи армянских национально–консерваторов представляли интересы восточноармянской буржуазии. Взгляды сторонников этого течения расходились с проводимой на Кавказе колониальной политикой царизма, приведшей к резкому сокращению транзита европейских товаров и расширению местного рынка для проникновения товаров промышленности

на Кавказе и дальше в ближневосточные страны. Такое направление политики царизма задевало интересы той части армянской местной буржуазии, которая выгадывала от транзита зарубежных товаров и терпела урон от конкуренции российского импорта.

Аш. Иоаннисян останавливается и на характеристике национально – либерального течения. Если представители национально-консервативного направления в основном являлись выразителями настроений армянской торговой буржуазии предкапиталистического Закавказья, представители национально-либерального направления являлись идеологами буржуазии и передовой интеллигенции армянских колоний Москвы-Петербурга и внутренних губерний юга России и Северного Кавказа.

В отличие от националь-консерваторов, они не только не противопоставляли себя развивающемуся в России капитализму, но своей просветительской деятельностью расширяли пути его распространения среди армян. Борясь с хозяйственной и культурной отсталостью родной действительности, они считали «европеизацию» национальной жизни армян непременным условием их политического самоопределения и духовного возрождения. Именно с этим они связывали перспективу секуляризации руководства национальной жизни, долженствовавшей сменить собой господствовавшие силы прошлого.

Однако, останавливаясь на анализе эволюции взглядов Ст. Назаряна, наиболее выдающегося публициста либерально – просветительского направления 1840-1850-х годов, автор указывает также на спад буржуазно-демократических настроений армянской буржуазии по мере назревания всероссийского революционного кризиса 1859-1861 годов. Если до назревания этого кризиса Ст. Назарян указывал на необходимость национально-политического самоопределения армян, то в момент самого кризиса и в последующем он осуждал нарастание среди армянской молодежи национально-революционных настроений.

Объявив армян «политически русскими», он тем самым отказывался от признания их самостоятельных национально-политических задач. После Назаряна Аш. Иоаннесян характеризовал формирование взглядов вождя революционно-демократического направления в развитии общественной мысли армян этого периода М. Налбандяна. Показывает, что в начальный период деятельности, выступая на страницах редактируемого Ст. Назаряном просветительского журнала «Юсисапайл» («Северное сияние»), Налбандян отражал лишь настроения левого демократического крыла этого прогрессивного органа.

Но в период нарастания в стране революционной ситуации Налбандян четко отмежевывается от позиции либеральной буржуазии. На страницах органов армянской зарубежной печати и в самостоятельных печатных выступлениях он стал резко критиковать позиции либерального примиренчества. Резко изобличая распространяемую колониальными государствами буржуазную «цивилизацию» в трактате «Земледелие, как верный путь» Налбандян излагает свою программу экономической борьбы подавленных нищетой армянских крестьянских масс в Турции и заодно намечает пути их национального освобождения от гнета султанизма. Характерно при этом, что в отличие от идеологов армянской буржуазии он ориентировал своих сородичей не на реформы «сверху» и не на национальную «конституцию» западных армян, а на глубокое понимание мирового значения победы русской революции.

Указанное исследование Аш. Иоаннисяна по важности выдвинутых и разрешенных в нем проблем по праву вошло в золотой фонд арменоведения.

В книге «Вопрос национальности в публицистике Микаела Налбандяна» (Ереван, 1955). Аш. Иоаннисян ставил задачу наметить общие контуры формирования взглядов великого писателя на вопрос национальности, останавливаясь, главным образом, на революцион-

но-демократическом этапе его мировоззрения, представляющим наибольший интерес для историков. Формирование концепций национальности в публицистике Налбандяна прошло определенный путь развития.

В одном из разделов своего «Дневника» в 1858 году, то есть до того, как сложились революционно-демократические взгляды автора «Дневника», Налбандян жалуется на то, что армянский народ лишен общенациональных органов просвещения, что на его национальной ниве не найдется и одного ростка, взращенного усилиями всей нации. А между тем, писал он, обязанностью каждого человека является забота не только о личном, но и от коллективном, национальном благе. Свои взгляды на этот вопрос Налбандян обобщил в том же году в статье под заглавием «Заметки». Народ, говорил он в этой статье, должен иметь национальность, это личность народа. Точно так же, как не может быть человека без личности, так не может быть и народа без национальности. Личность человека не только не препятствует, а наоборот, даже способствует тому, чтобы он мог понять личность других. И точно так же существование одной национальности способствует принятию права на существование и в другие национальностей. Национальность, как «личность» народа, или же нацию как коллективную «личность» Налбандян определяет и других своих произведениях. Так, в одном из произведений, написанных в последние годы жизни, он писал, что «нация – это не что иное, как коллектив индивидуумов… которых объединяет в нечто общее понятия, общие формы и приемы выражения этих понятий, оставляя в стороне то, что зачастую относится вообще к свойствам той или иной нации. Следовательно, нация – это огромная, исполинская личность. Нация – это отвлеченная личность, и если нет этой личности, то исчезает и национальность ….»[1].

---

[1] **Налбандян М.**, ПСС (На арм. яз.), том 2, Ереван, 1945, стр. 55.

Источник этих высказываний о народе и национальности следует искать в передовых взглядах, зародившихся в России и на Западе еще во время национально-освободительных движений, развернувшихся против тирании Наполеона. Эти же взгляды звучали как боевые лозунги и в период революционной борьбы, которую вели народы Европы против метерниховского реакционного режима. Свою концепцию, провозглашающую национальность личностью человечества, а также тезис о том, что народы и нации, подобно отдельным личностям, осуществляют в истории особые, только им присущие роли, Налбандян разрабатывал под идейным влиянием, непосредственно идущим от произведений революционного демократа В. Белинского. Нет сомнения, что именно у Белинского заимствовал Налбандян мысль в том, что народ без национальности подобен человеку без личности, что национальность не только не ограничивает, а наоборот, расширяет и обогощает человеческую личность, конкретезируя идею человечества. Что же касается до великих людей, то они по Белинскому, дети своей страны. Великий человек всегда национален как его народ, ибо он потому и велик, что представляет собою свой народ. Термин "национальный" имел у Белинского более широкое значение, чем "народный". Под "народом" подразумевают массу народонаселения, самый низший и основной слой государства. Народный поэт тот, говорит демократ Белинский, которого принимает весь народ, все сословия, от низшего до высшего, "составляюшие государственное тело".

В последних своих произведениях великий русский критик Белинский подходил к той мысли, что путем сближения "народа" и "образованного общества" и создаются нации, достойные всемирно – исторического существования. В этом случае, народ освобождается от изоляции, становится духовным соратником и руководителем народа.

В "Слове об армянской письменности", написанном в 1854 году на "грабаре" (старокнижный язык), Налбандян спрашивал:

"Неужели невозможно, чтобы российские армяне, среди которых есть именитые богачи, заботились, собрали и оказывали попечение, словно членам своей семьи, обездоленным, находящимся в самом жалком положении своим соотечественникам, дабы те, нуждаясь ежедневно в хлебе насущном, не продолжали вести существование скорее животное, чем разумное, и получили возможность жить более под воздействием разума, чем стихии"[2].

Но уже во второй половине 1858 года, в статье "Заметки", Налбандян указывает на то, что "нацию" составляют не только "избранники", но и выдвинувший их "простой народ".

Тут мы наталкиваемся на то же самое сближение, с которым мы встречаемся в последних произведениях великого русского критика. Налбандян также обращается с призывом к верхним слоям, если они вообще хотят "чего-нибудь добиться" – послужить делу просвещения и прогресса нации, "пустить корни" в простом народе являющемуся фундаментом общественного строения нации, установить "живую связь" с простым народом. Налбандян еще более заостряет свою мысль, указывая на то, что "именитые сыны" армянского народа должны быть меценатами, покровительствуя посвещению... ибо, в противном случае, "ложно всякое просвещение, напрасные усилия и бесполезен труд"[3].

М: Налбандян характеризует некогда прославляемых им Лазаревых, как людей, являющихся врагами национального просвещения, которые – будь это в их силах и возможностях – не преминули бы наложить запрет на издание "Юсисапайла", как органа, являвшегося идейным руководителем в деле просвещения нации[4].

---

[2] Там же, стр. 55.
[3] Там же, стр. 104.
[4] Там же, том 4, стр. 57.

М. Налбандян осознает, что богатство не приобретается правдой: "очень часто приобретается оно ценой крови, очень часто ценой больших жертв"[5].

М. Налбандян совершает окончательный и полный поворот к революционно-демократическому восприятию национальной проблемы. Наиболее отчетливо выражен этот поворот на страницах трактата "Земледелие как верный путь", написанного в 1862 году. "Под словом "нация",- говорит он здесь,- следует разуметь простой народ, а не кучку богатых людей, вышедших из его среды и возвысившихся его потом и его кровью"[6].

Противопоставляя имущей части инициативу обездоленных народных масс, Налбандян указывал на то, что нищета народа может стать предпосылкой к его самодеятельности: народ "беден, но эта бедность может лишь заставить очнуться от апатии, чтобы мог он разглядеть дорогу, по которой шествовал, и изменит направление ее, прежде чем дойдет он до ее гибельного конца. Но если бы народ был богат, ему не было бы надобности изыскивать способы, менять дорогу. Итак, нищета народа может быть, одновременно, и его спасением..."[7].

Этот коренной поворот Налбандяна, по Аш. Иоаннесяну, знаменовал собой новый этап в истории армянской общественно–политической мысли. Теория Налбандяна, согласно которой бесправный элемент нации, простой народ, стремится подняться из трюма общественного корабля на капитанский мостик, стремится стать представляющим нацию классом, был выражением исторической зрелости "простого народа", того класса, тех прослоек трудящихся, выразителем чаяний которых выступал автор трактата "Земледелие как верный путь". Она явилась показателем исторического самосознания армянского "простого народа", показателем его

[5] Там же, ПСС, том 1, стр. 309.
[6] Там же, ПСС, том 3, стр. 45.
[7] Там же, ПСС, том 3, стр. 67.

стремления "стать всем", осуществить господство "простого народа" над жизнью нации в целом.

М. Налбандян сознавал значение и роль начавшего разворачиваться в его эпоху процесса национальной консолидации армян и армянского национально-освободительного движения. Он был убежден в том, что в политической консолидации и в политическом освобождении армянской нации из-под власти чужеземных поработителей и европейских капиталистов в известной мере были заинтересованы даже имущие классы нации. Именно поэтому и счел Налбандян необходимым обратиться с призывом о создании единого фронта демократических и буржуазных групировок нации во имя борьбы за свержение феодально-помещеичьего ига и политического засилья. С призывом к единству он обращался не только к демократической молодежи страны, но даже и к купечеству[8].

Даже в написанной в 1865 году пародии "Помнить ли нам?" Налбандян все еще связывал надежду на освобождение Армении с единением нации, полагая, что

"Бедняк и богач плечом к плечу
Вот лишь в этом есть возможность спасенья...".

Но эти и подобные строки у Налбандяна не должны смущать нас. Для этого Аш. Иоаннисян пишет, что по своему историческому содержанию армянское национальное движение в эпоху Налбандяна было движением буржуазно-демократическим.

Поскольку в этом движении армянская буржуазия в Турции и в России могла еще играть прогрессивную роль, Налбандян стремился к созданию единого фронта борьбы вместе с нею. Впоследствии, когда стал уже явно проявляться реакционной поворот буржуазии (именно за период 1859-1863 гг.), Налбандян резко раскритиковал ее идеологов. Однако, это не означало, что он становился на позицию принциального отказа от тактики совместных действий с буржуазией: заостряя бдительность

[8] Там же. ПСС. том 3 стр. 93 и дальше.

принимавщих участие в движении народных масс в отношении "патриотизма" буржуазии, Налбандян стремился по мере возможностей активизировать ее антифеодальную борьбу и сопротивление, оказываемое ею европейским колонизаторам.

Борясь с армянскими национально-либеральным и национально-консеватившым течениями и осваивая теории крестьянского социализма Герцена и Чернышевского, как замечает Аш. Иоаннисян, Налбандян и его единомышленники орентировали армянский народ на русскую демократическую революцию, как на путь единственно верный и прямой для национального освобождения угнетенного и порабощенного армянского народа. Налбандян первым из армянских просветителей не только вскрывал их противоречия и вызываемые ими бедствия, но и определил некоторые последствия их бедствий. В частности, не ускользнуло от его взора разлагающее влияние, которое оказывал капитализм на мелких производителей Запада и подчиненных ему колониальных и полуколониальных стран Азии и Африки. Еще в конце 1850-х годов М. Налбандян характеризовал восстание в Индии как движение, которым эксплуатируемые люди стремятся завоевать лишь свою собственную свободу. "Англия объята страхом,- писал Налбандян, - как бы и индусы не прошли по тому мосту, через который прошли в свое время североамериканцы. Англии повезло лишь в том, что среди индусов не оказалось Франклинов и Вашингтонов. Кроме того, Англия проникла и в Китай: недавно она захватила Кантон и тешит себя надеждой, выступив на международном рынке, развернув свою торговлю опиумом..."[9]. Автор "Земледелие как верный путь" писал: "Англия закупает в Индии определенное количество опиума у народа за 25 фунтов стерлингов. Но никто, кроме правительства, не имеет права покупать опиум у крестьянина, точно так же, как и крестьянин не имеет права продавать опиум кому-либо другому:

- она распространяет цивилизацию!

---

[9] Там же, том 1, стр. 197.

Англия в принудительном порядке ежемесячно вводит в Китай по три парохода опиума и, отравляя человечество "получает взамен три парохода серебра в месяц. Это же безнравственно!

- она распространяет цивилизацию!"[10].

Первые строки "Земледелие как верный путь" посвящены той войне, которая, в связи с вопросом об освобождении рабов, разгорелась между северными и южными штатами Америки.

Анализируя вызванный этой войной экономический кризис в Англии и Франции и его отражение в области взаимоотношений труда и капитала, автор спешит поведать соотечественникам о последствиях, которые несет с собой капиталистическая система... В этом же году у Налбандяна была возможность лично видеть результаты дискриминационной политики Англии в отношении Ирландии.

"Ирландия, - указывал Налбандян,- по своему географическому положению, своим естественным границам, и своей религией, обычаям и традициям бесконечно далека от Англии. Она более богата талантливыми людьми, чем сама Англия. Но, вопреки желанию Ирландии, Англия держит ее под своей властью, а не так давно в "Таймсе" было объявлено, что стремящиеся к независимости ирландцы могут быть осуждены на каторжные работы, как востающие против английского правительства...

- Она (Англия) распространяет цивилизацию..."[11].

Саркастические реплики Налбандяна, замечает Аш. Иоаннисян, беспощадно клеймили политику Австрии, Пруссии и Ватикана, откликаясь на развернувшиеся против них национально-революционные движения.

В России разворачивались национально-освободительные движения среди поляков, украинцев, финнов и народов Кавказа, а царизм собирался с силами, чтобы нанести им решительный контрудар.

---

[10] Там же, том 3, стр. 88.

[11] Там же.

"Русские тюрьмы, - писал автор "Земледелие как верный путь", - переполнены поляками. Кажется, скоро поляков в Сибири будет больше, чем в самой Польше. На площадях Варшавы кровь доходит по колено людей. Солдаты, нападая на безоружное население, беспощадно убивают всех, не разбирая ни возраста, ни пола... Немецко –татарское правительство России сосет кровь Польши, словно некий вампир, закрывает ее церкви и школы, предписывая полякам превратиться в камень или дерево...

- Она распространяет цивилизацию!".

Не обходит Налбандян вниманием также и положение угнетенных национальностей Восточной Европы и Кавказа. "Малороссия... просит вернуть ей независимость, но правительство России заковало ее в цепи, и отвечает проповедникам ее свободы тюрьмами, кнутами и ссылкой...

- распространяет цивилизацию!

"Она захватила и поработила Финляндию!...

- распространяет цивилизацию!

"Она обманом захватила Грузию и часть Армении, давит их своей тяжестью!

- распространяет цивилизацию!"[12].

Эти строки, полные возмущения и сарказма, обобщает Аш. Иоаннисян, писались в дни, когда в России уже всколыхнулась стихия крестьянских волнений, а Польша переживала канун всенародного восстания 1863 года, когда среди кавказских народов, постепенно нарастая, воцарился протест масс против колониальной политики царизма, протест, который в 1865 году должен был вылиться в бурные волнения тифлисских "амкаров" и борчалинского крестьянства.Перспективу политического освобождения нации, по Аш. Иоаннисяну, Налбандян связывал с разворотом революционных движений не только против варварских режимов, вроде турецкого, но и против режимов "цивилизованных" угнетателей. Огненными

[12] Там же. стр. 89.

строками заклеймил Налбандян ту "цивилизацию", от имени которой лицемерно говорили надругавшиеся над свободой народов миродержавные хищники.

В 1960-х гг. Аш. Иоаннисян опубликовал ряд статей ("Участие восточных армян в революционном движении России и Закавказья", "Восточноармянские национальные народнические кружки 80-х гг.", "Идейные корни формирования гнчакистов", "Контрасты восточноармянского либерализма и народничества в начале 1890-х гг.", и другие), представляющие собой главы неопубликованной монографии "Очерки истории восточноармянских общественных течений и национальных политических партий второй половины XIX века".

В них рассмотрены сложные вопросы формирования армянских политических партий, их генезиса, идеологии и практического курса.

## Աշ. Հովհաննիսյանի ստեղծագործությունների մատենագիտությունից


Israel Ory und die Armeniche Befreiungsidee, München, 1913.

ԺԳ դարի մի ուղևորի վկայությունը հայոց մասին: «Արարատ» ամսագիր, 1914, թիվ 11:

Նոր նյութեր հայ-ռևնիտորական պատմագրությունից: - «Արարատ» ամսագիր, 1914, թիվ 12, 1915, թիվ 1:

Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը և տաճկահայ նվիրակության խնդիրը: «Արարատ» ամսագիր, 1915, թիվ 1-2:

Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին: «Արարատ» ամսագիր, 1915, թիվ 9-10:

Պետրոս դի Սարգիս Գիլանենց (Պատմական կենսագրական ակնարկ), Էջմիածին, տպ. Մայր աթոռոյ, 1916:

Ազգային համախորհրդակցությունը: «Նեցուկ» թերթ, 1917, 28 սեպտեմբերի:

Շուշվա բանվորական ներկայացուցիչների խորհրդի վերակզմության խնդիրը: «Նեցուկ» թերթ, 1917, 24 օգոստոսի, 31 օգոստոսի:

Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատի տակտիկան: «Նեցուկ» թերթ, 1917, 24-31 օգոստոսի, 4 սեպտեմբերի:

Դեպքերը Բաքվում: Դաշնակցությունը և Բաքվի խորհրդային իշխանությունը: Մոսկվա, հրատ. Հայկական գործերի կոմիսարիատի, 1918:

Բուրժուական պետությունը և պրոլետարական հեղափոխությունը: «Բանվորի խոսք» թերթ, 1918, 19 հունվարի:

Ստ. Շահումյանի տեղը հայ բանվորական շարժման մեջ: «Կարմիր բանվոր» թերթ (Աստրախան), 1919, 29 հունիսի, 6 հուլիսի:

Վիճելի երկրամասերը, «Կոմունիստ» թերթ (Երևան), 1920, 7 դեկտեմբերի:

Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը: Էջմիածին, տպ. Գիտ. Ինստիտուտ, 1921, գիրք 2:

Գեղամա և Ծարա մելիքների տոհմը: Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք 1-2, 1921-1922:

Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը: «Նորք» ամսագիր, 1923, գիրք 3:

Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք» ամսագիր, 1923, գիրք 2:

Նժդեհի բացատրությունը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին: «Նորք», 1923, գիրք 3:

Դաշնակցությունը և պատերազմը, Երևան: Տրեստի 1-ին տպարան, 1924, 24 էջ:

Գաղթահայ խնդիրներ, Երևան, 1925, 26 էջ:

Առաջաբան: - «Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան: Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից» գրքում, Երևան, 1926:

Երկու բնութագիր. Ստ. Շահումյան և Ալ. Ռուբենի: Երևան, 1927, 27 էջ:

«Զախ» պանիկյորության հայկական մի վարիանտի մասին, Երևան, 1927, 49 էջ:

Դաշնակցության սոցիալական ծագումը: «Նորք», 1927, գիրք 1:

Դաշնակցության առթիվ: Մոսկվա, 1929, 64 էջ:

Էնգելսը և Հայկական հարցը: Մոսկվա, 1931, 40 էջ:

Աբովյան: (Կյանքն ու ստեղծագործությունը), Ե., 1933, 142 էջ:

Գրական նկատողություններ: «Խորհրդային գրականություն» ամսագիր, 1934, թիվ 3-4, 1935, թիվ 1:

Մառ-պատմագետը: «Խորհրդային գրականություն» ամսագիր, 1935, թիվ 3:

Միքայել Նալբանդյան, նրահայտ պամֆլետը: ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկագիր» ամսագիր, 1930, թիվ 7:

Նալբանդյանի կենսագրության անհայտ մի էջը: «Տեղեկագիր» ամսագիր, 1954, թիվ 11:

Նալբանդյանի շրջադարձը իդեալիզմից դեպի մատերիալիզմ: «Տեղեկագիր», 1954, թիվ 11:

Նալբանդյանը և նրա ժամանակը: Գիրք 1-2: Երևան, 1955-1956: Գիրք1, 1955, 600 էջ: Գիրք 2, 1956, 616 էջ:

Ֆրիկը պատմաքննական լույսի տակ: Երևան, 1955, 121 էջ:

Ստեփանոս Նազարյանցի գրական արխիվը, «Տեղեկագիրը», 1955, թիվ 2:

Вопросы национальности в публицистике Микаела Налбандяна, Ер., 1955, 87 с.

Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակը և ժամանակակիցները: «Բանբեր Մատենադարանի» (ՀԽՍՀ մինիստրների խորհրդին կից պետ. ձեռագրատուն), 1956, թիվ 3:

Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության: (- Գիրք 1, Երևան, 1957, 525 էջ, Գիրք 2, Երևան, 1959, 695 էջ):

Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից: «Պատմա-բանասիրական հանդես», 1958, թիվ 1:

Արդյոք միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կապիտալի նախասկզբնական կուտակում: «Պատմա-բանասիրական հանդես», 1959, թիվ 1:

Նալբանդյանի և Պատկանյանի գաղափարական հակամարտության շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, թիվ 4:

Էդոնդ Բըրկը Հովսեփ Էմինի մասին: «Տեղեկագիր», 1960, թիվ 12:

Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թիվ 2:

Գ. Ախվերդյանի և Գ. Շիրմազանյանի նամակագրությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, թիվ 2:

Կարծիք «Լեհահայերի մասնակցությունը Դավիթ բեկի ապստամբությանը» վավերագրերի ժողովածուի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 3:

19-րդ դարի 50-60-ական թվականների հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, թիվ 1:

Արծրունու և Րաֆֆու գաղափարական ներկայության ակունքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, թիվ1:

Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, թիվ 2:

Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներկայությունները 90-ական թվականների սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, թիվ 2:

Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, 131 էջ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Աշ. Հովհաննիսյանի պատմագիտական առաջին հրապարակումները ..... 21

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Աշ. Հովհաննիսյանի հրապարակախոսական և պատմագիտական աշխարհը 1920-1930-ական թթ. ..... 49

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Աբովյանագիտությունը մինչև 1920-1930-ական թվականներին և Աշ. Հովհաննիսյանի «Աբովյան» մենագրությունը ..... 178

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ֆրիկը և նրա դարաշրջանը Աշ. Հովհաննիսյանի պատմաքննական հայացքի ներքո ..... 224

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (երկհատոր) աշխատության գլխավոր բնութագծերը ..... 257

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Աշ. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր աշխատությունը որպես նալբանդյանագիտության բարձրակետ ..... 299

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ..... 358

**РЕЗЮМЕ** ..... **363**

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Համակարգչային ձևավորումը՝
Համակարգչային շարվածքը՝ Ա. Մարանգոզյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 05.06.2015 թ.
Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[4000 դր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0468667

A 103050